



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ  
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Ռ ՈՒԲ Ե Ն  
ՈՐԲԵՐՅԱՆ

.

Ռ ՈՒԲ Ե Ն  
Ս Ե Վ Ա Վ

.

Վ Ա Հ Ա Ն  
ԹԵԲԵՅԱՆ

.

Մ Ա Տ Թ Ե Ո Ս  
Զ Ա Ր Ի Յ Յ Ա Ն

ԵՐԿԵՐ

Կազմող՝ Վազգեն Գաբրիելյան  
Խմբագիր՝ Ռազմիկ Տանյան

**ԱՐԵՎՄՏԱԼԱՅ ՊՈՆՋԻԱՆ 20-ՐԴ ԳԱՐԻ ՍԿՋՐԻՆ  
(Քանաստեղծական շորս անհատականություն)**

Պատմական մեծ դեպքերով, հեղաշրջումներով, ոգևորություններով ու հիասքափություններով հարուստ մի շրջանում, 20-րդ դարի սկզբին, ի հաստատումն այն մտքի, թե մեծ գրականությունները ծնվում են մեծ իրադարձությունների ժամանակ, աննախընթաց բարձրության հասավ հայ պոեզիան: Մեր գրականության դարավոր անդաստանում արմատ արձակեցին ու կաղնիացան Քումանյանն ու Վարուժանը, Իսահակյանն ու Սիամանթոն, Տերյանն ու Մեծարենցը, Չարենցն ու Քեֆեյանը: Այս մեծերի կողքին ստեղծագործում էին ուրիշ շատ տաղանդավոր բանաստեղծներ, որոնք իրենց թարմ ու ինքնատիպ խոսքով հարստացրին մեր դասական պոեզիան:

Արևմտահայ բանաստեղծությունը Պետրոս Դուրյանից հետո աշխուժացավ 90-ական թվականներին և ամբողջացավ 20-րդ դարի սկզբում: Այդ շրջանի արևմտահայ եռո բանաստեղծության դիմագծի ամբողջացմանը Սիամանթոյի, Մեծարենցի, Վարուժանի ու Քեֆեյանի հետ միաժամանակ նպաստեցին այնպիսի տաղանդավոր, ինքնատիպ բանաստեղծներ, ինչպիսիք էին Ռուբեն Որբերյանը, Արշակ Զոպանյանը, Ռուբեն Սևակը, Արտաշես Հարությունյանը, Տիրան Զաբաբյանը, Վահան Մալեգյանը, Սիպիլը, Մատթեոս Զարիֆյանը և ուրիշներ:

Դարասկզբի արևմտահայ պոեզիան (և ընդհանրապես գրականությունը) զարգացման երեք շրջան ունեցավ, կապված հասարակական-քաղաքական պայմանների հետ: 1895—1908՝ համիդյան բռնապետության ամենամռայլ ռեակցիայի տարիները, երբ, ինչպես Վարուժանն է բնութագրել, «հայությունը կ'իսեղզվեր սուրի և

**Ռուբեն Որբերյան, Ռուբեն Սևակ, Վահան Քեֆեյան,  
Մատթեոս Զարիֆյան**  
**Ո 632 Երկեր: Եր.— Սովետ. գրող, 1981, 480 էջ.**

«Հայ դասականներ» մատենաշարի այս հատորում տեղ են գտել 20-րդ դարի սկզբի արևմտահայ շորս բանաստեղծ՝ Ռուբեն Որբերյանը, Ռուբեն Սևակը, Վահան Քեֆեյանը, Մատթեոս Զարիֆյանը:

Ե 4702080100 (651) 81 «Տ»  
708 (Յ1) 81

ԳՄԴ 84. 21  
Ար 1

սովի մղձավանջին մեջ», երբ մամուլի ու գրականության նկատմամբ գրախնայությունը ծայրահեղ խստությամբ էր վարվում, և արևմտահայ մտավորականների զգալի մասը հեռացել էր Քուրֆիայի սահմաններից: Երկրորդ շրջանը 1908—1915 թթ. էր, երբ բուրժուական սահմանադրության հաստատումից, Համիդի անկումից հետո թույլատրված ազատությունները հնարավոր դարձրին արևմրտահայ տարագիր մտավորականների վերադարձը և գրականության ու մամուլի վերելքը: Եվ երրորդ շրջանը՝ 1918—1922 թթ., երբ զինադադարից հետո Պելլում հավաքվեցին վերապրող գրողները և փորձ արեցին կրկին հասնել նախապատերազմյան օրերի գրական մակարդակին:

Առաջին շրջանի արևմտահայ գրականության մասին խոսելիս շնորհակալությամբ տարբերակել նրա երկու կողմը՝ Պոլսում ու գավառներում ստեղծված գրականությունը և այն գրականությունը, որ լույս էր տեսնում արտասահմանում (Օտյանի, Զարդարյանի, Պարթևյանի, Քեֆեյանի, Սիամանթոյի, Սևակի, Վարուժանի այդ տարիների ստեղծագործությունը): Ի հակադրություն Քուրֆիայի սահմաններում ստեղծագործող նեղինակների անազատության, արտասահմանում ապրող գրողները ազատ էին իրենց ազգային զգացումները արտահայտելու մեջ և ստեղծեցին հայրենասիրական գրականության բարձրարժեք երկեր:

Դարասկզբի արևմտահայ պոեզիայի այն նշանավոր դեմքերը, որոնք ներկայացվում են «Հայ դասականներ» շարքի սույն հատորում, ապրել և ստեղծագործել են տարբեր վայրերում և վերը քրվարկված երեք շրջաններում: Այսպես, Ռուբեն Որբերյանը մինչև 1904 թ. ապրում էր Քուրֆիայում, ապա Աֆրիկայում ու Ֆրանսիայում և ստեղծագործել է մինչև 1931 թվականը, Ռուբեն Սևակը՝ ժնհում ու Պոլսում, ստեղծագործել է 1905—1915 թթ., Մատթեոս Զարիֆյանը ապրել է Պոլսում, տեսել է 1908—1915 թթ. ազգային-մշակութային զարթոնքն ու պատերազմը, սակայն ստեղծագործական կյանքը համընկնում է 1919—1924 թվականներին: Քեֆեյանը սկսել է 90-ական թվականներից, ապրելով և՛ Պոլսում, և՛ Եվրոպայում ու Մերձավոր Արևելքի երկրներում, մինչև 1945 թվականը, դառնալով նաև Սփյուռքի բանաստեղծ:

Եվ նրանց ստեղծագործությունը, Սիամանթոյի, Վարուժանի ու Մեծարենցի ստեղծագործության հետ միասին, լիարժեք պատկերացում է տալիս դարասկզբի արևմտահայ պոեզիայի մասին:

Այս խմբում ավագը Ռուբեն Որբերյանն էր: 90-ական թվականների սկզբից Որբերյանի անունը երևաց արևմտահայ մամուլի էջերում, իսկ 1893 թ. տպագրվեց նրա առաջին գիրքը: 900-ականի սկզբին Որբերյանն արդեն նանաչված անուն էր: Որբերյանը գրական ասպարեզ մտավ այն շրջանում, երբ արևմտահայ բանաստեղծությունը, 80-ական թվականների անկումից հետո, աշխուժացման փորձեր էր անում: Ա. Չոպանյանի, Ա. Հարությունյանի, Սիպիլի հետ միասին, Որբերյանը կենսական լիցքեր բերեց այդ օրերի պոեզիային: Դա սկիզբն էր այն կյանքում ու հզոր պոեզիայի, որ թափ էր առնելու դարասկզբին՝ Սիամանթոյի, Վարուժանի, Քեֆեյանի ու Սևակի գրական մուտքերով:

1893-ին լույս ընծայած առաջին գրքույկը՝ («Հիշատակաց ծաղիկներ») արդյունք էր երիտասարդ բանաստեղծի որբության պատճառով ապրած հոգեկան տվայտանքների և Դուրյանից ու Տեմիր-հիպաշյանից կրած ազդեցության: Մոայլ, բախժոտ, լավկան էջերը գերակշռում են այս գրքում: Մեծ մասամբ երիտասարդ բանաստեղծը անձնական նեղ ապրումների սահմաններից չի կարողանում բարձրանալ վեր՝ դեպի ընդհանրականը: Գրքույկը ինչ-որ շափով բերում էր նաև հասարակական կյանքի արձագանքը՝ երիտասարդ հոգիների հուսախարությունը համիդյան բռնապետության տարիներին:

Երբ Որբերյանը ավարտում է ֆուլեջը և կյանք է մտնում՝ իրական կյանքի խոնքեր են դառնում բանաստեղծություններ: Նա զրտնում է, որ անձնական ցավերը պետք է հոգու խորում բաղել, շլինել լավկան ու հոռետես, այլ պետք է նոր եռանդով փարվել կյանքին, լինել «բախտին հաղթող դյուցազն» («Հակապատկեր»): Այս շրջանի (1894—1904) բանաստեղծություններում, որ հայրենի տան, բնության ու կյանքի մասին խոնքեր են, բացակայում են լավկան տրամադրությունները: Բանաստեղծական բարձր վարպետությամբ Որբերյանը խորհում է հայրենի հողի, մարդկային փոխհարաբերությունների, սոցիալական անարդարությունների մասին, դրսևորելով ողմանտիկ բանաստեղծի ու մարդու խոր սերը մարդարարածի նկատմամբ: Այսպես, «Մեր դարը աստուծո առջև» բանաստեղծության մեջ Որբերյանը բացահայտում է նոր՝ 19-րդ դարի կեղծիքն ու սուտը, կապիտալիզմի բերած այլանդակ մուլու-

բյունները: Քաղաքակիրթ դարի արտաբնական գեղեցիկ տեսիլ տակ բանաստեղծը տեսնում է «զայլի բարբեր, նիրաններ», «բորենիի նայվածք»: Մինչդեռ բանաստեղծի խոհը տառնում է դեպի այն միտքը, թե մարդը մարդու համար պետք է լինի սրտակից բարեկամ: Մեկնում է կարատը «անուշ, անբիծ, անդալանաճ մտեմունքյան», և հավատք՝ «զուցե մին կա սրտի վերհերձ հասկցող»: Մեկնում է խոհը բնականի ու անբնականի, կեղծի ու ճշմարտի, հայրենի հողի ու տարագրության մասին («Մաղկանոցի հոճին»): Ապակեպատ, գեղեցիկ ծաղկանոցի մեջ, ուր մշտապես գորհան եղանակ է, բախժում է «լեռան ծնունդ» հոճին, երազում է իր բնաշխարհը, իր հողը, ազատությունը:

— *Ձիս դարձուցե՛ք հին լեռներուն ամենի,  
Տարե՛ք անեղ մրրիկներուն ցուրտ աշնան,  
Այս թաղարի կյանքը կեղծ է, ամայի,  
Տերկներս փոթորկին տակ թող չորհան:*

Նվ բախժելով՝ մի ֆանի օր հետո՝ «կեղծ գարունին մեջ խամբած էր հե՛ք հոճին»: Մարդը, ասում է մեզ բանաստեղծը, իր հողում պիտի լինի, հարազատ ծննդավայրում, իր Հայրենիքում: Մարդը պետք է բնականին ձգտի, արհեստականը մեղցնում է կյանքը: Մարդը պետք է ազատության մեջ լինի, առանց «փակաճեմ ու պատյան»: Բանաստեղծությունը միաժամանակ դրսևորում է հեղինակի վերաբերմունքը նոր հասարակարգի նկատմամբ, ուր ամեն ինչ կեղծ է ու անբնական և կարատը անցած, հին օրերի («Ձիս դարձուցե՛ք հին լեռներուն»):

Որբերյանի այս տրամադրությունները խաացել են «Գյուղիս համփան» և «Տնակս» բանաստեղծությունների մեջ, որոնք «ձեփ կատարելությամբ դարձած են դասական» (Զ. Նսայան): Կապի-ապիզմի բերած մարդկային այլասերված հարաբերություններից սարսափած բանաստեղծը, առաջ նայել չկարողանալով, փրկության ելքը որոնում է անցյալում՝ նանապետական հասարակարգում: Որբերյանը հակադրվում է նոր օրերին՝ հին տնակի, հին գյուղի բանաստեղծական իդիլիկ վերհուշով, մանկական օրերի անմեղություն, անեղծ բնության ու մարդկային ազնիվ հոգիների բանաստեղծական գեղեցիկ ու հուզիչ պատկերներով: Այդ բանաստեղծություններն են՝ «Գոգարիկ էջեր, ուր այնքան պայծառ և դյուրբիչ գույներով պատկերացված են գյուղը և բնության ուրիշ շքեղ

ու վաճեմ անկյունները» (Վրթ. Փափազյան): Դրանց մեջ կա նաև դրաման այն զգացողությամբ, թե այդ գեղեցիկ, այդ անբիծ անցյալը, այնուամենայնիվ անցյալ է, անվերադարձնելի, մոռացություն մատնված:

*Կյանքի նավակն հետք չի թողուց իր ետին,  
Մոռացումը առավ ինձնե ամեն բան,  
Հին երազներս ամպերու պես կ'անհետին,  
Հիշատակն ալ կ'անցնի երգի մը նման:*

Ուրեմն չկա ետդարձի նանապարհը, պետք է առաջ նայել: Սրբանով մտածող ճշմարիտ բանաստեղծները չեն կարող պահպանողական լինել, էությունը նրանք ազատական են: Նվ ծնվում է մեղմ ու փոխանցվող բախիծը, ցավի գիտակցությունը այն զգացողության, թե ինչու՞ կյանքը մանուկ օրերի անմեղությամբ չի ընթանում, այլ կեղծիվում ու սուտանում:

Իրականության ռեալ ուժերի մեջ չհողմնորոշվելով՝ Որբերյանին հմայում է երազը, հմայիչ ու թովիչ երազը, որն էլ նրան դարձնում է ռոմանտիկ: Այդ ռոմանտիզմը խորանում ու տիրական է դառնում հետագա տարիների (1904—1920) նրա ստեղծագործության մեջ: Փախչելով թուրքական գեներացի, հայրենիքից հեռու, հեռավոր Աֆրիկայում ապաստան գտած բանաստեղծի ստեղծագործությունը գրեթե ամբողջովին կենտրոնանում է մի թեմայի շուրջ՝ հայրենակարոտություն և հայրենիքի ազատագրություն: Այս շրջանի պոեմների, բանաստեղծությունների, արձակ էջերի, համակների (այս ամենն ամփոփվեցին 1920 թ. լույս տեսած «Ովասիս» ժողովածուում) մեջ բանաստեղծը անխոտոր մի գաղափար է զարգացնում՝ Հայրենիքի և գեղեցիկ կյանքի գաղափարը, դնելով նրա մեջ մի ջերմ զգացում՝ իր անհագ կարոտը և հայրենիքը ազատ տեսնելու բուռն ցանկությունը: Դտնվելով հայրենիքից հեռու, բնականաբար, նրա գործերում թախիծը դառնում է անթափ ընկեր, և ֆանի որ այն կարոտի թախիճն է, հայերի ջարդերից տառապող հոգու թախիծը, ուստի այն դառնում է նույնիսկ բեռնաճան ու պարտադիր, և խորապես մաղդկային:

Այդ շրջանի բանաստեղծություններում («Աղվոր ափեր», «Հարավի հուր խորշակին», «Սփիճես», «Վարդենին», «Գրեա՛» և այլն) նրա թախիծը շաղախվում է այն հավատի հետ, թե մի օր կրկին ինձը ազդունելու է հայրենի ափերը, կրկին ծաղկելու է իր լիճան

տան առջևի վարդենին և թե «անարշալույս չեն գիշերներն հայոթյան»: Այդ հավատի տրամադրությունները նույնիսկ ըմբոստության ու պատգամի խոսքեր են դառնում: Վարդենու բերանով նա տարագիր հայությանը տուն է կանչում, հրաման-պատգամ է տալիս՝ «Դարձի՛ր, հոգի՛ տուր հյուրակիդ ավերակ», «Ու մամնջե երգը անմահ Հայության»: Բանաստեղծը հայրենիք է ուղարկում իր օրդուն պատվիրելով՝ «Վերաշինե տնակս ավեր ու լված», «Ողջունե նոր մի գարուն»: Հայրենիքի կողմից որպես կոչնակ, բանաստեղծը կանչում է.

*Տարահալած հայութուն,  
Դարձի՛ր ալ բավ ինձմե հեռու մաշեցար,  
Դարձի՛ր անցյալ սուրբ միութան օրերուն,  
Բեր ինձ դրողը ազատութան սիրավառ...*

Հայ ժողովրդի կրած տառապանքների և նրա ազատության հարցերը Որբերյանը պատկերեց նաև այդ տարիներին գրած «Մըփանքներ» պոեմում, որից միայն առանձին գլուխներ ու հատվածներ լույս տեսան:

Բայրոնի անձով ու պոեզիայով հիացած, նրան հետևող ուսանողիկ Որբերյանը, ընտրելով գրական հայտնի հնարանքը, պոեմում իրեն ուղեկից հերոս է վերցրել Բայրոնին, որպեսզի նա տեսնի հայության տառապանքները և իր հանճարեղ երգով մեզ ապավեն դառնա, շարժի «պոռնրկացած Եվրոպայի» սիրտը: Չէ՞ որ Բայրոնն էր, որ ընկավ Հելլադայի ազատության համար, որ սիրեց մեր ժողովրդին ու մեր լեզուն: Որբերյանի տեսակետով՝ նրնջված, թշվառ հայրենիքը փրկելու համար Բայրոնի նման ուժեղ անհատներ են պետք, որ շարժեն Եվրոպայի սիրտը, ստիպեն նրան զգալ մեր ցավերը և օգնության ձեռք մեկնեն: Որբերյանը իր պոեմով հաստատում է նաև, թե ամուր հավատով պետք է ձգտել իդեալին, չկասկածել նրան հասնելու օրվան: Նա, բոլոր ուսանողիկների նման, Հայրենիքի փրկության գործում մեծ տեղ ու դեր է հասկացնում հզոր երգին և անձնագոհությանը:

Գաղափարի նորությամբ Որբերյանի այդ օրերի ստեղծագործության մեջ առանձնանում է «Աղամին անեծքը» պոեմը: Այն ձոն է մարդուն, մարդկային ըմբոստ ոգուն: Մարդ-արարածը ամենակատարյալն է տիեզերքում, մարդկային զգացմունքը աստվածային էությունից էլ գորավոր է, ասում է հեղինակը: Աղամը մարդկու-

թյան սիմվոլն է: Մարդը գիտե ծառանալ, ըմբոստանալ, մարդը կարող է հաղթել: Գաղափարական այս բովանդակությունը հարստանում է մարդու էության մի շարք հատկանիշների պատկերներով՝ հայրական սեր, ընտանիքի երջանկություն, սիրո բերկրանք, կենսասիրություն, սեփական վաստակի վայելման հանույժ և այլն: Այս ամենից թելադրվում է բանաստեղծի սերը կյանքի ու մարդու նկատմամբ՝ ծնված կյանքի ու մահվան հարատև ողբերգությունից:

Աղամի ըմբոստացումը Աստծո դեմ՝ միևնույն ժամանակ ազգային ազատագրական պայքարի հարցի պատասխանն էր: Ժողովուրդը շպտեմ է «վատ ու վախկոտ շեշտերով» լոխ, ամեն շարիք համարի օրհնյալ կամքի արգասիք ու խոնարհարար ծոխ գլուխը: Հարկավոր է ըմբոստանալ՝ ահա պոեմի գաղափարը: Հենց սրանով էլ «Աղամին անեծքը» դառնում էր արդիական ու կարևոր:

Կյանքի վերջին տասնամյակում (1920—31 թթ.) փարիզաբնակ Որբերյանի բանաստեղծությունների թեմատիկան հարստանում է նոր կողմերով: Հայրենակարոտության ու հայրենիքի ազատության թեմային ավելանում են սփյուռֆահայության նակատագրի, ասիմիլյացիայից խուսափելու, հորհրդային Հայաստանում հավաքվելու հարցերը: Գաղափարական տեսակետից՝ նրա իդեալի անորոշությունը կոնկրետություն է ստանում, և մտքի թափառումները իջնում են կոնկրետ հողի վրա: Այդ տրամադրությունների դրսևորումները եղան «Կարոտագին այց», «Հայրենիքի խնձորներ», «Նոր շարական» և ուրիշ բանաստեղծություններ. ու մի շարք հողվածներ:

Խորհրդային Հայաստանի ջերմ համակիր ու պաշտպան Որբերյանը սփյուռֆահայությանը ոգևորում էր Հայրենիքի գաղափարով, նրա վերաշինական գործերով, «համայնավարական մաքուր սկզբունքներու կիրարկում»-ով, որոնք տեղի էին ունենում սովետական հանրապետությունների «եղբայրական անվերապահ աշակցությամբ»:

Նվ բանաստեղծը դիմում էր իր վերածնվող հայրենիքին. «Կենսունակ և առողջ սերունդ մը կը դեզերի, Մա՛յր, տարագրության նամփաներուն վրա: Բա՛ց գիրկդ, Մա՛յր, թու սիրազեղ գիրկընդ-խառնումիդ և անուշ համբույրիդ կարոտով ալ բավ մխեցին ու այրեցան մեր հոգիներ...»

Իսկ տարագիրներին բանաստեղծը կոչ էր անում. «Սրտե՛րը

վեր և հառաջ դեպի հայրենիք, իմ հոգիի ազնիվ ընկերներ»:

Բանաստեղծ Ռրբերյանը իր դարի հայրենասեր ֆաղափացիներով և իր ստեղծագործություններով նպաստեց ժողովրդի հայրենասիրական ոգու ամրապնդմանը:



Ռուբեն Սևակի ստեղծագործական կյանքը ամփոփվում է 1907—1915 թվականների մեջ: Մասնագիտությամբ բժիշկ Ռուբեն Զիլինկիրյանը գրական մեծ ծառանգություն չի բողբել (շուրջ 150 բանաստեղծություն ու պոեմ, երեք տասնյակի հասնող արձակ գործեր), սակայն նրա անունը սերտորեն շաղկապվեց դարասկրբի արևմտահայ բանաստեղծների անվան հետ, քանի որ իր օրերի եռանդուն ֆաղափացին էր նա, հայրենասեր հայ և ճշմարիտ բանաստեղծ: Նրա սոցիալական հարցադրումների պոեմներն ու բանաստեղծությունները, սիրո գողտրիկ երգերը այդ օրերի պոեզիայի մեջ աչքի ընկնող տեղ են գրավում:

Սևակը ծրագրել էր ստեղծել ժողովածուներ, որոնք պետք է ունենային «Կարմիր գիրքը», «Սիրո գիրքը», «Քառու», «Վերջին հայերը» խորագրերը: Նրա կենդանության օրոք լույս տեսավ միայն «Կարմիր գիրքը»՝ որպես արձագանք 1909 թ. կիրիկյան արհամարհի: Արյան գույնը, որպես վերադիր իր գրքին՝ խորհրդանշում էր հայկական շարդերը, ժողովրդի ֆաղափական ճնշումները: «Սիրո գրքում» Սևակը, բնականաբար, հավաքելու էր իր սիրային բանաստեղծությունները: «Քառուր» խորագրի տակ մեկտեղելու էր սոցիալական հարցադրում ունեցող ստեղծագործությունները: «Վերջին հայերը» դառնալու էր խորագիր այն երգերի, որոնք պատմելու էին դարերի պատմություն ունեցող ժողովրդի վերջին զավակների՝ իր օրերի հայության, երկրի ու տարաշխարհի հայության նահատակների ու կենսասեր ոգու մասին:

«Քառու» խորագիրը գուցեև Շիրվանզադեի վեպն էր նրան հուշել, ամեն դեպքում բուրժուական աշխարհի, սոցիալական նոր հարաբերությունների ճշմարիտ բնութագրումն էր դա:

Իր մի շարք պոեմներում ու բանաստեղծություններում («Մարդ-երգություն», «Այս դանակը», «Թրուպատուրները», «Դրամին ազոբ-բը», «Կարմիր դրոշակը» և այլն) Ռուբեն Սևակը անդրադարձել է այդ աշխարհի ֆառսին՝ մարդկային էության ազավազմանը՝ կապ-

ված ամենագոր դրամի հետ: Սևակին զբաղեցնողը աշխարհի անարդարությունն է: Ինչու՞ են ստեղծվել այնպիսի հարաբերություններ, երբ ոմանք շոայլորեն վայելում են կյանքը, լողում հարստության ու պերճանքի մեջ, իսկ միլիոնավոր մարդիկ հաց չունեն, միևնչյեռ հենց նրանք են ստեղծողները աշխարհի հարստության: Այս հարցադրումից ծնված մեծ ինչուն տարբեր պատասխաններ է ստանում Սևակի տարբեր գործերում: Դեմոկրատ բանաստեղծը այս հարցերը բնեում է, անշուշտ, աշխատավոր դասի շահերից ելնելով, կյանքի հակասությունները հարթված տեսնելու ազնիվ մղումով, սակայն, կամա թե ակամա, կյանքի հակասությունները, իրադարձությունների փոփոխությունները տարբեր մտեցում ու պատասխան են ծնում նրա մոտ: Այսպես, «Մարդ-երգություն» պոեմում բանաստեղծը սուկ կողմ-կողմի է բերում սոցիալական անհավասարության երկու բևեռները, որպես իրողություն անբեկանելի, որպես պարտադրված հակատագիր: Եկեղեցում կնունքի բերված երկու մանուկ խորհրդանշում են Ուժն ու Ստրկությունը, Տերն ու ծառան:

*Մեկը նորածին որդին մեծատուն,  
Մյուսը ազքատի ծնունդը անտուն.  
Մեկը բեհեզով քնած, մյուսն արթուն.  
Մեկուն ժանյակներ, մետաքսի հյուսիկներ,  
Մյուսին ձորձ մը՝ խեղճ հորը շապիկներ,  
Առաջույն ոսկի, ժանյակ բյուր տեսակ,  
Երկրորդի՝ հակաին փուշի սև պսակ.  
Մեկը Տեր արդեն, մյուսը գրասու:  
Ճակատագիր, վա՛խ, աղաքները փաստ...*

Տրիկյան այս նորագույն գանգատը որոշակի մաղձ ունի դեպի «հղիացած, նոխ Մեծերը երկրին» և ունի զայրույթ:

*Ծնրագրած դողող, աչքերս ձեռքիս,  
Կուրծքիս տակ զսպել կուզեի հոգիս:*

Եվ այդ պահին մաքուր բանաստեղծը առաջ է պանում, անսիլներ են երևում նրան, տեսնում է.

*«Բյուր կախաղաններ անզուժ մեծերու...  
Ու հրդեհներու մեջ հեռվն հեռու,  
Ստրուկներու կո՛ւտ, բարբարոս գունդեր,  
Որ տան՛ք, աստվա՛ծ, կո՛ւտք, իշխան ու տե՛ր*

*Տասյալելով վար, կ'երթային հեռու  
Հավասարության սերմը ցանելու.  
Ու լա՛յն բաշխելու Արդարութիւն, Հա՛ց...*

Բայց այս ամենը միայն տեսիլք է.

*Աչքերս բացի, տեսիլք էր միայն...*

Այդ տեսիլքը որպէս իրողություն է պատմում Սեակը «Կարմիր դռնակը» բանաստեղծության մեջ: Եվրոպայում սոցիալական ըմբոստ շարժումների, բանվորական, աշխատավորական ցույցերի ականատես բանաստեղծը համակրանով է խոսում դրանց մասին, ավելին, հաստատում է, թե դա է միակ նշմարիտ ուղին:

Անօրիների, անգործների զանգվածները ի գնն, ի պայքար գոտալով փողոց են դուրս եկել, և բանաստեղծը եզրափակում է իւր միտքը՝

*Արդարություն, որ այս կերպով պիտի գար...*

Բայց հենց նույն տարում գրած «Այս դանակը» պոեմում, պատկերելով խեղճ մի բանվորի, որ ընդունակ չէ *դանակով* հարելու իւր հացը, այդ դանակին, որ կարող էր մի շարժումով Արյան վրա հիմնել Օրենքը, բանաստեղծը դիմում է հետեյալ խոսքերով.

*Բայց կը սպասես որ խաղաղությամբ դա,  
Արդարությամբ դա, գա տարվե-տարի,  
Զրկված մարդկության երազը բարի...*

Ռեֆորմիստական գաղափարախոսության այս արտահայտությունը Սեակի՝ բանվոր դասակարգի դերի ոչ լիարժեք ըմբռնման արգասիքն էր: Թեև նշմարիտ է նաև, որ նա խոր համակրանք է տածում այդ դասակարգի ու նրա պայքարի նկատմամբ: Բացահայտ է բուրժուական աշխարհի անարդարությունների, սոցիալական ննջումների նկատմամբ բանաստեղծի անհաշտ վերաբերմունքն ու կրճատ բողոքը: Սեակն իր մերկացումների մեջ հասնում է խոր ընդհանրացումների. մարդկային գեղեցիկ ու վսեմ հատկանիշների կորուստը տագնապով ու ցավով է ընդգծում բանաստեղծը.

*Այս ի՞նչ տարերու հասեր ենք, Աստված,  
Փշրեցի՞ն ինչ որ կար վսեմ կերտված.  
Թե դեռ սիրտ ունեք, Թաղելու տարեր.  
Ոսկիին նենգ ձայնն է ամենուրեք...*

Կամ՝

*Րոցրս տուր, ըսին, ազգ, քերթված, տոամ,  
Մի կրոնք էա՛ կեղծիք, մի աստված՝ Դրամ...*

Կամ՝

*Վա՛խ, արծաթն արվեստն հանեց կախադան...*

Հասարակական այրող խնդիրներ արծարծող Սեակը չէր կարող անտարբեր անցնել իւր ժողովրդի փաղափական ծանր վիճակի կողմով և ինչպես դարասկզբի արևմտահայ մյուս բանաստեղծների, այնպես էլ նրա ստեղծագործության մեջ հայրենական տառապանքների դրվագները հանախ են պատկերագրվում: Սեակն ստեղծում է հայերի չարդերին նվիրված մի շարք գործեր, որոնք մեր հայրենական ցավի նշմարիտ արտահայտություններ են և մեր հայրենասիրական պոեզիայի լավագույն գործերից: Ինչպես օրինակ՝ «Ով իմ հայրենիքս», «Զանգակներ, զանգակներ», «Հայաստան», «Կիլիկյան երգեր» և այլն: Պատահական չէր, որ Սեակը առաջիններից մեկը եղավ մեր գրողներից, որ արձագանքեց 1909 թ. կիլիկյան չարդերին՝ տպագրելով «Կարմիր գիրք» ժողովածուն: Սկզբունք ունենալով իւր իսկ բնութագրումը՝ («Գրականություն մը տխուր ըլլալու համար պետք չունի անպայման լալկան ըլլալու»), Սեակը բերում էր տառապանքից ծնվող ըմբոստացման տրամադրությունը: Իր մի գրության մեջ, խոսելով կրկրնվող չարդերի մասին, Սեակը շեշտը դնում է այն հարցի վրա, թե «Ե՞րբ պիտի այս ժողովուրդը սորվի մարդկայնորեն կատարել»: Իր բանաստեղծությունների մեջ, բերելով ազատության համար մեր ժողովրդի պայքարի օրինակներ, նոր սերնդին էլ նույնն է պատգամում: Հնազանդության, լուրջյան, համակերպության ընդդեմ՝ բանաստեղծը ուզում է հազարավոր զանգերի ղողանջով արթնացնել մարդկանց, տագնապի ու կենաց պայքարի անազանք հնչեցնել.

*Հողիս հազար խուլ զանգակներով  
Շողացե՛ք զանգեր ու կատաղորեն*



*Գահավիժեցե՛ք ձեր երկաթ թառնն,  
Ուրկն միայն լալ գիտցաք դարերով:*

Կիլիկիացի մօր բերանով բանաստեղծը հայ մանկանը օրօր-  
պատգամ է տալիս:

*Արյո՛ւն-հեղեղ հորդեց այս սուրբ ձորերն,  
Բայց չի փախիս, փարն երկրիդ գայն սիրն,  
Հողիդ վրա գերի մ'ըլլար, այլ տիրն,  
Օրո՛ր ըսեմ՝ քնանաս:*

Կիլիկյան կամ ուրիշ ջարդերի և ընդհանրապես տառապան-  
ների պատկերներից Սևակը կարողանում է հասնել գեղարվեստա-  
կան խոր ու ապավորիչ ընդհանրացումների: Այդպիսի գործ է  
Սևակի «Հայաստան» բանաստեղծությունը, որը հիրավի մի փոք-  
րիկ գլուխգործոց է, խորունկ ցավի խորունկ դրսևորում: Ընդա-  
մենը վեց տող, բայց Հայաստան աշխարհի կենդանի կերպարն է  
գծված:

*Ո՛վ կուլա այսպես խշտակիս շեմքին.  
— Քո՛ւյր, դարիպն է, բա՛ց...  
Կմախք մը կ'անցնի դուրսնն լալագին.  
— Սո՛վն է, դուռդ բա՛ց...  
Տապա՛րն է ջախջախ դըրանըս կուրծքին.  
— Զա՛րդն է, դուռդ բա՛ց...*

Դարասկզբի ողբերգական դեպքերին ահանատես բանաստեղ-  
ծը Սիամանթոյի, Վարուժանի, Քեֆեյանի հետ միասին դարձավ  
այդ դեպքերի գեղագետ-տարեգիրը, հայրենասեր ու մառանչող  
հաղափացին, հրապարակախոսը, սրտացավ բժիշկը՝ բուն մաս-  
նագիտությամբ:

Չմոռանա՛նք նաև, որ բանաստեղծ Սևակը առավել կատարե-  
լագործման հասավ սիրո թեմայի մշակման մեջ: Սևակի սիրո  
հնարերգությունը թեևս ամենահարուստն է դարասկզբի արևմը-  
տանայ պոեզիայում: Սևակի սիրո երգերի հնարական հերոսը  
հառնում է ընթերցողի առաջ կենդանի ու իրական գծերով, հոգե-  
կան հարստությամբ. սիրող ու տառապող, երջանիկ ու ապա-  
բախտ, քախծող ու ցնձուն, ռեալիստ ու երագող միաժամանակ:  
Սևակի սիրո երգերում կան սիրո ապրումի գրեթե բոլոր պահե-  
րը. հանդիպման տենչ, տեսնելու երազանք, ապաստում ու աղչագու-

րում, հոգեկան վայելքներ ու ավայտանք, բաժանման կարոտ ու  
թախիծ:

Սերը Սևակի բանաստեղծական մտածողության մեջ այնպիսի  
իդեալ է, որին պետք է մշտապես երազել ու ձգտել: Անա թե ինչու  
այնպես աղետազին ու տենչալից է բանաստեղծի կտեղը իր իդեա-  
լին, իր սիրած էակին, Սիրուն:

*Եկո՛ւր, եկո՛ւր, ճամբաներն անուրջիս,  
Սրտիս շահերն այրեցի քեզ ի հանդես,  
Վերջին անցորդ տառապանքի կամուրջես,  
Երգի մը պես, ջրոջ մը պես, մոր մը պես  
Եկո՛ւր, եկո՛ւր, ճամբաներն անուրջիս...*

Համակ նվիրումը այդ Իդեալին («Ես փուկ եմ, ֆեղ արքա ու  
գերի», «պաշտամունքիդ ես խնկանք», «տանաքիդ ես ֆուրմ եր-  
գիչը»), պատճառաբանված է:

*Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրե՛նք կաթոզին,  
Ով չի սիրեր պիտի մեռնի առհավետ.  
Սերը պետքն է, երազն է կյանքը կյանքին.  
Սերը մահվան մեջ անուրջն է արփավետ.  
Եկո՛ւր, եկո՛ւր, եկո՛ւր սիրե՛նք կաթոզին:*

Բացատրելով Սիրո բնույթի տարբեր նրբերանգները, սիրո  
պատճառած հրեկանքն ու տառապանքը, բանաստեղծը հայտնում  
է իր համոզումը:

*Սակայն ավա՛ղ անսեր կյանքին:— Կյա՛նք է որ...*

Բանաստեղծը լցված է զգում իրեն սիրով, զգում մեծ ու աստ-  
ված:

*Դուն Սեր-Աստվա՛ծը սիրեցիր...*

Սևակի սիրո գրեթե բոլոր երգերի հիմքում («Երգ-Երգոց»,  
«Նամակը», «Ինչո՛ւ», «Հավիտենական հեփաթըր», «Եկուր», «Վեր-  
ջին կոչը», «Սերը», «Անկարելի սեր», «Պիտի սպասեմ» և այլն),  
ընկած է այն հիմնական գաղափարը, թե Սերն է կյանքի հիմքը  
և այն ամենագուր է Մահվան պես: Գաղափարի խորում բանա-  
ստեղծը Սերը նույնացնում է կյանքի հետ: Ապրել նշանակում է  
սիրել, սիրել՝ նշանակում է ապրել: Այդ իսկ պատճառով էլ նրա  
սիրո երգերում հաճախ խոսք է բացվում մահվան մասին: Երկու  
գործը իրողությունների՝ Սիրո և Մահվան այս մեկտեղումը նպա-

տակ ունի փառաբանել սերը՝ հակադրելով մահին: Սա կյանքի ու Մահվան հավիտենական ողբերգության Սեակյան ընկալումն էր: Մահագագսումը մշտապես անհատին մղում է կյանքի ու Սիրո գնահատման: Բնականաբար սիրո երգերի մեջ ու նրանց կողմին ծնվում են խոհեր բնության երևույթների, աշխարհի գեղեցկության, մարդկային անցողիկ կյանքի մասին («Լեմման», «Կարապները», «Հոգիս», «Երևել ջուր», «Վերջալույս», «Մահագագսում», «Գացող մարդը» և այլն):

Բոլոր այս երգերում Սեակը նուրբ ու զգայուն ֆնարեբու է: Այս բանաստեղծություններին բնորոշ են մեղմ ֆնարականությունը, փոքրիկ թախիծը, զգայականությունը, հղկված ոճը, սահուն դիֆմականությունը: Սեակը կարողանում է կենդանի ու բնական պատկերել մարդ անհատի, սիրող սրտի հոգու նրբին ելևէջումները: Եվ այդ ապրումները փոխանցվում են ընթերցողին:

Ռուբեն Սեակը արևմտահայության մեջ լայն նանաշում գտավ նաև իր արձակ էջերով, որոնք լույս տեսան «Բծիշկին գիրքեն փրցված էջեր» ընդհանուր խորագրով: Մասնագիտությամբ բծիշկի Ռուբեն Չիլինկիրյանը ընթերցողին պատմում է բծշկական պրակտիկայում ստացած իր տպավորությունները: Բնական ու համոզիչ պատմումով նա խոսում է տարբեր հիվանդությունների մասին, զգուշացնում մարդկանց հեռու մնալ տարբեր բնույթի ախտերից: Այդ պատմությունները, որ մեծ մասամբ այս կամ այն հիվանդության պատճառներն ու հետևանքները բացահայտելու միտումն ունեն և ունեն ակնարկային բնույթ, երբեմն-երբեմն աչքի են ընկնում մարդկային հոգեբանության տարբեր կողմերի գեղարվեստական համոզիչ պատկերումով: Այսպիսի դեպքերում հանդես է գալիս բծիշկ-գրող միասնությունը: Եվ այդ արձակ էջերը իրավամբ դառնում են գեղարվեստական էջեր՝ գողտրիկ ու հետաքրքիր պատմվածքներ, ուր փոքրիկ միջադեպերի մեջ կերտվում են գեղարվեստական համոզիչ կերպարներ («Կոունկը», «Անիծած գանձը», «Ստամոխին զոհը» և այլն):



1901 թ. «Հոգե» գրքուկով գրական ասպարեզ իշած Վահան Թեֆեյանը իր բանաստեղծական ինքնությունը հաստատեց դարասկզբին: Հրապարակախոս, խմբագիր, ազգային ու մշակութային

նանաչված գործիչ Թեֆեյանը 10-ական թվականներին արդեն վայելում էր մեծ բանաստեղծի համբավը, որը նա վավերացրեց «Հրաշալի հարություն» ժողովածուով (1914 թ.):

Ինչ-որ խորհուրդ կա Թեֆեյանի ծննդյան ու մահվան թվականների մեջ: Նա աշխարհ եկավ այն պատերազմի տարում (1878 թ.), երբ հայությունը խանդավառված էր Արևմտահայաստանի ազատագրության հեռանկարով: Նա մահացավ մեծ պատերազմի վերջին տարում (1945 թ.), երբ խանդավառ ցնծության օրերը հեռու չէին: Բայց ծննդյան ու մահվան այս երկու թվերի միջև կա մի ամբողջ կյանք՝ Պոլսում ծնված և օտար փերում թափառած արևմտահայ մի զգայուն բանաստեղծի կյանք՝ լեցուն տազնապներով ու հույսերով, ցավով ու տառապանքով, ականատես 1895—96-ի, 1909-ի ու 1915-ի, 1920-ի ու 22-ի, մահերի, տարագրության ու որբության, մի ամբողջ Սփյուռքի:

Մեծերի մեծ ժամանակակիցը եղավ նա, Արվիարյանի, Սիամանթայի, Վարուժանի, Զարդարյանի բարեկամն ու գրչակից եղբայրը, նրանց ոգևորությունների, կարոտների ու թոհիֆների հավատարիմ արձագանքը, ապա՝ նրանց կորստի մոռմոքը իր սրտում՝ տարագիր հայր Սփյուռքի անծայր տարածում:

Անձնական, հասարակական ու հայրենական տառապանքների ամբողջությունը պայմանավորեց բանաստեղծ Թեֆեյանի ստեղծագործական ուղու ընթացքը և սիրո ու կյանքի մահուր, թեթև ֆնարեբությունը կամաց-կամաց տեղի տվեց խորունկ խոհիչ:

Սիամանթայի ու Վարուժանի հայրենասիրական պոեզիան վարակիչ եղավ, և Թեֆեյանը ստեղծեց իր ինքնատիպ Հայերգությունը: Հենց այս տիտղոսը՝ Հայերգություն, իրենն է, որ իր իսկ բացատրությամբ՝ քարգմանում է «Հայ Ազգին կարև ատենի մը մեջ ապրած հոգեկան անուժի և կորուստի, հրեմվանքի և տառապանքի, հույսի, անհուսության և հետո դարձյալ հույսի բոլորովին անօրինակ, իրեն միայն հատուկ կյանքը», արտահայտում է «այդ կյանքին ներշնչած, արվեստ դարձած հոգին»:

Հիրավի, այդպիսին է Թեֆեյանի Հայերգությունը: Այն Արևմտահայության կյանքի որոշակի շրջանների ոգու կնիքն ունի իր վրա: 1900—1908՝ բռնապետության դեմ մաքառումի և հույսի տարիների, 1908—1915՝ Էսրաբերական խաղաղության, բայց և վրդովումի և վերհիշումի տարիների, 1915—1922՝ ֆայլայման և անգոր մոլուցի, 1922-ից հետո՝ տրամության գուգեհեն՝ խաղաղա-

վառուրյան շրջանի: Բոլոր այդ տարիների իր Հայերգություն՝ հայ-  
րենիքի տառապանքի ու գեղեցկության մասին սրտացավ երգերի  
մեջ Քեֆեյանը «հայր ներկայացուց առանց փմահանության, այ-  
սինքն՝ բացառիկ պայծառատեսությամբ», ինչպես բնութագրել է  
Շահան Շահնուրը: «Իր Հայերգությունը բաց վերք մըն է, բայց  
նաև գրավականը՝ դողդոջուն և համառ հավատքի»: Այդ հավատը  
հավատացնում է, թե հայը պիտի հասնի իր Իդեալին:

Իր Հայերգությունը արտահայտությունն է մի ամբողջ ժողո-  
վրդի հոգեկան տվայտանքների, տրտմության և ուրախության,  
հուսալուրջության և հույսի: Նրա մեջ, ինչպես ինքն է բնութագրում,  
կա՝

*Փառքն ու արհամիրքը անցյալի,  
Ներկայի շվարումն  
Ու ապագայի տեսիլքը...*

Նրա մեջ կա բանաստեղծի սերը Հայրենիքի և՛ փառքերի հա-  
մար, և՛ տառապանքի: Կա հիացումը հայոց մեծերի նկատմամբ,  
հերոսական նախնիների փառաբանությունների համար («Հայրենի  
գրույցներով» շարքը), կա հայրենական հողի, սրբազան վայրե-  
րի ներշնչած սարսուռը («Արարատյան դաշտին մեջ» շարքը), կա  
պատերազմի, շարժերի տարսափն ու ցավը, ողբ՝ սպանվածների,  
հոշոտվող ժողովրդի համար, անհուն գուր ու կարեկցանք որբերի  
նկատմամբ: Եվ միևնույն ժամանակ՝ գայրույթ ու բողոք բարբա-  
րոսների ու ֆառ աշխարհի ֆառ անտարբերության դեմ, «սրբազան  
ըմբոսություն» ֆարոգ:

Մերք՝ խորունկ ցավ ու մորմոխ Սփյուռքի տարածում տարա-  
գիր հայության թափառումի, նվազման և ուժացման համար:

*Եվ նորյա այս զանգվածն մարդկային  
Ահա մասեր մի առ մի  
Անվերջորեն կը բաժնվին, կը մեկնին...  
Եվ ան տակավ կը պահսի...  
Խլված իրենց արմատներին ամենքն ալ՝  
Մեր հին, հին ազգը ահա  
Որ չի կրնար իր հողերուն վրա մնալ,  
Չորնալ ուրիշ տեղ կ'երթա...*

Եվ մերք՝ ներքին խանդաղատանք ու հիացում «ճերկա Հա-  
յաստանի»՝ Խորհրդային Հայաստանի նկատմամբ, «տրտմության  
զուգահեռ՝ խանդավառություն»: Այն Հայաստանի, ուր՝ «Երկիրը

հուն իր գավալիքն է այլևս» և «ոչ ոք այնտեղ ալ իրեն ծուռ կը  
նայի...», ուր հողը, «իր գերությունը թափած»՝ նորովի է առ-  
գասավորվում, ուր ավերակների դեմ շինությունների հպարտ շար-  
քերն են հառնում, և ուր հայը ամեն մի՝

*Նոր շենքին, նոր հենքին, մտքին նոր  
Կը նայի հրեմվանքով մը սովոր,  
Կը լեցվի անդորրով մ'անհուն...*

Վաճան Քեֆեյանը, որ իր գիտակից կյանքի գրեթե բոլոր տա-  
րիներին տարագիր եղավ, հայրենիքի կարոտը սրտում, տարագիր  
հայությանը ծառայեց գրիչով ու գործով, եղավ ազգային հասա-  
րակական գործիչ, իր՝ հայի սիրտը բացեց իր բանաստեղծությու-  
ններում:

Բայց Քեֆեյանը հայ լինելով, նաև մարդ էր, 20-րդ դարի խո-  
հուն մտավորական, աշխարհն ու կյանքը խորապես նանաչած ներ-  
հուն արվեստագետ և իր երգերում՝ ընթերցողի առաջ բացեց ոչ  
միայն իր Հայի սիրտը, այլև Մարդու սիրտը: Մարդ, որ ունի անձ-  
նական խորունկ ցավեր, սիրո տազնապներ ու հուզումներ, կյանքի  
ու բնության մասին իմաստնացած մտորումներ:

Եվ նրա Հայերգության կողմին, նրան միահյուս՝ ծնվեցին Սի-  
րո ու Խոհական երգերը՝ ներհանյուս ու կատարյալ, կոկիկ ու հրդկ-  
ված հրաշալի բանաստեղծություններ: Իրավունք ունեն բանա-  
ստեղծը իր մի ընդարձակ գիրքը «Մեր» խորագրելու: Մեր՝ աշխար-  
հի ու մարդու նկատմամբ, սեր դեպի սիրած աղջիկը, որ կարոտ  
ու մորմոխ է բանաստեղծի հոգում, ֆաղցր հուշ, երանության զգա-  
ցում, անուշ տառապանք:

Քեֆեյանի սերը: Չնայած մարմնական սիրո, վայելքի առան-  
ձին պատկերներին, Քեֆեյանի սիրո եզրը ֆաղցր հուշ է, արդեն  
անցած երազ: Իրեն շեն հասկացել, իր սրտի ծովան են տեսել և  
ոչ թե կրակը: Մի տեսակ թախիծ ու փստոսանք կա նրա սիրո եր-  
գերում:

*Ես սիրեցի, բայց ոչ ոք  
Միրածներես գիտցավ թե  
Ձինքը որքան սիրեցի...  
Ո՞վ կարողալ սիրտը գիտե:  
...և Եթե սերըս ոմանք  
Երկիրքին վրա՝ անսահման  
Տեսան ծովի մը նման,  
Կրակն անոր յտեսան...*

Բայց բանաստեղծի համար հանելի է հիշել նրանց, անցած տե-  
րերի փաղցր կարոտը: Հիշատակները միշտ հոգևին հարուստ են  
պահում նրան:

*Հիշատակովդ, այս գիշեր, կը զգամ այնչափ զիս հարուստ,  
Այնչափ բարի, երջանիկ, որ գթությամբ մ'անհուն  
Կը մտածեն զայն Բածենի Լրկրի բուր խնդհերուն:*

Բանաստեղծի սերը անցյալ կատարյալ է և ներկայում միայն  
հանելի հուշ:

*Աղվորն անոնք են միայն որ տենչանքիդ ընդմեջեն  
Անցան, գացին ու հիմա քեզ հեռուեն կը կանչեն...*

Բայց այդ հիշատակները, անցյալ լինելով, բանաստեղծի  
ներկան զբաղեցնում են անցյալ օրերի թարմությամբ և անցյալը  
զարձնում ներկա, միայն թե, ավա՛ղ, միայն երևակայությամբ,  
միայն հոգևին, աննյութեղեն: Բայց որքա՛ն կենդանի:

*Քու հիշատակդ, այս գիշեր, զիս լալու շափ կը հուզե.  
Կարծես մեկնած էր սրտես և գաղտնաբար այս գիշեր  
Ստ կը դառնա ու հին տեղն ու հին զգվանքը կ'ուզե,  
Կը սեղմըվի գրկիս մեջ, կը բարձրանա կուրծքս ք վերս:  
Քու պատկերդ աչքիս մեջ և քու ձայնդ ականջիս  
Կը թրթռան այս գիշեր, երակներուս մեջ կարծես  
Քաղցրահոտ շունչդ է լեցված, որ կը զգլխե, կը օրբի զլս.  
Մինչ երեսես ալ կանցնին կարծես մատներդ անտես:*

Միտդ սրտերը, ըստ բանաստեղծի, ավելի հարուստ են ու  
խոր, լիք կյանքով, անգամ եթե փոխադարձ չի եղել այդ սերը:  
Թե՛քյանը շնորհակալության խոսք է ասում անցած իր սերերին,  
ողջունում է բոլոր նրանց հիշատակի ներխուժումը իր սիրտը, բո-  
լոր նրանց, «ուրոնք երբեք չգիտցան» իր սրտի մեջ փոթորկված  
սերը իրենց նկատմամբ և նրանցից ոչինչ չի պահանջում.

*Իրենցմե բան չեմ ուզեր ես ալ հիմա,  
Ձի ստացա ինչ որ ինձ տալ կրնային,  
Այ իրենցմով հիմա շեն է ամային...*

Ներկա թե անցյալ՝ սիրո պահերի, հուշերի պատկերները բա-  
նաստեղծի գրչի ապ կենդանանում են վառ գույներով, վարակիչ  
անկեղծությամբ: Այդպես է երգում Թե՛քյանը «Սերը տասնվեց,  
երեսուն և վաթսուն տարեկանին» հավասարապես:

Խոհուն բանաստեղծ է Թե՛քյանը: Կյանքի, հասարակության,  
բնության, իրերի ու երևույթների, անձնական ապրումների ար-  
ձագանձումները նրա պոեզիայում վերածվել են խոր ու խոհուն,  
հուզիչ ու տպավորիչ պատկերների («Կ'անձրևե, տղաս», «Գիր-  
ֆեր», «Մեկ հատիկ», «Ներսեսամյակ», «Տաղ արևին», «Զավակ»,  
«Նեղոս», «Հաշվեհարար», «Ոսկեմարտը» և այլն):

Այս և ուրիշ բանաստեղծություններում Թե՛քյանը հանդես է  
բերել խոհուն մտավորականի գիտակից մարդասիրությունը, պատ-  
կերավոր ու դիպուկ պատկերավորումներով բացել կյանքի գաղտ-  
նիքներ, կատարել է խոր ընդհանրացումներ: Ինչպես, օրինակ.

*Գիտեմ գաղտնիք մ'անավոր.— այս աստվածն է սո՛ւտ աստված,  
Որ խաբած է մարդը միշտ և մարդը զայն է խաբած...*

Անձնական, անհատական ապրումների այնպիսի դրսևորում-  
ներ, ինչպիսիք են՝ «Մեկ հատիկ», «Զավակ», «Պատիժը» և այլն,  
պիտի անցնեն երկար ճանապարհ, փանդի նրանց մեջ կան մարդ-  
անճատի էության հարատևող հատկանիշներ:

Թե՛քյանի բանաստեղծությունները անցնելիք ճանապարհ  
ունեն, փանդի օրերի արձագանքումներ լինելով, նաև ընդհանրա-  
կան են՝ մտահոգություն ընդհանրապես մարդկության բախտի հա-  
մար: Ազգային լինելով՝ միաժամանակ համամարդկային են: Անձ-  
նական լինելով՝ մարդկային են:

Ու նաև, որ շատ կարևոր է, դրանք հղկված բանաստեղծա-  
կան կառույցներ են. մշակված՝ ձևի ու շափի մեջ, մտքի ու զգա-  
ցումի ներքին տրամաբանությամբ, ինքնատիպ ու տպավորիչ  
պատկերային համակարգով:

Ահա, օրինակ՝ «Հանրմը».

*Միակտուր սև-անփայլ մետաքսն ամբողջ զինք ծածկած  
Եվ շայլերուն մետաքսե խոր շրշյունովը թեթև՝  
Որ ազդրերուն քնարին կարծես եվագն ըլլար ցած,  
Կ'երթա հանրմըն՝ հուլելով մուշկի ալիք մ'իր ետև...*

*Փանկակահորդ քնեն դուրս կը բխի ձեռքը պղտիկ՝  
Ջոր նախանձուս սև ձեռնոց մը կը պահե կիսովին,  
Մինչ ուղղանկյուն ճակատին ինկած քողն ալ լուսանցիկ  
Սանրածաղիք աչքերուն կ'անթեղե հուրքը խորին...*

Կամուրջին վրա, հորդազեզ վերջալույսի մը ներքե,  
Կ'երթա հանրաճ այսպես, հորիզոնն հորիզոն,  
Մթնցնելով Ոսկեղջյուրն ու դոլմեկով երկկոն...

Կ'երթա հանրմն՝ անմատույց, ջողածածուկ, հոյածն,  
Կին կամ ոգի, պահ մ'ելած պալատներին Պոլիսի,  
Պոյս Ոգին, խուսափուկ, անքննելի, սիրալի...

Ո՞րն է, բառ Քեֆեյանի, բանաստեղծի առաջելուրյան նայա-  
տակը ներկա դարում: Օգնել մարդուն՝ մարդ մնալու: Բռնել նրա  
ձեռքը, որ սուր է բարձրացրել, քննազանցել նրա բրտացող հոգին,  
մեղմել նրա մոլությունները: Դրամի, ոսկու պատճառով առաջա-  
ցած տենդը բուժել, չէ՞ որ դա է պատճառը Մարդկայնության կո-  
րստի, նրա ողբերգության («Ոսկեմարտը»):

Նրկիրը երգ է ամբողջ՝ իր հովերով, ծովերով...  
Կը խաղա լույս մ'անմեղ՝ երեսն հոգին ու ջուրին...  
Նրջանկությունն իրրև ու մը կ'ստատտե մարդուն քով...  
Ոսկի է սիրտը Մարդուն, ան գտած չէ դեռ Ոսկին...

Քայց մի ներքին խռով ու գաղտնի տենդ մզում են նրան՝  
բերել հողը և գտնել Ոսկին: Այլևս նա կորած է: Ձեռքնեծեծ  
անցնող Ոսկին, «անագորայն և ունայն Ոսկեմարտը» փոխում է  
ամեն ինչ. երկիրը չի երգում, մարդիկ սպանում են իրար, ե-  
րկիրը սուգով է ծանրաբեռն: Եվ ֆերթողը նետվում է կովի մեջ,  
խլում է Ոսկին և վերադարձնում ետ՝ բնությանը:

Ի՞նչ փույթ ճակատից հոսող արյունը, ի՞նչ փույթ գռեք, չէ՞  
որ՝

Կ'երգե երկիրը դարձյալ ու կը պարե լույսն անմեղ:

«Միայն բանաստեղծությունն է, որ այս հրաշքը կարելի  
կ'ընեն», ուրիշ առիթով ասած իր իսկ խոսքերը վերաբերում են նաև  
այս խնդրին: Բանաստեղծությունն է, որ պիտի վերադարձնի  
մարդուն Անմեղությունն ու Սերը, Երգը և Լույսը:

Վահան Քեֆեյանը, որ Շահնուրի բնութագրմամբ «լուսատիպ  
համագորն էր մեր ֆերթողության փառուներուն», իրավ հայ ու  
իրավ բանաստեղծ, ճակատագրի բերումով իր սերնդակիցներից  
երկար ապրեց: Այս բարեբախտությունը Սփյուռքին տվեց ուղեհիշ-  
բանաստեղծ: Արևմտահայ մեծ բանաստեղծը դարձավ Սփյուռքի  
ամենամեծ բանաստեղծը, և սփյուռքահայ պոեզիայի զարգացման  
ընթացքը պայմանավորվեց առաջին հերթին նրանով:



1918-ին, Զինադադարից անմիջապես հետո Պոլսահայ մշա-  
կութային կյանքը նոր աշխուժացում ապրեց: Պոլիս վերադարձան  
արտասահմանում ու քաֆստոցներում գտնվող գրողները: Եվ  
1918—22 թթ. ժամանակաընթացքը եղավ ճիգ ու ջանքի ժամա-  
նակ՝ վերստեղծելու նախորդ օրերի՝ 1910—14 թթ. գրական-մշա-  
կութային մակարդակը, հավաքելու արևմտահայության կենդանի  
մնացած, ցաֆ ու ցրիվ բեկորները, ներշնչելու նրանց ապրելու և  
ստեղծագործելու կամք ու հավատ:

Ժողովրդի կենսասիրական ոգին բարձրացնելու նպատակն էր  
հետապնդում այդ օրերի պաշտահայ մամուլի ու գրականության  
մշակների գրեթե ողջ գործունեությունը: Այդ տարիներին Պոլսում  
լույս տեսան բազմաթիվ արձակ ու շափածո գրքեր: 1918—22 թթ.  
պոլսահայ պոեզիան ներկայացնում էին Վ. Քեֆեյանը, Կ. Զար-  
յանը, Հ. Սիրունին, Գ. Կառվարենցը, Լ. Էսանյանը և ուրիշներ:  
Սակայն այդ օրերի հայտնությունը եղավ երիտասարդ Մատթեոս  
Զարիֆյանը՝ արևմտահայ վերջին մեծ քնարերգուն:

Կարևատև ստեղծագործական կյանք ունեցավ Զարիֆյանը:  
Նրա օրագրերը, որ սկսվում են 1916-ից, մեր առջև բացում են  
ոչ միայն մի խոր հոգու տեր անհատականություն, այլև բացա-  
հայտում են երիտասարդի գրական տաղանդը: Սակայն հասարա-  
կությունը նրա բանաստեղծական շնորհների մասին իմացավ ավե-  
լի ուշ՝ 1919—20 թթ., իսկ առաջին գիրքը լույս տեսավ 1921-ին  
(«Տրամության և խաղաղության երգեր»): Մեկ տարի հետո էլ երկ-  
րորդը՝ «Կյանքի և մահվան երգեր»: Հետո առանձին կտորներ մա-  
մուլում, իսկ 1924 թ. գարնանը նա այլևս չկար: Ասուպի կյանք,  
բայց և ասուպի լույս:

Զարիֆյանի բարձր էջերը՝ բանաստեղծություն, արձակ ու օրա-  
գիր, նամակ ու գրառում, բոլորը կարող էին նույն խորագրի տակ  
դրվել՝ «Տրամության և խաղաղության, կյանքի ու մահվան եր-  
գեր»:

Պատերազմի արյունալի օրերից, հայ ժողովրդի մեծ ողբե-  
գությունից հետո ընթերցողը և հատկապես երիտասարդությունը  
հոգեկան պահանջ էր զգում արտամտ երգի, հոգու խաղաղու-  
թյան, մարդկային ազնիվ ապրումների, և Զարիֆյանի երգերը,  
որ անսերևեթ ու պարզ էին, սիրո ու մահվան միջև տառապանք

հոգու մրմունջներ, զգայուն ու զգացնող, հուզիչ ու տրամադրող, — հասան ընթերցողի սրտին, ընդունվեցին ջերմությամբ:

*Օս այսօր  
Ճառագայթ մ'եմ բոսոր...  
Աչքերուս, հեշտօրոր,  
Այնքան լույս ունեմ որ  
Կժպտիմ  
Մըտերիմ  
Արևին...*

Հիշենք, որ այս բանաստեղծությունը Զարիֆյանը վերնագրել է «Երջանկություն»:

Զարիֆյանի երգերը նշմարիտ արտացոլումներն են 1919—23 թթ. պոլսահայ կյանքի: Պատերազմական տարիների ահավոր օրերի մղձավանջը դեռ չէր մոռացվել: Վիշտը դեռ հուշ չէր և ծանրացած էր ապրողների սրտում: Սակայն կյանքն իրենն էր պահանջում, և պետք էր ապրել: Ապրել առանց լացի, կյանքը սիրելով, բայց չմոռանալով անցյալը: Եվ ահա բանաստեղծ Զարիֆյանը բերում էր այդպիսի հոգիների երգը: Նոր օրերի՝ խաղաղության օրերի երգը և սրտի խորքերում ամբարված տրամության երգը: Գրքի առաջին իսկ երգով նա հաստատում էր նորը՝ խաղաղությունը, այնքան բաղձալին:

Զարիֆյանն իր պոեզիայով հաստատում էր կյանքը, այն, ինչն է՛րավի պետք էր սգակիր մի ժողովրդի: Եվ տրամախառն էին այդ երգերը, որովհետև նիշողությունը ջնջել չի լինի:

Տրամության և մահվան տրամադրությունները Զարիֆյանի պոեզիայում թելադրված էին ինչպես ժողովրդի, այնպես էլ անձնական վշտերով: Այն տարիներին, որ բանաստեղծություններ է գրել, Զարիֆյանը տառապում էր թոփախտով, պայքարում էր մահվան դեմ: Եվ նրա երգերը այդ ցավից ծնված նիշեր են՝ անկեղծ ու նշմարիտ, կյանքի սիրով ու երազով բեռնավոր:

«Տրամության և խաղաղության երգեր» էր անվանել բանաստեղծն իր առաջին գիրքը, բայց այն ոչ թե տրամության երգն էր, այլ տրտում հոգով՝ խաղաղության երգը, խաղաղ կյանքի, խաղաղ հոգիների երգը, կյանքի երգը:

«Կյանքի և մահվան երգեր» էր անվանել իր երկրորդ գիրքը, բայց այնտեղ մահվան երգը չկար, այլ մեռնողի անսահման սերը կյանքի նկատմամբ, մահվան դեմ կյանքի ճաստատումը:

Սիրո մոտիվը գերիշխող է Զարիֆյանի երգերում, և այդ սերն էլ կրկին կյանքի հաստատումն էր: Սերը՝ կյանքի հիմնական դրսևորումը, բանաստեղծի համար արդեն ապրել է նշանակում: Եվ ամեն դեպքում՝ կյանքին սիրահարված, կյանքը հաստատող, բայց մահվան ուրվականն զգացող, կենսասեր հոգու՝ մերթ պայծառ ու լուսավոր, մերթ թախծոտ ու ընկեցված, մերթ ըմբոստ ու արհամարհվող երիտասարդի՝ բանաստեղծ երիտասարդի հոգու մրմունջներն են նրա երգերը:

«Կյանքը... Որքան կը սիրեմ զայն հիմա: Տեր Աստված արդյոք շատ ո՞ւշ չէ...»:

«Կյանքը... հոյակապ հրաշալիք մըն է... Ինչպես կուզեմ կրմախֆացած բազուկներովս ամբողջ հուսահատությունով փաթթվիլ անոր ու պաղատիլ, որ շլֆե գիս...»:

«Ու պիտի ապրիմ: Ակռաներովս պիտի բզկտեմ այն սև թաթը, զոր մահը երկարած է հոգիիս: Անսահման ուժ ունիմ դեռ: Այլ լմնցած, ֆայֆայված կարծած այս էությունս տակավին ինչ աղբյուրներ ունի եղեր: Ապացո՞ւյց: Ահավասիկ կամֆիս սա պայծառ ժայթքումը հուսահատությանս խորերեն...»

«Պիտի ապրիմ»:

Օրագրի այս էջերը 1921 թ. վերջերին են գրված: Մահվան դեմ պայքարը, որ ավելի վաղ էր սկսվել, Զարիֆյանը շարունակեց ևս մեկուկես տարի:

Ճակատագիրը կրկնվում էր: Մահվան դեմ պայքարի էին ելել նաև նրա մեծ նախորդները՝ Դուրյանը, Մեծարենցը... Թոփախտը ծաղիկ հասակում կյանքից տարավ նրանց: Ու նաև Գ. Պեշկյոբաբյանին, Հ. Արշակյանին: Չմոռանալ նաև Պեշիկթաշլյանին ու Տերյանին:

Ու եթե Դուրյանը խոռվության իր մեկ պահին ծառայած անաստված, անեծք ու շանթ դարձավ՝ «ոխերիմ» աստծո կողմը խրքեցվելու, ֆանգի չէր վայելել ոչ մեկ սեր ու համբույր,

ու եթե Արշակյանը սոսկ մրմնջաց համակերպ՝ «Մատաղ մեռնիլն է դժար...»,

ու եթե Մեծարենցը արևին ու բնությանը պաղատագին հրավեր կարդաց՝ պլլելու իրեն կենսական շողերով, Զարիֆյանը...

*...Ինչ սրտիս վրա վարդ մը չեմ սեղմեր...*

*...Ինչ չեմ ողջուներ Աստղը վարդերանդ,*

Որուն ըղձանքն ըրիր զիս զեզին.  
Մեղը է, Տեր Աստված, որ ետես հողին՝  
Այսքան կայծ ու խունկ, երգ ու երազանք,  
Մեղը է քու փառքին...

Իրավ, այդքան «երգ ու երազանք», բանաստեղծական մի մեծ աշխարհն հոգու խորքում, դեռ իր խոսքը շատած աշխարհին, դեռ չվայելած սեր ու կյանք,— հեռանա՞լ աշխարհից,— անավոր է:  
Իր բոլոր մարմնական տառապանքները նա պատենելով էր հոգու պայծառ լույսով: Միայն այդպես էր հնարավոր հաղթել մահին:

Տակավ, բանի ցավս կ'ըլլա ահավոր,  
Հոգիս մեջ պայծառութուն մը կ'իջնե...

Որովհետև բանաստեղծը հավատամք ուներ, որ վերնագրեց «Ռոզում», դրանով էլ ամփոփեց իր առաջին գիրքը:

Ոչ իսկ հառաչ մը հանել  
Ճամբուն վրա այս անել.  
Հրամայել որ ցամքի  
Վերջին կաթիլն արցունքի.  
.....  
Հետո ժպտիլ ու քալել  
Ճամբուն վրա այս անել:

Որքան ուժգնանում է տառապանքը, կյանքի երգը նույնքան բեժանում է, կրկին բնության մեղեդիներն են հնչում նրա հոգում:

Ծվ աղերակ սրտիս խցրեն  
Նորեն, նորեն ահա կ'երգե.  
Կյանքի Սրինգը մեղմորեն.—  
Վարդ կը բացվի մեն մի վերքե...

Բանաստեղծը չի կարող անձնատուր լինել նակատագրին: Նա ելնում է նրա դեմ, որովհետև չնայած ծանր հիվանդությանը, իր խանդավառ օրերի, խանդավառ մասնակիցն է նա: Նա ցնծությամբ է բեզումում ազգային զարթոնքի ամեն մի լուր:

Զարիֆյանը մտահոգված էր ոչ միայն իր, այլև «կացիներնա» իր սերնդի հույսերն» իրականացնելու մեծ խնդիրներով, քեպուր իզձեռ ուներ, երազված երազներ, որին ձգտում էր ողջ էությամբ.

Հոգիս զրկած թևերուս մեջ, ձեզի կուզամ,  
Ձեզի՝ լիռներն իմ երազիս, նոր երազիս:

Մերն ու կյանքը նույն իմաստն ունեն բանաստեղծի համար, ավելին՝ նրանք փոխադարձաբար պայմանավորված են մեկը մյուսով:

Մերը նրա համար գերագույն հանույժ է, աստվածային խմբիչ, և սիրո հրաշալի մի պահն զգալու համար նա պատրաստ է տալ նույնիսկ կյանքը:

Երկնքի մեծ գուռերուն պես  
Իաց հոգիս թևերդ մարմար,  
Եթե մեռնիմ իսկ հուզումես՝  
Այդ մահն ապրիլ է ինձ համար...

Այդպես, նրա կրծքին, սիրո խոսքեր մամնջալով մեռնելու պահը Զարիֆյանն անվանում է «Շեֆ օրհաս» և իր արարելը հաստատում է հզոր փաստարկով՝

Ես սիրեցի թեզ իբր աստված...

Զարիֆյանի սիրո երգերում և՛ վայելման անզուսպ հրեվանքն ու հոգեկան անսահման բավարարվածությունը կա, և՛ տենչի ու կարոտի զգացումը, և՛ սպասման տագնապները, և՛ բաժանման կրծող բախիծը, և՛ կարեկցանք, ցավ ու տառապանք իր վիճակի համար, իր սերերի համար:

Արևմտահայ պոեզիայում կա, այսպես ասած, «պոետիկ աղբյուր» թեման: Փոքրիկ, դեռ մեծ սիրուն ոչ պատրաստ աղջկան՝ «պոետիկ աղջկան» երգեր են ձուներ Ռ. Սևակը, Վ. Քեֆեյանը: Զարիֆյանն էլ նույն թեմայով ստեղծել է մի շարք երգեր («Պոետիկ աղբյուր», «Պոետիկ աղվոր աղջկան», «Կարեկցություն»):

Ինչպես վարվել այն «պոետիկ աղջկա» հետ, որ ասում է, թե իրեն «խենթի պես կսիրե»: Չոր ու կոպիտ խոսքերով մերժել նրա առաջին սերը, փշթել այդպես անխեղ՝ անհնար է, խաբել նրան, սրբապղծություն է, սիրել նրան, նվիրել մահվան շեմին գտնվող սիրտը, որ հետո տառապանքներ մեա նրան բաժին՝ սարսափելի է... Ինչպե՞ս վարվել: Ու ծեղվում է մեծ կարեկցությունը փռերիկ աղջկա նկատմամբ:

Կես, զես ննչե ըսի,  
Հետո գացի հետուն լացի...

Այդ լացը և մերժված աղջկա համար է, և իր համար, իր ցավի

համար: Այր մարդու լաց է դա, մարդկանցից հեռու, մենակ, ճրպարտ:

Մի նոր ու թարմ ձայն էր բերում Զարիֆյանն իր պոեզիայով: Պարզ ու անմիջական, մեղմ ու վարակիչ երգեր էին դրանք (երբեմն բանաստեղծական կատարելության չհասած), և հուզում էին, որովհետև սրտի խոսք էին, մի ինֆնատիպ անհատականություն, էին բացահայտում ընթերցողի առաջ, սիրող ու տառապող անհատի հոգու ծալքերն էին բացում թերթ առ թերթ, — և դա իսկական պոեզիա էր:

Զարիֆյանի պոեզիայի համար բնորոշն առավելապես ապրումի, պահի նկարագրությունն է, նա նպատակ չի դնում իր առջև էպիտետներով, համեմատություններով բացատրվել, սակայն հաճախ ծնվում են ինֆնատիպ, նոր պատկերներ, որ ավելի են սրում զգացումը: Ահա մի երկու օրինակ.

*Օրը հասավ.*

*Նրկնքին վրա*

*Մայրամուտի ծիրանեզուն հուրինեն, իսկ,*

*Մութ ձեռքն մը կարծես հանկարծ դաշունահար,*

*Արյունեկեն, արյունեկեն նվաղեցան...*

*...Ուստի լըբեր ենք մարմիննիս*

*Քովերնիս*

*Նվ աստղ կ'ըմպենք բաժակ-բաժակ՝*

*Եւթը փակ...*

Զարիֆյանի պոեզիայի վրա անշուշտ իրենց «թևն են սահեցրել» եվրոպացի ու հայ մի շարք բանաստեղծների ստեղծագործությունները: Նվ դա բնական է: Զարիֆյանն անշափ շատ էր կարդում: Իր օրագրերում, բանաստեղծություններում, նամակներում հաճախ ենք հանդիպում համաշխարհային գրականության մեծերի՝ անուններին (Տալստոյ, Հայնե, Մետերլինգ, Շեֆսպիր, Ուայլդ, Բոդլեր, Վերլեն, Վերհարն և ուրիշներ):

Նվրոպական խորհրդապաշտ պոեզիայի կնիքն անշուշտ կա Զարիֆյանի երգերի վրա («Միմոզայի շյուղը», «Խենթը», «Հոգիներ», «Մահը կուգա» և այլն), սակայն ամբողջության մեջ նրա ստեղծագործությունն ունի ինֆնուրույն շեշտ, հայկական գունավորում: Իր խառնվածով Զարիֆյանը ողմանտիկ է, արվեստի մեջ

նգտում է զգացումների իրապաշտության, ինարկե, մնալով ողմանտիկ:

Զարիֆյանը հաստատեց իր տեղը մեր բնաբերգության մեջ, կանգնելով Դուրյանի, Մեծարենցի, Տերյանի, Իսահակյանի, Քեֆեյանի ու Ռ. Սևակի կողքին, որպես նրանց կրտսեր եղբայրը, դառնալով արևմտահայ բնաբերգության վերջին տաղանդավոր ներկայացուցիչը:

ՎԱՉԳՆՆ ԳԱՐՐԻՆԵԼՅԱՆ



Ռ Ռ Ի Բ Ե Ն  
Ռ Ր Բ Ե Ր Յ Ա Ն

Ե Ր Կ Ե Ր

# ԱՂՎՈՐ ԱՓԵՐ

## ԳՅՈՒՂԻՍ ՃԱՄԲԱՆ

Կյանքի նավակն հետք չի թողուց իր ետին,  
Մոռացումը առավ ինձմե ամեն բան,  
Հին երազներս ամպերու պես կ'անհետին,  
Հիշատակն ալ կ'անցնի երգի մը նման:



Հոգիս սակայն կը հիշե՛ քեզ,  
Դո՛ւն, ծաղկավետ գյուղիս ճամբան,  
Ուր քալեինք զառնուկս ու ես,  
Դեպի պուրակն ու բուրաստան,  
Անմեղության երազին պես:

Ու քովիկեզ դողողագին  
Սահեր աղվոր վճիտ առուն,  
Մերթ կամուրջին ու մերթ մարգին  
Տակ պահվելով կ'երթար հեռուն,  
Ամայության իբրև ոգին:

Բարակ, նիհար քանի մը ճյուղ  
Կը զատվեին վտիտ բունեզ,  
Մին կը դիմեր դեպ անշուք գյուղ,  
Կը տարածվեր, կ'ըլլար անհետ,  
Բոլորելով խրճիթն ու հյուղ:

Մին մագըլցեր բլուրն ՚ի վեր,  
Մյուսը կ'իջներ ձորակեն վար,  
Ուր ուռենին կուտար ստվեր,  
Ու սրինգն իր երգը կուլար,  
Զոր կրկնեի՛ն գարնան հովեր:

Զմուռն ալ երբ ձյունն սպիտակ,  
Կը գտներ մեզ շուրջ թռնիրին,  
Անհետ կ'ըներ իր ծալքին տակ  
Մեր հին գյուղին վտիտ ուղին,  
Ինչպես մարգերն ու մանիշակ:



Տաշված քարն ուղիղ ճամբան  
Կը տանի զիս արդ ի ծովափ,  
Կը ճմլըվի՛ հոգիս սակայն,  
Մտածումով մը հրատապ,  
Ու կը թռչիմ հին մանկության:

Հոն՝ փակ թեև՝ սակայն ազվոր  
Ու երփնագե՛ղ էր հորիզոն,  
Հմայքներով լի բյուրավոր  
Անմեղությո՛ւնը խայտար հոն  
Ճամբուն վրա ոլոր մոլոր:

Մին՝ մագըլցեր բլուրն ՚ի վեր,  
Մյուսը կ'իջներ ձորակեն վար,  
Ուր ուռենին կուտար ստվեր,  
Սրինգն ալ իր երգը կուլար,  
Զոր կրկնեի՛ն գարնան հովեր:

Կյանքի նավակն հետք չի թողուց իր ետին,  
Մոռացումը առավ ինձմե ամեն բան,  
Հին երազներս ամպերու պես կ'անհետին,  
Հիշատակն ալ կ'անցնի երգի մը նման...

## ՏՆԱԿՍ

Բախտը քեզ ալ ինձի նման  
Մոխիր դարձուց ու բու քովիկ  
Մենիկ թողուց վտակ, հովիկ,  
Իրենց երգովը բաժանման:

Անտառներու մե՛ջն էր անի,  
— Մեկ քանի սյուն ու սև պատեր,  
Մեջքերնին կոր, իրար բռներ,  
Հին օրերու զերդ ծերունի:

Ու իր խարխուլ պատերեն վեր  
Մագըլցեին բաղեղն ու վարդ,  
Ու կտուրին տակն իր զվարթ  
Միծառներու կային բույներ:

Մեկ սենյակ էր ու մեկ օջախ  
Ու հեացող լոկ մի ճրագ,  
Ու կյանքն ալ որ կ'անցներ արագ,  
Մեկ իղեալ ուներ, ավա՛ղ...

Ժպիտներով լեցուն առկայծ  
Մեկ վերջալույս կը հատներ հոն,  
Ու կարմրագեղ մեր հորիզոն  
Դալարներու մեջն էր փակված:

Հին տնակին քովիկն ՚ի վար  
Կարկաչելով սահեր վրտակ,  
Կ'երթար՝ պահվիլ մարգերուն տակ  
Միրամբունց ու դողահար:

Միծառն անվախ կուգար իմ քով,  
Ու ձմռան ալ ճնճողուն անտեր  
Իր փշրանքը ափես կ'ուտեր  
Ու կը թռչեր բլուր երգերով:

Չյունը երդիկը կը ծածկեր իրեն տակ,  
Փոթորիկեն հյուղակն ամբողջ կը դողար,  
Բայց մեզ ինչ հոգ, երբ ճարճատուն, մշտավառ  
Օճախին մեջ դեռ չի մարած էր կրակ:

Մեկ կանթեղը բա՛վ էր մեղի,  
Թեև դեղին ու հեացող,  
— Փուլթ չէ՛ ստվերն՝ երբ լիաշող  
Երանությունը կը հոսի...

Այդ կանթեղին շուրջ թռավ իմ նախկին ճիչ,  
Երազներս հո՛ն ծրնան զվարթ կամ տխուր,  
Մայրս հո՛ն տվավ արագիլի մեկ փետուր,  
Գրե՛, ըսավ, ա՛յս թող լինի քու գրիչ...

Մեկ հյուղակը մեզի բավ էր,  
Թեև անշուք, խարխուլ ու հին,  
Ձմեռներու թեև քամին  
Ձայն տերեխ պես կը շարժեր...

Կանթեղին շուրջ ժպտուն աչքեր փակվեցան,  
Սիրելիներ ծեր հյուղակը թողուցին,  
Ու հոն երգող մնացին լոկ առանձին  
Թափառիկ հովն ու վտակը ողբաձայն...

Կ'երազեմ զո՛ւր աչքերըս փակ ու գրչին  
Ձոր ինձ տվավ սուրբ մայրենի  
Սերն՝ աղվոր օր մը գարունի  
Գեռ չի տված իմ հրածե՛շտը վերջին:

Կ'ուզեմ երգել, քե՛զ, իմ տնակ մանկության,  
Երբ դուն իմ բյուր հույսերուն պես  
Այսօր անշուք փլատակ մ'ես,  
Ու կը մնաս մոռացումեն անբաժան...

Զի դիմացար քեզ սիրողներն երբ գացին,  
Կարոտդ զքեզ դարձուց մոխիր.

Երազիս պես սին ու պատիր,  
Ու դուն մեռած՝ չե՛ս սպասեր իմ դարձին...

Այլ երանի՛, երբ ամենքը քեզ մոռցան,  
Վտակ, հովիկ քովըդ թռչին,  
Ու փշրելեն ետք իմ գրչին  
Անոնք զքեզ պիտի երդեն հավիտյան...

## ԱՂՎՈՐ ԱՓԵՐ

(Մնաս բառովի փոխաբեն)

Բաժանումի վերջալույսին մի հսկա  
Նավ կը դողար, վերջին սուլլերը հնչած,  
Մութը կ'իջներ բլուրներեն մոտակա,  
Ու կը ջնջեր ալյակները մեղմահած.  
Եվ ուղևորը կը դիտեր անխոսուկ  
Ադամանդները ծովափի մանյակին,  
Գարուններու հուշիկները խուսափուկ  
Որ կ'անցնեին հատիկ-հատիկ, անձկագին:  
Կը մտածեր թե՛ «կը դառնամ ես մի օր,  
Երբ որ դառնան ծիծառները թափառիկ,  
Ու մայիսին՝ դալարագեղ ու աղվոր,  
Սիրո՛ւն ափեր, ինձ վերստին կը ժպտիք...»:  
Նավը քալեց, ուղևորը զերդ արձան  
Իր նայվածքը հոն սևեռեց ընդ երկար,  
Աստղեր դողողոջ՝ մշուշին մեջ մարեցան,  
Ու մենությունն Անհունեն վար կը ծփար...



Վղտոր աչերն հանդիպեցան օրե օր  
Նոր ափերու ու նոր բարձանց ձյունապատ.  
Օր մ'Աքրորուն իր հմայքով դարավոր  
Օր մ'ալ շքեղ անծայրածիր անապատ,

Եկան ցնցել իր էութունն, ինք սակայն  
Միշտ որոնեց հինը, լռիկ դիտեց հոն,  
Ուր կը դիտեն զիրար ապշած ու անձայն  
Աղվոր Իզմիրն ու մանկամարդ Գորտեչիոն...  
Ձեզ նայեցավ վես բուրգերու գագաթեն,  
Եվ Սփինքսին՝ մրմնջեց ցավն իր սրտին,  
Սակայն բախտը՝ ավելի վես իր ճակտեն,  
Ըսավ. «Քալե՛ Կարմիր Մովեն ալ անդին...»:



Անապատի Մայրն, անշշուկ, անալի,  
Մռայլ նեղոսը ցուացուց իր պատկեր.  
Կ'այրեր ու չէր հատներ սիրտը վշտալի  
Աստվածային մորենիին՝ զերդ ընկեր:  
Մոգեր, Որ էն, Մովսես, Հիսուս հո՛ն էին,  
Ստեղծողներ մեծ ցավերու, բաղձանաց,  
Վհուկ մոմիան, անմահության, անցյալին  
Անխոս վկան հավերժապես լուսկյաց,  
Փորձեցին զո՛ւր մագնիսացնել իր հոգին,  
Ուղևորը անցավ անոնց ընդմեջեն,  
Ուզեց դառնալ Տիանի վճիտ լճակին  
Ուր դիցուհիք սիրո երգե՛ր կը հնչեն:  
Աղվո՛ր ափեր, որ Հոմերն իսկ հուզեցին,  
Որ գարուններ կը ծիծաղին վարդաբույր,  
Որ դուրբեցին մերթ Պայրբնն ու Լամարդին,  
Ա՛խ, ալ շիպ՝ տի՛ ժպտին քեզ, հե՛ք ուղևոր...:



Կտրեց անցավ Կարմիր ծովն ալ ու Հնդիկ  
Օվկիանի ափունքն ի վեր թափառկոտ.  
Մռայլ, վհուկ Ափրիկենն, հանդարտիկ  
Կը սենոփ իր անցյալին նվաղկոտ...:

Մշուշին մեջ Հիմալայի վես շղթան,  
Հոգվույն խորն ալ անգո՛ւնդը՝ կա օվկիանին,

Օ՛հ, մի՛ հըլպիք, ստվերն է ան Մենության.  
Թողե՛ք զինքը երազոց մեջ անձկագին:

Կը հիշե մերթ իր մանկութունն հրեշտակի  
Հեզակարկաչ վտակներով օրորուն,  
Երբ սրտին մեջ կաթեր երկնից շեշտակի՝  
Հավատքն անբիծ ու միամիտ օրերուն:

Կը հիշե դեռ պղտոր Ալիսն, էրճիաս,  
Տարին շանցավ որ կը կտրեր ձոր ու սար,  
Եվ ամեն օր հուզումներով վաղահաս,  
Աղվո՛ր Ափեր, ձեզ ողջունե՛լ կը հուսար:

Զի՛ մտածեր սակայն թե հոն ի՞նչ մնաց,  
Գուցե հիշող մեկ քանի սիրտ մտերիմ,  
Քաշի՛ մը վա՛րդ ու տընա՛կը մոռցրված,  
Ու մենավոր բարեկամի մեկ շիրիմ...:

Դարձի՛ր նոր բույնըդ, ուղևո՛ր, ու քեզի  
Նոր օրերու երջանկությունը հյուսե,  
Թող բաղձանքը վճիտ հոգվույդ մեջ հոսի,  
Զքե՛ կյանքը փրփուրներե, երազե...:

Ֆայն՝ դեմդ, դիտե խրոխտ Հիմալան,  
Քալե՛ շիտակ, դերբուկներեն սուրա վեր.  
Կա՛րճ է կյանքը այլ հորիզոնն անսահման,  
Մի՛ օր նորեն կ'ողջունե՛ս դուն այն ափեր...:

## ՄՓԱՆՔՆԵՐ

(Պոեմ)

ՆԱԿԵՐԴԱՆՔ

Առ Կոստ Պայրժ

Ա.

Դուն որ իբրև ուրական, մոռալ դարու մ'առաջին  
Մեծ ողբերը երկնեցիք հոգիդ մեջ խոտված.  
Որ արձագանքը բերիր անդունդներու հառաչին,  
Տրտում փայլակ, անբաժան սև ամպերի մշտահած,  
Մրբրկածին, մշշածին, թափառեցար Եվրոպան,  
Երբ մյուս Մեծ Քափառողն իր աչքերը կը փակեր  
Ի Սենթ Էլեն, մենավոր, անփառունակ,— խոլական  
Ցընորքին անձնատուր, մոռացումին լոկ ընկեր:

Բ.

Երկուքնիդ ալ հանճարի փայլատակում մի անճառ  
Հեղաշրջման նա ծոցեն, վիշտի քառսը քու մայր,  
Փառքի ուղին նա ընտրեց, դուն երգերուն սրլացար,  
Նա գահերու, թագերու, դուն՝ օվկիանին սիրահար:  
Իենա, Վակրամ, Օսթերլից ու Վաթերլո, Սենթ Էլեն,  
Կապիտոլեն ի Տարպիան, ի լուսթյուն դամբանին,  
Այս էր իբն ճակտի գիր,— մինչ դու թռչուն՝ երգելեն  
Կը սուրայիր Արևելք, երազներով անձկագին:

Գ.

Խառնուրդ մ'արծվի ու անգեղ, ծիծեռնակին, սոխակին,  
Նոր Պրոմեթեոս անկաշկանդ, երկինքներու զողցած հուր,  
Դարուց սփինքս, հոգիով առյուծ, սակայն սրտով կին,  
Խրոտվահանույզ գերդ Ալիս, ու Եփրատին պես տխուր,

Մին ի վարմեն դյուցազանց, ջնջված ցեղեն սուրբերու,  
Նարեկացի նորածագ, սուրբ կիրքերու խաշակիր,  
Այլ ամբարիշտ կոշնական Բագոսին, շար համբարու,  
Անկումին մեջ պաշտելի, Եղեմին հեք տարագիր...

Դ.

Մոլորատանջ գիսավոր, Քոլոսեին վերն առկախ,  
Հոգնած հորձանք մ'օվկիանին, ի Սուրբ Ղազար գըտած Գինջ,  
Սահող ըստվեր մ'Եփեսոս, ուր Արտեմիսն իր նվաղ  
Նայվածքով զուր կը հայցե ժամանակեն համաջինջ  
Տաճարն ու իր պաշտողներ.— լացող վըհուկ բոցին քով,  
Որ մըտերիմը՝ Շելլին կը փոխեր ափ մ'աճյունի,—  
Նոճյաց սարսուռն ի Պուճա, ուր տակավին արցունքով  
Բիզենց աղբյուրը մենիկ, կաթիլ կաթիլ կը հատնի...

Ե.

Նոր Լեանտըր, Հելլեսպոնտ, ալյակներուն մեջ ակոս  
Մ'հորինեցիր, որմե վար պիտի հոսեր Եվրոպան,  
Ժողովրդոց հուզումեն ցնցումը, վես ու գոռոզ,  
Դեպ'Ասիա, մերթ դըրախտ, արդ նեխումին ավազան.  
Եվ Ապոլոն հարուցյալ, գացիր դեպի Մարաթոն,  
Թերմոպիլե, Աքրոբոլ, մոռցած Ալպիոնն ու օվկիան  
Արծվի նայվածքը վերջին՝ դեպի կարմիր հորիզոն,  
Մրմնջեցի՛ր— «Ծն մեռնիմ, թող ազատի՛ Հելլադան...»:

Զ.

Աթենքի կույսը փակեց աչքերըդ դեռ կիսաբաց,  
Ու ժպտագին, ու գինով արշալույսեն նորածագ,  
Հագիդ թրոավ Ողիմպոս, կայանը դից, դիցուհյաց,  
Որ կը փայլեր վերըստին, ճակատը վեհ, սպիտակ:  
Դար մը կ'անցնի անկե ցարդ, գուրգուրանքով կը հսկես,  
Որ դրոշակը երկնազույն շառնե ըստվեր մ'իր վըրան,  
Որ չի դառնան հին օրեր, ու գերության ողջակեզ  
Չըլլա, շինա վերըստին, ապրի՛ ազատ Հունաստան:

Դար մը կ'անցնի անկէ ցարդ ու բարձունքի գիտեցիր  
 Հուլզերը որ զերդ փայլակ կտրատեցին Եվրոպան,  
 Գերի ազգեր, որոնք պահ մ'հիշատակիդ ծընրադիր,  
 Մագըլցեցան դեպի վեր, ազատութեան Գողգոթան...  
 Ողջունեցիր ցնծագին, արիարանց ոգիներ,  
 Որոնց շուրթը քու երգեր, իրենք քեզմով հըրդեհված,  
 Գեպի բագին դիմեցին, հաստատակամ, անվեհեր,  
 Կաթիլ մը լույս հայցելով ապագայն ամպամած:

Խորհրդանիշ Սուրբ Դատին՝ քեզ հառեցան վենետկեն  
 Գծբխտ ցեղի մ'անմահներն, Բագրատունին, Աշիշան,  
 Գրիչդ հոն էր, այլ ափսո՛ս, երգերու տեղ հըրեղեն,  
 Հառաչներու կամուրջն ողբի ձայներ սըլացան...  
 Արարատին անծանոթ այլ սիրեցիր մեր լեզուն,  
 Մեր գիրերուն վըրա մերթ խոնարհեցավ քու ճակատ,  
 Դար մը կ'անցնի անկէ ցարդ, մեր հայրենյաց վշտասուն  
 Գերի են դեռ զավակներն, տարահալած, հուսահատ...

Հատորտեն Տորոսի՝ զերդ թիթեռնիկ մ'ազագուն,  
 Հյուսիսայգեղ շլացած, դեպի բարձունքդ առի թե,  
 Տարիներով թափառիկ, շրջմոլիկ հուր մ'ոստոստուն,  
 Երմաց ընդմեջ, այլ քեզի սեեռելով հարատե,  
 Ավերակե ավերակ, որոնեցի ձայնըդ գոռ,  
 Գետերուն հետ սահելով հասա մինչև կոհակին,  
 Քեզմով լեցուն ամեն ինչ, այլ աչքերեն իմ պղտոր,  
 Խո՛ւս կուտայիր անցյալին իմ իղեալ թանկագին...

Հառած հիմակ անապատն անմարդաձայն գիշերին,  
 Քանի անգամ հրայրբով մ'երազեցիր գոր այնքան,

Քեզ անծանոթ օվկիանի մ'ափն, ուր ալիք կը փշրին,  
 Եվ իրենց հետ իմ հույսեր, կը պաղատիմ ողբաձայն,  
 Հարույր տուր ինձ ընկեր, բոնե ձեռքես դողդոջուն,  
 Երթանք փնտրել միասին նոր հորիզոն, նոր երկիր,  
 Գաղտնիքներուն անդ քրննել անվերջ «ինչպես» ու «ինչու»  
 Նոր Աստված մը որոնել, տառապանքին կարեկիր...

Մտերմութունք թողած հոն, Շելլիիդ պես ափ մ'աճյուն,  
 Հայրենիքես տարագիր,— Հարո՛ւտըդ տուր ինձ ընկեր,  
 Հրատուր ավազեն կը մեռնին կյանքս ու ավյուն,  
 Տառապանքն հոս անհո՛ւն է, ա՛խ, զիս մինակ մի ձգեր...  
 Կը դառնանք շուտ անոր հետ, ու գուցե նա պատմե՛ր քեզ,  
 Ինչ որ երբեք չի տեսա՛վ երբեմն ստրուկ Ելլադան,  
 Հայրենիք մը սըգազգյաց, բազնիդ վըրան ողջակեզ,  
 Բորնկած Կովկասն ու հավետ ապերջանիկ Հայաստան...

Գուցե իջնես մի անգամ քու բարձունքդ այն ատեն,  
 Քնարիդ շեշտերը հուզեն պոռնրկացած Եվրոպան,  
 Եվ ալեոր Մասիսի ձյունասպիտակ գագաթեն  
 Ազատութեան մոռցըված ե՛րզը գոռաս Հայութեան...

Ե ր գ ա ո ա ջ ի ն

ԳԵՊԻ ԱՆՊՈՒՆԻ

Աստղի մը պես հեռավոր, անհետացած ի վաղուց,  
 Որուն նշույլը նվազ դեռ կուզա մեզ կամարեն,  
 Ընդհարում մը թեև բիրտ առանց շողի զայն թողուց,  
 — Զարհուրելի վախճաններ արևներու համորեն,—

Մեր ճակտին տակ մտածկոտ կ'զգանք հաճախ մոլորուն  
Կայծի մը հեքը դողդոջ, ու կը կարծենք թե հույսին  
Աստղը կ'ապրի տակավին, եթերին մեջ դարերուն,  
Մեռավ, ափսո՛ս, նա վաղուց, հավատքին հետ միասին:

Բ

Հանդիպեցան իրարու օվկիանի մ'ափն անծանոթ  
Քարանձավի մը բերան, ուր նայադներ խույս տվին  
Գիտութենեն հալածված, մարդկությունը մտածկոտ  
Թողած մենիկ և ալ զուրկ երազներեն անցյալին.  
Հարուտը՝ դար մ'ալևոր, մյուս՝ ոգին դեռատի,  
Այլ ընկճված ավելի, ա՛խ, Ունա՛յնը տեսավ ան,  
Երբ դեռ մանուկ կը խայտար ալեկացն հետ Եփրատի,  
Ու կը հառեր մոլորուն ասուպներուն գիշերվան:

Չ

Հարուտը՝ դար մ'ալևոր, օվկիանն փակած իր ուղին,  
Օվկիանն՝ որուն մեջ զգաց ան Անհունին վես նկար,  
Այլ մյուսը սկեպտիկ, հառած աչքերը հողին,  
Հուզումներով բոցակեղ հոգնած թռիչ մը տկար,  
Իրարու ձեռք սեղմեցին, ու նորեկը սարսուռով  
Մտերմություն ուխտեց հոն, ուխտեց գնալ անբաժան  
Ուրվականին հետ մեկտեղ, դեպ՝ իդեալն անխռով  
Որ կը փայլեր շատ հեռուն, խորքերուն մեջ մթության:

Դ

Ճամբա ելան միասին, երազն իրենց տված թե,  
Խորհրդավոր մի զեփյուռ մղեց զանոնք Հերակլի  
Սյուններեն ներս և ազոտ արշալույսով մը թեթև  
Միջերկրականը տեսան, իր խորքերովն ահալի.  
Մով ծովերու սրբազան, ընկղմեցան որուն տակ  
Աստվածները որ բերին Տիբեր, Ալիս ու Նեղոս,  
Որուն վրայեն սուլեցին զեփյուռն Հոնիո ու հրատաք  
Սահարայի փոթորիկ ու պատգամներ երկնախոս:

Ե

Ատլանտիկին հետ կապված ժապավենով կապտագեղ,  
Ադրիո խորն երկարած իր մեկ բազուկն հսկայի,  
Կուրծքը Վեսուվն հերարձակ, իր վիհերովն հրազեղ,  
Գլուխը դրած հունական ափերուն մոտ գեղանի,  
Մով-Սփինքան է, ծնրադիր Տորոսի վես լեռներուն,  
Կամ ավազանն՝ ուր խառնեն մութ Ափրիկեն՝ իր խորհուրդ,  
Մեր Ասիան՝ Տառապանք, ու Եվրոպան՝ մոլորուն՝  
Խույ հարցերու շունչն այրող, դեպի քառսն անհագուրդ:

Զ

Անապատի ու գարնան միջև պառկած հարաշարժ,  
Կոհակներն իր կը նետե մինչև խորքը ամպերուն ,  
Կապանքները խորտակել կ'ուզե սակայն չի կրնար,  
Ու կը դառնա իր խորքին, իբրև վիշապ գալարուն,  
Աստղերը զուր կ'ողողեն զայն շողերով ցուլացիկ,  
Արևը զուր կը խառնե ցուլն՝ սպիտակ փրփուրին,  
Ապերջանիկ ծովն է Ան, սևով շաղված իր ալիք,  
Ոճիրներու դարավոր ծածկող դամբանը խորին:

Է

Ափերն համակ օժեցին խորհրդավոր մի շունչով  
Արիական ցեղերու իրար գրող հոսանքներ,  
Հինտուրուշեն երբ իջան, կամ առասպել հոգեթով,  
Երբ ազգերը զատվեցան ըստորոտեն ալեհեր  
Արարատին, անոր շուրջ թողած մի ցեղ երկաթի,  
Որ կեցավ հոն անսասան, մրրիկներու դիմագրավ,  
Երբ պետությունք հընամի, կը փշոբին ամեն դի,  
Եվ իրենց հետ՝ փառք, անուն, մեծություն, ուժ և համբավ:

Ը

Փյունիկեցին նախ թըռավ թեթևասահ՝ ափե ամփ  
Նավակներովն իր խախուտ հրամվեր կարդաց կահակին,



Մանուկ ազգեր՝ փառամով՝ հետևեցան հրրատապ  
Հուշով ի ծովն անսահման, երազամով, անձկագին,  
Ու բարձրությանց կատարեն տեսան, ափսոս, թե ա՛ն ալ,  
Սահման ունեի: Վայրահակ խոնարհեցավ ճակատնին,  
Եզիպտոս, Հոովմ, Հելլադա որոշեցին ընթանալ  
Մեկզմեկու ետև ղեպ իղեալն անհունին:

Ք

Կյանքը կարճ էր ու անհագ... ըստիպվեցան հորինել  
Մին՝ իր մոմիան, ու մյուսներն իրենց դաշտերն Եղյուսյան  
Կյանքը կարճ էր, այլ անուշ, պետք էր բավի՛ղ մը անել,  
Ուր փառատենէ հոգիներ մոլորեին հավիտյան:  
Ձուր բուրգերու գազաթեն կոշում ըրին աստղերուն,  
Պարապությունը հեզնեց իրենց ճիգերը մանկական,  
Արձաններու բազնին քով, տառապեցան գալարուն  
Այլ խոր գիշեր և անլույս, անշող մնաց ապագան:

Ժ

Շովը դիտեց այս ճիգերն իր ծիծաղովն ահարկու,  
Հեզնոտ, դաժան, թողուց որ Կեսարն անցնե իր վրդին  
Եղթան Հոովմին երկաթե, բազուկներովն իր հուժկու,  
Բուպե մը վերջ բախտն հոն էր, դաշույնովը Բրուտոսին:  
Ազատ ծովը եղավ ան, թեև իր վրան փորձեցին  
Պարզել բյուր բյուր երֆնագույն, հողմաժաժան գրոշակներ  
Բուպե մը լոկ և անցան, ինքք մնաց առանձին,  
Անկաշկանդ, վես միապետ, գազանիքներուն իրեն տեր:

Յ

Քաղ մը դեպի արևելք, Լիրանանն քիչ մը վաթ,  
Կը հեծե հեք մի ծովակ,— Մեռյալ ծովը մենավոր,  
Ձոր դիտեցին մեր երկու ուխտավորներն հողմավար,  
Ու կանգնեցան պահ մը հոն, հիշատակին անձնատուր:  
Երկիրն ուր ծովն է մեռած ու մահն անգամ մեռավ մերթ,  
Թեև Վեժա չի մեռնիր մեզն ամբողջա մեր գարուն,

Հողն ավետյաց երկնաշունչ իր վեպերովն հրաշակերտ,  
Ընտրյալ ցեղին բնավայր, օրրանը սուրբ երգերուն:

ԺԲ

Հոմերական տաղ մ'է նա, այդ երագուն ցեղին բախտ,  
Գերութենե գերություն, մշտամուր, թափառիկ,  
Հավերժապես ծնրադիր Եհովային մեծահազթ,  
— Կրակի, ամպի սյունն հսկա, կամ մորնշող փոթորիկ,—  
Ցեղ մկրտված բուրգերուն և ըսփինքսին ստորոտ,  
Սեմի զավակ, ծծած կաթն արիական հավատքին,  
Գյուցազնական մի երգի շեշտը խրոխտ բամբորոտ,  
Կամ նեղոսի, Եփրատի ափերն հառաչ ողբագին...

ԺԳ

«Փարավոն, թո՛ղ Իսրայելն ազատ» — ամպի կրակի  
Սյունը ինկավ առջևին ու քալեցին գայթ ի գայթ,  
Կտրեցին ծով ու սարեր ու նետվեցան շեշտակի  
Անապատի ծոցն անհուն, քառսուն տարի անընդհատ.  
Քառսուն տարի. հին սերունդն իր ոսկորներն ավազին  
Խառնեց մինչև նորն հասավ նախնիքներուն իր երկիր,  
Տառապանքով մաքրված, բաղձանքներով կաթոգին,  
Այնքան ատեն սիրական հայրենիքն տարագիր:

ԺԴ

Քառսուն տարի... կա սակայն ցեղ մը նրման մյուսին,  
Քառսուն դար է քեզ համար, Ազատություն ցանկալի,  
Իր նահապետ լերան շուրջ՝ արցունքն արյունն կը հոսին,  
Քու կարոտովը հրայրյաց, մշտատրխուր կը հալի...  
Ո՛ւր ես արդյոք, աշխարհի վրբան այլևս չի կա՞ս դուն,  
Կը խունափի՞ս այն ցեղին զավակներն պաշտող քեզ,  
Չունին անոնք առաջնորդ՝ ոչ ամպի, ոչ կրակի սյուն,  
Այլ հայրենիք մ'ավերակ, բազնիդ վրբան ողջակեզ:

ԺԵ

Քմբուկներով, փողերով պարիսպները սարսեցին,  
կրրոխտ արևն իր ճամբան անոնց համար առավ կանգ,  
Երիթովի կը մխան դեռ հյուղակներն առանձին,  
Չագալներու լրսելով վայնասունին արծագանք.  
Անպարտելի հաղթական, իրենց հետ էր ԵՏՈՎԱՆ,  
Փոշիի պես ցրվեցան Ամաղեկը, Քետացին,  
Օծյալ իրենց արքաներն խելահեղ ու տիրական  
Հաղթանակի ու սիրո անմահ քնարը լարեցին:

ԺԶ

Տեսած սանդուղն Բեթել, ընդմեջ երկնից ու երկրին,  
Ղրկած մարմնով ի դրրախտ մեծ Ազատիչն ու Եղիան  
Հաղորդակից ամեն օր գաղտնիքներուն անբավին,  
Ու ճանչնալով նախանձի, սուրի, հուրի ԵՏՈՎԱՆ,  
Օր մ'ալ ըմբոստ ու ահեղ, ճակատ տվին երկինքին,  
Շղթաները փորձեցին փշրել, թեև ինքն Աստված  
Գարբնած ըլլար: Ու վերեն իր շեշտերով զայրագին,  
Մեծ նախանձողն իր որդվոց վրեժի անհոփք գոռաց:

ՓԷ

Անլուծելի հանելուկ, գաղտնիք, մարդն ու իր հոգին,  
Փակված հողին՝ աստղերեն վար՝ անոնցմե թուշի վեր.  
Ինքը տրկար ու հյուլե, այլ կուրծք կուտա փոթորկին  
Ու կոհակին, մի հպարտ ընդվզումով անվեհեր:  
Կարճ է ճամբան քալելու, սակայն անհուն իր կորով,  
Գեմքը տրժգույն այլ ներսեն՝ հյուսքը երկաթ շիղերու,  
Թեև շուրջը կործանին ամեն ինչ, ինքն անխրոտվ  
Իր իդեալն կ'երագե,— Աստվածն ըլլալ Աստուծո:

ԺԸ

Եվ Իսրայել անկե վերջ նման աշնան տերևին  
Գլորեցավ սարե սար, օտար ափեր գերության,

Քանի անգամ դարձավ ետ, սուրբ հուշերե անմեկին,  
Շինել տաճարն ուր սակայն ալ չի դարձավ ԵՏՈՎԱՆ:  
Խըլյակի պես կոխեցին զինքը պարսիկն, ասորին.  
Նեղոսեն ետք Բաբելոն՝ լացող գետին ուռիներ  
Ոնկնդրեցին գիշերներն ներքեն իրենց ըստվերին  
Հեծեծանքը սուրբ ցեղին, բխած սրտին կարեվեր:

ԺԹ

Հոս՝ Եսայի, բիշ մ'անդին՝ Եզեկիել տեսանող,  
Որ Մովսեսի բախտակից՝ ընդնշմարեց ամպեն վեր,  
Կապույտին մեջ իր փառքով ձյունասպիտակ, լուսաշող,  
Սուրբ աստվածը հնության, խորշոմ ճակատ, ալեհեր,  
Կամ Երեմիան, կամ Եզրաս, Արտաթի դաշտն անսահման  
Որուն աչքի վարագույրը վերացավ մեկ գիշեր,  
Անդրըշիրմին գաղտնիքներ դեռ չի մեռած տեսավ ան.  
Լսեց ձայնն իր հրեշտակին, որ զինքը վեր կը կանչեր:

Ի

Մարգարեները համայն, այնչափ հեռու դարերով  
Եվ իրարու անծանոթ, որ նույն քնարը հընչեցին,  
Սպասումով մը լեցուն, հուզումնալից, մշտախոտով,  
Կարծես տրժգույն փայլակներն եղան այն մութ քառսին,  
Որ մարդկություն կը կոչվի, և որ զերդ վեան օվկիան,  
Երկնակապույտ ծալքին տակ, անլույս գիշերն ունի խոր,  
Կի կարոտով մի շողին երագներու տրվնջան,  
Հղի հավետ մտածամաք, անհուսությամբ ահավոր:

ԻԱ

Լուսինը դեռ կը նայի դաշտերուն վրա Մովսեսու,  
Ուր քարաշեն քաղաքներ ավազին տակ կը նիրհեն  
Լուսթյունը կ'ընդհատեն վայրի շագալ, հովազ, բու,  
Մեռած ծովու ալյակներն կը խուսափին ափերեն.  
Սողոմ, Գոմոր կը ծածկեն անիծապարտ իրենց բախտ,  
Խավի մը տակ ժրժումքե, որմե ելած գոլորշին

Կը ծավալի թունավոր ու ճիշով մը հուսահատ,  
Մայրինքու թռչնակներն անկե հեռու կը փախչին:

ԻԲ

Կամաց կամաց ու դողող առանց երգի մրմունջի,  
Ավազներու ընդմեջեն կը թավալի Հորդանան,  
Ալիք շունի ու կարծես հավերժապես կը հանգչի  
Պետն անիծված, արյունի ու նեխումի անկենդան:  
Ձուր կ'որոնե աչքը հոն Սղիայի կառքն հըրեղեն,  
Նիհար, ոսկրուտ Սասյին, սուրն հրեշտակին ոճրագատ,  
Տապանակին առջև վառ լույսն անբաժան կանթեղին,  
— Բաղեց զանոնք իրեն տակ անժայրածիր անապատ:

ԻԳ

Մտաքցումը չի թաղեց սակայն զքեզ իրեն տակ,  
Ծրանի թե շնչվեին քսան դարերդ աշխարհեն,  
Հիսուս, ու մենք ըլլայինք դեմն Աստուծո շանթարձակ,  
Ու խաղալիք իր կամքին, քմայքներուն իր ամեն,  
Կը գինովնար նա ծուխեն ողջակեզի ճենճերին  
Ու կը ներեր շատ անգամ իր ապստամբ զավակաց,  
Քրսան դարերդ կը ծածկեն ահավոր վիճ մը խորին,  
Կ'արյունով, ոճիրով, անեծքներով մշտահաճ:

ԻԴ

Օգոստոյան մեծ դարուն մեջ Հատվմի շղթան իր վըզին  
Ի Բեթլեհեմ աննըշան, գերի աստվածը կուզար,  
Սիլն Հրոսթին, Բոսսին, Բերսաբեին ու Գավթին  
Նահապետաց, Ադամին և աստուծո ալիփառ:  
Իսրայելին ժառանգած քընարն, արցունքն ու խորհարդ,  
Ու մարդկության խրտացած վիշտն իր մատաղ ճակատին տակ  
Կուզար աշխարհ, մինչ անի, նայվածքով մը հեզնոտ, ցուրտ,  
Կը հորիներ ոտքին տակ, կորուսաթ վիճն անհատակ:

ԻԵ

Քանի մը մոգ ալետր, Արեւելքեն մուրրուն,  
Սկան աստղին հետ հրաշող, ողջունելու Մեսիան,  
Ու լուսարձակ, լուսասփյուռ, հրեշտակներու ալելուն  
Խաղաղության երգին հետ՝ դեպի երկինք բարձրացան:  
Դաշտ հրաշալի, ուր հոտեր կ'արածին դեռ օրն ի բուն  
Ու գեղջկուհին կը վազե ժամերուն մեջ իրիկվան  
Դեպի աղբյուրն կիսաշոր, ուռիին տակ, մոտ ճամբուն  
Լան՝ սրբնոնք իր հովվին, մեղամաղձիկ, ողբաձայն:

ԻԶ

Ու ծերունին ալեհեր, որուն բազուկը դողող,  
Գրկեց կորյունն Հուդայի, ու ճակատը վայրահակ՝  
Իսրայելին ողջունեց սուրբ հույսերուն այդ բողբող,  
«Արձակյա՛, Տե՛ր», մրմնջեց, «մեկնելու է ժամանակ»...  
Նույն երգե՞րն են երազի, ա՛խ, նույն ա՛ստղը լուսաշող,  
Նույն ծերունի՞ն, որ շատ հին դարերուն մեջ մթության,  
Պային մեկտեղ ողջունել, իբրև աշխարհը փրկող,  
Հիմալայի ըստորտուն, արքայածին Միտտարթան...

ԻԸ

Ինչո՞ւ հողմին, ալյակին պես շապրեինք հավիտյան,  
Գեթ սարե սար, ծովե ծով կը հաժեհնք անընդհատ,  
Կարելի է սըլացիկ, կը տեսնեինք մի վայրկյան  
Քաոսին մեջ լուռ գաղտնյաց, գիտության սուրբ ճառագայթ,  
Գոնե չէինք ըզգար մենք մեր ճակտին տակ մուրրուն  
Կայծի մը հեքը դողող, չէինք կարծեր թե Հույսին  
Աստղը կ'ապրի տակավին, եթերին մեջ դարերուն,  
Մեռա՞վ, ափսո՞ս, նա վաղուց, հավատքին հետ միասին...

ԻԹ

Երկու տարու և արդեն արցան հասանքն ակրտավ.  
Ռաքել լացավ արգյակներն, անմեղքար աղաւթը

Բեթլեհեմի խրճիթներն պատեց մահին մաշող ցավ,  
Ու լոեցին հին երգեր, շրթանց վրա վիրավոր,  
Մայրան լիճեն խույս կուտար Աստվածորդին Եզրատոս,  
Հիշեց արդյոք կյանքին մեջ, իր առաջին զոհերուն  
Գալիուն ճակատն ու անմեղ արտասուքներն հորդահոս,  
Ու մայրերուն հոշոտված տառապանքը գալարուն...

ԼԲ

Մահն ամեն տեղ կը զարնե կյանքը իբրև աշնան հոփ,  
Այլ ահարկու է մինչդեռ կը մոտենա հյուզակին,  
Երբ որ մանկան կը մեռնին նախկին ճիշերը թոթով  
Ու ծնողքը կը դառնան գերեզմանեն տրտմագին:  
Խրճիթն ընդհուպ, մեջքը կոր, կը ծալլըվի իր վերան,  
Եվ ալ փնտրե երբեմնի երանության ցուլքը հոն,  
Քայլերն ընդհատ ու դողդոջ քիչ մ'ատեն ալ կ'երերան,  
Մինչև ստվեր, մոռացում գան հաստատիլ իրենց բույն:

Լ

Վարագույրը կը ծածկեր Սրբությունը Սրբոց մերթ,  
Ուր կը մնար Տապանակն ուխտին անտես ամբոխին,  
Գաղտնիքն ու իր ըստվերներ կը պահեին հրաշակերտ  
Դելփյան փոսը կամ Վեստյան սրճատեղիքը նախկին,  
Կա երկիր մ'ուր հավաքված հանելուկներն անցյալին  
Մարգարեներն ու կրոնի հիմնադիրներն քաշվեցան,  
Պահ մ'առանձին, վերանին խորհրդավոր քող մ'առին,  
Հավատքի մեջ խորասույզ, կյանքը մոռցած իրական:

ԼԱ

Նեղոսն հագիվ ափ մը հոն դալար կուտա իր ափանց,  
Անմոռնչ ալիք շեն խոռվեր Մադիամու դաշտն՝ ուր Մովս  
Գնաց պատմել իր ցավեր գիշերներուն անթափանց,  
Անապատին հետ խոկալ և արտասուքն դառնապես:  
Հոն թաղվեցան մանկական տարիներն ալ Չիսուսին,  
Ավազապատ խրճիթին մեջ՝ րսփինքսեն ոչ հեռու,

Զայն կրթեցին Անսահմանն ու Անցյալը միասին,  
Եվ օձեցին մարդարե բյուր ապագա դարերու:

ԼԲ

Եվ անկե ետք ոգի մ'է լուսապսակ, թռչալուն,  
Զերդ առաջնորդ խղճալի ձկնորսներու խմբակին,  
Թափառական իբր ասուպ, նայվածքն հառած աստղերուն,  
Խոնարհ դասուն գթացողն ու կարեկիցն առաջին.  
Օձերու պես խորագետ, միամիտ զերդ աղալնին,  
Գտավ սրտի տկար կողմն ուղակորույս մարդկության,  
Հույսի բառեր մըմընջեց՝ գերի անլույս ամբոխին,  
Ու սիրո մեղկ աստուծույն փոխակերպեց Եհովան:

ԼԳ

Երբեմն այսպես կը փլչին ստորերկրյա անդընդոց  
Մեջն ահագին բարձունքներն հավերժական լեռներուն,  
Եվ անոնց տեղ կը խուժե ծովն անհանդարտ, ալեկոծ  
Ու կը թաղե իրեն տակ, ծաղիկ, դալար ու գարուն:  
Հոգիներու մեջ փլավ հին աստվածը շանթարձակ,  
Հիսուս կարծեց հոսել հոն խաղաղության շունչն ու սեր,  
Այլ Եսն ազատ ասպարեզ զբտավ անվախ, համարձակ,  
Իր մոլուցքին, որմե վար ոճիր, արյուն կը հոսեր:

ԼԴ

Սլացիր կատարն Թափորի կամ գնա ծովն Գալիլյան,  
Մին՝ ապառած մենավոր, մյուսը հուզված, անհանդարտ,  
Փնտրե աստվածն այլակերպ, կամ գանի որ հըրաման  
Կուտար հողմին, փոթորկին, կեցիր հոն մեկ ակնթարթ,  
Գիշերն իջնե թող վերադ ստվերներովն իր երկար,  
Ու երազե անշշուկ, — հին անցյալին ոչ մի ձայն,  
Պիտի գա քեզ վրդովել, լոկ շըշունջը դողահար  
Ժողովրդին որ հեծեց «— Ամենայն ինչ ընդունայն...»:

«Աստված Սեր է, մարդն ալ սեր կը պարտի իր ընկերին».  
 «Եղի՛ք բարձր ու կատարյալ՝ ինչպես Ձեր Հայրն երկնավոր».  
 «Մի ատեք, այլ սիրեցեք Ձեր արյունի թշնամին».  
 «Մարդն անմահ է, շիրմեն ետք դեռ հույսեր կան հեռավոր».  
 Ասոնք եղան սկզբունքն ու կտակներն իր վերջին,  
 Քրոնց վրբա կը հուսար հիմնել նոր կյանք, նոր կըրոն,  
 Ափսո՛ս, երազ վաղահաս ու հույս անդարձ կը թռչին,  
 Երբ մթաստվեր, ամպամած ու տխուր է հորիզոն:

ԼԶ

Բանաստեղծի նայվածքով ու հոգիով մարգարեն,  
 Տեսավ անդունդն ահագին, որ կը բանար ապագան,  
 Զգաց հոգին մարդկության, որ իր նսեմ խորքերին,  
 Կասկած, նախանձ կուտար դուրս ժայթքումներով խուլական:  
 Լացավ մեկ օր, գիշեր մ'ալ—«Հա՛յր» մրմնջեց ողբագին,  
 «Բաժակն անցո՛ւր այս ինձմեն»—չեկա՛վ կոչին պատասխան:  
 Մըտերի՛մը ողբաց նախ, մտերմության թանկագին  
 Գավն ու մա՛հը արտասովեց ի մենավոր Գեթսեման:

ԼԷ

Կ'երթանք գրկել մահն անվախ, երբ կը կանչև պարտքը մեզ,  
 Հրացայտ աչքով, խանդավառ կ'երթանք կուրծք տալ գնդակին  
 Գազափարին համար սուրբ, հոժարակամ ողջակեզ  
 Կ'ընենք մատաղ մեր հույզերն ու երազներ թանկագին,—  
 Այլ գառնագույն ու նսեմ, անմխիթար է վախճան,  
 Երբ կը հանգչի ճակատնիս, մտերմության անձնատուր,  
 Ու կ'զգանք թե կուրծքերնես բազուկն անոր դավաճան  
 Կը մխն ներս մատնության դաշույնն հատու սաչքատուր:

ԼԸ

Արտասովալից աչքերով, կամաց կամաց դեպի վեր  
 Ելավ ըմպել մարդ-աստվածն անարգ խաչին մահի թույն,

Մատնությունն ու ուրացում բազմացուցին իր ցավեր,  
 Ու նախազգաց ապագա ժամանակներ դառնագույն  
 Զգաց անշուշտ թե ժայռուտ ու փշալից Գողգոթան  
 Պիտի ըլլար Իտեալն հոգիներու տառապող,  
 Ու խաչն անարգ՝ գերագույն մխիթարն հեք մարդկության,  
 Որ մութերեն շաա անդին պիտի ժպտեր լուսաշող:

ԼԹ

Մեռավ աստված ու հարյավ: Անոնք որ շատ սիրեցին  
 Զինք, զայն տեսան վերստին, 'ի հանապատն, 'ի ծովափ,  
 Ուր կը փար գեգերիլ ու երազել առանձին,  
 Կիրանանի զեփյուռին դարձած ճակատն հրատապ,  
 Օրհնեց զանոնք ու ներեց զինքն ուրացող Պետրոսին:  
 Սրբագործեց իր սիրով Մատլենին հետ կինն ինկած,  
 Ծակտին մոռյլ չի բերավ ալ մահացու կյանքը սին,  
 Մինչև հրածեշտն իր վերջին, անմահ լեռնեն Զիթենյաց:

Խ

Այս երազն դյու-թական, գեթ ճառագայթ մ'անբստվեր  
 Մընար ու լույս տար մեղի, որ կ'սպասենք դարերով,  
 Զոհած պատիվ, հայրենիք, հոշոտելով մեր սրտեր,  
 Կարոտակեզ կը կտրենք անհյուրընկալ սար ու ծով:  
 Հյուղակը մարդ չի մընաց, որ չի փարեր Սուրբ Խաչին,  
 Ամեն ուղիք տարին մեզ դեպի ժայռուտ Գողգոթան:  
 Մեռանք: Մեկ ձայն չի բերավ արձագանք մեր հառաչին,  
 Զիկա՞ արդյոք հարության հույսերուն հեք Հայության...

ԽԱ

Փոքրիկ իբրև ձյունագունդ զոր գազաթին սարերուն  
 Կը զլորե ձեռքն անմեզ զվարթաձայն մանուկին,  
 Որ նախ մեզմիվ ու տակավ պլլըվելով թավարած  
 Նոր խավերու կը կազմե ձյունակույտը ահագին,  
 Նոր կրոնն ալ զերդ աղբյուր, ալ մ'արյունի, արտասովաց,  
 Քալեց իբրև մի վըտակ, հեծկլտուքով մ'անմոռնչ:

Այլ քիչ մը վերջ հոսանք մ'էր լավաներու զայրագնաց,  
Որ անցյալը կք փշրեր, խեղախ թափով մ'հրաշունչ:

ԽԲ

Միրո արևն բոցավառ կը հրդեհներ հորիզոնն,  
Մարդ-թիթեռներ շրջացած նախ այրեցին թևերնին,  
Կամ թևաբեկ քաշվեցան անապատներն, հոս ու հոն,  
Ճգնել մենիկ ու բաղձալ երանություն դամբանին,  
Խաղաղություն երկնային, որուն հառած հեգնեցին  
Գարուն, ծիծաղ ու դալար, ընտրեցին հուր, կախաղան,  
Կամ խելահեղ, փորձեցին տանջանքն ապրիլ Միածին,  
Փշրել կյանքն ու իր կիրքեր, երազներով խուլական...

ԽԳ

Գինովության հին օրեր, որոնք անցան այնչափ շուտ,  
Հին, նոր Հուովմ սարսափած այս հսկայեն նորածին  
Որ կը ցնցեր հավատներն անցյալներու կիսափուտ,  
Քանի անգամ արյունով զանի խեղդել փորձեցին:  
Երկարատև խուլ պայքար, որմե ոչ մին հաղթական  
Ելավ: Մարդն ալ, կրոնքն ալ, զիջումներով փոխադարձ  
Զիրար խաբել ջանացին. մինչև մեռան իրական  
Նպատակներն Հիսուսին, ու սին կեղևը մընաց:

ԽԴ

Հայտնությունը՝ տեսնելով Պատմոսեն լերկ, անբնակ,  
Խաբկանքի տարրը ծնավ ու ոսկեպատ դրախտին  
Երազն անգամ շրջուց ցանկության սիրտը անհագ,  
Ու մարչն ուզեց հոս ապրիլ՝ այդ իղբալն երկնային:  
Սկզբով նախ կաշառել Հիսուս մանուկն ու իր Մայր,  
Հագցուց դիպակ ու բեհեզ խանձարուրի փոխարեն,  
Զկնորսներու խմբակին տարահալած ու թափառ  
Սուրբի տիտղոսը տվավ, պսակներով լուսեղեն:

ԽԵ

Թագերու վրա դրավ իաչ, գոհարագարդ, ոսկեշող,  
Բռնակալին սուրն հատու օծեց յուղով, աղոթքով,  
Ու Պետրոսին փառամուլ, Տերը երիցս ուրացող  
Որ զխիվայր էր խաշված, իր անցյալեն հոգեխոով  
Գահ մ'ի Հուովմ տվավ հին գահերուն տեղ կեսարաց,  
Շղթաներով արծաթի կապեց խիղճն ու ազատ Բան,  
Եվ սկսան նոր շրջան մի մթագին ամպամած,  
Նոր ծուղակներ ինքնահյուս ու նոր դարեր գերություն:

ԽԶ

Բյուր տաճարներ կ'ողողեն արդ Սուրբ քաղաքը Դավթի,  
Ցոթնակործան, այլ ընդմիշտ վերաշինված հավատքով,  
Մոմ ու կանթեղ կը մըխան ու կը հեան ամեն դի,  
Ազգ ու ազինք կը դիմեն հոն ծնրադրել քովե քով.  
Կ'ըսեն թե մահն հոն մեռավ, գուցե անոր դիակեն  
Ծավալեցավ նեխումին ու փտության գոլորշին,  
Որ ամպտեց խիղճն ու սիրտ ու հավատքի փոխարեն,  
Կասկածի որդը դըրավ հոն ցավերով մոլեղին:

ԽԷ

Սակայն անկյուն մը կա լուռ Հովսափատու ձորին մեջ,  
Ուր իրարու խառնելված, երջանիկներ կը ննջեն,  
Անոնք, որոնք հավտացին ու զգացին լույսն անշեջ,  
Կաթած իրենց հոգվույն վրա, երկինքներու բարձունքեն:  
Գերերջանիկ դիակներ... որ կ'սպասեն անտրտունջ,  
Լքսել կյանքի հրեշտակին որոտագոչ փողին ձայն,  
Ժամն ու աստված ալևոր պիտի իջնե հրաշունչ  
Իր շեշտերով կտրել հոն, կյանքերու հուսկ դատաստան:

ԽԸ

Սելովամեն քիչ մը վար, շավիղ մը կա մոլորուն,  
Մեջքերնին կոր շենքերու բավիղին մեջ խեղդելված:

Որ կը պահէ տակաւին հին խունկերու ծուխերուն  
Ամպի գույնը անորոշ, տրտմութիւնը միգամած.  
Այդ շավիղին կ'անցնեն մերթ Սուրբ ուխտին հին Տապանակ,  
Որուն առջև պարելեն Երգիչ Արքան կը գնար:  
Ու կը վառեր ոսկեղեն յոթնաստեղյան աշտանակ,  
Իսրայիլն ալ կը ցնծար հաղթանակով տենդավառ:

ԽԹ

Երգ-Երգոցի չքնաղ վարդն ու Սարոնի շուշաններ  
Փունջ փունջ այնտեղ բուրեցին, հորինեցին ծաղկավետ  
Կյանքի ուղին Իմաստնույն. ու մրահոն, սեահեր  
Գեղուհիներ քալեցին նույն շավիղին լուսահետ  
Գեպի Տաճար, ուր փառքով կ'ընկողմաներ Եհովան  
Երազանքի մեջ մոռցած աստվածութիւնն ու երկին,  
Երբ առաջին շողերուն մեջ լուսասփյուռ առարկան,  
Կը հալիին շարականն ու ալելուսն ցնծագին:

Յ

Շաբաթ օրերն հիմակ ալ նույն շավիղին կը քալեն  
Ցեցոտիներ վերանին Իսրայիլի զավակներ,  
Մեր, կազ ու հեք, վիզերնին ծուռ, քայլերնին դողալեն,  
Կ'երթան պատի մը առջև, ժամանակեն կիսավեր  
Ու կարտասվեն անշըշուկ: Դուն, Ավետյաց Պաղեստին,  
Փառքի օրերդ տեցին բաղեղներու ծաղկին պես  
Մեկ արշալույս ու դուն զուր կը հուսաս թի վերստին  
Զավակներուդ թափառիկ՝ դարձը պիտի ողջունես:

ՅԱ

Գիտեիր՞ թան այդ պատը կա տաճարին հիշատակ.  
Մահայն անկէ քիչ մ'անդին՝ մյուս շենքը փառաշուք,  
Որ կ'երկարի ի կապույտ գմբեթ, կամար, աշտարակ.  
Իբրև դամբան անցյալին, որ կը հանգչի անշըշուկ:  
Հին Տաճարին մարմարներն իրարու վրա են շարված  
Իբրև ժխտում գրական Աստվածարդույն անեծքին:

Սրբագործված Տիտոսի հրդեհներեն կիսայրյաց,  
Հաղթանակի մի կոթող, հսկայական, ահագին:

ՄԲ

Արյունի մեջ թաթըխված դրոշակներ կը ծփան  
Վրանին ինկած արծաթե մահիկն աստղով մը հըղի,  
Անոնց ներքև կը հանգչին փառք, հիշատակ ու դամբան,  
Ամոթահար խաչն անգամ ծալքերուն տակ կը կըքի.  
Չի մարեցին դեռ դարեր. հին տաճարին վերա նոր  
Այդ մզկիթն կը լըսվին իբրև հառաչն օրհասին  
Արձագանքներ կատաղի մրրիկներու հեռավոր  
Երբ ազգերը կուգային բախելու հոն միասին:

ՄԳ

Մին՝ Խաչակիր, սեեռած մյուսն աչքերը մահկին,  
Այլ ամենքն այլ փառատենչ մեկ երազով գինովցան,  
— Ճգմել զիրար,— մինչ անդին՝ ստվերներով տրտմագին  
Խաղաղութիւնը կուլա՞ր բախտին վրա մարդկութեան.  
Կը կարծես թե հոն են դեռ ու զենքերը կը շալեն,  
Դիակնաբույր զեփյուռեն հեքեր կուգան անծանոթ,  
Թե մա՛ս մը կա ռազմերու խուլ, ահավոր մոխիշեն,  
Զոր շին կարող մոռցնել ալելուսներ նվաղկոտ...

ՄԶ

Պետք է մոռնալ. այլ ափսո՛ս, ցեղերու ձայնը հզոր,  
Կ'ավանդըվի դարե դար, սերունդներուն ապագա,  
Արյունի դեմ պետք է որ թափվի արյունը բոսոր,  
Մեկ արցունքի փոխարեն, պետք է որ ազգ մը սըզաւ:  
Մին՝ Խաչին, մին՝ Մահմետին սուրը քաշած սայրասուր,  
Զարկին զիրար դարերով, Մարսիլիայն Վիեննա.  
Հուստիւյանը իր շիրմեն տեսավ կարմիր մահաբույր  
Դրոշը մահկին պարզված իր տաճարին իսկ վրան:

ՄԵ

Ու ցանկալի, սպասված Հազարամյան շեկավ դեռ,  
Ամեն կուրծքի տակ Հանոսն՝ իր տաճարն ունի բաց,  
Զի տարածեց ամեն դի Խաղաղությունն իր թևեր,  
Հորհրդոնը կարմիր է ու երկինքը՝ միգամած:  
Կը փոթորկին ուժգնորեն հոգիներու փառամու  
Կիրքն ու տենչանք ամեն օր, իրարու վրա կը փլչին  
Պետություններ ու չի գար ժպտի մը շողն երկնացու,  
Որ ամոքեր սգախոտվ մարդն ու անսանձ իր հոգին:

ՄԶ

Թող բարձրանար մեկ գիշեր իր դամբանեն Մեռյալ ծով,  
Նեխած ջուրերն իր նետեր Սաղեմին վրա և իր տակ  
Անհայտանար ամեն ինչ, անցյալն իր սև հուշերով,  
Թող ընկղմեր մոռացման վիհին ներքև անհատակ:  
Հորդանանը կանգ առնել ու լեռները զարհուրած  
Վեր նետվեին արմատենն, և անսահման, ամայի,  
Անապատ մը երկարեր երկրին վրան Ավետյաց,  
Ու տարածվեր անեծքի լռությունը ամեհի...

ՄԷ

Ու կրոնքը քայքայվեր... Պիտի ներքս արդյոք դուն  
Քու տարագիր մեկ զավկին, ով մարտիրոս Հայրենիք,  
Մատուռներուդ շուրջ նսեմ անցան աղվոր-թռչառուն  
Իր մանկական երազներն՝ այդ փոթորկին խաղալիք:  
Դուն՝ ծնրագիր կուլաս դեռ, կը զարնըվի նա Խաչին,  
Անիծելու համար զո՛ւր կ'որոնես հոս ԾՆՈՎան,  
Աստված խուլ է, չի լսեր քու սրտակեզ հառաչին  
Ու կը թողու որ կարմիր հագնին շուշան, Շավարշան...

ՄԸ

Քանի անգամ կրնայիր խաչի փոխան առնել սուր,  
Դու մերթ առյուծ, մերթ առծվ՝ նախընտրեցիր Գառնուկին

Դրոշը պարզել ու դարեր պաղատագին հայցել զուր,  
Սին երազներ՝ որոնք միշտ ափերեզ խուլյս կուտային...  
Երակներուդ մեջ արյան կաթիլ մ'անգամ չի մնաց,  
Թողուցիր որ քեզ զարնեն, սրտիդ խորեն շեշտակի,  
Ոտքի կոխան եղար դուն նենգ, դավաճան թշնամյաց,  
Հոշոտեցին որոնք կուլյս մարմինըդ հեք հրեշտակի...

ՄԹ

Կարծեցիր թե կը մնար էջմիածինըդ հեռո՛ւն,  
Աստվածորդվույն շիրմին մոտն իսկ զրկեցիր սգազգյաց  
Զավակներդ՝ որ կանգնեն տաճար ու քու վիշտերուն  
Թարգման ըլլան, այլ ափսո՛ս, Ամբայն հոն ալ լուռ մընաց...  
Մատուռներդ մնացին ստվերներով տրտմագին  
Լուռ, ամայի, աստվածներդ՝ առանց զիրենք պաշտողի,  
Պըլլըվեցար խելահեղ, լալահառաչ Արաքսին,  
Ըսիր. «Մրնա՛նք միասին, առանց շաղի ու շողի...»:

Կ

Գնա՛նք, Հարոլտ, անդունդին, նե՛ղ է աշխարհն ու տըխուր...  
Թռիչ առնենք դեպի քեզ ծանոթ Պարապն ամայի,  
Սուրանք, մինչև հողագունդն՝ իբրև ցավի մը փրփուր,  
Սրտասուքով մեր պղտոր նայվածքներեն անհետի...  
Դեպի անդո՛ւնդ, և այլ ետ չի դառնայի՛նք, ա՛խ, երբե՛ք  
Եվ կամ գայինք փոխ առած Հավիտյանեն իր շանթեր,  
Ու ներո՛ւմը գերագույն, իմ սրտաբե՛կ Հայրենիք,  
Հոր հայցեցիր դարերով, որուն համար կուլաս դեռ...



Կը զարնըվին կոհակները ծովափին,  
Ուրականը որոտագին կը սուրա,  
Երկինքներն բյուր կայծակներ կը թափին,  
Անդունդին վրա:

Անապատներ կը խլըրտին ավազն,  
Հորձանքներու տակ հրատապ, անսահման,  
Բարենիի կաղկանձյուն մ'ալ կը վազն  
Ի գերեզման:

Այս ձայներո՛ւն մեջ անժանոթ, ահավոր,  
Ննչե՛, Տընակ, ստվերներով թախծագին,  
Ամառությանց դու քընացի՛ր հոս անդորր,  
Իբրև հոգին...



Կ'երազեի մերթ անտառներ անշավիղ,  
Կամ մոռցըված անտես վիհեր ցիրուցան,  
Ուր ընկզմեր կյանքի վտակն ՚ի բավիղ  
Հուռ ու անձայն:

Կամ բարձունքներ զերդ Ողիմպոսն ու Բուրգեր  
Ու Հիմալայն, կ'ուզեի հոն շինել բույն,  
Մեծ Անհո՛ւնը գտնել հոգվույս իմ ընկեր  
Ցավին հանգույն:

Կյանքի խլյակ, կոհակ մը հո՛ս նետեց զիս,  
Որ պլլվի՛մ քեզի, Տընակ մենավոր,  
Երանության ստվերներուն օվասիս  
Խաղաղ, անդորր:



Գեթ չե՛ս զգար, որ հեռավոր լեռներն,  
Պըսակ իբրև ճակտիդ չեկա՛վ ափ մը ձյուն,  
Ու Մայիսներ քեզմե հեռո՛ւ կը բուրեն,  
Ժպիտ, ավյուն...

Չի դողացիր դուն սառնաշունչ փոթորկին  
Գրկերուն մեջ: Արևակեզ կուրծքեդ վար,  
Բաղեղն աղվոր չի տարածե՛ց անձկագին  
Ճյուղեր դալար:

Արևին տակ այրե ճակատդ ինձ նման,  
Վտակներու տեղ ե՛ս օրոր թող բսեմ,  
Օվկիանն ալ ինձ: Ննչե՛, Տնա՛կ սիրական,  
Լքվա՛ծ Եղեմ...

Գոնե վտակ մը քովիկեդ թող սահեր,  
Հորիզոնդ փակեր կանաչ մի բլրակ,  
Որ գտնեի սևեռելով դեպի վեր,  
Սուրբ հիշատակ:

Որ զավակս ալ սիրե՛ր քեզի, ի՛մ Տնակ,  
Վտակիդ շուրջը թող գար ման,  
Կանաչ բլրակն ըլլար սահման  
Իր երազին ու իղձերուն բովանգակ:

Դեռ չի մոռցավ, արտոսրազօծ ու թոթով,  
Քանի անգամ ուղեց ինձմե մանկության  
Հյուղակն ու վարդ: Դարձա մունչ ու հոգեխոտով  
Դեպի Օվկիան...



Կը զարնվին կոհակները ծովափին,  
Ուրականը որոտագին կը սուրա,  
Երկինքներն բյուր կայծակներ կը թափին  
Անդունդին վրա:

Անապատներ կը խլըրտին ավազե  
Հորձանքներու տակ հրատա՛պ, անսահմա՛ն,  
Բորենիի կաղկանձյուն մ'ալ կը վազե  
Ի գերեզման:

Այս ձայներուն մեջ անծանոթ, ահավոր  
Ննչե՛, Տնակ, ստվերներով թախծագին,  
Ամայությանց դու քրնացիր՝ հոս անդորր,  
Իբրև հոգին...

ԳԸՆԱ՛

Հարություն գավիթ

Դյութված հոգիս բախտեն դժխեմ,  
Անապատին մեջ հրայրյաց,  
Ա՛խ, ալ շիպ՛տի՛ վերատեսնեմ  
Ձյունն ու մշուշն իմ հայրենյաց:

Եղնիկի պես օր մը երբեք  
Հին երկնային բարձունքն ՚ի վեր  
Չիպ՛տի՛ սուրամ ու սրտաբեկ  
Պիտի հատնի՛մ հոս կարեվեր...

Ես կը մխամ մինչ կարոտով,  
Հոգիիս բոցը չի մարած,  
Ու կ'որոնեմ սրտախոով  
Ձյունն ու մշուշն իմ հայրենյաց:

Ամպեր կ'անցնին ծովեն անդին,  
Ու փոթորիկը խելահեղ  
Կը սլանա որոտագին,  
Անդունդներու մեջեն ահեղ:

Ո՞ր կը դիմեն ամպ ու հովիկ,  
Երգն ամայքին, հեքն օվկիանին,

Ո՞ր կյանքն ու իր տրտում ալիք,  
Հին երազներըս ո՞ր գացին:

Երգե՛, հոգիս, երգդ ո՞ր մնաց,  
Հանձնեցիր զայն ո՞ր կոհակին,  
Միայն մենիկ ու տխրամած  
Անբախտնե՛րը հոս երգ չունին:

\*\*\*

Գեթ դո՛ւն գընա, տղա՛ս, դուն որ միասին  
Հոս այրեցա՛ր արևներու բոցին տակ,  
Որ անտրտունը բաժնեցիր հետքս կյանքին  
Լեզի բաժակ:

Սուրա՛, ամպյն, փոթորկին հետ հեռացի՛ր  
Ամայության կոհակներեն շատ հեռուն,  
Հորիզոնեն անդին անհուն ու անծիր,  
Վես Տավրոսի լեռներուն:

Գաթ՛ր անբիժ ձյունն ու մշուշն հայրենյաց,  
Տո՛ւր ճակատդ ցուրտ սառուցիկ հովերուն,  
Ու ջիզերով պողպատի պես ամբացած,  
Ողջունե նոր մի գարուն:

Ձիս մի՛ հոգար: Ես քայլերով դողդոջուն  
Կրնա՛մ ելլել բաժանումի Գողգոթան,  
Դուն հին, մեռած երազներո՛ւս Հարություն,  
Փակե աչերս ու գընա՛...

Վերաշինե՛ տրնակս ավեր ու լքված,  
Համբույրներըս տուր վարդերուն սիրահմա  
Ու դեպ անբիժ ձյունն ու մշուշն Հայրենյաց  
Փակե աչերս ու գընա՛...

Իմ հայրենի բուրաստանիս մեջ սիրուն  
Ու մարմարե աղբերակի մ'եզերբին,  
Վարդի մեկ ծիւ, զերդ հուշիկ հին օրերուն,  
Գեռ չի դիմած պանդխտութեան գառնագին,  
Իմ մատներով տնկեցի:

Մեկ արշալույս հազի՛վ կեցա իրեն քով,  
Տերևները խամրած, հովեն կը դողար,  
Մեկ անգամ շուր տվի իմ տաք արցունքով  
Ու մեկնեցա դեպ ուղիներն վշտահար,  
Օտարութեան, տաժանքի:

Ոչ մանկական երգերս օրորն եղան իր,  
Եվ ոչ ալ ինք բուրեց կյանքիս գարնան հետ,  
Քի բաղեցի իրմե ծաղիկ մ'իսկ կարմիր  
Իբրև նվեր իմ երազի՛ս սիրավետ,  
Ու պաշտումիս լուսածիր:

Տընակս ինկավ ու կըքեցա՛վ վշտահար,  
Մամուռներով լցավ աղբյուրն մարմարի  
Եվ ա՛լ շերգեր,— այլ վարդենին միշտ դալար  
Բյուր վարդերով կը սարսրոտ, կը վառի  
Իդձերուս պես անհամար:

Ամայքներուն մեջ դուն ինչո՞ւ կ'ապրիս դեռ,  
Մեկ գարունն դողողդ կ'անցնիս մյուսին,  
Ու զեփյուռին կուտաս աղվոր քու թերթեր,  
Ինչո՞ւ դալար, երբ ձայները լսեցին,  
Ու սոխակներ չե՛ն երգեր...

Ծաղիկներդ որո՞ւ ճակտին կ'սպասեն,  
Գո՞ւն, իմ ազեր հայրենիքիս վարդենին,  
Հույս չի ծագեր մութ ամպերու քառսեն,  
Ու հավատքին նշույլները կը հատնին  
Հոգիին մեջ վշտագին...

Սարսուց տունկը: Անապատիս խորերեն  
Լուսնի զույգ շող կապեցին մեզ իրարու,  
Անդրաշխարհի իբրև երազ լուսեղեն,  
Իբրև հծծյո՛ւնն անցնող անուշ օրերու,  
Եվ իր ե՛րգը լսեցի:

— «Ինչո՞ւ խամրիլ, երբ գարուններ կը ծաղկին,  
Ու երբ կայծեր կրնա՛ն հառնուլ մոխրենն,  
Քանի հույսեր կրնա՛ն դառնալ դեռ կյանքին,  
Ու երազներ դեռ կը խայտան, կը բուրեն,  
Դաշտերուն մեջ հայրենի:

Որ վշտահար ու զլխահակ հեռացար,  
Քու հյուղակեղ օտարութեան, հեք քերթող,  
Ու կտրեցիր մութ անդունդներ, ձոր ու սար,  
Պյանքի խութին դեմ տիրական ու հաղթող,  
Ու բարձունքի՛ն սլացար:

Դարձի՛ր, հոգի՛ տուր հյուղակիդ ավերակ,  
Դարձուր ե՛րգը աղբերակիդ մարմարի,  
Քե՛զ կ'սպասեն դրոխտի գետն ու բյուրակ:  
Ու հին ուղին տակավին քե՛զ կը հառի  
Հիմա լքված ու մինակ...

Առ վարդե՛րս, սփռե անհայտ շիրմաց վրան,  
Կախե՛ քնարդ ճյուղերես տրտմագին,  
Բւ մրմնջե՛ երգը անմահ Հալութեան,  
Քե՛զ մեռնիր Հայրենի՛ քը թանկագին,  
Քանի ծաղկի՛ վարդենին...

Արցունքիդ տեղ՝ ոռոգեցի՛ր որով գիս,  
Խոռված հոգիդ պիտի կապեմ անդորրին,  
Ու երբ մահվան դալուկներով տժգունիս,  
Եկուր գտնել, հո՞ն, հոգիիս մտերիմ  
Ըստվերիս տակ մեկ շիրիմ...

Միթե չի կա՞ր Եփրատին քով ողբաձայն  
 Կանգուն մատուռ մ'ուր հնչեիր իրիկվան,  
 Գյուղակն ավեր ու ամայի՞ էր այնքան,  
 Որ մեկնեցար այն վայրերեն մոզական,  
 Ու թափառիկ հայուն ընկեր կտրեցիր,  
 Անցար ալիք, կոհակ, անդունդ ու օվկիան,  
 Ու հայրենյաց զավակներուն ցանուցիր  
 Գացիր հնչել երգը պայծառ հարուժյան,  
 Հնչե՛ կոչնակ  
 Իմ ներդաշնակ,  
 Թե չի մեռան  
 Հույսեր համայն:

Նոր աշխարհին ափեր քեզի են օտար,  
 Կ'զգամ, պանդուխտ ես ինձի պես, ի՞մ կոչնակ.  
 Էլեկտրական շողերուն տեղ բոցավառ,  
 Կ'ուզես մոմի հեքն ու մատո՛ւռ միայնակ,  
 Արծաթահունչ ձայնիդ իբրև արձագանք,  
 Պետք է անուշ շարականի մեղեդին,  
 Հարկ են գեղջուկ մեր հավատքի երգն ու վանկ,  
 Ու հծծյունը մեր հայրենի գեփյուռին:  
 Հնչե՛ կոչնակ  
 Իմ ներդաշնակ,  
 Թե չի մեռան  
 Հույսեր համայն:

Դուն գացիր հոն գերդ հիշատակ անցյալին,  
 Մեծ քաղաքաց ժխորին մեջ բարձրացար,  
 Շուրջըդ պատրանք ու երազներ կը հալին,  
 Այլ դուն հավետ կ'ուղղես կռը վշտահար  
 Արարատին. «Տարահալած Հայություն,  
 Դարձի՛ր, ալ բա՛վ ինձմե հեռու մաշեցար,  
 Դարձի՛ր անցյալ սուրբ միության օրերուն,  
 Բն՛ր ինձ դրո՞շը Ազատության սիրավառ»:

Հնչե՛ կոչնակ  
 Իմ ներդաշնակ,  
 Թե չի մեռան  
 Հույսեր համայն:

Այլ կը մնաս ու կը հնչե՛ս ողբագին,  
 Գուցե պանդուխտ մ'ունիս քեզի ունկնդիր,  
 Որ նվազկոտ հրաժեշտ կուտա այս կյանքին,  
 Նշմարելով գերեզմանը սևածիր,—  
 Կը մրմնջես անուններն իր սիրելյաց  
 Գյուղին անունն ու Եփրատին սիրական,  
 Կ'ըսես թե իր հիշատակն է անմոռաց,  
 Թե հոգիներ պիտի ապրի՞ն հավիտյան,—  
 Հնչե կոչնակ  
 Իմ ներդաշնակ,  
 Թե արդ հարյան  
 Հույսեր համայն:

ՀԱՄԻԻՉ

Նոր տարիի իբրև նվեր թանկագին,  
 Եղբայր, ինձի կանաչածալ ու սիրուն  
 Համրիչ մը հետըդ բերիր,  
 Կիսամաշ են իր հատիկները դեղին,  
 Սաթն հալեր է կարծես շեյխին մատներուն  
 Հպումին տակ անհարիր:

...Բերիր զայն ինձ խորհրդավոր Իրանեն,  
 Ջերդ հիշատակ Տեմավենտին, էլպրուզին,  
 Հոգիիս մեջ բյուր հուշիկներ կը պարեն  
 Ու մոռթին մեջ կը սուզին:

Դարձե՛ք անվերջ, դեղին սաթի՛ հատիկներ,  
 Տեսեք՝ ես ալ կը ծնրադրեմ լույսին դեմ  
 Ջրադաշտի՛ մոգերուն պես ալեհեր  
 Որոտագին կայծակներուն կ'աղոթեմ:

Կարծես Հաֆրդ, Սաադի, Խայեամ բովա են արդ,  
Գարձեք անվերջ դեղին սաթե հատիկներ,  
Բերեք ինձի գինովության սիրազգարձ:  
Պարիկները լուսահեր...

Մալլ օրեր կը հաջորդեն իրարու,  
Ձեզի նման անոնք, ալ վերջ մը չունին,  
Արշալույսը կը խափանվի միշտ հեռու  
Նման բախտին տարահալած թռչունին:

Կ'ըսեն թե սեզ Տավրոս, Մասիս մերը չէն,  
Քե ալ մոռնալ պարտինք Տիգրիսն ու Ափղաթ  
Ու խորտակել Իտալիին հոյաշեն  
Մեր տաճարը, լքումին տակ հուսահատ...

Միշտ երազողն հավերժական երազին,  
Մոռցեր էի վաղուց աղոթքն առ Աստված,  
Հատիկներդ զանոնք ինձի դարձուցին  
Հին օրերու հավատքին հետ լուսամած...

Գարձե՛ք անվերջ, դեղին, մաշա՛ծ հատիկներ,  
Անարշալույս չե՛ն գիշերներն հայության,  
Քանզի Կամքը ու սլացքը անվեհեր  
Անբաժան են մեր հոգիեն հավիտյան...

### ՀԱՅՈՒՆՆԵՐԻ ԽՆՁՈՐՆԵՐ

Բարեկամիս, որ Հայաստանն ստացած  
խնձորներն բաժի՞ք Ձանե՛ք ինձ:

Ինձի ինչո՞ւ ղրկեցիր:

«— Կովկասն նոր հասեր էին», ըսիր դուն:  
— Խորհրդային ու քաղցրահամ Հայաստանը,  
Հալո՞ղ, կարմիր ու սպիտակ այտին պես,  
Խնձորներդ՝ երազահյուժ կույսին պես...

Բանաստեղծին սրտին համար տրոփուն  
Արշալույս մը բերին անհուն ու անձիր...

Ինձի ինչո՞ւ ղրկեցիր:

Մարմինս անշարժ, այլ հոգիով խորասույզ,  
Անցյալին ծոց կ'ապրեմ մշուշը Մուշի,  
Կը թափառեմ Արաբկիրի և Ակնի  
Ամայքներում, կամ բարձունքը Բյուրակնի,  
Դեռ կ'երազեմ, դեռ տաճար մը կը կանգնի  
Կիսակործան: Պատրանքներով վշտասույզ,  
Կը կարծեմ թե մեր դրախտագեղ Մալաթիան  
Ու Կիլիկիան արծվի բույնը Հայության,  
Ազատության դրոշին տակ Վահագնի  
Հին անցյալի զենն ու զրահ կը հագնի...



Ինձի ինչո՞ւ ղրկեցիր:

«— Կովկասն նոր հասեր էին», ըսիր դուն,  
Հայուն արևն է նկարեր իրենց գույն...

— Էջմիածնի ու Սեանի խնկաբույր  
Չովն է հպեր անոնց աղվոր այտերուն,  
Խորհրդային ու քաղցրահամ հույսին պես,  
Հալո՞ղ, կարմիր ու սպիտակ այտին պես,  
Բանաստեղծին սրտին համար տրոփուն,  
Արշալույսնե՛ր բերին անհուն ու անձիր...

Ինձի ինչո՞ւ ղրկեցիր:

Ձեզ երանի՛, խնձորենի՛ք Շիրակի  
Որ Հյուղերնիդ Մայր Արաքսի երգերով  
Կը դողզղա և արմատնիդ շեշտակի  
Հայ գյուղացվույն սուրբ ջրտինքի՛ն կը մտկի:  
Արագածին ու Մասիսին հով, զեփշուռ  
Կը փայփայեն ձեր ծաղկըներ սիրասփյուռ,  
Եվ անոնցմով ազատատենը հայորդին  
Նարո՞ւս կապե հայ կույսերու հավատին:

Միտքս կուգա մի այլ աղվոր բուրաստան,  
Դրախտի գետ Արածանին ուր կ'երգեր,  
Խնձորենիք ծաղկըներով բյուրազան,  
Կը կարծենիք, թե իրական երկինքն էր...  
Ինձի ինչո՞ւ զրկեցիր...

Գիտե՛մ ինչո՞ւ զրկեցիր...  
«Կովկասեն նոր հասեր էին», ըսիր դուն,  
Խորհրդային ու քաղցրահամ Հույսին պես,  
Հալաղ, կարմիր ու սպիտակ այտին պես,  
Խնձորենիք՝ երազահյուծ կույսին պես,  
Բանաստեղծին սրտին համար տրոփուն  
Արշալույսը բերին անհուն ու անծիր...  
Հայուն արևն է՝ նկարեր իրենց գույն,  
էջմիածնի ու Սևանի խնկարույր  
Հովն է հպեր անոնց աղվոր այտերուն,  
Բանաստեղծը ճակատը մակ, սլացող,  
Կը սևեռի իր հույսերուն անցյալին,  
Արևելքեն կարմիր շողեր կը փայլին...  
— Մղձավանջը ու մոայլը դադրին թող,  
— Մայր, զավակներդ կարոտովդ կը մաշին...  
...Եվ աչքերես հուշիկ-հուշիկ կը թափին  
Խնձորենիքուդ կարմիրին վրա  
Ու նոր նրազ մը կ'երերա,  
Պանդուխտներուն արցունքները իբրև ցու...

### ԱՆԴՐԱՆԻԿ

Մագաղաթն այս կուրծքին վրա թող ծալեն,  
Շիրիմն ալ ոչ քար ունենա, ոչ կոթող,  
Եվ որպեսզի հերոսն հանգչի քիչ մ'ատեն,  
Բարեկամներ դազաղին վրա նետեն թող  
Հայաստանի ափ մը հող:

Արծվի աչքերն իր կիսաբաց մնացին,  
Պանդուխտության, արսորանքի մը դաժան  
Չի դիմացավ սիրտը զարնող հարվածին,

Իռլոբեինք գեթ ճակատին շուրջ անուական  
Շավարշանի՛ մը շուշան...

Կայծակնաշաղ սուրն՝ իտեալ մարմնացած  
Վրիժառու և մշտապես հազթական,  
Դողող բազկով երկարեց Մայր հայրենյաց,  
Երբ լքումի, մոռացումի, բաժանման  
Մահվան ցուրտը նախազգաց...



Մագաղաթն այս կուրծքին վրա թող ծալեն  
Ուր վերջին Հայրն իր զավկին փառքը վերջին  
Դրոշմեց հպարտ, հեծկլտալին, ժպտելին,  
Եվ ուր հույսերն կը սլանան, կը թռչին  
Մեր դարավոր անուրջին...

Շղթայակապ չէին հեծծեր այն ատեն  
Մասիս, Տավրոս, ամպածորար [նշավոր],  
Կը լսեինք մեր Տիգրիսեն, Եփրատեն  
Հայ երգերու շեշտերը գոռ և հզոր,  
Արձագանք մը հին դրախտին...

Եվ հուսացինք ու կը հուսանք տակավին,  
Աքսորական կտրեցինք ծովն ու օվկիան,  
Ու կսպասենք արդարությանն երկնային,  
Վերածաղկին պիտի ազատն Հայաստան,  
Ամայացած Կիլիկիան...



Արծվի աչքերն իր կիսաբաց մնացին,  
Շիրմին խորքն դեպի գենիթ կը դառնան,  
Ու կը հառեն աստեղափառ մեր Հայկին,  
Կը հարցունեն, թե գիշերներ բաժանման  
Պիտի տե՛ն հավիտյան...

Փոթորիկներն ըլլան իրեն այցելու,  
Ու կայծակներ որոտան զոռ ամպերեն,  
Եվ օվկիանին կոհակները մոլորուն  
Զայրապալտք գարնվելով իրարու,—  
Դյուցազնին քո՛ւնն օրորեն...

Եվ դուն, նվաթդ, քո՛ւյր սգավոր Հայրենյաց,  
Շավարշանի քույրերուդ պես փափկասուն,  
Հակե իրեն գերեզմանին մենակյաց,  
Համբույրներով արտասովազօժ, զողողուն,  
Փակե՛ աչերն կիսարաց...

Փակե աչերն կիսարաց,  
Որ շի տեսնե, թե ինչքան  
Անարժան ենք իրեն ու սուրբ Հայրենյաց  
Որ դամբանին շուրջն անգամ  
Անմիության իժը սուլեց ու շլաց...



Կայծակնաշող սուրն՝ իտեա՛լ մարմնացած,  
Նոր քաջերու հզոր բազկին կ'սպասե,  
Առանց սուրի շեր Եհովա, կամ Աստված,  
Առանց անոր ու վես կամքին պողպատե  
Հայն անարժան է նախնայաց...

Մագաղաթն աչս վուրձքին վրա՛ քեզ ժպտեն,  
Եիրիմն ալ ոչ քար ունենա, ոչ կոթոզ,  
Եվ որպեսզի հերոսն հանդի քիչ մ'ատեն,  
Բարեկամներ դագաղին վրա նետեն թող  
Հայաստանի ափ մը հող...

### ՀԱՐԱՐԻՆ ՊԱՍԸ

— Հեզե՛, Ժիրայր,  
«Հ.Ա.Յ.Ր.» — հայր:

— But what is Hair?  
— Հայր is father, Ժիրայր,  
«Father is a Star»—  
Հորիզոնները հեռու  
Գիշերներու մեջ վառ  
Քու կարոտովդ անմար,  
Օտար երկիրքներու  
Մեջ զողահար  
Կը հիշե քեզ  
Far far away and higher  
Կը շողա քեզ համար  
Հ.Ա.Յ.Ր.— հայր  
Հեզե՛, Ժիրայր:



Հեզե՛, Ժիրայր,  
«Հ.Ա.Յ.» — հայր  
But who is Hai? Հորար,  
You are a Հայ, Ժիրայր,  
...Իմ անձանոթ թռչնիկ թե  
Դայլայլելու համար  
Գացիր դուն սրաթե  
Բույն մը զոր շեմ ճանչնար,  
Մեզ բաժանող օվկիանին  
Կոհակներեն ասդին  
Քու անուշիկ երգին  
Ենչտերն ինձ կը հասնին.—  
«Հ.Ա.Յ.» — հայր  
J am a Hai.  
«Հ.Ա.Յ.Ր.» — հայր  
— Ապրի՛ս, Ժիրայր:

You are a Hai  
Hair is father  
Father is Star  
Twining so far.



Աստղազարդ դրոշին տակ ծնար դուն,  
Օրորդ ըսին Նիակարան ու օվկիան,  
Եկուր գիրկս, զիս համբուրե մի վայրկյան,  
Ու սրտիս բեր քու երգերդ զվարթուն:  
You are a Hai, Ժիրայր,  
High and higher still  
Երգե, Ժիրայր,  
«Հայր

«J will be high  
Պիտի սուրամ ես վեր  
Երոխտ ու անվեհեր,  
Higher than Ararat  
And higher still».



Թերևս օր մը անցնիս անդունդն օվկիանին  
Ու որոնես մեր հայրենիքը սրգավոր,  
Բուրաստանի մը մեջ տեսնես աստղածոր  
Եղերաբախտ մեր եվրատն ու Տերմեսին,  
Ստվերներ կան հոն, որ սրտեղ կը խոսին  
Ուռենիներու սարսուռին հետ միասին.  
Հոն է լքված մեր Մալաթիան.

Հոն Հորարիդ աղբրակն ու վարդենին,  
Հայնժամ աչքերս իմ փակ կ'ըլլան Վալիտյան  
Սակայն լսես պիտի շեշտերն իմ ետև.  
— «Հեգե՛, Ժիրայր,  
Գոռա՛, Ժիրայր,  
Հ.Ա.Յ.— Հայ  
Հ.Ա.Յ.Ր.— Հայր

I have been higher higher  
Than te Dertinu, than the Stars».

Լուսնկային շողերուն տակ,  
Եթերաճեմ ու սլացիկ,  
Երնեկ անոնց, որոնց հոգիք  
Զիրենք հիշող ունին հրեշտակ:

Երանի քեզ, Յանկի պուեստ, որ հոգիդ  
Բաց դուռ մ'ուներ ու կիսափակ պատուհան,  
Սենյակդ օջախ մը, քովն աթոռ մը հանդիստ,  
Ուր նազելով կուզար ամեն իրիկվան,  
Հին խոհալդ, ստվերն անուշ հրեշտակիդ:

Զգացիր թե զենիթեն վաւ քանի հեղ  
Սիրելիներդ քեզ որոնել եկան հոս,  
Հուշի՛կ-հուշիկ լուսաշղարշ, փառահեղ,  
Մրմնջելով մեղեդիներ երկնահույզ,  
Եվ անցյալի ճովողյուններ սրտազեղ,  
Մըտքեղ շանցավ, շերազեցիր մի հրեշտակ  
Վտարանդի, ապերջանիկ, որ կուզար  
Հաճախ փնտրել իրեն սիրողն ու բունակ,  
Տարագրության հորձանքի տակ սգահար  
Գտնել լացող ամայությունն ավերակ...  
— «Ես հիշատակն եմ Մտերմության», կ'ըսեր մին,  
«Ես՝ խոհալդ անտիական օրերուն»,  
Կը մրմնջեր Ազատության դիցուհին,  
— «Շշմարտությո՛ւն, Սե՛ր, Գո՛ւթ, Սլա՛ցքն առ Անհուն»,  
Փնտրեցին քու բույնն իրենց հին մտերմին —  
Ցավոց հովտին մեջ երջանիկ եղար դուն,  
Ցուրտին սարսուռն հոգվույց մնաց անժանոթ,  
Գլուխդ ինկավ կուրծքի մը վրա զվարթուն,  
Ու ձմռան իսկ ծաղկի մը բույր մշտահոտ,  
Կյանքդ ուղղեց անհետացած ի գարնան:



Լուսնկային շողերուն տակ  
Եթերաճեմ ու սլացիկ,  
Երեսկ անոնց որոնց հոգիք  
Զիրենք հիշող ունին հրեշտակ:

Հայու հոգի մը ճանչցա ես, որուն փափ  
Ու մոայլամած բանտը շուներ լուսամտոս:  
Կ'սպասեր ան զուր վիզը ծուռ, վայրահակ,  
Թե հին սուվեր մ'արդյոք կուգա՞ր ալ իր մտո:  
Բերել ծաղկյա գարուններուն հիշատակ:

Հողակույտի մը պես լքված, որուն վրաս  
Ավազին տակ նետեց հովը փայտե խա:  
Իբրև անգիր, անտիրական մի տապան,  
Նկուղին խորն հայու հոգին մեղմափայտ:  
Մնչեր անունը սիրելիաց: որ շեկան:

Բանտն այն շուներ ոչ լուսամտոս ու ոչ դատո:  
Ոչ մեկ գիշեր ազդար էակ մ'եկա՞մ նետ:  
Որուն ճակտեն ցալար հոշոք գերաթուջո:  
Ու ծավալեր գորով մ'անուշ, սիրախառնո:  
Արծարծելով նվիրական երկնից հուր:

Դեռ կը հուսա թե երկաթյա իր շղթան  
Պիտի փշրել մի օր, ցնցում մ'ալ հզոր:  
Քանզի խավար նկատվի պատմեա պատպան:  
Ու սլանա ինք սրափակից հետափոր  
Սպասության:

Կը հաշորդեն գարուն գարնան,  
Զեփյուններուն աշնան հովեր,  
Կուռնկ, ծիծառ ետ կը գառնան  
Վերաշինել բունակն ավեր,

Հայու հոգին վիրապին մեջն իր անլույս,  
Կ'սպասե որ սուվեր մ'ըլլա իր կարգին

Ու սլանա մրմունջներով սրտահույզ  
Ալեպսակ Արարատի բարձունքին,  
Սիրակապույտ իր հայրենյաց թանկագին:

Հյուղակ մը կա Արագածի լանջին վրան,  
Այնտեղ օջախ մը, քովն՝ աթոռ մը թափուր,  
Դուռը բաց է և կիսափակ պատուհան,  
Ուր կ'սպասե ալևոր Մայր Հայաստան,  
Իր տարագիր զափակներուն հեռավոր:  
Մո՞տ է առտուն, ըսե՛, ո՞վ Մայր կաթոգին,  
Կարժիր աստղեն եկա՞վ հույսի մի նշույլ,  
Բուրաստանիդ մեջ վարդենիք կը ծաղկի՞ն...  
...Անհետացա՞ն մղձավանջներն մեզ մաշող,  
Բոսորին տակ պայծառաշող երկինքին...

Հյուղակին մեջ պահե աթոռն իր թափուր,  
Կարոտակեզ զափակըդ քեզ պիտի գա,  
Զի մարեցավ դեռ հոգվույն խոր հույսին հուր,  
Ու կը հավտա գարուններուն ապագա,  
Դալլուն ճակտին համար պահե քու համբույր...  
Հագիր վրադ մետաքսահյուս քու բեհեզ,  
Թունիկներդ քեզ սեերով չի տեսնան,  
Անոնք կուզան արուսյակի, աստղի պես  
Հրատողոր անոնք կուզան հարության  
Քեզ երգերովն ազատության հաղթական:

Տե՛ս, ձեռքին մեջ ձեռք մ'ալ կը հանգի դողահար,  
Այն հրեշտակին, որ բաժնեց բանտն իր դաժան,  
Որ հավատքի պահեց պլպլուն ջահն անմար...  
...Պարզե Մասյաց վրա դրոշիդ ծիածան,  
Ողջունել հայ Մայրն՝ հայության տեսող Մայր...

Յանկի պոետ, կյանքի պոետ,  
Հայ երգիչին բանտն ու շղթան,

Երազի պես կ'անհետանան,  
Նոր հմայքով մ'երանավետ:

Ան շսպասեր ստվեր, ոգի,  
Հոս են երկինք, հոս իրական  
Նոր կյանք մ'ուժեղ ու տիրական  
Նոր բարձունքի մը կը հանգի...

...Ախ, չի կրնար: Կը վախնա թե  
Պատրանք մ'ալ այն է գիշերվան  
— «Արդարութեան մեծ ապագան»—  
Կասկածն այն ալ պիտի քանդե...

Ու կը դռնա մութ գիշերվան,  
Անձնատուր հին տվայտանքին,  
Ու քեզի պես կարոտագին,  
Կ'սպասե թե արդյոք կուզա՞ն  
Իր ստվերները կաթոգին:

Լուսնկային շողերուն տակ  
Եթերաճեմ ու սլացիկ,  
Երնեկ անոնց, որոնց հոգիք  
Զիրենք հիշող ունին հրեշտակ...

## ՀԻՆ ՏՆԱԿՍ

Բուրաստաններ ամեն տեղ կալ  
Գեղափթիթ ծաղկըներով,  
Նույն աստղերը, նույն լուսնկան,  
Նույն թռիչն ունին զեփյուռն ու ծով:

Լուկ դուն չիկաս սարերուն վրա,  
Ամայացած տուն հայրենի,  
Քեզի համար հոգին կուզա,  
ՂԱՐԻՊԻՆ սիրտն ալ կ'արյունի...

# Ա Դ Ա Մ Ի Ն Ա Ն Ե Ծ Ք Ը

## ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Կարապի մը երեւոյթը ուներ նա,  
Երբոր մարդուն հետը եկավ այս աշխարհ,  
Որ երգ մ'ուներ, որ կը կրկներ մշտակա,  
Պայծառ շեշտով և զանգերով անհամար:

Կոմփյուկիտս, Պուտտա, Սոկրատ, Պղատոն,  
Եվ մարգարեք եղան նրան արձագանք,  
Մինչ նա մարդոց ցույց տար մի նոր հորիզոն,  
Եվ անսպառ ու անվախճան սիրո՞ կյանք:

Օր մ'ալ մարդիկ այդ կարապը խաչեցին,  
Եվ նա երգեց վերջին անգամ մելանույշ,  
Եվ մարդկութեան երակաց մեջ հեշտագին  
Սարսուռ մ'եղավ... երազներու հետ քնքուշ...

Այսօր կարապն Երկնից մեջ է, այլ յուր ձայն,  
Դարուց մեջեն սահի հեզիկ ու խաղաղ,  
Ճշմարտութիւնն՝ ժամանակա՞ց քահանան,  
Դեռ կը հնչե՞ իր նվագն մե՞ղմ, նվա՞ղ...

## ԱՂ ՄԻ ԼԱՐ

Արտասուքը կը հարմարի թշվառին,  
Պարա քնա՛րն ողբա միայն անընդհատ  
Մրտին հե՛տը, հոգվույն հե՛տը վշտահար,  
Ուր դժոխոց միայն կայծեր կը վառին,  
Հուար մարի այն էակին մեջ վհատ,  
Խունկը հատնի կյանքին մեջեն այն բուրվառ...

Արտասվելը կը հարմարի լուկ կանանց,  
Որոց սրտեր այնքան շատ են զգայուն,  
Որ միշտ արյո՛ւն արցունք հոսեն բոցավառ,  
Եվ սիրո մեջ անխարուսիկ ու անանց  
Իրենց աչերն այն կապույտ, սև, հրմայուն,  
Արտասուքներ կը գլորեն վար ու մար...

Ուստի հերի՛ք իմ քնարը ողբագին  
Սարսուա՛ մենիկ ու հեծեծե՛ անընդհատ,  
Սիրտս ալ հերի՛ք ցավոց լինի թող բազին  
Երջանկության երևույթն՝ հուսահատ...  
Եվ ձայն մը գա սրտիս խորեն վշտահար,  
Հեք պատանի, ալ մի՛ ողբար, ալ մի՛ լար:

## ԿՈՒՅՍԻՆ ՀՈԳԻՆ

Ո՛ւր է արդյոք մանկան հոգին...  
— Երկնից ի մեջ անմահից հետ,  
Հոն կը ննչե դեռ սիրագին,  
Կամ էին մեջ լինի անհետ...

Ո՛ւր է արդյոք վարդին հոգին,  
— Հողմիկին մեջ անուշաբույր,  
Կարմիր ամպոց մե՛ջ երկինքին  
Կամ շրթանց մեջ սիրահամբույր...

Ո՛ւր է արդյոք կույսին հոգին  
— Ամպոց ետև զերդ մի արև,  
Կամ աստեղաց մեջ կաթոգին...

Սիրո անհուն երկնից վերև,  
Կամ պատանվույն լանջքին ներքև...  
— Ո՛հ, հո՛ն է, հո՛ն կույսին հոգին...

## ՄԱՅԻՍ

Արևն այստեղ ծախտ ցաննց,  
Միծեռնակը բերավ գարուն,  
Միաժան կա ամպի վրա,  
Գույնը տեղն է մեր վարդերուն:

Ձմռան հովերն անցա՛ն, գացի՛ն,  
Մայիսը սյուք բերավ մեզի,  
Կապույտ մը շինչ ու հրճվագին,  
Վհիտ վտակն ալ կը հոսի:

Կը մտածեմ աչքս արցունքով,  
Թե հեռու եմ ես այս տարի,  
Թե իր մենիկ տապանին քով,  
Մայիսին վարդը չի տարի:

Տարտամ նայվածք մը կ'ուզեմ հոն,  
Սիրտս հետևի այն թռչունին  
Ամպամած է այն հորիզոն,  
Հատնողները մայիս շունին...

## ԽՆՆԻ ՓԱՓԱՔ

Կամ բռնատեղծ լինել կուզեմ և կամ ծագ  
ՍՄԱՅԼԱ

Ազվոր ծաղիկն եզիր գարնան,  
Փույթ չէ թե շուտ խամրիս այգուն,  
Թիթեռներ թող շուրջըդ դառնան,  
...Սիրո բուսն կյանք մ'է անհուն:

«Կամ բանաստեղծ լինել, կամ ծով»,  
Անդունդներն ի՞նչ ունին հրապույր,  
Մին դալկահար, մյուսը խոռով...  
Փպիտն եղիբ դու լուսաթույր...

Կամ սերդ ասուպ սե գիշերվան  
Հորիզոնեն այրի՛ր, անցի՛ր,  
Ու քո բոցերդ թող շլանան,  
Փպիտն եղիբ դու լուսաթույր...

Զեփյուռն եղիբ կամ մեղմ ու հեզ,  
Զով տուր այրած ճակատներու.  
Ու երանի՛ թե բոցակեզ  
Վիշտեր մնան քեզմե հեռու:

#### ԵՐԿՐԱԳՈՒՆՏ

Մութին մեջեն ան խուարշավ,  
Կո՛ւրծքը ընկճած օվկիանին տակ,  
Կը բոլորե գերոն անբավ  
Կույր օրենքի մը հպատակ:

Էությունը հալած կ'ենա,  
Կը թավալի ինք իր վրան,  
Ու ցնցվելով մերթ կ'երերա  
Ամայության մեջ անսահման:

Այլ օրենքը կը պահե՛ր զայն,  
Իր ծիրին մեջ, հար նույն միջոց,  
Արփին կեդրոնն է հավիտյան,

Զո՛ւր կը ժայթքե անզուսպ լավան,  
Անդունդը զո՛ւր բանա իր ծոց,  
Արդեն գծվա՛ծ է իր ճամբան:

Կյանքն ալ ըլլար թող անո՛ր պես,  
Կյա՛նքը հավերժ մութին ընկեր,  
Ու վաղանցուկ գիշերեն վերջ,  
Կուրծքն արշալո՛ւյս մը բուրնկեր:

Կրակոտ սրտով մնար հավետ,  
Արևոտ հո՛ւյս մ'իրեն կեդրոն,  
Հոգ չէ՛ թե այդ երանավետ  
Կյանքի ծիրը ըլլար գերոն:

Հմայքն հզոր ամայության,  
Թող չի հանե՛ր զայն իր ճամբան.  
Իղձ ու փափաք շունենար ան,

Ու միամիտ սուրար, եռա՛ր  
Մինչև ընկճե՛ր անլույս շիրմեն,  
Երազներու մեջ բոցավառ:

#### ԳԵՂՁԱՆԻԿՍ

Երջանի՛կ ես ինձմե, իմ հե՛ք դեղձանիկ,  
Բացիր աչերդ ու վանդա՛կը տեսար դուն,  
Գեո չի սիրա՛ծ գարնան բուրումն ու ծաղիկ,  
Կյանքը չապրած թոխներով ոստոստուն,  
Սընարիս քով հատար տրտում ու մենիկ:

Գոնե Մայիս մը շանցուցի՛նք միասին,  
Հատա՛ր անուշ, մելամաղձիկ շեշտերով,  
Մազկին սե՛րը երգեցիր՝ դու տրտմագին,  
Զուր խնդրելով խանդաղատանք ու գորով,  
Բախտը ողբա՛լ արոշած էր քեզ բաժին:

Աչերըդ բաց՝ կարծեցի թե կ'ապրիս դեռ,  
Երբ շարժեցի՛ կամացուկ մը ինկար վար,

— Գինովցե՛ր է, ըսի մտքիս անտարբեր,  
Առի, կուրծքըդ դողդոջ, սիրտըդ կը հեար,  
Ու ձեռքիս մեջ հատար մենիկ, անընկճեր:



Որչանի՛կ էր սակայն իմ հեք դեղձանիկ,  
Բացավ աչքերն ու վանդակը տեսավ ան,  
Զգաց Մայիս, արև, բուրում ու ծաղիկ,  
Սիրո ցավեր իր կուրծքին տակ շայրեպան,  
Ու չի տվին ճակտին խորշում ու ալիք:

Կարծեց գուցե թե կյանքն ե՛րզ մ'է մենավոր,  
Ցած նախանձը չի խափանեց ձայնն իրեն,  
Կեղծ մտերիմ մը չի պատահ'ց սիրուն անոր,  
Ու զերծ բախտին մորիկներեն, հովերեն  
Գնաց հածիլ եթերին մե՛ջ հեռավոր:

Ես կը մնամ սիրտս լեցուն հույսերով,  
Ու կը համրեմ հոգվույս տենչերն անցյալին,  
Երգ շունիմ ես, շեշտերըս ցուրտ ու թոթով,  
Ես չի հատած ինձմե առաջ կը հալին:  
Կը գալարիմ մոռացումըդ հիշելով...

### ԺԱՄԱՅՈՒՆՅՈՒ

Մտերմության հին հիշատակ  
Մերթ կուրծքիս վրա իմ մանկայի՛ն  
Բարբախեցիր սրտիս հետ տաք,  
Երբ ժամերը խուսափեի՛ն  
Երազներով լեցուն համակ:

Եկար հետըս օտար երկիր  
Ու մտերի՛մըս եղար դուն,  
Ցաված կյանքիս իմ կարեկիր,  
Ու զերդ հրեշտակ հսկող արթևան,  
Զիս մենավոր չի թողուցիր:

Կ'ըսեիր թե վիշտը կ'անցնի  
Սլաքներուդ հետ համրընթաց,  
Կուգան օրեր նոր, հուսալի,  
Եվ աչքերուս արտասովաթաց  
Օր մ'արշալույսը կը փայլի...



Որչանկությունը մոռցուց քեզ,  
Սլաքներըդ ալ չե՛ն դառնար,  
Ու չեմ հիշեր հին հրակեզ  
Բոպեները լուռ, վշտահար,  
Պր աչքելով անցան կյանքես:

Աչ չե՛մ Գաժրեր թաշող վայրկյան,  
Թեև կուրծքիս սեղմած հիմակ,  
Քե՛զ, անցյալի մտերմական  
Իբրև անույշ սուրբ հիշատակ,—  
Ես արդ ժպտիմ անհունության:

### ԱՌ ԱՍՏՎԱԾ

Արշալույսին հետ բոցավառ ու բոսոր  
Ժպտուն ու հո՛ւյսն էիր կյանքիս մանկային,  
Ու դեպի քե՛զ կ'երկարեի իմ անզոր  
Թևերն, Աստվա՛ծ, սիրակապույտ Մայիսին:

Ամեն տեղ դուն կը ցուլայիր ժպտագեղ,  
Մերթ Աղավնի ու մերթ Մերուկ մը ժպտուն,  
Այլ ինձ համար Հիսո՛ւան էիր միշտ անմեղ,  
Ինձ պես մանո՛ւկ, Մորըդ գի՛րկը սիրասուն:

Ու կ'ուզեի անցնել կապույտ հորիզոն,  
Քովըդ երգել, զի հատուշե՛լ հավիտյան,  
Կը հուսայի գտնել քնար, երա՛զ հան,  
Մշտածիժազ աշխարհ մ'առանց Գթնափյան:



Տարիները գացին... ու Գուն հեռացար  
 Հատիկ հատիկ երազներս խամրելով,  
 Շուրջս կ'իյնան վարդ ու տերև դալկահար,  
 Ու ճակատիս կը զարնե ցուրտ աշնան հով:

Ա՛խ, երանի չի գիտնայի՛ թե աշխարհ  
 Կուրծքը հուրով ինձ պես հյուլե՛ մ'է շնչին,  
 Ամայության մեջ սուրացող անբարբառ,  
 Ու կը դիմե մութ, սառուցիկ ոչնչին...

Կը դողայի մերթ օվկիանեն մռնչող,  
 Պատրանքն անցա՛վ, պիտի սառի օր մ'ալ ան:  
 Ձայներ լո՛նն պիտի, մարդն ալ դառնա հող,  
 Ու դուն միայն պիտի մնաս հավիտյան...

Կապույտին մեջ փնտրեցի մերթ քու պատկեր,  
 Գիտությունն արդ վի՛հը բացավ անդնդոց,  
 Ու կորուսի՛ Քեզ, մանկությանն իմ Ընկեր,  
 Կասկածներու օվկիանին մեջ ալեկոծ:

Կ'ուզեմ հանգչիլ. մտածումներն այս ահեղ  
 Քողո՛ւլ կուզեմ ժպտին առջև նվազկոտ,  
 Բուպե՛ մը գեթ մանկանայի և անմեղ  
 Փափաքներըս ե՛տ դառնային ինձի մոտ...

Գիշերին մեջ այս ահավոր ու տրտում,  
 Դարձի՛ր, անուշ երազ կյանքիս մոլորուն,  
 Մ'հ, մինա՛կ եմ, քեզ կ'աղաչե՛մ անդադրում,  
 Դարձի՛ր, Աստված, իմ մանկայի՛ն օրերուն...

ՓԱՓԱՔ

Ո՛չ, թաղարիս խամրած ծաղիկ...  
 Վերափթիչը չե՛մ ուզեր...  
 Քող չի գազնան գարնան հողիկ...  
 Ու հոգիս մարած հույսեր:

Ինձի մնաց լուկ մի երազ,  
 Միակ փափաք մ'երանավետ,  
 Պատրանքներու մեջ վաղահաս  
 Դեռ կը միա՛, կ'այրի՛ հավետ:

Սին բաղձանքներ գտան վախճան,  
 Մին կը մնա՛ դեռ նվաղկոտ,  
 Անուշ, անբիծ, անդավաճան  
 Մտերմությա՛ն քաշեմ կարոտ...

ԱՆՎԵՐԱԴԱՐՁ

Գարունները միշտ հինե՛րն են.  
 Վարդածիծաղ ու բոցանուշ,  
 Ամպեր կապույտ, աչքեր մեղուշ,  
 Գինովությո՛ւն մը կը բուրեն:

Ալյակներ նո՛ր են հավիտյան,  
 Վաղն արշալույսն է նոր դարուն.  
 Վիշտեր սրտեն փախչին հեռուն  
 Ու միանան հին մթության:

Երազանքի քա՛ղցր են օրեր,  
 Լույսով, բույրով շաղված հավետ,  
 Կյանքի ուղին միշտ արփավետ  
 Մաղիկներու մեջն է պահվեր:

Գետը պղտոր չէ՛ ալ հիմակ,  
 Վեհիտ ջուրով կը ծավալի  
 Լուսնկային գերդ հայելի,  
 Լճակի պես անդո՛րր համակ:



Հոգին սակայն շուզե՛ր հավատալ:  
 Ամեն բան կե՛ղծ կուգա կարծես:

Մութին մարդ առուպին պես  
Կուզե ինք ալ մութի՛ն երթալ:  
Կը վերծանին հին գարուններ,

Քաշունները կուզան նորեն,  
Մեզն ածիվներն ալ ամպերին  
Կը սրանան ավելի վեր:

Կ'որոնեմ զուր ու սրտաբեկ,  
Ձեզ չի՛ տվի գերեզմանին,  
Շուրջըս համայնք վերածաղկին.  
Մտերմությո՛ւն, հավատք, ո՛ւր եք:

### ՄԵՐ ԳԱՐԸ ԱՍՏՈՒԾՈ ԱՌՋԵՎ

Հազարվեցան երկինքի մեջ

Քուր դարերը անցյալին,

Անոնք որ լսած էին «Ողիցի լույսը»,

Անոնք որ աեսած էին մանուկ Մարգը,

Կիսամերկ, խորշոմ, ալեոր դարեր:

Ծոնեցան ինչպես հովին տակ ցորենի հասկեր

Ասողերու բույլերը սարսուռ զգացին,

Ասաված կուզար:

Ան կուզար նոր արևներ ստեղծելով,

Հսկա ու միշտ ահեղ, վսեմ ու միշտ խոնարհ,

Ու տիեզերք կ'երգեր «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ...»:

Բազմեցավ հավիտենական փահին վրա,

Ու հիշեց մեր աշխարհը,

Մեր մոռցված հյուլն աշխարհը,

Որ կը թավալեր մութին մեջ:

Հանքը պոստեց Եհովան,

Տիեզրին վրա լուսությունը թանձրացավ,

— «Տասնեկններդ դարը թող քառ», գոռաց ան,

Ու հին դարեր ծոնեցան նորեն,

Հավատքի, հույսի, սիրո դարեր...

Ձեռքը ուսական մուշտակն ձեռնոց,

Վրան տևառնյան փափուկ վերարկու,

Երեսը փարիզյան շպար,

Միբարանելով մահվան հրեշտակին հետ,

Որուն դեղին գույնը կարմրած էր հմայքեն,

Անզուհիի պես հառաջ անցավ մեր դարը:

Միջին դարերը՝ վայրահակ թեև,

Ցանկության սարսուռ մը անցավ իրենց մեջին,

Ճգնավոր դարերը գողացին,

Երբ մեր գաթուն վճիտ ձայնը հնչեց,

«Տեր, մարդկությունն հառաջ գնաց,

Քու անունիդ նոր տաճարներ,

Գիտության նոր վաստարաններ,

Երջանկություն տվի երկրին...»:

Ընդհատեցավ հանկարծ իր ձայնը սիրահունչ,

Ու դարերու պատկանելի ամբոխեն,

Աղաղակ մը վեր բարձրացավ ողբագին,

Հիսուսի դարն էր, որ կուլար բարձրաձայն...

Գունատեցավ աստժո դեմքն ու հրային,

Նայվածքով մ'ուր Արդարությունը կ'այրեր,

«Պատմությունը թող տա վճիռը», գոռաց...

Ու պատմության հրեշտակն եկավ անողոր,

Հյուսիսի ցուրտ հովերուն պես սառուցիկ,

Դեմքը ողորկ, իրեն մարմար անզգա,

Ու քանի մոտ կուզար ազվոր մեր դարուն,

Գեղեցկությունն անոր կ'ըլլար փլատակ:

Շպարները թափեցան նախ այտերեն,

Ու նայվածքը մելանույշ

Տեղի տվավ բորենի նայվածքին,

Ու պատեցավ ձեռքի մուշտակը փայլուն,

Տեսնվեցան գայլի թափեր, ձիբաճներ,

Ուզեց ողբալ... կարծես օձ մը կը շլի,

Երկինք դողաց, արևները մարեցան,  
Դարեր համայն մթուփյան մեջ թաղվեցան,  
Հիսուսի դարը մնաց հոն վշտաբեկ,  
— «Տե՛ր, նոր դար մ'ալ սիրույս համար» մրմնշեց:

### ԿՅԿՏՈՒՐ ԽՈՍՔԵՐ

ձուացի թե այն գարունը երազուն  
Պիտի տեներ հավիտյան,  
Սերությունը դեռ չի հասած ազազուն  
Իր ծածկերով մենության:

ձույսի նավակս անցավ իր լույս-հետքին հետ,  
Հիշատակ մը չի թողուց,  
Մինչ չի հիշեր իր ստվերը սիրավետ,  
Աշխարհ մոռցած է վաղուց...



Գեթ մեկն ըլլար սրտիս վիշտերն հասկըցող,  
Ու գիտնար թե հեք հայրենյաց  
Կարոտովը ես կիսայրյաց,  
Պը մխամ հոս ու կը գնամ ի՞թաց հող:

Գեթ մա՛յրս ըլլար օրորանիս քով լացող,  
Մեկ մ'ալ երգեր անուշ օրոր,  
Սիրատոգույն ու մենավոր  
Աչքերես ալ վազեր սիրո շաղն ու ցող:



Սիրածներս հատիկ-հատիկ դարձան հող,  
Եվ հոս մենիկ՝ գերդ տնաբազիր  
Հորիզոնը՝ դիտեմ անձիր,  
Գուցե մին կա՞ սրտի վերքերն հասկըցող...

### ՍԳԱՎՈՐ ՄԱՅՐ

տա 2. Մ.

Նոր գարնան հետ նոր ծաղիկներ բուրեցին,  
Զեփյուռ, ալիք պար բունեցին խանդավառ,  
Բնությունը մոռացկոտ է... Առանձին  
Եվ անժրպիտ մնաց մայրը վշտահար:

Տարին կ'անցնի և աչքերով իմ աղոտ,  
Զուր կ'որոնեմ այն դալկահար պատանին,  
Ամայություն մը կը սառի հոգվույս մոտ.  
Հիշատակներ դիս դեպի վիճ կը տանին:



Անհանին դեմ ցցված մենիկ նոճիկներ,  
— Եիրմի խոշոր մոմեր սև-սև մուխերով,  
Վտակն անոնց քով երգելով կը սահեր,  
Սիրակարկա՛, զոր լսելնք անխոռով...

Զի՛ն հասներ հոն կոհակներ մորնչող,  
Եվ ստվերին տեղ ցավատանջ Պայրընին,  
Հովվուհի մը կը թափառեր սիրաշող  
Իր սրինգին երանգներով երկնային:

Հոն ամեն բան Արևե՛լքն էր սիրաբույր,  
Մեղկ գիշերներ ու լուռ ցավեր սիրանույշ,  
Ուր հալեի՛ն սիրտն՝ հառաչող, աստղը՝ լուռ,  
Ու ժամերը երազավետ ու քնքույր...



Շուտ խամրեցան ծաղիկ օրեր աշնան մոտ,  
Նոր գարունը մեզ չի բերա՛վ անոնցմե,  
Հիմակ աչքող ցավ մ'աչքերես իմ անձկուտ,  
Արտասուքի հուսկ կաթիլներ կը քամե...



Կը մտածեմ, շատեր կ'երգեն գարնան հետ,  
Փիթեռնիկներ կ'ըմպեն ծաղկի ցողն ու շող,  
Հազիվ ապրած՝ գուցե կ'ըլլամ վաղն անհետ,  
Եվ ինծի հետ իմ երագներն ալ մաշող...



Նոր գարնան հետ նոր ծաղիկներ բուրեցին,  
Ջեֆյուտ, ալիք պար բռնեցին խանդավառ,  
Բեռթյունը մոռացկոտ է... Առանձին  
Եվ անծայիտ մնաց մաշրը վշտահար:

Տարին կ'անցնի և աչքերով իմ ազոտ  
Ջուր կ'որոնեմ քեզ դալկահար պատանի.  
Քեզ կը հիշեմ արտասովազին ու անձկոտ,  
Եբբ այրող ցավը զիս վիհին կը տանի...

### ԾԱՂԿԱՆՈՑԻ ՆՈՃԻՆ

Աղակնպատ ծաղկանոցին մեջ լեցուն  
Քաղարները շարված էին քովն քով,  
Շուշան ու վարդ կը ծաղկեին գուլնզգույն,  
Քեն աշունն հասած էր ցուրտ երկինքով:

Արևն հազիվ ամպերեն վար կը մաղվեր,  
Քամին կուլար իր տխրահունչ մեղեդին,  
Կը մոտենար ձմեռը ցուրտ, ալեհեր,  
Մազկանց հոգին տանելու մութ անդունդին:

Այլ այդ սիրուն արվեստական գարնան մեջ  
Կը ծպտեին վարդ, մանիշակ իրարու,  
Կը հեզնեին սարսուռներով բյուր, անվերջ,  
Գուրբը հեծող փոթորի՛ կը ահարկու:

Այդ ժիճաղկոտ ծաղիկներուն դրացի,  
Անհոտն էր մեկուկուս մեջ անընթացի:

Դալկատերև նոճետունկ մը դիտեցի,  
Լեռան ծնունդ, զոր բախտը հո՛ղ կը նետեր:

Նկուն դիրքով, անշարժ ու լուռ, մահվան պես,  
Ճակատն հակած ծաղկանոցի փեղկերուն,  
Օտար հողի տրտում զավակն էր կարծես,  
Որ քշված էր հոսանքե մը մոլորուն:



«Ինչո՞ւ տխուր ես, հարցուցի հուզմունքով,  
Հոս տաքուկ օ՛ղ կա... ծաղիկնե՛ր քեզ մոտ,  
Փոթորիկեն հեռու կյանքըդ անվթորով,  
Կ'անցնի բույրի, սիրո կյանք մը անձկարգով»:

Նոճին շարժեց իր տերևներ դալկահար,  
Հասակես ցո՛ւնց մը սահեցավ դառնադին,  
Կարծեցի թե լռիկ թևն անբարբառ,  
Այլ մրմունջ մը կուգար մոտեն թաղարթին:

«— Զիս դարձուցե՛ք հին լեռներուն ամենի,  
Տարե՛ք ահեղ մրրիկներուն ցուրտ աշնան,  
Այս թաղարի կյանքը կե՛ղծ է, ամայի՛,  
Տերևներըս փոթորիկին տակ թող չորնան»:

Թող ունենամ գարնան՝ անձրև, ձմռան՝ ձյուն,  
Ա՛խ, չե՛մ սիրեր գաթաններու ճավիտյան  
Չիպտի՛ խամբին... Զիս տարե՛ք հին լեռներուն,  
Որ նաճիներ, շունի՛ն փակաւք ու պատշաճն...:

Կը սիրեմ հոն խաղալ հետը փոթորիկին,  
Երկյուղ չի՛ տար հոն ամպին շանթն ու կայծակ,  
Հեզնոտ դիտեմ պիտի հեղեղն զայրագին,  
Որ կը սուրա զեպի անդունդն անհատակ...»:



Քանի մը օր անցավ գացի հոն նորեն,  
Ծաղիկները բացվել էին ծպտագին,  
...Մենիկ անկյունն զրկված իր քաղարեն,  
Կեղծ գարունին մեջ խամբա՛ծ էր հեզ նոճի՛ն...

ՀԱՆԳԻՍՏ  
(Արձակ ֆերված)

Հոգի Աստուայ շրջե  
ի վերայ շուրջ:  
Ս. ԳԻՐՔ

«Եղիցի լույս»: Ու քառսին արգանդեն  
Մթությունը խույս կուտար.  
Վարագույրը բացված էր,  
Տիեզերք Արարչին հետ դեմ առ դեմ,  
Երկյուղով մը կը դողար:  
Աստված դիտեց,  
Իր նայվածքը հրակեզ —  
Որմն, ետքը, փոխ պիտի տար  
Արժիվներուն ու կույսերուն —  
Ածեց շորս դին.  
Ինք ալևոր, ինք հոգնած էր,  
Ու վիզը ծուռ,  
Հանգիստի խորշ մը որոնեց:  
Տիեզերքը, դեռ մանուկ,  
Կայտառ, հորդում մ'ունեի կարծես,  
Տարերքները, նորածին,  
Կը խայտային անհուն լույսով ողողուն:  
Անբավությունը կը շարժեր, ու կայուն,  
Խորշ մը չի կար, ուր Արարիչը հանգչեր:  
Ամեն տեղ հանգիստ գտնելի հուսահատ՝  
Ինկավ աշխարհ, ջուրերուն վրա օվկիանին,  
Ու հոն ծփալ սկսավ:  
Լույս մազերը տարածած ալյաց վրան,  
Ճակատը վեր՝ լուսնակին,  
Ճակատը վե՛հ՝ բոցե տարերքներուն դարձոց,  
Եվ հեքով մը մտածեց.  
— «Ամեն բան կատարյալ է,  
Հավերժական իմ կյանքես  
Բաշխեցի տիեզերքին,  
Մեծ մեքենան լարեցի,  
Անհունության մը համար»:



Աշխարհ ցնցվիլ սկսավ,  
Իր աստվածային հուրին ներքև կը դողար անձայն,  
Փոթորիկը՝ վախեն հեռու կը փախչեր,  
Կապարի պես ծանր լռության մեջ  
Որոշ կը լսվեր աստծո սրտին ձայնը:  
Հատիկ-հատիկ, սակայն լեցուն անբավ սարսուռով:  
«Ամեն բան կատարյալ է, շարունակեց մտածել.  
Ջնջում, վերածնում, ծնում ու ջնջում»:  
Ամեն բան պիտի փոխվի ու միշտ  
Հյուլե մը պիտի չընջվի ամենքեն,  
Խորշ մը, հանգիստի անկյուն մը,  
Խորշ մը տվեք հոգնած աստուծո համար:  
Վիթխարի տարիքը շարունակեցին ընթացքին,  
Փոթորիկը հեռուները մոնչել սկսավ,  
Օվկիանը կը ծփար անհանդարտ ու փոփրալի,  
Եվ հոգնած արարչագործութենեն՝  
Հորանջեց աստված,  
Չանձրույթի այդ հառաչը՝ աստծո սրտեն թռած՝  
Գնաց Եդեմ, հողին խառնվեցավ,  
Ու բույս մը ետք Ադամ՝ ինք ալ ձանձրույթ համակ՝  
Հանգիստ անկյուն մը կ'որոներ:



«Նորություն», շարունակեց մտածել աստված,  
— Վեցերորդ օրը ծագած էր արդեն  
«Ահա նոր արարած մը, դուն ալ կը ձանձրանաս...  
Լա՛վ, բնությունը քեզ կը նվիրես:  
Ա՛րև, լուսի՛ն, օվկիա՛ն, հո՛վ, զեփյո՛ւռ, ծաղիկնե՛ր,  
Թող փայլին, թող երգեն, թող բուրեն քեզ համար:  
Ի՛նչ, գոհ չե՞ս, ա՛ռ քեզի ընկերուհի մըն ալ,  
Չանձրույթի շփացած զավակ...»:  
Եվ մայիսի բուրումով լեցուն,  
Աստված՝ Եվան կը նվիրեր Ադամին:

«Միայն, ըսավ, երբոր հոգնիմ, ինձ համար  
 Տեղ մը պահեցեք, որ հանգչիմ ձեր սրտին մեջ...»  
 Իսկ Ադամը կը հորանջեր անդադար,  
 Դժգոհ կարծես բնութենեն, աշխարհեն,  
 Ահոնիլի իտեալին կը հառեր:  
 Եվա կը համոզեր Ադամը.  
 «Ուզե, ան աստված է, ամեն բան կուտա.  
 Գեղեցկութիւն՝ ան, գիտութիւն՝ ան, անմահութիւն՝ ան»:  
 Աստված տվավ բոլորն ալ,  
 Անհագ հոգին շէր գոհանար ատենցմտով:  
 «Տո՛ւր, տո՛ւր, ավելի՛ն տուր,  
 Աստվածութեանդ կեսը տուր,  
 Կը ձանձրանամ, ա՛խ, հանգչելու խորշ մը տուր»:  
 Յվկիանին վրա դեռ կը ծփար աստված.  
 Մտածեց. «Հանգչելու խո՛րշ մը,  
 Բայց ես չի գտա զայն...  
 Ու իրիկվան դեմ, բռնած Ադամի ձեռքեն,  
 Եկուր տանիմ, ըսավ, փնտրած հանգիստդ՝ հո՛ն»:  
 Քալեցին, քալեցին: Լուսնկան կը կարծրեր:  
 Ադամ պազ մը գոաց հանկարծ.  
 Աստված մեկնած էր քովեն.  
 Երբմին սև փոսը կը փովեր ոտքին տակ.  
 Եվ ամպերեն՝ աստված որտաւրով՝  
 «Ձանձրութի զավակ,  
 Հավիտենական հանգիստդ հո՛ն է» ըսավ...

### ՍՓԻՆՔՍ

Մահարձանը ամայութեան,  
 Քուրմը մեռնող ծամանակին  
 Բուրգերուն քո կը հսկե ան,  
 Մարմինն՝ առյուծ, գլուխը՝ կին:  
 Առյուծ ու կին, հազի՞ր ու տրտամ,  
 Արիութիւն ու վիշտը խառն,  
 Մշտանորոգ սիրտ մ'ի հատնում,  
 Անցնումներու խորհուրդը դառն,

Որ չի մեռնիր ու չերագեր  
 Ու կը դիտե հավերժաբաց  
 Իր աշքերով սահող հուշեր  
 Ու կրօններ անդնդահաճ:

Ոչ մի դալար, ոչ մի բաղեղ  
 Կը մազլցին կողքերն փեր,  
 Կը զարնվին իրեն ահեղ  
 Անապատին այրող հովեր:  
 Եվ ինք արձան... այլ չէ՛, կարգրի,  
 Զգացի՛ր օր մ'իր սրտին տրոփ,  
 Տեսա՛ր նայվածքն իրեն վայրի  
 Ու սարսուռա՛լը հրաբորբ:  
 Ձեռքը ծալած ու ծնրագիր  
 Ավեր տաճա՛ր մը կը հսկեր,  
 Ռբմեն անցյալն անկարեկիւր  
 Խըլա՛ծ էր քուրմն ու իր երգեր:

Կ'սպասեր թե արգչաք կուգա՞ն  
 Գացողնե՛րը անվերադարձ,  
 Ուխտավորնե՛րը հնութեան  
 Ու վրհուկնե՛րը ոգեհարց:  
 Ու չէ՛ն գար, իր ատենվան  
 Աստվածներն իսկ մեռան կարգով.  
 Օսիրիսը, Իսիսն ու Ռան  
 Անէացան իրարու քով:  
 Առչո՛ւծ, այլ կին, զամվա՛ծ է հոն...  
 Հավատքներու հե՛ք աղափոր.  
 Ավագին մեջ լքված, հեռո՛ւմ  
 Նեղոսն իսկ վշտամուրր:



Ան կը տեսնեմ Եթովպիո խորերեն  
 Հաղթ հսկաներ կերտեցին

Խորհրդավոր շարականներ երգելին

Քեզ զերդ նվե՛ր Նեղոսին:

Լերանց զավակ, կրանիթի հաղթ մի կտոր

Բերին այնտեղ, արվեստագետ մ'անանուն

Իր բրիչով անմահութիւն տվավ քեզ,

...Ո՞ւր հույզերը, ո՞ւր հանճարներն այն անհուն...

Կանգնեցար հոն Նեղոսին երգն ըմպելով

Ու բազինեդ բյուր կրոններ սահեցան.

Սհովան քովդ ըսավ, թե «Մ՛ս եմ Որ էն».

Ու ժպտեցա՛ր դուն իրեն:

Պաշտողներդ մոխի՛ր են ու կ'ապրի՞ս դուն,

Առյուծն սուրա՛լ կ'ուզե, այլ, կի՛ն, շե՞ս կրնար,

Երգըվելու ծարավն մնա՞ց մեզդ արթուն,

Մարեցան մինչ այլ բաղձանքներդ բոցավառ...

Մի՛ խաբեր զիս, ավազն օտար է քեզի.

Կրանիթ՝ երեկ, այսօր ըՍփինքս ու միշտ կին,

Բաց աչքերեդ հին կարոտը կը հոսի,

Ու կ'որոնես ուրիշ աշխարհ, այլ երկին:

Դարեր անցան, այլ լեռներդ կը հիշես,

Ամպրոպներու, ցուրտ փոթորկին ունես ցավ,

Հոգ արևն ու հուր-ավազներ կ'այրի՛ն քեզ,

Եվ էութունդ սպասումեն հալեցավ:

Կարոտահյուծ սրտեր համայն քեզ կ'զգան.

Սփինքս շե՛ս դուն, հեք կին, արձա՛ն անխոսուկ,

Ափն օվկիանին, անապատին խոլական,

Լացա՛վ զքեզ թափառիկ ա՛մպ մը վհուկ...

### ԱԳԱՄԻՆ ԱՆԵՄՔԸ

— Դրախտեն դո՛ւրս,— կը մոռնչեր վիրավոր,

Հրպարտն աստված ու չէ՛ր հավտար աչքերուն,

Երբ նախահայրը՝ կը նետվեր ցնծագին,

Եվային ձեռքը սեղմած՝

Դեպի աշխարհ:

Մինչև այն օր Ինքը Տերն էր բացարձակ,

Նյութին, Ուժին և իր շուրջ,

Հըլու, անխոս տիեզերքը կը տեսներ:

— Լեռներ հսկա որ ծովին մեջ կ'իյնային

Իրմե վախցած:— Դրութիւններ և բույլեր

Որ երկյուղով Իրեն գծած ծիրին մեջ

Կը դառնային: Ու հիմա,

Դեռ երեկվան Իր ձեռակերտ այդ հյուլեն

Միծաղով մը ամբարիշտ,

Եղեմ-դրախտը կը հեգներ:

«Ես եմ Որ էն»,— կը մոռնչեր վիրավոր

Հըլպարտն աստված ու չէ՛ր հավտար ականջին,

Երբ նորաշող երանությամբն ապստամբ,

Միրով գինով մարդը՝ ճակատն աստղերուն,

«Ես եմ Որ էն»,— կը մրմըռար ու կ'երթար:

Ի՛մս են Սերը, Բընութիւնը ու Մեղքը,

Ի՛մըս Գիշերն ու փըշալից ուղիներ,

Այլ երջանիկ եմ բյուր անգամ, քանի որ

Սե՛րը ունիմ ինձի ընկեր անբաժան»:

Տիեզերքի մարմինները ներշնչված

Այս ապստամբ հյուլեեն,

Արարչին դեմ սկսան գլուխ վերցընել,

Ասուպները նախ ամայութիւնը թողին,

Ավելի մո՛տ եկան մարդուն համակիր,

Զարնըվեցա՛ն մթնոլորտին և ըսին՝

Վայրկյան մը շողն մութ հավիտյա՛նը կ'արծե:

Մոլորակները դանդաղցուցին գնացքնին,

Աստղե՛րն անգամ սիրտ առած,

Հավերժական իրենց ծիրեն դո՛ւրս ելան:

Դրախտին փակ դռան առջև, զոր հրեղեն

Սուրն հրեշտակին կը պահեր,

Ադամ զվարթ ու ծիծաղկոտ՝ առաջին

Իր բունա՛կը կը շիներ:

Ճակտի քրտինք, ծնունդի ցավ,— անեծքներն

Աստվածային՝ կը ջեշտեին ավելի  
Երջանկութեանն նախամարդուն:  
Կային, Աբել, — նոր ճավաղներ ավելցան  
Որոնց եկան միանալ  
Սոխակներն ու գեղձանիկներն Եղեմին,  
Սուրբ երգերու բուրաստանն ձանձրացած:

Նյութն՝ Օրենքին ներքև ընկճած անգամ մ'ալ,  
Եկավ աստված: Իր հպումն տիեզերի  
Անսաստ տարրերն՝ վազած էին հե ի հե  
Իրենց ծիրին: Դրախտին դռները բացավ,  
Ու ճիշտ իր դեմ  
Հնտանիքի երջանկութունը տեսավ:  
Նախանձեցավ: ...Ներե՛ ինձ, մե՛ծդ Անձանոթ,  
Եթե դարեր ետքը կ'զգամ թե մեկ օր  
Հավերժական մենությանդ մեզ Դո՛ւն անգամ  
Նախանձեցա՛ր հեք մարդեն:  
Ու մահվան սև հրեշտակն այդ բույնք զրկեց,  
Աբել ինկա՛վ եղբայրասպան հարվածին,  
Իր եղնիկի աչքն Եգեմի՛ն սևեռած:

Իրիկունը Ադամ եկա՛վ երգելին,  
Տարօրինա՛կ: Ոչ արձագանք մ'իր ձայնին,  
Արդյոք օ՞ճը: Չէ՛, վստահ էր թե նվան  
Նրկորդ անգամ չէր խարվեր:  
«Ես այն, Աբել»: Խնդաց ինքնին: «Թեքև  
Ինձ աչքկապուկ կը խաղան»:   
Հավը կ'ոռնար: Շատ հեռուն,  
Փրախտին անշուք մեկ լուսանշարն  
Կարծեց տեսնել զույգ մ'աչեր,  
Տամուկ նայվածք մը զղջումի:—  
Աստված զինքը կը դիտեր:  
Ու հոն, ծառին տակ, տեսավ  
Իր Աբելը, արյուններով թաթավուն,  
Անձայն: Մայրն ալ որ շվար,  
Շվար, մուրճ՝ կը գողգոցեր անխոսուկ:

«Աբել, հոգի՛ս»: Ու զավիկին  
Ճակատն առավ ծունկին վրա,  
Ինչպես անցյալ օրերուն մեջ մանկութեան.  
«Աբել, հոգի՛ս»: Պաղ, սառած  
Ճակատը վար գլորեցավ ծունկերեն:  
Հովը կ'ոռնա՛ր, ախոս՝ս, Հորը սրտի կաշի  
Անարձագանք կը մնար:  
Խիղճը կ'ըսեր Ադամին  
Կուրծքին ներքև վատ ու վախկոտ շեշտերով.  
— «Հմբոստ մ'ըլլա՛ր, խոնարհ՛ն,  
«Աստուծո կամքն, օրհնյա՛լ ըլլա, ըսե դուն»:   
Ադամ գունատ, ոստյունով մը խելահեղ,  
Բունցքը՝ սեղմ ուղղած արդ լուռ դրախտին  
Եվ զերդ առյուծն Եթովպիո, որ կորյունն  
Իր ոտքերուն քով կը տեսնե սգեվար,  
Մորնչեց. «Աստվա՛ծ անարդար,  
Չպիտի՛ ընկճիմ, չե՛մ ընկճիր,  
Կ'անիծե՛մ քեզ Արդարությանդ անունով,  
Դո՛ւն Անհոռնն ես, ես՝ Նյութն,  
Կ'անիծե՛մ քեզ օրենքներուդ անունով,  
Դո՛ւն ալ ողբա՛ս ինձի պես...  
Քու միածին Չավակդ ալ օր մը մեռնի,  
Աչքիդ առչե ու շերկարե՛ս ձեռքդ իրեն,  
Ամայա՛նա՛ դրախտըդ ու Գուն խելահեղ  
Չի կարենա՛ս արտասփեզ...  
Աբել, հոգի՛ս...»:

Աստված տարուաց: Մուգեցա՛վ Նա Ինքն իր մեջ,  
Հիշեց գալու Գեթեմամին, Գողգոթան,  
Կարճրած ճակտով իր սիրական Գառնուկին  
Օրորոցին մոտեցավ:  
Հիսուս Մանուկ կը ննչեր դեռ ժպտագեղ,—  
«Ո՛չ, չե՛մ կրնա», մրմնջեց,  
«Բաժանումին տոկալ, Ծ'ս իսկ չեմ կրնար...»:  
Ու Մանուկին ճակատին վրա դղջմեց  
Համբույրն Հույսի, Միացումի, Հարության...

## ՀԱՐԱՎԻ ՀՈՒՐ ԽՈՐՇԱԿԻՆ

Շարեկն այրող արևուն տակ,  
Պլլըված հուր ավազներուն,  
Շվար-մոլոր, աննպատակ,  
Կը թափառիս դուն օրն 'ի բուն:

Ոչ սուլլն ունիս ցուրտ հովերուն,  
Ոչ ալ մոխ'նչը փոթորկին,  
Հարավի հուր խորշա'կ տժգույն,  
Գու մարմնացած ցավի' հոգին:

Անապատի կլափին անժիր  
Խուպոտ հառա'չն ես վշտագին,  
Կամ արձագանքը տարագիր  
Լքված սիրո հիշատակին:

Կը թափառիս ու կ'որոնես հավիտյան  
Օվասիսն ուր այրած հոգին զովանար,  
Կամ մռնչող ու փրփրակոծ օվկիանն,  
Ուր սուզեիր դողահար:

Ավազն առած կը գալարվիս մերթ վըրադ,  
Բողոք-վիշապ, դեպի երկի'նք կը սուրաս,  
Ու կ'իյնաս վար, մոլորատանջ ու վհատ,  
...լո'ւտ է աստված:

Քու սև բախտին համակերպիլ շե'ս կրնար.  
Հայրենիքդ անապա'տն է հավիտյան,  
Դուն հարավի ո'վ հուր խորշա կ վշտահար,  
Որ կը բաղձաս ազատության:

Ես կը ճանչնամ հոգի մը որ հորձանքիդ  
Մեջ ընկղմած մոլորագին  
Կը թափառի' շուրջն անհունին,  
Ու կը հառի ապագային անժըպիտ:

Զո'ւր կը հիշե օվասիսներն անցյալին,  
Հին գարուններ մշտադալար,  
Երազ ու հույս, սէր ու քրնար,  
Մտերմությո'ւն, խանդ ու գորով թանկագին:

Ու մտամփոփ ու թափառիկ քեզի պես,  
Անապատին իբրև ընկեր անբաժան,  
Կը տժգունի արևուն տակ բոցակեզ,  
Ու կ'սպասե ազատության:



Թափառեցե'ք, որոնեցեք հավիտյան,  
Օվասիսն՝ ուր այրած հոգին զովանար,  
Կամ մռնչող ու փրփրակոծ օվկիանն,  
Ուր սուզեի'ք դողահար:

## ՓՈՒՍԱՐԻՆ

Եվիտում եմ Մարիթո

Քսանութն անցան տարիք սրընթաց  
Այսօր նորեն քովս կուգան համրորեն  
Կը հարցունեմ իրենց. «Գարունն ո'ւր մնաց»,  
Քեզ ի'նչ տվի անուշ սրտիդ փոխարեն,  
— Իմ աչքե'րս արտասովաթաց...

Անապատին մեջ շինեցինք սիրո բույն՝  
Հեռու բախտին մրրիկներեն, հովերեն,  
Կյանքի գինովն եղա հինդից ես հանգույն,  
Այլ ի'նչ տվի արի հոգվույդ փոխարեն,  
— Իմ երազներս մոլորուն...

Մեխակները թիթեռներուն կուտան բույր,  
Սոխակին երգն անբաժան է վարդերեն,  
Մանկան ժպտին մոտ կը փթթի մորն համբույր,  
Ես ի'նչ տվի քաղցր էությանդ փոխարեն,  
— Տրտում երգե'ր սիրատիտուր...

Գարձեք պահե՛ք մ'հին սլացքնե՛ք առնց յալին,  
Մոխիրնեքու տակեն կայծեր թող շողան,  
Մու՛թ գիշերին վերև աստղերը փայլին,  
Աղբակնակի քու նախվածքիդ ես փոխան  
— Տամ իտեալս հավերժական...

Կյանքիս աշնան բարաստանեն դարձահար  
Մանիշակի կապեցի փունջ մ'երազուն  
Ուրիշները կը բաժանին բախտն իբր ավար,  
Ինչո՞ւ մնանք անբաժին, իմ սիրասուն  
Չավակներու քաղցրի՛կ մայր...

### ԻՏԵԱԿՍ

Չէի ուզեր վարպետ մ'ըլլալ արձանի,  
Որուն կյանքը շղթայված է մարմարին,  
Ոչ նկարիչ մը պաշտումի արժանի,  
Գույներն անոր՝ ծաղկի պես շուտ կը խամրին:

Ոչ դերասան որուն առջև հիացիկ՝  
Ամբոխները կը սարսուան մի վայրկյան,  
Կամ հոնտոր, որոտագին, շանթաձիգ,  
Կամ ունենալ մի մելանույշ երգչի ձայն:

Ես բանաստեղծ ծնա, մնամ թող այնպես,  
Սիրող պսակն եղավ արտում քնարիս,  
Ներշնչեցիր դուն սլացքս բոցակեզ,  
Կյանքիս հոգին, գորովագին դիցուհիս:

Ժամանակը կը խամրե վարդ, հիշատակ,  
Այլ սրտե սիրտ եթե երգերն ի՞նչ պանտան  
Պիտի հանգչիմ իմ մոռցված շիրմին տակ,  
Անտե՛ք մենք դուն պիտի ապրիս հավիտյան...

## ԷՋԵՐ ԱՐՁԱԿԻՑ

### ՍԻՐՈ ՍԱՂԻԿ — ԱՐՓԻՆ

Ա.

Լերան մը կողին վերա սպիտակ շուշան մը կ'աճեր: Ինք չէր  
գիտեր, թե ուսկի՞ց եկած էր իր սերմը, ինչպե՞ս թաղված էր հոն,  
կամ ի՞նչ նպատակով: Միայն կը զգար, թե կ'աճեր: Գարնան օրերն  
էին տակավին: Ամեն օր անձրև մը կը թրջեր նորա տերևները և  
անույշ զովություն մը կուտար անոր: Իրմե քիչ մը հեռուն ար-  
ծաթի վտակ մը կը սահեր ճերմակ խիճերու մեջքեն, առանց եր-  
բք մոտենալու շուշանին: Սակայն երկուքն ալ զվարթ էին:

\* \* \*

Ամառ եկավ: Արկինքը ալ չէր անձրեներ: Արեգակը միայն  
կ'այրեր: Ի՞նչ փույթ շուշանին իրմե քայլ մը հեռուն վճիռ վտակի  
մի գունվիլը: Նա օգուտ մը չէ՛ր քներ փրեն համար:

Մե՛կ'ց յուր ծաղիկը, կախն'ց յուր շարցած ծղատը, և ծարավի՛  
մարեցավ նա, փոտեցավ, փռչիացավ...

Բ.

Դեռ նո՛ր արեգակին ծոցեն կը փախչեր հրահոսան նեպտոնը,  
ցուրտ եթերին մեկ փոքր անկյան մեջ թավալելո՛ւ համար յուր մոր  
բուրբուրը: Տաք սիրտ մը ուներ տակավին, և յուր կրծոց վերա  
կյանքի հրաշալի տիեզերք մը կը սնուցաներ: Եվ այդ հեռավոր  
մարտակը թերևս ծագրանո՛ք կը դիտեր արեգակին մշանջենական  
կծկվիլը և հեռանալը յուրմե, գի մանկական մը տաք արցունք  
կեզար յուր երակացը մեջ... Երազներու հո՛ւրը:



Դարեր անցան: Հավիտենական ցրտության մեջ սառած էր Նեպտոնը: Ի՞նչ փուլթ իրմե հեռուն մայր արեգակին վառիլը կենսատու ջերմությամբ: Ոհ, ի՞նչ փուլթ հոն ելած հրալին փոթորիկներն ու հրահալ մետաղաց անվերջ անձրևներն, որք այնքան կենաց կաժեռ կը պարզենին մոտակա մոլորակաց: Հեռու էր նա կյանքի կեդրոնեն:

Եվ փոքր առ փոքր պաղեցավ ու սառեցավ նա: Մեռավ, գեղածիծաղ բնություն մ'ալ թաղվեցավ:

Եթերը յուր շիրիմն եղավ:

Գ.

Մարդ կոչված պզտիկ, կավյա բնակարանին մեջ, Երկինք ծաղիկ-սիրտ մը տնկեցին: Կեռածիլ էր նա տակավին, անմեղության արևն ալ շող ու բույր կ'ընծայեր նմա: Ապագան Սիրտ արփին ալ երազոց եթերին մեջ լոկ գոյությունն ուներ: Կյանք մը բուրավետ, ժամեր երջանիկ,— ահա մանկությունը:



Տարիներ անցան: Սահած էր անմեղությունը կյանքի հորիզոնեն, թշվառության և պայքարի ցուրտ քամիներ դալկահարած էին այն ծաղիկը, որո թերթերուն մեջ կը պլպլար հավիտենական արտասուքը:

Ո՞ր էր այդ պահուն սիրտ արփին:

Հեռուն կը փայլե՛ր նշուլագեղ, այլ գրեթե անջերմին ու անկենդան: Եվ այն ծաղիկը խամրեցավ անկայծ ու անարև:

Ուրիշ սիրտ մը նորա գերեզման եղավ:

Եվ վերն ալ Սերը սառեցավ և նա՛ էր, որ գերեզման մը չունեցավ...

### ԱՌԱՋԻՆ ՍԵՐ

(Հին հիշատակներես)

Մայիսին հետ գարունը կըմեկնի: Ամրան հրավառ երկինքը շկարմրած, հալածող բոցերի զեփյուռը դողալ ու հեալ կը սկսի, և առանց ուզելու, կը սահի, կ'երթա խամրած վարդենիներու քո-

վեն, դեպի ամայության հալած շուշանները: Աշունին շապասելով, տկար բույսերն ու հոգիներ, մայիսի հետ կը դալկահարին, խոշոր, լայն ու լացող ամպի պատաններուն տակ, որ նորեն, մայիսին հետ, կը մեկնին մեր երկինքեն: Անոր համար ամենեն ավելի սիրած եմ մայիսը, թեև շունենա ան՝ միգապատ նոյեմբերի ծավալուն տրամությունը, կամ փետրվարներու հատուկ խրոխտ ու փոթորկալից թախիծը: Ան՝ իր վարդահյուս ժամերուն մեջ, հատնողներու հատուկ ցողերը ունի, ու, չեմ գիտեր, ան, ինչ վեհերոտ ու շիկնոտ վերջալույսներ, երբ մանավանդ այրած է սիրտդ, ու դուն տարաբախտ հյուր աշխարհին, կը դիտես տամուկ աչքերով, ալյակը որ կը հատնի, վարդը, որ կը խամրի, ու ծիծառը որ հույսի մը պես շուտ կը թռչի՝ անվերադարձ:

Ու շատերուն պես՝ որ իրենց կուրծքին տակ գաղտ անկյուն մը ունին միշտ հիշատակ մը պահելու, ես ալ անցյալն, խամրած մայիսի մը թերթերը ունիմ, հուշերու արցունքոտ փունջ մը: Թեև անբույր շատոնց, այլ միշտ լացված ու շմոռցված:

Այն իրիկուն, կես գիշերին վերջ, իմ սիրական ծովակիս քով էր: Ալիքները հատած էին, վերը՝ կիսված լուսին մը, քանի մը թափթփած շողեր, ու դիմացը վեհապանծ Իզմիրը, քնացող դիցուհի մը պես, ճրագներեն շատերը մարած, ու շատերը վառ տակավին, կյանքերու պես, որոնք առտու շհասած, մոխիր կը դառնան:

Օդին մեջ մոտավոր մայիսին զեփյուռը կը թռչտեր, անուշ շշուկով մը, կարծես բյուրավոր համբույրներու հծծյունը, կամ երկնային ներդաշնակության նվաղ ցուլեբրը, որ հազիվհազ կը հպին մեր աշխարհին: Այդ զեփյուռը հյուսիսի սառույցներու քովեն չի գար, կոհակներու հետ մոնչած չէ, փոթորիկներե հալածված, աննյութ, հեղիկ մըմունջ մըն է, որ վաղը, խամրած ու դողահար վարդենիներու քով պիտի երթա, իմ քովես, ինձի հետ, մեկնելեն վերջը...

Ափունքին վրա միս-միսակ, վերի անդունդին նայեցա մեյ մը, ու դողալով վար առի աչքերս: Մեծ ու Փոքր Արջերուն, Վիշապին ու Կարիճին քով, իր կապույտ վեկայով, աղջկան աչքին պես կապույտ, կը փայլեր Քնար համաստեղությունը: Մանկային առաջին սնրս հոն էր. գեթ այնպես կը սիրեմ հավատալ, այդ նուրբ, այդ հրեշտակային կապույտին մեջ... Զգացի թե սիրտս կը խեղդվեր կուրծքիս տակ: Ու խեղդվող մեկու մը պես, կյանքս ամբողջ իր



անցքը փերովաւով, աչքիս առչենն թաղի տկարան մտնելովսյան օրե-  
րը, ու առաջին տեքս զոր այդ հեռավոր կայսրւոյտին կապած էի,  
անհռահին մեջ անհայտացած խեղճ մը, որուն չկրցա հասնիլ  
եցրեք...



Խորհրդի լեռներուն վրա թողած իմ կյանքիս վեցտակեա տա-  
քին, ու թեև տարիներ կը բաժնեն զիս այն օրերեն, պատշ սոր-  
սուռ մը կուգա էությանս մեջ, գիշերի երազներուս հետ, երբ կը  
փոխադրվիմ հոն, սպիտակ ու պաղ ձյունի լեռները, առողջ և  
հրահրող այն բարձունքներուն վրա: Երջեցա շատ տեղեր, ու ոչ  
մեկ տեղ գտա լայն բանաստեղծութիւնը բնության այն վայրե-  
քան, ալիլի մոտ երկինքի կայսրւոյտին, որ կը ծավալի ահավոր,  
փնտն ու հիանալի շունչով մը: Զգտա զայն հանքերու մթության,  
Ողիմպոսի սպիտակութեան ու ժողի միայնութեան մեջ:

Յոգեցին առջև քնդարձակ դաշտերը կ'եղկարեմն, ձեռք սպի-  
տակ, զարունը կանաչ հագած: Մեր դեմքը ճիշտ Մաստուրի վսեմ  
զագաթք, սրուն առջև, ժայռերու ափին վրա հավաքված Սովքը,  
ազամանի պես փնտ ջուրերով լեցուն: Անհամար գյուղերը, հո-  
ղին կառված, անոնցմէ վեր, իրիկվան, ծուխի կապտամուշ սյու-  
նակները, և ալիլի վեր՝ բոցավառ ու հրդեհագին հորիզոնը, ու  
կը մարեր արևելյան կյանքով ու հուրով լեցուն արեգակը: Մանուկ  
թեև, բայց արծվի հպարտ հայացքով կը հիանալի ժամերով, վե-  
րացած ու գինով. օ՛հ, նյութ քլլալ, ու հալիտյան անբաժան ըլլալ  
կուզեի այն տեղերեն:

Տարին քանի մը օր սակայն ամբողջովին կը մոռնայի զիս,  
կը սպեաակ մշտը մը կուգար արևելքեն ու կը փախեր դաշտին  
վրա, անձայր, անվերջ և անհուն ծով մը կռգմելով: Եվ այդ շին-  
ծու ծովին առջև մտերիմ բարեկամի մը հետ երկուքս աչ դեռ 16-ին  
մեջ այն առան, կը խոսեինք ուրիշ ժողերու, ուրիշ ափերու վրա:  
Կ'երազեինք օր մը գալ Պոլիս, գրական կյանք ունենալ հոն: Զեմ  
կեանք բացատրել ինչ խորունկ հիացում ունեինք ամեն անոնց,  
օր կը գրեն այն առան, ըլլային գրվածները նույնիսկ 70—80  
թվականներն մնացած ուռուցիկ և անթմաստ բաներ: Մեր եր-  
կուցին սիրելի գրագեաներն էին Մամուրջանը, Ալիբան, Քոհրապը:

և սարիչներ. և ալ կրնար մտածել մեր խոսակցութեանց սիրական  
նյութը: Ես՝ վերացականին հետամուտ ալիլի, բարեկամս, որա-  
պաշտ էր, անկապաշտ կրնամ ըսել, և իր դեմքին գրա, ինձմէ  
ափնի, հեզնող ծալիտ մը կեկված կար, ամեն պարագայի լախնա-  
լու, պատրաստ քան մը, որ շուտով անհետացաւ հատցնող ցածի  
մը ծալքերուն տակ:

Ողջ էին իր ծեղղը, ինք անոնց մեկ հատիկը: Եստ անգամ  
բնութեան բյուր շքեղ տեախներեն կը փախչեինք անդիցուն մը,  
զուխ-գլխի, բոցն մտածումներով առլի: Դպրոցը ալարտելու աս-  
րին մանավանդ, շարունակ քով-քովի էինք, գիտակից թե պիտի  
բաժնվինք. գուցե ալ չհանդիպինք նորեն:

Պիտի ձանձրույթ շտամ ձեզի պատմելով ընտանեզուֆ դըպ-  
րոցականի ու պանդուխտի դժբախտ կյանքիս ժամերը: Նույնն  
էր իմ կյանքս ու լեցուն նույն փիշտերով, անոնց պես՝ որ դպրո-  
ցին մեջ նյութապես խղճալի վիճակ մը ունեցած են: Գիշերը ծա-  
մի շորտին կ'ելլեի անկողնես, բակին ձյունը մաքրելու, ահարիու  
մութին մեջ մինակուկ, աչքիս առջև, ու տակավին չհետացած իր  
մայրական անուշ ու հրեշտակային գեմքը: Ժամ մը վերջ՝ զան-  
գակը, խոշոր ու ծանր ինձմէ, կը զարնեի տղաքը արթնցնելու,  
կրակը կը վառեի և այս ամենը, որպեսզի կարենամ շարունակել  
ընթացքս, փշապատ շաճիղներեմ, դեպի ալիլի տխուր օթեր: Կազ-  
մըվածքս տոկուն էր, գալատացիի ուժեղ կազմ, ու հոգ պիտի  
լինի բնավ եթէ միայն անոնք ըլլային վիշտերս:

Գրի առաջին փորձերս, լալկան էջեր եղան, ցաճի քնական  
արտահայտութեամբ զեղուն, հակառակ բողոքովին անզլիական  
գառտարակութեան, խոհուն և առողջ՝ որ պաղարյուն և լուրջ  
«մարդը» կ'արտադրե: Ալիլի ոտանավոր կը գրեի, Քոհրապին  
ըսածին պես, «Վիժած մտքի ցնորքներ», գուցե, անգիտակցութեամբ  
Պերպերյանն կամ Պայրընն գողցված դասական ձայնարկութեան-  
ներով լեցուն, ու քանի մը թուղթ իրարու փակցուցած, կուտայի  
ընկերներուս որ կը խնդային վրաս: Քանի մը անգամ սիրասաշոր  
երբ կտորներ գրեցի. օրերը քանի անցնեին՝ անշափ կ'ալիլա-  
նար հրայրը սրտիս:

Առաջին տեղամ ըլլալով, կը սիրեի...  
Գեղջուկ հովուհի մը չէր «Մեն»՝ սրինգի լացող երգերով:  
Մայրը անզուհի էր ու հայրը հայ և հայն ու անգլուհին ծնած էին  
էակներու էն հիանալին, իբր արձան և իբր հոգի: Անզլիական

մշուշի սպիտակ ճակատին տակ Հայու սև, խոշոր աչքեր, թռչտուն հասակ, իտալական երգի պես բյուրեղյա ձայն, մեկ խոսքով աստուծո ստեղծած մեկ հրեշտակը, թևերը կուրծքին տակ ամփոփած... Այս արդեն ծամծամված բառերը ոչ մեկ բացատրություն կրնան տալ իր վրա, հիշողությանս մեջ այնքան նրբացած է անոր դեմքը, ու կը ցավիմ ավելի նկարուն բառեր չունենալուս: Նայվածքը մանավանդ սիրով ու անմեղությամբ լեցուն, եղնիկն մը փոխ առնված, տասնվեց տարեկան Կրացիելլայի մը լարող և անուշ նայվածքը, խառնված իմ մայրիկիս ակնարկին, գաղափար մը կուտան ինձի գալու աշխարհին վրա, տղու նայվածքներով լեցուն...

Քույրչին մեջ ամենքը սիրահար էին իրեն, մեծեն պղտիկը, ու շատ անգամ իմ քովս կը թվեին գեղջուկ միամտությամբ Մեյին գեղեցկությունները.— Մազերը՝ երկայն, հասակը՝ «սելվի», և այն բոլոր հին խոսքերը զորս ամբոխը սովոր է հատկացնել փափուկ էակներու: Եղբայրը դասակիցս էր և անոր հետ երբեմն պարտեղ կ'երթայինք, Մեյը տեսնելուս, պատրվակ մը գտնելով կը բաժնրվեի անմիջապես. կարծես զիս կը հալածեր ու բնավ հետը չէի խոսեր: Ու քանի անգամ ամառ գիշերներ չեմ քնացած, երազի կուռքիս առջև, սիրած ըլլալուս համար ես իսկ կարմրելով:

Ան ո՛ւր, ես ո՛ւր, կը մտածեի ու միշտ հեռուները կ'երթայի, ամբոխեն ծածկելու վաղահաս այն արցունքը, որ կ'այրեր կուպերս... Օրեօր մենակյաց, գրեթե մենամուղ դարձա: Բարեկամս չէր գիտեր ու կը մեղքնար զիս, չէր ուզեր մինակ թողուլ. վերջերը հասկցա թե ինք ալ մինակ մնալ չէր ուզեր, ջոջի մը աղջիկն ալ զայն այրած էր. երկուքս ալ անվանակից, ախտակից ու բախտակից իրարու... Օրեօր զգացումներս ավելի տանջել սկսան զիս, ու գրվածքներուս մեջ, սրտի արյունով գրված, վհատի մը հոգին կը ցոլանար:

Վագանձին էր: Բոլոր տղաքը մեկնած էին իրենց գյուղերը. դպրոցը կը մնայինք ես ու քանի մը հատ ալ քրդախոս տղաք, ես՝ բոլորովին մինակ: Այրող արևին տակ, առտվանն մինչև իրիկուն, կրակ դարձած ժայռերուն վրա, կը քալեի, կը քալեի: Բարեկամս վշտացած էր ինձմե և ալ հագիվ շաբաթը մեկ անգամ կը տեսնեի զինքը. ու ես՝ վշտացած ամենեն, մարդկային ընկերութենեն, որմե լքված էի անկյուն մը, անհուն զզվանք մը կը զգայի ամեն բա-

նի դեմ: Եվ ամեն իրիկուն ժայռի մը ետև պահված, մտածմանս տակ շախախված, անոր անցնելուն կը սպասեի:

Օր մը, այրած ճակատս քարի մը վրա դրած, կը գալարեի, երբ քովս հեզիկ շրջուն մը սահեցավ: Եղբայրն ու ինքն էին. կարմրեցա, ուզեցի փախչիլ: Վճիտ ձայնով անունս տվավ և հրավրեց զիս իրենց հետ մեկտեղ պտույտի երթալու: Աչքերս ուռած էին:

— Կ'երևա թե լացեր ես, ըսավ.

Իր վիշտը մեղքոց բան մը ուներ: Քալեցի կասկարմիր կըտրած ու աչքս բոլորտիքս, վախենալով թե չուցե մեկը կը խանգարե անաչին երջանկությունս: Խոսեցանք, ես՝ մերթ կակազելով ու մերթ նայելով կարմիր «էնթարի»-իս խոշոր ծալքերուն վրա:

Բարի էր, շատ բարի:

— Եղբայրս շատ անգամ կը խոսի վրադ, մեկտեղ կը կարգանք գրածներդ, բայց շատ տխուր են: Բարեկամ չունի՞ս որ մինակ ես մնացեր:

Մտերիմս մոռցեր էի այդ ատեն: «Ոչ» ըսի վշտագին:

Եվ անկե ետք բարեկամ եղան ինձի, կյանքի մութին մեջ քանի մը լուսածիժաղ օրեր, ուր մոռցա ամեն բան:

Չեմ գիտեր ինչ շուտ բացվեցավ դպրոցը. տղաքը եկան, ու ես սկսա մեքենական կյանքս նորեն: Գրածներս հուսահատի մռնչյուններ ըլլալի դադրեցան, մտերմության բոցով ողողված էին օրերս:

Մանր-մունր ծիծաղաշարժ դեպքեր ալ անպակաս էին: Հիշեմ գոնե մեկը: Հեռու քաղաքն մը Կիրակոս աղա մը եկեր էր կարգվելու: Հարուստ, խոզի շափ հարուստ ու ճարպային: Մեյը կը տեսնե, և այդ խոզը կը սիրահարի անոր: Պաշտոնապես ուզեց, ու եղան շատերը, որ միջնորդի դեր ալ կատարելու շափ ստորացան: Այն տեղերն ալ կան «Մեծապատիվ մուրացկաններ» ու սեռակիցներ: Եվ հայրը, օր մը սոսկումով լսեցի թե հավանած է եղեր այդ ամուսնության «փարլաք քելեբիր»-ը ձեռք չփախցնելու համար: Մեյ չէր հավանած: Կիրակոս աղա վերջին միջոց մը կը մտածե, կ'ուզե նամակ մը գրել աղջկան: Եկավ զիս գտավ: «Էֆենդի (տակավին տասնվեց տարու էի այն ատեն), անունդ լսեցի քեզի եկա, երկու մեճիտիե կուտամ «խյախ» նամակ մը գրելու ես, այնպես որ ձեռքը անցնի նե մեղքնա զիս»: Կիրակոս աղային տարիքը վաթսուներ անցած էր, պեխերը տոփոտ ու աչքերը փոսը

ինկած՝ ազմուտ փասեք, գլափը փնտաւ: Զգլանդով նաչնցա երեւը, ու սոսկացի տեսնելով թե այդ ապառքը կուզար, խոշոր մոլեղփն արցունքներով, խնդրվելու շափ հեկեկալով կուզար: Պարտիքան կույտ մըն էր, ճակտին ետև կեղտաա քարքերով լեցուն: ու մտածել թե այդ հրեշը պիտի առնէր գուցե հրեշտակը, այդ շուշանը, և այդ հաստ, գողացող շրթունքները համբույր պիտի փսխեին...

Նախ ուզեցի խաղ մը խաղալ, կոշտ նամակ մը գրելով, վերջը մտածեցի, թե կրնայի առիթնն օգտվիլ: Տղա էի: Կիրքս խնայելով գուրս նա սենյակնս: Կիրակոս աղան կը հեծկլտար:

Քանի մը օր ետքը այդ «ապական» քաղաքին կը մեկնէր, փառադորեն մտադրած, ոսկին ընկու իրեն սիրտէն, հարուստ, ավելի հարուստ ըլլալու:

Ընթացքիս ակներև փոփոխութիւնը, արցունքիս ցամփիլը, ժպտին ճառագայթալից շողալը դեմքիս վրա, նոր հետաքրքրական մը կեղրոն ըրին գիս: Շատեր՝ փոփոխամտութիւնս ամին, շատեր՝ ուրիշ պատճառներու: Մեկը շէր կասկածեր բնավ թե «խրճիթի տղան» իր սրտի մեջ խոշոր սիրտ մը ածենեն փառամով դիտումներով կը սնանէր:

«Փառամով» բառը սխալ չհասկնաք, գիս անհունապես բարձրացած պիտի զգայի սիրովելով Մեյնն, ու Մեյը շատ անգամ անթափանց ճակտիս ետև սուր նայվածքով մը դիտել կուզեր: Իր հետ միանակով կը խոսեինք Պայրընի, Շեքսպիրի ու բլաբիցս տարաբախտ Պըրնզի վրա: Ինք կ'ըսեր անոնց շատ կտորները, ես ալ մեր Փարլամենտ ու Միսիլը կը կրկնէի: Հատենելու աստիճանին հասած, աչնչափ հպարտ էի, որ չըսի իրեն թե կը հատենիմ իրեն համար, շատ օրեր: Ամբողջ սկսած գիտել մեզ իր օձի բլաբ աչքերով, շուկները շատցան մեր շուրջը, բայց ես անպիտոյթ, անմեղ, շարունակեցի ընթացքս:

Մեկ երկու ամիս մնացած էր շրջանս առօրտելու: Հուշատեար սենեի, տվի Մեյին, ու խնդրեցի, որ բան մը գրե իրը հիշատակ: Շեքսպիրին կտոր մը գրեց. «All of us have caus to vit the dimming of our shining star, but none can cure the harms... by waiting them»:

1 «Մենն ամեն օր կրնա ուրալ աչտանուր իր փայլուն շուկն, բայց մեկը չի կրնար դարմանել զայն՝ ողբալով»:

Հուշատեարը առի, կարդացի և լացի: Տղու մը պես արցունքս ալ լկրցա խեղդել, ու խենթի պես, վիրավոր եղնիկի մը պես դեպի սև ծալերը քալեցի: Վայրկյան մը Մեյը քովս էր նորեն, սեղմեց ձեռքնս: Երակներուս մեջն հալած երկաթ կը քալեր... Իր ճակտն փունջ մը կտրեց, հուշատեարիս մեջ իր տողերուն քով դրավ...



Վերջին օրերը հիվանդոտ, գինովի պես էի: Քանի մը օրն շրջանավարտի ճառը պիտի կարդայինք, ընկերներուս հետ վերջին երգը պիտի երգեինք, վկայական տոնելի առաջ: Ճառիս նյութը՝ «Փերեզմանին եզրը», հին, ահալոր ու տրտում բառերով լեցուն էր: Մտերիմս հիմա՝ քովս էր ամեն օր, ես ալ իր քովը: Գաղտնիք լուսնիք իրարու համար: Իրիկունները իր ամենօրյա պտույտին կ'ելլեր Մեյ, թախծագիծ և անուշ դեմքով, հալած, նվաղկոտ աչքերով: Վերջին հանդեսին օրը հասավ: Ընկերներուս ծնողքները, բարեկամները եկեր էին հեռու տեղերի: Իմ ծնողքիս ալ տեղ, երկու պարսպ աթոռ դրին. երկու հազարնն ավել հանդիսականներ կային, շատը եկած էին այն հույսով թե ես սիրահարի տողեր պիտի կարդայի: Ընկերներս իրենց ճառերը արտասանելի ետք, կարգը ինծի եղավ: Վիզս ծուռ ու սիրտս անդնդային հուզումներով դողալուն բեմ անցա: Աչքերս մթազնեցան, անվերջ գլուխներու ողկուղներն: Մտերիմս մոտս էր ու Մեյը՝ ճիշտ դեմս: Նայվածքով շնորհակալ եղա իրենցմե: Ինքնիրմե վերացած, տարբեր էակի մը պես վհատ շեշտերով անհունին դարձա: Չեմ հիշեր ըսածներս, տեսա միայն թե շատեր լացեր էին, Մեյն ալ մեկտեղ: Վկայականները տոնելի վերջ, ընկերներով վերջին երգը երգեցինք: Իրիկունը գացին ընկերներս իրենց քաղաքները, գլուղերը, ես մնացի: Այն իրիկուն ահռելի եղավ շարշարանքս: Ժայռի մը վրա փռած, դաշտին կը նայի, դաշտին ոլորուն ծուխերուն: Մութը տակավ կ'իջներ հարթելով լեռներու խորքալորոզը. մութը կ'իջներ տարբեր ճամբաներու վրա, ընկերներուս վրա, որոնք ամեն ուղղութիւնք կը մեկնեին զվարթ ու ցնծագին:

Այն օրվան դպրոցական երգը ալ մեկտեղ պիտի շկրնաք երգել. երգողներն մեկ քանին պակաս պիտի ըլլան գոնե, ու այն համոզութիւն պակաս պիտի ըլլա Մեյը, իր սև, տամուկ, երկնային աչքերով:



Ատտուն կանուխ Մեյննց պարտեզը գացի: Դեմքս մարմարի գույն էր, մայրս իսկ չպիտի ճանչնար զիս, եթե ելլեր շիրմնն: Մատերուն տակ, մեկ երկու վայրկյան արտասովելով քալեցինք: Բան մը չըսի իրեն, համբույրը շայրեց շրթունքս, շեղմեցի ձեռքերը: Կարծես բնավ պիտի չբաժնվեինք: «Այս իրիկուն գետին քով երբ հասնիս, ես սա բարձր ժայռին վրա պիտի ըլլամ: Քեզ պիտի հիշեմ, ըսավ. դուն ալ ինձի նայե»: Կուրծքին քով այրող գնդակ մը ունեցող թռչնակի պես վազեցի: Բլուրին վրա մտերմիս հանդիպեցա: Իրարու գիրկ նետվեցանք: Կամաց ու համր քայլերով բլուրին վար իջանք, հեծկտալով մնաս բարովի արցունքը լացինք: Ճամբան երկար սյունի պես պառկած է ուղիղ գծով մը, որ բլուրներու ծոցը կը սողա: Մինչև իրիկուն Մեյննց վատ ուրիշ բան չմտածեցի: Իրիկունը հեռվեն գետին ոլորուն ժապավենը տեսա:

Գետը հանդարտ է այնտեղ: Բլուրին վրա ելա, դեպի քոչեջին լեռները նայեցա: Ազվոր լուսնկա մը դեղին տրտմությամբ մը կը ցոլանար ան լեռներուն վրա, և ավելի վեր Քնար համաստեղությունը, զոր ընտրած էինք օր մը, զերար հիշելու համար երբ հեռու ըլլայինք: Այդ անորոշության մեջ, փնտրեցի իր սպիտակ սովերը, ու ճակատս քարին, գետին ծոցը գլորեցի... Հորիզոնն հորիզոն, բախտն ու պարտականությունը զիս հոս նետեցին: Հսին ինձի օր մը թե Անգլիա գնաց Մեյլը, հիմակ ալ կ'ըսեն թե հոն մեռեր է Մեյլ, Անգլիո ցուրտ մշուշներուն տակ, սրտի հիվանդութենն: Չեմ հավատար, օ՛հ... Ու չեմ գիտեր ալ թե ուր կը հանգչի: Թուղ գեփյուղը չի գիտեր իր տեղը, մահը՝ պիտի չի տաներ զայն, անդունդներով զատված, դեռ կրնայինք սիրել զիրար: Տարիներն ի վեր կը փնտրեի զայն: Անցնող, հատնող Մայիսներուն կը հարցնեի Մեյլը: Մինակ, սև հողին տակ, սիրահալ, աչքերը բա՛ց են արդո՞ր:



Մայիսն հետ գարունը կը մեռնի... Մ՛հ, չէ՛, մայիս ու գարուն չեն մեռնիր բնավ, մեր հուլզերը, մեր հոգիներն են, որ մոխիր կը դառնան...

Դիմացս ազվոր Իզմիրը, իր տեգույն քնացող ծաղիկներով, կը փակե աչքերը: Ալյակը հատած է ծովին, վերը՝ կիսված լուսնկա

մը, քանի մը թափթփած շողերով: Ես, աղոտ, արծաթե շողերու մեջն աչքս անորոշության կ'ուղղեմ: «Այս իրիկուն սա բարձր ժայռին վրա պիտի ըլլամ: Քեզ պիտի հիշեմ», ըսավ: Կը նայիմ ու կը տեսնիմ հեռուն, քանի մը թեթև ամպեր, մայիսի շողերով լեցուն, կը խաղան գեփյուղին հետ, ու կը ցոլանան արցունքի կաթիլներուն մեջ, որ այտերես վար, կամաց-կամաց, դեպի ծովակ կը գլորին:

ԲՆԱԱՍՏԵՂՄԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

(Տեսիլք)

Մագերն ալևոր ու պարթև հասակը կորացած, այլ այդ մագերը դեռ անխորշոմ ու լայն ճակատի մը վրա ինկեր էին, ու քայլերը կրնային համեմատել զարնսն առտունները անտառի մեջ սուրացող եղնիկի մը քայլերուն, ձկուն ու դյուրաթեք: Մերությունը իր փառքը տված էր անոր, առանց հոսելու երակներուն մեջ այն տրտմազին թուլությունը, որ մեծ դադարեն առաջ կուգա մարդուն հիշեցնել հավերժական հանգստյան մոտենալը:

— Մշտնջենական երիտասարդն եմ, կը մտածեր ինքն իրեն ու կը քալեր, ու քանի կը մոտենար իր հայրենի քաղաքին, աչքերը ավելի վառ, աստվածային հանճարի ցոլքովը կը շողային: Քառսուն տարիներու կարոտը կուռեցներ կուրծքը, և ինք վես ու գոռոզ, կը շարունակեր ճամբան: Իրավունք ալ ուներ: Այդչափ տարիներ առաջ մեկնած էր մեկ օր այդ բուրաստաններու մեջ պահված քաղքեն, դեպի կյանքի շոր ու վհատեցնող իրականությունները, տըրտմազին քնարե մը զատ առանց ընկերի, ու ողջունած ամեն ծովերու ափերը: Ինքը մինակ հարթած էր ճամբան, ամեն օր դեպի ավելի լուսաշող բարձունքները: Մանկան ճիշերով սկսած էր, ընտանեզուրկ ու լքած հոգիի մը գալարումներով, այլ ժամանակը ձև տված էր այդ անկերպարան ճիշերուն ու մեղամաղձոտ բանաստեղծը տեսեր էր օրին մեկը, որ աստվածներու դալարագեղ դափնին կը բոլորվեր իր լայն ճակատին շուրջ: Երազված իդեակա՛նն էր այդ, հոգիներե հասկցված և անոնց մեջ արձագանք գտած ըլլալու գաղափարականը:

Արտեմիսի տաճարեն, Աղլաւորնի անդեղային աղերեհան, Սփինքսն ու այն լքված մեհյաններն ուր ծնրադիր ու կույր Պոստամենը հավերժապես կը նիհրեն, երկնածորք էգիբեսթեն ու մշտահույզ Հնդիկ օվկիանեն, նորածագ արեգական երկրին բրիզանթեմներեն ու լայնակառույց բակոտաններեն, իր քնարին վրա եկած էին թրթռալու հաջորդարար կարոտի մոռցված երգեր, որոնց ունկնդրած էր խանդավառ անբավութունը:

Ու վերջին օրերուն, հիշատակի անզուսպ թափով, փառքով ու հարստութեամբ հզօրացած, ըսեր էր ինքն իրեն.— «Դառնամ հայրենիք, գտնեմ իմ հին հյուղութիւն, մեր աղբյուրներուն վրա ծող վարդենիեն կախեմ քնարս ու աշքերս հոն փակեմ, ուր իմ սիրելիներս կը ննջեն»:

Իր թափառիկ անցյալին այս դովազները հիմակ փայլակի արագութեամբ կը թռչին բանաստեղծին վառ աշքերուն առջեկն, երբ սարսուռով մը կեցցավ ինք ուր կանգ չէր առած օվկիանին ուրականին մոխշններուն ընդառաջ, վտակի մը կարկալը լսած էր, պուրակին երկարածիգ բարտիներուն առաջին սովերն ալ թիթի մը հպած էր իրեն: Այդ կարկալը անծանոթ չէր, քազքին տուններուն միջեկն գալարվելով սահող այդ առուն ընկերակցած էր ատենով մայրենի օրորներուն ու դեռ կը հիշեր ծառերուն ստվերները, որ զեփյուտին հետ կը խաղային:

Վայրկյան մը միայն կանգ առավ ու քալեց նորեն, այս անգամ աճելի դողոյց և աճելի արագ:

Հիմակ քաղաքի մեջ էր արդեն: Բյուր ծիծառներ օդին մեջ կը ճովողեն: Բացատներու միջեկն լերկ լեռը կը բարձրանար: Իբր թե տակաւին երեկ եղած ըլլար, վտակին քովեն կը քալեր ծերունի բանաստեղծը, անոր հետ խոսելով, երբ ան ուստոստուն առվակի, իր ընթացքին առջև ելած քարի մը, խուփի մը հանդիպած, վայրիկ մը կը կենար մտախոհ, աճելի բարձր մրմունջներով, ինք իր վրա զգվելով տարտղնելով, կ'ոտոնուր ու կը սահեր անդին:

«Մորաքույրիս երթած», ըսավ, «մայրս մեռնելէն վերջ այդ կիկը այնչափ գուրգուրաց վրաս», ու միշտ վտակեն անբաժան քալեց ծառուղիներեն: «Ինչ անակնկալ պիտի ըլլա», կը մտածեր, «նախ պիտի չի ճանչնա զիս, քովը պիտի կենամ քանի մը օր, կամաց-կամաց պիտի խոսիմ բացակային վրա, և օր մը և ալ գիրկը պիտի նետվիմ, իսկ զձ մորաքույր...»:

Ու վայրկյանն վայրկյան, նոր ծրագիրներ կը շիներ, ինք որ

փառք ու հարստութեան կը բերեր իր հետ ու վերջին խաղաղութեան կարուսը կը քաշեր:

Վտակին ուժգին մեկ ազագակեն կտեպ տառավ ու շուրջը նայեցավ: Զուրք ճամբան կը գտներ ու քիչ մը անդին երկուքի կը բաժնվեր: Բաժանումի լաց:

— «Հո՛ւ էք մորաքույրիս տունը»:

Ճակառք ցնցելով շոքս կողմը նայեցավ: Ամայի պարտեզ մը, քանի մը ծերուկ, քոսացած ուռնիներ ու թթենիներ: Յանկապատի փշեկները՝ ցիրուցան: Քիչ մը անդին տակալի մը մեկ պատը կը մնար միայն, ծառի մը բունին կռթնած, ու քանի մը սև ագռավներ, որ կը քնանային ճյուղերու վրա: Ո՛չ մեկը կար:

— «Շատ ո՛ւշ, խեղճ մորաքույրս, շատ ո՛ւշ»—մրմնջեց ծերունին ու քալեց գանգաղելով:

— «Դուն հարգաբայներս գտնեմ».— Ու բաժնված վտակին մեկ ճյուղին հետ, կամաց-կամաց ու վիզը ծուռ՝ քալել սկսավ նորին:

Ամայի փողօցին ծայրը, դառն մը առջև, մազերը ձյունի պես նեփ-նեփակ, ծերունի կին մը նստած էր: Աշքերուն արցունքը սրբելով, փառքի արտում ուղևորը՝ դեպի հուն խոյացավ:

Ան էր, Լուսիա քուրիկը, հին դրացուհի մը, որուն շահրակ ոլորած ատեն, հին օրերուն՝ շատ անգամ կը խաղային քովը ու կամացուկ մազեն կը քաշին տղաքը:

— Բարի իրիկուն, Լուսիա քուրիկ:

— Քարի իրիկուն, դուն ո՞վ ես:

— Աղեկ նայե երեսս, զիս չե՞ս ճանչնար, միտքդ չե՞ պզտիկ եղած առանս քանի անգամ գրկած ու սիրած ես զիս, մտացա՞ր:

— Դուն Նափալիո՞նն ես:

— Չէ, Լուսիա քուրիկ, դուն փոխված չես, մազերդ միտքն ենթակեր են, ես անչափ փոխված եմ, որ չի ճանչնաս:

— Գյուլթիլյան Հովհաննեսն ալ չես, հապա ո՞վ ես: Գիտեմ, անոնք ալ չի կան: Գացողը ետ չի դառնար:

Ու տարօրինակ նայվածք մը նետելով, պառավը, հիմարի խնդումով մը զլուխը անդին դարձուց: Հիմարացած էր խեղճ կիներ, ու բանաստեղծը իր մեռած ազգականներուն նմանցուցեր էր: Մեռած... Բայց ի՞նչ էր, որ ինք ալ, փառքի ու ճոխութեան մեջ հափրացած բանաստեղծը, որուն և անցյալին միջև քառասուն տարու մը անդունդ կը փորվեր: Ի՞նչ իրավունքով վերադարձած

էր հոն հին վտակին ու ստվերներուն, որոնց օտարակա՛ն մնացած էր ինք այնչափ երկար տարիներ...

Վտակը ոտքին տակ խուլ աղմուկով մը կը թավալեր: Այդ անխոս հրավերը ցնցեց ծերունի բանաստեղծը, որ ելավ ու սկսավ քալել ամայի փողոցներէն: Այլևս իր շորս կողմը չի նայեցավ, ուռած աչքերուն չի հանդիպեցավ այն մյուս փլատակ տնակը, իր տնակը, որուն աղբյուրը անձայն մնացած էր ու վարդենին՝ խամբած:

Քալեց ամայի ծառուղիներէն, դեպի ստվերներու մեջ պահած բլրակը, ուր գյուղին ննջեցյալները կը քնանան:

«Դուն պիտի ճանչնա՛ս զիս, մա՛յր իմ, դուն պիտի չի մերժե՛ս զիս», ըսավ հեկեկալով: «Կյանքիդ մեջ կուզեիր դպրոցի վկայականս տեսնել ու չի տեսած մեռար, ճակատս դափնեպակ, փառքով կը վերադառնամ այլ սիրտս կարոտով այրած: Հոս ամենքը օտա՛ր են ինձի, քու և հայրիկիս քովիկը տեղ մը բացեք, որ փակե՛մ աչքերս»:

Ու լուռ, սպիտակ մարմարներու մեջէն քալեց հիմակ դողդոջուն ծերունին, անշուք ու մոռցված անկյունը գերեզմաննոցին, քնարը փշենիին քով դրավ, ու հեծկլտալով, ճակատը մայրերու պատվականին հողակույտին մոտեցուց...



Հեծկլտալով արթնցավ երիտասարդ բանաստեղծը: Դեմը մեծ օվկիանոսը արևին հրավառ ճառագայթներուն տակ կը դողար: Ինք կայտառ ու կյանքի սկի՛զբը դեռ, խոր ցնցո՛ւմ մը կրած էր այդ երազէն: Հպարտ ժպիտ մը կարմիր՝ ծավալեց անծալ ճակտին վրա և ինք խրոխտ ու անհողողով, նայվածքը զատեց օվկիանի անհունեն և ստվերամած վտակի՛ն դարձավ:

«Չէ՛, տակավին ուշ չէ՛», ըսավ ինքն իրեն:

Ռ Ռ Ռ Բ Ե Ն  
Ս Ե Վ Ա Կ

ԵՐԿԵՐ

# ՍԻՐՈ ՉԻՐՔԸ

## ԿԵԶՈՒՒ

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,  
Փոքրի՛կ աղջիկ, քեզի մե՛ղք էր.  
Փոքրի՛կ ծոցիդ թիթե՛ն պետք էր,  
Դուն ծե՛ր արծիվ մը բանտեցիր...

Կապույտ աչվիդ երբ որ բացիր,  
Կապո՛ւյտ աղջիկ՝ պլպուլն երգ է՛ր.  
Քե՛զ ալ սիրո մրմունջ պետք էր,  
Դուն գուժկան մոռ՛նչս ընտրեցիր...

Ծս կ'երթամ մի՛շտ, անծայրածի՛ր  
Դամբաններ են ոտքիս հետքե՛ր.  
Քեզ սիրո մեղմ սյո՛ւք մը պետք էր,  
Դուն փոթորկի՛ն կուրծքըդ բացիր...

Կ'այրի՛ն աշերըդ սևածիր,  
Պիտի մեռնիս, այդպես մ'երգե՛ր.  
Քեզի փոքրիկ սեր մը պետք էր,  
Դուն Սե՛ր-Աստվածը սիրեցիր...

## ՍԵՐԸ

Քնարիս յո՛թն աղիքներեն կանացի  
Ցաթը որրուկ հառաչանքներ հանեցի.  
Եվ մի՛շտ ժպտիլ կը կարծեսի, մի՛շտ լացի՛...

Սերն՝ հեթանոս երջանկութ՛յնն է խաչված.  
Սերն ա՛յն կուռքն է, որուն առջև ծնրադրած  
Որբի՛ մը պես պիտի ողբար ի՛նքն Աստված...

Սերը ճերմակ անհունին մեջ կույր ա՛լն է.  
Սերը՝ սիրո օվսանան չէ՛, իր խա՛լն է.  
Իր ցավերուն ընդդիմացող ո՞ր քաջն է...

Սերը սեր չէ, մահը մահ չէ, սերն է մահ.  
Սերն անդունդին մեջ ընկելուամն է անվա՛խ.  
Սերն՝ աչքը գոց ցայգաշրջի՛կն է անահ...:

Երջանկութ՛յան սեղանին վրա խրախճան՝  
Բեհեզ-կարմիր ծածկութին տակ պատմուճան՝  
Սերը կըմա՛խք կոչնականն է դավաճան...

Սիրե՛լ, սիրվի՛լ.— Ոսկեղենիկ սո՛ւտ աղվոր.  
Սիրե՛լ առանց սիրվելու.— Սո՛ւզ ահավոր.  
Սակայն ավա՛ղ անսեր կյանքին.— Կյա՞նք է որ...

Կը տեսնե՞ս սա վիհին վրա Սեր-ակը.  
Հազարնե՛ր կուլ է տրվեր այդ Սե՛ր ակը.  
Իր ջուրեն օր մը խենթեցավ Սեակը:

### ԳԻՆՈՎ ՍԵՐ

Դուն Հրա՛շքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սե՛րն ես.  
Տարաշխարհի չքնաղ ծաղի՛կն ես աղվոր.  
Միսթիքական խնկումներով թունավոր  
Դուն մըսեղեն խենթեցընող տաճարն ես.  
Դուն Հրա՛շքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սե՛րն ես:

Սև մազերովդ սիրե՛ զիս, գրգվե՛ զիս,  
Անոնց խորհուրդը պատմե ինձ առանձին,  
Որովհետև անոնք հոգիս կապեցին,

Իրենց ցանցին մեջ կապտեցի՛ն իմ հոգիս.  
Սև մազերովդ սիրե՛ զիս, գրգվե՛ զիս:

Թաց աչքերդ վըրա՛ս հառե տրտմապես,  
Անոնց թո՛ւյնը ներարկե ինձ մեղմորեն,  
Որովհետև քու աչքերդդ աղվոր են,  
Խորհրդամո՛լ անտառներու շուքին պես,  
Թաց աչքերդ վրա՛ս հառե տրտմապես:

Տըղու մը պես հանգչեցուր զիս կուրծքիդ վըրայ,  
Հանգչեցուր զիս ու այտերս կըրակե՛  
Քու ձյունեղե՛ն բազուկներուդ մեջ գրկե,  
Ու թող մարմինդ մարմնիս վրա սարսուռ  
Տըղու մը պես հանգչեցուր զիս կուրծքիդ վրա:

Ահա շրթնե՛րըս կարոտովդ կ'այրին,  
Ու կը լայննա արտասուքի շիթ մը տաք  
Իմ մթաստվեր թարթիչներուս շուքին տակ.  
Անոնց վրա դուն ցո՛ղը դիր համբույրին,  
Ահա շրթներըս կարոտովդ կ'այրին:

Բազուկներդ կը գալարվի՛ն, կը դառնա՛ն,  
Տենչին կըրա՛կը նայվածքդդ կը թովե,  
Որովհետև քու մո՛ւթ հոգին գինով է,  
Սիրախտավո՛ր գիշերներուն պես գարնան...  
Բազուկները՛դ կը գալարվին, կը դառնան:

Ժա՛մն է, աղվո՛ր, երանութեան ժամն է աս.  
Շըրթներուս վրա դիր շըրթունքները՛դ բոցե,  
Մոռցի՛ր կյանքը, աղվոր աչքե՛րդ ալ գոցե...  
Ի՞նչ, կ'արտասվե՞ս, ու հուզումեդ կը դողա՞ս.  
Ժամն է, աղվո՛ր, երանության ժամն է աս...

### ԲՈՒՅՐԸ

Կը բարձրանա բույր մը աղվոր,  
Գաղջ բույրը կո՛ւյս մարմինիդ,  
Բո՛ւյրը՝ խունկի պես շիամիտ  
Ու մեղքի պես՝ մեղավոր...



Ուսկե՞ կուգա բույրը մարմնիդ  
Բյո՛ւր տենչերով բեղմնավոր,  
Քաղաղրութեան պես ահավոր,  
Ազոթքի պես՝ միամի՛ւս...

Կը բարձրանա բո՛ւյր մը ազվոր  
Գինովցընող ու բարի.  
Միսթիք ամպ մ'է որ կը փարի  
Քեզ՝ քաղցրորեն մեղավոր...

Գիտե՛մ, կ'զգամ բույրդ գինով՝  
Յա՛լ ծա՛լ ցրված ծամերեն,  
Մատիդ ծիրա՛ն, ծյո՛ւր ծայրերեն  
Կը ծորի բո՛ւյրըդ գինով...

Բայց ուսկե՞ն է բույրըդ ահեզ.  
Սև աչքե՞դ՝ սև վարդի պես,  
Սև թարթիչե՞դ՝ սև կարթի պես,  
Մութ հոնքերուդ տակ աղեզ...

Ուսկե՞ կուգա բույրըդ բարի  
Որ կը բուրե մարմինեդ,  
Կարմիր, դողդոջ, նուրբ շրթունքե՞դ  
Որ համբույրին կ'երկարի...

Ուսկե՞ն է բույրդ ալ մեղավոր,  
Լա՛յն վարդի պես կուրծքե՞դ բաց.  
Ուր կը կարմրի հետքը դեռ թա՛ց  
Համբույրի մը բեղմնավոր...

Չա՛ր ու բարի, գինո՛վ ու կոյս,  
Կը շնչե՛մ այդ բույրըդ խա՛ռն.  
Մի՛ զըլանար համբույրըդ դա՛ռն  
Միրակարո՛տ իմ հոգվույս...

Կեցի՛ր, կեցի՛ր, ա՛խ, ո՛ւր կ'երթաս.  
Շրթներս քե՛զ կը հեան.

Ըսե՛, Սիրո՞, Մեղքի՞, Մահվա՞ն  
Ինձ հրավեր կը կարդաս...

Կը բարձրանա բույր մը ազվոր  
Իմ հոգվույս մեջ. բա՛ց ինձ, բա՛ց  
Կարմիր շրթներդ վարդի պես թաց  
Ու մեղքի՛ պես մեղավոր...

### ԶԱՐ ԱՂՋԻԿԸ

Իմ սիրականս խարտյա՛շ, խարտյա՛շ,  
Հուրերու պես խարտյա՛շ էր.  
Իմ սիրականս մատղա՛շ, մատղա՛շ,  
Ջուրերու պես մատղա՛շ էր...

Վարդ փետտելեն՝ թաթիկն անույշ  
Վարդերու գոյնն էր առած.  
Մարդ թունելեն՝ աշուկն անույշ  
Մահերու թո՛ւյնն էր առած...

Բայց կը խնդար ան այնքա՛ն քաղցր՝  
Որ զոհն ի՛նք իսկ կը նիրհե՛ր.  
Ու կը խնդար ան այնքա՛ն բարձր՝  
Որ երկինքն իսկ կը ներեր...

Ու մեռա՛վ փաքր աղջիկը շար.  
— Թուռնի պես կը արտնչար —  
Թե խաբհեր քիչ մը՝ անպատճառ  
Աստուած ի՛նքն իսկ կը զղջար...

Թե գիտնալի իր մեռնիլը՝  
Թո՛ղ տալի զիս դեռ տանչեր.  
Թե ի՛նք գիտնար իր մեռնիլը՝  
Ձի՛ս ալ իր հետ կը կանչեր...

Տե՛ր Դատավոր, ձեռքըդ նրժար,  
Մի՛ փութար զայն դատելու.

Անոր արվեստն էր շատ դժվար՝  
Տանջել... առանց ատելու:

Հող մի՛ դընեք զայն, կը մըսի,  
Մարմնին մետաքս հագցուցեք,  
Դրեք մահճի մեջ անդուսի  
Փապավենով տաքցուցե՛ք...

Ես կը հսկեմ աղջկան շար.  
— Թե երկի՛նքն իսկ չի զղջար,  
Զիս կը հիշեր, ու անպատճառ  
Մեռնելուն ի՛նք կը զղջար...

#### ՍԵՐՈՎ, ՍԵՐՈՎ...

Սերո՛վ, սերո՛վ խոցեցիր զիս,  
Սիրտըս սերո՛վ խոցեցիր,  
Սիրտըս շահել՝ վարդի՛ պես բաց,  
Դագաղի՛ պես գոցեցիր...

Դուն քաղցրութ՛յամբ խոցեցիր զիս,  
Սիրտըս սերո՛վ լափեցիր,  
Սիրտըս շահել՝ վարդի՛ պես բաց,  
Մեկ համբույրով խաբեցիր...

Երզո՛վ, վերքո՛վ օրրեցիր զիս,  
Սրտիս տատա՛սկ ցանեցիր,  
Ջահել սրտիս վարդերը բաց,  
Հովին տվիր ցանուցիր...

Երանութ՛յամբ լացուցիր զիս,  
Սըրտիս դրախտնե՛ր ցուցուցիր,  
Սիրտըս շահել՝ վարդի՛ պես բաց,  
Ջահի՛ մը պես լուսցուցիր...

Ըսե՛, մի՞թե կրնա ըլլալ  
Որ մեռնի սերն անձանձիր,

Սիրտըս շահել չի՛ կրնար լալ,  
Սիրտըս կրակեն ցամքեցիր...

Արգիլեցիր մուտքն ինձ հոգուդ,  
Սրտիդ փեղկն ինձ գոցեցիր.  
Լոռն՝ անգո՛ւթ, լա՛լն՝ անօգո՛ւտ,  
Շվարեր եմ մտացի՛ր...

Ա՛յ, ի՛նչ ընեմ ես այս կյանքով,  
Սրտես վարդեր փետտեցիր,  
Ու կը խլեմ ես ի՛մ ձեռքով  
Կոկոններն որ ձգեցիր...

Ա՛լ փակեր եմ հոգիս անլաց  
Իմ խավարիս մեջ անծի՛ր,  
Բայց անուրջիս դռներն են բաց  
Մի անգամ եկ ու անցիր...

Սերո՛վ, սերո՛վ խոցեցիր զիս,  
Սիրտըս սերո՛վ խոցեցիր,  
Սիրտըս շահել՝ վարդի՛ պես բաց,  
Դագաղի՛ պես գոցեցիր...

#### ՍԻՐՈ ՇՈՂՔԵՐԸ

Երգը հուշքին  
Սըրտիս խորեն  
Կուլա ուժգին  
Վհատորեն:

Ու տրտմագին  
Սերըս նո՛րեն  
Կը ծնի ցավին  
Խարույկներեն:

Ու կուգեմ լա՛ւ  
Մտխրեհրուն  
Վրա Սիրույս,

Որպեսզի ա՛լ  
Շողքերն հետին  
Զկայծկըլտին...

### ԼԵՄԱՆ

Ի՛նչ անուշ է հանդարտիկ հովն իբրիկվան  
Մայրամուտի քաղցրիկ շունչովը լեցան.  
Ծաղիկները կը մթագնին, կը հեան,  
Էը նվաղի թռչնիկին երգը ցնծուն:  
Ի՛նչ անուշ է հանդարտիկ հովն իբրիկվան.

Ու սիրատարփի նայվածքներուն պես մթին՝  
Երեկոյան իշնի ստվե՛րը քնքուշ,  
Մեղմ կը հպի լեռան ջուրին մարմանդին.  
Երագներու դյուբիշ քողին պես անուշ,  
Ու սիրատարփի նայվածքներու պես մթին:

Բլուրն ի վար, սեզ ծառերուն շուքին քով,  
Կը ստվերոտի շքնաղ լիճը Լեմանի,  
Զնաշխարհիկ պշրուհիի նազանքով  
Ափին ավազը կը գգվի, կը շիկնի,  
Բլուրն ի վար, սեզ ծառերու շուքին քով:

Ու կլայննա՛ լիճը շքե՛ղ, աննմա՛ն,  
Մինչև փեշը Ալպյաններուն սաղափե.  
Մինչև Ռոնի մեծ լայն դաշտերն, ուր Լեման  
Իր կապուտակ ալլակները կը թափե,  
Ու կը լայննա լիճը շքե՛ղ, աննմա՛ն:

Մութը քիշ-քիշ կը թանձրանա սիրալիք  
Լիճին ամեն ափունքներին հեռավոր

Փոքրիկ լույսեր կը պլպլան, կը փայլին,  
Սեզ լեռներու ձյունն ճակատը աղվոր.  
Մութը քիշ-քիշ կը թանձրանա տիրալի:

Հեքով ուռած կուրծքին վրա ջուրերու  
Ահա կ'անցնին թեթև նավերը մութին,  
Ահա դողդոջ տարփոտ երգերն ալ հեռուն  
Սիրատուշոր շրթունքները կը փթթին,  
Հեքով ուռած կուրծքին վրա ջուրերուն:

Լեմա՛ն, Լեմա՛ն, պատմե ինձ սիրտըդ լոփկ,  
Անհուն սիրտըդ, որ քու ջուրերըդ կապույտ  
Կուռեցընե ալլակներով հանդարտիկ,  
Եվ որ սարսուռ կուտա քո ջինջ հայելվույդ:  
Լեմա՛ն, Լեմա՛ն, պատմե ինձ սիրտըդ լոփկ:

Ահա ջուրերըդ կը դողան տենդահար,  
Ըսե՛, կուրծքիդ մեջեն ցցվող գեղեցիկ  
Ալպյաններու դու ձյունի՞ն ես սիրահար,  
Կարապներուդ արդյոք վզի՞ն սլացիկ,  
Ահա ջուրերըդ կը դողան տենդահար:

Խոսե՛, Լեմա՛ն, ձայն տուր ջուրիդ ալքերեն,  
Նավեն թող սիրո երգերն հըրավառ,  
Որ իմ սըրտիս պես քո սիրտդ ալ կը գերեն:  
Ա՛հ, վերք մը ունիս կապույտ, կուրծքիդ տակ թըշվա՛ռ:  
Խոսե՛, Լեմա՛ն, ձայն տուր ջուրիդ ալքերեն.

Լեմա՛ն, Լեմա՛ն, պատմե ինձ սերըդ լոփկ:

### ԿԱՐԱՊՆԵՐԸ

Գիշեր է լուռ, հանդա՛րտ գիշեր ամառվա...  
Մութը պատեր է երկինքը համորեն.  
Հեռուներեն քանի մը լույսեր միայն,  
Իրենց ձյունը վար կը կաթեն հուլորեն:

Ո՛չ մի շուկ, լուսթյունը կը թրթռա,  
Անծա՛յր, անծի՛ր լայնության մեջ օդերուն:  
Ու բացխրվող աչքերու պես, ափին վրա,  
Քաղաքներու կը պլպլա լույս հեռուն:  
Բարձրը, մութին ալքերուն մեջ, հեռակա,  
Ժյուրաներու ստվերը լուս կը մրափե,  
Ավելի՛ վեր արհամարհոտ ու հըսկա  
Ալպյաններու սեգ ճակատն է սատափե:  
Զույգ ալեփառ շղթաներու դարավոր,  
Օրրանին մեջ ընկողմանած հուանի՛ր,  
Լեռներու վեհ հուրիններուն պես ազվոր  
Կը քնանա կապույտ հոգին Լեմանի:



Գիշերն է լուս. լիճը տրտում: Հեռուեն,  
Ճաճանչներու, փրփուրներու պես ազվոր,  
Քնացող ջուրին երեսին վրա մեղմորեն  
Երկու կարապ կը սահին լուս մենավոր:  
Իրենց մարմինը քնքուշ է, գեղեցիկ-  
Իրենց թևերն արծաթակերտ, ձյունազես  
Ու մարմարի իրենց վիզը սըլացիկ՝  
Երազային տաճարներու սյունին պես:  
Կը մոտենան անոնք իրար մեղմորեն  
Ու կտուցնին իրար կուտան ուղղակի,  
Այնպե՛ս ինչպես ո՛չ մի շրթունք տակավի՛ր:  
Այնքա՛ն սիրով չէ՛ մոտեցած շրթունքի:



Ու ձյունափառ իրենց թևերն կառնեն վեր,  
Կը գալարին իրենց վիզը երկնասլաց,  
Այնպե՛ս ինչպես երկու բազուկ անձնվեր  
Այնքա՛ն սիրով իրարու շեն գալարած:  
Գյուղերու լո՛ւյսը կը ցոլա հեռուեն,  
Վերը շուքը ժյուրաներուն հեռակա,

Ավելի՛ վեր Ալպյանները համորեն  
Ավելի՛ վեր Երկի՛նք կանգներ է վրկա:  
Վա՛րը քնացող ջուրին վրա տրտմարար,  
Վեհ պարտքի մը գիտակցությա՛մբը լեցված,  
Իերան-բերնի, վիզը վզին անբարբա՛ռ  
Կարապները կը մնան լո՛ւտ, քարացա՛ծ:

### ԵՐԳ-ԵՐԳՈՑ

Երա՛ղ. տեսի՛լ, անզո ստվե՛ր մ՛անհոգի,  
Ճառագայթի, փրփուրի խա՛ղ մը տարաամ.  
Քմայապաշտ ծաղի՛կ մ՛արդյոք ցընորքի.  
Քու մշուշոտ գիծերուդ ի՛նչ անուն տամ.  
Երա՛ղ, տեսի՛լ, անզո ստվե՛ր մ՛անհոգի:

Քու կապույտըդ վճիտ, ազվոր ջուրերու  
Եթերային անրջանքի՛ն է հանգույն.  
Ու քու կարմի՛րըդ Պենկալյան վարդերու  
Երազամած կարմըրության պես տժգո՛ւյն.  
Գոգն աչերուդ կապո՛ւյտն ունիս ջուրերու:

Արցունքիդ մեջ նայաղներ պար կը դառնան:  
Այդ ի՛նչ հեշտանք որ շրթներուդ մեջ կ՛ըմպես.  
Շունչըդ գինո՛վ է հովերու պես գարնան,  
Չայնըդ տարփոտ՝ աղբյուրներու երգին պես...  
Արցունքիդ մեջ նայաղներ պար կը դառնան:

Կը հմայե՛ն զիս քու աչքերըդ, կը շոյե՛ն,  
Ու մարմինեդ ծորող խունկը մեղավո՛ր,  
Ավելի քա՛ղցր է Քանանու գինիեն...  
Հազարբուրյան այս պատարա՛գն է, ազվո՛ր,  
Թե լո՛ւծ աչերդ, որ մութ հոգիս կը շոյեն:

Հրաշագո՛... ո՛հ, քու անդրիդ բյուրեղե,  
Սրունքներուդ սարսուացող ձյունն հրաշեկ,  
Ու անանո՛ւն ցոլքը որ քեզ կ՛ողողե,

Մորթից թաքուն գանգուրներուն խուրճը շեկ...  
Հրաշագո՛... ո՛հ, քու իրանդ բյուրեղնի:

Տենչերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր  
Որ բազուկներս շփրնառե՛ն քեզ իմ քով:  
Սիրտս ս՛ւր էր որ կուրծքիդ ուշին շհիշե՛ր,  
Մինչև առտու պիտի հալե՛ր արցունքով...  
Կիրքերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր:

Իզո՛ւր: Հոգիս թաղվի՛լ կուզե հուշորեն  
Ստիճքներուդ մտերմությանը մեջ կույս.  
Ու անութիդ որոշ մեկ ծալքը հորեն  
Գիտեմ՝ որ դիս պիտի ասանջե մինչև լույս...  
Քու մե՛ջդ հոգիս թաղվի՛լ կուզե հուշորեն:

Տժգույն ազդե՛կ, հյուսիսայգի աշքերով,  
Կապերուդ վրա ու բիրերուդ մեջ խոնավ  
Եյզ ի՛նչ անճառ երանություն, ի՛նչ գորով...  
Ո՛չ մեկ արգանդ քե՛զ պես հըրաշք չըմնավ,  
Տժգու՛յն ազդե՛կ, հյուսիսայգի աշքերով:

### ՍԻՐՈ ԱՂՐՅՈՒՐ

Ահա՛ կուզամ երջանկության ակերեն,  
Արյունըս գեռ երազորեն կը հեռ,  
Ու արցունքներ արտեանուներս կ՝ալքեն:

Ազբյու՛ր, ազբյու՛ր, ինչ հրճվանքով տենցողին,  
Երկարեցի թշվառ շրթներ՝ քո ակիդ  
Ու ի՛նչ սիրով ըմպեցի ջու՛րըդ անգին:

Ո՛հ, կ՛ուզեի մընալ հովեռ ակիդ քով,  
Նիհար ճակատս կռթնեցնել քու քորիդ.  
Թաղվի՛լ չուրիդ երջանկության՝ն պատանքով:

Ու կ՛ուզեի հալիլ կուրծքիդ մեջ անճեռ,  
Լայն մարմնույդ մեջ կաթի՛լ մ՛ըլառ: Կե՛ռ մ՛ըլառ,  
Երգե՛լ, հեռ՛լ, քեզի նըմա՛ն. քեզի հեռ:

Ի՛նչ մոգություն կար մարմինիդ մեջ համակ,  
Ի՛նչ կ՛ըսեին ալիքներդ վազելով,  
Ու ի՛նչ հմայք կար փրփուրիդ մեջ ճերմակ:

Շրթունքս դե՛ռ քեզ կը փնտոնն տենդագին,  
Ու հըրատապ այտերես վար մեղմորեն  
Դողդըղալով կը սահի ցո՛ղը կյանքին...

Ահա կուզամ երջանկության ակերեն:

### ՍԻՐՈ ՄՐՄՈՒՆՁ

Անոնք գացին՝ խորհուրդով ու գազտնիքով բեռնավոր,  
Գացի՛ն նավերը սիրույս իմ աշքերուս առջևեն,  
Յրոտկնին վեր, դեպի մո՛ւթ եզերքները հեռավոր,  
Առազաստնե՛րը գինով, մայրամուտի գա՛ղջ հովեն:

Ու տեսա որ, հինավուրց դիցունհի պես աղվոր,  
Իրենց ձյունի անարատ սրբության մեջ համորեն,  
Թևերնին վեր, անծանոթ ափունքներու ուխտավո՛ր,  
Անըջանքիս կարապները սահեցա՛ն համրորեն...

Իշիկուն է: Կը դիտե՛մ ես լույծը անհուն ջուրի,  
Հովը լռիկ կը պատմե՛ ինձի հուշքեր երջանիկ,  
Ու անպատում խորհուրդով անսահման ջուրը կ՛ուտի...

Քար ու փրփուր ափին վրա կը համբուրվին իմ առջիս...  
Ես կը դիտեմ հեռավոր հորիզոններն, ուր լրտե՛կ  
Գացին նավերը սիրույս ու կարապներն անառջիս:

Անոնք գացին՝ խորհուրդով ու գազտնիքով բեռնավոր...

### ՊԱՏԱՍԽԱՆԸ

Պատասխանը դեռ չըզրեց ֆլյուիդիս.  
Ուր տրամության մը նուպային մեջ գինով՝  
Դըրի ամբողջ իմ սերս, ամբո՛ղջ իմ հոգիս,  
Ու դրկեցի՛ փարանոսմո՛վ, հազառմո՛ւթ:

Ըսի իրեն՝ թե սիրտս իրմո՛վ է առլի,  
Ու գիշերներս իր երազով օրորո՛ւն,  
Թե կարոտի վայրկյաններու դառնալի  
Ծս կը սպասեմ վերադարձի՝ օրերուն:

Ըսի իրեն թե հուշքերըս կը թռչին,  
Կը թեւածին իր պաշտելի դեմքին բով,  
Թե բաժանման տրտում վայրկյանը վերջին  
Աշքերըս դե՛ռ կը պղտորե արցունքով...

Ըսի թե ես գինո՛վ եմ իր նայվածքին,  
Թե կախարդող իր աչքերուն մեջ ծավի՛  
Հավեա սուզի՛լ կ'ուզեի ես տրտմագին,  
Շրթունքներըս իր համբույրի՛ն ծարավի...

Ու ըսի գեռ ինչ որ ունեի՝ ախաավօր՝  
Սափերամալ բանաստեղծի՛ իմ հոգիս,  
Քաշտամունքնե՛րս, արտասուքները՛ս բուրբ...  
— Պատասխանը գեռ չըզրեց թղթիկիս:

Կը կարծեի՛ թե հուզումեն պիտի լա՛ր,  
Ու նամակըս պիտի տաներ շրթունքին,  
Կը կարծեի՛. — այնքա՛ն գորով ու սեր կար  
Իր հրածեղաի համբույրին մեջ տենդագի՛ն:

Թերեւ հեզեց իմ հառաչնե՛րըս երկշտ,  
Որոնց ամբո՛ղջ հոգիս հանձնել կարծեցի.  
Բառերու վրա թերեւ խնդա՛ց տն պլքառ  
Իր նենդամիտ ժրպիտավը կանայցի...

Ու մտածե՛լ թե շատ շանցավ այն օրեն,  
Ուր պաշտամիս տաարկա, գեռ տն բովս էր,  
Երբ աչքերը կես մը փակած, մեղմորեն,  
Երջանկության քաղցր երազնե՛ր կը հյուսեր:

Ու մըտածե՛լ բաժանումի իր հեռին,  
Ավա՛ղ. հեռի՛ն համբույրին վրա սիրտկեղ,

Երբ անկարող իշխելու ի՛նք իր սրտին՝  
Գլուխը կուրծքիս՝ կը հեծկլտա՛ր տըղու պես...

Ո՛վ կընոջ սիրտ, պաշտամունքով, արցունքով,  
Ու կեղծիքով հրաշակերտված սի՛րտ աղվոր,  
Ուր կարկաչող սիրո շքնա՛ղ ակին քով՝  
Մոռացության անդո՛ւնդը կա ահավոր...

### ՀԱՄԲՈՒՅՐԸ

— Հոգի՛ս, դուն հո՞ս... — հեկեկաց ձայնը լալեն:  
Գիշերն ուշ էր, գաղջ գիշեր էր ապրիլի.  
Իր գրկին մեջ լուսնակն առած սխրալի՛  
Թուփերն ի վար ջուրը կ'երթար հեալեն...

— Հոգի՛ս, դուն հո՞ս... — Ու տեսա որ ոչ հեռու,  
Գետափին մոտ, հանկարծաթափ, ուժգնովին,  
Հովերու պես, որոնք իրար կը ձուլվին,  
Երկու ստվեր կը նետվեին իրարու...

Տարօրինակ ինչ ունեի օդն այդ գիշեր,  
Որ դեռ կուրծքիս տակ հետքն ունիմ սարսուռի,  
Ու բիբերուս մեջ խոնավ կետ մը կուռի...  
Ծս այդ գիշերն առանց հույզի շեմ հիշեր:

Ու կը տեսնեմ աչքիս առչեն ես ահա՛  
Իրար ձուլված, անքակտելի՛, տենդագին,  
Բերան բերնի, հուժկու բազուկը մեջքին,  
Ու մազերու ծովը որ լայն կը դողա...

Օ՛, երջանիկ տարիք ուր մարդ կրնա գեթ  
Տաք համբույրի մը անհունին մեջ մոռնալ  
Գոյությո՛ւնն ալ, Տիեզերքն ալ, ինքզինքն ալ,  
Ու աշխարհքին ժպտիլ անփութ ռե անգետ:

Օր մը Սիրո ծաղիկները կը դեղնին,  
— Ե՛րբ անբաժան եղան փուշերը վարդեն—

Պետք է տքնիլ, ցավը ըմպել ու արդեն  
Քիչ հետո ժամն է խորհելու սև հողին...

— Հոգի՛ս, դուն հո՞ս... — Երկար, երկար քարացան,  
Այս դիրքին մեջ բերան բերնի անձնվեր,  
Իրենց շունչերն կարծես իրար հանձնվեր  
Այնքան սեր կար այդ պաշտումին մեջ անձայն...

Ու ես լըռիկ, ու ես անշարժ, երկյուղա՛ծ,  
Կը նայեի իրենց երկա՛ր, ու վաղվա՛ն,  
Կը խորհեի, հաշորդ վաղվան ու մահվա՛ն,  
Երբ զգացի թե էութունըս դողաց...

### ՊԻՏԻ ՍՊԱՍԵՄ

Սուրբի վերով գնաց. յա՛ր. յա՛ր:

Երեք տարի: Դեռ կը սպասեմ ես իրեն:  
Ահա տարտամ հորիզոնը հեռավոր,  
Ահա ճամբան որ կերկարի տրամորեն,  
Լուիկ ճամբան որ զայն տարա՛վ մենավոր:

Ու ահա հո՛ն գյուղին վերջին տունը ցած՝  
Որուն ետին՝ եղևինի ծառին քով  
Երկա՛ր, երկա՛ր ես մնացի քարացած  
Ու իր մեկնիլը դիտեցի արցունքով:

Երե՛ք տարի: Այս հեք ճամբուն եզրն ի վար  
Երեք անգամ ծնան մարգերը դաշտին,  
Երեք անգամ ձյունի փաթիլն հողմավար  
Անձայն հյուսեց անոնց պատանքը ցրտին:

Հուսա՛լ, հուսա՛լ վերադարձի օրերուն,  
Բայց ո՞վ իրեն պիտի երթար պատմելու  
Քե երկրի մութ մեկ անկյունին մեջ հեռուն,  
Ես կը սպասե՛մ իրեն՝ սիրույս իմ հըլու:

Երե՛ք տարի: Մութ ձայն մը կա անդադրում,  
Իմ վիրավար հազվույս մեջ շար ձայն մը կա,  
Լացող ձայն մը որ գիշերիս մեջ տրտում  
Կ'ըսե ինձ... «Խե՛ղճ աղջիկ, ան շի պիտի գաս...»

Ա՛խ, կը ճանչնամ քու բողբոջի ձայնըգ, վի՛ջտ,  
Սակայն իզուր, այս է իմ գիրքս նրսեմ,  
Գնա՛ պատմել տարիներուն թե ես միշտ  
Պիտի սպասե՛մ, պիտի սպասե՛մ, սպասե՛մ...

### ՆԱՄԱԿԸ

Կես գիշեր է. ես կը գրեմ քեզ նորեն:  
Չեմ գիտեր ինչ միսթիք խորհուրդ մ'է անտես,  
Որ գիշերին մեջ սիրույս մութ դաշտերեն,  
Չեոքը ձեռքիս՝ կտանի զիս տըղու պես  
Հեռվե՛ հեռու կածանների անհամար,  
Դեպի հոն ուր անուրջիս մեջ կանացի՝  
Քու ստվերիդ քնակաթիլանք համար  
Առասպելին դրդյակները կանգնեցի...

Կես գիշեր է. ո՛չ մեկ շշուկ, ո՛չ մեկ կյանք,  
Ես կը գրեմ, լուսթյան մեջ մեռելի.  
Գրի՛չս է որ սրտիս կուտա արձագանք,  
Օ՛հ, մտերիմ, մենամոլ ձայն սիրելի...  
«Խե՛ղճ սիրուհի» կը հեծծե ան անդադրում,  
Ու պատիս չոր էտը վեյսյաներն ալ կարծես,  
«Խեղճ սիրուհի»... կը հանգերգեն ինձ տրտում,  
Անո՛նք զոր քեզ հետ քաղեցինք, մոռցա՛ծ ես:

Մոռցա՛ր նաև այն մեծ գիշերը վրսեմ,  
— Բայց ինչո՞ւ սիրտս այնքան ուժով կը տրտի.—  
Վարը Ռոնն էր, իր երգը դե՛ռ կը լսեմ,  
Ալպիաններուն վերը կողն էր սառափե,  
Պատշգամբեն կ'երկարեր ձեռք մը նիհար  
Որուն վրա՝ անհուշորեն՝ երկնային

Երկու շրթունք կը վառեին տենդահար...  
Ձեռքը իմս էր, շրթունքները քուկդ էին...

Ու կը տեսնես, որ գրիչըս կը սարսուռա,  
Ես հիվանդն եմ հին հուշքերուս, կը ներե՛ս,  
Այս խոնավ բի՛ծը նամակիս թուղթին վրա,  
Արցունք մ'է որ հիմա ինկավ աչքերես...  
Բախտը մերժեց ինձ որ սիրտերն ուզեցին.  
Դուն քո ճամբեդ քալել մինակ ու հըլու.  
Քենե հեռու, քենե անգետ, առանձին,  
Ես միշտ հոս եմ, քեզ տենչալու, քեզ լալու...

Պիտի սիրեմ քեզ այսպես միշտ հեռուեն  
Ավա՛ղ, հեռվեն, դեռ վայրկյան մ'ալ, մինչև որ  
Հոգիս երթա երազներու դաշտերեն,  
Առասպելին դոյակները հեռավոր:  
Ու կը փակվին արդեն աչքերս արցունքով,  
Նախազգացում մը կ'ըսե ինձ լիահույս.  
«Պիտի գտնես զայն այս գիշեր ակին քով»  
Ու այն ատե՛ն... ա՛հ, այն ատեն... մինչև լո՛ւյս...

Գիշեր բարի, դո՛ւն ճառագայթն արևուս:

### ՄԱՀԱԶԳԱՑՈՒՄ

Այսպե՛ս, այսպե՛ս... Անո՛ւյշ, անո՛ւյշ Սիրական,  
Մոտեցուր մա՛նրը մատներդ մանկական  
Տաք կուպերո՛ւս, տաք կուպերո՛ւս դժոխքին,  
Զգո՛ւյշ, զգո՛ւյշ, ա՛խ, չըլլա որ բորբոքին:

Կուրծքի՛ս հակե փոքրիկ գլուխդ հաղթական,  
Լսե՛, դեռ հոն հոնդյուններ, ողբեր կա՞ն,  
Լսե՛, անույշ իմ Սիրական: Օ՛հ, անգին  
Արբանք մ'է այս որ կը խնկե իմ հոգին:

Մեռնի՛լ, մեռնի՛լ... Անմահանալ մահվան մեջ.  
Մեռնի՛լ... գրկիդ գոգն, այսպե՛ս, մեր սերն անշեջ՝  
Անհունին մեջ ծառայքնել տիրական...

Մեռնի՛լ... Կուլա՛ս..., կը խորհեի, սիրական...  
Թևերուդ մեջ քարանալու հաճույքին.  
Քո՛ւյր, մահանո՛ւյշ, քույր, մահազոր, մահագին...

### ԱՆԿԱՐՆԼԻ ՍԵՐ

Ես այգերով ու ցայգերով  
Հաճախ մենակ կ'անրջեմ,  
Անհնարին, երկնագորով  
Սեր մը որուն տերը չեմ...

Այրող աչքերս քուն շունին,  
Կը տեսնեմ մերթ մեգի պես  
Զույգ մը աչեր որ գույն շունին,  
Բայց կը սպանեն տեգի պես...

Կուզեմ մեռնիլ դյուցազնային  
Միրո մ'համար աղշոկա,  
Հետո աչերս վար կը նային՝  
Ո՛ւր է այն Սերն, ա՛խ, չըկա՛...

### ՎԵՐՋԻՆ ԿՈՉԸ

Երբեմնի Դշխոս երևեցավ ինձի,  
Վար քաշեց դեմքես՝ թևերս պղնձի.  
«Կ'արտասովե՛ս, Ասպետ»:— Ո՛չ, հեծկլտացի:

Ինչո՞ւ եկեր ես նորեն խոռվել զիս,  
Ղրկեր եմ արդեն զինվորներն չույսիս,  
«Գիտե՛ս ուր», ըսավ:— Ո՛չ, հեծկլտացի:

Սուրացի՛ն, նետերն արձակելով վես,  
Արևուն դեմ, օ՛րն անիծելուն պես,  
«Կը դառնա՞ն», ըսավ:— Ո՛չ, հեծկլտացի:

Ահա մինակ եմ, անզեն, հուսահա՛տ,  
Ու ահա դեմս ես, ո՛ւր է արդեն, վա՛տ,  
«Միրե՛ գիս», ըսավ:— Ո՛չ, հեծկլտացի:



ԵԿՈՒՐ

Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներին անուրջիս,  
Սրտիս շահերն այրեցի քեզ ի հանդե՛ս,  
Վերջի՛ն անցորդ տառապանքի կամուրջիս,  
Երգի մը պես, քրոջ մը պես, մոր մը պես,  
Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներին անուրջիս...

Եկո՛ւր, ես քո՛ւկդ եմ, քեզ արքա՛ ու գերի՛.  
Ե՛ս, մեղապարտ անոթը Սո՛ւրբ համբույրիդ,  
Հեքս ազոթքի պես դեմքիդ շուրջ կ'դեգերի՛,  
Պաշտամունքիդ ես խնկանո՛թ միամիտ:  
Եկո՛ւր, ես քո՛ւկդ եմ, քեզ արքա՛ ու գերի՛...

Քու տաճարիդ ես քուրմ-երգիչն եմ դողողը.  
Ու դուն մարմի՛նն ես անմարմին երգերուս,  
Խենթեցրնող հավերժահա՛րսը բողբոջ,  
Ցո՛ղ՝ մահացնող սրտի հազա՛ր վերքերուս,  
Սուրբ տաճարիդ ես քուրմ-երգիչն եմ դողողը...

Քո՛ւ անունովդ պատանքեցի ծե՛ր հոգիս,  
Քե՛զ երգելին արյունեցան, խենթացա՛ն  
Յոթը վերքերն իմ բարունակ սրինգիս,  
Սրտիդ ճամբուն վրա մերկ ոտներս այրեցա՛ն,  
Քո՛ւ անունովդ պատանքեցի ծե՛ր հոգիս...

Բա՛ց ինձ կարմի՛ր շրթներդ, կարմի՛ր վերքի պես,  
Բա՛ց ինձ թևերդ, հավերժակա՛ն բանտ անո՛ւյշ,  
Բա՛ց ինձ հոգուդ հրաշքներուն մուտքն անտես,  
Ու առ՛ար ինձ հոն անէանալ, լո՛ւս, անհո՛ւշ,  
Բա՛ց ինձ կարմիր շրթներդ, լայն վերքի պես...

Ահա՛ թռչնած շուշաններով քեզ կուգամ,  
Ահա՛ ոտքի՛դ տակ փառքիս խեղճ սարդենին.  
Ահա՛ սրտիս խոպան դաշտն ուր մի՛ անգամ  
Չծաղկեցա՞վ սիրուս նիհա՛ր վարդենին,  
Ահա՛ քո՛ սե շուշաններովս քե՛զ կուգամ...

Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրե՛նք կաթոզին  
Ո՛վ չի սիրեր պիտի մեռնի առհավետ.  
Սերը պե՛տքն է, երա՛զն է, կյա՛նքն է կյանքին.  
Սերը Մահվան մեջ Անուրջն է արփավետ.  
Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրե՛նք կաթոզին:

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ

Ահավասիկ, որ կ'ըղձամ քեզ անդադրո՛ւմ,  
Չա՛ր, վիրավոր ու անիծվա՛ծ ու տրտա՛ւմ,  
Ահավասիկ որ կը սիրե՛մ ես քեզի...

Ով քու ստվերդ պտըտցուց իմ հոգվույս  
Անարձագանք դամբաններուն մեջ անհո՛ւք  
Ու երդմնեցուց որ դեռ սիրեմ ես քեզի...

Թող այս գիշեր հոգիս մեջ երգ մը լա՛,  
Ի՛նչ փույթ, թե շա՛ր, թող այդ երգը քո՛ւկդ ըլլա,  
Որովհետև, Քո՛ւյր, կը սիրե՛մ ես քեզի...

Ապրի՛լ, ահեղ ճակատագրին մի՛շտ հլու,  
Մեռնի՛լ, առանց վայրկյան մը քո՛ւկդ ըլլալու,  
Հսե՛ ինձ, Քո՛ւյր, ախ, կը սիրե՛մ ես քեզի...

Ահա՛ հոգիս շիրիմորեն փակ ու շար,  
Ահա՛ հոգիս զոր դուն սիրել շղիշար.  
Ահա հոգիս որ կը սիրե դեռ քեզի...

Ոտքերուդ տակ կոխոտելի հետո ալ,  
Ինչո՞ւ քայլերդ համբուրե՛լ, գուրգուրա՛ն  
Ինչո՞ւ մահվան սև բաժակիդ սեր մուրալ...

Նեղի՛ր ինձ, Քո՛ւյր, կը սիրե՛մ ես քեզի...

## ՍԻՐՈ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԵՐԳԸ

Իմ կյանքս թող աղաչավոր ե՛րգ մ'ըլլա,  
Եղերակա՛ն ու միամիտ, սե՛ր ողբերգ.  
Իմ սիրտս թող անհունին մեջ վե՛րք մը ըլլա,  
Հսկայական ու տխրորեն քա՛ղցրը վերք.  
Իմ կյանքս թող աղաչավոր երգ մ'ըլլա...

Ես կը սիրեմ իմ տրամուխունս դյութական.  
Իմ տրամուխունս աստվածներո՛ւ ցավին պես,  
Քո՛ւյր, սրտիս մեջ ի՛նչ խավարներ, վիհե՛ր կան,  
Ձոր նայվածքովդ կ'ոսկեզօծես ու կ'օրհնես.  
Ես կը սիրեմ իմ տրամուխունս դյութական...

Եկո՛ւր ինձի, լուսնյակին պես գեղեցիկ,  
Եկո՛ւր ինձի, լո՛ւյս ու ցնծում հեալով  
Քու արծաթի շողերուդ մեջ սլացիկ  
Լուսավորե՛ ավերակներըս լալո՛վ,  
Ես Մահն եմ, ե՛կ ինձ կյանքին պես գեղեցիկ...

Իմ կյանքս թող առվին երգին պես ըլլա,  
Ու երգս անվանդ կրկնումն ըլլա թող հավե՛րժ,  
Իմ կյանքս թող մո՛ւթ ջրվեժին պես ըլլա  
Ու դեպի քեզ անկում մ'ըլլա գահավե՛ժ,  
Իմ կյանքս թող առվին երգին պես ըլլա...

Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի՛ պես,  
Ուր խավարներ կը փոթորկին մուկեգի՛ն,  
Երկու աչերդ՝ աստվածներու սկիհին պես,  
Տուր ինձ անոնց մեջ սրբացնել իմ հոգին.  
Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի՛ պես...

Եկո՛ւր ինձի, քե՛զ կ'ըղձա շունչս անզոր.  
Եկո՛ւր, ես մո՛ւթ բաներ պիտի քեզ ըսեմ,  
Սիրո պես քաղցը՛ր ու Մահվա՛ն պես հրգոր.  
Գերեզմանինս լացող սյուրի՛ն պես նրսեմ,  
Եկո՛ւր ինձի, քե՛զ կ'ըղձա շունչս անզոր...

Իմ կյանքս թող կորած նավուն պես ըլլա,  
Շունչդ ուռեցնե՛ ծեր առագաստըս անա՛հ,  
Մի՛, մի՛ լսեր հոգնած հոգիս որ կուլա,  
Տա՛ր զիս սիրո կղզիներեն դեպի Մահ,  
Իմ կյանքս թող կորած նավուն պես ըլլա...

## ԱՄԵՆՈՒՆ ՊԵՍ

Գեղեցիկ էր,— կ'ուզեր ըլլա՛լի  
Հըրաշակերտ մարմին մ'ունենր,  
Աղվոր էին իր աչերն ալ  
Միա՛յն... մորը շա՛տ կը նմաներ:

Աշխո՛ւյժ, գործո՛ն ու հարատե՛,  
Շատ պարկեշտ էր ու շատ ալ հեզ.  
Հիմնապես լո՛ւրջ, կ'ուզեր թեթև  
Ըլլալ քիչ մը... ամենուն պես:

Մայրը «անմի՛տ» կ'ըսեր իրեն,  
— Խեղճը քիչ մը շատ էր հլու,—  
Ինչե՛ր կանցներ սրտի խորեն՝  
Բայց կը քաշվեր միշտ ըսելու:

Հոգին կը զգար թերևս սեր,  
Բայց սենյակին մեջ ներքնապես  
Գիշերն իր սիրտը... կը մսեր,  
Կ'ուզեր ընել... ամենուն պես...

Կուրծքը կյանքոտ, սիրտը տրոփուն,  
Հետևեցավ պարկեշտորեն  
Իր սիրական մորը ճամբուն,  
— Խելոք էրիկ մ'ընտրեց իրեն:

Իրարու շատ բաներ ըսին՝  
Քիչ մը հինցած, բայց սիրակեզ  
Շրթունքնին ալ մեկը մյուսին  
Մոտեցուցին... ամենուն պես:

Ու ճրվալին տղան ծնավ.  
Մնաք բարո՞վ համբույր ու սեք.  
Միշտ տանջըվիլ, չի հրճվիլ բնավ,  
Ասանկ բանի չէր սպասեր:

Ձանձրույթն իրեն սիրտը խոցեց.  
Կյանքեն հոգներ էր պարզապես.  
Խեղճը աչերն օր մը գոցեց  
Ու չի բացավ... ամենուն պես:

## ԽՈՂԵՐԻ ԳԻՐՔԸ

### ՀՈԳԻՍ

Հիվա՛նդ տերև մը տեսա կանաչին մեջ դաշտերուն:  
Ի՛նչ աղվոր էր գարունը, փափուկ հովին օրորուն,  
Սիրուն խոտերը դաշտին, ծաղիկներն ալ բյուր գույնով,  
Կը խնդայի՛ն լոկլայն գաղջ արևին տաք գինով:

Բայց գարնային, կենսավե՛տ այդ պահին մեջ օրորուն,  
Հիվանդ տե՛րև մը տեսա, կանաչին մեջ դաշտերուն,  
Չորցած տե՛րև մը նիհար, որ զեփյուռին հրպումով,  
Մեռելամերձ կը դողար՝ մարգերուն մեջ ակնաթով:

Սիրտս անհո՛ւն ցավով լի, ես ծոցս սրգահար,  
Մատներուս մեջ առ գայն, ու իր մարմինը նիհար,  
Գուրգուրանքո՞վ, արցունքով մոտեցուցի շըրթունքիս:

Անժամանա՛կ թարշամած գարնան տերև մ'է հոգիս.  
Մաղիկներուն մեջ կյանքին, զեփյուռին տակ մայիսի,  
Ա՛լ ժըպտալու անկարող, ան կը դողա՛, կը մըսի՛...

Հիվանգ տե՛րև մը տեսա կանաչին մեջ դաշտերուն...

### ՄԵՆԱԿ ՄԵՐԴԸ

Հորիզոններու վրա հեռավոր  
Խավարը իջավ, քալե՛, ուղևոր,  
Խավարը իջավ. քու բույնն ո՛ւր է որ,  
— Հորիզոններու վրա հեռավոր...

Հորիզոններու վրա հեռավոր  
հավարը իջավ. մանով, ալևոր  
Քաշվեր են իրենց բույնին մեջ աղվոր,  
հավարը իջավ, քու բույնդ ո՞ւր է որ...

Մինա՞կ ես, տունուտեղ շունի՞ս հեռավոր,  
Մենությունն մահվան շափ է ահավոր,  
հավարը իջավ, գլխուդ ալևոր  
Զղջիկներ պիտի հըպին սըգավոր...

Կը տեսնես լույսեր խավարին մեջեն,  
Հոն սիրող զույգեր գիրա՞ր կը շնչեն.  
Վա՛խ, դո՞ւն ալ շունի՞ս լույս մ'ուր քեզ կանչեն  
Հորիզոններու վրա հեռավոր...

#### ԵՐԹԱ՛Ն...

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ անձայն, անհանդես.  
Երթա՛լ առվի՛ն պես՝ մարգերու տակ անտես.  
Կապույտին մեջ հեզ, հողմավա՛ր ամպին պես...

Երթա՛լ՝ առանց գիտնալու թե դեպի ո՞ւր.  
Երթա՛լ՝ հեռո՛ւ ոստաններին այս տխուր.  
Երթա՛լ՝ խավար գիշերին մեջ թաքթաքուր...

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ առանց ճրագի.  
Երթա՛լ՝ առանց սուգի, լացի, փափաքի.  
Երթա՛լ՝ առանց սովի, առանց պապակի...

Երթա՛լ՝ մարդոց կույտին մեջեն լուսյայն.  
Օտար մընալ իրենց Ցավին, Գիտության.  
Երթալ տգետ, խուլ, համը՛ր, կո՛ւյր հավիտյան...

Աննյութանա՛լ, անըջանա՛լ, վըսե՛մ, վե՛ս,  
Երթա՛լ՝ անցայգ, անայգ երթա՛լ վերջապես,  
Աչքերը գո՛ց, ցայգաշրջի՛կ խեղճին պես...

Զրգիտնա՛լ, որ հոս Իտեալը չիկա...  
Ուխտագրնա՛ց երթալ ափերն հեռակա,  
Դեպի ուղին Երջանկության մշտակա...

Երթա՛լ, երթա՛լ, շճանչնալ Մարդ ու Աստված,  
Զո՛ւյգ երթալ՝ ձե՛ռքդ քո՛ւյր ձեռքի մեջ դըրած  
Անըրջանքի՛ն ու Սիրույն պես — աքսորվա՛ծ...

#### ԿԱՐԻՃԸ

Իրիկուն է: Փոքրիկ, ահեղ, մահունակ,  
Կարիճն հանդարտ մեղմ արևուն կը տաքնա:  
Գնչուի խեղճ գերեզմաննոց մ'ուր մինակ  
Ծս իրեն հետ, քարին վըրա, ես ու նա:

Անճա՛ռ հեշտանք. հեքն արևուն գաղջունակ,  
Կոնակեն ներս, արևին մեջ կ'ընթանա.  
Մինչ տունն իր գլխուն վերև շարունակ  
Կ'ելևէջե, արքայորե՛ն անխնա:

Ան կը տաքնա. ու կը պաշտեմ զայն լոին.  
Ու կը պաշտեմ ես քեզ, մըթի՛ն թագավոր,  
Դուն Ո՛ւյժ, դուն Վրեժ, դուն Դառնացումն անմեկին:

Երնե՛կ կարիճ: Երանությա՛մը թաթավուն,  
Մահը ծոցիդ, թույնը խղճիդ, ահավո՛ր,  
Դուն դեռ կրնա՛ս տաքնալ բարի արևուն...

#### ՏՐՏՈՒՄ ՈԳԻ...

Թափառամուլ ճամբուս վրա քերթողի,  
Տրտո՛ւմ Ոգի, ահա՛ դարձյալ գըտա քեզ,  
Հոն ուր քեզի օր մը մինա՛կ ես թողի,  
Քարին վրա, աղբյուրին մոտ, կը հիշե՛ս:

Մեր հրածեղաի օրենն ի վեր դուն ալապճա,  
Հեռուն հառած մութ ալքերը սևածիր՝  
Սպասեցիր ճամբուս վրա տրտմապես,  
Ու արցունքիդ լուկ երզը միշտ լացիր:

Ես հեռացա տարտամին մեջ խոլաբար,  
Իմ երազիս ճամբաներեն անդադրում,  
Գիշերներու հովիդ նման մեղմաբար,  
Վերջալույսի թըռչուններուն պես տրտում:

Ու վազեցի անուրջներու ուխտավոր —  
Թավիշին վրա կյանքի ծիծղուն մարմանդին,  
Ու վերքերու ծաղիկները ախտավոր  
Տարի մինչև հորիզոնները մութին:

Ես խոյացա, նվիրումես տենդահար՝  
Հոն ուր նիհար ճառագայթ մը կա հույսի,  
Հոն ուր սիրո վտիտ երգ մը կը դողար,  
Հոն ուր դողոջ ծիածան մը կար լույսի:—

Ու թևարեկ ահա՛ քեզի կը դառնամ  
Երջանկության ճամբաներեն հետադա՛րձ,  
Տրտում Ոգի, հոգվույս միակ բարեկամ,  
Դուն իրական, դուն ճշմարիտ, դուն անգարձ:

Ձեռքերուս մեջ դիր ձեռքերըդ մահաթույր,  
Ու հողեղեն շրթունքներդ շրթունքիս,  
Երակներուս մեջ քո շունչը տրտմաբույր,  
Արցունքներուդ բյուրեղի մեջ՝ իմ հոգիս...

Տրտում Ոգի, թևդ թևիս գալարուն,  
Համբույրի մը անհունին մեջ սգափետ,  
Մեր ցավերուն, արցունքներուն, վերքերուն  
Պատարագը պիտի տունենք քեզի հետ:

Ո՛վ պիտի երգե քու անփառունակ  
Կյանքիդ միամիտ տաղը, մատա՛ղ ջուր,  
Որ լո՛ւյծ դալալի մը պես շարունակ  
Կը փրփրիս, կ'երթաս դաշտերուն մեջ ուր  
Դարե՛ր դարերով ե՛րդդ է գոհունակ:

Ո՛վ պիտի պատմե վաղքերդ մշտույր  
Վայրի վարդերու երազանքն ի վար.  
Ո՛վ պիտի ցույց տա փրփուրներուդ խոր  
Հե՛ ի հե կյանքիդ իղձերն հագե՛վոր,  
Վետ վետ սեզերու շոյանքն ալ բողբոլ:

Լուռ անըջանքի պահուն ցայգային,  
Ո՛վ պիտի պատմե խիճերուդ լեղուն,  
Ու հեթիաթունակ սերն ուռենիին  
Երբ մութ գիշերով իրեն ազազուն  
Ոստերը, փախչող հոգվույդ կը հայի՛ն...

Միամի՛տ վտակ, դարերե ի դար  
Դուն մամոտ ճամբեդ կ'երթաս անմուր.  
Ու երբ կը մեռնին շուրջդ անմխիթար՝  
Գարնայնի գույն-գույն ծաղիկներիդ բուր,  
Երկու քարի մեջ կ'երգես անդադար:

Երեն՛կ քեզ, վտա՛կ, մեռնիլ շունիս դուն.  
Արցունքե մարմինդ կը վարես անվերջ,  
Գիշերներու մեջ միայնակ, արթուն,  
Անսկիզբն, անվերջ, վտիտ փոսիդ մեջ  
Կ'երգես, երենեկ, ջուր, վախճան շունիս դուն...

Ու երբ այս տողերն մրտտող նիհար  
Ձեռքեն օր մը լուկ պուտ մը հող ապրի,  
Ուրիշ քերթող մ'ալ, ինձի շափ հիմար,  
Պիտի գա՛ հարկավ երգերդ վայրի  
Հանգի, շափի տակ առնելու համար:

Մինչ հավերժորեն կյանքո՛ւտ, զվարթո՛ւն,  
Պիտի կարկաչե քու ջուրըդ հարաշարժ՝  
Հեզնելով արվեստն ու կյանքը մարդուն...  
Ո՛վ անմահության ըստվեր գետնաքարշ.  
Վտա՛կ, երնե՛կ քեզ, մեռնիլ շունիս դուն:

### ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Եղվոր գիշեր մ՛ուր կը զեղու հոգին՝  
Ցորեններու մեջ՝ կապտածաղիկին  
Համբո՛ւյր մը տվի, համբույր չերմագին,  
Ո՛վ դուք՝ որ կանցնիք, քաղցի՞ք դուք զայն:

Թախծոտ էր հոգիս, երկինքըս տրտում,  
Բայց ծաղիկներուն անուշն էր բուրում,  
Իմ սիրտըս դրի ես վարդի խորքում,  
Ո՛վ դուք՝ որ կանցնիք, պիտի քաղե՞ք զայն:

Սրած փուշին քով, ծարաված, թախծոտ,  
Որ իր անձկությամբ զիս քաշեց իր մոտ,  
Վերքերըս թողուցի ես մեկամաղձոտ.  
Ո՛վ դուք՝ որ կանցնիք, ո՛հ, մի՛ քաղեք զայն:

### ԿՍՏՐԻ...

Տղա էի: Միլեմբրիո ժայռերեն  
Մութ հրճվանքով օր մը տեսա թե ինչպե՛ս  
Մեղմ գիշերով, հանդարտորե՛ն, ծուլորե՛ն,  
Նավ մը հսկա, կրնար այրիլ շյուղի պես.

Այն ատեն դեռ չէի գիտեր թե ինչպե՛ս  
Ներոն մը բոց է տվիր Մեծ-քաղաքին,  
Պատշգամին վրա հուրին ի հանդես՝  
Տավդին թրթիո տալու համար քաղցրագին:

Չէի գիտեր, բայց հոն, բոցեն ապահով,  
Երկա՛ր, երկա՛ր կը նայեի ժայռն ի վար  
Ու անսահման, անամպ ցայգին մեջ անհով,  
Կ՛ունկնդրեի ճարճատյուններն հոգեվար:

Բոցն էր հանդարտ, ու հոյակապ, ու շտապ,  
Ան կը լարեր քիչ-քիչ պարան պարանի,  
Սև շոռագույն հրեշի մը պես հըրատապ  
Որ հարվածն իր վերջին տալու վարանի:

Դավադիր ծով մ՛էր, անալիք, ահավոր,  
Արյունի գույն ներկած էր ջո՛ւրը գինով,  
Այն իրիկուն չէր շոռաչեք մինչև որ  
Նոր կայմ մըն ալ շիջնար կարմիր ճողփյունով:

Երբ ա՛լ հրաշեկ կույտ մը մնաց բոլորեն,  
Տեսա թե ինչպես նավավարը հետին  
Նավակի մը մեջ հեկալով, մահորե՛ն,  
Կը հեռանար վիզը ծռած, աչքն հետին:

Տղա էի: Բայց դեռ հիմա քանի որ  
Արյուն կ՛երթա իմ ծեր սրտիս մեջ վայրի,  
Ու կը պատե աչքերս մութն ահավոր  
Կը տեսնեմ նավը որ կ՛այրի, որ կ՛այրի...

Ու այս անգամ կհասկանամ քեզ, կյանք-նավ,  
Դուն որ անձայն աղաղակի պես գուժկան,  
Անհուսության անդունդներու վրա խոնավ,  
Լռին կ՛այրիս, եզերական, հեզնական...

Ու ինձ այնպես կը թվի թե Սերն է այն  
Որ կը մեկնի նավավարին պես հետին,  
— Սեր մը եթե վարեր դեկըղ լոնլայն —  
Ան ալ կ՛երթա, վիզը ծռած, աչքն հետին:

Ու դուն կ՛այրիս. եղերակա՛ն, հեզնակա՛ն...

## ԵՀՈՎԱՅԻՆ ԱՐՑՈՒՆՔԸ

Երբ բոլորն ալ տվին համարն այդ օրվան  
Աստվածատուր իրենց զատ զատ պաշտոնին,  
Եվ երբ Տերանց Տերը, հզոր Եհովան՝  
Կը ժպտեր գոհ, հասած Խորշակ-թագուհին:

Շեկ մազերու ծով մ'ուներ բոցահեր  
Կարծքին՝ վահան մը հրաշեկ արուլրի,  
Գեհն'նը կար աշքերուն խորն անվեհեր,  
Ու իր շունչին տուրևառին մեջ վայրի:

Եհովայի լոեց ատյանն ունկնդիր.  
Ու երբ նշան ըրավ երկնից արքան մեծ՝  
Խորշակ-ղշխույն ճակատն հակեց ծնրադիր,  
Ու միակե՛րպ ու անայլայլ ան պատմեց.

— «Ամեն տեղ կյանք տեսա, խայտանք ու ժպիտ,  
Սարին վերև, ծործորին մեջ, ակին քով,  
Շուշան, ամբուլ կը խնդայի՛ն միամիտ,  
Ու լեւակները կ'երգեին խայտանքով:

Ու թիթեռնիկ, միշատ, ծաղիկ ու թռուռն,  
Կը ծծեին երանություն մ'անհրնա՛ր.  
(Փո՛ւլթն էր իրենց Տիեզերքին մեծ ինչո՛ւն)  
Երանությո՛ւն, զոր մենք հոս դեռ չենք ճանչնար...

Ու լսեցի որ վայրի վարդը կըսեր.—  
«Ի՛նչ աղվոր է...»՝ կըսեր վարդը հովերուն.  
«Ի՛նչ աղվոր է...»՝ կը կրկներ հովն հեշտասեր՝  
Փայփայելով լայն մրգաստանն օրորո՛ւն:

Սուրա՛ցի գաշտ, մազլցեցա սարն ի վեր:  
Քայլերուս տակ հեծեց արոտն հեանագույն.  
Մզրիդներուն երգը լոեց կարիվեր.  
Մախի՛ր տեղաց ծաղիկներու վրա գույն-գույն:

Ու դաշտերու անբարունակ շյուղերին  
Մինչև հըպարտ էտըլվայսները լերան,  
Իրենց ցողին վրա խարեցան արամորեն,  
Գողողացի՛ն, ու համբույրիս տակ մեռա՛ն:

Օդին մեջ հո՛տն էր խարակվող ծիլերուն...  
Ու լսեցի որ «խե՛ղճ վարդեր»... կը հեծծեր  
Հետին թռչունն, որ կը փախեր շվարուն...  
Ես կիզեցի. Քու հըրամա՛նդ այս էր...»

Եհովան մո՛ւթ ժըպիտ մ'ըրավ անզգա՛ծ...  
Ու երբոր դո՛ւրս ելան բոլորն ալ հըլու,  
Իր հոգին դե՛ռ անծանոթ պետք մը զգաց,  
Նվաստացուցի՛չ, ահռելի պետքը լալու...

## ԱՐԳԱՍԱՎՈՐՈՒՄ

Մառախուղի առավոտով, ծե՛ր, ձիերը կը քաշեն,  
Գանդա՛ղ, անիվը չի ճուար ձյունին վրա: Միայն, շե՛ն,  
Էարազանն է որ կը խոսի թաց ոգերու մոայլ սուզին,  
Ու կ'երկարե՛ ճամբան, մինա՛կ՝ անհորիզոն, ահագին:

Ինքնասուզվա՛ծ, նախատիպար այդ կառքին մեջ գյուղաշեն,  
Ես կը դիտեմ սառած ձյունը կախված իրենց լա՛յն բաշեն:  
Սե՛ր, կը քաշեն: Խեղճ ամուլը: Աջն արուն է, ձախն՝ էգին,  
Խորշոմ Մաղիկը կ'երևա, պոչին շարժքեն, ցավագին...

Հալածվա՛ծ զույգ: Ու կը խորհիմ թե այդ երկո՛ւքը միայն,  
Մշտնջենեկան Տառապանքն է զոր կը տանին լուկայն,  
Եվ թե մե՛կը մյուսին բավ է՝ խեղճ բնազդի մը հլու՛  
Տառապագին սերունդի մը ամբողջ սերմը դրնելու...

Այսպես, թշվա՛ռ, արքայափառ մտրակի մը ներքե՛ շե՛ն,  
Հավիտյանին Անեծքն իրենց Արգանդին մեջ ախտաշեն,  
Մառախուղի առավոտով, ծե՛ր, ձիերը կը քաշեն...

# ՉԼ Ա Ս Կ Ց Վ Ա Ծ Ն Ե Ր Ը

## 1. ՎԵՐՋԻՆ ԱՐՔԱՆ

Հուլա՛, ո՞վ կա... հոգի մը չի տըրտփեր... Ոչ մեկ շունչ:  
 Ու առյուծն իր առջևի թաթին վըրա անմըտունչ  
 Արձանացած՝ կը թարթի իր մութ նայվածքը հեռուն,  
 Արշալույսի առաջին արյունոտող գիծերուն:

Արյունոտող... Բայց առյուծն այնքան տխուր է ու մունջ:  
 Կարո՞տն ունի թռչնիկի հովվերգությանց քաղցրահունչ,  
 Կամ միամիտ, մտերիմ եղնիկներու խաղերուն.—  
 Ամալյությունն է իր շուրջ, իր մեջ ձանձրույթն է անհուն:

Ո՞ւր, ո՞ւր են հին ատեններն՝ ուր ան կ'իշխեր անողորմ:  
 Մարդը խոնարհ ու գաճաճ, արշավեր է ամեն կողմ:  
 Թոքախտավոր առյուծներն հարցո՞ւր երկաթ-վանդակին:

Այսպես, առտուն, քարացած, ան կ'երազե ախտագին,  
 Ամալյության մեջ բանտված, Աստուծո մը պես ինկած...  
 — Առյուծ-Արքա՛, գնդակ մ'ալ քեզ կը փրկե անկասկած...:

## 2. ՊԻՏԻ ՄԵՌԻ

Ճի՛շ, ճի՛շ մըն ալ... Անօգո՛ւտ: Փոթորկին մեջ աշունի,  
 Անծի՛ր ծովուն վըրա գորշ, դեպի ափե՛րն հայրենի,  
 Միծառներուն կը սուրա լո՛ւտ քարավանը փութով:  
 Իրենց վերջինն, ուժասպա՛ո, կը փորձե ճի՛շ մ'ալ թոթով...:

Պիտի մեռնի: Ան գիտե: Բայց մո՛ւթ հոգին թռչունի,  
 Անմահության գո՛նե այն ճարտար հավատքն ալ շունի  
 Որ կը շոյե մեր վերջին ժամերն Հուլյոսով ու Սուտով...  
 Միա՛յն գիտե թե աչքերն խավարելու են շուտով:

Արովհետև մանչող գորշ ծովուն վրա անհատակ,  
 Ի՛նչ դիակներ տեսավ ան՝ ուխտին ճամբուն նահատակ...  
 Հեռո՞ւ... ո՛չ գիծ մը տարտամ: Հեռուն, ո՛չ կայմ մը նիհար:

Մեռնի՛լ... ո՛չ, ո՛չ: Դեռ թռչիլ կը փորձե ան տենդահար...  
 — Ինկի՛ր, ինկի՛ր, խեղճ թռչուն, ծովերու մեջ թե ծաղկանց,  
 Պահ մը առաջ, պահ մը ուշ Մահը նույն Մահն է անա՛նց...

## 3. ԻԺԸ

Ինչպես Ամոթն, ինչպես Մեղքն, ինչպես Դժոխքը, տեսե՛ք,  
 Ան կը ննջե: Զագրելի՛, գարշատեսիլ, անշա՛րժ, սեգ.  
 Անգիտակից անմեղի իր քունը խո՛ր կը ննջե...  
 Մենե որո՞ւն համար քունն սփոփիչ, կարճ Մահ մը չէ:

Ով նորածին իժի ձագ: Քնացի՛ր. կողը՛դ հրաշեկ,  
 Երազորե՛ն փրոե տաք ավազուտին վըրա շեկ.  
 Եթե հեռվե հեռու մեղմ ջուրը տարփոտ կարկաշե,  
 Բու գետնաքարը մարմինիդ հովվերգությանն համար չէ:

Դուն հո՛ղ պիտի ճաշակես, ու դուն պիտի Մա՛հ րմպես,  
 Պիտի շնչես ժայռերու թաքուն ճեղքին մեջ անտես,  
 Անիծելով ախտածես արգանդը որ քեզ ծընավ...:

Չէ՛, չի պիտի թողում որ ապրի՛ս: Հարված մը... Մեռա՛վ:  
 Ա՛խ, հողակե՛րտ, նզովվա՛ծ, սողո՛ւն որդվոցը մարդկան.  
 Փրկարար մեծ հարվածն ո՞վ պիտի շնորհեր վերջնական:

## 4. ՉՂՋԻԿԸ

Քու սուզըդ ո՞վ պիտի լա, շղջի՛կ, զագիր ու մութ քո՛ւյր,  
 Ահա իջնող մութին մեջ կը խարխափե վազքդդ կո՛ւյր.  
 Ո՞ւր, շղջիկ քույր: Ինչո՞ւ լուռ կը հեռանաս երդիկես,  
 Ո՞ր թարշամած վարդն հետին պիտի հաճի՛ ժպտիլ քեզ...:



Եվ ո՞ր սարյակը պահած թավուտին մեջ հեշտարույր,  
Քեզ դալլալուվն իր հրավե՛ր պիտի կարդա ի համբույր...  
Դուն ի՛նչ ունես, ո՛չ փետուր, ո՛չ իսկ ձայնիկ, մ՛որ երգես,  
Ո՛չ իսկ լույս մը մտերմիկ՝ փոսուռայի բոցին պես:

Մերկ թևերդ որ հեք կողըդ կը ծեծեն անընդհատ,  
Քընած կյանքը թունելու շարժումն ունին հուսահատ  
Ու միջոցին մեջ անեծք ցանելու տե՛նդը անշեջ:

Եղո՛ւկ, դուն չես սավառներ, կը տապալիս մութին մեջ:  
Դարձի՛ր, դարձի՛ր, շղջիկ քո՛ւյր, եկուր անխոս և հըլու,  
Երդիկի՛ս մեջ, հոգվո՛ւյս մեջ, սև նըզովքդ խոկալու...:

5. ՀԱՅՐԸ

Աստանդական մ'ալեհեր, ցուրտ գիշերով բուք-բորան,  
Մթին փողոց մը, քարի նստարանի մը վրան,  
Իրեն խարխուլ կողին վրա ընկողմանած էր արթուն,  
Երբ ապաստան փնտոցեց հոն նիհար տըղա մը անտուն:

Խավարին մեջ նայվածքներն իրա՛ր զարկին, շաշեցա՛ն...  
Մերը հեռու քաշկոտեց հիվանդ մարմինն իր անձա՛յն.  
Ճանչցե՛ր էր, բայց չի կրցավ ըսել՝ «Որդյակ մոլորուն,  
Զավա՛կս ես, որ լքեցի անոթությանս օրերուն...»

Թշվառության հյուրընկալ նստարանին վրա քարի,  
Կյանքի խավար գիշերով, Մարդն ու Աստվածը բարի,  
Պատահաբար, կող-կողի, երբոր զիրար տեսնեին,

Եհովան իր լուսեղեն պսակին մեջ երկնային՝  
Զէ՛ր ամշնար ըսելու, թշվա՛ռ, անտե՛ր, խե՛ղճ Մարդուն,  
— «Ծս եմ քու հայր Արարիչդ, ամենակալ: մշտարթուն...»

Քեմ գիտեր ո՛վ, չեմ գիտեր ո՛ւր  
Կ'երթա... Հի՛ն, հի՛ն ասպետ մը լուս,  
Կ'ըսեն ձիու վրա տխուր  
Կ'երթա շուտ-շուտ, չեմ գիտեր ո՛ւր...

Կը տեսնեմ մեծ շուքն իր նիհար  
Վերջալույսին, ամպերեն վար,  
Սև նժույգին վրա հոգեվար  
Սարե՛ն կ'երթա, չեմ գիտեր ո՛ւր...

Կ'երթա, շո՛ւտ, շո՛ւտ, ու չի տեսներ  
Քր ետևեն բյուր կմախքներ  
Ա՛լ վազելեն շատ են հոգներ,  
Ան կ'երթա շո՛ւտ, չեմ գիտեր ո՛ւր...

Կ'ըսեն՝ դղյակ մ'ունի աղվոր,  
Կամ ուխտ մը սուրբ, սեր մ'հեռավոր.  
Եվ հո՛ն կերթա... Եվ գիտեմ որ  
Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՛ւր...

ՄԵՄԻ ԱՍՏՎԱՍ

Ահա ջուրերդ: Աղվոր լիճե՛րըդ ահա,  
Ահա ծովերդ, օվկիաններդ մըթին,  
Որոնց վըրա շունչըդ կյանքոտ հըր խաղա  
Փայփայելով հսկաներն այն անդունդին:

Խոտերուն մեջ սահող հեզիկ առվակեղ  
Մինչև ջուրե՛րը դարավոր նեղոսի,  
Մինչև հո՛ն ուր նիազարան փրփրավեա  
Գահավեժին մեջ գոռալով կը հոսի:

Ահա հողերդ: Լուս անդունդներդ մթասավեր,  
Ուր քու հոգիդ մենավորիկ կերազե՛.  
Ու բոցավառ արևուն տակ կենսավժը  
Տոշորող լա՛յն անապատներդ ալազի:

Կանաչավետ քու դաշտերեդ լայնածիր,  
Մինչև ձորերն ու անդունդներդ ահավոր,  
Մինչև լեռներդ որ դուն ձեռքովդ կանգնեցիր,  
Ալպիաններեն՝ Հիմալայան ալեոր:

Ահա՛ երկինքդ: Երազամուլ, կապտագե՛ղ,  
Անծիր, անծա՛յր տարածութիւնը անհուն,  
Լույս մատներեդ վառված աստղերը շքեղ՝  
Խորհրդաստվեր կամարիդ վրա պլպլուն:

Ու արևուշ բոցափայլ գունտը կրակի,  
Ու լուսնյակիդ սիրախտավոր դեմքն աղվոր,  
Ու տրամանույշ վերջալույսնե՛րըդ ոսկի,  
Ու կենսալիր արշալույսներդ փառավոր:

Ահա՛ Մարդերդ: Ահա՛ Մարդերդ ալ, Աստված,  
Տխուր հյուրերն այս հրաշագեղ աշխարհքին,  
Թափառական, վաղորդյանն՝ ընկճված,  
Ճղճիմ, թշվառ, հողին կառչած, ախտագի՛ն:

Ճակատագրին մտրակին տակ խելահե՛ղ,  
Անոնք կուլան ու կը վաղեն մտացի՛ր,  
— Իրենց ճակտին վրա Մահվան դիրն ահեղ—  
Անոնք զոր Դուն պատկերիդ վրա ձևեցիր...

Ահա՛ Մարդերդ, ահա՛ Մարդերդ, Մեծդ Աստված:

### ՅԵՄՈՒՆ ՄԱՀ

Քերթողն ըսավ.— «Անո՛ւյշ վրտակ,  
Շյուղերու տակ, ճյուղերու տակ  
Ո՛ւր կը վազես աննրպատակ...»

Վարդեր կուլան շուրթիդ վերև,  
Սեզեր կուտան քեզ բյուր բարև,  
Քե՛զ կը կանչեն ծաղիկ, տերև...»

Լուսնակի ցոլքը ծոցդ առած,  
Դաշտերու մեջ լայնատարած,  
Ո՛ւր կը վազես դուն շվարած...»

Կյանքդ արդեն կարճ է, ա՛յ վրտակ,  
Մի՛, մի՛ վազեր ծովն անհատակ  
Պիտի թաղե քեզ ալլաց տակ...»

Վտակն հծծեց.— «Թող անդադրում  
Վազեն ջուրերս. մի՛, մի՛ տրտում  
Արցունք կաթեր անոնց սրտում»:

Թո՛ղ, որ երգեմ լույսն ու մութին,  
Ի՛նչ փուլթ թե մահն է քայլ մ'անդին,  
Ես սիրահար եմ մարմանդին...

Ու մինչ քերթողը կ'երագեր՝  
Լալո՛վ, վրտակը եռուզեռ,  
Երգով իր մահը կը վազեր...

### ՍՐԻՆԳ

Ո՛վ խեղճ սըրինգ, տարաբախտ ոստ,  
Ան ո՛ր անգութ ձեռքն էր անտես,  
Կամ ո՛ր կայծակն որոտընդոստ  
Որ խլեց, շորցուց քեզ ոսկրի պես...

Ո՛վ ծակոտեց քու նիհար ցող,  
Չի կա նեկտար մ'ալ որ ըմպես,  
Ո՛չ իսկ կաթիլ մ'առտվան ցող,  
Ցամքե՛ր, հյուծե՛ր ես ոսկրի պես...»

Մոտեցո՛ւր կուրծքըդ համբույրիս,  
Թող օծեն վե՛րքըդ արցունքներս,  
Գիտեմ պիտի չըղալարիս,  
Բայց կյա՛նք փչեմ երակեդ ներս...

Բարե՛, սրբինգ, սիրող խոց է,  
Հին ծաղիկներդ աչ շին ծիր,  
Բայց տաք շունչես ծնին գուցե  
Վերքեդ երգի՛ ծաղիկներ հին...

Ծկուք սիրենք, եկուք պրոֆնք,  
Ծկուք պատմեմ քեզ մեկուսի,  
Գաղտնի՛, ահեղ սեր մը, սրբինգ,  
Որ տակավին մեկուն չըսի...

Երթանք կապո՛ւլտ ոտքն հեռակա,  
Մարդերեն վե՛ր, աստղերուն տակ,  
Մեր լացին լոկ սերը վըկա,  
Ու ձայնակից ըլլա վքտակ...

Երգե այնպես, ինչպես կուլար՝  
Երբ գիշերի սյուքն աշնայնի  
Կը սարսուցներ ոստդ դալար...  
Շունչս աչ սյուքն է գերեզմանի...

Ո՛վ իմ սրբինգ, ոստ երկնատուր,  
Չորցած կուրծքիդ ես տամ հոգիս,  
Ու դուն երգ տուր, դուն վերելք տուր,  
Երկինքներ տուր հիվանդ շունչիս...

### ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՀԵԳԵՈՒԹՅՈՒՆ

Գերի տարվող Գյուլջազնի պես ահավար ա հսկա  
Ծս կը քալեմ հեգնելով... հոգիս լոկ քավըս կը զգա.  
Մութ ներսիդիս անպատում վերելքներով կ'ողողի,  
Մինչ շունդուն շղթաս շեշտ կը կապե ոտքս հողի...

Հուլա՛, ո՛վ է այս սափերն հարիզոնին հեռակա,  
Քշվառութունն է՝ տեղաչն ոստի, որ դեպ ինձ կուզա,  
Մրտունչս դեռ շերտված պայքարներով է հըղի,  
Ու քնարն իմ ձեռքի՛ն մեջ հեք խազալիք մ'է տըղի...

Մուրած մեծ Անուրջն եմ, ես հին Աստվածն եմ ինեւած,  
Ա՛խ, ինչ ցավեր ապրելու զոր ոչ որի շեմ քոած.  
Ու ամեն բան հեգնելով՝ նույնիսկ Ցավիս կը խնդամ...

Գատառտուն բեհեզով ես Արքա եմ, ես փարթամ,  
Ու Արքայիս Հուպի՛տն եմ՝ իմ սկեպտիկ խինդով լա՛յն,  
Միայն Արքա ու Հուպիտ գլուխ գլխի՛ մերթ կուլան:

### ԳԻՇԵՐՆ ԻԶԱՎ

Գիշերն իջավ անամպ, անհուն,  
Բյուր բյուրեղեն ի՛նչ նուրբ անուն  
Տալ անուրջի այս սուրբ պահուն.  
— Ա՛խ, ապրելո՛ւ երջանկութուն...

Կանխանա նավն հեռակա,  
Կիճն երազ մ'է, կա ու չըկա.  
Ջուրի շշունջն է լոկ վըկա,  
— Շշնջելո՛ւ երջանկութուն...

Վերն հազար աստղ, վարն հազար լույս,  
Կիսաստվերին մեջ հոգեհույզ,  
Կը խոսակցին քար, վքտակ, բույս.  
— Ա՛խ, իրերո՛ւ երջանկութուն...

Ու կը ձայնե մատուռն հստակ.  
— Սա ծերունի ծառերուն տակ,  
Այս քաղցրության մեջ բովանգակ  
Քարանալո՛ւ երջանկութուն...

# ՎԵՐՋԻՆ ՆԱՅԵՐԸ

## ԿԱՐՄԻՐ ԿԱՐՈՏ

Ճամբորդ, անցա՞ր դուն այն գյուղեն հեռավոր,  
Որ ժայռերուն սերտիվ կառչած վես կուրծքին՝  
Իր քարուքանդ պարիսպներուն դարավոր  
Կը դիտես շո՛ւքը ծովուն մեջ տրտմագին.  
Ճամբորդ, անցա՞ր դուն այն գյուղեն հեռավոր.

Տեսա՞ր սուգի տընակները հին ու ցած,  
Որոնց սեմին առջև ծերեր կ'երևին.  
Արյունաներկ մամռոտ պատերն ալ հինցա՞ծ՝  
Ուր մողեսները կը տաքնան արևին.  
Տեսա՞ր սուգի տնակները հին ու ցած:

Անցա՞ր վրտիտ արահետեն, բարեկամ,  
Որ մարգերուն մեջ կը խաղա գետին հետ,  
Կամուրջներով կ'ընդհատես զայն շատ անգամ  
Հետո հեռո՞ւն կ'ըլլա դաշտին մեջ անհետ.  
Անցա՞ր վտիտ արահետեն, բարեկամ:

Ա՛խ, հո՞ն են դեռ այգեստաննե՞րը գյուղին  
Ողկուլվներու տակ բեռցված քաղցրավի՛տ  
Ու ցորենի անծայր դաշտերը դեղին  
Որ ոսկեցո՞ւլ կը ծփային ալեվետ.  
Ճամբորդ, տեսա՞ր այգեստանները գյուղին:

Ու նայեցա՞ր ապառաժին բարձունքեն,  
Գիշեր ատեն երբ սյուքը մեղմ կը փչե  
Ու ծովափին վրա ալյակնե՞րը կ'երգեն,  
Երբ ավերակ գյուղն իր մա՛հը կը ննջե...  
Նայեցա՞ր դուն ապառաժին բարձունքեն:

Լուսնակ լույսով գերեզմաննոցն ալ տեսա՞ր,  
Որ ժայռերուն հանդարտ կողքին կը փարի.  
Բլրակներու ներքև գետնին հավասար՝  
Կը ննջեն մեր նահատակնե՞րը բարի...  
Լուսնակ լույսով գերեզմաննոցն ալ տեսա՞ր...

Տարիներո՞վ կարոտն ունիմ սիրագին  
Այդ հողերուն, աղբյուրներուն մեղմ հոսան  
Այգիներուն, գերեզմանին, լուսնակին,  
Ու ժայռերուն որ իմ ծընի՛լըս տեսան...  
Անոնց կարմիր կարոտն ունիմ ախտագին:

Ճամբորդ, անցա՞ր դուն այն գյուղեն հեռավոր...

## ՈՎ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ...

Կիլիկիա արյունից

Ցայգն ի՞նչ անույշ է, ցայգը ի՞նչ գինով:  
Ցավերես տարված կը քալեմ երկա՛ր  
Լեմանի ափին՝ խոր տրտմությունով:  
Ի՞նչ խաղաղություն, ի՞նչ անճառ նրկար,  
Ու ցայգն ի՞նչ անույշ, ցայգը ի՞նչ գինով:

Հեռվեն թե՛ճակի շառաչներ դողդոջ  
Երգը կ'օրորեն սիրող զույգերու,  
Ջուրին մեջ աստղեր ինկեր են բողբոջ.  
Ու տարփոտ մութին մեջ հեռվե հեռու՝  
Թե՛ճակներու թա՛ց համբույրն է դողդոջ:

Լուսնակն ալ ահա՛ շքեղ կը ծաթի,  
Առասպելներու լույս-դշխոյին պես՝  
Ալպիաններու ձյո՛ւն-հրաշքեն արծաթի:

Նոր հովվերգությանց հի՛ն հանդիսատես՝  
Տժգույն տարփավորն ահա կը ծափի:

Ի՛նչ անհունություն, ի՛նչ երազ, ի՛նչ շունչ...  
Լոին լեռներու կողքն սատափի  
Մինչև՝ սխրացած անտառն անշունչ,  
Ու մինչև դաշտերն ուր Ռոն կը թափի,  
Ի՛նչ անհունություն, ի՛նչ երազ, ի՛նչ շունչ...



Ով դո՛ւն, ո՛վ դժբախտ երկիր հայրենի,  
Որ արյունի տա՛ք շամանդադի մեջ,  
Զոհ՝ գազաններու խաղին վայրենի,  
Ու համայնասպա՛ռ բոցերու անշեջ,  
Կը մըխա՛ս, դժբա՛խտ երկիր հայրենի...

Ո՛վ իմ հայրենի՛քս... Ու դո՛ւք, հեռավո՛ր,  
Եփրատ ու Արաքս ու Վանա ծովակ,  
Ո՛ւր են կարապեն՛րը սիրախտավոր  
Որ իրենց երազ թևերով ճերմակ  
Ճեղքեին կարմիր ձեր կո՛ւրծն ախտափորո:

Հովվերգություններդ ո՛ւր են սխրալի,  
Ո՛վ Արարատյան ձյունափա՛ռ հսկան:  
Ու դո՛ւն միամիտ, Դրախտն առասպելի,  
Ինչո՞ւ այսքան մո՛ւթ է քու լուսնկան.  
Հովվերգություններդ ո՛ւր են սխրալի:

Լեռանույշ կուսանքող Հայաստանի,  
Ո՛ւր են ձեր սիրո երգերն անհամար  
Որ հովք դեմի բլուրը տանի,  
Ուր սրինգ մը խեղճ կուլա ձեզ համար...  
Ո՛վ հավերժահարսք կույսք Հայաստանի

Բաբե՛: Վայո՛ւններ են որ կը լսեմ,  
Հերքերին ցրված, փախչող խելահեղ,  
Ընդդիմադրումի մը պահուն վսեմ,  
Պիղծ յաթաղանով ընդկիսված ահեղ՝  
Կույսերու վայո՛ւնն է որ կը լսեմ...

«Հո՛ւ, մենք ենք, մեղք ենք, եղբայրեն՛ք, քույրե՛ր...  
Մենք ենք, լափլիզված բոցերն անշեջ...  
Մերկ սուսերներով հալածված կույրեր...  
Մե՛նք ենք, կը վազենք մութին, մահվան մեջ,  
Հո՛ւ, մե՛նք ենք, մե՛րկ ենք, եղբայրեն՛ք, քույրե՛ր...»

Մե՛նք ենք, դիվահար ծնո՛ւնդ արյունի,  
Հի՛ն, շքե՛ղ ցեղի զավակներ հետին,  
Բոբիկ երեխա՛, դողող ծերունի՛,  
Մե՛նք ենք, ո՛ղջ գանկերն, որ կ'իջան գետին...  
Մե՛նք ենք, դիվահար ծնո՛ւնդ արյունի...

Հո՛ւ, նզո՛վք, նզո՛վք: Մեր վերջին փրփրուն  
Շոգին խավարե՛ր է ձեր աչքերը, ա՛հ,  
Մեր արյունը ձեր զավակա՛ց գլխուն.  
Թո՛ւյն շնչեիք դուք, ու ըմպեիք Մա՛հ...  
Հո՛ւ, նզո՛վք, նզո՛վք ձեր սերունդներուն...»



Ցայգն ի՛նչ անույշ է, ցայգը ի՛նչ գինով:  
Երգեցեք սիրո համբույրներ զվարթ,  
Ու դո՛ւք երգեցեք երանությունով,  
Դո՛ւք երազ ափեր, ալյակներ, լազվարթ,  
Ձեր ցայգն ի՛նչ անույշ, ցայգը ի՛նչ գինով,—

Կը քալե՛մ: Քալե՛, հիմա՛ր տարագիր,  
Ժպիտ մը շուրթիդ՝ կարապի՛ն համար,  
Ներթնապես լալով՝ միտքդ դե՛պ երկիր,  
Շեղջված մահերու վրայն անհամար,  
Քալե՛, գուն, քալե՛, հիմա՛ր տարագիր:

Քնարի զառամած թելի մը փարած,  
Քալանե՛, բոցե հեռո՛ւ, ա՛հ, հեռո՛ւ,  
Քալե՛, դուն, քերթո՛ղ հայրենահալած,  
Հո՛ւր, արյո՛ւն երգե ազատ լեռնհրու.  
Քնարի զառամած թելի մը փարած...

Քալե՛: Մինչև ե՛րբ: Քալե՛ կուրորեն,  
Քալե՛ մինչև որ Արևն հրակեզ  
Իր մարը մտնե նորեն ու նորեն՝  
Ու օ՛ր մը այլևրս չի ծագի քեզ...  
Բարե՛... Կյանք՞ն է այս... Քալե՛ կուրորեն...

### ԻՆՉՊԵՍ ԵՐԲԵՄՆ...

Քերթո՛ղ, պատմե՛ մեզ հայրենի հուշքերեդ,  
Երգե՛ մեզ հին օրերու երգ մը անհետ,  
Քափառական թրուպատուրի երգ մը զո՛վ,  
Արբշիռ ու զո՛վ մեր Գողթանի ողկույզով:

Մեռելի շեն երգ մը հանե թոքերեդ,  
Հի՛ն, կռապաշտ ա՛յն երգերեն որոնց հետ՝  
Մեր ասպազեն քաջերն արույր թափորով,  
Սաղավարտնին շողացնելով, ջահերո՛վ,

Արքայական հանդեսներու, վայրա՛գ, վե՛ս,  
Կը պարեին, աստվածներու պարի՛ն պես...  
Երգե՛ մեզի հին օրերու հի՛ն հուշեր:

Մենք դարավոր մեր մահացումն այս գիշեր  
Պիտի պարենք եղեռներե՛ն, շե՛ն, խելա՛ռ...  
— Քերթողը, ծե՛ր, լըխոսեցավ: Ան կուլա՛ր...

### ՋԱՆԳԱԿՆԵՐ, ՋԱՆԳԱԿՆԵՐ...

Ջանգակնե՛ր, բարի՛, բարի՛ զանգակներ,  
Ի՛նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն,  
Խոսք ելլել կ'ուզե արյունը վազուն...  
Կը լո՛ք, բարի՛, բարի՛ զանգակներ:

Արդյո՞ք ձեր միսթիչ հազագն արույրե,  
Ուր կեղև՛ պատեց աղոթքի փոշին,  
Եվ ուր կ'երազե՛ր խունկի գուրբշին,  
Հեղակարծ ցավեն՝ անզո՛ր, կը լո՛ք:

Ո՛չ: Ձեր դարավոր հոգին պղնձի  
— Որ շա՛տ, շա՛տ հաճախ տեսեր է Բարին  
Հաղթված Չարեն — այժմ՝ իր բարբառին  
Ու իր Աստծույն վրա կը կասկածի...

Ա՛խ, որովհետև տեսաք ձեր բարձրեն,  
Հավատավորներ հազարով, բյուրով,  
Ինկած հեթանոս տապարով, բիրով—  
Ձեր ոտքերուն տակ, երկյուղածորեն...

Ու ձեր գմբեթեն դիտեցիք անձայն,  
Թե ինչպես խնկոտ տաճարներու մեջ՝  
Որք, կի՛ն, ծերունի, բոցերով անշեջ,  
Իրենց Աստծույն գահին զոհվեցան:

Բայց... գիտեք նաև թե մեր դարավոր  
Դիակներու բուրբ ամպերեն անցավ,  
Ու մեր արյունի ժահրեն նեխեցավ  
Սրբություններու ծույլ գունտն երկնավոր:

Արդ՝ ո՛ւր եք, շքնաղ խոստումներ խաչին,  
Եղբայրության զուր բարբառներ, ո՛ւր եք,  
Կրակ կը փսխե հոգն ամենուրեք,  
Գետերն արյունով, դիակո՛վ կուռչին...

Ու կ'իյնա այն որ կը ծնկե ահով,  
Ջի թուրն ավելի արդար է խաչեն,  
Ջի կյանքն անոնց է միայն որ քաջ են,  
Անոնց որ կապրին ուրիշի մահով...

Որովհետև դեռ հեռու է օրն այն,  
Երբ գային ու գառնով սիրով արածին...

Թե ապրիլ կ'ուզե գառը նորածին՝  
Պետք է իր ակոսան սրե լռելյայն...

Լուռ եք, զանգակներ, Աստված է մեռեր  
Գույժ տվեք վաղվան, զի հասկը մեռավ.  
Գույժ տվեք հայուն, զի ազգը մեռավ:  
Զանգակներ, ծերո՛ւկ, բարի՛ զանգակներ...

Ինչպե՛ս կուզեի ես ձեր պարանին  
Կախվել ու ցնցել երկաթ բազուկով.  
Անոնք ու ինկան բյուրով, քովի քով,  
Ձեր զոզանջին հետ՝ լալու պետք ունեին..

Հոգիս հազար խուլ զանգակներով  
Գոռացեք զանգեր ու կատաղորեն  
Գահավիժեցեք ձեր երկաթ թառեն,  
Ուրկե միայն լալ գիտցար դարերով...

ԿԻՂԿՅԱՆ ԵՐԳԵՐ

Ա.

ՎՐԵՆԻ ՍԵՐՄԱՏԱԼԸ

Քե՛զ, ցասումի վայրագ հեղեղ գահավեժ,  
Արգարուժյան փայփայլի մո՛ւթ հըրեշ,  
Խավարներու ահե՛ղ ծընունդըդ, Վրե՛ժ,  
Ողջո՛ւյն, տաղե՛րս քեզի՛...

Մախրի՛ն կուտամ սրախ վերքերն ախտագին...  
Ամենու՛ն վերքն, անսահմա՛ն վերքը ազգին,  
Արգարուժյան ծարա՛վը, մա՛հն հավառքին.  
Ծրգին՝ տաղե՛րս քեզի՛...

Մանձերին լայն երիվարներ ասպազեն,  
Ալիք այլք թոթվելով սեզ բաշն ուսեն,

Թող հայրենի աշխարհիս կուրծքն ակոսեն,  
Սուրա՛ն՝ տաղե՛րս քեզի՛...

Ու ես կուզա՛մ.— Մո՛ւթ շանթերու սերմնացան —  
Այդ ակոսեն, ուր արյուններ լճացա՛ն,  
Գիշերներով, շար հովերով, ցիրուցա՛ն,  
Ցանե՛լ՝ տաղե՛րս քեզի՛...

Բաբե՛, եթե այս բազուկս կարելիք  
Չըստրվեցավ զարնել... գոնե անվեհե՛ր  
Ցանքես Մահու առաքյալնե՛ր, հսկանե՛ր  
Կը ծնին՝ տաղե՛րս քեզի՛...

Բ.

ՀԱՅՈՒ ՈՐՐԻԿ

Ա՛յ հայու որրիկ, ա՛յ անտեր որրիկ,  
Մանրի՛կ, արյունո՛տ ոտքերըդ բորիկ,  
Ո՛ւր կը քաշկըտտեք այսպես մոլորուն...  
— Չա՛ր քամիներուն...

Ա՛յ որրիկ, բոցեր գյուղե՛րը հասան,  
Անտառներու մեջ մայրերնիդ կ'որսան:  
Անպաշտպա՛ն, մերկ, ո՛ւր այսպես, որրիկ ջան...  
— Մո՛ւթն ինձ պատմունան...

Քեզ համար մարգերը գո՛ւթ, հա՛ց շունին,  
Ա՛յ որրիկ, շյո՛ւղ, իսկ չբկա թալունին,  
Մերեր սովահար կ'իջնան ժամե ժամ...  
— Արյուն կ'որոճամ...

Հայրըդ պատռտվա՛ծ նետեր են սարին.  
Նղնիկներու պես քույրերդ տարին.  
Աստվա՛ծդ իսկ մատրան մեջն է խոզխոզված...  
— Վրե՛ժն ինձ Աստված...

Գե՛հ, գնա՛, մեծցիր ահեղ որբն հայուն,  
Սնիր արյունով ու փսխե արյուն  
Մարդկության ճակտին, ու սարսափ ու հուր...  
— Այդ՝ պարտքս է տըխուր...

Գ.

ՎԵՐՋԻՆ ՕՐՈՐ

Օրո՛ր, օրո՛ր... Օրո՛ր ըսեմ՝ քնանաս,  
Վիրավոր հորըդ ճիշերն ա՛լ չիմանաս,  
Միժես ծըծածըդ թույն է... կաթ չի գիտնաս...  
Օրո՛ր ըսեմ՝ քնանաս:

Արյուն-հեղեղ հորդեց այս սուրբ ձորերե,  
Բայց չի փախի՛ս, փարե՛ երկրիդ, զայն սիրե՛  
Հողիդ վրա գերի մ՛ըլլար, այլ տիրե՛...  
Օրո՛ր ըսեմ՝ քնանաս:

Հորըդ վըրա եթե անշո՛ւնչ չինկա ես,  
Զի ուխտեցի՛ Հոռմի էգ գայլին պես,  
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքես...  
Օրո՛ր ըսեմ՝ քնանաս:

Բազուկներուս՝ պարա՛ն, ոտքիս ալ կացի՛ն,  
Ստինքիս զո՛ւյգ պտուկներն, ա՛լ կտրեցին:  
Վերքես արյունըս ծծե, որդյակ միածին...  
Օրո՛ր ըսեմ՝ քնանաս:

Ահա կ'իյնամ... Հայաստանը մա՛յր քեզի,  
Կտակ կուտամ այս կտորած սուրն երկսայրի՛  
Ուր հայրիկիդ դեռ տաք արյունը կ'այրի...  
Օրո՛ր ըսեմ՝ քնանաս:

ԽԱՊՐԻԿ

Հովերն ի՞նչ ըսին քեզի, ո՛վ ճամբորդ,  
Որ հեռվեն կուգաս, հեռվե՛ն արփավետ.  
Այն հեռվեն կուգաս, ուր աչքերես հո՛րդ  
Արցունք է ինկեր սրտիս արյան հետ...

Հովերն ի՞նչ խապրիկ, հողերն ի՞նչ եղեռն  
Պատմեցին քեզի, ո՛վ ճամբորդ ընկեր,  
Այն հովերն հեռվի, այն հեռվի տեղերն  
Ուր ամեն քայլիս արցունք մ'է ինկեր...

Հովերն ի՞նչ ըսին, հողե՛րն ինչ ըսին,  
Անո՛նք կը ճանչնան միայն իմ հոգիս,  
Այդ սուրբ տեղերուն վրա, լուսնակ լույսին,  
Արցունք մ'է ինկեր իմ ամեն քայլիս...

Այն մեծ, գորշ թռչունն որ համակորերն  
Կը դադրեցրենք ողբիս՝ իր երգեր,  
Հոն չէ, գաղթա՛ծ է անշուշտ այն երկրեն  
Ուր ամեն քայլիս արցունք մ'է ինկեր...

Ու առվակն ալ որ հոն կը խոխոջե,  
Իմ առվակս չէ՛, նույն երգը չերգեր,  
Ան ծո՛վ թափվեցավ. այն նո՛ւյն ջուրը չէ՛  
Ուր ջուրերու պես արցունքս է ինկեր...

Խամբա՛ծ են անշուշտ սեզեր ալ դալար,  
Ուր կը խեղդեի ողբերըս կերկեր,  
Նոր ծլած մարգերն ինձ չե՛ն, չե՛ն ճանչնար,  
Ո՛ր տեղին վրա ո՛ր արցունքս է ինկեր...

Բայց հողն ինչ ըսավ. այն որ մայրաբար  
Մշքիս ցողին հետ ծծեց իմ հոգին,  
Ան զիս կը ճանչնա՛ր. ծաղիկ մը նիհար  
Զըսա՛վ թե ինք ծիլն է իմ արցունքին...

Ու հո՞վն ինչ ըսավ. ան զիս կը թովեր.  
Լո՛ւտ խապրիկներով ամեն իրիկուն,  
Ինձ սիրեկանիս սիրտը կը գովեր,  
Կը շորեցրենք թա՛ց աչքերըս անքուն...

Զա՛ր հովիկ, սրտիս միա՛կ լրաբեր,  
Գիտնալո՞վ, գութո՞վ կը խաբեիր զիս,



Գնա՛, ըսել իրեն թե՛ Հնու՛՛ս ափեր,  
Կը փախչի՛ մ իրմե՛՛ն՝ համբնն արցունքիս...

... Հովերն ի՛նչ ըսին քեզի, ով համարոյր,  
Որ հեովեն կուգաս, հեովեն սրզավետ.  
Այն հեովեն կուգաս՝ ուր աչքերես հո՛րք  
Արցունք է ինկեր, սրտիս արյամն հնու...՝

### ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ

Ս. Սոք. Իսրեան բառաստեղծի

«Յարիճան, հա՛յ, հո՛յ, հա՛յ Աստուած չիկա.  
«Յարիճան, հա՛յ, հե՛յ, հայություն չիկա.  
«Հեռու յարերուն սրտիկը խոսի...»  
— Երջանակ կազմած բոլորն ուս ուսի՛,  
Հա՛յ, հե՛յ, սիրա սրտի կը պարե՛ն, կ'երգե՛ն,  
Մերունի՛, աղա՛, հա՛յ, հե՛յ, իրենք են,  
Պանդո՛ւխտ Հայերը...

Ո՛չ մարդ, ո՛չ բանվոր, հասարակ գրա՛ստ,  
Կք ճոճեն մարմինն, ու մուճակնին հաստ  
Կը ծեծե օտար երկրին հողը տար:  
«Ափ մը հայրենի հող ո՛վ պիտի տար,  
«Հա՛յ, հո՛յ, Հայաստան, քու հողդ է հալա՛լ...»:  
Կ'երգեն պարելով, բայց կ'ուզեն լա՛լ  
Թշվա՛ռ Հայերը...

Հարս ունինք, մեզի հարսնեվոր չիկա...  
Սուզ ունինք, մեզի սզավոր չիկա...  
Ո՛ր մեղքին համար, ո՛վ է անիծեր  
Հինգ հազար տարվան այս խե՛ղճ ազգը ծեր...  
Չո՛րս միլիոնին մեկ ապաստան չիկա,  
«Յարիճան, հա՛յ կա. հայություն չիկա...»  
Կ'երգեն Հայերը...»

Քառն առին, դազաղ մը տվին հայուն.  
Մեր փառքն անցավոր, Մա՛հն է կայուն...  
— Արշա՛կ մեծ, որու բանակն ահագին  
Տեղով կը ծածկեր փառքն արեգակին  
Ոտնակոխ կորած գերեզմանեղ դուն  
Գլո՛ւխդ վերցնեիր, տեսնեիր՝ ր անտուն,  
Անտե՛ր հայերը...

Հայրենի՛ք, ո՛ւր են ազգիդ ախոյան...  
Անմահ Պապիլոն լոց հավիտյա՛ն.  
Աթենքեն՝ ալե՛ր, Մեմփիսեն՝ ալա՛զ,  
Հոովմեն՝ ափ մ'աճյո՛ւն մնաց հազիվհազ...  
«Մահերու վրա Դուն դեռ կ'իշխես, աղե՛»,  
Բայց քո հոգեվարժդ որքա՛ն դանդաղ է...»  
Կուլա՛ն Հայերը...

Յարիճա՛ն, հա՛յ, հո՛յ, կ'երգեն միաշունչ:  
— Պարագլուխն է ծե՛ր պանդուխտ մ'անշշունչ...՝  
Քանինե՛ր այսպես պարել է տվեր,  
Քանի՛ տարի է, քամինե՛ր մեռեր...  
Հոգնե՛ր է ալ, վա՛ղն իր կարգն է գուցե...  
Մեր կինը հոն չէ, որ աչքը գոցե...  
Ա՛խ, խեղճ Հայերը...

Պանդուխտի նկուղ-սրճարան մ'է ցա՛ծ.  
Կաղանդ գիշերով Հայերն են լեցա՛ծ.  
Փայտի այդ երկար տախտերուն վրա ծեր  
Իրենցմե քանի՛ն ծներ է, մեծցե՛ր...  
Ու հիմա, հա՛յ, հո՛յ, կը պարեն, կ'երգեն...  
Օտարն արցունքով կը նայի փեղկեն,  
Կ'ըսե՛՛ «Հայե՛րը»...

Օտա՛ր, տեսա՛ր դուն գաղտնիքով լեցո՛ւն  
Ու տար աշխարհի բույրերո՛վ օժոճն  
Նավե՛րը հսկա, սև՛ նավերը մեծ,  
Որ հազա՛ր, հազա՛ր, հազա՛ր դառնահեծ՝  
Հոգով ծանրածանր, կը կտրեին ծո՛վ,  
Թափելու ափե՛՛ն ափ, լո՛ւտ թախիծով  
Փախչող Հայերը:

Տեսա՞ր դուն մեռած դյուղերն անխռով,  
Հյուղերը փլած՝ կարմիր պատերով,  
Հողմաղացքներ լո՛ւտ թևերով կոտրած,  
Ծերուկ դիակներ սարին վրա կորած,  
Մատուռներին ավե՛ր՝ զրկված խունկե...  
Ա՛խ, հո՛ն է, հո՛ն մեր հայրենիքն, հոնկե՛  
Կուզան Հայերը...

Օտա՛ր, տեսա՞ր դուն աղբյուրները զո՛վ,  
Գեղջուկ այգիները գա՛ղջ ողկույզով...  
Դեռ կը մխա՞ ցած տանիքն հայրենի.  
Դեռ կը ծաղկի՞ հոն թուփը վարդենի.  
Դեռ կ'երգե՞ այդ հի՛ն պլպուլը ցայգին...  
Հո՛ն, հո՛ն կ'երազեն, կուլան տխրագին  
Աքսոր Հայերը...

Ա՛խ, ո՞ւր է հովվին սրինգը բարի,  
Ո՞ւր են տուն-տանի՞ք, օճա՛խ խանդակաթ...  
Հո՛ս ամեն ինչ քա՛ր է ածո՛ւխ, երկաթ...  
Ըսե՛ք մեր երկրի տանուտեր Հայուն  
Որ ծո՛ւխ կը շնչեն, կը թքենն արյո՛ւն  
Պանդուխտ Հայերը...

Այս զրահապատ երկրին մեջ օտար  
Խեղճ հայ ջահելին ով, ով պիտի տար  
Ավոտն հայկական, սյուքը Մասիսի  
Դարապատում մո՛ւթ բարբառն Արաքսի,  
Ու թուփերու մեջ իրիկվան պահուն  
Նազելի համբույրն երկշոտ հայուհո՛ւն...  
Ա՛խ, խեղճ Հայերը...

Անոնց կարավանն է երկրի գոտին՝  
Արարատեն մինչ Այրեցեալ-Գոտին...  
Նեղոսեն Հռենոս, Գանգեսեն Վոսփոր  
Կազմեր են սուգի մի հսկա թափոր...  
Ուրալեն մինչ Ալբ, ու մինչ Ափրիկե,  
Իրե՛նք, իրե՛նք են... Թող Աստվա՛ծ փրկե  
Անտե՛ր Հայերը...

Մի՛ դպիր անոնց հոգվույն փյուցո՛ւն.  
Անոնք կ'անցնին լո՛ւտ գաղտնիքով լեցո՛ւն.  
Անոնք գիտեն բյո՛ւր պատմություններ մոլթ  
Անո՛նց, որ կորան արյան մեջ տղմո՛ւտ,  
Կախաղաններու քաջե՛ր համորեն...  
— Հազա՛ր մահով ծանր՝ Կենդանի-Մա՛հն են  
Ապրող Հայերը...

Յարիճա՛ն, հա՛յ, հո՛յ... — Սակա՛յն ծերունի  
Պանդուխտն հոգններ է. վա՛ղը պիտ'մեռնի...  
Որդին երկիր է զրկեր կովելու.  
Վաղն ա՛ն ալ պիտի խողխողվի, հլո՛ւ...  
— Ու, վա՛խ, մի՛ առ մի այսպե՛ս պիտ կորչի՛ն  
Դյուցազուններու ցեղի մը վերջի՛ն,  
Վերջի՛ն Հայերը...

Ո՛չ, ո՛չ: Արշալույսն իրենց պիտի գա...  
Ու եթե՛ չի գա ավոտն ապագա՝  
Պի՛տ կովին: Մինչ ե՛րբ... Մինչև հավիտյա՛ն:  
Ու երբ դեռ երկրի վրա Ազատության  
Համար մեռնին ա՛փ մը մարդեր շնչի՛ն,  
Անոնք պիտ' ըլլան Մարդկության վերջի՛ն,  
Վերջին Հայերը...

## ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞վ կուլա այսպես խշտյակիս շեմքին.  
— Քո՛ւյր, դարիքն է, բա՛ց...

Կմա՛խք մը կ'անցնի դուրսեն լալագին.  
— Սովն է, դուռըդ բա՛ց...

Տապա՞րն է ջախջախ դռանըս կուրծքին.  
— Զա՛րդն է, դուռըդ բա՛ց...

# Ք Ա Ո Ս Ը

## Դ Ր Ա Մ Ի Ն Ա Ղ Ո Ւ Ք Ը

Խեղճերուն

Հողագործտիս կեղևին վրա տրտմածին  
Թափառահաճ իմ ոտքերս քալեցին՝  
Նղբայրութեան տաքուկ շունչը փնտրելին,  
Ու ամեն տեր իմ հեք աչքերբս լային  
Տեսան փարթամ մեծատունին զըբան քով  
Աղքատ մայր մը՝ որ կը սպասեր արցունքով:

Ո՞վ ես, ուրեմն, թշվառութեան գու գործի՝  
Դրրամ՝ որուն լուռ ցուլին մեջ կ'արծարծի  
Ճակատագիրը տառապող մարդկութեան:  
Ըսե՛, քու կամքդ պիտի իշխե հավիտյան,  
Ու պատմե ինձ, պիտի ըլլա՞ն միշտ, ավա՛ղ,  
Ըզքեզ լալով մեռնողները անսըվաղ:

Մարդն, առաջին այն մարդը, որ տենչավար  
Պեղեց, խուզեց հողին արգանդը խաւճար,  
Ու շարանենդ թաքստոցեդ դարավոր  
Խըլեց դքեզ, հղկեց, մաքրեց փառավոր,  
Այն մարդը, վա՛խ, ժանա ցուլերուդ մեջ ժպտուն,  
Զընշմարե՞ց տխուր անկումը Մարդուն:

Տառապանքի, անհուսութեան որբեր խուլ  
Կը խեղդըվին քար պատերու տակ խարխուլ,

Սովալըլուկ բյուր թշվառներ տրտմորեն  
Իրենց նիհար ձեռքերը քեզ կ'երկարեն,  
Ու տենդահար, փողոցին վրա, ամեն դի  
Քանի՛ փոքրեր կան՝ մայրազուրկ, անոթի:

Իշի՛ր, իշի՛ր խոնարհորեն, մեղմորեն,  
Իշի՛ր ոսկի սանդուխներուդ մատներեն՝  
Թշվառութեան խշտյակներուն մեջ խոնավ,  
Ուր քու ցուլքերդ նըշուլած չեն բընավ.  
Ցամբած շյուղեր բոլորը քեզ կը դառնան.  
Իշի՛ր, իշի՛ր անձրևներու պէս գարնան...

ՄԱՐԴԵՐԳՈՒԹՅՈՒՆ

(պոեմ)

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՋ

(Մտունդը)

Ա

Անցյալ տարի էր: Հոգնած ապաքեն  
 Շատ քաղաքակիրթ այս Արևմուտքեն՝  
 Ուր խիղճը բառ մ'է, մարդը՝ մեքենա,  
 Աշխարհ գործարան մ'անխոնջ, անխընա,  
 Սերը հաշիվ մ'է. կրոնքը՝ դրամ.  
 Երջանկությունը՝ ձանձրալի մի տոամ.  
 Մահն՝ անմտություն. կյանքն՝ անհաշտ կոփւ.  
 Ուր ժամանակն իսկ վատ մ'է ալիսոփիվ  
 Որ ամեն բոպեն իր մանրակրկիտ  
 Մուրճի հարվածով կը զարնե մտքիդ...  
 Այսպե՛ս, հե ի հե՛, հոգնա՛ծ, հուսահա՛տ,  
 Անմի՛տ այս վազքեն անդո՛ւլ, անընդհա՛տ,  
 Կարոտն ունեցա հին հին դարերու.  
 Եվ հիվանդ հոգիս տարի ես հեռո՛ւ,  
 Հեռո՛ւ, խնկավետ, լո՛ւտ, մշտնջենի՛,  
 Արի՛ելքի իմ գյուղըս հայրենի...  
 Բ

Բ

Կիրակի մըն էր. քայլերս ուղղեցի  
 Իմ ալևոր մորս հետ եկեղեցի:  
 — Պիտի ծիծաղի՞ք, կարծրացած սրտեր.  
 Կարդացիք Լյուքրես, էպիկուր, Վոլթեր,  
 Մի քանի ուրիշ մութ գիրքեր ալ դեռ,  
 Բայց անհավատի այդ տժգույն թուղթեր  
 Իրավունք չեն տար որ ամբարտավան  
 Չեր թույնը փշեք՝ կըրոնադավան

Հոգվույն ալևոր մոր մը ծերունի,  
 Որ ապրելու դեռ հազիվ օր մ'ունի,  
 Որ ծովուն վրա շյուղի մը նման,  
 Մեկ ոտքը մատուռ, մյուսը՝ գերեզման,  
 Գերագույն, անհաս, անսկիզբ, բարի,  
 Մթին Աստուծո մ'անվան կը փարի.  
 Ու անիրավվա՛ծ, տառապա՛ծ, հուսա՛,  
 Մեծ Արդարության վճռին կը հուսա...  
 Գ

Գ

Ու դո՛ւք, ո՛վ Հորաս, Զինոն ու Վոլթեր,  
 Ինչ որ ալ ըլլաք՝ երեկինն եք՝ դեռ.  
 Մինչ հիսուն հազար այս տարի է որ  
 Անդու կը դառնա աշխարհն ալևոր՝  
 Հավատացեր են մարդերը բոլոր:  
 — Բարե՛, հակառակ հավատքիս մոլոր,  
 Մաղրել չի գիտցա՛վ բնավ իմ հոգին  
 Տաճա՛ր մ'ըլլա այն, հեթանոս բազին,  
 Քար-քար ավերակ սյուներ Քառնաքին,  
 Հըրապաշտ Պարսիկ բըլուր բոցազին,  
 Բոցը Սիպիլի, Հնդիկ էլլորան,  
 Ասորյան հարյուր-զոհյան մին խորան,  
 Կամ Քրիստոնյա պերճ եկեղեցին...  
 Հոն մարդերը Մեծ-Հույսը դարբնեցին...  
 Ու հոն — գլխարկնիդ բացեք՝ վեհերուն—  
 Գերեզմաննոցն է կենդանիներուն...  
 Դ

Դ

Եկեղեցվույն մեջ մտա լռելյայն:  
 Շենքը փոքրիկ էր, բայց բավական լա՛յն՝  
 Աստվածն ու դարե՛րը ամփոփելու...  
 Քար քարի վրա. ծնեք էր, հըլո՛ւ,  
 Առանց արվեստի, առանց մեծ ոճի,  
 Պարզ, ինչպես ծառ մը որ հողեն կ'աճի,  
 Ու քար, ու բազմոց, ու կերոն, ու խաչ,  
 Ե

Հոն, հին դարերու բույրն ունին գաղջ...

Ու առաստաղի աղքատ ջահերեն

Կախված՝ ժամանակը մեռերսրեն

Կը ննջեր աեշա՛րժ, դարձ՛ր քնեած,

Քշոցին ձայնն երբեմքն շոյված...

Հոն ո՛չ հեք, ո՛չ վազք, ո՛չ ժամ, ո՛չ վայրժյան,

Անսահման, անխոռ՛վ, անժա՛լ, հափիտյա՛ն:

Չորս պատերու մեջ՝ Անհո՛ւն մը խորին,

Ուր մեր գեղջուկներ մեռնի՛լ կը սորվին...

Ե

Բայց բացառիկ տան մ'էր այդ կիրակին.

Կնո՛ւնքն էր զոչի նորեկ որդյակին,

Ինչ որ գյուղին նույնքան է կարևոր,

Որքան Մնունդի տոնը դարավոր

Նազարեթի հին քաղաքացիին:

Ուստի ծեր, մանուկ, հավաքված էին

Ու քահանան այդ մե՛ծ օրվան համար,

Պատրաստեր էր փոքր քարոզ մը հարմար:

Պերճ խոսքի տաղանդ շուներ բնածին,

Բայց զայն ընտրեր էր Հովիվ՝ գյուղացին,

Ձի հասակով բարձր էր, վարքով արդար,

Հայերեն գիտեր, նույնիսկ կը կարդար:

Կյանքի պայքարեն հոգնած հյուան մը հեզ,

— Կույս Մարիամին կո՛ւյս նշանածին պեա—

Այնքան վալլեր էր մորուքն ու շուրջառ,

Որ կարծես ան այնպես ծնած ըլլար...

Զ

Զույգ կերտնի մեջ՝ կը խոսեր քնմեն,

Ու կ'ունկնդրեին գեղջուկներն առեն,

Խո՛ր երանությամբ սուզված անհրնար.

— Թեև հայերեն մա՛րդ չի հասկնար...

Հին Աճեցառու՛մն առած բնաբան,

Կը գտներ Տեր-Հայրը շատ բնական

Որ տղերք աշխարհ գան անհամար — լուրջ —

Ինչպես բյուր շյուղեր ձիթեհիին շուրջ:

Հանկարծ շրացին ալքերս քնեա՛ծ,

Նարուհոնին տնունն էր տված:

Նաբուլեոն... Ի՛նչ քասս անհատակ՝

Աշխարհքնն քշված արբ մատուռն տակ:

Չէ՞ որ ըսեր է այդ մարդն անագին,

«Մայրե՛ր, զազակներ՛ր շինեցեք ազգին...»:

— Ա՛խ, զո՛րք էր պետք այդ ամբարտավանին՝

Որ թնդածոթներ գյուղն գյուղ տանին...

Է

Պատարագեն վերջ, քով քովի անձայն,

Երկու թափորներ իրար քսվեցան:

Ան չէր դասական հանդիպումը հին՝

Կնունքի թափորն՝ Մահվան թափորին.—

Մեկ կողմ ծնո՛ւնդ, խի՛նդ, մյուս կողմ մա՛հ ու լալ.

Ու եկեղեցին կ'օրհնե երկո՛ւքն ալ...

Ո՛չ: Երկու թափոր, երկո՛ւքն ալ ժպտուն.

Մե՛կը նորածին որդին մեծատուն,

Մյո՛ւսը աղքատի ծնունդը անտուն.

Մե՛կը բեհեզով քնած, մյուսն արթուն.

Մեկուն ժանյակներ, մետաքսի հյուսկեն,

Մյուսին ձորձ մը խեղճ՝ հորը շապիկեն.

Առաջնույն ոսկի, ժանյակ բյուր տեսակ,

Երկրորդին ճակատին փուշի սև պսակ.

Մեկը Տե՛ր արդեն, մյուսը գրա՛ստ:

Ճակատագի՛ր, վա՛խ, տղաքները փաստ...

Ը

Բայց այս ի՛նչ արդար օրենք մ'է խորին

Որ հզիացա՛ծ, ճո՛խ Մեծերը երկրին

Իրե՛նց արգանդին մեջ կը հարվածե:

Հավասարության խո՛ւ պեաք մ'է գուցե,

Որ վրիժաժընունդ սերմերը Մեծին  
Ի՛ր որովայնին իսկ գո՛գը հյուծին,  
Որ հաշիվներե վերջ, երբ ի հարկե  
Ոսկին ա՛լ պատրաստ է, հա՛յրը գրկե,  
Խանձարուրներու մեջ մետաքս գեղերփի,  
Անժպի՛տ, տժգո՛ւյն հրեշ մը մարդակերպ...  
Մինչ քանի՛ թշվառ խեղճեր է՛գ, արո՛ւ,  
Որ հեղակարծ սեր մ՛ունին իրարու,  
Կայծակներու պես իրարո՛ւ կուգան,  
Առանց հաշվելու վաղն ու ապագան,  
Ու կ՛երկնեն—խորշի մը մեջ անձանոթ—  
Ի՛նչ հսկա կյանքեր, անեծքի անոթ...

Թ

Ապշա՛ծ, սարսափած խորհեցա անխոս,  
Սպարթական հի՛ն բարքին բարբարոս,  
Որ խեղդելի վերջ կը հանձներ գետին  
Մարդկային տժգույն տգրուկներն հետին...  
Բայց քառսուն դարեր անցեր են արդեն,  
Ու սովրեցանք որ հրեշներն ալ մարդ են.  
Անոնք ալ ունին զգացո՛ւմ, հոգի՛,  
Անո՛նք ալ ունին իրավունք կյանքի,  
— Հոգ չէ թե ապրին բյուրերու մահով...  
Չե՛մ համարձակիր վերցնել մեկդի,  
Կարմիր-վարագույրու որ օրենք կ՛ըսվի,  
Դիտելու ըմբոստ այն կյանքե՛րն հսկա,  
Որ բանտերու մեջ, կառափնատի վրա,  
Կախաղաններո՛վ մեռան անհամար,  
«Կյանքի իրավո՛ւնք»... պոռալնուն համար:

Փ

Երկուքն ալ երկա՛ր, երկա՛ր դիտեցի:  
Այլևս բնա՛վ մի խոսիք ինձի  
Արժանիքին վրա, ու տարբերության,  
Ու ազնվական զարմին վրա արյան:

Ահա երկուքն ալ. անկերպ բղեզներ.  
Շյուղ մը իսկ զիրենք պիտի մեռցնեն:  
Կուզեն անուն տալ. ի՛նչ պետք անունի...  
Յուրաքանչյուրն ալ իր անունն ունի.  
Մին Ո՛ւյժն է անգութ, մյուսն Ստրկությո՛ւն:  
Ույժ շունի, կ՛ըսեք, խլեզն անարյուն.  
Ի՛նչ պետք արյունի — անհագ բորենի՛,  
Հացի մը փոխան. կարմիր, ծիրանի,  
Ան պիտի ծրծի արյունը մյուսին,  
Ու պիտի մըխե ժանիքն իր միսին.  
— Օրե՛նքը՝ իրեն անբույթ օթևան:  
Ողջունեցեք զայն, Իշխանն է վաղվան...

ԺԱ

Մնրադրած դողդոջ, աչքերըս ձեռքիս,  
Կուրծքիս տակ զսպել կուզեի հոգիս:  
Հազա՛ր նկարներ կ՛անցնեին մտքես:  
Արյան շոգվույն պես, նոճիներու պես  
Բյո՛ւր կախաղաններ անգութ մեծերու...  
Ու հրդեհներու մեջ հեռվե հեռու,  
Ստրուկներու կո՛ւտ, բարբարո՛ւ՝ զունտեր,  
Որ տաճա՛ր, աստվա՛ծ, կո՛ւտք, իշխա՛ն ու տե՛ր,  
Տապալելով վար, կ՛երթային հեռո՛ւ  
Հավասարության սե՛րմը ցանելու,  
Ու լա՛յն բաշխելու Արդարությո՛ւն, Հա՛ց...  
Այտիս վրա հրաշեկ արցունք մը դողաց.  
Աչքերըս բացի, տեսիլք էր միայն.  
Ամենքն ալ գացա՛ծ, ժամն էր լռելյայն...  
Ու ես ալ գացի՛ իմ սուգիս դարման՝  
Հավասարության դաշտը — գերեզման...

(Կյանք)

Ա

Եկեղեցիին մինչև գերեզման  
 Տանող ճամբուն վրա, քարի մը վրան,  
 նստեցա տրտում, ու լո՛ւտ դիտեցի  
 — Հոգվույս ծարավու՛ վը արևելքցի —  
 Հեռուներն հանդա՛րտ, հեռուները լա՛յն,  
 Հեռուները ջի՛նջ, միսթի՛ք, լոնյա՛յն:  
 Հո՛ն երկինքներու տակ հավետ ծավի՛ր.  
 Առա՛նց ժպտի ու առա՛նց ցավի,  
 Կ՛ապրեին մարդե՛ր, մըջլուննե՛ր, բույսե՛ք...  
 Հոն շէին ճանչնար ո՛չ կոխվ, ո՛չ սեր:  
 Հոն Անշարժության օրենքին հըլու,  
 Առանց աճելու, առանց նվազելու,  
 Հազար գարեբու ու անհուններու  
 Մտերմության մեջ կ՛ապրեին, — հեռու՛.  
 Սե՛գ Արևմուտքեն ու հեզնելով դա՛յն...  
 Հեռուները ջի՛նջ, միսթի՛ք, լոնյա՛յն...

Բ

Ու հո՛ն, անուրջի մը մեջ անսահման,  
 Երկիրը իբրև անհո՛ւմ խնկաման,  
 Իր ճանձրույթը — լայն ազոթքի մը պես —  
 Անշտա՛պ, անխոռ՛վ կը մխար կարծես...  
 Ու հո՛ն, հեռավոր հորիզոններու  
 Անծալ երկինքները հեռվե հեռու,  
 Կը տեղային վար՝ օրհնության մը պես՝  
 Ոսկեփողի լայն անձրև մը կարծես...  
 Ու հոն արևուն գունտին մեջ անշեջ,  
 Ու ծածա՛ն-ծածա՛ն ցորեններուն մեջ,  
 Ու խրճիթներու բույնին մեջ համակ,  
 Ավերակե՛րու սուգին մեջ ճերմակ,

Բա՛ն մը կար Կյանքեն անշառ, Կյանքեն վե՛ր,  
 Բա՛ն մը որ Կյանքեն բնա՛վ չէք ազդվեր,  
 Որ կը նմաներ Երեկին, Վաղվան...  
 Այդ՝ Մահվա՛ն իսկ մեջ ժխտումն էր Մահվան...

Գ

Ասոր համար երբ միտքն Արևմուտքին՝  
 Կյանք բառին առջևը զարմացագին  
 Հարցական նըշան մը կը դնե նեեզ...  
 Մենք կախման երեք կետեր կը դնենք...  
 Ու երբ կվազեն անոնք տեղագին,  
 Թըվանշաններով կը լուծեն հոգին,  
 Կը քննեն Երկինքն ու Աստվածը, մենք  
 Մեր կախման երեք կետը կ՛երազենք...  
 Ու երբ կը խրոխտան անոնք, մենք կուլանք,  
 Ա՛խ, որովհետև ինչ որ ալ ըլլանք,  
 Գլուխնիս երկինք, ոտքերնուս տակ հող,  
 Այգին ու ցայգին միջև տատանող  
 Սրորոցներ ենք... Ու ինչ որ անշե՛ջ  
 է, պիտի շիջի շիրմին մութին մեջ...  
 — Էացը վերհիշում մըն է լոնյայն,  
 Թե ինչ ալ ըլլանք, մարդեր ենք միտ՛յն...

Դ

Այսպես ապրեցան, ու այսպես կ՛ապրին  
 Բոլո՛ր որդիները Արևելքին:  
 Ետնկի՛, կնդրուկի՛ ծոցը լուսկյաց,  
 Իրենց հոգիին անծանոթ մընաց  
 Պոռոտ գիտությանց շեփորը սոփեստ,  
 Ու սուտ փառքերու ծածկույթն հաստաբեստ...  
 Անոնք ստացան, առա՛նց ուզելու...  
 Ու Կյանքեն անցան՝ առանց հուզելու  
 Անոր մութ հատակը աչքե անտես,  
 — Մովուն վրա սահող լո՛ւտ թևակին պես...  
 Անոնք գինովցան, առանց քննելու...

Ու լացի՛ն՝ սրտի պետքի մը հլո՛ւ...  
Անոնք խոկացին Եղեմն. ու ծնան  
Անէութեան մեծ հսկան—Նիրվանան,  
Ու երազատես Նազովրեցիէն հեզ...  
— Ու երկունքը հեշտ էր Մահվան մը պես...

Ն

Անոնք նայեցան հեռվե՛ն՝ մարդկային  
Հառաջադիմութեան կուռ մեքենային,  
Ինչպես անտառին ծոցը ամայի,  
Ծերունի եղնիկն հանդարտ կը նայի  
Տքացո՞ղ, շաշո՞ղ սև շոգեկառքին՝  
Լայն «Ինչո՞ւ համար» մը զարմացագին  
Թարթիւով աչքին մեջ երազահալ...  
— Ինչո՞ւ շտապիլ. չէ՞ որ ամե՛նքս ալ,  
Ոմանք հե ի հե, ու ոմանք դանդաղ,  
Անվրի՛պորեն պիտի հասնեինք Մահ...  
Կյանքն է այս, միշտ սուտ սուտի ետեւ.  
Մեկը հազի՛վ թե մյուսին շափ տեւ...  
Շառաչող ծովուն ալիքներուն պես,  
Կը ծնինք ամենքս, կը բարձրանանք վաս,  
Բայց հազի՛վ ատեն մը կա փրփրելո՛ւ...  
Պետք է կորսվիլ. կորսը վի՛նք հլո՛ւ...

Չ

Ու այսպե՛ս պիտի կորչի ամեն բան...  
— Ժայռին վրա նստած՝ դիտեցի ճամբան,  
Դեղին Փոշիի հուսահատ ճամբան,  
Խո՛ւ «Երեկ»-ներու պատմի՛չը անբան...  
Ա՛խ, այդ գալարվո՞ղ, շի հատնո՞ղ, խոպա՛ն,  
Արևուն ծագեն ի մուտքն՝ անխափա՛ն  
Երկարող վտի՛տ, բարեկամ ճամբան,  
Մընող Մարդկութեան առաջին օրրա՛ն,  
Որուն ապալեր իրանին վըրան,  
Հիմալայայի սարեն մինչ իրան,

Ու Արարատեն մինչև Վոսփորոս,  
Մի՛նչև Դանուբի ակերն մշտահո՞ս.  
Ու մինչև շորս ծագը Արևմտյան,  
Գացին առաջին հայերն Մարդկութեան,  
Այրող Արևուն գունտին տակ, խաղա՞ղ,  
Ճոացընելո՞վ կառքերնին դանդա՞ղ...

Է

Առաջին անգամ ըլլալով հառա՛չ  
Մը արձակեցի այդ ճամբուն առաջ...  
Սոսկա՛ցի իրմեն. ու ափ մը փոշի  
Առի, մարդու մը նըման որ կ'ապշի...  
Բայց ի՛նչ կիկլոպներ, իբրև թե անշե՛ջ  
Ի՛նչ ազգեր, կյանքե՛ր այդ փոշիին մեջ,  
Ի՛նչ արյան լիճեր, քանի՛ ոսկորներ  
Դարերու մեջ հոն փոշի են դարձեր...  
— Դիտեցի ուշով. զի՛ս ճանչցա հոն շուտ.—  
Նախ քարայրներու բնակիչ մազուտ,  
Հետո ասպաղեն նետածի՛ց մը սեզ,  
Հետո թագավոր մը — եթե կ'ուզեք,  
Հետո ածիլած գլխով մեկ գերի,  
Հետո թրուպատոր մ'որ կը դեգերի...  
Ու հիմա տժգույն խե՛ղճ մը դող ի դող,  
Ո՛չ մարդ, ո՛չ աստված, ու ո՛չ իսկ քերթող...

Ը

Հոն ճանչցա նաև ծեր Սողոմոնին  
Հալվե բեռը ված կարավաններն հին...  
Գանգեսն բույրի, թանկագին քարի,  
Ու Կարմիր ծովեն ալ ամեն տարի  
Ուղտերով կրված պերճանքները բուստ,  
Դամասկի մետաքս բեհեզն ալ հազուստ,  
Արքաներու ձոն՝ Քլեոբարային...  
Ու վերապրեցա հոն եղեմային



Ու գինովցընող հըրաշքը շքնաղ  
Շամիրամին պերճ պարտեզին առկաթ...  
Հո՛ն. այդ փոշիին մեջ խոսեցուցի  
Տարաբախտ Անդուանն Հոովմայեցի  
Որ վահանն իբեն ծախեց Տոփանքին...  
Հո՛ն, խոսեցուցի նաև տխրագին  
Ժողովուրդներ որ մեռա՛ն անհամար:  
Չեմ գիտեր, ո՛ր մեկ Արքային համար...

Ք

... Հանկարծ ծանր՛ր թև մը զարկավ ուսիս:  
Հին երազներն արթնցավ հոգիս.  
Ու տեսավ տարեց մշակ մը տժգույն:  
— «Ո՞վ ես գուն»։ — «Անունս է Աշխատութուն...»:  
— «Ի՞նչ կ'ընես այսպես»։ — «Կը մտրամ...» հեծձեց.  
Ու լո՛ւտ հեռացավ, մինչ ես դառնահեծ  
Գացի հետեեն մինչև իրեն տուն...  
Գետնի անկողնի մը վըրա, արթո՛ւն  
Երկարած նիհա՛ր իր կիներն հոգեվար,  
Մեծված անասնի մը պես կը հեար...  
Ու մինչ գնաց հինգ խլեզներն մին,  
Աթոռի մը պես բա՛ն մը ճարելու հին,  
— «Հաց չի կա, կ'ըսեր հայրիկը ինձի.  
Մի քանի օր է չեմ երթար գործի,  
Կը տեսնես, վերջին օրերն են գուցե...  
Առանց ինձ, աչքերն ո՞վ պիտի գոցե...»

ժ

Ու կինը բարի կը նայեր իրեն,  
Ինչպես կը նայի մարդ անասնորե՛ն  
Իրեն Աստծուն... Ախ, որովհետև  
Իր կենակցության ծամը կարճատև  
Միրալի՛ր եղավ. կռիվ շունեցան  
Ոչ դրամ օժիտի, ոչ ժառանգության...  
Ժըրաշան տիկին, միշտ իր հարկին տակ...

Թանը առատ էր, անկողինը տաք...  
Ու քիչ օրեն երբ Տիրոջ հրամանով,  
Հողին տակ պիտի թաղվե՛ր ապահով,  
Կը խրատեր էրկան՝ առնել գյուղակին  
Այսինչ ժրաշան աղջիկն իբրև կին,  
Որովհետև խեղճ կինը կը հուսար  
Թե՛ ան կը նայեր աչքով հավասար  
Թե՛ իր ամուսնույն, թե՛ իր խորթերուն  
Եվ թե՛ գամի իր փոքրիկ հորթերուն...

ԺԱ

Դուրս ելա տունեն, մարմինս փուշ-փուշ.  
Խորհեցա կյանքին իմաստին ապո՛ւշ,  
Թե ինչպե՛ս ստրուկ կիրքերու հըլո՛ւ,  
Մարդս ավելի՛ վարժ է մուրալու,  
Քան պապենական օրհնած դանակով,  
Քի՛չ մը վախցնել — գոնե՛ կատակով—  
Մեր ոսկեծուլլ նո՛ր Աստվածները կո՛վ...  
Խորհեցա թե Դրամ միապետին քով՝  
Ի՛նչ տժգույն ըմբիշ մ'է Աշխատութուն...  
Խորհեցա անգամ մըն ալ անարյուն  
Այն բո՛ւտ մը «Նաբին Վեմնությանց» վըրա՝  
Որոնց շնորհիվ երկիր կը դառնա...  
Խորհեցա Ուլժին վրա մըտովի,  
Ու այն հտպիտին որ օրենք կ'ըսվի...  
Ու գացի ես լուռ, իմ սուգիս դարմա՛ն,  
Հավասարության դաշտը — Գերեզմա՛ն...

ԳՏՈՂԱԿԱՆ ԳՆԵՋՄԱՆԱՏԱՆ ՄԵՋ

(Մանր)

Ա

Սկեպտիկ ժպիտով մը դանդաղագին  
Երբ մարդ ըմպած է մրո՛ւրը Կյանքին,  
Երբ ծառայած է կամքով կարողի՛  
Այն մեծ վարպետին օր Վիշտ կը գաղվի...

Ճանչցած է դողդոջ դշխույն որ Սերն է.  
Ազգաց, անհատին Պատմության դժնե  
Նայած է անգամ մը մյուս երեսին,  
Ճանչցած է մարդուն Գիտությունը սին,  
Արվեստն հավակնոտ, սիրտն ամբարտաւան.  
Սո՛ւզը Երեկին, երկյո՛ւղը Վաղվան...  
Ու ճշմարտության հոգին ծարավի՞  
Ջննած է երկնից պարպը ծավի.  
— Հի՛ն աստվածներու վիճն այն մշտակա,—  
Այդ մարդուն համար ուրիշ վայր չի կա՞  
Ավելի՞ քաղցրիկ հեշտանքով հըղի,  
Քան գերեզմաննոց մ'աղքատիկ գյուղի...

Բ

Լո՛ւռ նստած քարի մը վըրա տապան,  
Դիտեցի լո՛հն այդ վայրը խոպան,  
Ու զո՛ւր խորհեցա թե այս այն վա՛յրն է  
Ուր վաճառական Աստված մը դժնե  
Չարը կը պատժե անսահման վախով,  
Բարվուն շնորհելով դրախտ մ'ապահով...  
Ընկղմած ծոցն այդ Մահվան Քաղաքին,  
Չուր խորհեցա թե անմա՛հ էր հոգին...  
Անմա՛հ. բայց չէ՞ որ երկնից մեջ գարնան  
Բյուր գիսավորներ մոխիր կը դառնան.  
Աստղեր կը վառին, աստղեր կը սառչին.  
Կը լռե ցայգին պլպուլը վերջին,  
Բույս ու կենդանի կ'իյնան անկենդան.  
Ամեն, ամեն բան մահվան զոհ կ'երթան...  
Ու երկնքին հյուր՝ լոկ մա՛րդն է տըխուր...  
Անմա՛հ, մինչև ե՞րբ, և ինչպե՞ս, և ո՞ւր...

Գ

Բայց ուսկե՞ կուգա՞ այն Հույսը մարդուն,  
Որ մեծ ցայգին մեջ միայնա՛կ, արթուն  
Կ'ուզե հսկել՝ երբ իր ոսկորոտին  
Երկու ափ հողին ներքև կ'անհետին:

Ու ինչպես դիակը փտելի վերջ,  
Մարդ համառորե՛ն, Մահվա՛ն ծոցին մեջ,  
Անմահության Հո՛ւյս մըն է դիուցեր...  
— Անշո՛ւշտ սարերու երբ եղնիկը ծեր  
Կը նայի անդունդն ի վար անհատակ...  
Երբ գայլը փոքրիկ՝ մացառներու տակ՝  
Կը դիտե մա՛հն իր գնդակահար հոր...  
Երբ օվկիանին վրա անդնդախոր՝  
Շնագայլն հսկա՞ կը թավալի լո՛ւռ...  
Վերջալույսին դեմ Առյուծը տխուր՝  
Երբ կը մոնչե դաշտին մեջ խոպան...  
— Անմահությա՛ն վրա չէ՞ որ կը խոկան...

Դ

Նո՛ւյնիսկ Մարդուն մո՛ւթ նախահայրն Ադամ,  
Անդե՛ն, անպաշտպա՛ն այդ խեղճն հաշմանդամ,  
Նետված ուժերո՛ւ միջև ահագին,  
Շա՛տ քիչ հաշիվի կ'առներ իր հոգին,  
Երբ պտուղի՞ մը համար, անվեհե՛ր,  
Անմահութենն կը հրաժարեր...  
Բայց ահա անբա՛վ միջոց մ'է անցեր.  
Հիսուն ծանրածանր դարով՝ Մարդը ծե՛ր,  
Որ իր ուղեղին դրդումին հըլու,  
Հասեր է ամե՛ն ինչ գըրավելու,  
Ստրուկներ գտեր է անասնոց մեջ,  
Մնացածը զարկեր, հալածեր անվե՛րջ,  
Աստվածներ շիներ է նախ անհամար,  
Հետո ամե՛նքն ալ այրելու համար...  
Տիրե՛ր է Բնության Ույժին ահագին,  
Կը տենչա իշխել արդ ժամանակին...

Ե

Ա՛խ, անմա՛հ ըլլալ... Ապրի՛լ հավիտյան.  
Իսպա՛ռ շունենալ ո՛չ դար, ո՛չ վայրկյան.  
Ժամանակի՛ն պես, ժամանակին մեջ,  
Տքա՛լ, տառապի՛լ, բայց ապրի՛լ անվերջ...

Սիրտը արյունոտ, մարմինը հիվանդ,  
Հոգնարե՛կ, ի՛նչ փուլթ, ապրիլ մանավանդ...  
Շյուզ մ'ըլլալ մարգի, ի՛ր մը լռելյայն,  
Բայց հավիտենին մեջ ապրի՛լ միայն...  
Քար մ'ըլլալ անարգ, ապառաժ մ'անխոս,  
Գեթ նիհար առվակ մ'ըլլալ մշտահոս,  
Մա՛ն մը դարավոր, մետա՛ղ մը միայն  
Անմի՛տ, անզգա՛ւ. չի մեռնի՛լ սակայն...  
— Աստվածացյալդ Մա՛րդ, ամո՛թ քեզ, ամո՛թ,  
Մոռ, ամբարտավան, խրոխտությանց անո՛թ,  
Դեռ ամե՛ն գինով կը կառչիս հողին...  
Նայեիր աշնան տերեւին զեղին...

Զ

Ու երբ ըսեն թե գիտությունը նոր  
Յլրեց հի՛ն, փոշո՛տ գիրքերը բոլոր,  
Թե նյութ կա միայն, Հոգին չէ՛ անմահ,  
Հոգին չի կա իսկ.— Մի հավատաք, ա՛հ,  
Վճիտ մոմյաներն հին Եգիպտոսին,  
Դարերու գաղտնի՛քը թող ձեզի խոսին...  
Նայվածք մ'ուղղեցեք դեպի Պարթևներն,  
Նոր Անմահներն են որ կը խրոխտան հո՛ն:  
Ու է՛ն շոր գիտունն իսկ՝ կրոնքին օտար՝  
Քարե արձանի մը հոգին կուտար...  
Ա՛խ, կյանքի, մահվան կռիվն անզգամ...  
— Ու անշուշտ՝ մենե է՛ն խելոքն անզամ  
Երբ տեսներ Մահն որ պաշտոնին հըլո՛ւ  
Կուզար սիրելին մենե խլելու,  
Թե Աստվա՛ծ ըլլար ան, թե Սատանա,  
Շան մը պես պիտի խեղդեր անխընա...

Է

Շա՛ն մը պես... ա՛խ, շատ չի պիտի ըլլար...  
— Բարե՛, կը հիշեմ թե ինչպե՛ս կուլար,  
Ինչպե՛ս կը խաճներ սնար ու սավան,  
Ինչպե՛ս կը կանչեր արևը վազվան

Որ ա՛լ չի պիտի գար երեք իրեն.  
Ու ինչպե՛ս կ'ուզեր խելահողորեն  
Մարմինն անկողնեն քաշել անհընա՛ր,  
Ու ինչպե՛ս պատեն մագլիլ կը ջանա՛ր,  
Սարսափած աչքերն ուղղելով ինձի...  
— «Ծս եմ, բարեկա՛մդ, ավա՛ղ...» գողեցի,  
Բայց ան աչքերուս խրեց իր մատներ,  
Զի ես կ'ապրեի, մինչ ինք կը մեռներ...  
— Հասկըցա՛ւ, ընկեր, լեզուդ վերջնագույն:  
Բայց մահն փախչող վատ մ'էի տժգույն,  
Զի Սերն իսկ սո՛ւտ է, մարդերը մա՛րդ են...  
Ու մեր երկունքին մեջ մա՛հն էր արդեն...

Ը

Ինչպես նետահար թռչուն մ'որ հետին  
Ճիգերն իր կ'ընե կառչելու օդին...  
Մովամույնն ինչպես կը փարի վետ վե՛տ  
Խլլակի մը որ կ'ընկղմի իր հետ...  
Ինչպես սարի հեք արծիվն հոգեվար  
Կը կառչի ժայռին որ չի սահի վա՛ր...  
Այնպես մատներու ճիգովը հետին  
Կ'ուզեր բռնվիլ սնարին պատին...  
Անկողին գամված, փտիլ, ցավիլ, լալ,  
Դարերով, ի՛նչ լավ... Բայց մեռնի՛լ, ըրա՛ւ...  
Ահե՛ղ կը մղեր պայքարն անիրավ  
Երբ բերնեն արյան ուղիս մը զայն տարավ...  
Այդ շքեղ սրտեն, կյանքեն ի՛նչ մընաց.—  
— «Ծ՛Ս» կ'ըսե աճյունն,— «Ծ՛Ս» կ'ըսե Աստված:  
Ու ե՛ս, իր գեղջուկ քարին վրա կուզամ  
Հանգի զտրեկու տաղերս անզգամ...

Թ

Դիտեցի գողտրիկ այդ վայրը բողբոջ,  
Ու ես ակամա խորհեցա դողդոջ  
Մերուկ 'Իանթիի տհեղ դժոխքին,  
Աւ հիմար վազքի մը մեջ մոլեգին,

Այրող խավարին, փրփրող արյան մեջ,  
Երբ խնին բացած, անբարբա՛ռ, անվե՛բջ,  
Տժգույն հերոսներ պար կը դառնային...  
Խորհեցա նաև սեզ Սատանային,  
Զոր Միթոն, աչքով կույր, հոգով արթուն,  
Իշխա՛ն հռչակեց հաղթված Մարդուն,  
Որ երեքժանի ցուպով կ'զրոսներ  
Անհանգիստ ընել դատարկ գլուխներ...  
Զմոռցա նաև մտածել ահեղ  
Օրվան՝ երբ փողին ձայնեն խելահեղ,  
Կմախքներ երկի՛նք կը թռչին արդեն...  
— Ինչ որ քիչ մը շատ խնդրել է մարդեն...

Ժ

Մարդուն տանջրված խղճմտանքը վա՛տ  
Ի՛նչ մղձավանջներ երկնեց հուսահատ,  
Ի՛նչ սաղայելյան ցավեր անհամար,  
Ի՛նչ եղեմ՝ մեր գաղջ դիակին համար...  
— Հո՛ն, ոչի՛նչ կսո մութ, ոչի՛նչ կա դժնե:  
Ան դանդա՛ղ խաված պարապ գավաթն է,  
Առա՛նց քանդակի, առա՛նց սուտ զարդի,  
Առա՛նց նորագյուտ հնարքներու արդի,  
Որ տիտղոս, տարիք կ'անմահացրնեն...  
Վարդի թուփ մը հոն կ'իյնա ծարավեն...  
Ու եթե երբեմն ողբեր կ'ողողին  
Քարի մը տակեն.— Մե՛ր բուն է գյուղին...  
Թե արշալույսին ստվեր մը հածի.—  
Իմաստասեր կո՛վ մ'է որ կ'արածի...  
Ու թե շիրիմներ պեղվին անընդհատ.—  
Բորենի մըն է, կամ քերթող մը վատ...

ԺԱ

... Ինկա ու մտիկ ըրի սգահար,  
Զայնի մ'որ քարին ներքև կը դողար.—  
— Ծ՛ս եմ, Ծ՛ս եմ, Ծ՛ս, քեզ եղբա՛յր, քեզ քո՛ւյր.

Ծ՛ս տիեզերքին հսկա ա՛չքը կո՛ւյր,  
Ծ՛ս սկիզբը և վերջ, երա՛խ ու արգանդ,  
Ծ՛ս վի՛հ անհատակ ու ծոց արգավանդ.  
Ծ՛ս ա՛յն եմ որ քեզ ծընավ, նաև ա՛յն  
Զոր պիտի ծընիս: Ծ՛ս ձայն լռելյայն:  
Ծ՛ս օրհնությունն եմ, բարիքը վերջին.  
Ծ՛ս այն եմ որմե ամենք կը փախչին  
Եվ որմե փախչիլ չի՛ կա: Հավասա՛ր  
Ներո՛ւմն եմ անոր որ ինձ կը հուսար,  
Անո՛ր որ հեզնեց զիս առանց խղճի:  
Ամենո՛ւն ալ վըրա իմ մարգրս կ'աճի...  
Մանգաղս ո՛վ պիտի համբուրեր անա՛հ...  
— Ինձ Աստված ըսին, իմ անունս է ՄԱ՛Հ...

«— Անաթինե՛ր, անգործներու կո՛ւս բանակ,  
Փոս աշքերնիդ դեպի երկինք զո՛ւր բանաք,  
Տառապանքի՛ր ստանյակներ, ի կըրի՛վ...  
Ի զե՛ն, կինե՛ր, ի զե՛ն, ծերե՛ր ալեխոփվ...»



Դուրսը ձմրան սուլլին միջեն կը լսվեր  
Բողոքի ձայն մը գալարվող կարեվեր,  
Ընդհատված խո՛ւլ հոնդյունով կատաղա՛ծ,  
Ու արծազանք կուտար երկար. «Հա՛ց, հա՛ց, հա՛ց...»:

Ի՞նչ կար: Կուրծքիս տակ ուժգին սիրտըս դողաց:  
Չյուն-ձմեռո՞վ, այսպես գիշեր ատեն՝ հա՛ց...  
Գաղչ անկողնես վար նետվելով, մրափված,  
Պատուհաններն բացի փութով, ու, Աստվա՛ծ...

Մի՞թե... Ամեն բան հասկացա ու լացի...  
Բոլոր վայրագ պայքարողները հացի,  
Հազարներով, հո՛ն, վա՛րն էին, խեղճ ու վե՛ս,  
Կուտվա՛ծ, կատղա՛ծ, մրջյուններու շեղջի պես...

Ցո՛ւրտ, իրենց վրա դանդա՛ղ կ'իջներ ձյունն համակ,  
Անհուսության ծաղիկներու պես ճերմակ:  
Ցո՛ւրտ, կը պատեր զիրենք գիշեր անսահման,  
Թըշվառության մթին դավի մը նման:

Իրենց մեջտե՛ղ, խեղճ կառքի մը վրա խարխուլ,  
Հազարներու հրոնդյունին մեջեն խուլ,  
Աշխատանքի նոթի ստրուկ մը ալեփառ,  
Կանգնա՛ծ, դողող՛ջ, կը բողոքեր, կը պոռթկար:

Ու իր խոսքերը կ'իյնային փրփրադեզ,  
Անիծապարտ հեք ամբոխին վրա այնպե՛ս՝  
Ինչպես ժայռեր օվկիանին մեջ կատղած...  
Ու օվկիանը կը ճողփար. «Հա՛ց, հա՛ց, հա՛ց...»



«— Ինչո՞ւ ոմանք անդուաներով օրորուն,  
Ոմանց գլուխը՝ մայթին ձյունոտ քարերուն...  
Ինչո՞ւ մեկը՝ ձեղուններու տակ ոսկի,  
Մյուսը՝ խոնավ խշտյակի մեջ սողոսկի...»

Մեկուն դիակին վրա դամբա՛ն, վա՛րդ, մարմա՛ր,  
Ողջը շունի բարձ մ'ուր հանգչի՛լ կարենար...  
Բույն-բնտանիք ունի թռչունն օդաշու,  
Ան ե՛րգ ունի, իսկ մենք՝ Անեծք միայն. ինչո՞ւ:

Ինչո՞ւ հազա՛ր պերճ տաճարներ հրաշակա,  
Աստուծո մը հոգվույն համար որ չիկա...  
Մեր խեղճ որբերը կըհավլին, տեղ չի կա...  
Մեր խեղճ կիներն են հոգեվար՝ դեղ չի կա:

Ինչո՞ւ, ինչո՞ւ, ու մինչև ե՛րբ, սեփական  
Մեր քրտինքով պիտի շաղվին պատվական  
Համադամներ մեծատունի՛ն, իր շունին,  
Մինչ աշխատող բազուկներ շոր հաց շունիե՛ն...»



Մերը դողդոջ իջավ կառքեն այն խարխուլ,  
Ու կատաղի գոռյուններուն մեջեն խո՛ւլ,  
Կառքին գեղջուկ բեմին վրա՝ հյուծահա՛լ,  
Խեղճեր ելան խոսք առնելու, կիներն ալ...»

Կը խոսեին — անո՛ւս դեմքեր ապաքեն—  
Ինչ որ պոռթկար իրենց նաթի աղիքեն,  
Իրավունքի կապիտ բառեր ինքնաբեր,  
Չոր կապուտցած իրենց շրթունքը թափեր:

Խո՛ւլ աղաղակը կը ընդհատեր պահ մը. «Հա՛ց»,  
Ու ամբոխը լուռ կ'ունկնդրեր ծարավա՛ծ  
Արդարության շքնա՛ղ ձայնին այդ տրեկար,  
Արդարությո՛ւն՝ որ երբե՛ք չի պիտի գար...»



Վայրա՛ց գոռյուն մը գիշերին մեջ թնդա՛ց.  
 Զյունոտ ցայգին անբա՛վ սուգին մեջեն թաց,  
 Բոցերու պես շըքեղ, տեգի՛ պես հրպարտ,  
 Կարմիր դրոշա՛կը բարձրացավ անհանդարտ...

Ու ես տրտո՛ւմ, ու ճմլվա՛ծ, անբարբա՛ռ,  
 Կը դիտեի որ կ'երթային տրտմաբար,  
 Զյունի՛ն մեջեն, մութին մեջեն անսահմա՛ն,  
 Գրաստներու սև բանակի մը նման...

Ո՛ւր, դեպի ո՛ւր... Քաղցած կյանքեր համորե՛ն,  
 Իսպառ լքված աստվածներե՛ն, մարդերե՛ն,  
 Լո՛ւտ կ'երթային, խո՛ւլ բնազդի մը հլո՛ւ,  
 Նո՛ր օրենքի նո՛ր նժար մը կերտելու...

Ու ինձ այնպե՛ս թվեցավ թե լռելյա՛ցն  
 Ճակատագրին թևը կ'իշխե՛ր իրենց վրան.—  
 Բայց կ'երթային անոնք ի գե՛ն, ի պայքա՛ր,  
 Արդարությա՛ն կը դիմեին խո՛նջ, տըկա՛ր,

Արդարությա՛ն, որ ա՛ս կերպով պիտի գար...

### ՊՈԼՍՈ ՈՐՈՎԱՅՆԻՆ ՄԵՋ

Մեր Բայրերուն

Առանց ուզելու, կարծես բնազդորեն,  
 Քայլերըս ծերուկ տարին գիս նորեն  
 Այս գիշեր Մեղքի քառուղիներեն:

Անցա՛ այն տեղեն, ուր աչքե գաղտնի  
 Քսան տարիքիս արյան ծիրանի  
 Ապերախտ փրփուրը կը ցանեի:

Նո՛ւյն երգերն էին, նույն թա՛ղը անքուն,  
 Նո՛ւյն բուրումը գարշ՛ մեղքերու թաքուն.  
 Նո՛ւյն սյունը մըսի՛ Սեմին վրա կանգուն:

Նայեցա. իրենք ալ ինձ նայեցան:  
 Խորշոմ մորթիս վարդ թևեր քսվեցան,  
 — Միայն ծեր հոգիս կ'արտասվեր անձայն:

Հավիտենական ով մեղքի Քաղաք...  
 Ի՞նչ կ'ընեք Կյանքըն, որոնք կուլ կուտա՛ք...  
 — Ո՛վ ինկած քույրեր այժմ հողերու տակ...

Տոփա՛լ, ինչո՛ւ չէ, բայց աչքե հեռու,  
 Քուրջի մը նրման վաճառվիլ հըլու՛՛  
 Այն ապուշին որ դրամ ունի տալու...

Վա՛խ, քույրե՛ր, քույրե՛ր: Մեր սիղծ, հեղհեղուի...  
 Կյանքեն զրկըված ծաղիկներն եք դուք...  
 Մարդկության թքած թուքին նետած թո՛ւք...

Արդեն Սուրբ բյուր կյանքեր թող հնձե,  
 Թող Սովը հազար քաղաքներ ցնցե,  
 Վաղը Մարդկության վախճանն է գուցե...

Ի՛նչ փուլթ... Հոս պիտի երգե «Լաթեռնան»,  
 Հոս տրտում զույգեր սլիտի արփենան...  
 Հոս պիտի ծախվին Սլքան, Մառիբան:

Ո՛վ արյան ծաղիկ՝ բացվա՛ծ խոլական՝  
 Ավերակներու վրա բյուզանդական...  
 Մշտնջյա Մեղքի մշտնջյա Ական...

Ո՛վ խավարական մսեղեն գավաթ  
 Ուրկե մարդկությունը թերահավատ  
 Կ'ստիպվի ըմպել գինիդ հուսահատ...

Սողոմեն բիրած ընծա մահագին՝  
 Որ ծեր Արևմուտքը Արևելքին  
 Կ'երկարե ժպտով Վոսփոքի կողքին...

Ո՛վ մահաժպիտ գա՛րշ, արյունալի,  
Հակադարձ երեսը այն «մետալլ»-ի  
Ուր Մարդ ոսկետառ անուն կը փայլի...

### ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ

Բանասեղծ ընկերներու

Թրուպատուրներն են. տեսն՛ք, իրենք են.  
Եռանդո՛ւն, անփո՛ւյթ, գո՛հ կը նվագեն  
Հրակեզ արևուն տակ հրապարակին:  
Կիսախուփ փեղկերե տարեց, տղա, կին  
Կ'երևան քիչ քիչ: Կեսօրի տապեն  
Շատ քիչերն են որ տեսնիլ կ'շտապեն  
Թրուպատուրները:

Տարորեն դեմքեր: Ամե՛նքն, է՛գ, արո՛ւ,  
Բախտեն կատաղի հալածվողներու  
Անտուն ընտանիք մը քայլամուր:  
Փողոցի ստո՛ւյգ հանճարներ բոլոր,  
Նվագելու համար պետք շունին նոթի,  
Կ'ապրին երգելով, կը մեռնին նոթի  
Թրուպատուրները:

Բախտը, տառապանքն, հարափո՛խ հոգի  
Իրենց դեմքին մո՛ւթ ժպիտ մ'են տվեր,  
Կյանքը ճանչցողի ալեկո՛ծ ժպիտ:  
Ու իրանց բռնի՛ ձևին մեջ հտպիտ,  
Խոփվ մազերուն ներքև ալևոր,  
Աշխարհքն հեզնելու հո՛վ մ'ունին ալևոր  
Թրուպատուրները:

Անոնք երգելով անցան համորեն  
Բոյի գինեզվարճ այգեստաններեն  
Մինչև նեղոսի ավազուաք շեկ,  
Մինչև Ուրալներն, մինչև հըրաշեկ

Ափերը դերբուկ Հրո-Երկիրին:  
Քանի՛ ընկերներ ճամբուն հող դրին  
Թրուպատուրները:

Մեքենայության այս դարը երկա՛թ  
Չընկճե՛ց դեռ իրենց հոգին խանդակաթ.  
Ու ոստաններու միջև դրամապաշտ՝  
Թշվառության հետ գլո՛ւխ գլխի հաշտ  
Կ'ապրին նախնական կենցաղով ազատ,  
Ազա՛տ Բնության որբերն հարազատ.  
Թրուպատուրները:

— Առե՛ք ինձ ձե՛զ հետ, երկիրե երկիր  
Տարե՛ք այս թշվա՛ն սիրտըս սրգակիր,  
Ապրի՛նք հեզնելով, ողբանք երգելով.  
Ու երկրագունտին հետ մշտահողով  
Մեր մորթն անօգուտ քըշե՛նք մշտերեր.  
Մշտնջենական մութ ուխտավորներ,  
Թրուպատուրները:

Ձի մե՛նք ենք, մե՛նք ենք, բանաստե՛ղծ, պուեստ,  
Մե՛նք, պատառոտուն բեհեզով վե՛տ վե՛տ  
Երգի իշխանեն՛ր՝ իսպա՛ն հալածված,  
Մե՛նք, նոթի՛, հպա՛րտ, երբեմնի Աստվա՛ծ,  
Մե՛նք, շրհասկըցվա՛ծ, մե՛նք, եղերակա՛ն,  
Մե՛նք, Բանաստեղծեն՛ր, մե՛նք ենք իրական  
Թրուպատուրները:

Մե՛նք՝ որ մեր վերքեն երգեր կը շինենք,  
Մե՛նք, զրկվածեն՛ր ճակատագրեն նենգ:  
Ու մինչ ուրիշներ առատ կը ջամբեն  
Խինդի՛ սեղանեն, մուսային ճամբե՛ն—  
Մենք կ'երթանք ստո՛ւյգ Մահվան անսվա՛ղ.  
Մե՛նք, հի՛ն Մարդկության ո՛ւշ ժընած,— ավա՛ղ—  
Թրուպատուրները:

Ի այց ի՛նչ փուլթ: Մե՛նք ենք հոգիով հարուստ.  
Մե՛րն է ներշնչումն որ կուգա վերուստ.  
Մե՛րն է մարգը թա՛ց, վերջալույսն անխո՛ս,  
Փթիթը վարդի՛ն, առուն մշտահո՛ս,  
Մե՛րն է մթին սյո՛ւքը գերեզմանին.  
Հի՛ն աստվածներու ցեղին կը նմանին  
Թրուպատուրները:

Մե՛նք ենք, որ անփո՛ւյթ գրչով կը հեզնենք  
Այս նենգ աշխարհքին պսակները նենգ:  
Քնար մը ձեռքնհրիս, անտո՛ւն, մահագի՛ն,  
Չե՛նք ցանկար ստրուկ — պետի դղյակին:  
Ազատ բարբառի ասպետներ անա՛հ,  
Կ'ապրին մեռնելով, կ'մեռնին անմա՛հ  
Թրուպատուրները:

Մարդկության հտպի՛տ պետք է անպատճառ,  
Մեր սրտե՛րը մենք հաներ ենք վաճառ.  
Մեր վիշտեն, սուգեն, խաբված սերեն նենգ՝  
Ռամիկին համար երգե՛ր կը շինենք:  
Ո՞վ ըսավ «Մահը մի է». ամե՛ն օր  
Կը մեռնինք մե՛նք, հի՛ն տիեզերքին նո՛ր  
Թրուպատուրները:

Սակայն մեզ ի՛նչ փուլթ ծիծաղն ամենուն,  
Լքումը ստո՛ր, քաղցը անանո՛ւն.  
Մե՛նք՝ գառանց հովվին պես սիրագորով՝  
Հավա՛տքն ունինք մեր սրինգին ծայրով  
Առաջնորդելու Մարդկությունն ամբո՛ղջ.  
Մեռա՛ծ Արվեստին մե՛նք տակավին ո՞ղջ  
Թրուպատուրները:

Այս ի՛նչ դարերու հասեր ենք, Աստվա՛ծ,  
Փշրեցի՛ն ինչ որ կար վսեմ կերտված,  
Թե դեռ սի՛րտ ունիք՝ թաղելո՛ւ տարեք,  
Ոսկիին նենգ ձա՛յնն է ամենուրեք:  
Մի միայն մե՛նք ենք որ դեռ անարգել  
Սիրե՛լ կ'երազենք. ո՞վ կուզե սիրե՛լ  
Թրուպատուրները:

Մեռա՛ր, հնավանդ Արվեստ սրբանվեր,  
Երբ դեռ կյանքն երգո՛վ կ'ապրեր, կ'օրորվե՛ր.  
Ու երբ երջանի՛կ, թափառի՛կ, գինո՛վ,  
Իրենց ծիրանի լա՛յն կրկնոցներով  
Դղյակե դղյա՛կ, փայտի երկնային  
Տավիղին թրթոո՛ւմը կը տանեին  
Թրուպատուրները:

Ես կ'երազեմ հայր թրուպատուրն Հոմեր,  
Որ աստվածներու ալեկն կը խմեր,  
Ու իր հսկանե՛րը բարձրազաղա՛կ  
Կ'երգեր տավղին վրա, քաղաքե քաղաք:  
Ու թրուպատուրնե՛րը բյուր՝ որ կ'երթա՛ն  
Դարերու մեջեն. կ'երազեմ Գողթան  
Թրուպատուրները:

Կ'երազե՛մ զիրենք. ու լո՛ւտ, շվարո՛ւն,  
Կը նայիմ փեղկես ա՛յս թշվառներուն  
Որ բռնի կերպով կ'երգեն, կը խաղան:  
— Վա՛խ, արծաթն Արվեստն հանեց կախաղան:  
Հի՛ն աստվածաբընա՛կ դարերը մեռան.  
Ու հիմա պետք է խնդացնե՛ն, մուրա՛ն  
Թրուպատուրները:

Հրատապ արևուն տակ հրապարակին,  
Ահա՛ կ'երգեն դեռ, ու մինչ տըղա՛, կին.  
Կը հասնին քիչ քիչ նեղ ճամբաներե,  
Գլխարկն անցորդին լուռ կը կարկառե  
Իրենց նահապետ երգիչն ալևոր:  
— Տվե՛ք, իրե՛նք են, նոր Մարդկության նո՛ր  
Թրուպատուրները:



## ՓՈՂՈՑ ԱՎՈՂԸ

Միկառ մը բերնիս, բաց պատուհաննս՝  
Խոտոչ մը թաքչած ծեր բուրի մը պեա՝  
Կը դիտեմ փողոցը ամայի՛, լա՛յն,  
Անտերև ծառի զույգ շարքը երկայն,  
Հալած ձյունի ծուլլ անձրևը բարա՛կ,  
Գոցված հազվադեպ կառքերը արա՛գ,  
Ու ծառերուն վրա, դողդո՛ջ ցըրտահա՛ր  
Որոնք աչքերես արցունք կը բերեն...  
Ա՛խ, մարդերն ի՛նչ նուրբ կենդանիներ են...

Ճիշտ տանըս դիմաց, այս ցուրտ օրերո՛ւն,  
Հին համազգեստով ծեր մը երերուն,  
Այս անձրևի տակ, ավել մը ձեռքին,  
Մինչև իրիկուն լո՛ւռ, դանդաղագի՛ն,  
Երկուքի կոտրած հասակն ալևոր,  
Կը մաքրե մայթին ցեխը՝ այնպես որ  
Չաղտոտի կոշիկն ազնիվ անցորդին...  
Ինչպե՛ս թույլ կուտանք այս բուքին, ցուրտին,  
Որ ծերերն այսքա՛ն կըռնակնին ծրոնեն...  
Մարդերն ի՛նչ անզուժ կենդանիներ են:

Գըլուխն է կըքած թաց գըլխարկին տակ,  
Լա՛յն առատ մորուք մ՛ունի ըսպիտակ,  
Թագավորի հին դեմք մ՛ըլլար կարծես...  
Բայց ձեռքը կըմախք կը խըրտչեցնե ձեզ:  
Աչքերը թաց են. արցո՛ւնք մ՛է ծերի,  
Անձրևն է, ճակտեն վար կը կաթկըթի:  
Բայց գոհ է, նույնիսկ երգ կը մըրթմըրթա,  
Որովհետև տուն գիշերն երբ երթա՝  
Որք թոռներուն հաց պիտի տա նորեն...  
Ա՛խ, մարդերն ի՛նչ սուրբ կենդանիներ են:

Տերն ինչո՞ւ կերտեց Մարդը ոչինչէն,  
Ա՛յս կյանքի համար... Իրեն համար չե՛ն  
Նրկինքն աստղազարդ, պըլպուլը ցայգին,

Ջեփյունն առտըվան, գինեբեր այգին,  
Կապույտ երակները՝ թոնիրին մոտ,  
Իր ծեր հասակին՝ ձեռներ խընամոտ...  
Բարե՛, կյա՛նք է այս. շխատիլ սովա՛ծ,  
Ուտելու համար գիշերը սոխ-հաց...  
Մեռնիլը լավ չէ՛՝ այսպես պարելեն...  
Մարդերն ի՛նչ անհազ կենդանիներ են...

Մինչև ճերմկեցան իր մորուքն ու մազ,  
Կյանքեն սորվեցավ բան մը հազի՛վհազ,—  
Ճակատագրական ուժը Արգանդին:  
Իր խելքը շանցնիր այդ կետեն անդին:  
Աշխատութենեն ահա դարձավ ծեր,  
Բայց իր հացը շոր շո՛ւն մը չի կրծեր.  
Մինչ անդին ոմանք ծնած վայրկյանին  
Իշխան են արդեն, կամ ոսկի ունին,  
Ու աղքատին բախտ կը տնօրինեն...  
Մարդերն ի՛նչ քոսոտ կենդանիներ են...

Վաղը եթե քաղցը կամ ցուրտ քամին  
Հանկարծ մեռցնե որք թոռներն մին,  
Ամբողջ ունեցած դրամը միասին  
Չպիտի բավեն մահվան հանդեսին...  
Բայց ի՛նչ փույթ, կեցցե՛ կառավարութուն,  
Ի՛րն է անտունին դիակն անարյուն,  
Նախ կըսպաննե, բայց կը թաղե ձրի...  
Մուռ խոսողին թող բերանը ծոխ,  
Արքան խեղճերուն տերն է համորեն.  
Մարդերն ի՛նչ գթոտ կենդանիներ են...

Կառավարությո՛ւն... Ինչ բարի՛, բարի՛...  
Աղքատին դպրոց բացեր է ձրի,  
Որ հոն սորվեցնե կարգալ ու գրեկ,  
Թրենքի առջև կոնակը ծռել...  
Գիտնալ որոշել շարը ու բարին,  
Սեփական փողեն տուրք տալ կեսարին...

Ըլլալ հնազանդ մեկ կաթնատու կով,  
Ջորք գրվի՛լ, մեռնիլ արքային կամքով...  
Հարգել հարուստին վաստակն անօրեն...  
Մարդերն ի՛նչ խելոք կենդանիներ են...

Ավլե՛, ծն՛ր, ավլե՛, աշխատե տքուն,  
Չմեռվան ցուրտին, ամառվան տաքուն,  
Ավլե՛ մարդկության աղտը ցնցոտի,  
Ու գիտցի՛ր, որ մի՛շտ պիտի աղտոտի...  
Գիտցիր որ հա՛ցդ է ավելի մաքուր,  
Քան ջոջին կարմիր հացը թաթթաքուր:  
Գիտցիր դուն բավե՛լ՝ քեզի որպեսզի  
Օգնեն, ըսելով, չի խեղդեն քեզի...  
Գիտցի՛ր, որ ինչ ալ ըլլան կամ ընեն,  
Մարդերը զազիր կենդանիներ են...

Ու սորվե ատե՛լ նողկանքով անհուն.  
Անոնք որ «փրկչի» կը կրեն անուն  
Ու ճոխ խոսքերով տունըդ կը քանդեն.  
Սորվեցուր տղոցդ ատել արգանդեն՝  
Քաղաքագետնե՛րը ամեն գույնի,  
Որոնք կ'սպաննեն քեզ առանց թույնի:  
Սորվեցուր իրենց խոսքը հետագա՝  
«Աղքատին համար բարեկամ չի՛ կա».  
Փոքրերն անվրեպ մեծերուն կեր են.  
Մարդերը կատղած կենդանիներ են...

Աղքատասեր սիրտ մ'ունիմ ես ի՛նքս ալ.  
Թե անկեղծ է այդ՝ քաղցր է ինձ հուսալ.  
Այդ ծեր եղբայրս է, գրածը՛ս վկա.  
Մեկ տարբերություն միայն եթե կա,  
Մինչ ես կը գրեմ տողեր խնամոտ,  
Միկառ մը բերնիս, վառարանիս մոտ,  
Ու բյուր հանգերու մեջ քաղցրահնչյուն  
Կը փնտոնեմ կյանքի «ինչպեսն ու ինչուն».  
Մերը այս ցուրտին կ'ավլե խղճորեն...  
Մարդերն ի՛նչ ահեղ կենդանիներ են...

Ի՛նչ ատեններու հասեր ենք, Աստվա՛ծ,  
Փըշրեցինք ինչ որ կար վրսեմ կերտված:  
Կրոնքը բառ մ'է, իսկ հոգի չի կա,  
Ով դեռ կը հավտա, խենթ մ'է անիկա.  
Իսկ Հիսուս ապուշ մըն է հետնագույն  
Չունի ծրագիր, քաղաքական գույն...  
Գու՞թն ըզգացմունք մ'է գրեթե մանկական,  
Պետք է դավանանք մը ընկերական,  
Այսպիսով կ'երթա աշխարհք ինքն իրեն...  
Մարդերը չէ՞ որ կենդանիներ են...

Ո՛վ փողոց ավտող, ո՛վ եղբայր, ո՛վ ծեր,  
Քու պարզ ներսիդիդ դժոխքն են դարձուցեր:  
Ու դուն կը խորհիս. ինչո՞ւ է այս կյանք.  
Լավ չէ՞, որ շուտով մեռնինք, հող դառնանք.  
Թե վարձատրություն չիկա աղքատին  
Ոչ մահեն ասդին, ոչ մահեն անդին,  
Թե պատիժ չի կա հարուստ անգութին  
Ոչ մահեն ասդին, ոչ մահեն անդին,  
Ապա թող ամենքն իրար հոշոտեն...  
Մարդերն ի՛նչ երկշոտ կենդանիներ են:

Թե՛ Արդարություն, թե՛ միտք գերբնական,  
Թե՛ սուրբ խոեալ, թե՛ Աստված՝ չի՛ կան,  
Ապա ո՞ր ուժով, ո՞ր օրենքով, ո՞ր  
Արդարությունամբ, ո՞ր կամքով ահավոր  
Կըրնան արգիլել քեզ ծերուկ բարի,  
Որ օր մ'երբ վճիտ հոգիդ փըրփըրի,  
Թե արժան չէիր դուն այս վատ կյանքին,  
Օր մը քու զոդոջ ձեռներդ մոլեգրին  
Անխիղճ մեծերուդ աղիքը պատռեն...  
Մարդեր պատռելիք կենդանիներ են...

Սակայն ո՛չ, ո՛չ, ո՛չ: Չյունին, ցուրտին մեջ  
Ավլե՛ մարդկության ցեխն ու կեղտն անվերջ,  
Ավլե՛ ու գիտցիր որ մի՛շտ կաղտոտի...  
Մի՛ խորհիր. Միտքը զարդ մ'է սնտոխ...

Ավլե՛, որբիկներդ հացիդ կը սպասեն:  
Ավլե՛, սուրբ է պարտքն, ինչ որ ալ քսեն:  
Ավլե՛, որպեսզի իրիկվան երբ տան  
Նիհար սակագին քու ըստրկության՝  
Նըզովես այդ ձե՛ռքը սըրտիդ խորեն...  
Մարդերն անիծած կենդանիներ են...

Ու ես գիտեմ որ, ցած խլշյակիդ մեջ  
Ձրմեռ գիշերներ գետնին վրա գեջ  
Լուռ մըտամըտանքով երբ որ կը դիտես  
Որբերը քնած հըրեշտակներու պես  
Որ կը հասուննան վաղվան գերության  
Ու անվաղորդյան անիմաստ Մահվան,  
Կը փղձկի ծեր սիրտը սուգով լեցուն՝  
Ձեր միակ պաշտպան բարի Աստծուն...  
Որ մեռցուցին քո մեջդ անգթորեն...  
Մարդիկն ինչո՞ւ վատ կենդանիներ են...

### ԱՅՍ ԳԱՆԱԿԸ

Մարդը կոթնեցավ իր կընոջ ուսին.  
Այսպես երկուքն ալ լացին միասին:  
Գետնափոր, տեսակ մը նկուղ էր լայն,  
Գետնափո՛ր, ավա՛ղ, խլուրդներ միայն  
Չէ՛ որ կ'ապրին թաց նկուղներու տակ...  
Գետինը՝ հարդի տեսակ մ'այլանդակ,  
Անկողնի վրա, լո՛ւտ, հրեշտակայի՛ն,  
Երեք փոքրիկներ կը քնանային,  
Հարդին վրա, պզտիկ քույրն ալ իրենց քով  
Կը ննչեր՝ մահվան ճերմակ պատանքով...

Ո՞վ ըսեր է որ կյանքը երազ մ'է,  
Ուր սերն իր կապույտ բույնը կը կազմե:  
Ո՞վ ըսեր է որ Այն որ կուտա բույր  
Խոպան դաշտերու ծաղկին սխրաթույր,  
Ա՛յն որ ձմեռին մեջ սըգամոռնչ  
Ապաստան կուտա գայլին անտերունչ,  
Այն որ հունտ կուտա նոթի թռչունին,  
Ա՛յն ստեղծեր է անոնց՝ որ շունին՝  
Երեններն առատ, հասկերը բեղուն,  
Արփավե՛տ գինին, մեղրավե՛տ մեղուն...

Ավա՛ղ, այն ամեն բաներն ապաքեն  
Որ շնորհվեցան մազի երկինքեն՝  
Մարդկային օրենքն արգիլեց մարդուն...  
Ու մարդն անոթի՛, ծարավա՛ծ, արթո՛ւն,  
Երջանկության հո՛րդ գետին քով՝ հըլո՛ւ  
Կը մեռնի առանց ումպ մը ըմպելո՛ւ...  
Մի քանիներո՛ւ համար են միայն  
Ոսկեզեղ հասկի ծուփ ծովերը լայն,  
Լեռներու երեն, անտառի թռչունն՝  
Դե՛ռ իսկ չի ծնած... Ո՞վ գիտե ինչո՞ւն:

Գուրսը ցուրտ գիշերը կը կողկողի:  
Թաց նկուղին տակ լամբար մը հողի

Կը լուսավորե՞ն անաստաղը ցած,  
Վտանգին առջև՝ սեղմ ու քարացած,  
Ամուր ծերուկ կ'արտասովե դողդոջ...  
Իրենց դեռ ծաղիկ զավակին բողբոջ,  
Եյսպես անսովաղ, ցրտահար, սառած,  
Մահը դիտելի վերջ բազկատարած,  
Առանց կարենալ բան մը ընելու,  
Ի՞նչ լավ է այսպես լալ՝ բախտին հըլո՞ւ...

Մա՛հ... Ի՞նչ տարբեր մահը հարուստ տըղուն.  
Ան երազ մ'է լո՞ւտ ցնծումով բեղուն,  
Ան կյանքեն միայն ճանչցավ նրբագույն  
Բեհեզները վա՛ռ, ժանյակը գո՛ւյն գո՛ւյն,  
Մանյակներն ոսկի, ընծաներն առատ,  
Թույլ իրանին նո՛ւրբ շղարշ անարատ...  
Զի գիտցավ որ թանկ քարերը վզին  
Հազար խեղճերու մահով կը դիզվին...  
Ու մեռավ շա՛տ քաղցր երգի մը պես,  
Հծծելով միայն՝ «Ինչ լավ էր այսպես...»

Մինչդեռ այս փոքրիկ մեռելն աղքատին  
Ճանչցավ կյանքն իր խո՛ւլ ցավին մեջ հետին.  
Ո՛չ ծաղիկ, ո՛չ խինդ, ո՛չ ժպիտ, ո՛չ երգ,  
Կյանքը վի՛շտ կարծեց, աշխարհքը՝ մի վե՛րք...  
— Ա՛յ հիմար փոքրիկ, կյանքը խուլական  
Հանդես է. քանի՛ երջանիկներ կան...  
Սակայն դու մեռար ու հիմա հանգչե...  
Պատանք մը ճերմակ՝ երկու ափ քուրչե՛  
Քու նիհար մարմնիդ համար շա՛տ է լայն...  
— Ողջունեցե՛ք, նոր-վաղվան սերմն էր այն...

Գլխուն քով, կարմիր կանթեղը հողե՛  
Պատանքն իր աղքատ լույսով կ'ողողե:  
Ճերմակ մահն է այդ. մա՛հը անսովա՞ղ...  
Նույն հարդին վրա են մյուսներն ալ խաղա՞ղ.  
Ծանրը քունն իրենց աչքը կը գոցե,  
Կ'երազե՛ն. ու ա՛լ շարթնան գուցե...

Դուրսը ուժգնորեն ոռնացող քամին  
Դուռը կը զարնե. զավակներն մին  
Կ'աղերսե քնա՛ծ շրթներով կիսբաց՝  
«Հայրիկըս բերա՞վ պատառիկ մը հաց...»

Հա՛ց... Ո՞վ ողորմո՞ւկ երեխա սոված,  
Հաց չկա՛. այսպե՛ս է տնօրինված...  
Դու դեռ շատ փոքր ես, դեռ չես հասկընա:  
Որ հարուստն ունի իրավո՞ւնք, հընա՛ր  
Քեզ մեռցնելու ծանրածանր մահով,  
Օրենքն է իրեն պաշտպան ապահով...  
Միայն փոքր ուղեղդ կ'զգա շվարուն  
Թե ինք իրավունք ունե՞ր արևուն  
Տակ բողբոջելու, թերե՛ս, ու կատղա՛ծ,  
Կը փղձկի վճիտ հոգիդ. «Մայրի՛կ, հա՛ց...»:

Հա՛ց... Աշխատելեն հայրդ դարձավ ծեր,  
Հացի խնդիրն ինքն ալ չէ՛ հասկըցեր:  
Ինչո՞ւ ոմանք տեր են, ոմանք գերի...  
Թե Բախտը կույր մ'է որ կ'ղեգերի,  
Ինչո՞ւ օր մ'իրենց դուռին չի զարկավ...  
Թե մարդը կավ մ'է, այս ի՞նչ շունչ, ի՞նչ կավ...  
Թե աշխարհ՝ անծիր երկիր մ'է անհուն՝  
Ինչո՞ւ ոմանք քա՛ր մը շունին զլուխուն...  
Թե ամեն տարի հունձքը կ'ողողի՛  
Ինչո՞ւ իրենց հա՛ց մը չիկա հողի...

Գործարաններու դուռները փակ են  
Ամի՛ս մ'է արդեն: Հազարը մեկեն  
Բանվորներն ամբողջ նետեր են փողոց,  
Ամենքն այլ հայրեր մի քանի տըղոց:  
— Մատուցումը շա՛տ, խնդրանքներ չիկան,  
Կ'ըսեն, ապրանքով լեցվեր է շուկան.  
Գործի մե՛ծ օրենքն է տնտեսավար.—  
Այդ լա՛վ, բայց նոթի մեռնիլն է դժվար:  
Թե բանվորն այնքա՛ն արտադրեր է շատ,  
Ինչո՞ւ հաց չունի քանվորն անաշխատ...

Մարդկութիւն, պատի՛վ... Թմբուկներ հնչու՛ն,  
Աչքըդ զոց հավտա, մի փնտրիր ինչու՛ն:  
Սուրալն ամոթ է, գողնալը ոճիր,  
Իսկ թե խելոք ես՝ ոչ ոք չի հաճիր  
Հավատալ որ տղադ մեռավ անոթի,  
Կը խնդա վրադ առանց ամոթի...  
— Սերը կռթներ է իր կնոջ ուսին.  
Աչքին արցունքներն անդո՛ւլ կը հոսին,  
Կը մթնա՛ քիչ քիչ ներսի դին մաքո՛ւր,  
Պարզ հոգին ինչե՛ր կը ծնի թաքթաքուր...

Բայց ահա տղան նորեն լացալ՝ «եա՛ց...»:  
Հա՛ց... Մայրը ոտքի նետվեցալ կաաղած,  
Հին դանակ մ'էրկան տվալ այլայլված,  
«Հա՛ց ետե, բռալ. հետդ բլլա Աստված...»  
— էրիկը գնաց: Գոռոցքը հովուն  
Կարծես հաց կուտար իրեն խոտովոն՝  
«Միքե՛ ոճրագո՛ւր՝... միքե՛ բարեբա՛ւր...  
Գանակը ձեռքին զարնելո՛ւ կ'երթար,  
Փոկելու համար անոթի տրղան...  
— Բանվո՛ր, այդ ճամբան կ'երթա կախազան...

— Ի՛նչ կ'ընես երբ ազգ մը մնա նոթի.  
Չեռքն բահ ու բրիչ կը նետե մեկդի,  
Կ'երթա հաղորդիլ մատուռ մ'անխոտով,  
Կը զինվի տեգով, կը զինվի սուրով,  
Ու կ'երթա ամեն միջոցներով վատ  
Ազգի մը կոխվ մղելու հուսահատ  
Թե հաղթվեցալ՝ ա՛վա՛ղ է իրեն,  
Իսկ եթե հաղթեց՝ աշխարհ համորեն  
Գովեստի երգեր կ'երգե ամեն օր,  
Պատմութիւնն ոսկի էջ կուտա անօր...

Քամին կը գոռա, ձյուներ կը թռչին,  
Բանվորը կանգնած շնձքի մը առջին  
Երգը կ'ունկնդրե — ցուրտն երբուսե՛—  
Գործարաններու բոլոր տերերուսե՛...

Մատուցումը շա՛տ, իսկ խնդրանքը քիչ...  
Ռո՛ւ փուլթ. կուտեն, կ'արձակեն քրքիչ...  
Սրբ դուրսը ձյուն է, գինվո շոգիով  
Ի՛նչ լալ է ուտել՝ քանի մ'հոգիով...  
Գործ չի կա՛, ինչ փուլթ, դաս մ'է անխընա:  
Որ բանվորը քի՛չ մը խելոք մընա...

Բանվորը կուլա . կը գոռա քամին:  
Ահա՛ գուրս ելալ այդ տերերեն մին.  
Աստվա՛ծ, իր պե՛տն է... Չեռքը քարացած,  
Աչքերը կարմիր, բանվորը գոռաց՝  
«Իթուրթիւն, պարտե՛, բնտանյաց հա՛յր եմ.  
Ջգո՛ւյշ մերժելու, Ձեր հոգին կ'այրե՛մ...»  
Հարուստը նետեց այն ինչ որ կար իր վրան,  
Ժամացույց, շղթա, դրամ, թղթարան:  
Երեկ՝ տեր, հիմա՛ ստրուկ դողդողուն,  
Կը փախեր ինչպես բուս մը՝ թռչու՛ն...

Բանվորը ապշա՛ծ նայեցալ հեռուն,  
Իր հարուստ տիրոջ վազքին շվարուն,  
Նայեցալ բարի ձեռքերուն ծերուկ,  
Նայեցալ հացի դանակին մանրուկ,  
Նայեցալ ոսկվույն, նայեցալ իրեն,  
Փղձկեցալ հոգին, հուսահատոր՛ն  
Ձայնը երկարեց ցայգին մեջ տխուր՝  
«Ո՛վ հարուստ, հարա՛ւտ, եկա՛ւր, ա՛տ, եկա՛ւր...»  
Բայց տերն ա՛վելի արագ կ'երթար լուռ.  
Ու կը կրկնե՛ր ծերը. «Եկա՛ւր, եկա՛ւր...»

— Ո՛վ բարի բանվոր, ծե՛ր բարի բանվոր.  
Թե այնքան անպետ ես մարդկութեան որ  
Ճարելու համար ապրուստ մը հետին  
Կ'ապավինիս վատ դանակիդ ետին...  
Թե սեփական կյանքդ՝ իժի մը պես՝  
Ուրիշի մահով պիտ ապահովես...  
Թե պիտի դավես մութին մեջ լոկլայն՝  
Հոգ չէ՛ թե զավկիդ համար բլլա այն...

Դե՛հ, գնա՛ մեռիք, — մեռեք ես արդեն,  
Մարդկութեան ի՛նչ խեղ մարդասպան մարդե՛ն:

Թե չե՛ս ուզեր որ քու դանդաղ մահով  
Տերդ իրեն գանձե՛ր դիզե ապահով...  
Թե անպե՛տ, թե վա՛տ, թե խեղճ, ցավագին,  
Դուն դեռ տե՛րն ես քու սեփական կյանքին...  
Թե զավակներուդ չկըրցար ցույց տալ  
Ապրիլ ատելո՛ւմ, կյանքին դեմ կուրծք տալ...  
Դանակդ աղիբիդ խոթե, ու դարձո՛ւր.  
Իրենց քաջաբար մեռնիլ սորվեցուր,  
Մեռնի՛լ անտեսված, անճիշ, մթին, վե՛ս...  
— Աչքերը գոցեց... Ու ըրավ այնպես:

Տարինե՛ր անցան. հիմա կը դիտեմ  
Լուռ սենյակիս մեջ առկախված իմ դեմ  
Այս համեստ դանակն արդեն ժանդոտած  
Որ ձմեռ առտու մը, արյունով թաց,  
Ես գտեր էի անհուն գուրգարանքով,  
Զյունին մեջ մեռա՛ծ գործավորին քով...  
Քարացա այդսեղ, պոռթկաց իմ հոգիս,  
Ու դողդողալով տարա շրթունքիս  
Խորհրդանի՛շն այդ՝ մութին մեջ լույլայն  
Տառապո՛ղ, մեռնո՛ղ, այլ քա՛ջ մարդկութեան...

Ու քանի անգամ քու առջիդ լացի,  
Ո՛ւմ բարի՛, ժանգոտ դանակըդ հացի.  
Դո՛ւն, վերջին պաշտպան զրկըված մարդուն,  
Դո՛ւն, հավետ լոկի, այլ հավետ արթուն.  
Դո՛ւն, այնքան համեստ ու այնքան խելոք.  
Եվ որ կրնայիր շարժումով մը լոկ,  
Արյա՛ն վրա հիմնել Օրենքդ ապագա,  
Բայց կը սպասես որ խաղաղութեամբ գա,  
Արդարութեամբ գա, գա՛ տարվե տարի.  
Զրկված մարդկութեան երազը բարի...

## ԷԶԵՐ ԱՐԶԱԿԻՑ

«ԲԺԻՇԿԻՆ ԳԻՐՔԵՆ ՓՐՑՎԱԾ ԷՋԵՐ»

ՇԱՐՔԻՑ

ՄԱՆՁԵՐՈՒՆ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Հիմա որ ուսերուս վրա տակավին կ'զգամ տարիներուն ծան-  
րությունը, ու ձեռքիս գրիշը՝ երբեմն փետուրի պես թեթև՝ այժմ  
մահվան բառերուն մեջ կը կապվի ու կը շփոթի, կը հիշեմ հի՛ն հի՛ն  
օրերը, այն օրհնյալ օրե՛րը, երբ ուղեղիս, ջիղերուս, մարմինիս  
բոլոր բջիջները այնպես լեցված էին կյանքով՝ որ մահվան գա-  
ղափարին համար տեղ չէր մնացած...

Երջանի՛կ տարիք, ուր կյանքը կ'եռա, սիրտը կը գեղու, հոգին  
կը փոռթկա:

Ու ո՛ւմ կրնա մոռնալ հազար անգամ կրկնված անունը այն  
պաշտելի ընկերոջ՝ որ միանգամայն դասակիցդ էր, տարեկիցդ ու  
սրտակիցդ, երևակայական վեպերուդ հերոսը, հրաշալի արկածա-  
խնդրություններուդ զինակիցը:

Արամն էր իմ զինակիցս: Միասին կը խաղայինք, միասին կը  
ւերտեինք, միասին կը շափվեինք: Երբ ան հեռվի աղբյուրեն ջուր  
բերելու կ'երթար, ե՛ս ալ հետը կ'երթայի սափոր մը ուսիս: Երբ ես  
թռչուններուն թակարդ լարելու կ'երթայի գաշտերը, ա՛ն ալ հետս  
կուգար, սուտ սուլոցներով զիրենք հրավիրելու:

Ու ի՛նչ շարություններ չէինք ընել միասին: Երկու թիթեռ մեկ  
լուցկիի գամելով՝ դասարանին մեջ թռչնէլ. մեղուններուն թևերը  
փետտելով լարի վրա խաղցնել. ճանճի գլուխները ճզմելով՝ գրո-  
բերը զարդանկարել. տղոց բերանը շաքար մը տալով՝ ակռաները  
փրթնել... Լավ կը հիշեմ, որ օր մը ողջ մկնիկ մը լուցկիի տուփի  
մը մեջ մտցնելով՝ շորս թաթիկները շորս ծակերե դուրս հանե-  
ցինք ու ազատ արձակեցինք: Երբ գիրուկ դասատուն ու բոլոր աշա-  
կերտները տեսան, որ փոքրիկ տուփ մը սրահին մեջ ինքնիրեն

կը վազեր խենթի մը պես՝ ամենքն ալ սարսափահար դուրս խոյացան:

Անանո՛ւն ոգիսականներ՝ որ մեզ կիսաստվածներու պես հարգել կուտային դպրոցին մեջ: Ծիվաղային շարություններ՝ որ մեզ հրեշտակներու պես կ'ուրախացնեին...

Ավաղ, օր մը կուգա, ուր մեծագույն առաքինություններն անգամ չեն կրնար այս պզտիկ շարածճիություններուն շափ ուրախացնել մարդկային սիրտը...

Եվ սակայն չկարծեք որ մեր երջանկությունն անխառն էր. ո՛հ, ո՛չ: Կատարյալ մարդ ըլլալու համար գլխավոր բան մը կը պակասեր մեզի՝ սլեխն ու մորուքը: Ու ըսե՛լ որ, բուսնելուն պես կ'ածիլեինք...

Օր չէր անցներ որ դպրոցին ծառին տակ, ծերունի կոճղին վրա հասակնիս չչափեինք, մատներուս ծայրին վրա բարձրանալով, ու զմեզի խարդախ հարվածով մը շնեղքեինք կոշկոռած կեղևը՝ իբրև շափանիչ:

Սակայն հիմա որ տարիներն ու մահը մեր մեջ ամեն մրցում իսպա՛ն շնչեցին, ինչո՞ւ լխոստովանիմ որ, ան ինձմե հասակո՛ւմ ալ, ուժո՛ւմ ալ, ճարտարությունո՛ւմ ալ, շարությունո՛ւմ ալ միշտ գերազանց էր:

Լողալու մեջ իր նմանը չկար: Պայքարի մեջ մեկ հատիկ էր: Երբ ամեն Զատկի-Մնունդի հույն դպրոցին տղոց հետ կովի կը բռնվեինք ռազմական շարքերով՝ ճակատ ճակտի, քարերը է՛ն շնտակ ու է՛ն հեռու թոցնողը միշտ ինքն էր: Մեզի համար ամբողջ գյուղին մեջ Ազգին պատիվը փրկողն ան էր միայն:

Վա՛յ եթե իր ճամբուն վրա շուն մը հաչեց. երեք օր շանցած այդ շունը պիտի անհետանար:

Զէ՛ որ անգամ մը իր թռչնիկը փարատող կատուն աշտարակի գազաթեն յոթն անգամ վեր նետած էր մինչև որ յոթն հոգիներն խեղճին բերնեն դուրս գային:

Միևիվրիի այդ աշտարակը ճիշտ մեր տան դեմն էր. բարձր ու խարխուղ միևաբե մը՝ հունական հին մեհյանի մը վրա թառած. մեհյանը դեռ կանգուն է՝ միևաբեն փլած... Հոն կ'աղոթեի երբեմն բժշկության հայր-աստվածը. հիմա բուերն ու դեերը կը իշխեն հոն: Գիշերը սարսափը կը լեցնե այդ պատերը. ու լուսինը այդ ավերակներուն լեզու կուտա՝ կ'ըսեն:

Արամ այդ դեերն ալ արհամարհեց: Գիշեր մը աշտարակեն ներս սողաց, խաժար ու դարձգարձիկ սանդուխներն սկսավ բարձրանալ խարխափելով, պատերը շոյելով, ոտներն արյունելով: Երբոր գագաթը հասավ, շունը բռնեց, ձեռքն երկնցուց: Վերը անգզի բույներ կային ու ձագուկ մը կուզեր գողնալ: Բայց վա՛յ թռչունի ձագեր գողցողին... Իր սև աչերուն մեջ շարության կայծ մը փայլատակեց. անգզերը տեսան այդ կայծը և կտուցի սոսկալի հարվածներ տեղացուցին իր՝ աչերուն:

Իր դեմքին վրա մի՛շտ մնացին այդ վերքի սպիները: Սակայն տգեղություններ կան, որ գեղեցկութենեն ավելի կ'արժեն... Այդ օրեն ի վեր գյուղին հերոսն էր Արամ:

Քանի՛ քանի՛ անգամ աղջիկներու դպրոցեն կը կանչեին դայն՝ վարժուհիին դասագիրք մը տանելու, աշակերտներուն մարմնամարզ ցուցնելու պատրվակով: Եվ սակայն այս պատանին որ անգզերը կը փետտեր ու մանչերը կը ծեծեր, աղջիկներուն առջև տղու մը պես կը դողար ու մեղավորի մը պես կը կարմրեր...

Էգբը իրեն համար արտակարգ, բացառիկ, անբնական, անկարելի էակներ էին: Մայրիկը իր փոքր հասակեն մեռած ու իր բոլոր եղբայրներն ալ արու ըլլալուն՝ Մանչանոց կոչված իրենց տունը: Բոլորն ալ միևնույն փայտաշեն տաշված՝ ուժեղ ու շքեղ պատանիներ էին, — գյուղին փառքը: Բայց բոլորն ալ Արամին պես շվարած, ամաչկոտ, ախտագին զգայնություն մը ունեին: Կիները միայն հեռվեն տեսած ըլլալով՝ ձեռքի սեղմում մը գինաթափ կ'ընեն գիրենք...

Արամ քանի՛ կը մեծնար՝ այնքան կը տկարանար: Եկեղեցիին մեջ երգած ատեն ձայնը կը փոխվեր, դպրոցին մեջ պատասխանած տտեն միտքը կը խավարեր, գիրք մը կարդալու պահուն՝ էջը շարձուցած՝ կարդացածը կը մոռնար:

Տղոց մեջ տարտամորեն կը փսփսային, որ ասմոթ բաներ կ'ընեն», ասողնածուժը հալեր էր»...

Օրեր կային որ քովը չէր մոտեցվեր. այնքա՛ն հոռուես, դաժան, գայրացկոտ կ'ըլլար. բռնած բանը կը կտրեր:

Սակայն իր մտավորական ուժը կորսնցնելի վերջ՝ քիչ քիչ իր մարմնական առավելություններն ալ անհետացան: Մազերը փրցված Մամոնի մը պես՝ սմանողուկ, դողողուն, շվարած բան մը եղավ: Այտուհիները ցցվեցան, աչքերուն ծիրը կապարի գույներ ստացավ:

Ու շատնվեցավ մեկը, ո՛չ քահանան, ո՛չ վարժապետը, ո՛չ հայ-

բը, ո՛չ իսկ բժիշկը, որ այդ տգետ պատանիին բացատրեին թե այդ մենավոր ու մեղավոր զբոսանքները զինքը գերեզման կը տանեին...

Արևոտ օր մը, դանդաղորեն, ժայռերուն գագաթը գացինք միասին: Հանկարծ գրպանեն արծաթե խոշոր դրամ մը հանեց ու ձեռքի լայն շարժումով մը ծով նետեց գայն: Արծաթը վայրկյան մը փայլեցավ արևուն տակ, հետո անդունդին մեջ կորավեցավ ու պղտիկ ճողփյուն մը հանեց:

— Ասիկա տասներորդն է որ հորմես գողցա, ըսավ, ծով նետելու համար... Յուրաքանչյուր փորձությունս այնպե՛ս կուզեմ պատժել. բայց կ'զգամ որ ուշ է արդեն, կամքը մեռեր է մեջս, ալ թագավորի գանձ մը իսկ չպիտի բավե այս ծովը լեցնելու...

Ասիկա մեր վերջին պտույտը եղավ ու մեր վերջընթեր խոսակցությունը:

Արամ անկողին ընկավ ու ալ շելավ:

Մեր ծնողները մեզ արգիլեցին իրեն այցելել: Գյուղերու մեջ ուր գիտութենե ավելի բնազդը կը տիրե, հոն ուր բժշկի ոտքը կը կոխե, բարեկամները իրենց ձեռքը կը քաշեն՝ անասնական ինքնապաշտպանությունով մը: Ու ընտանիքը իր ցավին մեջ կը կրճկելի, միայնակ կը մնա իր հիվանդին հետ՝ որ հաճախ ամենատարրական զգուշությունն իսկ շունի իր սիրեցյալները չվտանգելու համար...

Ամիսներով տարտամ շշուկներով բավականացա:

— Երեկ գիշեր նորեն բժիշկը կանչվեր է...

— Թասերով արյուն փսխեր է...

— Փոքրիկ եղբայրն ալ անկողին ինկեր է...

Օր մը, սակայն, ծնողքես գաղտնաբար իրենց տունը մտա, ու վախն ի վախ սանդուխներեն վեր ելա:

Հիվանդին սենյակեն բժիշկը դուրս կ'ելլեր: Ընտանիքին անդամները գայն պաշարեր էին երկյուղած ձևերով:

— Ոտքդ պագնեմ, բժի՛շկ, կ'ըսեի ծերունի հայրը դողալով...  
Հուլիսի բա՛ռ մը տուր մեզի...

Բայց ան ճակատագրական կտրուկ շարժում մը ըրավ:

— Ամե՛ն ցավ վախճան մը ունի, ըսավ...

Բժիշկեն վերջ շուտով զիս ղրկեցին քահանան կանչելու: Տերտերն ինձի խաչ մը ու գիրք մը տվավ, ու խնդրեց, որ հետն երթամ: Վախն ու վատությունը սիրտս լեցուցին:

Սա այն ատեն դեռ չէի տեսեր, թե մարդ մը ինչպե՛ս կը մեռնի. սակայն հաճախ սոսկումով դիտեր էի թե ինչպես կը մեռնեին մեր թունավորած շուները՝ սալահատակները խածնելով, կանգնելով ու իյնալով, դողալով ու պաղատելով...

Սակայն այդ օրը սորվեցա ինչ որ բոլոր բժշկական Կաճառները շուգեցին սորվեցնել՝ թե մարդ մը անասունի թը պես լի մեռնիր...

Հոն՝ ուր Գիտության մարդը հուլիսի փոքրիկ բառ մը անգամ չէր գտած ըսելու՝ Կրոնքի պաշտոնյան հավատքի անհո՛ւն սլաշար մը բերեր էր իր մագաղաթի գրքին մեջ: Հո՛ն ուր բժիշկը կյանքը կը շափեր ու կը կտրեր շոր ձևով մը, քահանան հափտենական կյանքի անծայրածիր հորիզոններ կը բանար՝ օրհնական շարժումով մը: Ու երկու հազար տարիներն ի վեր կրկնված իր բառերը՝ մի՛շտ նույն գաղտնիքն ունեին ոսկեգծելու այն վերջին ժամերը, ուր գիտապես, ամեն հույս, ամեն հավատք, ամեն սեր, ամեն իրականություն ու ամեն երազ կը սնանկանա, կը մեռնի, կը փոխի Գերագույն պարտության ժամուն՝ գերագո՛ւյն հաղթության խաբկանքը:

Խարկա՞նք թե իրականություն, չե՛մ դիտեր: Սակայն այդ օրեն ի վեր համոզվեցա թե որքան ատեն որ մարդերը պիտի մեռնին՝ այնքան ատեն Գիտության կողքին պիտի ապրի նաև Կրոնքը...

Արդարև, քահանային մեկնելն վերջ, աննյութական շնորհ մը իջած էր արդեն հիվանդին դեմքին վրա: Անկողնին մեջ նստած, ձեռքը ձեռքերուս մեջ դրավ, խոսեցանք իրարու հետ՝ հի՛ն օրերու պես:

— Ինքզինքս երբե՛ք այսքան լավ չէի զգացած, ըսավ... Վաղը եթե արև ըլլա, կուզե՞ս որ միասին դաշտ երթանք պտտելու...

Հետո, հանկարծ լռեց, ականջը լարեց, տժգունեցավ:

— Կը լսե՞ս, ըսավ, իրիկվան զանգակն է... Կը հիշե՞ս, ամեն անգամ ես կը վարնեի մեռելին զանգակները... Օր մը երբոր իմ կարգս ալ գա, կուզեմ որ դո՛ւն զարնես ինձի համար. բայց այնպես ուժով քաշես պարանը, որ արար աշխարհ իմանա...

Սակայն ի՛նքն ալ, ե՛ս ալ, այնպես համոզված էինք որ այդ օրը երբեք պիտի չգար...

Հետևյալ օրը՝ գարնանային զմայլելի օր մը՝ ընդհատ ընդհատ զողանջ մը փրցավ օդին մեջ:

— Հրդե՞հ կա, մայրի՛կ, ըսի...



— Շուտով շապիկդ առ ու ժամ գնա, տղա՛ս, Արամը մե-  
տեր է...

Մեռե՛ր է... Մեռե՛ր է... Խենթի մը պես վեր վազեցի, փոք-  
րիկ խուցի մը մեջ բանտվեցա, դուռները զոցեցի, պատուհանները  
խցեցի՝ այդ ընդհատ ընդհատ ու անընդհատ զոզանջը չիմանա-  
լու համար...

Սակայն իզո՛ւր: Գյուղական զանգակը ամբողջ տարին խեժի  
համար լացավ:

Ընտանիքներ կան որոնց անդամները՝ խաղի թաղթերու պես  
խրաբու հետեւ կիչնան: Սոսկալի վարակումը հնձեց այդ դեռատի  
կտրիճները. մահը փակեց այդ տան դուռը: Ու միեւն յայսօր, գյու-  
ղի պատանիներուն կը ցուցանեն մանչերուն գերեզմանը:

### ԿՈՒՆԿԸ

Յուրտ-ձմեռ օր մըն էր: Գուրսը սառած հովը մտրակներու պես  
կը շաշեր անցորդներու երեսին: Ձյունն ըսես՝ աչքերը կուրցնելու  
աստիճան:

Հայրենակցի մը սենյակին մեջ կժկտեր էինք մենք, քանի մը  
ընկերներ, ամենքս ալ պանդուխտ: Գուռը ճաշ, ցուրտ հով մը  
բուժեց սենյակեն ներս: Կարոն էր, գերեզմանեն կուգար:

— Պը՛ռո, ըսավ, շա՛ն օդ. ասանկ օրով մարդ կմեռնի՞...

Քիչ վերջը, դուռը անգամ մըն ալ բացվեցավ. քանի մի հե-  
տամնաց ընկերներ ալ ներս մտան: Այս ձյունին տակ սպասած  
էին, որ դիակը ամբողջովին ծածկվեր, նույնիսկ մեկը՝ մեր բոլո-  
րն կողմն՝ հետին հրաժեշտի քանի մը խոսքեր ալ ըսած էր այդ  
մենավոր գերեզմանատան մեջ, այդ անժանոթ մեռելին վրա:

Ո՛վ կըճանչնար, ո՛վ պիտի ճանչնար ձրբք հազար ու մեկ  
բղկտված էջերը կյանքի ու Մահվան այն տոռաին՝ որ այսօր ձյու-  
նեքու տակ թաղեցինք, օտարներու փոսին մեջ: Առանց անունի,  
թռչունի դիակի մը պես...

— Ե՛ս ալ չէի ճանչնար ան, ըսավ մեջերեսս մեկը. բայց  
պանդուխտ մարդերը հասկեցի էին որ այդ օտարական հիվանդը  
հայ մըն է ու հայ բժիշկ մը կուզեք իր մոտ: Շարաթ մը հետո  
միայն կրցան զիս գտնել: Երբ իր սենյակեն ներս մտա՝ պատու-

հանին փեղկերը զոցված էին: Սակայն քիչ-քիչ այդ մթության մեջ  
քնմք մը գծազրվեցան, երկար, անկյունավոր, կանաչի զարնոզ  
գեղնությունով մը. խավարով ու լույսով շինված Ռեմպրանթյան  
զլոյս մը:

Օրկրորդ բանը որ տեսա այդ սևության մեջ՝ ոսկորի գույն  
մատներ էին, որ ինձի երկարեցան ու ձեռքերս սեղմեցին՝ կպշող  
փոնավությունով մը: Կարծես թե ալ կաթիլ մը արյուն մնացած  
լլկար իր մարմնին մեջ: Աչքերը իրենց փայլը արդեն կորսնցուցեր  
էին. սևության մեջ սև՝ չէին երևար:

Երբ ավելի վարժվեցա այդ կես-մթության՝ տեսա որ մորուքին  
վրա տեղ-տեղ կարմիր արյունը փակեր, թանձրացեր, լերդացեր էր:  
Մորթված անասունի տաք շունչ մը կ'ելլեր իր բերնեն, դանդաղ ու  
խորունկ: Կարծես անտեսանելի դանակ մը ներսեն, վերեն ի վտր  
ճեղքեր էր իր թոքերը:

Ալ նյութական ի՞նչ դարման կարելի էր տալ այս մարմինին,  
որ գրեթե մեռեր էր արդեն: Բայց ան խոսելու ճիգ մը ըրավ, հազը  
խեղդեց իր խոսքը. խոկացող, խոպոտ հառաչներեն բառ մը հաս-  
կեցա.

— Կո՛ունկը...

Ու ես երգեցի իրեն. ո՛վ չի գիտեր կոունկը, բոլոր աշերն ետին  
մնացած ուղևորներուն կոունկը... ու անդին՝ բոլոր ճիտը ծոած,  
անվերջ ճամբաներուն սպասողներուն կոունկը... Ու ինձի այնպե՞  
թվեցավ, որ իր հոգին հովացավ, զովացավ, լացավ... Իր սրտին  
բոլոր լուրերը հանձներ էր հավատարիմ կոունկին...

Այս պատմության վրա ամենքս ալ լռեցինք: Սարսափելի՛ բան  
մը կար ճակատագրին մեջ այս անժանոթ ուսանողին՝ որ հայրե-  
նիք գառնալու համար ճամբա ընկեր ու ճամբուն վրա մեռեր, թաղ-  
վեր էր իր շտեսած մեկ հողին մեջ...

Թորախտը որ հո՛ն էր, ի՛ր մեջ, դարանակա՛լ, տարիներն ի  
վեր սպասեր էր, որ բոլոր հույսերը իրավանան, բոլոր ուսում-  
ները կատարելագործվին ու բոլոր աշխատությունները ավարտին՝  
ինքն սկսելու համար իր ահավոր աշխատությունը, ու գերագույն  
ժամուն տալու համար գերագույն հարվածը... Ա՛խ, զզվելի՛, զըզ-  
վի՛կ հիվանդություն...

— Բժի՛շկ, ըսավ մեկը, երբ գերեզմանին մեջ երեսը բացինք՝  
մեյանի պես սև էր... Ինչե՛ն էր...

Բայց բժիշկը շտոսեցավ. մա՛րդ շտոսեցավ:

Լուսթյունը անգամ մըն ալ իշավ մեր վրա՝ քարի պես, ու այս անգամ ավելի ահավոր, քան առաջին անգամը: Այդ սառը կոտորելու համար՝

— Տղաքներ, ըսավ ուրիշ մը, վաղը Հայոց Կաղանդն է...

Բայց Կաղանդին վրա մտածողն ո՛վ էր: Մենք կը լսեինք ձյունները, որ կը թպրտային մեր ապակիին վրա, կարծես մեռելի մատները թպրտային մեր ապակիին վրա... Այս ցուրտին՝ իր գեղեցմանն փախած՝ մե՛ր մեջ մտնել կուզեր ան: Ու շես գիտեր ի՞նչ մը ուներ սպառնական այդ անանուն ու անծանոթ մեռելը. խորհրդանշան մը ու աղղարարություն մըն էր ան մեզի համար:

Ու իրա՛վ, իրա՛վ, այդ պահուն Մահը մեր վրան էր. այն Մահը որ ուսանողին ու բանվորին, հավատացողին ու ուրացողին, բժշկին ու բժշկվողին հավասարապես անծանոթ ու սարսափելի է...

Մե՛նք ալ մա՛րդ պիտի ըլլայինք, կրթութ՞յուն պիտի ստանայինք, լո՛ւյս պիտի տանեինք մեր խավար աշխարհին. սո՛ւտ, սո՛ւտ... Մենե որո՞ն շունչին մեջեն չէր շնչեր արդեն դարանակալ Մահը... Յուրաքանչյուրն ինքն իր վրա կը խորհեր, ինքն իր վրա կը կասկածեր...

Ո՛վ պիտի պատմեր ահավոր մեծությունը այս երիտասարդ հոգիներուն, որոնք աղոթքի մը կապն ալ կըմերժեին ողջերուն ու մեռնողներուն միջև: Այլապե՛ս, ամեն մարդ առանձնացեր էր ինքն իր հոգվույն մեջ...

Սակայն, հանկարծ, մութ անկյունե մը դողող ու ցած, երգ մը սկսավ, նախ մե՛կ բերնով, հետո բոլոր շրթունքներե. բարի ու ահավոր երգ մը, մահերգի մը պես աղաշավոր, աղոթքի մը պես վեհափառ երգ մը, որ սառը կոտորեց, արցունքները հալեցուց, սրբտերը տաքցուց, բոլոր հոգիները, բոլոր հոգերը, բոլոր տրտունջները, բոլոր մրմունջները իրա՛ր միացուց.

Ղարիպին սիրտն է խոց, ճիկարն է վարած,  
Կերած հացն է լեղի, ու շուրն է հարամ...

Կո՛ւնկ, կո՛ւնկ, ամեն աշխարհի անկյուններե, ամեն սրտի խորշերե, քանի՛ ծանր լուրեր կապեցին ոտքերուդ, ու դո՛ւն կըրնա՞ս թռչիլ... Քանի՛ քանի՛ մահեր կապեցին քու թևերուդ, կո՛ւնկ, թևավո՛ր հառաչ որ կընա՞ս թռչիլ...

Ու երբ բժշկին նշանին վրա՝ բոլո՛րս մեկ ոտքի կեցանք իբրև սուգի նշան, մարմինս փուշ-փուշ եղած՝ ես կը խորհեի որ այդ

վայրկյանին, հեռունե՛րը, հեռունե՛րը, ծովերուն ու լեռներուն հեռունե՛րը տեղ մը, ծերուկ մայր մը ու ալևոր հայր մը, ժպտելով ու հուսալով, ճամբո՛ւն, ճամբո՛ւն կը նային. մինչդեռ մենք գիտեինք որ ա՛լ տղան չպիտի գար, չպիտի գա՛ր...

Նվ այս անգամ, ամենո՛ւն հետ, բայց դողալով, ու կարծես մո՛րն ահանջին կ'երգեի ես մահահոտ երգը... Պանդխտության ճամբաներուն վրա անանուն մեռնողներու ամբողջ ցեղ մը՝ համայն աշխարհը թունավորելու չափ դառնութ՞յուն դրեր էր այդ երգին մեջ, ու քարերը լացնելու չափ քաղցրություն...

## ԱՆԻՇՎԱՏ ԳԱՆՁ

Այն տարին Ալպյաններու վրա հեռավոր գյուղ մը գացեր էի օդափոխության: Օր մը, պտույտե վերադարձիս, պանդխտակալտը զիս սա՛ խոսքերով դիմավորեց.

— Ներողություն, պարո՛ն, հիվանդ կին մը եկած է հոս, առտը վրեն ի վեր բժիշկ կը փնտռենք: Ամուսինը քովի սրահն է:

Քովի սրահը քառասուննոց մարդ մը կար. մարդ ըսածս՝ գլուխ մը, ու գլուխն ալ՝ երկար ու սուր ճակատ մը, կոնաձև շաքարի մը պես, ճակտին տակ՝ գիշակեր թուչուի խոշոր քիթ մը:

Իրեն երջանկություն մը պատճառելու համար երբ հայ ըլլալս հայտնեցի, ուրախության ու զզվանքի այնպիսի հաջորդական ու հանկարծական արտահայտություններ առավ՝ որ կարծես թե պըտուղ մը խածած ատեն որդ մը ելլեր մեջեն:

Այս մարդերը որ իրենց ցավը պահելու համար մինչև աշխարհիս ծայրերը եկեր, լեռներուն գագաթները ելել էին՝ իրենց շա՛ր բախտեն, հայ բժշկի մը ձեռքը կիյնային հանկարծ:

Իր նիհար ու տժգույն դեմքեն այնպե՛ս հետևեցուցի որ հիվանդը գուցե ինքն էր. բայց ան թուրքերեն լեզվով՝

— Ոչ, ըսավ, փառք Աստծո, ես ի՞նչ ունիմ, հիվանդը իմ կինս է, իր սենյակը հրամմեցեք:

Կինը քանափեին վրա երկնցեր էր՝ երեսը ափերուն մեջ, սև մազերը մինչև գետինները թափած:

→ Նլի՛ր, Արմինե՛, այս տոբթորը քեզ պիտի փրկե...

— Ես իմ փրկությունս մարդերեն չե՛մ սպասեր, ըսավ կինը, կարճ ու վիրավորիչ, առա՛նց գլուխը վեր հանելու:

Ու այս առաջին այցելութենէն միտն այն հասկցաւ, որ Ար-  
մինն իր էրկան կը պատասխանէր հայերենով մը, որ փակ դուռ  
մըն էր ամուսնին առջև:

Երկրորդ այցելութեանս բոլորովին ուրիշ կերպ տեսաւ Արմի-  
նէն:

Մազերուն մեջ, ականջներն վար, վզին շուրջ, կուրծքերուն  
վրա, թևերն վեր, մինչև մատներուն ծայրերը, ու մնացածն ալ  
բովի սեղանին վրա՝ ոսկինե՛ր, ոսկինե՛ր, ոսկինե՛ր, հազար ու մեկ  
գիրքերն ու գանձ մը լեցնելու շափ:

Խեղճը՝ Հայ ըլլալս լսեր, ու փոխանակ ամուսնին պես զըզ-  
վելու՝ ուզեր էր մեռնելն առաջ մեկու մը գեղեցիկ երևալ: Ու իրա՛վ  
ալ, այնքա՛ն գեղեցիկ էր ան՝ որ բժշկի մը ներված չէ ըսել...

Սև մազերուն մեջն, այդ հազի՛վ քսան տարու դեմքը ծու-  
րեր, իր տարիքն ավելի փոքրացեր, աննյութական ու անկարելի  
բան մը դարձեր էր: Աչքերը խորունկցե՛ր, խորունկցե՛ր էին, միջա  
նորսդին նայելն, ու մազի պես լայն ու կապույտ շրջանակ մը  
ա՛լ ավելի մութցուցեր էր զանոնք: Այդ տժգնութեան մեջ դուրս կը  
ցայտեն իր շրթները, բարա՛կ բարա՛կ՝ երկու թեթև գիծերու պես,  
ու կարմի՛ր կարմի՛ր՝ երկու վարդի թերթերու պես... Անշուշտ այդ  
սիրահար շրթները փա՛կ դուռ մըն էին իր ամուսնին առջև:

Հետո՛, շա՛տ հետո միայն հասկցաւ որ, այդ ամբողջ կինը՝ գեռ  
կենդանի, բայց արդեն գոց դագաղ մըն էր այդ մարդուն համար:

Վա՛յ մարմինի բժշկին, որ հոգին չի հասկնար: Ի՛նչ հոգե-  
կան ցավեր կան որ հիվանդին ցավերը կը բյուրապատկեն, կը  
թունավորեն, մահացու կը դարձնեն, այլև կը բացատրեն այդ  
ցավերը:

Այս խեղճ կինը այնքան կը վախնար իր էրկան հետ մինակ  
մնալու գաղափարն՝ որ իր գավառացի հայրը իր հետ բերեր էր:  
Սակայն ինչի՞ կրնար օգտակար ըլլալ այդ գրեթէ անդամալույծ  
ու իր սուգին մեջ զառամած հայրը, որ վրայի վրա իր վեց զա-  
վակներն ու կինը գերեզման տարեր էր:

Բոլո՛րն ալ հազալով ու թքնելով, մեկը մյուսը վարակելով,  
թոքերնին փսխելով մեռեր էին: Ու այս կինը, որ ամենո՛ւն ալ ինչ-  
պես մեռնիլը տեսեր էր՝ համոզված էր որ ինքն ալ պիտի մեռնե՞ր:  
Ենպատե՛ս՝ ո՛ւ...

Ձուր կը քաշակերի գայն, որ քանի գեռ մեկ թոքը, կտկորո՞ւ:

ազիքները վարակված չէ՞ն, քանի որ դեռ շերմութեան առտիճանը  
բարձր չէր, պետք էր շուտով հակաթոքախտ ներարկումներ սկսիլ:

— Ավելո՛րդ ցավեր, կ'ըսեր կինը...

— Ավելորդ ծախսեր, կ'ավելցնէր ամուսինը... Արդէն ո՛վ  
ըսավ որ Արմինէն հիվանդ է... Փա՛ռք Աստուծո՛ւ ի՛նչ ունի... Թեթև  
հազ մը... այսօր կա՛ վաղը չկա...

— Այսօր կա՛ վաղը չկա՛..., կը հեզներ կինը, որ շատոնց  
զգված էր այս կեղծիքներն, ու ձգեր էր որ ի՛նչ որ ուղե՞ն ընեն  
իրմով:

Հայրը կը փափաքեր զայն է՛ն սուղ սաճատորիմները տա՛նիլ,  
է՛ն մեծ բժիշկներուն ցուցնել, է՛ն թանկ տեղերը դնել:

Բայց ամուսինը ուրիշ միտքն էր: «Այս հիվանդութեան գեղն ու  
դարմանը օղն է» կ'ըսեր... ու օգը ձրի՛ էր: Անոր համար ալ մինչև  
հոս տեղվանքը քաշեր, բերեր էր գիրքնք, որպէսզի թե՛ աժան ըլլա  
և թե՛ ծանոթներն ալ շիմանան թե հիվանդութեանը ի՛նչ է...

Ու այս մարդը — եթէ այդ գլխով մարդ մը կրնար երջանկու-  
թյուն զգալ — երջանի՛կ էր հոս: Ամեն տեղ կը մտնէր, կ'ելլէր:  
Պանդոկապետին հետ սակարկութեան մը կ'ընէր թուրքերն: Տղաք-  
ներուն լոխում մը կուտար՝ որոնցմէ տուփերով բերած էր ամեն  
պատահականութեան համար: Կիններուն լեռան ծաղիկ մը կը քա-  
զեր՝ ու իր լեզվով կը բացատրեր որ իր երկրին մեջ ավելի աղեկ-  
ները կային: Մարդերուն թրքական ծխախոտ մը կը պլորեր իր  
մատներուն մեջ՝ որ ծուխն գեղնած մազիլներով կը վերջանա-  
յին:

Ու այս բոլորը այնպիսի կատակներով ու սրամտութեաններով  
համեմված, որմէ մա՛րդ բան մը չէր հասկնար, բայց ամեն մարդ  
կը խնդար: Լեռան ձանձրույթը փարատելու համար իրենց այս տե-  
սակ հուպիտ մը պետք էր:

Նույն միջոցին, փոքրիկ սենյակի մը մեջ, — որուն պատուհանը  
լեռներու կենսունակ գեփյուտին դեմ փակված էր՝ հիվանդը շմեց-  
նելու համար, — երիտասարդ կին մը կը հազար, վերձակները կը  
խածնէր, կուլար...

Ա՛խ, այդ կեղծ հուպիտին մեջ ե՛ս միայն կը տեսնեի զզվելի  
մարդը: Բայց ան ուզեց զի՛ս ալ շահիլ. ու թվանշաններով, թվա-  
կաններով, մթութեաններով, բարդութեաններով, մեջ-մեջի, երկար  
տարակ պատմութեան մը հրամցուց, «գիտ իրողութեաններու ճամ-  
բուն վրա դնելու համար...»:

Այս բոլորն ազոտ-կերպով ա՛յն կը հետևեր որ իր զինը այժմ միա՛կ ժառանգորդն էր իր ծերունի հոր, «որ իր բոլոր զավակները կորսնցնելն վերջ՝ ալ երկար պիտի չկրնար ապրիլ, խեղճը...»:

— Գա՛նձ մը կա, տո՛թուր, խոշոր գանձ մը կա...

Ու այս բացազանչության մեջ մեղսակցության, խորամանկության, ոճրագործության ամբողջ գանձ մը կար...

Իր միակ մտամտուքը ան էր որ այդ երկուքն ո՞րը պիտի մեռնե՞ր առաջ, ծերունի հա՞յրը թե հիվանդ աղջիկը... Իսկ ես՝ երրորդ մը կը տեսնեի որ գուցե այդ երկուքն ալ առաջ մեռնե՞ր, ի՛նքը, ամուսի՛նը:

Իր թարխի գույն դեմքին վրա ցցված այտուկները՝ ներքին ջերմութենեն կղմինտրի գույն կ'առնեին երբեմն: Գլուխը ուսերուն մեջ իջնու ու կռնակն ալ կքեր էր՝ կարծես ահագին պատասխանատվության մը տակ: Բերնեն կանաչորակ ու մածուցիկ խուփ մը կ'արձակեր ամե՛ն տեղ ու ամե՛ն ատեն, «աշխարհի վրա» թքելուն պես... Երբեմն նույնիսկ կը պատահեր որ արյուն փսխեր, բայց ան պարզապես «սրտիս զայրույթն է» կ'ըսեր...

Ստոհկյան պաղարյունության մը՝ տարիներո՞վ իր շրթները ենթարկեր էր ան սոսկալի վարակումին՝ օ՛ր մը տիրանալու համար ոսկրի գանձին...

Ա՛խ, այդ գանձը. քանիներո՞ւ թունավորման պատճառ եղած էր ան: Հայրը օ՛ր մը չէր ուրախացեր անկե. իր զավակներուն համար դիզեր էր այդ հարստությունը: Տղաքները ուզեր էին դաշիլ այդ նզովված ոսկրներուն. ու զեղիս կյանքով հյուծած, սպառած, մեռած էին՝ մեկը մյուսին ետևեն, իրար վարակելով: Երիտասարդներն վերջ մայրն ալ թաղեր էին:

Այդ ծերունին ի՛նչպես դիզեր էր այս հսկա հարստությունը հոն՝ ուրկե՞ր երիտասարդ բազուկներ մինչև Ամերիկաները կ'երկարին սև հաց մը ուտելու համար: Այդ գանձին մեջ իրենց անեծքը չէի՞ն նետած անո՞նք որ արյուն ու արցունք կուլային: Այդ ոսկի-զարդերուն լեռը, որով ծերունին իր հիվանդ աղջիկը ծածկած էր՝ քանի՞ հարսերու գլուխն, քանի՞ այրիներու ձեռքն խլված էր...

Արմինե կ'անգիտանար այդ բանը: Հազի՛վ շափահաս՝ Պոլիս գիշերօթիկ վարժարան մը զրկեր էին զայն. ու հազի՛վ ավարտած՝ այս տգետ մարդուն ծոցը նետեր էին:

Բայց կիները աստվածային գիտություն մը ու անասնական

բնազդ մը ունին: Ինչ որ շեն գիտեր՝ կ'զգան և ի՛նչ որ կ'զգան՝ իրենց ամբողջ հոգվույն ու մարմնույն մեջ կ'զգան...

Այս քսան տարու կնոջ մեջ համա՛յն մարդկությունը թունավորելու շափ դառնություն կար: Ո՛չ կը հազվեր, ո՛չ կ'ուտեր, ո՛չ կը խոսեր: Ու ոսկի-զարդերն ալ միայն օր մը դրած էր, ինժի համար. բայց ծերունին այնքա՛ն ուրախացեր էր այդ օրը...

— Աղջի՛կս, ուզե՛ ինձմե ինչ որ սիրտդ կ'ուզե... միայն անգամ մը ուրախանալդ տեսնեմ... բան մը ուզե իմ կարողությանս սահմանին մեջ...

Այդ կարողությունը անսահման էր, բայց ինչ օգուտ: Աղջիկը ալ ավել կը դառնանար, կուլար, «Մեռնի՛լս կ'ուզեմ...» կ'ըսեր:

Ան կը զզվեր իր ամուսնեն՝ որ շար հրեշտակի մը պես կը ծպտեր. կը զզվեր նաև իր հորմեն՝ որ իր վեց զավակները թաղելն վերջ դե՛ռ կ'ապրեր ու կուլար...

Եվ սակայն այս երկու մարդերն ալ իրե՛ն համար կ'ապրեին: Այդ երկու փտություններն ալ որոշ ճիգով մը կը կախվեին կյանքեն, մեկը՝ աղջկան վերջին շունչը, մյուսը՝ անոր գանձը հավաքելու համար... Այս նպատակին հասած թուփին իսկ՝ իրենց կետին զարնվող գնդակներու պես՝ երկուքն ալ գետին պիտի ինչային:

Ահագին տռամի մը վերջին դերակատարներն էին ասոնք: Անդամալույծ վաշխառուին առջև կանգներ էր Վրիժառուն՝ կողոպտված, մերկացված, անպատվված ցեղի մը վիժուկը: Ու այդ երկու հակընդդեմ ուժերուն մեջ կհյուծեր Հայու-կնոջ տիպարը, ազնվական ու հլու...

Ահագին հրդեհի մը վերջին սյուններն էին ասոնք՝ իրարու կըրթնելով կանգո՛ւն մնացած. մեկուն ինչալը մյուսներն ալ պիտի տապալեր. ու այդ օրը հեռու չէր, որովհետև երեքն ալ փոքրիկ կրակով կ'այրեին ներսիդիեն...

Դեռ որքա՛ն տևեց այդ մունջ տռամը, շեմ գիտեր: Ես ստիպված եղա այդ գյուղը թողուլ ու հիվանդանոց վերադառնալ: Բայց հաճախ կը խորհիմ իրենց վրա: Արդյոք ո՞ր կը շարունակեն հիմա «անիծված ոսկեխնձորին խաղը», ո՞ր հողերուն վրա, ո՞ր հողերուն տակ:

Դեռ աչքիս առջևն է այն փոքրիկ բույնը, ուր շարաշուք բու մը ու վայրի կատու մը իրենց մեջ կը բզբռտեին հիվանդ թռչնիկ մը, առա՛նց որ ան անգամ մը ճշար... Ընդհակառակը, իմ ամե՛ն

օգնութեան փորձերս մերժեց. «Միա՛յն բան մը կը խնդրեմ, ըսա՛վ, որ օր մը պատմութիւնս գրես...»:

Են՛դճ աղջիկ. կույս հոգիները պատմութեան շունչին: Ու բու տօգոսյն դեմքդ՝ առանց սա երկու դաժան մարդոց ստիճաններուն՝ անհասկանալի նկար մը պիտի ըլլար, ձերմա՛կ թուղթի մը պես:

### ՍՏԱՄՈՒՅԻՆ ՉՈՂԸ

Սրվանձտյանի ըսածին պես՝ Վանեցիին կազը մինչև Գինաստան է գացեր:

Սա ծերացած ագուսի գլուխը՝ որ պանդոկին ծառերուն տակ ֆը՛ռթ ֆը՛ռթ սուրճ կը խմե՛՛ կասկած չունիմ որ մերթնեմերն է:

Ան մյուսներուն պես՝ ճաշարանին մեջ փակված՝ հապճեպով շնոր իր չախաճաշը: Ներս գնաց, գավաթը սուրճ ու կաթով լեցուց, իր ձեռքով դուրս բերա՛վ, ծառերուն տակ տեղ մը ընտրեց, անհուն խնամքով սիկարեթ մը փաթեց: Այն ատեն այդ պարզ նախաճաշը փոխվեցա՛վ, աննյութացա՛վ, աղոթքի մը շնորհքն ու արքայութեան մը երանութիւնը ստացա՛վ: Մեկ ձեռքին ծխախոտը առա՛վ, երբեմն-երբեմն ֆստացնելով. մյուս ձեռքին առա՛վ շոգիացած գազաթը՝ որ այս վայրկյանին ամբողջ տիեզերքին առանցքը կը կազմեր. շորթերը դողալով երկարեցան՝ կարծես սիրահարուկան համբույրի մը համար. հետո պիտի երեսն կախված կաթիլներուն վրա լա՛յն ձեռք մը պտտցուց՝ օրհնական շարժումով մը...

— Փա՛ռք ստեղծողին...

Հակառակ հաճույքը հավերժացնելու իր հայանի ճիգերուն՝ երբ դյուրական գավաթը իր պարունակութեան հետ կորսնցուց նաեւ իր ամբողջ կարևորութեանը՝ մոտեցա ու բարեկեցի... Տեսնելու բան էր իր ուրախութիւնը. քիչ մնաց ակնոցներին արցունքներ պիտի ցայտեցնէր... Ա՛յ տարիքով ու ա՛յս գլխով մարդերուն համար մեծագույն շարժարանքն է լուսնի դատապարտվիլ- իրենց լեզվին հասկցող մեկը կը փնտռեն՝ իրենց փորձառութեան ու խնայողութեան հավաքածուն պարզելու համար անոր առջև:

Ստամբուլի հիվանդութեան համար (ո՛վ պիտի գուշակեր իբր նախաճաշին) Լոգան եկած էր: Բայց այս քաղաքին մեջ ստամբուլի տասնամեները երկուք են, — բժշկապետ Պուրժեն ու Կոմպլը, երկուքն ալ հակիրճօրէն ռեժիմներով կը հաշտդին թե՛ հաքստանալ-թե՛ հիվանդները առողջացնել: Զարանճիներ ասկե կը հետեցնեն

թե հարուստի հիվանդութիւնն է, անգործ մարդոց շղայնութեան է, կուշտ ստամբուլի երևակայութիւնն է...

Սակայն այս մարդը այն շարանճիներէն չէր. ո՛հ, ո՛չ... «Մեքացած ագուսի գլուխ մը» ըսի, բայց աղա՛վելի ուղեղով... Այդ երկու հակառակ դարմաններն ա՛յն հետեցուցեր էր, որ երկուքն ալ լավ էին, քանի որ երկուքն ալ կը լավացնէին... Ու երկու ուտերիմ տախեզերահոշակ»-ներուն գիտութիւնը իրար խառնելով, իր անձնական փորձառութիւնն ալ վրան բարդելով, արձակուրդի այս քանի մը ամիսներու համար Կյանքի օրագիր մը շիներ էր, որուն կը հետեւեր գավառացիի հաստատամտութեամբ:

Այսպես, իր շարաթները կ'անցնէին առանց փոփոխութեան, իրարու հար և նման՝ լուսանկար պատկերներուն պես: Իր օրերը շագփած-ձեւված էին՝ Մայր-Տոմարի մը պես կանոնավոր: Իր յուրաքանչյուր ժամերը կանխա՛վ ժամացույցի մը պես լարված էին՝ ստամբուլին շուրջ... Ու անոնցմե վայրկյան մը փրցնել՝ Սուրբ Գիրքին էջ մը պատռելու պես բան մը պիտի ըլլար...

Առավոտյան ութը՝ նախաճաշի խորհրդավոր ժամն էր, միշտ առաջին օրվան հանդիսավոր արարողութեամբ, միշտ նույն ծառերու շուրջին: «Ներքեն-տաղը՝ հանգիստ» ըսած էին բժիշկները: Հարկա՛վ, նախաճաշը պիտի մարսվեր... «Աճեկէ՛»-ը այդ մարտողութեանը տկարացնելու պաշտոնը ունէր: Լրագիրը դրոշակի մը պես կը պարզեր: Հոնքերը կը պուտեր, ու ծայրն ի ծայր առանց բառ մը փախցնելու կը կարդար. պարունակութիւնը ի՛նչ որ ալ ըլլար, մինչև տա՛սը տեւելու էր այդ թերթը... Ու այս ընթերցումը՝ որ իր ժառանգորական միակ սնունդն էր՝ հանգիստ քունի մը համարժեք էր իրեն համար...

Տասնին կ'արթննար: Անհո՛ւն գուրգուրանքով, ծոցին թռչուն հանող տղու մը պես, ներսի գրպանեն շիշ մը կը հաներ: Այդ հանքային հեղուկը որ իր այնքան պատվով հյուրասիրած նախաճաշիկին վերջին հարվածը պիտի տար՝ աչքերը գոցելով ցմրուր կը պարպեր, երկու «տախեզերահոշակ»-ներուն կենացը...

— Աստված գիրենք անպակաս ընն տառապալ մարդկութեան...

Ասկե վերջ՝ տասնեն-տասներկուք՝ գործունեութեան ու շարժումի նրկու՛ւ երկար ժամեր կը սկսէին, ստամբուլը ցորեկվան ճաշին պատարաստելու համար: Այդ գործունեութեանն ալ ամեն օր ան-

փոփոխ նույնն էր, ու շարժած-ձևաված նամակներ գրելու մեջ կը կայանար:

— Ես այս հիվանդ վիճակովս, կ'ըսեք, Զվիցերիո լեռներեն Մանթաշոֆին ամբողջ գործը կը վարեմ Ափրիկեի մեջ. նեղոսին ափերը քարյուղով կ'ողողեմ... Մեր արձակուրդն ալ ատանկ...

Հետո ձեռքով գրածները ոտքով նամակատուն կը տաներ.—

Զէ՛ որ բժիշկները ճաշեն առաջ փոքրիկ պտույտ մը հանձնարարած էին՝ ախորժակը բանալու համար... Ա՛խ, այդ ախորժակը...

Վերադարձին՝ ճաշի պահն էր արդեն. նշանավոր պահը, երբ իր երևակայական ժամացույցին երկո՛ւ ասեղներն ալ փորը մատնանիշ կ'ընեին ու ամբողջ ժամ մը ստամոքսին վրա կանգ կ'առնեին... Նախ խաշած մաֆառոնին կ'ուտեր՝ Պուրժեին կենաց, հետո խաշած բրինձը՝ Քոմպլին հոգվույն... Երբ իր երկո՛ւ անձիմենքն ալ կը հատցնե՛ր՝ ծուռ աչք մը կը նետեր մեր պնակներուն:

— Սա խորոված հնդկահավին հոտը քիմքս կը քրքրե... ու տեղական գինին անուշիկ գույն մը ունի... Ի՛նչ կ'ըսես, բժի՛շկ:

Ի՛նչ ըսեի: Այս մարդը համոզված էր որ իր գործ դրած գիտական միջոցներով եթէ քար ալ ուտեր պիտի հալեցներ... Ես՝ բնականեն սակավապետ՝ իբրև միակ դեղ շարժվորության պատվերներ կուտայի իրեն: Բայց ան կը պատասխաներ.

— Բժի՛շկ, բժշկյա՛ գանձն քո... Աչքդ բա՛ց. գերեզմանին մեջ ա՛լ խորոված հնդկահավ չկա... Աստված ամբողջ երկրագունտը գույնզգույն բանջարեղեններով ու պտուղներով ծածկեր է նե՛ միա՛յն հոտվըտալու համար չէ... Մայր-Բնությունը ծովն ու հողը ձուկերով և երեններով լեցուցեր են նե՛՛ միա՛յն զանոնք նկարելով ճաշարանին պատերը ծածկելու համար չէ. պետք է որ ստամոքսիդ պատերն ալ համ մը առնեն...

Այս մարդուն բերնին մեջ «Մայր-Բնությունը» ստնտու կնոջ իմաստ կ'ստանար: Զուկերուն ճակտին գիրը այսպե՛ս կը հեգնե՛ր մարդերունն ալ սապես...

— Արարիչը մարդուն երկար բազուկներ ու կարճ լեզու մը տվեր է՝ որ շատ աշխատիս ու քիչ խոսիս (ա՛հ, եթե գործադրեր ըսածը), պզտիկ սիրտ մը ու մեծ ուղեղ մը տվեր է՝ որ մեկ զգաս ու երկու հաշվես. իսկ ուղեղին հարյուրապատիկ մեծությամբ որովայն մը ալ տվեր է՝ հասկըցնելու համար որ մեծ միտքերը փորեն կուզան... Ուրեմն առաջին հոգո հո՛ն պիտի ըլլա. եթե ստամոքսդ

դուն քաղցրությամբ լլցնես՝ ան քու կյանքըդ դառնությամբ կը լեցնես...

Այս «քաղցրություն» բառը պատահական նմանություն մը չէր. աչքովը անուշին պնակին կ'ակնարկեր որ իր առջև անցնեմ... Այդ սալորի անուշը իր ճաշերուն սովորական վերջաբանն էր որ միշտ սա խոսքերով կը փակեր.

— Ա՛խ, մայրիկիս եփած անուշը ուրիշ է...

Ու «մայրիկ» բառը, որ իր երեք խոսքին մեկն էր՝ իր շորքած ու ճմռթկած բերնին մեջ մանկական անուշություն մը կ'ստանար: Այս հիսուննոց ամուրիին մայրի՛կը՝ որ իր տղուն անուշ կեփեր...

Բայց հիմա այս ահագին ճաշը մարսվելու էր. ժամը մեկեն մինչև շորս՝ տառապագին շրջան մը կար: Նախ կես ժամ փորին վրա կը պառկե՛ր՝ ըստ Պուրժեի. հետո կը դառնար կես ժամ մըն ալ կոնակին վերա կը պառկե՛ր՝ որ Քոմպլին խոսքն ալ տեղ անցնի: Հետո կծիկ մը կ'ըլլար և աչ ու ձախ ծունկերով քսանական անգամ փորթ կը ճգմե՛ր՝ զայն պարպելու ջանալով. ասկեց վերջ ալ գետինը ծունկի կուզար՝ նավակի մը մեջ նստելու ձևով մը՝ ու թիավարության անհատնում շարժումներ կ'ըներ... միշտ «տիեզերահրշակ»-ներուն պատվերին համաձայն:

— Սա փորդ քիչ մը հանգիստ ձգե, կ'ըսեի... Ստամոքսը կնոջ մը կը նմանի, որքան իրեն ուշադրություն դարձնես, այնքան նազ կ'ընես...

Բայց ամուրի մը ինչպե՛ս հասկնար այս բաղադրության ամբողջ նշանակությունը: Ան կը պատասխաներ ինձի.

— Միջատը որ միջատ է՝ գնդասեղի շափ գլխու մը ետևեն ահագին փոր մը կը քաշե... Չորքոտանիներն ու թռչունները երեքական ու չորսական ստամոքսներ ունեին... Եթե բնությունը մարդուն մեկ ստամոքս մը տվեր է, զայն շինամեղը անաստվածություն է: Եթե՛ չհավատաս՝ վարդապետներուն հարցուր... Տարիներով կը զարգացնենք պզտիկ ուղեղ մը, որ հաճախ մեր դժբախտության պատճառ պիտի դառնա, բնավ չենք դաստիարակեր ահագին ստամոքս մը, որ կյանքին աղբյուրն է, հոգիին հյուսն ու ծուծն է... Աս կետիս մեջ եվրոպացիները մեզ զլած անցած են...

Ու ստամոքսի դաստիարակության այս դժվարին գործը այնքան կը հոգնեցներ զայն, որ այդ անվտանգ թիավարության փորձերն վերջ՝ Մորփեոսի գիրկը կիյնար:

Ժամը շորսին սենյակեն դուրս կ'ելլեր. բայց այս անգամ թե-

Քնցած, կազմութիւն, զվարթացած, լուսավորւած, բողբոջին այլ մարդ եղած:

Թեյի ժամն էր հիմա, ու խոսակցութեան ժամը: Խոսքը բերնես կը գողնար:

— Քու պատմածդ ի՞նչ է որ, ես պատմեմ որ դուն լսես...

Իր սովորական այս հառաջաբանին կը հաջորդեին անվերջանալի, աներևակայելի, անկարելի պատմութիւններ, արևելյան արամտութիւններով ու սնամեջ տրամաբանութիւններով լեցուն, օձադի ոսկեզօծ ու անշոշափելի պղպշակներու պես, որոնց հազիվ կը դիպիս ու կը ճաթին...

Բայց այս պղպշակներուն վերջը չկար: Որկրամուկներու հատուկ այս զվարճախոսութիւնը կը տևեր մինչև իրիկուն: Այն ատեն՝ այդ բոլոր հրախաղութեան փորձերն վերջ՝ միայն սև ածուխ մը կը մնար նորին. պահ մը լուսավորւած այդ գլուխը՝ ծեր ազուպի գլուխ մը կ'ըլլար դարձյալ:

Այնպես որ, երեկոյան ճաշին իր խոսակցութեան նյութերը կը լրջանային, պատմա-փիլիսոփայական տխուր տեսութեաններ կ'ըլլային:

— Նափուկներն անկումը շատեր խել մը պատճառներու կը վերագրեն. բայց դուն հեռունները մի երթար, իբրև բժիշկ՝ նափուկներն ճակատագիրը իր ստամոքսին մեջ կարդա. կտեսնե՞ս հոն քաղցկեղը... Վաթերլոն ու Սենթ-Նելենը այդ վերքն կը սկսին... Ես ալ միշտ ասանկ չե՛մ եղած. ժամանակ մը կար որ արարական նժույգի վրա թռած ատենս բոլոր սրտերուն հառաչները ետես կը թռչեին. բայց ստամոքսին ցավը եկավ ու Հալեպին առյուծը քարյուղի պաշտոնյայի մը վերածեց:

Տարբեր էին նաև իր կերածները: Երեկոյան սեզանին՝ երբեք միս չէր դնէր բերանը, որպեսզի գեշ երազներով հոգին չպղտորէ գիշերը: Մածունը երեկոյան թագուհին էր. ու իրեն համար բնավ կասկած չկար որ Աստված կովը ստեղծեր էր որպեսզի մարդերը մատեն քամեն իր ստինքներն...

— Կույսի մը պես մաքուր, մոր մը պես բարի՝ մածունը... որուն համար Մեչնիբով անմահութեան հեղուկն է կ'ըսեր...

Այդ մեծաբանակ մածունը կը սկսեր քիչ-քիչ թթեցնել, շիգերը քակել, քուն պատրաստել...

Բայց քնանալին առաջ՝ աստղերուն տակ գիշերային պտույտ մը կընէր՝ կերածները տեղավորելու ու վազվան ուտելիքներուն

վրա խորհելու համար... Երբեմն սակայն կը պատահէր որ ուրիշ բանի մը վրա խորհեր:

— Բժիշկ, ըսավ գիշեր մը, դուն իմ հիսուն տարիներուս մի նայեր... ես դեռ կույս եմ հոգով-մարմնով... հաճախ կը խորհիմ ամուսնանալ, բայց հուզմունքն կը վախնամ... քու կարծիքդ ի՞նչ է, ինչպե՞ս կուզա ստամոքսիս...

Ու չկարծե՛ք թե անիրական մարդ մըն է այս: Այս կենդանագրին տակ կրնայի ծանոթ անուն մը դնել. բայց ճանչցողները հասկըցան արդեն: Գիտցե՛ք միայն որ այս մարդը ապրեցավ, սերունդներ դաստիարակեց. հետո պաշտոնյա եղավ, հարգվեցավ ու մեռավ... գիտե՛ք ինչն... փորի ցավին: Եզիպտոսի մեջ՝ հարսանիքի գիշեր մը՝ շատ ուտելին ստամոքսը ճաթեցուցեր է քսին... ճակատագիր:

Այս ճակատագրին վրա հիմա կը խորհի՞ արդյոք այն որ ձուկերու ճակտին գիրը կը կարդար... Միայն թե իր խոսքերը դեռ ականջիս կը հնչեն անդրշիրիմյան պատվերի մը պես.

— Աչքդ բաց, բժիշկ, գերեզմանին մեջ ա՛լ խորոված հընդ-կահավ չկա...

## ՎԵՑԵՐՈՐԴ ԶԳԱՏԱՐԱՆՔ

Հանդիպած առաջին աշակերտին հարցուր թե որո՞նք են մարդկային զգայարանները: Առանց տարիքի խտրութեան նո՛ւյն պատասխանը պիտի ընդունիս:

— Տեսանելիք, հոտոտելիք, ճաշակելիք, լսելիք, շոշափելիք... Եվ սակայն ամեն մարդ գիտե թե ուրիշ զգայարանք մ'ալ կա, վեցերորդը, այն որուն մասին չի խոսվիր. և որ աշխարհ կը կենսավորի:

Գպրոցները կը լռեն. իր անունը անպատշաճ է: Ազատորեն կտրենալ խոսելու համար՝ իր պաշտոնին հարձար անուն մը տանք ու համարձակորեն կոչենք զայն սիրելիք:

Բոլոր ճաշակելիքներն ու հոտոտելիքներն ավելի կարևոր է ան: Իրմե՛ կախում ունի՝ որ երջանիկ կամ թշվառ, առողջ կամ տխուր՝ մարդկութիւն մը ծնի:

Կյանքի բոլոր հարցերուն մեջ ամենեն առաջինն է սեռական

հարցը: Բնագետներն ու ընկերաբանները կը համաձայնին կրկնելու թե է՛ն դժվար խնդիրն է ան:

Բայց ինչ կ'ընենք մենք, ընտանիքի հայրերս:

Կը թողունք որ տղան ինքնիրենը լուծե այդ կնճոռոտ հանգույցը: Ու մեր կողմն կը բավականանանք միայն իր մեջ ներմուծելով զզվանքի ու ամոթխածութեան զգացմունքը: Սեռական տգիտութունը իբրև անհրաժեշտութիւն և իբրև սրբութիւն կը նկատենք:

Սակայն օր մը պիտի գա — անխուսափելի՛ օրը — երբ մեր շրսածը փողոցին տղաքները պիտի ըսեն, ու որքա՛ն հոռի կերպով...

Վա՛յ այն ատեն այդ տղուն:

Մնողքին դավադիր լուսթիւնը, ընկերներուն ոճրապարտ մեղսակցութիւնը, արգելված բան մը ընելու գիտակցութիւնը իրար միանալով՝ երեկվան հրեշտակը այսօրվան իժիժ պիտի վերածեն:

Չեմ համարձակիր նկարագրելու թե այնպիսի տարիքի մը մեջ երբ պատանիին ջղային դրութիւնը դեռ հագիվ կազմակերպելու վրա եղող նուրբ — ամենանո՛ւրբ — դրութիւն մըն է, ի՛նչ ահա՛վոր ավերներ կը գործեն այդ անվերջ ու անանուն ցնցումները:

Սակայն վտանգը միայն մարմնական չէ, այլ հոգեկան: Ոչ թե միայն իրենց ֆիզիկական առողջութիւնը կը խաթարեն անոնք, այլ նաև իրենց բարոյական առողջութիւնը, իրենց նկարագիրը, իրենց զվարթութիւնը, իրենց սրբութիւնը:

Այսպես, երիտասարդ մը դպրոցեն կ'ելլե, վարդ մըն է, որ իր բույրը կորսնցուցած է, և որուն բոլոր թերթերը փրթած են: Եթե դեռ միակ թերթ մը ունի, ան ալ առաջին ցնծուհին պիտի փրցնե, այնպես որ փշալից կոթ մը միայն պիտի մնա իր ապագա կնոջ ձեռքը...

Որովհետև, — ինչո՞ւ չէ, — այդ տգետ պատանին, որ ոչ մեկ առողջապահիկ կանխազուշտութիւնով չղինեցինք, վաղը, սիրելու խաբկանքով, համբույրի մը փոխարեն պիտի ստանա ախտերուն այն սարսափելին, և դարմանվելու խաբկանքով՝ կրկնորեն պիտի զոհվի այն տիտղոսավոր շռայլութիւններուն, որ բժշկութիւնը պոռնկացուցին...

Ահա թե ինչպես՝ ամոթի և մեղքի պատրվակով՝ թույնի աղբյուր մը կը դարձնենք այն զգայարանքը, որ ամենն իրական երջանկութեան գործիքն է՝ Բնութեան կողմն մեզի նվիրված:

Չզուշտութիւն: Չստորացնենք, չխաթարենք, չբթացնենք զայն, սեռական զգայարանքը:

Կենդանական աշխարհին մեջ քանի՛ քանիներ կան որ միայն այդ զգայարանքով ու միայն այդ զգայարանքին համար կ'ապրին:

Ո՛վ չի ճանչնար էֆեմեր թիթեռնիկը, այն շնորհալի թիթեռնիկը որ ամառ գիշերներ կուգա ձեր լապտերին շուրջ բացխփելու իր թեթև թևերը: Ան կ'ապրի ամենն կարճատև ու ամենն գեղեցիկ կյանքով որ կարելի ըլլա երեւակայել: Ճաշակելիք շունի, չի կրնար ոտել, քանի մը ժամն պիտի մեռնի. բայց պիտի մեռնի ամենն քնական, ամենն իղեալ մահով, առանց ծերանալու, առանց հիվանդանալու, առանց ցավելու... Երջանի՛կ թիթեռնիկ. սնունդի պետք չունի, որովհետև ստամոքս չունի. կյանքի հոգ չունի, որովհետև իր օրերը համարված են: Իր միակ զբաղումը սերն է. ան պիտի բարձրանա եթերին մեջ, իրեն պես Վաղամեռիկ թիթեռնիկ մ'ալ պիտի գտնա: Ու պիտի սիրե, ու պիտի մեռնի իրեն նվիրվելով... Ան պիտի իրականացնե բանաստեղծին երազը. «Սերի, սիրելի, մեռնի...»

Իրեն համար չէ Շամֆոսին սերը, այն սերը որ «երկու մաշկերու հալումն է» և որ այլասերված մարդկութիւն մը միայն կրնար հնարել:

Հազար դարերու քաղաքակրթութիւնով մը Բնութենէն հեռացած մարդկային սրտին մեջ անգամ՝ տեսեք թե ինչպիսի ճոխ ծաղիկներով կը պճնվի ան.—

«էն թշվառ ուղեղին մեջ թողեք որ սերը քսանչորս ժամ աշխատի, ու ահա թե ինչ պետք է գտնեք հոն, կ'ըսե Ստենդալ: Չմեռային տերեւթափ ճյուղ մը կը նետեն Սալցբուրգի աղահանքի մը մեջ, և երբ քանի ամիս մը հետո զայն դուրս կը քաշեն, այնպիսի պսպղուն բյուրեղներով ծածկված է, աղամանդներու այնպիսի անհունութիւն մը պճնած է ամենափոքր ոտներն անգամ, որ անկարելի է ճանաչել նախկին ճյուղը...»

«Երեւակայութիւն» պիտի ըսեք: Ազատ թողեք երկու սիրահարները որ Բնութեան ձայնին հետեին, ու պիտի տեսնիք թե ի՞նչ գեղեցիկ իրականութիւն է այդ երեւակայութիւն կարծվածը:

Հոգվույն և մարմնին այնքան սեղմ ու փոխադարձ ազդեցութիւնը մարդկային ուրիշ ոչ մեկ գործունեութեան ատեն կարելի է տեսնել:

Միսին մեջ այնպես մը կը փոթորկի հոգին, որ ոսկորներեն



ամենն անշարժ բջիջներն անգամ վայրկյան մը իրենց ապրիլը  
դը զգան:

Արուն ու էգը, սերն ու սեռը, մարմինն ու հոգին իրար խառ-  
նըվելով միանգամայն Տիեզերքին ու Աստծուն կը խառնվին:

Մարդկային ո՛չ մեկ զգայարան, կենդանական ո՛չ մեկ գոր-  
ծողություն, բնագիտական ո՛չ մեկ երևույթ այնքան խորհրդա-  
վոր է:

Այդ գերազույն վայրկյանին, է՛ն սև մարդը արշալույսներ հըր-  
դեհելու ընդունակ հրաշեկ հոգի մը կ'ըլլա: Է՛ն ստոր մարդը կը  
հավաքե ինչ որ կա իր մեջ լավագույն՝ կուսական կաղապարի մը  
մեջ նետելու համար զանոնք:

— Վայրկենական ցնցո՛ւմ մը..., կըսե Մարք Օրել:

Բայց այդ մեկ ցնցումը անհունները կը դողացնե ու հավիտ-  
յանները կը բեղմնավորե...

Այսպես է սերը մաքուր, առողջ, բնական սերը:

Իմաստությունն է թե հիմարություն. չեմ գիտեր: Կ'զգամ  
միայն որ մարդկային ամենաբարձր արտահայտությունն է անի:  
Անով է որ Աստված մեր մեջ կը հայտնվի. Աստված սեր է:

Պատրաստենք մեր զավակները այդ մեծ օրվան համար: Ու  
սորվեցնենք իրենց Վերածնունդի առաջին օրենքը.

Առողջ սեր, առողջ սեռ:

Վ Ա Հ Ա Ն  
Թ Ե Բ Ե Յ Ա Ն

ԵՐԿԵՐ

ԵՍ ՍԻՐԵՑԻ

Ես սիրեցի, բայց ոչ ոք  
Սիրածներես գիտցավ թե՛  
Զինքը որքա՛ն սիրեցի...  
Ո՞վ կարդալ սիրտը գիտե:

Ամենեն մեծ հրճվանքիս,  
Ամենեն սուր վիշտերուս  
Ներշնչողները, ավա՛ղ,  
Զիս շեն ճանշնար այս պահուս:

Սերըս կարծես այն գետն էր,  
Որ իր հոսանքը անբավ  
Առավ լեռան ձյուններեն  
Ու լեռը զայն շտեսավ:

Սերս այն դուռն էր կարծես,  
Ուրկե ոչ ոք մտավ ներս.  
Ծաղիկներով ծածկելված՝  
Գաղտնի պարտեզ մըն էր սերս:

Ու եթե սերըս ոմանք  
Երկինքին վրա՝ անսահմա՛ն  
Տեսան ծուխի մը նման,  
Կրակն անոր շտեսան...  
\* \* \* \* \*

Ես սիրեցի, բայց ոչ ոք  
Միրածներես գիտցավ թե  
Ձինքը որքա՛ն սիրեցի.  
Ո՞վ կարողալ սիրտը գիտե...

### ԱՂՎՈՐՆԵՐԸ

Աղվորն ա՛ն է հավիտյան՝ որ անցավ օր մը քովեդ  
Եվ աշվըններդ օծեց,— աստվածային այցելո՛ւ,—  
Գեղեցկությամբ մը որուն ա՛լ չդարձար նայելու,  
Եվ շուգեցիր հանդիպել անոր անգամ մըն ալ գեթ...

Աղվորն ա՛ն է տակավին,— հավիտյանն հավիտյա՛ն,—  
Որ նայվածքիդ արևին տակ կը մեծնար համրորեն,  
Որ զերդ ծաղիկ մ'օրորվող գարնան անուշ հովերեն,  
Երբ մեկնեցար՝ մտքիդ մեջ մնաց միշտ թարմ, միշտ բուրյան...

Եվ աղվո՛րը,— դուն գիտես օրհնյալ անունը անո՛ր,—  
Անիկա է որ կարծես պիտի կրնար քեզ սիրել,  
Որ սերդ անշուշտ գուշակեց և սպասեց ակընկոր,

Որուն սակայն լավ է որ շուգեցիր սիրտը խոռովել...  
Աղվորն անոնք են միայն որ տենչանքիդ ընդմեջեն  
Անցան գացին ու հիմա քեզ հեռուե՛ն կը կանչեն...

### ԱՆՈՒՆԿ

Ինչո՞ւ անունըդ այստեղ չկարենամ գրել ես  
Եվ աշխարհի չհայտնեմ, թե քեզ ինչպե՛ս սիրեցի...  
Երկու վանկե՛րը անոր կը զրուցեմ գաղտնապես,  
Եվ այն ամբողջ կը թվի սիրո մատյան մը ինձի...  
Ինչո՞ւ անունըդ այստեղ չկարենամ գրել ես...

Ղիմա հեռո՛ւ իրարմե՛ միայն անունըդ ունիմ՝  
Թերնիս վրա, համբույրի մը պես աննյութ և անուշ...

Գիշեր ատեն, սենեկիս մենության մեջ մտերիմ  
Ես դայն կ'ըսեմ և ահա քեզ կը տեսնեմ քաղցրահուշ...  
Հիմա հեռու իրարմե՛ միայն անո՛ւնըդ ունիմ...

Գեղեցկությունդ ու իմ սե՛րս հորինեցին զայն կարծես...  
Միտքս իր անդու տրոփմամբ անընդհատ զա՛յն կը հեգե՛  
Թեպետ վաղո՞ւց մտքիս մեջ քեզ ամբողջ գոց գիտեմ ես...  
Քեզ չճանչցած ունեի՞ր դուն այդ անո՛ւնը միթե...  
Գեղեցկությունդ ու իմ սե՛րը հորինեցին զայն կարծես...

Ո՛չ, չեմ ուզեր, չեմ կրնա՛ր ես զայն հանձնել աշխարհի.  
Երկու վանկովն իր կ'ուզեմ խնկել իմ կյա՛նքս միայն,  
Եվ երբ վերջին արևիս վերջին ճաճանչը մարի՛  
Անունդ ի շուրթ դեռ կ'ուզեմ ողջունել ա՛յգը մահվան.  
Ո՛չ, չեմ ուզեր, չեմ կրնա՛ր ես զայն հանձնել աշխարհի...

### ՔՈՒ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՅՍ ԳԻՇԵՐ...

Քու հիշատակդ, այս գիշեր, զիս լալու շափ կը հուզե.  
Կարծես մեկնած էր սրտես, և գաղտնաբար այս գիշեր  
Ես կը դառնա, իր հին տեղն ու հին գզվանքը կ'ուզե,  
Կը սեղմըվի գրկիս մեջ, կը բարձրանա կուրծքս ի վեր...

Քու պատկերըդ աչքիս մեջ և քու ձայնը՝ ականջիս,  
Կը թրթրոան այս գիշեր, երակներուս մեջ կարծես  
Քաղցրահոտ շունչդ է լեցված, որ կ'զգլիս, կ'օրրե վիս,  
Մինչ երեսես ալ կ'անցնին կարծես մատներդ անտես:

Ես կը դառնան մի առ մի մեր հին ժամերն անկորուստ,  
Կարավանին հետ աստեղց անոնք կ'ուզա՛ն վերստին,  
Հոգիս փարա՛խն է բացվող ընդդեմ իր քա՛ղցըր հոտին:

Հիշատակովդ, այս գիշեր, կ'զգամ անշա՛փի զիս հարուստ,  
Ձիշա՛փի բարի, երջանիկ... որ գթությամբ մը աճհուն՝  
Կը մտածեմ զայն բաժնել երկրի բուրբ խեղճերուն...

## ԱՀԱՎԱՍԻԿ ԿՈՒՋԵՆԻ...

Ահավասիկ... Կուզեի շարունակել և ըսել՝  
«Լավագույն սերը ան է, որ լուսթյան մեջ կ'անցնի»:  
Գեղեցկագույն թռչունը այն թռչունն է անընտել՝  
Որուն ճախրը կը դառնա ոլորտներուն մեջ երկնի»:

Ահավասիկ... Կուզեի երագիս մեջ փայփայել  
Գողտր գլուխ մը քումայթ և հասակ մը արքենի,  
Մենավորիկ պտըտիլ բաղձանքներու մեջ անել  
Եվ դառնալ ետ և գտնել սերս միշտ նույն, միշտ գաղտնի:

Երագս է այս, սիրական և ընտանի հի՛ն երագ,  
Եվ միմիակ կարելին անկարելի տենչերուս,  
Որուն մեջ, ա՛հ, թե կենար տարիքիս անցնող վազն ի վազ:

Բայց լի՛ կենար, և դուն, խեղճ, իմ խե՛ղճ հոգիս, կը թողուս,  
Որ հին ընկերրդ՝ մարմինն, կյանքի գետին մեջ տղմուտ  
Ձքեզ վարե ու տանի և քեզ զարնե խութիխութ...

## ԿԸ ՍԻՐԵՆԻ

Կը սիրեի վաղանցուկ խոովքները մարմնական,  
Աններելի խոովքներն, որոնց սակայն հեշտանքով  
Կը դիմեի աղբյուրին, ինչպես հոտերը կուզան  
Գինովնալով, համարաբար, օշինդրի բարկ թուփին քով:

Կը սիրեի ձևերուդ ընտանությունը աղվոր,  
Մտվերին մեջ դիմացես հնչող տաք ձայնդ տրտմած,  
Եվ նուրբ հասակդ ճկուն և աչքերդ լուսավոր,  
Որ վառելով կ'իջնեին հոգիս մեջ մթամած:

Ու կ'իյնար մութը, ինչպես օրհնություն մը մեր գլխուն,  
Կուզար քանդել մեր մեջտեղ թումբը լույսին, քար առ քար,  
Մինչ մազերուդ բերնիս տակ զգլխիչ բույրը անհուն  
Խունկե հոգիդ էր կարծես, որ դեպի ինձ կ'ամբառնար...

Ո՛վ սիրական, երբեմնի խոովքներն վաղանցուկ  
Չմնաց բան մը հիմա, ո՛չ ցավ, ո՛չ խինդ, ո՛չ նախանձ,  
Մինչդեռ հոգիդ, որ ճանչցա՝ կը բնակի հիս ծածուկ,  
Ան իմ սուրբս է, և անոր՝ խորհերըս տոնն են անանց...

## ՀԱՆՔՄԸ

Միակըտուր սև-անփայլ մետաքսն ամբողջ զինք ծածկած  
Եվ քայլերուն մետաքսն խոր շրշյունովը թեթև՝  
Որ ազդերուն քնարին կարծես նվա՛զն ըլլար ցած,  
Կ'երթա՛ հանըմն՝ հուզելով մուշկի ալիք մ'իբ ետև...

Ժանեկահարդ թևեն դուրս կը բխի ձեռքը պզտիկ՝  
Ջոր նախանձոտ սև ձեռնոց մը կը պահե կիսովին,  
Մինչ ուղղանկյուն ճակատեն ինկած քողն ալ լուսանցիկ  
Մանրածարիբ աչքերուն կ'անթեղե հո՛ւրքը խորին...

Կամուրջին վրա, հորդազեղ վերջալույսի մը ներքև,  
Կ'երթա հանը՛մը այսպես, հորիզոնե հորիզոն,  
Մթնցնելով Ոսկեղջյուրն ու դյուրթելով երեկոն...

Կ'երթա՛ հանըմն՝ անմատույց, քողածածուկ, հոյաձև,  
Կի՛ն կամ ոգի, պահ մ'ելած պալատներեն Պոլիսի,  
Պոլսո Ոգի՛ն, խուսափուկ, անքննելի՛, սխրալի՛...

## ՄՏԱՆՈՒՄՍ

Ո՛չ, մտածումս անուշ է դեռ և տրտում...  
Չե՞ս զգար զայն՝ աշվրնեհեղ սահող վար,  
Ինչպես մարող բոցի մը փայլն անհատնում,  
Ինչպես թռչնած ծաղկի թերթեր հողմավար:

Հեռուներեն իմ մտածումս կ'իջնա վրադ,  
Ձերդ տատրակ մը զանգակատան բարձունքն՝  
Կ'իյնա վրադ՝ վիրավոր և հուսահատ  
Եվ սրտաբո՛ւյր դեռ մատուռին հին խունկեն:

Տեսա՛ր առեն մը նայվածքիս մեջ պայծառ  
Սեր-ծաղիկին ծլարձակիլը բոսոր...  
Կարմրեցար և ձեռքիս տակ ծոցեցար...

Օ՛հ, ձեռքիս տակ... Անշրպետ մը մեզ այսօր,  
Լուռ սերերին ճակատագի՛րը դժնե,  
Մեզ իրարմե անվերազա՛րձ կը բաժնե...

### ԵՄ ԶԻՆԲ ԿԱՐՄԵՄ

Ես զինք կարծեմ ուրիշ անգամ տեսած եմ  
Եվ այդ աչքերն՝ արդեն, արդեն կը սիրեմ,  
Միայն չէի ես դեռ իր ձայնը լսեր  
Եվ պահեցի զայն հոգվույս մեջ գաղտնասեր...

Սակայն նորեն հեռացավ ան, և նորեն  
Իր պատկերը ընկղմեցավ քաղցրորեն  
Եվ գոցվեցավ ալիքներեն անցյալի,  
Ալիքներուն տակ գերդ գոհար սիրալի...

Ա՛հ, թող երթա ու շնայիմ հետևեն,  
Թող հանդարտի սրտիս խոռովքը տարտամ  
Եվ աշխարհի մեջ հավիտյան զինք մոռնամ...

Միայն երբ գա մահվանս ժամն, այն ատեն  
Հիշեմ իր ձայնն ու իր նայվածքը հանկարծ,  
Եվ այդ դողին մեջ հեռանա շունչս անդարձ...

### ԴՈՒՆ ԶԳԻՏՅԱՐ

Դուն շգիտցար, շեն գիտեր այդ տարիքին մեջ կանայք,  
Թե այն ամառն ինչ սիրուն, ինչ գեղեցիկ իսկ եղար.  
Ինչպես աչքիդ ու ձայնիդ շղթան օղակ առ օղակ  
Շուրջս կ'առնեի ու կ'ընկնեի դիս քո գերիդ դողահար...

Շուրջիդ մեջն շարունակ ձկող գերին քեզ հետ,  
Զոր դուն երբեմն հազիվ զգացիր մոտդ, ու երբեք  
Զկարծեցիր, թե ան կյանք կ'առնեի միայն քու աեսքեդ  
Եվ կ'ըլլար մերթ հուսալից և մերթ նորեն սրտաբեկ...

Դուն շգիտցա՛ր ասիկա... Եվ հեռուն ալ կրր որ  
Մտածումներըս ամեն, գեթ տատրակներ սպիտակ,  
Գիշեր, ցերեկ, անվճատ, հեշտաթոփշ, անմոլոր,

Կը թռնին դեպի քեզ՝ իբրև իրենց քիվին տակ,  
Զգիտցա՛ր, թե կյանքիս ժառն էր, զոր ամբողջ՝ կտցակիր  
Կը բերեին թափել շուրջդ, որպեսզի վրան կոխեիր...

### ՆՁՐԵՆ, Ո՛Վ ՍԵՐ

Նորեն, ո՛վ սեր, դիս զարկիր և թողուցիր վերավոր...  
Դանակին ծայրը սրտիս դպավ, սրտիս մեջն է արդ.  
Եվ արյունիս այդ փեղքեն կը զգամ բխումը զվարթ,  
Եվ չեմ կրնար, չեմ ուզեր խլել դանակը աղվոր...

Իմ էութունս ընդառաջ ցատկեց իսկույն այդ վերքին,  
Ընդունեցի զայն, ինչպես հաղորդութունն սկիհեն,  
Դանդաղեցի, բայց ինչպես կուրբերը, օր կը տեսնեն  
Հանկարծակի, նշտրակի մը հարվածեն առաջին...

Եվ եթե վերքս այսքան ինձի անուշ է հիմա,  
Անոր համար է, որ դիս կը դարձնե անցյալին,  
Անոր համար, որ սրտիս իր հին արևը կուտա...

Ո՛վ քաղցրություն... Հոգիս մեծ հառաչներ կը թռնեի,  
Անըջագոծ աչքիս մեջ մերթ արցունք կա, մերթ ժպիտ,  
Եվ կը տեսնեմ ամեն ինչ արցունքներու պես վեհա

## ՏԵՐ, Ի ՎԵՐՋՈՒ

Տե՛ր, ի վերջո, երբ նվաղի լույսը կյանքիս,  
Վերջին շնորհ՝ պիտի ուզեմ, որ դեմս ըլլա  
Անոր պատկերն այն տարիքին, ուր սիրեց գիս,  
Նույն աչքերով և նույն ժպտովն ալ անուղղա...

Թող ատիկա ըլլա իրկուն մը ամառվան,  
Երկինքը թող առնե իր գույնն ամենանուրբ,  
Խաղաղություն մը պարուրե թող ամեն բան,  
Եվ թող մտքիս վրա իջնա ստվեր մը սուրբ...

Որոշապես պիտի գիտնամ թե ալ կ'անցնիմ...  
Ոչ մեկ զղջում պիտի կրժե սիրտս սակայն.  
Թե այս միակ կյանքս իսկ ըլլա, օ՛հ, աստված իմ,  
Անոր համար շնորհակալ եմ քեզ միայն...

Եվ այդ պահուն հանկարծ ծովն մը լուսավոր  
Իմ անցյալիս օվկիանեն խաղաղադեմ,  
Ինչպես կղզի մը, թող հառնե պատկերն անոր,  
Ու ես հուզված և հմայված զանի դիտեմ...

Ձայն ընդերկար, հավերժության երկար վայրկյան  
Մը թող դիտեմ, ծաղկասպիտակ ու հեշտագիծ  
Այդ փոքր կղզին, որ թարթիչներս երբ որ իյնան՝  
Թող ինձ թվի, թե ճիշտ հասա իր ծոցն անբիծ...

## ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Երջանկությունն այս է լուկ... Երկու հոգի ըլլալ հոս,  
Երիտասարդ ու հարուստ, գեղեցկադեմ, քաջաոռղջ,  
Որ կ'ունկընդրեն իրարու, երբ կ'մնան իսկ անխոս,  
Եվ իրարմով են ամբողջ...

Երկու հոգի մեկ տան մեջ, մեկ սենյակի մեջ մինակ՝  
Երբ իրիկվան լամպարին կը գեղու լույսն ընտանի,

Երբ տուն կուգա այրը որ՝ ծնած բարի աստղի տակ,  
Կինն աստղին մեջ կը տանի...

Երկու հոգի, հավիտյան խորհրդակից իրարու,  
Որ շեն պահեր և շունեն իրարմե բան մը ծածուկ,  
Որոնց աչքին բնության առեղծվածն իսկ ահարկու  
Կը պարզըվի անշշուկ...

Երկու հոգի, աստված իմ, հազարներու, բյուրից մեջ,  
Որոնց մին ես ըլլայի, ինչպես մյուսն ալ անիկա,  
Ան, որուն դեռ կը պահեմ սրտիս մեջ հույսը անշեջ,  
Եվ որ պիտի ա՛լ չգա...

## ԱՄԱՌՆ ԱՆՑԱՎ

Ամառն անցավ, ու սիրո ծարավս անհագ մնաց միշտ...  
Գաշտերը զիս առանձին տեսան ցերեկն ու երբեք  
Գիշերն ալ վրաս շծորեց ո՛չ հեշտություն և ո՛չ վիշտ,  
Չնայեցա աստղերուն՝ հուսալից կամ սրտաբեկ...

Անցավ ամառն առաջին՝ այս հողին վրա, ուր երբեմն  
Այս խեղճ սիրտը խենթի պես տրոփեր էր և հյուծեր.  
Այս գլուղն, այս ծովն, այս բլուրն եղած էին կյանքիս սեմն,  
Ուրկե տղա բաժնված՝ կը դառնայի իբրև ծեր...

Կը հուսայի, աստված իմ, և կը հուսամ տակավին,  
Որ հեռավոր, հյուրամերձ այլուրներուն մեջ հոգնած  
Եվ շիթ առ շիթ իր արյունն իզուր վատնած այս հողին  
Պիտի գտներ զինք այստեղ կենդանացնող ջուրն ու հաց...

Այս հողին վրա, որ այնքան զիս հրճվեցուց ու լացուց,  
Իր վրայն լուսանցնող տեսքովը գողտր հասակին,  
Պիտի չըլլա՞, աստված իմ, որ գեթ սեր մը վաղնջուց  
Իր դամբանեն արթննա ու զիս գգվե վերստին...

ՓԱՓԱՔ

Անուշ հոգի մը ըլլա՛ր,  
Ես այն հոգվունց սիրահար,  
Ան իմ երկինքըս ըլլար...

Ես այդ հոգին պաշտեի՛  
Ինչպես երկինքը ծավի,  
Քայն հետուհի՛ն պաշտեի...

Ան ցղանա՛ր սրտիս մեջ  
Իր լույսերովը անշեջ,  
Ես սուզվեի՛ անոր մեջ...

Անուշ հոգի՛ մը միայն,  
Ու գրկեի՛ ես անձայն  
Ձայն հոգիիս մեջ միայն...

ԱՆՎԱՐՆԻՒՆ

Կ'ուզեմ մեկը — ուզելու վարժությունն իսկ կորուսեր,  
Կարծես մոռցե՛ր եմ հիմա —  
Որ փուլթ չէ թե ինձ համար չզգա ոչ տենչ ու ոչ սեր՝  
Բայց որ իմ սերըս գիտնա...

Գիտնա՛ գառնուկը, ինչպես զինքը սիրողը գիտե,  
Գիտե թուռնն ալ ինչպես,  
Ու կ'որոշե՛ զայն իսկույն ուրիշ ամեն մարդերե,  
Անոր հետ քաղցր է ու հեզ...

Զսիրելով հանդերձ զիս՝ երախտագետ ինձ ըլլա  
Ձինք սիրելու համար շատ.  
Սիրե՛ սիրովիլը ինձմե ու զնե վիզն ապիս վրա՝  
Վստահությամբ մը ազատ...

Իր բառերու փոխարեն, որոնք մանկան մը ըսված  
Անուշ բառեր պիտ' ըլլան,

Ան մերթ ինձի ձեռքն իր տա և մերթ հուզված, երկյուղած՝  
Երկար նայվածք մը միայն...

Ազվոր ըլլա՛ բայց ըլլա դեռահասակ ու մարուր,  
Մաքո՛ւր՝ սրտով ու մարմնով.  
Ըլլա հաճախ ան ուրախ, բայց և երբե՛մըն տխուր,  
Լույս և ստվեր քովե քով...

Փափուկ ու տաք մատներով հպի՛ երբե՛մըն հոգվույս՝  
Նման վերքի մը ցավոտ.  
Ձիս սփոփել կամենա, ինձ ներշնչե՛ քիչ մը հույս,  
Գիշերս ընե՛ առավոտ...

Այսքանք բա՛վ է ինձի, կ'ուզեմ այսքա՛ն միմիայն,  
Եվ գիտեմ՝ թե շունենա՛մ  
Պիտի այս քիչե՛ ալ հիմա, ...ու մոռցե՛ր եմ ահա զայն,  
Մոռցե՛ր՝ ուզելը անգամ...

ԵՐԵՎԱՆԻ ԳԻՇԵՐ

Երեկ գիշեր — չեմ գիտեր երե՛կ էր ան՝ թե երազ —  
Սիրո մոտեն ես անցա, եղա այնքա՛ն մոտ, այնքա՛ն՝  
Որ, ա՛հ, դըպա՛ իսկ անոր ու ան փախավ հագիվհագ  
Եվ դեռ մատներըս կարծես գլխու պտույտ կ'ունենան...

Երեկ գիշեր՝ անսահման ուրախության ի հաշիվ  
Ես ժողվեցի իրական, անմահական փշրանքներ,  
Որոնց վրա մտածումս, զգայարանքս հեշտի՛վ  
Կը մնան այժմ առկախ՝ շահերու պես տարուբեր...

Երեկ գիշեր երջանի՛կ եղա միայն այդքանով,  
Երազն ու կյանքը մութին մեջաեղ եկան քովե քով,  
Կյանքս երազո՛վ հորդեցավ, ինչպես երազս ալ կյանքով...

Եվ այսօր բեռ մը կարծես հոգիիս մեջ կը տանիմ,  
Հոգիիս մեջ ու մարմնույս՝ բեռ մը գաղտնի, մտերիմ,  
Որուն տակ մերթ կը հեամ՝ և մերթ անո՛վ կը թըրիմ...

## ԱՏԵՆՈՔ

Ատենոք հունտ մը հույսի՝ հոգիիս մեջ կը բանար  
Ուրախութեան ծառ մը մեծ... Լուսածաղիկ, լուսավառ  
Աչք մը՝ սուզված աչքիս մեջ, ձեռք մը ձեռքիս մեջ թողված  
Կը վազըններ հեիհն սանձակոտոր սիրտս հանկարծ:

Բայց խենթ սրտին հետեւն կը հասներ միտքը խելոք,  
Միտքը խելո՞ք, խելացի՞, և ինչպես Զեան ատենոք  
Պրոմեթէնն ապստամբ՝ զայն կը զարներ շղթայի  
Ու կը ձգեր զայն մինակ, իր ժայռին հետ ամայի:

... Կը հիշե՞ս ձեռքդ այն գիշեր, այնտե՞ղ, դարձին այգիին,  
Մեջքիդ վրա, ձեռքիս տակ թռչունի պես դողացող...  
Եվ կը հիշե՞ս խավարին մեջ շիթ առ շիթ լուսաշող  
Ինկագ բառերը մերին, ու հառա՛ւղ ալ տարորեն:

Այդ փափուկ պահը կյանքիս մեջ կը կմնա տակավին,  
Մեռած կյանքիս մեջ մեռած աղավնիի մը նման,  
Ու կը մնչե ընդմեջեն իր կիսաբաց կտուցին՝  
Իր բացակա ընկերոջ շա՛տ անուշ բան մը... Ի՞նչ բան...

## ԱՆՈՆՔ

Մեկո՛ւն հոգին տեսա ես  
Ու սիրեցի՝ ձեռքն  
Ու քայլերեն՝ որ կ'ելլեն,  
Գարծես միշտ վե՛ր աշխարհես...

Մեկն իր ձայնին նվագով  
Զիս քնացուց, արթնցուց,  
Զա՛յն շուրերու հինավուրց,  
Հեզամբմունջ, թարմ ու զով...

Հետո մազերը մեկուն  
Խենթեցուցին պահ մը զիս՝  
Բռնած իրենց մեջ հոգիս...

Բայց ուրիշի մը ժպտուն  
Աչքերն այնքան քաղցր էին՝  
Որ հիվա՛նդ եմ տակավին...

## ՈՂՋՈՒՅՆ

Ամեն անո՛նց, որոնք երբեք չգիտցան  
Իրենց համար իմ սրտիս մեջ բարձրացած  
Սեղանին վրա ծխվող խունկը սրբազան...  
Ամեն անո՛նց որոնք իրրև առեղծված

Մը զիս տեսան, աչքիս բոցով և լեզվիս  
Լուսթյունով, և քայլերո՛վրս փախչող...  
Որոնք գտան իրենց ճամբուն վրա զիս՝  
Պատցընող սեր մը անձայն ու անշող...

Անո՛նց, անուշ էակներուն, այժմ ողջո՛ւյն  
Իմ անցյալիս գեղեցկութեան մեջ անմահ,  
Անոնց ողջո՛ւյն՝ այս բառերով դողդոջուն...

Իրենցմե բա՛ն շեմ ուզեր ես ա՛լ հիմա,  
Զի օտացա, ինչ որ ինձ տալ կրնային,  
Զի իրենցմով հիմա շեն է ամային..

## ՔԱՆԻ Մ'ԱՆԳԱՄ

Քանի մ'անգամ, — կը պահեմ ես անոնց հուշը հավետ, —  
Դիպվածը դեմս հանեց, մութեն հանեց ինձ համար  
Ազվոր դեմքով ու անուշ հոգով էակ մ'որուն հետ  
Խաղաղեցման մեր տենչանքն արծարծեցինք գաղտնաբար...

Լուռ կամ խուպոտ կյանքիս մեջ՝ միայն քանի մը անգամ  
Երկու նվագ, իրարմե ծնած հեռու, շատ հեռու,  
— Օ՛հ, ազատ երգը անոնց, իմ եղանակս կարկամ, —  
Գալով հանկարծ քովե քով, դաշնակվեցան իրարու...



Ի՞նչ փոթորիկ, աստված իմ, բայց և հնտո ի՞նչ անդորր,  
Հորձանավար ի՞նչ հեղեղ, ի՞նչ գրահում ու բախում,  
Եվ հետո ի՞նչ ծիածան՝ հորիզոնին վրա նոր...

Նման մարմնույս քրտնաթոր, կ'ըլլար հոգիս ալ խխում,  
Եվ բերքն իր այդ օրերու կ'ըլլար առատ և ատոք,  
Եվ ի՞նչ ուժեղ ու պայծառ զիս կը գտներ ամեն ոք...

### ԻՄ ՍԻՐՈ ՑԵՆՉՍ

Իմ սիրո տենչս է նման թափառական թռչունի  
Մոր կը դիմե՛ս ճյուղե՛ս ճյուղ, քաբե՛ ի քար, քիվե՛ քիվ,  
Ու չի կրնար ոչ մեկ տեղ շինել իր բույնն ուր հանգչի՛  
Որ իր կտորած թևերուն կը փորե՛ վերքը հեշտիվ...

Իմ սիրո տենչս է նման երկինքներուն անսահման՝  
Որոնց անցա ներքևեն, երկինքներուն անձրևող,  
Փայլատակող անընդհատ, որոնք վրաս միշտ փռչան,  
Որոնք իզուր հուսացի արևափառ, աստղաշող...

Հետո իմ տենչս է նման ծարավահյուծ կենդանյաց՝  
Որոնք կ'երթան բարձունքեն գահավեժի մը ժեռուտ,  
Վարի փրփրուն գետակին խոխոչունեն մոլիզնած...

Եվ տենչս, տե՛նչս սիրո, կը նմանի լուռ ու մութ  
Քարանձավի մը անծայր, որուն ճամբան կը ղեղու  
Կմախքներովն անհամար գառնուկներու, ուզերու...

### ՀԱԶԱՐՆԵՐՈՒ ՄԵՋԵՆ

Հաղարներու մեջեն մեկն, եղար այն մեկը այսօր,  
Զոր զգացի թե սիրել անհունորեն կ'ըրնայի,  
Նայվածքդ այնքա՛ն էր անուշ, ժպիտդ այնքա՛ն էր աղվոր,  
Որ բխեցավ հանկարծ հույսն հոգիիս մեջ ամայի...

Մազերդ էին ծոծրակիդ վրա ուղիզ կտրված,  
Ինչպես մազերն Սփինքսին, և դեմքդ գույնը ուներ  
Հախճապակվո մը ազնիվ, ու թարթիչներիդ աղվարաց:  
Կը հոսեին այտերուդ վրա լուսնի ճաճանչներ...

Ոտքդ՝ ելար ու հանկարծ սկրտս թուալ կուրծքիս տակ,  
Հասակդ ինչքա՛ն էր ճկուն, ինչքա՛ն փափուկ ու հարուստ,  
Կ'երթար քայլվածքդ ալ՝ ինչպես կուտա երազ մը փախուստ...

Ու հեռացար, շա՛տ անուշ, շա՛տ զեղեցիկ, շա՛տ հասակ.  
Մթընցնելով, պարպելով սրահն ամբողջ քեզի հետ,  
Շնորհներուդ բազմությամբ լեցընելով զիս հավետ...

### ՍԵՐ ՄԸ ԳԱՂՏԵՒ

Անր մը գաղտնի՝ դանդաղորեն հասունցած,  
Իրաք գրկող նալվածքներով խուսափուկ,  
Եվ շեշտերով, մրմունչներու մեջտեղ ցած,  
Որ ալամա բացվող դուռներ են ծածուկ,

Սիրտե ի սիրտ գացող ճամբան կը հորդի  
Մերթ արևով, մերթ ամպերով կը մթնե.  
Ի՞նչ փուլթ սուկաչն, եթե վայրկյանը արգի  
Մեզ նվազիլ, մեռնիլ կուտա հուզումե...

Եվ տենչանքներ, շյուղերու պես կը ծլին,  
Կանաչ այնպես, այնպես անձայն, աննշմար,  
Սիրտե ի սիրտ գացող՝ ճամբուն մեջ լռին...

Օր մ'ալ այնտեղ երկու բեբուն դողահար  
Միակ բառով մը ամեն թումբ կը քանդեն  
Եվ կը կաղմեն... օ՛հ, նույն համբույրը արգեն...

**ԵՍ ԵՐԱՋԻՍ ՏԻՐԵՑԻ**

Ինչպես տիրեց Շամիրամ իրմե փախչող Արային,  
Ես Երազիս տիրեցի՝ մեռցընելով զանիկա,  
Եվ տարփավառ թագուհիվոյն պես, որ լացավ դառնագին՝  
Իր դիակին վրա ինկած կը հեծեծեմ ես հիմա...

Ամենուրեք, ազոտած մահադաշտին վրա մտքիս՝  
Կովին հետո խենթի պես փնտրեցի զայն երկա՛ր,  
Գտա զքեզ հետքերեն վարդ արյունիդ, սիրելի՛ս,  
Զարդուզենիդ մեջ պառկած և ճիշտ սրտեդ նետահար...

Համբույրներովս հիմա զո՛ւր կենդանացնել կ'ուզեմ քեզ  
Եվ կը կանչեմ հուշերուս հնօրյա գունտն հարալիզ  
Կիզել վերքերըդ անբույժ.— դուն արդ մեռա՛ծ ես իսպառ...

Բայց, ո՛վ Երազ, զոր կ'ուտեն արդեն որդերը քանդիչ,  
Կ'ուզեմ խաբել ես աշխարհն, ինչպես ինքզինքս ալ մի քիչ,  
Թե դուն կ'ապրիս՝ մի՛շտ աղվոր, հոգիս մեջ՝ մի՛շտ պայծառ...

**Ո՞Ր ՄԵԿՆ ԱՆՈՆՑՄԵ...**

Ո՞ր մեկն անոնցմե, որոնց նայեցա  
Գորովով մ'անհուն, ուներ գաղտնիքներ,  
Զոր իբրև ընծա  
Օր մ'ինծի հանձնել պիտի փափաքեր...

Եվ պիտի ուզեր, որ ի փոխարեն  
Մանրածանր, խորունկ խորհուրդը կյանքիս  
Ես բանամ իրեն  
Որպեսզի անկե թեթևընե գիս...

Գեթ մեկը, անշուշտ, այսքան տարվան մեջ.  
Անոնցմե որոնց ըղձացի ես նույն  
Ըղձանքով անշեղ,  
Կ'ուզեր, որ դիմե հոգիս իր հոգվույն...

Եվ ան ալ հիմա, չսիրված, մինա՛կ,  
Այս բազմության մեջ ինծի պես գուցե  
Իր անհիշատակ  
Անսեր օրերուն վերջը կ'սպասե...

**ԽԱՂԻ ՀԱՄԱՐ**

Խաղի համար թող ըլլար՝ բայց թո՛ղ անգամ մը գոնե  
Ինձի նայեր ու ժպտեր ու ըսե՛ր մեկն անոնցմե,  
Զոր սիրեցի ես անձայն՝ թե կը սիրե ինքն ալ զիս...

Շահու համար թող ըլլար՝ սակայն թո՛ղ պահ մը այնպես  
Հավտացըներ մեկն ինծի, թե կայծ մը, թուած իմ սրտես,  
Զինք վառած է ու կ'ուզե մարիլ վրան իմ կուրծքիս...

Թո՛ղ զիս հեգներ ու ծաղրեր ու շարշարեր ան վերջեն,  
Պիտի ըլլար կյանքս իրմով, հոգ չէ թե քիչ մը ատեն,  
Նման ուրիշ կյանքերու, խոռով ու գոհ ու անդորր...

Եվ բախտը թող հավիտյան ինծի նորեն չժպտեր,  
Վերջին պահուն տեսնեի պիտի քեզ դեմքս, ով սեր,  
Զարութենեդ մերկացած ու ընող մահն իսկ աղվոր...

**ԿԻՆ ՄԸ, ԿԸ ՀԱՎՏԱՄ**

Կի՛ն մը, կը հավտամ, թե կին մը նորեն  
Կրնա հասկընալ ու մեղքընալ զիս,  
Երբ ամեն, ամեն բան ըսեմ իրեն,  
Երբ որ մատներով շոշափե հոգիս...

Քիչ մ'իրեն նման ըլլալուս համար  
Իրմե հեռացած ըլլալով հանդերձ,  
Գտնելուն համար զիս հիվանդ, տկար,  
Հյուսած ծարավի՛ աղբյուրին ի մերձ:

Ո՛չ, երբեք չըսե պիտի ան,— ինչպե՛ս...  
Կամ ինչո՞ւ, ինչո՞ւ, կամ՝ գեշ ըրեր ես,  
Այլ՝ պիտի հծծե, դժբախտ... և նայի

Աչքիս մեջ այնպես, ինչպես վիրավոր  
եղբոր մը վերքին, տառապած եղբոր,  
Ու միայն բուժել զիս ուզե պիտի...

### ՔեՔեՎ ՉՐՈՒՅՑ

Բազուկներով, ո՛չ, բռնել կ'ուզեմ այսօր քեզ մաքով,  
Քե՛զ ամենեն խուսափո՛ւկ ու փափո՛ւկ իրն աշխարհի,  
Քե՛զ զինակից կին-մարմին և թշնամի կին-հոգի,  
Գարնան արև կենարար և ամառվան խանձող հով...

Ինչպես էակ մ'որ թռած եկած քլլար Հրատեն,  
Թողած իր զույգը այնտեղ, փնտրելով նոր մը հոս՝  
Դուն երբեք չես խաղաղիր, զոհանար ո՛չ մեկ ատեն,  
Դուն ծարավին ես հավետ՝ անձրևին տակ հորդահոս...

Կ'ուզեմ բռնել քեզ մտքով և պատասխան հարցումիս,  
Հավերժական հարցումին, զոր կ'ուղղե մարդը կնոջ,  
Գտնել աչքիդ, բերնիդ մեջ ու անդորրել իմ հոգիս...

Ինչպե՞ս բռնել քեզ սակայն.— նույնիսկ թևերք գողդոջ  
Կը հաջողին ավելի, քան ուժեղ միտքը, ավա՛ղ,  
Եվ քան թե սիրտը անշուշտ որ է՝ քեզմով միշտ նվազ...

### ՈՐՊԵՍՋԻ ՄՆԱ

Որպեսզի մնա հեշտութունն երկաթ,  
Երկա՛ր, անսպա՛ռ, խորը հոգիիս  
Եվ ձեռքերուս մեջ, և օրորես զիս,  
Գզվա՛նք մը միայն՝ այսպես, համբարաթ,

Պարանոցիդ շո՛ւրջը ողորկ ու տաթ...  
Օ՛հ, համբույրը խենթ, պատրաստ թռչելու  
Որ բերնիս վրա, երկյուղիս հըլու՛  
Կ'սպասե աչքի՛դ հորիզոնին տակ...

Այսպե՛ս կը սիրեմ, այսպե՛ս ավելի...  
Խոսի՛ր քիչ մ'ինձի, ու քի՛չ մը ժպտի,  
Քիչ մը մոտեցնե՛ գլուխը ինձի,

Իր շունչն ու մազերն երեսը գզվեն,  
Եվ ինչպես հովին հետ անցնող ծովեն՝  
Տենչերս հեռո՛ւ, համբորեն նավեն...

### ՍԻՐՈ ԿՈՉ

Եվ հեռաձայնը անթել  
Ինձ լուր բերավ թե հեռուն՝  
Ամազոնի ափերուն,  
Կին մը կ'ուզե զիս սիրել...

Լուրը բերող ալիքներն  
Ես գզվեցի հուզումով.  
«— Իրա՛վ, եղա՛ք իրեն ջով,  
Ի՞նչ մույնք ու աչք ան ուներ...»:

Բայց ալիքները չբսին  
Ուրիշ ոչինչ, ո՛չ մեկ բառ...  
Ու չեմ գիտեր ես իսպառ

Ճակատագիրն էակին  
Որ խեղճ, մենակ էր այնքա՛ն՝  
Չիս կանչելու աստիճան...

### ՈՒՐԵՄՆ ԱՅՍՊԵՏ

Ուրեմն այսպես, ես այլևս մուրացկանին պես հետին,  
Պիտի խնդրեմ աշխարհեն սիրո սնունդս օրական,  
Եվ չգտած ոչ մեկ տեղ, պիտի երթամ ազբյուտին՝  
Ավելցուկներ՝ ծաղվելու անոթությանըս դարձան:

Եվ զի հարուստ ու հպարտ եղա երբեմն երազով՝  
Պիտի ուզել շիրնամ նույնիսկ բարի հոգիեն,  
Որ կանգ կ'առնեք դիպվածավ զիս տոշորող հուրիս քով,  
Ումպ մը գորով, շիթ մը սեր իր սափորեն լուսեղեն:

Ողբերգութիւնն այս անհուն պիտի տես ա՛լ այսպես,  
Ու պիտ զայն շլտես ու շտեսնես ոչ մեկ անձ,  
Ու իմ մութիս մեջ տակավ պիտի մարիմ, հատնիմ ես:

Մայրս անգամ չգիտցավ ու չհարցուց օր մ'օրանց,  
Թե կ'ապրեի ես ինչպես, ի՞նչ սնունդով հոգիի.  
— Ոչ ոք ինձի շափ կրեց անգթութիւնը երկնի:

### ԽԵՂԾ ՄԱՐԴԸ

#### Ա

Խեղճ մարդ մըն էր անիկա, որ շէր կրնար և ոչ իսկ  
Իր խեղճութիւնը պատմել, գիտնալով թե իր վրա  
Պիտի խնդան շատ շատեր՝ ինչ որ վտանգ մ'է պզտիկ,  
Եվ թե ոչ ոք—ցավն այս է—պիտի իր ցավն հասկնա...

Խեղճ մարդ մըն էր, որ սակայն կ'զգար ինքզինք շատ հարուստ,  
Բայց կ'ըմբռնեք նույն ատեն, թե անսահման իր գանձով  
Կրնար ոչինչ ստանալ, թե ան ծովուն ներքև բուստ,  
Մտոն մեջ խունկ էր միայն, ինքն էր այդ ծառըն ու ծով...

Անոնց, որոնց ընծայել ուզեց ամբողջ իր հօգիս  
Հին, հին ատեն, չկրցավ մինչև անգամ մատնանիշ  
Ընել իր սերը անհուն և սպասեց անձկագին...

Այնպես որ երբ զինք կանչեն օր մ'աշխարհե մը արիշ,  
Ու մտտենա մահն իրեն, պիտի կրնա դժվարավ  
Տանիլ խեղճ մարդն, որ երբեք սիրտը պարպել չկրցավ...

#### Բ

Խեղճ մարդն անգամ մը միայն, և այդ ծովու մը եզերք,  
Հուսաց, խենթի պես հուսաց, և հույսը պահ մ'իր վրա,  
Խտացած հույսը իրեն, տեղաց իբրև մանանա,  
Ծղավ ծունկին քովը ծունկ, եղավ ձեռքին ներքև ձեռք...

Օհ, ա՛յն կապույտը ջուրին, անոր ծփանքն, ավազին  
Հյուլեացած նվիրումն իրենց ոտքին, մարմնույն տակ,  
Ու հրավերն երկնքին մեջ ամպերուն սպիտակ,  
Ու իրենց մոտ՝ պահապան ժայռերուն սեպ հովանին...

Խեղճ մարդն, ելած ինքզինքեն, թափեց իր գանձը անհուն՝  
Նախ վախնալով, դողալով, միայն քիչ-քիչ, ամեն օր,  
Ամբողջովին օր մըն ալ՝ լուռ նայվածքին տակ անոր...

Բայց սիրելին՝ վարժված մակընթացմանը ծովուն,  
Այս հորդումեն խրտչեցավ ու քաշվեցավ հանկարծ ետ,  
Եվ ծովը, ծո՛վն ամեն բան առավ-տարավ իրեն հետ...

#### Գ

Խեղճ մարդն անկե ի վեր միշտ—եղավ տարի մը հիմա—  
Կ'անդրադառնա այդ դեպքին. կ'զգա ինքզինք մերթ դատարկ  
Եվ մերթ նույնքան դեռ լեցուն. երբեմն խիստ կը վախնա  
Հիշատակեն. կը խմե երբեմն անոր հյուլը բարկ...

Երկար օրեր՝ կը մոռնա... Տեսնելով հին սիրելին՝  
Կ'ըսե՛ այս էր ու կ'երթա՝ խաղաղութիւնն իր գտած,  
Սուրբի մը պես, զոր տարրերն հավաքաբար փորձեցին  
Նդան նախ լույս ու շնորհ ու հետո բոց ու հարված...

Եվ կ'օրորվի ներկային ալիքներուն անձնատուր,  
Թողած մեռելն իր ետին... Սակայն որքան գիշերներ  
Մեռելն իր դեմ կը ցատկե ու մինչդեռ ինք անհամբեր,

Կ'երկարե ձեռքն անոր, ան, ժպտալով մը տխուր  
Կ'անհետանա վերստին, ու կը խորհի ինք՝ խեղճ մարդ,  
Թե իրեն պետք է այլևս ըլլալ մահվան շափ հանդարտ...

## ՔեզՄԵ ՈՉԻՆՉ

Քեզմե ոչինչ, ինձմե՝ ամեն բան, ամեն.  
Քեզմե միայն խաղաղություն, լռության,  
Մինչ իմ սրտիս մեջ ժպիտներ կխաբթան՝  
Դատապարտված, նորեն մահվան կ'սպասեն...

Դուն շես գիտեր, ինչպե՞ս գիտնալ դուն կրնաս,  
Թե ինձ համար շատ ավելին ես քեզմե,  
Իմ կարոտս ես, որ զիս մեզմիմ կ'սփռփե,  
Իմ մթությունս՝ որ իբրև լույս կ'իջնե վրաս...

— Ով Սերբդ իմ, մինակ, առանց վայելքի,  
Եվ փոքրագույն առանց հույսի մը անգամ,  
Մահվան արև, որ հոգույս դեմ կը ծագի...

Ի՞նչ փույթ, նորեն ես ընդառաջ քեզ կուգամ  
Ու կը խնդրեմ, ես կը խնդրեմ այս միայն  
Որ իմ սրտիս միշտ ցանկաչք պահես զայն...

## ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՐՀԻՍ

Ինչպե՞ս խորհիս, սիրտկան,  
Որ խորհուրդներս ամեն  
Քեզ կը գզվեն, կը շնչեն,  
Վրադ խենթի պես կ'իջնան,

Մարմինդ ամբողջ կը ծածկեն,  
Կը հեծկլտան, կը դազան,  
Եվ սարսուռովն հեշտության  
Կը վայելե՞ն քեզ արդեն...

Ինչպե՞ս խորհիս, բայց ինչպե՞ս  
Կարենամ ես ալ քեզի  
Հազորդվի՞չ այլապես...

Արյունս ամբողջ կը կասի  
Երբ կը խորհիմ թե կրնաս  
Միայն խորհի՛լ դուն վրաս...

## ՉԸՍԻՐՎԵԼՈՎ...

Չսիրվելով սիրելի  
Հոգնած, հոգնած եմ հիմա.  
Գիտեմ թե ձեր գործը չէ,  
Բայց պետք է իրը ըլլալ:

Կը գանգատիմ Աստուծո  
Մարավ, չորցած բերանով՝  
Որ այս սրտին հնածո  
Չցուցուց պուտ մը գորով:

Անով իմ կյանքս ծաղկեր  
Պետի աղվոր ծառ մ'իբրև  
Ու պիտի տար վառ միրգեր...

Մինչ անպրտուղ, անտերև՝  
Կը եմանիմ ես այսօր  
Ցանկապատին փայտին չոր...

## ԹԵ ՊԱՏԱՀԵՐ

Թե պատահեր որ նորեն՝ դուռս մեղմիմ զարնըվեր  
Այս առավոտ, քիչ հետո, վայրկյանն մը, ահ, հիմա...  
Ու սրտատրոփ պատասխան տայի... և, ահ, անիկա՝  
Արթեհասակ, վարանոտ, ներս գալով զիս բարևեր...

Ի՞նչպես հանկարծ վեր թռուած՝ պիտի ձեռքեն բռնեի  
Եվ պահ մը լառ կենալի պիտի՝ դեմքին նայելով.  
Նայվածքիս մեջ այնքան սեր, այնքան ըզձանք ու գորով՝  
Որ դանդաղեր պիտի ան, իբր հեղեղն մը լույսի...

— Կ'սպասեի քեզ, եկուր, եկուր, եկուր, քովս եկուր...  
Դուն գիտեիր, այնպես չէ՞, որ անցյալ օր, խենթի պես,  
Երկարորեն, քաղցրորեն՝ մեկնումեղ վերջ լացի ես...

Թող որ ըզքեզ համբուրեմ, ճակտիս՝ ճակատըդ մաքուր,  
Աչքիս վրա աչքդ ու կուրծքիս դեմ մեղմիվ կուրծքս բռնած  
Եվ այդչափ՝ երազեմ քեզ նորեն լուռ, երկյուղած...

### ՁԵՌՔԻ ՄԸ

Օ՛հ, այն գիշե՛ր, այն գիշե՛ր... Մութը ի՞նչ մեծ բարեկամ  
Մ'ինծի եղավ ու ներեց համարձակիլ ու պնդել...  
Ինչպե՛ս այսքան ատեն վերջ դեռ իր բարիքք կ'զգամ,  
Ձայն կը տեսնեմ՝ մեր վրա նետված զերդ քոզ մը անթել...

Դուն քովս էիր ու ծունկիդ վրա թաղված քու ձեռքիդ  
Ձեռքըս դրպավ, դիպվածո՛վ թե ոչ կամավ, չեմ գիտեր...  
Ձբաշեցիր դուն զայն ետ և հանկարծ լույս մը վրճիր  
Հոգիս մեջ բխեցավ ու իր հետ տենչ մ'անհամբեր...

Ձեռքըս մնաց ձեռքիդ քով ու զայն գգվեց մեղմաբար,  
Մատներեդ վեր սահեցավ ու թաղվեցա՛վ ափիդ մեջ  
Եվ դաստակիդ սահմանին վրա կեցա՛վ անհամբեր...

Կը մեծնար դողս տակավ ու կը ցնցեր զիս անվերջ  
Երբ համբուրեմ, մութին մեջ, մոտեցուցի շրթունքիս  
Ձեռքն որ հետո փախչելով պիտի ճմլեր, ճզմե՛ր զիս...

### ԼՈՒՍՆԻ ԳԻՇԵՐ

Լուսնի գիշեր մը կ'երգեր  
Մարդն անծանոթ ու անտես...  
Բաց դաշտին մեջ, տանըս մոտ,  
Ձայնով մը տաք, հորդարուկ,

Խենթեցածի պես, ազատ՝  
Միրո ցաղ մը ան կ'երգեր  
Հեռանալով քայլ առ քայլ...

Գիշերն հանդարտ էր ու լուռ  
Ձոր մարդն այդպես կը հուզեր...  
Ես, սենյակիս մեջ մութ  
Պատուհանիս առջև բաց  
Կը լեցվեի քիչ առ քիչ  
Վայրի ցավովը խորունկ  
Այդ վայրի երգն երգողին  
Ու կըսեի մտովին.

— «Իրեն այս բաց դաշտն է պետք  
Որպեսզի սերն իր գոռա  
Եվ սփռփվի, թեթևա...  
Մինչ ես իմ ցավըս խորունկ  
Գոց տեղերու մեջ հազիվ  
Մրմնջաձայն եմ երգած  
Ու թեթևած չեմ բռնավ...»

Ու կ'երթար մարդն երգելով,  
Ու երանի, երանի՛  
Ես կուտայի այժմ իրեն՝  
Որ դաշտը բաց ու լուսինն  
Ու հեռավոր աստղերն ալ  
Բռնած վկա իր սերին...

### «ՏԱՂԱՐԱՆ»-ԻՑ

Գ

Այս տաղերուն գաղտնիքը դուն, միայն դո՛ւն,  
Իր խորությամբն ու պարզությամբը ծածուկ  
Պիտի գիտնաս՝ երբ ուրիշներ օր մ'երդնուն  
Թե անոնց տերն եղավ արքա կամ պապուկ,  
Եղավ պաշտողն ասոր, անոր, ոչ մեկուն...

Միմիայն դուն պիտի գիտնաս և բաս  
Պիտի մեղմիվ հոգիդ մեջ՝ թե որքան  
Նուրբ է մոխիրն ու կ'ընե հուրը անտես  
Հրդեհներուն որ սրտիս մեջ այրեցան  
Ու տաղերուն մեջ այս կ'այրին հաճիտյան...

Միմիայն դուն պիտի, դուն՝ սի՛րտ բարեկամ,  
Ճանչնաս այրողն ու շրխղճա՛ս իր վրրա.  
Պիտի գիտնաս հրճվանքն ու փառքը անգամ  
Ձոր քու գորովդ իրեն ըզգալ արդ կուտա  
Եվ թե այս հեքն ի՛նչ գոռումի է վրկա...

է

Պիտի շգա՛ այսօր այլևս, բայց կ'սպասեմ...  
Կ'ըսեմ՝ կրնա՛... կ'ըսեմ գիտե՛ թե ես ինչպե՛ս  
Ձինք կը հուսամ, և ինք որ է անձրևի պես  
Բարի՛ կրնա՛ հանկարծ տեղալ նայվածքիս դեմ...

Երբ կ'երևա՛ ամեն անգամ նորի նըման  
Կը տեսնեմ զինք, ցնցվելով ամեն անգամ  
Ինձի եղած այս շնորհքեն՝ որուն կ'զգամ  
Միշտ բընությունն անօրինակ ու դյութական...

Ու մեկնումեն վերջ կը գտնեմ թեև լեցուն  
Ձիս նորոգված սրտով ու նոր-նոր հուշերով՝  
Բայց կը պակսի՛ ինձի երկինքն իր աչքերուն...

Չեկա՛վ սակայն... և զերդ անքուն, անապահով  
Մարդը կ'ուզե քովն ունենալ ճրագ մը փոքր՝  
Ես կը գրեմ, ես կը վառե՛մ քերթվածն այս նոր...

ժժ

Ի՛նչ փուլթ թե ուշ, եկա՛ր սակայն վերապահ,  
Ինձե՛ն սիրված ու զիս սիրող սիրտեան.  
Ի՛նչ փուլթ թե հին մարդը շրլլամ հիմա ես՝  
Երբ ահաբան նոր հույզեր քեզմե ինձ կուզան...

Բարի եկար, հազա՛ր բարի՛ կյանքիս մեջ,  
Հեղեղի պես անապատին վրա երկար,  
Խեղդեցիր մեջս ամեն տրտունջ ու կեղեքջ,  
Դադրեցուցիր սրտիս վատնումը երկար...

Եկար անշուշտ քու ուզածի՛դ պես, հոգի՛ս.  
Եկո՛ւր այդպես, միայն եկո՛ւր և տե՛ս զիս  
Ոչ իմ դեմքիս այլ քու աչքիդ շողյունով...

Ո՛ւրկե եկար, պիտի երթաս հետո ո՛ւր.  
Ի՛նչ փուլթ, ի՛նչ փուլթ, դուն ինձի թույլ միայն տո՛ւր  
Մընա՛լ այսպես, մինչև սառիլս, հուրիդ քով...

Մ

Ա՛հ, լացուցի՛ ես քեզ երեկ, բայց շե՛մ զղջար...  
Ուզեցի՛ ե՛ս սիրտս պարպել բայց չկրցա,  
Մի՛րաքս՝ խոցված քեզմե, հեծող քեզի համար,  
Ձոր տեսնելով տապալեցար կուրծքիս վրա...

Արցունքներուդ մեջ քվեցան ու իշան վար  
Թանձրություններ, մթություններ քուլա-քուլա...  
Հեղեղին տակ քանդրվեցան պատեր խավար...  
Ամեն բան ջինջ, ամեն բան պարզ է ա՛լ հիմա...

Ա՛հ, թող երբեք չբարձրանան անոնք նորեն՝  
Մեր սրտերուն մեջտեղ սիրող, թող կարենան  
Խոհերս միշտ շուրջդ դառնալ երջանկորեն...

Եվ իմ վրաս լա՛ց այն ատեն նորեն միայն՝  
Երբ սիրտս ըլլա տրոփելի ընդմիշտ դադրած...  
Քեզմով լեցուն իր կոտրելո՛ւն համար գուն լա՛ց...

ԻՄ ՎԵՐՋԻՆ ՍԵՐՍ...

Իմ վերջին սերս, օհ, այնքան առաջինին դեռ նման,  
Սիրտս դեռ տաք է քեզմով ու կը տանիմ քեզ հիմա  
Ձգուշաքայլ, երկյուղած՝ մոխրի մջ պես սքրալան.  
Ուրկե փյունիկ մջ հատնել ու դեռ տանջել զիս կընաս...

Իմ վերջին սերս, օհ, թռչն՝ շորս օր ապրած, շորս գիշեր,  
Իմ և անոր աչքերուն, շարժումներուն ալ միջև,  
Եվ մատնված տանջանքի, երբ դեռ հազիվ կը բխեր  
Նրզին աղբյուրը կուրծքեն, հազի՛վ բացած էր ան թև...

Ինչպե՛ս անուշ եղար դուն և ան ինչպե՛ս կրցավ քեզ  
Խոցել բառով մը միակ, երբ մոտեցար քիչ մ'իրեն,  
Ինք որ տեսած էր զքեզ, քեզի ժպտաց հեռուեն...

Եվ դու ինչպե՛ս վերջին սեր, եղար խոնարհ, եղար հեզ,  
Ինչպե՛ս անձայն, անպաշտպան ծռեցիր վիզդ ու ինկար,  
Ինչպե՛ս մնաց սրտիս մեջ քու մահու ճիշդ երկար...

### ԶՅՈՒՆԸ

Օ՛հ, հանդիպո՛ւմըս քեզի, ձյունին ներքև, այն գիշեր,  
Թեթև ու լուռ՝ երկինքեն իջնող ձյունին, հարսի պես...  
Տարի մ'ամբողջ ես փախեր էի քեզմե, քեզ սիրեր,  
Ու միայն ձյունը հիմա զիս կը մղեր դեպի քեզ...

Որքա՛ն գորով, զմայլանք, արգահատանք ու տենչանք  
Քեզի համար տակավի՛ն հոգիիս մեջ ունեի.  
Որքա՛ն հրճվանք խաբուսիկ և իրական տառապանք՝  
Արթնության մեջ ու քրնի քեզմե եկած էր ինձի...

Եվ հիմա դո՛ւն էիր, դո՛ւն, որ ձյունին տակ, ինձի հետ  
Կը խոսեիր շունչ շունչի, ու կուտայիր ինձ վաղվան  
Հույսը գարուն երկնքին, պարտեզներուն ծաղկավետ...

— Եվ դողալով գացի տուն... Բայց իրոք դո՛ւն էիր ան.  
Չայնդ ու խոստումը՛դ ինչպե՛ս զքեզ տարբեր կ'ընեին.  
Ստուգության մեջ ինչպե՛ս կ'որոնեի հույսս հին...

### Քեզ Վերջնական...

Քեզ վերջապես այս գիշեր անցյալին մեջ կը թաղեմ:  
Տարի մ'առաջ այս ատեն այսպես չէիր տակավին:

Նոր քիչ առաջ դիպվածավ հանկարծ՝ եկանք դեմառդեմ՝  
Կը սիրեի դեռ զքեզ, կը սիրեի սերս հին...

Բայց հուզվեցանք երկուստեք ու կարծես դուն՝ ավելի,  
Եվ այդ վայրկյանը հիմա զիս կը թողու երազուն...  
Անցյալին մեջ սիրողն ալ, հուզվողն ալ միշտ ես էի,  
Կրնա՞ ըլլալ որ հիմա զայն հիշելով ցավիս դուն...

Որչափ փոխված ես սակայն: Հիմա ոչինչ ալ քեզմե  
Վեր ցատկելու համար միշտ, հոգիիս խորը՝ կ'իջնե,  
Ոչ քաղցրությունը դեմքիդ, ոչ ձայնդ թավ ու վճիտ...

Քեզ տեսնելով թաղեցի վերջապես սերս այս գիշեր...  
Բայց կուզեի, որ ինձի դուն կամ թե մեկը ըսեր՝  
Թե հին արևը սիրույս լուսավորեց քու հոգիդ...



ԸՆԹԵՐՑԱԳԻՆ

(Վտն)

Հոգիս ի՞մս է և որքան թվիմ հանձնել զայն այստեղ  
Անցորդներուն անժանոթ, յուրաքանչյուր էջի վրա,  
Հոգիս ի՞մս է և ոչ ոք պիտի ամբողջ զայն ճանչնա  
Իր լույսերովը պայծառ, իր մթությամբը անհղ՛

Հոգիս հանքի մ'է նրման — ոսկի՞, ածո՞ւխ, թե կապար—  
Որուն հագիվ հեղեղներ քրքրեցին խավը վերին,  
Մերթ հրճվանքի ու հաճախ սև հեղեղները ցավին,  
Մինչ հրաբուխ մը խորունկ անոր ներքև կը գոռար...

Հոգիս ի՞մս է և այսօր կը մտածեմ, թե հա՞րկ էր  
Եվ ո՞վ գիտե դեռ որքա՞ն այսուհետև նոր վիշտեր  
Պիտի պեղեն ու փորեն զանի հարված առ հարված...

Հոգիս ի՞մս է և այսօր կը մտածեմ, թե հա՞րկ էր  
Զայն այս շափով ալ միայն՝ անցորդներուն ճանչցընել,  
Մինչ կ'ուզեի քիչերո՞ւն ամբողջովի՞ն զայն հանձնել...

Կ'ԱՆՁՐԵՎԵ, ՏՂԱՍ

Կ'անձրևե, տղա՛ս... Աշունը թաց է,  
Թա՛ց աչքերուն պես խեղճ խաբված սիրույն...  
Պատուհանն ու դուռը գնա զոցե  
Եվ դեմքս եկո՞ւր նստիլ վեհագույն

Լուսթյան մը մեջ... Կ'անձրևե, տղա՛ս...  
Կ'անձրևե՞ երբեմն հոգիիդ մեջ ալ,  
Կը մսի՞ սիրտըդ, և կողողըդա՞ս՝  
Խորհելով պայծառ արևին անցյալ,

Դռան մը ներքև գո՞ց ճակատագրին...  
Բայց կուլաս, տղա՛ս... Մութին մեջ հանկարծ  
Սանրը արցունքներ աչքեդ կը գլորին...

Էա՛ց անմեղության արցունքը անգարձ,  
Էա՛ց շփտնալով, խեղճ, անգետ տղա՛ս,  
Խե՞ղճ որսը կյանքին, ա՛հ, լա՛ց, որ մեծնաս...

ՈՂՐ

Հոգիս մեջ միշտ այս կոիվն հետամնաց,  
Երկինքն ի վեր թռչչո՞ւնքնու հեին տակ՝  
Միշտ այս շղթան կապված կյանքին տափարակ,

Դեռ գրկիս մեջ տաքցող անցյալըս մեռած  
Դեռ ներկային վախցող աչքերըս հիվանդ,  
Թրջված դեռ արցունքներեն հնավանդ,

Եվ կը լսեմ երգի մը վերջը անվերջ,  
Հին սերերու ողբն ինձի միշտ կը հասնի,  
Կ'ուզեմ քաղել միշտ ճառագայթ մը լուսնի՞

Եվ այս ճերմակ կարապը սև լիճին մեջ,  
Նավող անխոնջ հավիտյանի հավիտյան,  
Ի խնդիր միշտ իր մեկ քրոջ գթության,

Դեռ մինչև ե՞րբ պիտի հածի տրամորեն,  
Եվ մինչ շատեր խորասուզված են շատանք՝  
Հիշեցընե պիտի ինձի մահն անոնց:

Եվ ի՞նչ է այս լույսը հառնող խափարեն,  
Պահ մը կովող և շուտ մ'արդեն հաղթված...  
Հոգիս մեջ ի՞նչ այս կոիվն հետամնաց...

ՓՈԹՈՐԻԿ

Փոթորիկ կա օդին մեջ... Երկինքի շինչ պատառներ  
Կը լափվին սև, ուրվաձև, համայնակեր ամպերեն.  
Առաջընթաց զովություն մ' այս ամպերը կը ծորեն,  
Պաղ քրտինքին զովությունը զայրույթին փրփրահեր:

Փոթորիկ կա օդին մեջ... Այս ժամերուն է, գիտե՞ս,  
Որ ճշտությամբ մը լլկող՝ պատկերդ շեշտ կը զարթնու,  
Ամբողջ պատկերը մարմնույդ, որ աշվներս գաղտնատես  
Կը մերկացնեն՝ իյնալու համար վրան և տալու:

Անոր համբույր մը, նման համբույրներուս երբեմնի...  
Կը կարծեի ես՝ հիմար, մոռցած ըլլալ համն անոնց,  
Թե տենչանքին ալ մարած էր շող բոցը շատոնց,

Թե արցունքներն՝ անվրդով հիմա հիշել կրնայի...  
Օ՛հ, փոթորկի ժամն է այս... և երբ երկինք կը գոռա՝  
Կարծես ճիշն է անցյալիս՝ տախտապարող գետնին վրա...

ՀՈՒՍԱՆԱՐՈՒԹՅՈՒՆՔ

Ամեն տուփի խորեն ցատկող սատանանե՛ր.  
Ամեն ծաղկի բաժակին տակ պահված օ՛ձ.  
Դաշտին մեջ փոս, ճառագայթին քով ստվե՛ր.  
Գովանքներու ներքև հանկարծ սառած ծոց...

Տանիքին վրա իջած լուսի՛նը մոտիկ,  
Եվ սրտին վրա ծագած աչքերը պայծառ...  
Ուրվականներ, որ մեր մեջեն միշտ կ'անցնիք  
Եվ կը փշբ մեր հույսերուն վրա վառ...

Անցե՛ք, անցե՛ք. վախցող շկա ալ ձեզմե.  
Ա՛լ հրճվանքին մեջ ողբ մըն է խառնված,  
Ա՛լ ամեն սեր ունի իր մեջ իր կասկած...

Հիմա՛, միայն թախծություն մ'որ կը ճշմե,  
Հիմա՛, քալված դժվար ճամբուն ծայրն անել՝  
Լո՛ւտ, անտրտո՛նչ, քայլերըդ ե՛տ դարձընել...

ԳԵՂՋԿԱԿԱՆ

1

Պզտիկ տուններ հեռուն ինձի կը ժպտին...  
Գյուղ մ'է թաղված մեծ ծառերու շուքին տակ,  
Անտառախիտ լեռան մը կողը ետին  
Եվ առչեւն հոսող ջուրով մը հստակ:

Եվ կը խորհիմ... Ես այդ գյուղին բնակիչ,  
Մենավորիկ և մոռցված հոն կ'ապրիմ,  
Հոգիս հանձնած իր անդորրին ամոքիչ,  
Հովին, հողին և ծառերուն մտերիմ:

Ինչ անո՛ւշ է գիշերն այնտեղ քնանալ...  
Կյանքն հոն կանուխ, արշալույսին կ'սկսի.  
Մշուշաքող հեռուի լեռն ու դաշտն ալ  
Հորանջելով ոտքի կ'ելլեն. մեկուսի

Առվակն այգուն կ'ըսե աղոթք մը կարծես՝  
Ալյակներուն համրիչն անվերջ քաշելեն.  
Կը բուրվառեն ծառի ճյուղերն, և անտես  
Ճպուռներն ալ առվակին դեմ կը բռնեն:

Օ՛, անոնցմե որոնք մեկ-մեկ կը բանա  
Արևին հետ դուռը իրենց տնակին,  
Որոնց միտքը թերևս հողեն ալ խոպան՝  
Սակայն հարուստ, բարի ու պարզ է հոգին:

Անոնցմե մեկն ալ շինչ առտու մը հարկավ  
Կը դարձընե քաղցր նայվածքը վրաս,  
Եվ դիպվածավ իր լույս ժպիտը անբավ  
Ինձ կը նետե՛ ինչպես միբո մը նորահաս:

Անո՛ր, ո՛վ տեր, լուսաբացի այդ պահուն  
 Ծաւ չոգիս ի վեր ընծա կը զրկեմ,  
 Եվ օրերուս վրան առկախ, օրորուն՝  
 Կը տեսնեմ միշտ անոր պատկերն այգադեմ:

...Օ՛հ, այն գյուղը՝ մեծ ծառերու շուքին տակ,  
 Որուն, ո՛վ տեր, ես ըլլայի բնակիչ.  
 Ան քայլերուս ըլլար սահման բովանդակ,  
 Հոնկե ի մահ ընթանայի քիչ առ քիչ...

#### Կ՛ԵՐԳԵՒ

Կ՛երգեի ուրախ կամ տխուր, ի՛նչ փույթ,  
 Եվ երկինքն ըլլար մուսալ կամ կապույտ՝  
 Երգս ինչպես արտուլտ մը թռչեր վեր.  
 Երկու հոնք իրեն կ՛ըլլային թևեր  
 Եվ կ՛երթար, կ՛երթար անխոնջ ու թեթև,  
 Հորիզոնն ի վար, նայվածքի մը հեռե...

Կ՛երգեի, ինչպես տղաք կը կանչեն  
 Իրենց արձագանքը հովին մեջեն,  
 Ինչպես աղբատիկ տղաք կը մուրան՝  
 Կծկած մեծ դռան մը սեմին վրան,  
 Ինչպես խաղացող տղաք կ՛իյնան վար,  
 Ինչպես կը շնչեն տղաք ոգեվար:

Կ՛երգեի՝ նման մանուկ դուցազանց,  
 Եվ երգերս էին աշխույժ ու անսահմ.  
 Կ՛երգեի բաներ, որոնք շեն խոսվիր  
 Բառերով փափուկ, բարի, անբասիր,  
 Կ՛երգեի հաճախ անգետ, ակամա,  
 Կ՛երգեի, ինչպես շեմ երգեր հիմա...

Դեռ կ՛երգեմ հիմա, ավելի թերևս  
 Վարպետը երգին, մինչ, ավա՛ղ, այլեւ...

Ձայնս չի հնչեր իր հին թարմությամբ  
 Եվ սիրտս լռած է շեշտերն իր բամբ...  
 Դեռ կ՛երգեմ հիմա, մինչ կուզեի ալ  
 Անխոս ու անշարժ՝ հանգչիլ, քնանալ...

#### ԱՆՅՅԱԼՍ ԱՆՉԱՓ ՀԵՌԱՅԱՎ

Անցյալս անշափ հեռացավ, որ մոտ եմ զայն մոռնալու,  
 Ան աղոտած է այնչափ, որ զայն հազիվ կը տեսնեմ  
 Եվ շատ անգամ գեռ երբ որ ան կը կանգնի աչքիս դեմ՝  
 Զինք շեմ ճանչնար և ձայնին ալ չէ իմ սիրտս հլու...

Ես շեմ ճանչնար մանավանդ տղան, որ ես եղա հոն,  
 Իմ կերպարանքս փափուկ և իմ հոգիս թրթռահույզ,  
 Ու ինչ որ գիտ կը թողու տրտմաթախիժ ու անհույս՝  
 Հոգին, որուն մատուցի ես պատարագ ու պաշտոն:

Երկար առան, նվիրմամբ ու այն շերմիկ հավատքով.  
 Թե ան իմ մեջս հավատ պիտի ապրի անմոռաց...  
 Օգրեմն բան չմնաց. ամայացած բարձիս քով

Ոչ իսկ գրքույկ մը կյանքիս լույս-ստվերովը գրված,  
 Որ կարգալով, աշվներս ինքնիրեննին գոցվեին...  
 — Մամդ մարե, գծբախտ մարդ, և նետվե վիհը քրեին...

#### ՉՈՐՅԱՎ ԱՂԹՅՈՒՐԸ ՍՐՏԻՍ

Չորջա՛վ ազգուրը սրտիս, քաղցրակարկաչ այս սրտ...  
 Որուն անուշ, հորդարուխ հին շուրերուն վաղքն անգամ  
 Հիմա հազիվ կը հիշեմ և հազիվ մերթ կը մնամ  
 Անջրասույզ՝ թե անոնք թերևս նորեն կը բխին...

Չորջա՛վ ազգուրն՝ ավելորդ զոհաբաժնի մը նման  
 Չորջա՛վ՝ ի տես իր ուղիսն ավազնեթեն ձգվելուն,  
 Եվ զի ըստանց շրուսավ ծաղիկ մը եզրն իր ճամբուն  
 Եվ ուզեոր մը շատոնց շհակեցավ իր վրան...

Հիմա, ցամքած այդ ակեն կը մնա լոկ մեկ ճակատ  
Ավազալից իր գուռով և քարերով մամռապատ,  
Որ կը գատվին օրե օր և կը թափին աննշմար...

Զորցած աղբյուր, չէ՞ր կրնա ըլլալ սակայն, որ վերջին  
Անգամ մըն ալ սանձարեկ ջուրերդ հանկարծ ժայթքեին  
Եվ շենքդ ամբողջ անոնց տակ մեծաշառաչ վար իյնար...

### ՀԱՅՐԵՆԻ ԳԱՐՆԱՆ ՀԻՇԱՏԱԿԸ

Եթե լոեր վայրկյան մը սրտիս աղմուկը անկարգ,  
Եթե պահիկ մը դադրե կիրքին խուճապը քանդիչ,  
Ստվերին մեջ իրիկուն մ'եթե աչքերս անարգ  
Զվառեին տենչանքով ու գոցվելով քիչ առ քիչ

Զիս ամփոփվիլ, հանդարտիլ ու սպասել անցյալին՝  
Իր գույներով, բուրումով, պայծառութեամբ, թարմութեամբ,  
Վերադարձին հեզորեն զիս սպասել թույլ տային...  
— Ինչպե՞ս ահա կը բանա երկինքն իր ծոցը անամպ,

Իր կապույտովը շքեղ մայիսի ջինջ առտրվան,  
Բլուրը ի՞նչ թավշաթույր կողեր ունի վետվետուն,  
Ի՞նչ աղվոր է դեռ թրջած խոտերու մեջը գալ ման  
Եվ երկննալ, և դիտել հեռուի լեռը ժպտուն...

Հո՞ն գարիի նորարույս արտը շղարշ մ'է նրբին,  
Որուն ներքև կը շողան հարսնուկները հակնթյա,  
Հոս՝ եզերքեն, բուռերով երիցուկներ կը հորդին  
Եվ կը հոսին՝ մարգարտի զերդ հեղեղ մը ճամբուն վրա...

Քիչ մը անդին՝ հեշտացրիվ հոտը հովվին կ'արածի,  
Գառնուկները կը մայեն և կը ցատկեն անդադար,  
Եվ ուլերը տոպրակված ծիծերուն տակ մայրենի  
Կը քսվըռտվին և կուզեն իրենց բաժինը արդար...

Ինչպե՞ս ահա զեփյուռն ալ կուզա դաշտին այցելու,  
Թիթեռնիկները կուզան թալթըլելեն, դողալեն,  
Մինչդեռ ծառերն ալ կարծես կ'ըսեն գաղտնիք մ'իրարու,  
Երբ որ հովեն զլուխնին իրարու վրա կը ծռեն...

Մատաղերամ տղոց խումբ մ'ալ կը խաղա անոնց մեջ.  
Անոնց հնչուն ծիծաղեն ես կ'ունկնդրեմ ցնծութեամբ.  
Օ՛հ, անոնց մեջ է անշուշտ իմ ծիծաղս ալ վաղաշեջ...  
... Ինչպե՞ս ինձի կը բանա Անցյալն իր ծոցը անամպ...

### ԵՎ ՆՈՐԵՆ ԽՈՆՋ ԵՆ ՇՐԹՈՒՆՔՆԵՐՍ

Եվ նորեն խոնջ են շրթունքներս երգելեն,  
Եվ այս սրինգն, աստված, ճաթա՞ծ է արդյոք,  
Եվ տենչանքներն որ մութին մեջ կ'այցելեն,  
Որոնց ի տես կը դողայի հրճվանք՝

Մոլորեցա՞ն արդյոք ճամբան... կամ հոգիս՝  
Մեհյա՞ն իրենց, աստվածներու թափառիկ,  
Շատ հի՞ն գտան ու լքեցի՞ն արդյոք զիս,  
Եվ պիտ մնա՞մ ա՛լ առանձին անոքիկ...

Շրթներս խոնջ են երգելեն, հավիտյա՞ն.  
Բոլոր հույսերըս մի առ մի կը կքին,  
Եվ սիրտս խոնջ է տենչալի Տենչանքին...

Այսպե՞ս թողեք զիս վարժվիլ լուսթյան,  
Հիշատակնե՛ր, ո՞վ դուք, որ դեռ կը ճչեք,  
Հիշատակնե՛ր, գիտցեք մեռնիլ՝ լո՛ւտ և սեգ...

### ԽԱՐԵՈՒԹՅՈՒՆ

Ես՝ պարտըված մը կյանքեն, վիրավորված մը անկե,—  
Մենք մեղի ենք, ո՞վ հոգիս, խոստովանինք ասիկա,—  
Ինչպես կ'ըլլա, կը խորհիմ, որ նորեն ժամ մը կուզա,  
Որ սրտիս խորը հանկարծ կյանքին հաճույքը կ'երգե:

Բառ մը հաճախ կը բավի հորիզոններ բանալու,  
Ճառագայթ մը անցյալես՝ կ'ըլլա լույսը ներկային,  
Եվ աչքերին, որ վայրկյան մ'իենձ բարությամբ կը նային՝  
Ապագայիս վրա անվերջ երջանկութուն կը հեզու:

Եվ անձնատուր այս անհուն արրեցության, զոր ընդմիջտ  
Կը կարծես անհնար, ես կը մոռնամ ամեն վիշտ,  
Ամեն կապկած ու կյանքին հետ նորեն պար կը բռնեմ:

Հիմարութիւն, ստութիւն՝ կ'ըսեմ վերջին ինքզինքիս,  
Երբ կը մնամ ես նորին տրտմությանս դեմառդեմ:  
— Բայց այդ սուտին դուն ինչպե՛ս կը փափաքես, ո՛վ հոգիս...

### ՏԳՅՈՒ ՄԸ

Եթե ճիշտ է, որ զքեզ հանկարծ քայլերդ տարին  
Գեռ նոր անշուշտ, օ՛հ դեռ նոր խորհրդավոր ու ջքեղ  
Այն պարտեզն ուր երազներ՝ մեծ ծառերու կատարին  
Եվ համբույրներ՝ բաժակին վրա ծաղկանց կը թափեն...

Եթե իրոք այս ամառ միայն մտար դուն այնտեղ,  
Հանկարծակի՝ օր մը երբ անոր շէիր սպասեք,  
Եվ շլացած աչքերուդ դեմ ծագեցան բյուր լույսեր,  
Եվ շփոցար բավական ատեն, թե սերը այս էր...

Եթե վերջին, զարմանքիդ վախ մը հանկարծ հաշորդեց,  
Խորունկ հաճույք մը գտար տառապելուն մեջ լսելի,  
Մերթ հեռանալ ուզեցիր, և ծառերուն կուրծքդ հեց՝  
Հոն մնացիր ու լացիր, ու գիտցար, թե որքա՛ն մեծ

էր դուրսութիւնը տեղվուն... Եթե իրոք, ո՛վ պզտիկ,  
Սիրո գաղտնիքը անհուն այսօր այլևս գիտեա...  
Եկո՛ւր, եկո՛ւր, գի սրտիս դուն շափապանց ես մոտիկ,  
Եկո՛ւր, անցյալս ու ներկայդ թող գրկելին գաղտնապես

### ՀԵՄԵՍԱԿՔ

Կը պատահի ալ երբեմն որ ցավս հպարտ ընե գիտ.  
Ես առանձին եմ, կ'ըսեմ, իր ճանկին մեջ գալարվող,  
Եվ իր ճիշերն ալ՝ խորունկ անդունդներուն մեջ սրտիս  
Կրնամ խեղդիլ ու մնալ լուռ, անտարբեր, մթասքող...

Սակայն երբե՛մն, երբ կանցնի երջանկութուն մ'ալ քովես,  
Երբ անապատն, որ հուսաց փոթորկին մեջ շիթ մ'անձրե,  
Կը տեսնեն լոկ վերհառնումն ավազներուն հրակեզ,  
Ես կ'անիծեմ տառապանքս ու կ'ընկճվիմ իր ներքե...

«Աստված, աստված, կը գոչեմ երեսանկյալ գետնին վրա,  
Ահա զնաց ան, որ գիս պիտի ընեք երջանիկ  
Ան, որ կ'երթա հավիտյան ու պիտի ալ չդառնա...

Ինձմե ի գատ ի՛նչ օրհնյալ, ի՛նչ բախտավոր են մարդիկ.  
Հետին աղքատն ալ երբեմն իր պզտիկ գանձն է գտած.  
Զիս անոր և ամենուն նման ըրե՛, ո՛վ աստված...»:

### ԵՐԱԶՆԵՐ

Ահավասի՛կ... ալ շեմ լար և ալ ոչինչ շեմ խնդրեր  
Կյանքեն, որ այնչափ եղավ ինձ խոժոռ ու ագահ.  
Ես կը դառնամ Երազին, որ զիս երկար տարիներ  
Տեսավ առջին ծնրադիր, զերդ թագուհի մը ի գահ...

Ես Երազին կը դառնամ, տնդաղաճան սիրելույն,  
Որ մերձավոր և հեռու, որ հոտակ է և տարտամ,  
Որ անշարժ է, անբարբառ, և բարութիւն գերազույն  
Կը խոստանա լուսթյամբն ամեն ինչ, որ կը ցանկամ...

Կյանքին վրա, կյանքին վեր կը բնակի անիկա,  
Ան պզվոր է, ամենե՛ն աղվորներին ազիջի,  
Գուրգուրացած՝ զավկի պես, կնոջ նման՝ տարփալի

Անկարելի շունի ան, և ամեն ժամ է ներկա,  
Եվ ան այնքա՛ն է բարի, այնքան սիրող, հոգածու,  
Որ քնիս մեջ իսկ կուգա իր սփոփանքն ինձ տալու...



Ով իմ Երազս, երևցար ինձ այս գիշեր դուն նորեն  
Անծանոթի մը դեմքով,

Ինձ երևցար ու անցար և պահեցի քաղցրորեն  
Այդ պատկերն ալ հոգեխոտով...

Ինձ թվեցավ, թե սակայն ուրիշներն ավելի  
Նման էր ան Երազիս,  
Հասակ մը վեհ, դեմք մը նուրբ, աչքեր ուներ լուսով լի՝  
Ողողելու համար զիս...

Եվ կարծեցի նույնիսկ, թե Երազ մը չէր ան միայն,  
Թե կրնայի մոտենալ,  
Ժպտիլ անոր, բռնել ձեռքն ու փայփայել, գրկել զայն,  
Սիրել զանի, սիրվի՛լ ալ...

Ո՛վ քաղցր Երազ, լեցուցիր այս գիշեր կյանքս քեզմով,  
Ու հեռացար, մարեցար...

Նորեն մինակ եմ հիմա, ինչպես նավակ մը ի ծով,  
Ալետատան, հողմավար...



Եվ հմայքով մը հանկարծ՝ տարիքիս բեռն ավելորդ  
Կթափի վար ուսերես, խորհուրդներես ու սրտես...  
Տե՛ս, տասնվեց տարեկան կ'ըլլամ նորեն և, անցո՛րդ,  
Ճամբուդ վրա վերստին զիս հոգեզմայլ կը գտնես...

Կը կանչեմ քեզ դողահար, երբ որ անցած, դացած ես,  
Քեզ կը կանչեմ անձկագին իմ Երազես ծաղկահորդ  
Պարտեզին մեջ, ուր կուգաս և ուր կ'օրհնեմ, կ'օծեմ քեզ,  
Ուր կը բանամ, հո՛ն միայն, քեզի իմ սիրտս անհաղորդ...

Ի՛նչ երջանիկ, ի՛նչ ուրախ կ'ըլլամ քեզ լոկ տեսնելով,  
Երբ դուն կ'երթաս այնչա՛փ սեզ, այնչափ փափուկ ու ճերմակ,  
Զիս ձգելով ընկճըված շնորհներուդ գանձին տակ...

Ի՛նչ երջանիկ դեռ հետո, երբ Երազին ծաղկանց քով՝  
Կը մտածեմ միշտ վրադ, քեզ կը խառնեմ միշտ անոնց,  
Եվ կը պահեմ քեզ միշտ հո՛ն՝ երբ դուն մեկնա՛ծ ես շատոնց...

### ԿԱՍԿԱՍԸ

Հավատքս հոն ձգեցի բզիկ-բզիկ, հեռավոր  
Ճամբաներուն վրա ամեն, ուր իմ սրտես ալ մասեր  
Արյունլվա կը մնան, և ուր ոչ մեկը կ'ըսեր,  
Թե կ'անցնեի ընդմեջեն մաքառումի մ'ահավոր...

Ամեն ինչ վերք կուտար ինձ — բառ մը, նայվածք մը միայն.  
Կը բացվեին սրտիս մեջ սերերն հանգույն վերքերու.  
Շնչելն իսկ ցավ մըն էր լոկ, կը տանեի զայն սակայն,  
Վասնզի հույսը հաճախ կուգար վերքերս փաթթելու...

Հույսը հոգնած հավատքիս կուտար կազդույր և սփոփ,  
Բայց զի կռիվը տևեց՝ հոգնեցավ Հույսն ալ տակավ  
Եվ տեսա, որ ճամբուն վրա կը հեռանար թեամփոփ...

Եվ օր մըն ալ դիմացես եկավ Կասկածն ու կերավ  
Իր կտուցով կեռածայր, մագիլներով բզկտիչ,  
Եվ տիեզերքը ամբողջ քանդեց, փշրեց քիչ առ քիչ...

### ԱՆՏԱՌԻՆ ՄԵՋ

Ես կը ճանչնամ անտառին մեջ, ուր գարուն է,  
Ձոր մը պզտիկ, ձոր մը ծաղկած, ուր երիցուկ  
Եվ շուշաններ ձյուն կը տեղան, ուր կ'արյունես  
Կարմիր հարսնուկը շիթ առ շիթ վերք մը ծածուկ,

Մանուկ գարնան ան օրորոցն է հոն կարծես...  
Երկու ճկուն ուռնիններ՝ մեն մի ծայրին,  
Թեթև հոգին տակ կ'երերան երբ համրապես,  
Ժանեկապատ ձորակն օրրել հոն կը թվին:

Եվ հոն, տեսն՛ք, երկու մանուկ, ուրկե՞ եկած,  
Անտառին ո՞ր երկու մուտքեն հանդիպակաց,  
Կը կամրջեն ձորը սերով մը լուսկյաց:

Երկու մանուկ օրորոցին վրա գարնան  
Իրենց անբիծ սերը կ'օրրեն... Օ՛հ, շճանչնան  
Տերևաթափն և տրտմությունն իր անսահման...:

### ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ղազիներո՛ւն վշտացած, անո՛նց որ սեր հուսացին  
Եվ չգտան, և անո՛նց, որ շատ սիրով հյուծեցան,  
Մեծ լուսթյունն իբր սփռփ ծնավ ծոցեն այդ հուրին,  
Եվ ան կ'երթա աշխարհեն՝ գորովասփյո՛ւտ, սիրացա՛ն...:

Վերավորված սիրտերուն կը մոտենա անիկա,  
Եվ սիրտերուն կարծրացած՝ իշխանաբար կը բախեն...  
Եվ, ո՛վ հրաշք, վերջն անոր ներկայությամբ վարդ կ'ըլլա,  
Եվ, ո՛վ դյուրանք, կը բխին աղբյուրներ քա՛ր սիրտերե...:

Ան ամեն տեղ կ'երևա, մթնալորտին մեջ առկախ,  
Մերթ գեղջկուհի մը նման և մերթ հանգույն թագուհի,  
Ու երբ կանցնի՝ չի գիտեր, մարդ տխո՛ւր է թե ուրախ,  
Կամ տխրությա՛մբը ուրախ՝ միշտ սփռփված է հետու:

Կուգա՛, կ'անցնի՛ հուզելո՛վ միշտցը, զոր կը լրնու  
Ամբողջ իրմով, և միջո՛ցն ալ կը գրկե զայն հեշտիվ,  
Զայն կտանի օրրելով, մեջեն կապույտ ծուխերու,  
Մինչև այն պահն ուր գրկին մեջ կը մեռնի՛ ան մեզմի՛վ...:

Աշխարհներու հեռավոր հոգին իր մեջն ունի մերթ,  
Եվ հոգին վրա դժգոհ՝ երկինքն անոնց կը բանա.  
Անոնց լերանց վետվետումն ու ծաղկա՛նց ալ թերթ առ թերթ  
Տեղատարափն է փափուկ, հպումներ՝ վը թավջյա...:

Նևր մըն է ան՝ որ հեալ կուտա կուրծքերը իր հետ...  
Որ տենդ կուտա ձեռքերուն և աչքերուն ալ արցունք...  
Որ կը հառնե հեթանոս խնջույքներեն տարփավետ,  
Ինչպես հարկեն Աստված՝ ուր կ'ընծայվի պաշտամունք...:

Սակայն անո՛նց մանավանդ, անո՛նց որ սեր հուսացին  
Եվ չգտան... և անոնց որ շատ սիրով հյուծեցան՝  
Մեծ լուսթյունն իբր սփռփ ծնավ ծոցեն այդ հուրին,  
Եվ ան կերթա աշխարհեն՝ գորովասփյո՛ւտ, սիրացա՛ն...:

### ԻՆՁ ԿԸ ԹՎԻ ԹԵ ԱՊՐԱՍ ԵՄ

Ինձ կթվի թե ապրած եմ էլլադայի մեջ հին ատեն,  
Սոկրատին պես վճիտ հոգովով իմաստասեր մըն եմ եղած,  
Աստվածային գաղտնիքին դեմ կեցած եմ լուռ ու երկյուզած,  
Սքանչահար զայն դիտելու և լուծելու զայն զբաղված...:

Սակավընտիր աշակերտներ զիս ցերեկին կը շուրջպատեն  
Հովանավոր ծառի մը տակ, Ակրոպոլի ոտքին ներքե,  
Զիս կունկընդրեն անհագորեն, և մերթ բառով մ'արփաթե՛  
Անջրպետին մեջ իրենց հետ կը վազեցնեն զիս հեկհեկ...:

Այր շափահաս և ծանրախոհ, այդ թարմերամ խումբին մեջտեղ  
Ես իմ հոգիս անդրադարձած անոնց աչքին մեջ կը գանձեմ,  
Քնարական ձև ու ձայնով, խաղաղավետ ու լուսադեմ՝  
Անոնք կանաչ կղզիներ են՝ խորհուրդներու ծփանքին դեմ...:

Իմաստությո՛ւն, դուն կը բխիս առատահորդ և մաքրազեղ  
Հորիզոնին վրա կանգնող սա հեշտադի՛ծ բլուրներին,  
Սա երկինքեն մաքուր ու նուրբ, և այս տղայ խումբեն նորեն՝  
Որոնք, աղբյո՛ւր մշտանորոգ, տիեզերքի թարմությունն են...:

Ի՛նչ փուլթ, թե զիս շհասկընան, դատապարտեն ալ ուրիշներ,  
Ի՛նչ փուլթ, եթե զիս քարկոծեն, ճամբուս վրա հայհուշ բառնան,  
Թե ի վերջո ինձ երկարեն նաև բաժակն ալ սև մահվան,  
Եվ արտասովոր ինձմե զատվին աշակերտներս անտիական...

Իմաստութիւն՝ միշտ կը ծոեմ առջիդ գլուխս ալեհներ...  
Կյանքս ամբողջ պաշտամունքիդ նվիրելի հետո՝ հիմա  
Իր հուսկ ժպիտն ալ իմ հոգիս ահա վրադ բեռ կը բանա,  
Եվ այդ ժպիտը կը մնա այս լեռներուն, հողին վրա...

### ԵՐԿՈՒ ՄԱՀԵՐԸ

Ես այս երկու մահերն ալ, ո՛վ տեր, սիրով կ'ընդունիմ...  
Կա՛մ ունենալ գյուղական խրճիթ մ'ուր սերը տիրե,  
Շարժի՛լ շունչին մեջ կնոջ մ' ու գիրքերու մտերիմ  
Եվ իրիկուն մը մարի՛լ շրջապատված վարդերե...

Եվ կա՛մ հանկարծ վրայես անցնող հովեն մարտագոռ  
Տարվիլ դաշտերը կովո, վրիժաբորբ, հրաշվի,  
Թափելով մերկ սուսերիս ծայրեն վերքեր բյուրավոր,  
Եվ իյնալով անոնց մեջ՝ զերդ անկողնո՞ մը վարդի...

Եվ այս երկու մահերուն կը փափաքիմ փոխն ի փոխ,  
Անոնք ինձի կը ժպտին և կը ժպտի՛մ ես անոնց,  
Անոնց մեջտեղ իմ հոգիս կարծես կեցած է շատոնց...

Օ՛հ, եթե կյանքս եղավ պարտեզ մը զոր ոտնակոխ  
Ըրին դիպվածն ու ահեղ ճակատագիրը դժխեմ՝  
Գոնե թույլ տո՛ւր, Աստված իմ, որ ելքն անոր ե՛ս ընտրեմ:

### ԳԱՅԼԻՆ ՀԱԿՈՒՄԸ

Ձյո՛ւն... Անդունդները լեցուցեր, և լեռներուն  
Կողերն ի վար, և դաշտերուն ծածկած վրան.  
Գյո՛ւղ մը, հյուղեր՝ ճամբորդներու կարծես նման,  
Բլուրին ոտքը թավալած, ինկած նկուն:

Լո՛ւտ իրիկուն միապաղաղ դաշտին վերա.  
Ճերմակ ծառեր կը խոնարհին մինչև գետին.  
Գեպի քաղաք ճամբան անհետ կը քնանա...  
Վերադարձող կուսության ի՛ղձ մըն է հետին:

Հորիզոնին անփայլ լուսին մըն է փակեր...  
Կյա՛նքը հանկարծ... Գյուղին վրա, կաթիլ-կաթիլ,  
Ինչպես արյուն՝ կարմիր լույսեր կուգան թափիլ:

Եվ կը դառնան նայիլ մարդիկ բլուրն ի վեր,  
— Ձյունին երեսն երկարած շուքն իր ահավոր՝  
Գայլ մը, անշարժ ,գյուղին վերև կը հսկե կոր...

### ԿՈՎԻ ԵՐԹ

Այս գիշեր նորեն կ'աճի, կը մեծնա, կը շատնա հոգիս,  
Կոփվի գացող բանակի մը պես.  
Ո՛վ դափնեպսակ, այս գիշեր նորեն ինձի կ'երկիս  
Լեռան մը ծայրին և զիս կը փորձես...

Ճամբուս վրա, հեռուն, մնացած ամբողջ հույսերս նկուն  
Կը վերադառնան մի առ մի, ահա՛,  
Եվ խոր քնի մեջ նիրհող ուժերուս պարն այս իրիկուն  
Նորեն հավատքով կը թռի կ'ելլա...

«Ո՛ւր կ'երթանք այսպես, ո՞ր հաղթանակին, կամ ո՞ր փառավոր  
Պարտության առաջ»... — կը հարցնեք դուք,  
Ո՛վ իմ անհամար արշավանքներես դարձած կորակոր  
Ձինվորեն՛րս արի, զոհե՛րս անշուք...

Քանզի կը հիշեք, թե քանի անգամ զձեզ կանչեցի.  
Ծրագի մը վառ դրոշին ներքև,  
Երթալ հարձակմամբ առնելու համար նսեհին կծծի  
Քաղաքն ու դանձերը երկնապարզ...



Քանզի կը հիշեք նաև, թե ինչպես կամքս՝ զորապետ,  
Որ կ'աշտանակեր առույգ, ուղղաբարձ,  
Կ'երկմտեր մեկեն ու կը պաշարվեր խոհերով անպետ,  
Եվ ճամբուն մեջտեղ կը կենար հանկարծ...

Թե այսպես, հաճախ, շմղված մարտին տրտմությամբբը լի՝  
Ետ դարձաք հիվանդ ու ամոթահար,  
Մինչդեռ անձնասպան ինկան ձեր մեջեն քաշեր մեկ քանի,  
Եվ հեծյալն՝ անզոր՝ անոնց վրա կուլար...

Բայց այս իրիկուն բազմամբոխ հոգիս ոտքի է նորեն,  
Նայվածքներուն տակ աստեղց նորածագ,  
Իր հին, դարավոր անցյալին անխույզ խորություններեն  
Պարպելով իր հարց զինարանն համակ:

Չարին, ստության և կեղծիքներու դիմաց անհամար  
Ուխտելով նետվիլ, կուվել անվհատ,  
Թերևս հաղթելու և կամ վերստին խաբվելու համար,  
Թերևս, ո՛վ մահ, իյնալու վրադ...

Ձի հոգիս այսօր իր ճակատագրին կոշն է, զոր մոտեն,  
Ալ շատ մոտիկեն լսեց այս անգամ,  
Եվ հանկարծ կեցած հորիզոնին դեմ, լուրջ ու վճռորեն  
Պատասխան տվավ՝ «Ահա, տե՛ր, կուգամ...»

### ՏԱՂ ԱՌ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ

Ատելությո՛ւն, քեզ այսպես բացած շէի կուրծքս գեռ...  
Սեր ունեի, կամ գոնե կը ներքի՛ շատերուն.  
Կը դառնային միշտ աչքերս երկինքն ի վեր լուսահեռ՝  
Միշտ լեցվելու, լեցվելու աստեղց ժպտովը քթթուն...

Բայց ի՛նչ տգեղ են մարդիկ, հետզհետե ի՛նչ ազեղ  
Եվ անգաղար մութին մեջ ինձի ինչպե՛ս կը գավեն...  
Եվ կ'ուզե՛ք որ տակավին Ատելությո՛ւնը շքեղ  
Չսրբե՛ սուրն իր ժանգոտ՝ պիղծ օրերուն անիվեն...

Թերևս քաղցր էր ապրիլ հանշարտորեն, բարությամբ,  
Ժպտի՛լ երբեմն ու հաճախ խորհրդածե՛լ անաչալ...  
Սրինգը քա՛ղցր էր թերևս՝ քան շեփորին երգը բամբ...

Կ'ուզեմ նետել ես հիմա, զերդ ծեր սատան մը շոալ,  
Ատելությանս հուրը բորբ շորս անկյուններն աշխարհի...  
Եվ ի՛նչ փուլթ, թե այդ հուրեն իմ էությո՛ւնս ալ այրի...

### ՎՐԵԾԻ ԳԻՆԻՆ

Ուրա՛խ եմ այսօր... Քամված է գինին՝  
Ջոր պիտի խմեմ կաթիլ առ կաթիլ՝  
Մաքրելու համար սրտիս ժանգը հին...  
Կ'ուզեմ ամբոխին մեջ սուրալ, նետվիլ՝

Ջերդ վայրի երինջ մը անտառին մեջ,  
Կոտրելով ճամբուս վրա թումբեր անթիվ...  
Կ'ուզեմ որ ըլլա վրեժըս անշեջ՝  
Իբրև մորենին այրի ցայգ և տիվ...

Կ'ուզեմ զգլխիլ մտածամար ուժիս,  
Որ իրեն արգելք չի ճանչնար բնավ...  
Լի եմ քանդումի մրրիկովն անբավ...

Եվ եթե, ո՛վ դուք, վաղը գտնեք զիս  
Ավերակներու ներքև գանգրս բաց,  
Գիտցե՛ք, հրճվանքով իմ շունչս եմ տված...

### ՉԱՎԱԿՍ

Չավկի մը շնորհն անգամ, ո՛վ Տեր, զլացար  
Ինձի ընդմիշտ, և այդ մասունքը սիրույս  
Արգիլեցիր փականքներու տակ անհույս,  
Եվ զիս իմ մեջ սպանեցի՛ր շաբաշար...

Երբ ես ծոխմ՝ ան բարձրանա՛ր քու վս ի վեր,  
Իմ սպառած կյանքիս հյուսթովն առլցուկ.  
Ե՛ս հովանի անոր և ա՛ն՝ ինձ նեցուկ,  
Ու նո՛ր արև՝ աչքին մեջ աչքը՛ս գոցվե՛ր...

Մինչդեռ հիմա դուռնե ի դուռ, մինչև վերջ,  
Քիչ մը գորով պաղատելով՝ պիտի գամ  
Օտար տղոց քով թափառելի հարածամ...

Օտար տղոց աշվըներուն, հոգվույն մեջ  
Դողդողագին պիտի տղա՛ս որոնեմ,  
Եվ անծանոթ՝ պիտի մեռնի՛մ անոնց դեմ...

### ԵՐԵՔ ԿՈՉԵՐԸ

Առտուն կանուխ՝ ո՞վ է որ  
Դուռըս այսպես կը զարնե...  
Դո՞ւն, սպիտակ ու աղվոր  
Երա՛զ... կուզա՛մ, ըսպասե՛.  
Աշխարհի ծայրը մինչև,  
Մինչև լուսին ու արև՝  
Ով սպիտակ, վետիվետ  
Երա՛զ, կուզա՛մ ետևեդ...

Յերեկ ատեն՝ ո՞վ է որ  
Կը բախե դուռըս այսպես,  
Ընդհատ-ընդհատ, զորավոր...  
Ա՛հ, այո՛, դուն, դուն Պ. արտքն ես՝  
Հրամայող, խոստացող,  
Ո՞վ պարտք՝ որուն դող ի դող  
Կը հետևիմ ես ահա  
Բացած դժնե ճամբուն վրա...

Իրիկվան մեջ՝ ո՞վ է որ  
Կը ցնցե դուռըս մեղմիվ...

Այս ի՞նչ ձայն է՝ դաշն ու խոր՝  
Ջոր կը լսեմ ես հագիվ...  
Մա՛հ գեղեցիկ, Մա՛հ վսեմ,  
Կ՛սպասեի քեզի ես  
Ու հետդ ահա կը քալեմ՝  
Խելոք ու լուռ, զավկի՛դ պես...

### ԽԱՌՆՈՒՐԻ

Չեմ ըմբռներ, թե ինչպե՛ս ոմանք կ՛ապրին երջանիկ  
Թշվառությանց մեջ այսչափ. կ՛ապրին անփույթ՝ խորհուրդին  
Դեմ այս խորունկ. շարությանց, տխմարությանց այս մոտիկ՝  
Կ՛ապրին խաղաղ, իբրև թե լուկ հայելի մ՛ըլլային...

Ես՝ գթության մերթ արցունք կ՛ըլլամ ամբողջ հոգիով.  
Մերթ՝ կժկըտած մութին մեջ, կ՛ըլլամ ամբողջ որոնում.  
Մաղրն ու ծիծաղը կ՛ընեմ երբեմն բերդս ապահով,  
Ձայրույթն ալ՝ փոս մը երբեմն, ուրկե դժոխք ես կ՛ոստնում...

Ա՛հ, գոնե զո՛ւտ մնային տարրերն այս խոր տանջանքիս...  
Մինչդեռ հիմա, խառնելված թշվառության՝ կը տեսնեմ  
Օձասողուն շարություն. տխմարությունը դժխեմ՝

Բարությունով ջրոտած, և կը տեսնեմ նաև զիս  
Տիեզերքի ու կյանքի մեծ խորհուրդին դեմ կանգուն,  
Լույսով մը փոքր՝ որուն վրա կիրքերըս շուք կը թողուն...

### ԴՈՒՆ ՀԵՌԱՎՈՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ահ, եթե դուն չճանչնաս՝ ալ ո՞վ կրնա ճանչնալ զիս,  
Դո՞ւն, հեռավոր մանկություն՝ որմե եկա համարաբար  
Եվ որ հիմա անցյալին վրա պառկած կ՛երևիս՝  
Երազափայլ ու գացած կարծես աշխարհ մը օտար:

Բայց կ'արթննաս դուն երբեմն ու զիս ճրկար կը դիտես՝  
Մինչ գրկաբաց կ'սպասեմ քեզի հուզմամբ, անձկությամբ.  
Աչքերս խունկ են ամբողջ ու կը մխան գորովես.  
Կը ցոլանա աչքիս մեջ աչքիդ երկինքը անամպ:

Բայց կը թվի, թե վախցար ու հոգվույս մեջ վերստին  
հորշե ի խորշ կը փախիս ու պահվըտիլ կ'երթաս դուն՝  
Զիս ձգելով ավելի հիմա տրտում ու նկուն:

Կը հասկանամ, շես ճանչնար դուն այս հոգնած ծերունին,  
Զոր պահ մը հայրդ հուսացիր և որ եղբայրդ է միայն,  
Քեզմե հեռու շարաշար մեծցած եղբայրդ անարժան...

### ԵՍ ԱՅՍ ԿԻՇԵՐ

Ես այս գիշեր կը ծախեմ հիշատակներս ամեն...  
Կես գիշերի լուսնին տալ կ'ուզե՞ս որ մենք սակարկենք,  
Ինչպե՞ս, շունի՞ս դուն ինձի բան մը տալիք փոխարեն.  
Բայց միայն շուքըդ, տղա՛ս, հասակիդ շուքը աննենգ...

Յուրք քաղաքին անհամար խորաններուն վրա կ'ուխտեմ  
Ահա քեզի որ սիրով պիտի զանոնք հանձնեմ ես,—  
Առ տա՛ր ամենքն իմ ամբողջ այս գիտությունըս տրտում.  
Անցյալս անվերջ կրելի զիս ազատե՛ վերջապես...

Եվ տուր ստվերդ ինձի... Անսպաստին մեջ երբ ու  
Երթամ մինակըս նորեն, մերկ՝ հոգիով ու մտքով,  
Ընկերանա՛ թող ինձի օրորուն շուքըդ աղվոր՝

Իբրև ինձմե իսկ ծնած թեթև հոգի՝ մ'հագվույս բով,  
Իբրև իմ իսկ պաշտամունքս հողին վրա երկարած,  
Հողեն ելած ու հողին տվող համբու՛լյր մ'երկյուղած,

### ՄԵԿ ՀԱՏԻԿՍ

Իմ հատի՛կըս հիմա, որ կը դիտես զիս վհատ,  
Հայելիին ջրհորեն,  
Քեզի նման ու քեզմով կը նայիմ ես ալ վրադ,  
Երկարորեն, ծանրորեն...

Ե՛ս արդյոք քեզ, թե դուն զիս կը մեղքենանք ավելի,  
Երբ զիրար լուռ կը դիտենք...  
Քովըդ եղբայրդ է մեռած, բու հին ընկե՛րդ լույսի՝  
Զոր դեռ այսօր կ'ողբանք մենք:

Նոր զարնըված էր երբ որ գիշեր մ'երազըս տեսա՝  
Թե մութին մեջ, հեիհև,  
Կը քաշեի կարասի փոխադրող կառք մը հսկա՝  
Քովըս շուքի մը հետ սև,

Որուն հաճախ կ'ըսեի անձկությունով ու վախով.  
«— Ընկե՛ր, լավ շեմ տեսներ ես,  
Դուն կը տեսնե՞ս...» և թեև կը քալեինք բովե բով՝  
Բայց ձայն չըկա՛ր քնկերես:

Զէի գիտեր, թե արդեն մեռած էր խեղճն այդ պահուն.  
Այնուհետև շարթնցա՛վ,  
Զխոսեցավ ան երբեք. վերջին տեսար զինքը դուն.  
Ան շտեսա՛վ քեզ բնավ...

Հայելիին ջրհորեն մինչ կը նայիս դուն ինձի  
Ու կը նայիմ ես իր մեջ,  
Կը նշմարեմ՝ ջրամույն որպես գլուխ մը սուղթի,  
Անոր ծփա՛լը անվերջ:

Իմ մեկ հատի՛կս... օհ, ինչպե՛ս սիրտըս վրազ կը դողա՛  
Երբ կը տեսնեմ քեզմով քեզ.  
Քու արցունքովըդ քեզի կը պաղատիմ ես հիմա՝  
Որ դուն ալ զիս չլքես...

### ԱՊԱԳԱՆ

Ապագան ահա կը ժպտի՛ նորեն՝  
Ծեծ կերած, լացող տղու մը նման,  
Որ կը նշմարե փողոցին խորեն  
Կապիկ մ'ու իր տերն՝ որ կը մոտենան:

Կը ժպտի՛ ինձի Ապագան՝ որ սև  
Քող մը երեսին՝ այրի մըն էր լուռ.  
Կը ժպտի՛, և իմ նայվածքիս առջև  
Կը բացվին, կարծես, դուռներ ոսկեհուռ:

Ապագա՛ն՝ թեև շրջա անսահման  
Ինչպես ատենով—անսահմա՛ն հույսեր,  
Սերեր, հրճվանքներ՝ անմահության

Արևին ներքև ինձի կ'երևեր—  
Սակայն կը ժպտի՛ ու կը խոսի ալ,  
Տես, հոգի՛ս, դեմքովն ու ձայնովն անցյալ...

### ՑԱՎԻ ԾՈՎԸ

Ցավերու մեջ միօրինակ ու մոլորիչ,  
Ուրիշ ցավեր, անթիվ ցավերը շատերուն,  
Իրմիններու ցավերը բյուր երբ կը հառնուն  
Վիշապաձև, ինձ կը թըվի թե քիչ առ քիչ

Կը պզտիկնա հպարտությունս տառապողի...  
Ամպոտ նայվածքս անծանոթի մ'ինչպես վրա,  
Հոգիիս մեջ, կյանքիս վրա կը համենա,  
Ու զարմանքով, ու վախով նախ, գաղտնագողի

Ձիս կը դիտե, կը քննե զիս, անպատասխան  
Ձիս կը լքե իմ փոքրությունս հետ առանձին...  
Նայվածքս անդին, հեռուներուն մեջ ողբական

Կը սևեռվի, հիմա թրջած անհուն լացին  
Աղբյուրներով... Ու կը տեսնեմ ես պահ մը վերջ,  
Իմ ցավս ու զիս հորձանավար՝ այդ ծովին մեջ...

### ՄԻՏՔ ԻՄ...

Գուն, որ տակավ աճեցար և կը փայլիս բորբոքած՝  
Աշտարակին մեջ գլխիս,

Ըսե՛լ, միտք իմ, թե շուտով պիտի գա օրն ուր աստված  
Պիտի ներե որ մարիս...

Ա՛ն, որ վառեց քեզ իրմե և յուզն իրմե կաթեցուց  
Խորն ամանիդ քու հողե՛  
Ի՛նչ անողոք հեգնություն մը որոշած է վաղուց,  
Որ պիտի քեզ անցունե:

Բայց չեմ ցավիր որ հանգիս՝ եթե կրցար դուն, մի՛տք իմ,  
Լուսավորել խորշեր մուծ  
Նախ իմ սրտիս և հետո սրտերու մեջ մտերիմ՝  
Շողովն առույզ բոցերուդ...

Դո՛ւն, որ սիրտեն ստացար քու միակ ուժդ ու այդպես  
Գացիր այլոց սիրտերուն,  
Թերևս երթա՛ս պիտի դեռ՝ երբ որ պահված ըլլամ ես  
Հողին ծոցին մեջ անհուն...

### ՏՂԱ ՄԻՆՄԻ ԿԸ ԳՐԵ

Տղա մ'ինձի կը գրե. «Ձեզ ճանչնալես շատ առաջ  
Քանիներ ձեր տաղերեն գոց գիտեի ու մինակ  
Ես կ'ըսեի ինքզինքիս. գարնան զեփյուռ ու կարկաչ  
Անոնք եղած են ինձի իմ աշխարհիս մեջը փակ...»

Ծ՛վ բարերար ու բարի այս տողերուն համար ես  
Կ'ուրախանամ, կը հուզվիմ ու կը խորհիմ տրամորեն  
Իրա՞վ ուրեմն այսքա՛ն վերջ, պզտիկ ու խեղճ իմ երգերս,  
Դուք արձագանք կը խըլեք տղու թրթռուն սիրտերեն...

Ինձի համար քիչ մը ուշ, բավական ո՛ւշ է հիմա...  
Անոնց ոչ մին պատահամբ օր մը երբ որ դեմս գա  
Պիտի կոչե զիս եղբայր, ոչ իսկ այսօր մեծ եղբայր...

Սակայն գացեք դուք, երգե՛ր, տեղե ի տեղ անոնց մոտ,  
Որոնց հոգին գուշակման և սփոփման է կարոտ.  
Եվ այդպես զիս ալ հիմա սփոփեցեք գաղտնաբար...

ԻՐԻԿՎԱՆ ԱՂՈՔՔ

Համանվագ՝ իրիկվան  
Աղբյուրներուն, ծառերուն  
Եվ դարձող գոմբ հեռուն  
Բոժոժներուն հովվական,

Ինչպես ե՛րգը դաշնալուր՝  
Մավալիլ ու հմայել  
Եվ անձամբերը անհել,  
Տե՛ր, լեցընե՛լ ձայնիս տուր...

Զեփյուռին և մութին հետ,  
Թավշափափուկ անոնց պես,  
Խնկող ամեն արահետ

Ու փայփայող գազանապես,  
Անցնող ամեն դաշտերե,  
Տե՛ր, իմ երգերըս ըրե...

ՎԻՇՏ ՄԸ

Վաղուց է որ կյանքն ինձի ամեն հրճվանք դառցավ:  
Եվ վարժըված եմ ատոր.  
Բայց շունենալ ո՛չ մեկ վիշտ, հարատևող ո՛չ մեկ ցավ  
Որ հոգիիս մեջ պղտոր

Հստակութունն իր դներ և կազմեր կապն օրերուս,  
Որ միայն ի՛մըս ըլլար,  
Իմ թաքստոցս՝ ուր հաճախ մարզոց աչքեն տալով խույս,  
Պահվտեի դողահար...

Զունենալ վիշտ մը շքեղ, տոկուն ու կարծր ինչպես վե՛մ,  
Որուն վրա հակած միշտ,  
Կյանքս աջխատեր ու կերտեր անկե անդրի մը վսեմ...  
Զունենա՛լ դայն, ա՛հ, ի՛նչ վիշտ...

ԳԵՔԵՆԻ

Գիրքերու մեջ կան ի՛նչ վե՛հ զգացումներ, խորհուրդներ...  
Ինչ որ ունի լավագույն՝  
Մարդը խլեր է իրմե, ծալեր, ի պահ է գրեր  
Կողքերու տակ գույնըզգույն:

Եվ հըպարտ է անոնցմով... Օր մը երբ որ Հրատեն  
Այցելուներ գան երկիր՝  
Իր գիրքերուն մեջ պետք է մարդը գտնեն ու գատեն,  
Մարդը՝ վսե՛մ գրագիր...

Աստվածը ինքն է զրտած, գտած՝ գիրքի մեջ գամած.  
Երբ Անոր պետք ունենա  
Հնդդեմ մեկուն կամ մյուսին, — իր բանտերեն մթամած  
Կ'երթա հանել զՆնիկա...

«Մի ըսպաններ — ի՛նք ըսած է Աստուծո որ ըսե —  
Քանզի ամենքդ եք եղբայր...»  
Եվ զինվորին ինք կանգնած է մարմարե, պղինձե  
Հուշարձաններ անհամար...

Բայց գիրքն ուրիշ, կյանքն ուրիշ. գիրքը տղոց, ծեփերուն,  
Խենթերո՛ւն պետք է միայն,  
Տկարներո՛ւն՝ վերջապես. մարդը ուժեղ ու բեղուն՝  
Զի՛ գրեր, չի՛ կարողաբ գայն.

Զորավոր մարդը կ'ապրի՛ մոռցած գիրքերը բոլոր  
Եվ գիրքերուն հակառակ  
Կ'ստեղծե նոր ճամբաներ՝ հոգ չէ թե ծուռ ու մոլոր...  
Միայն Աստված է շիտակ...

Արդարությո՛ւն, բարոթյո՛ւն, մարդը ձեզ լավ կը ճանչնա՝  
Ինչպես աստղերն երկրնքին.  
Ձեզ կը ճանչնա հեռուե՛ն, կը հիանա ձեր վրա,  
Ձեզ կը քննե վերջտաին

Եվ ձեր շքեղ պատկերին կը հավելու միշտ նոր գիծ,  
Միշտ նոր գույն մը հմայիչ...  
Տկարին ձեռք կուտան հոն՝ մինչ կյանքի մեջ կուտան կից.  
Կյանքը տարբե՛ր է... մի քիչ:



Գիրքե՛ր՝ ամոթը մարդուն, կուզն ու վերքերը անոր  
Մածկող շքեղ քղամիդ,  
Բըզկըտեի ես զքեզ ու երևնար մարդը նոր,  
Մարդը հին և ճշմարիտ...

Գիրքե՛ր, մեռած սրբությանց, գեղեցկությանց դամբարան,  
Ձեր շեղջակույտը մթին  
Օդն հանեի՝ որ թերևս հոգիին մեջ մարդկության.  
Մազե՛ր շող մը վերջստին...

Գիրքե՛ր, միակ սփոփանքն, հացն ու հաճույքն իմ սրտիս,  
Փշացընել ձեզ կ'ուզեմ,  
Որպեսզի ա՛լ չխաբեք ու չխաբեմ ես ալ զիս,  
Զիյնա՛մ միշտ ձեր սուտին դեմ...

Գիրքե՛ր, գիրքե՛ր կեղծպարիշտ, ես կ'ուզեի միմիակ  
Մեծ գրատան մը մեջ ձեզ  
Ամբողջովին հավաքել, ձեռքովըս տալ ձեզ կրակ,  
Եվ ձեր փոշին հրակեզ  
Ցրվե՛լ շորս ծագն աշխարհի, տա՛լ երկնքին անհատակ...

### ԵՐԵՄՆԱՄՅԱԿ

Երեսունի հրվանդանին առջևն՝  
Ահա՛ իմ նավս առագաստները պարզած,  
Փրփուրին մեջ կը հետևին մինչ իրեն  
Շնաձուկի սև կլափներ լայնաբաց...

Կտավին վրա կարկտաններ կան անթիվ,  
Եվ ծոնցավ շատ անգամներ դեկն անոր...  
Երեսունի հրվանդանին ի պատիվ  
Կրցածիս շափ նորոգեցի զայն այսօր...

Մեծ մրրիկներ շանցուցինք մենք, բայց հավետ  
Եկավ մեզ հետ կարծես կոհակ մ'ընդծովյա,  
Նավըս անդուլ տատանելով, ու իր հետ  
Քայքայելով հոգիս, մարմինս անխնա...

Պատահեցավ, որ հույսս մերթ կտրեցի  
Երեսունի հրվանդանին հասնելու.  
Բան մը սակայն կ'ազդարարի միշտ ինձի,  
Թե հոն իյնա՛ր պիտի կոհակն ահարկու...

Եվ մենավոր, մռայլ ճամբուն վրա ջուրին՝  
Ես ունեցա շատ մը մահեր նավուս մեջ,—  
Մանուկ Իդձերս անզղերն առին ու տարին  
Եվ ծովամույն կորավ Հավատքս վայրէջ...

Շատ մը Սերիբ՝ թևերուս մեջ մեռնելով,  
Եզերքեն դուրս, կամաց մը ջուրն եմ նետած.  
Շա՛տ Երազներ ինքնիրեննին ինկան ծով  
Եվ ես վերեն աղոթեցի գլխաբաց...

Հույս մը միայն, որ մեծցուցի, սնուցի  
Երկար ատեն, հոգվույս ամբողջ գորությամբ,  
Որ իր տեսքին նշուլանքով առնացի՝  
Երբ կ'երևեր՝ կը փարատեր ամեն ամպ,

Իմ Հույսը օ՛ր մը ըլլալու ա՛ն զոր շեմ,  
Ըլլալու ա՛ն, որ առաջ տե՛ր ինքզինքին՝  
Հետո անհաղթ պիտի կովեր տարերց դեմ,  
Իմ այդ Հույսս ալ շար ոգինե՛րը զարկին...

Եվ նավուս մեջ պառկեցուցած եմ զանի,  
Ալիտատան, հեծեծելով, տըբալով,

Հիվանդ այնքան՝ որ քիչ օրեն կը մեռնի,  
Մինչ կը մընամ ծալարազուկ՝ մահճին քով...

...Սրնառնի հրվանդանին առջևն՝  
Ահա՛ իմ նավս, ու ծովն է նո՛ւյն վայրենին...  
Ենածուկեր կը հետևին միշտ իրեն  
Եվ կ'ապաստեն իմ մեծ Հուլիսիս դիակին...

### ՇՎԱՐՈՒՄ

Աստված իմ, եթե կարելի չէր որ  
Ամենքն ըլլային սափոր օրհնոված՝  
Լեցուն բարության գինիով հզոր,  
Ընեիր ամենքն իրարու դիմաց

Պողպատյա վահան, և թույլ շտայի՛ր,  
Որ տկարը միշտ, ա՛ն ալ քու որդիդ,  
Իյնա՛ և արյան իր քողով կարմիր  
Մածկե՛ ամլըցող մարմինն իր վտիտ...

Բայց չբրի՛ր այդպես... Կ'ըլլան ոտնակոխ  
Ուժովեն՝ նվազ ուժովիներն ամեն,  
Եվ կը զարնըվի եզբայրն եղորմեն...

Ի՛նչ խորհուրդ է այս. մարդ մարդու ոտով  
Եվ Գուն հավիտյան տկարին ընդդեմ...  
Աստված իմ, ինչպե՛ս գրեզ ըմբռնեմ...

### ԲԱՅ ՄՈՎՈՒՆ ՄԵՋ

Ես պզտիկ ու մեծ շատ մը տերեփու  
— Արջիպեղազո՛ս — նավելով մեղեն,  
Առանց ոչ մեկուն քով խարրսխելու  
— Ի՛նչ խնեթ, խե՛նթ էի — հասած եմ քաց ծով...

Բաց ծո՛վն եմ հիմա՛ տեսունության դեմ  
Լո՛ւտ հորիզոնին, զո՛ւր հորիզոնին...  
Կզգի՛նքն հեռուն նորեն կը տեսնեմ,  
Անոնք, մի առ մի, նորե՛ն կ'անհետին...

Ո՛չ մեկ նավ հիմա, ո՛չ խեկ ապառաժ,  
Մ՛որուն շուրջ դառնա իմ նավըս գոնե  
Կամ աչիք մը զիս հոն տանի, զարնե...

Թվկիա՛ն անծայր՝ մերթ մըռայլ, մերթ խաժ,  
Ու մի՛շտ ամայի... Եվ վերեն՝ միայն  
Ամպեր, լո՛ւտ ամպեր կը սահին կերթան...

### ԲԱՍԱՍԱՄՅԱԿ

Քառասունին՝ կ'ըսենք ա՛լ. — Կը հեռանաս մենե, կյա՛նք.  
Զգալապես՝ երեկեն ավելի մութ է այսօր.  
Մինչև երեկ լեռն ի վեր ելած էինք, արդ կ'իջնանք,  
Կ'իջնա մեզ հետ ապագա՛ն ալ հույսերուն հետ բալոր...

Կը կարծեինք, դեռ երեկ, ըլլալ սկիզբը ճամբուն.  
Այսօր հանկարծ կը խորհինք, թե կեսն անցած ենք արդեն,  
Լավագույն կեսը անշուշտ, և դանդաղուն, մոլորուն՝  
Պիտի երթանք ա՛լ հավետ հալածվելով այս ցավեն...

Ցա՛վը՝ ամբողջ անցյալի, գեղեցկությանց, ճոխությանց,  
Երբ կրնայինք՝ չկրցա՛նք լքնուլ մեր կյանքն անոնցմով,  
Հա՛ց մեր այժմու նոթության, թշվառության դիմաց գա՛նձ:

Քառասունին՝ կը կենանք փլատակաց զեզին քով.  
Նոր պալատնե՛ր կ'երազենք, որքա՛ն շքեզ ազելի.  
Բայց մեզ ոչ ոք չի հավտար ու չենք հավտա՛ր

մենք մեզի...

## ՄԻՍԱԳ

Խնդալ պետք է, լուկ խնդալ — տղաս խորհուրդ կուտա ինձ,—  
Մարդոց վրա՝ որ ատոր են միմիայն արժանի.  
Ուրիշ ամեն բան ժանգ է հոգվույն համար, որ պղինձ՝  
Միծաղին խիստ շփումով կը մաքրվի, կը փայլի...

Եվ իմ տըղաս իրավունք ունի անշուշտ... բայց ուրկե՞  
Գիտե՞ս այդ բանն անիկա. ան ե՞րբ շափեց այդքան խոր՝  
Հիմարութունը մարդոց, որպեսզի լաստն իր նետն  
Վստահորեն ու երթա՞ն անհոգ՝ ծովուն վրա անոր...

Քեզ, ո՞վ ծիծաղ, ատենով երբ այնքան ալ դեռ չէի  
Քեզի կարոտ, գրկեցի զերդ կատու մը կուրծքիս վրա,  
Քեզ գգվեցի, գրգռեցի և ճանկարաց, սխրալի՜  
Ծրեսն ի վեր շատերուն արձակեցի՜ անխնա:

Բայց հիմա քիչ, օ՛հ, շատ քիչ, կրնամ այլևս խնդալ.  
Հիմա հոգիս ինքնիրմով բըզկըտված է այնքան,  
Այնքան ցավոտ, վիրավոր՝ որ իր ծիծաղն ու ծաղրն ալ,  
է՛ն առաջ զինք կ'արյունենն ու իր վրա՜ կը մնան...

Կյա՛նք, խնայե իմ տղուս օր մը ըլլալ ինձ նման...

## ՀԱՇՎԵՀԱՐԳԱՐ

Հաշվեհարդար. ի՞նչ մնաց, կյանքեն ինծի ի՞նչ մնաց.  
Ինչ որ տվի ուրիշին, տարօրինակ, ա՛յն միայն.  
Խանդաղատանք մը ծածուկ. օրհնութուններ անիմաց,  
Երբեմն հատնումը սրտիս ու մերթ արցունք մը անձայն...

Ինչ որ գնաց ուրիշին՝ վերադարձավ անուշցած  
Ու զորացած՝ հոգիիս մեջ մնալու հավիտյան.  
Ինչ որ տարավ սերն ինձմե՛ չկորսընցուց զայն Աստված,  
Տվավ ինձի հտ ու ըրավ կյանքըս անով միշտ բուրյան...

Եվ այժմ, ո՞վ Տեր, հակառակ իմ տանջանքիս, հակառակ  
Ինծի համար սա՛ շորցած երջանկութեան աղբյուրին,  
Հին գինիով հորդարուիս ես կ'արբենա՞մ տակավին...

Ու չեմ ըսեր «ի՞նչ մընաց...» Ի՞նչ կը մնա հողին տակ  
Եղեգներեն դյուրաթեք, կաղնիներեն հաստարուն.  
Արևն ըմպած ըլլալու միտթարանքը անհուն:

## ԱՅՍ ԵՐԱԶԸ

Պիտի քալե՛մ հավիտյան այս երազին ետևեն,  
Ո՛ւր որ ըլլամ, ո՛ր աստղին կամ ո՛ր ամպին ալ ներքև,  
Սիրտըս ուրախ թե տըխուր, քայլերըս ծանր կամ թեթև,  
Շուրջըս ամպրոպը գոռա թե զեփյուռները թևեն...

Այս երազին ետևեն պիտի քալե՛մ հավիտյան,  
Հիմա, ավա՛ղ, գիտնալով, թե զայն պիտի չբռնեմ՝  
Բայց տենչալով այդ տեսիլքն իմ անցյալիս քաղցրահիմ  
Հետըս հավետ ունենալ, անով երթալ գերեզման...

Անով՝ անցյալն ինծի հետ, իմ առջևս կ'ընթանա  
Ու կըլլա միշտ ապագա ու զայն կ'ընե ցանկալի.  
Անոր սառին վրա իբրև շող մ'արևի կը փայլի...

Այդ երազին ետևեն աս ըոպեին ալ ահա՛  
Կը հեա սիրտըս այնքա՛ն՝ որ զայն գրկա՛ծ եմ կարծես,  
Որ կը խորհիմ, թե արդեն ես սիրվա՛ծ եմ իմ սերես...

## ԻՄ ԳՅՈՒՂՍ

Իմ գյուղս, մի՛շտ, իր լայն ու լույս երկինքով,  
Իր արտերուն հղութունովը հանդարտ,  
Մանկութունովն աղբյուրներուն իր թոթով  
Եվ լեռներուն լրջութունովը զվարթ,



Պը որ հրթա՞մ՝ կը դառնա՞ շուրջը մտքիս,  
Ծովահայաց ճամբաներուն մեջ իրեն  
Մերթ կը բռնե հոգնած աչքերս ու հոգիս,  
Մերթ կը փշե՛ քրեսիս հով մ'իբ հովեն...

Իր տղոցով գյուղս կ'աճեր ու կ'երգեր,  
Կը սարսուա՛ր իր սերերով ծաղկավետ,  
Կ'օրհնաճայնե՛ր իր ծերերուն շրթանց հետ...

Իմ գյուղս, տե՛ր, արդյոք ի՛նչ զով զեփյուռներ,  
Հով արևներ, ծով ստվերներ կը տեղա  
Իմ հոն թողած, իմ հոն թաղվա՛ծ սրտիս վրա:

### ՀԻՍՆԱՄՅԱԿ

Կը մոտենա հիսունն ալ, հսկայաքայլ՝ առջևին  
Զգած իր շուքը տգեղ, ծաղրանկա՛րը անոր,  
Զոր իմ հույսիս և հուշիս պատերը գեռ կը պահեն  
Բանտարկված իրենց մեջ, ծնած, շիշխա՛ծ թագավոր...

Հիսունն ա՛հա՛ ահագին ծառի մը պես կը կանգնի  
Ու կը գոցե ա՛լ ամբողջ իմ հորիզոնս իր ետև...  
Բունն է փորված, պարպրված. կը բնակի հոն գազտնի  
Թռչուն մը, որ արծվի աչք և շղջիկի ունի թև...

Հիսունն հի՞մա՛ լուսարար: Պատարագն վերջ՝ ի՛նչ փռոյթ,  
Թե կը մընան ժամուն մեջ քանի մը կիրն ու տղա.  
Ան՝ լուսաքայլ՝ մի առ մի մտրել ջահերը կազա...

Բացի մեկեն, լուսարա՛ր թող զայն՝ ի սեր արևուդ.  
Ժամերգովթյունն իրիկվան ի՛նչպես ընել, ա՛հ, թո՛ղ զայն.  
Ի՛նչպես առանց այդ լույսին մտնել բավիղը մահվան...

### ՏԱԳ ԱՐԵՎԻՆ

Քեզ գիշերին մեջեն կ'ոգեմ, մեծ Արև՛,  
Որ ամեն բան կ'ընես ինքզինքը քեզմով,

Որ Աստուծո գեմքն ես կարծես մեր վերև՝  
Անոր նման մենե հեռու և մեր քով...

Քեզ գիշերին մեջեն կ'ոգեմ, Արև հին,  
Դուն գիշերին ալ հեզինակը միակ,  
Ինչպես Աստված է ստեղծիչն ալ շարին,  
Երբ դուն՝ աշխարհն, ու ան զմեզ կը մոռնար...

Սակայն կ'ոգեմ, կ'ոգեմ, զքեզ, Արև՛ նոր,  
Խոր գիշերին մեջեն, որ արդ պաշարեր  
է իմ հոգիս և անհամար հոգիներ...

Ու կ'ապասեմ, ժողված ուժերդ բռնար,  
Որ այս անհուն դաժան խաղաբը ճեղքես,  
Եվ քարձրտնա նորեն բոց մ'ալ իմ սրտես...

### ԳԻՑԵՄ ԳԱՂՏԻՒՔ Մ'ՅԷԼԱՎՈՐ

Գիտեմ գաղտնիք մ'ահավոր.— Այս Աստվածն է սուտ

Աստված —

Մ'որ խաբած է մարդը միշտ և մարդը զայն է խաբած,  
Եվ այժմ անոնք հուսկ ուրեմն եկած կեցած դեմառդեմ,  
Զիրար կռվի կը կանչեն՝ դիժակաթափ, ծաղրադեմ...

Ուրիշ ոչինչ, այս միայն. և այս առամը՝ երկար  
Պիտի տևե տակավին, բայց ոչ մեկ բան չի կրնար  
Փոխել վախճանը անոր, որ չէ այլ ինչ եթե ոչ  
Մահն այս երկու կռվողաց ճիշով մը խառն, ահագույն

Պիտի մեռնի այս Աստվածն այս մարդուն հետ գիրկընդհառն  
Որ բուն Աստվածն՝ արսորված սրտեն, մտքեն իր գավկին  
Վերադառնա ու կազմե նորեն անոր նոր հոգին:

Պիտի մեռնի մարդը այս — հրճվանքս է մեծ, թեև դառն —  
Իր գործերովը բոլոր ու պիտի նոր մարդը ծնի  
Բանաստեղծի մը թերևս՝ երգեն սիրո, ցասառի...

## ԱՊՐԻՆ ԹԵՆ ՈՉ ԵՐԱԶԵԼ

Ապրիլ թե ոչ երագել,— չուծեցինք հարցը դեռ.  
Վայելքը ո՞ւր փնտրեի, երագի՞ն մեջ թե կյանքին,  
Զվճռեցինք տակավին... և մինչև ժամը վերջին  
Այս մեծ խնդիրն, ո՞վ հոգիս, վրադ ըլլա պիտի բեռ...

Քանզի երագն էր կյանքեն ավելի դյուր ու հեշտին  
Եվ իր արշավն ալ՝ անծայր, դաշտե ի դաշտ, լեռնե լեռ.  
Եվ ունեի ինքը միայն գոց դուռնեբուն բանալին,  
Որոնց հետև լուսասփյուռ կային գանձեր ակնահեռ:

Մենք սիրեցինք երագին երթալ ճամբեն ծաղկալից  
Մինչև անդունդը երբեմն, մինչև բարձունքը երկնից,  
Եվ, խեղճ հոգիս, երկուքեն ալ սպառած ետ դարձանք:

Զի երագին վերքերուն կյանքը շեղավ բալասան,  
Եվ հոգնության ալ կյանքին շեղավ երագն ապաստան,  
Զառինք երագ մը կյանքեն, ու երագեն շառինք կյանք:

## ՊԱՏԻԺԸ

Պատիկ ու ջինջ, ջինջ տղան ինչպե՞ս մեծցեր է հիմա,  
Փախեր գացեր է առաջ ու զարնըված ժայռերու,  
Դարձեր է ետ, աղտոտած, ու դեմս ուղիղ կը կենա  
Անխոս, անշարժ, անհլու...

Կը մոտենամ. ծնոտիս գլուխն հագիվ կը հասնի,  
Ալեծածան իր մազերն ունին ոսկվո մութ ցուրքի.  
Կը բարձրանա անոնցմե բուրում մը բարկ մեխակի,  
Զոր, ո՞չ, շնչել չեմ ուզեր...

Եվ զայրացած կը դիտեմ ես վերեն վար այս տղան՝  
Բայց և տակավ կը կարդամ զինքը գիրքի մը պես բաց...  
Հետո մեջեն տողերուն, անոնց ներքեն ու վրան՝  
Գիրքն իմ կյանքիս մոռցրված...

Իր մեջը զիս կը տեսնեմ այս տարիքին՝ երբ նույնպես  
Իմ գաղտնի կյանքս ունեի, մղումներով իր գաղտնի...  
Բայց դեռ փոքր է, ու տարբե՞ր կը կարծեի զինքը ես...  
Ո՞չ, պետք է ան պատրժվի...

Կը ծոխմ քիչ մ'ալ վրան ու խոպոպ մ'իր մազերեն  
Ճիշտ երեսիս կը քսվի... Մե՞ծ թե խրատ իրեն տալ,  
Ուր ափիս մեջ կ'առնեմ ու կը սեղմեմ ուժգնորեն,  
Ուր և թևն, արմունկն ալ...

Եվ մինչ կ'ուզեմ զայն պատժել՝ վրան ողորկ իր ճակտին  
Կ'իյնան շրթունքըս բացվող... Տղուն հասակը հանկարծ  
Ճյուղի մը պես կը սարսի, տաք կաթիլներ կը գլորին  
Երեսներեն բռնկած...

«Հայրի՛կ, հայրի՛կ», կը գռչե՛ հեքին, հեծքին մեջ անվերջ  
Հիմա ինձի փաթթված, համբուրելով ինքն ալ զիս...  
— Երեկ գիշեր ես այսպես մեղքը առի քրնի մեջ  
Իմ շունեցած զավակիս...

## ԳԻՇԵՐ

Գիշերեն ինձի դեմ մագիլներ կ'երկարին  
Եվ հոգիս հոգվույս դեմ կը զինվի՝ խելազար.  
Երկինքի լույսերն ալ մի առ մի կը մարին.  
Գիրքիս մեջ, զերդ ծովուն, կը նետվի՛մ գլխավայր...

Ո՞վ, ի՞նչ բան զիս ըրավ կյանքին դեմ զինաթափ,  
Վիրավոր ամեն մեկ նայվածքե ու շեշտե,  
Վիճին մեջ տենչերուս երթալով առ խարխափ,  
Մինչ մտքիս մեջ արդեն կը ձյունե՛, կը ցրտե՛...

Գիրքիս մեջ, զերդ ծովուն, խեղդըվի՛լ կը ցանկամ,  
Ա՛հ, չզգա՛լ, շխորհի՛լ, շտեսնե՛լ վերջապես...  
Հուսափայլ ո՞վ անցյալ, շհիշե՛լ քեզ անգամ...

Կործանման արմուկներ կը լսեմ հողիմաս...  
Կը խեղդեմ զիս փոշին... Ավերա՛կ, ավերա՛կ...  
Ո՛վ աչքեր, բարձիրս վրա մնացե՛ք վաղը փռե՛ք...

### ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ՎԵՐՍՏԻՆ

Այս իրիկուն վերստին ես սաստկորեն զգացի  
Անբուժելի թշվառութիւնը կյանքիս.  
Ա՛հ, չէ թշվառ ինձի շափ ա՛ն որ կարոտ է հացի,  
Զի ավելի ի՛մ անոթի է հոգիս:

Այս իրիկուն վերստին... Սակայն ի՞նչ պետք է ի՞նչ սիրտ  
Կրնա հոգիս դեռ ունենալ ու պատմել  
Ինչ որ կյանքին առօրյա իրեն տված վերքըն է բիրտ՝  
Որուն կարծես եղած է ինքն ալ ընտել...

Գեղեցկութեան նոր դեմքին, սիրտ հույսի մը դեմ նոր՝  
Իմ էութեանս ընդոտս ոստնումը հանկարծ.  
Երջանկութեան նոր տեսիլք, իմ կողք խոր ու հզոր,  
Եվ վաղընդփութ անոր փախուստը անդարձ...

Հույսին փախուստն՝ ինքնիրմեն իսկ սարսափած, դողահար,  
Ճակատագրին դուռը առանց բախելու,  
Չսպասելով որ սիրված ձեռքը թերևս զայն բռնա՛ր,  
Եվ կամ փակվե՛ր ան գուցե խորն աչքերու...

Երջանկութեան տեսիլքեն պահել պատկեր մը միայն,  
Ինչպես դիակ մը նորածին զավակի,  
Կործարիդ վրա զայն սեղմել և աշխատիլ ընդունայն,  
Որ քո շունչեդ ան շունչ առնես և ապրի...

Միշտ ըսպասել և հուսալ, հուսա՛լ, ինչպես հուսացի,  
Եվ հավիտյան նորեն մինակ գտնել զիս...  
Ա՛հ, չէ թշվառ ինձի շափ ա՛ն որ կարոտ է հացի,  
Զի ավելի ի՛մ անոթի է հոգիս...

### ԱՆՈՐՈՇ, ԱՆՍԱՆՈՔ

Անորո՛շ, անծանո՛թ, դուն գիտեմ թե կ'ապրիս  
Ու գիտեմ, թե կրնաս մեզ բաժնող խավարեն  
Ելլել դուրս, մոտենալ, գտնվիլ, գտնել զիս  
Եվ սիրվիլ, գեթ սիրվի՛լ, հեղորեն, քաղցրորեն...

Անորո՛շ, անծանո՛թ, կ'սպասեմ միշտ քեզի  
Ու միայն սպասումն այս կուտա քիչ մը համ՝  
Իմ անհամ օրերուս, խոհերուս ձանձրալի,  
Եվ քեզմով քիչ մը գեթ իմ ապրելս ես կ'զգամ...

Անծանո՛թ, սիրելի, դուն նոր բույր, նոր շնորհ  
Աշխարհի, որ անցար անպատճառ այսօր ալ  
Շատ մոտեն իմ ճամբուս, կամ մեջեն իսկ անոր,

Լսե ինձ, պետք է ա՛լ իրարու դիմաց գալ,  
Զի երկիրն ինձ համար շատ արագ կը դառնա  
Եվ աչքի խավարում, գլխու պտո՛ւյտ ինձ կուտա...

### ՈՍԿԵՄԱՐՏԸ

(Ռզրեզուտյուն վեց օրով)

### Ա

Երկիրը երգ է ամբողջ՝ իր հովերով, ծովերով...  
Կը խաղա լույս մը անմեղ՝ երեսն հողին ու շուրին...  
Երջանկութեան իրրև ու մը կ'ոտոտոտե Մարդոց քով...  
Ոսկի է սիրտը Մարդուն, ան գտած չէ դեռ Ռակին...

### Բ

Երկիրն երգել կ'ուզե միշտ ու կը խաղա լույսը դեռ՝  
Երբ կը սահի Մարդուն մեջ խռովք մ'ու տենդ մը գազունի...  
Կը փնտրեն այժմ ան միշտ, կը քրքրեն դաշտ ու լեռ  
Ու կը գտնե՛ վերջապես հոն պահված կույտը Ռակի...

Գ

Ոսկին ժպտուն, պսպղուն՝ հիմա կ'երթա ձեռքի ձեռք...  
Հացի, կյանքի փոխարեն կուտա ու ետ կ'առնե զայն...  
Կ'ըլլա վայելքը հյուսձում և ցանկությունը իր՝ վերք...  
Եվ կ'սկըսի Ոսկեմարտն՝ անագորույն և ունայն...

Դ

Ո՛ւր գնաց կույսը անմեղ... Երկիրն ինչո՞ւ ա՛լ չերգեր...  
Ի՞նչ փոթորիկ ծառերուն կը նետե վար տերևներն  
Ու վեր՝ ջուրերը ծովին:— Մարդ մը, աչքերն իր փակեր,  
Կուլեն հեռու, կը հեա՝ երկրի սուգով ծանրաբեռն...

Ե

Ատելավառ խառնուրդին ու ժխորին վրա մթին՝  
Ահա հանկարծ կը պայթի կշռավոր ճիւղ մ'անսահման...  
Շանթի նման կը նետվի Քերթողը խորը կուլին,  
Կը խըլի կույտը Ոսկի, զայն կուտա ետ Բնության...

Զ

Ի՞նչ փույթ արյունն առվակող Քերթողին լայն ճակատեն՝  
Կը խաղաղի քիչ առ քիչ մարդոց գուպարը ահեղ...  
Ի՞նչ փույթ ավերն ու զոհերն որ զայն ամբողջ կը ժածկեն,  
Կ'եղծե երկիրը դարձյալ ու կը պարե կույսն անմեղ:

### ԲԵԳԱՍ

Օր մը հանկարծ զիս առիր գավակիդ վրա ու տարիր,  
Քանի մը քայլ, հազիվհազ... Մինչ սուհելով ինկա վար՝  
Մնաց տղու սրտիս մեջ, այդ արշավեն ցավագար,  
Տենչը, իրոք, սուրալու քեզ հետ դաշտաց մեջ անծիր...

Եվ թեև միշտ ավելի վարանումով ու խոհեմ՝  
Ես մերթ ընդ մերթ մոտեցա քեզի նորեն, ցատկեցի  
Վրադ մեղմիվ, և ամեն անգամ տվիր դուն ինծի  
Քեզմե տարված ըլլալու հրճվանքն ու դողը վսեմ...

Եղան, եղան իսկ օրեր — պատրանք, ցնորք էր գուցե —  
Ուր հավտացի զիս քեզ տեր կամ նույնացած քեզի հետ,  
Այնքան քու վազքբ՛ էս իմ հեքս ունեին ճիշտ չափը նույն...

Այսպես անցանք միասին ոլորտների լուսավետ,  
Առած լեռներ ու ծովեր մեր ոտքին տակ, ո՛վ Բեգաս,  
Մինչ կը խեղդե զիս ավազն, և դուն հիմա ա՛լ չկաս...

### ԱՐԵՎԸ

Արևն ուրկե՞, երբ ամեն իրիկուն տժգույն վար կ'իջնե,  
Ուրկե՞ նորեն կ'ստանա իր փայլն ու բոցը վաղվան.  
Կարծես ըլլար մեկ հատիկ վիթխարի դույլ մ'ոսկիե՛  
Այգեհորի մը անհայտ խորքեն լցվող հավիտյան...

Նորեն, երեկ իրիկուն, հորիզոնին վրա պայծառ  
Քափեց, պարպեց ան հուսկ շիթն իր մրուրին ծիրանի,  
Մինչ այս առտու լեփ-լեցուն հուր հեղուկով մ'անսպառ՝  
Հանդիպակաց երկնքին վրա փառոք կ'երևի:

Եվ քիչ առ քիչ կ'ելլե վեր... Եվ շլացած, երկյուղած,  
Մտիկ կ'ընեմ ճրոնչյանն ամբողջ երկնի անիվին  
Որ ծանրորեն, մինչև լույս, այս մեծ դույլն է վեր հանած...

Խո՛ր ճռնչյուն, ձայներ որ ամեն կողմե կը լսվին,  
Աքլորներուն՝ իր շղթա՛ն... կովերուն՝ ձայն ճարճատման,  
Եվ անտառին՝ համր աղմո՛ւկ թավալումին անսահման...

### ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐ

Օ՛ այս գիշերը գարնան՝  
Ի՞նչ անուշ է, ինչպե՛ս լավ...  
Ի՞նչ հեշտանքով կը սարսուռն  
Սիրտերն անոր պատճառավ...

Կարճես աստղի փշրանքներ  
Կան օդին մեջը հալած,  
Երկրի վրա դրախտ մը սեր  
Կարճես թափած է Աստված...

...Գարնան շունչեր, կը տեսնեմ  
Ձեզ թռչող ամեն տեղ՝  
Հոգիներու պես անմեղ...

Եվ կը տեսնեմ՝ լուսաճեմ,  
Քեզ ալ, տղու իմ հոգիս,  
Որ համբուրել կուգաս զիս...

#### ԿԸՍԵՄ ՄԵՐԹ ԱՆ ԻՆՔՉԻՆՔԻՍ

Կ'ըսեմ մերթ ալ ինքզինքիս.— «Բաժական է, բաժական,  
Ինչո՞ւ միայն դարձդարձել ժամանակին մեջ անցյալ,  
Ու շթուի անկե դուրս, չէ՞ որ քուկդ է և՛ ներկան,  
Ե՛վ ապագան ու կրնաս անոնցմով ալ արբենալ...

Ուրվականի տեղ կրնաս բռնել, գրկել առարկան,  
Որ ձեռքիդ տակ է հիմա, և արշավել ու սուրալ  
Անհունության մեջ վաղվան՝ որ է նույնքան իբրևական,  
Որբան Երեկը գտնե և ավելի հյուսրենկալ:

Կ'ըսեմ երբեմն ինքզինքիս, ու պատասխան կ'առնեմ մերթ.  
— «Եսողադությո՞ւն ճամբորդին, որ կուգա խոնջ ու խոցված,  
Անապատի ճամբայեն, որ զինք լքած էր Աստված...

Անապատին մեջ սակայն ան կը գտնեք յուրակերտ  
Այնքան շքեղ պալատներ ու պարտեզներ ու լիճեր,  
Որ բաժնրվիլ անոնցմե ա՛լ չը կրնար ու շուգեք...»

#### ԵՐԵՔ ԹՈՂՈՆ

Երեք թռչուն թաղ իր ճամբուն մեջ անոր  
Ընկերանան շարունակ  
Թող մեկն ըլլա դրախտահավ մը աղվոր,  
Ինչպես որ ինքն է հիմակ:

Եվ թող երկրորդն ըլլա սոխակ մը պզտիկ  
Կապույտ ու գորշ իր երգով,  
Մտիկ ընե թաղ զայն հոգվով հիացիկ,  
Սիրտն ըլլա միշտ հեշտախոտով:

Երրորդն ըլլա թող իր բազկին վրա թառած  
Բազե մը ժիր, սրաչփի,  
Որ իր որսին վրա անվարան, անկասկած  
Ճիւղանաբաց կնետվի:

#### ՄՈՌՆԱԼ

Մոռնա՛լ, մոռնա՛լ... Մեկը մյուսին հետևեն՝  
Մոռնալ բոլոր ճամբաներն,  
Ուրկե անցար և կամ շանցար... ու մոռնա՛լ  
Եզածը հոն, շեղածն ալ...

Ա՛լ շաանիլ, չբաշքշել քեզի հետ  
Անցյալը՞ լուռ առհասկետ,  
Եվ քեզ այնտեղ՝ քեզմե շքեղ, քեզմե մեծ,  
Զոր կյանքն ըլլալ շնորհ...

Թոթվել աշխարհն՝ իր ծանրությամբ կապարի  
Նստած մտքիդ, սրտիդ վրա...  
Դիտել արևն, որ քիչ առ քիչ կը մարի,

Եվ սպասել նոր Առաքվան որ շողա  
Քերես, փակված աշքերուդ...  
— Մա՛հ, բարի-լույս քեզի և կամ՝ բարի-մութ...

## ՎԱՐՊԵՏԻՆ

է՛ն տըխուր բանը կյանքին,  
Տխուր՝ քանզի ծաղրելի,  
Անցնիլը չէ, ավելի՛  
Կենալն է իր տեղը հին:

Մտքով կենալն է այնտեղ  
Ուր կոխեցինք ատենով,  
Կառչիլ լաստի մ՝ ապահով,  
Կախված փակե մը ուժեղ:

Շուրջդ կ՝անցնի ամեն բան,  
Նորություններ կը հառնեն՝  
Ամեն վայրկյան՝ գետինեն  
Ու երկինքեն կը տեղան...

Քիթեռնիկներ ոսկեթև,  
Գաղափարի, ճաշակի,  
Կը վազեն վրադ շեշտակի,  
Կուզան ետև առ ետև...

Ջերմիկ շունչեր օդին մեջ  
Ու ճաճանչներ երկրի վրա՝  
Կը վատնվին անխնա,  
Կը փայփայեն քեզ անվերջ...

Ծվ դուն կ՛ըսես, թե մտքիդ  
Ու արվեստիդ երբեմնի՝  
Որ արդ թոշնած կը մեռնի,  
Ծաղի՛կն է լոկ ճշմարիտ...

Ծվ կը խորհի՛ս թե այդպես  
Փամանակի ժանգին դեմ  
Դուն՝ խելացի ու խոհեմ՝  
Ինքզինքդ անեղծ կը պահե՛ս...

...է՛ն տխուր բանը կյանքի՛ն,  
Տըխուր՝ քանզի ծաղրելի,  
Անցնիլը չէ, ավելի՛  
Կենալն է իր տեղը հին...

## ԵՐԱԶ ՈՒ ԿՅԱՆՔ

Ես չգտա կյանքին մեջ,  
Իր էջերուն մեջ հազար՝  
Ճաճանչավոր ոչ մեկ էջ  
Իմ երազիս հավասար...

Ես չկրցա երազես  
Ապրիլ ոչ իսկ տող մ՝երբեք.  
Խավարին մեջ կ՛երթամ ես  
Այս մտածամար սրտաբեկ...

Երազն ինչպե՞ս կը ծնի,  
Այնքան աղվոր, լուսավոր,  
Կյանքի մութեն դժպրհի...

Բայց չէ՞ արդյոք կյանքն անոր՝  
Երազին ծնունդն անկատար,  
Ձայն շատնող, խնդրո՞ղ հար...

# Հ Ա Յ Ե Ր Գ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Հ Ա Յ Ա Ջ Գ Ի Ե

(Չ ո ճ)

Գիտնալով, լա՛վ գիտնալով, որ պետք շունիս դուն անոր՝  
Ահա նորեն ես իմ անձս հոս էջերով քեզ ավի...  
Ներողութիւնն նվերին համար անպետ, անշնորհ.  
Ոտանավորն ի՞նչ ընել, «ոտանավորը կ'ուսովի»...

Պատանիին՝ թույլ կուտաս, երիտասարդն՝ ինչևէ.  
Բայց շափահաս, բայց մեծցած մարդն համառի՛ տակավին  
Տողեր քաշել ու հանգիստ գամել ետև ետև  
Ու կախել վար անոնցմե մութ կանթիղներն իր սրտին...

Ո՛չ, գիտեմ, չե՛ս սպասեր, շապասեցի՛ր դուն երբեք  
Ուրիշ բանի, բայց եթե զավակներուդ քեզ համար  
Տառապանքին, հեծության, գալարումին վշտաբեկ...

Ա՛ն է նետե՛, մարդակե՛ր, մոռացումի վիհն ի վար  
Այս մատնիկներն ալ սրտի մ'որ ամեն օր հյուսեցավ  
Է՛ք է ինքզինքն իր վրա ծանրակրելո՞ւն պատճառավ...

## Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Ի Ն

Սիրեցինք Քեզ նախ՝ Դրոշա՛կի մը պես...  
Մեզ ըսեր էիր, երբ փոքր էինք դեռ՝  
Թե լերանց կատարն էիր պանծացեր,  
Թե ծալլեր, նետեր էին հիմա Քեզ,

Բայց Քե պիտի գար այն օրն ուր նորեն  
Պիտի ծեծվեի՛ր դուն լայն հովերեն  
Ու լուսավորեի՛ր պիտի ցողոք մեկ...  
Սիրեցինք Քեզ նախ՝ դրոշա՛կի մը պես...

Իբրև Ուռնի՛ մը Քեզ սիրեցինք...  
Հերարձակ գլուխդ կ'օրրեիր մեղմիվ՝  
Նայելով կոտրած ճյուղերուդ անթիվ...  
Կանցնեին քովեդ ժանտադեմ անձինք՝  
Հաստարուն կոճղիդ զարնելով կացին...  
Օ՛, Քեզ մեր աչքերը ծով-ծով լացին՝  
Երբ այլք ոստերեդ շինեցին սրինգ...  
Իբրև Ուռնի՛ մը Քեզ սիրեցինք:

Սիրեցինք զՔեզ, վրիժառու Դանա՛կ...  
Հողին տակն էիր՝ երբ ձեռք մը անտես  
Քեզ մեջտեղ հանեց, շողացուց զքեզ...  
Դահլիճը զգաց Քեզ կոկորդին տակ  
Եվ պահ մը դողաց, բայց պա՛հ մը միայն...  
Կոտրեցար, ժանգո՛տ դանակ, նույն հետայն,  
Եվ Քեզ ծաղրելով թողուցին մինակ...  
Սիրեցինք զՔեզ, վրիժառու Դանա՛կ...

Կը սիրենք Քեզ արդ, փերության Եղթա,  
Որ ըմբոստացման կը մզես գմեկ...  
Մեր միսերուն մեջ, մեր վզին շուրջն ես,  
Եվ ամեն շարժում զոր կրնենք հիմա,  
Մեզ կը գալարե ցավերով անգութ...  
Բայց պիտի սիրենք հետքն ալ վերքերուդ  
Այն օրն ուր զլլաս դուն կապ մը ծաղկյա...  
Կը սիրենք Քեզ արդ, գերության Եղթա...

## Գ Ո Ղ Թ Ա Ն Ե Ր Գ Ի Չ Ա Ն Ի Ր

(«Հայրենի գրույցներով» շաբթից)

Տավիղն առկախ իրենց ուսեն՝ կ'երթային  
Գյուղի ի գյուղ, զվարթ, անհոգ, անծրկյուղ.  
Ճպուտներեն մեղեդիներ դաշտային  
Կը սորվեին ու գիշերը՝ նորընձյուղ

Խոտերուն մեջ կ'երգեին գովքն Աստղիկին.  
Առտուն նորին ճամբա ինկած, արևով  
Արդեն գինով, գյուղի մը մոտ, երբ այգին  
Կը տեսնեին՝ կը մտնեին անոր զով

Յանցերուն մեջ և մեղրագոծ ողկույզներ  
Կը քաղվեին անոնց շրթանց վրա թովիչ.  
Որթատունկն ալ իր ոստերով կը պճնեի  
Անոնց գլուխն որ կը հակեր քիչ առ քիչ...

Ասպնջական դուռ մը հեռուն կը բացվեր  
Դեմը անոնց: Կանանց, տղոց՝ ցնծությո՞ւն...  
Իր անկյունեն կ'օրհներ նանին ալեհեր  
Եվ կը խայտար, կը վժա՞ր տունը համբուն:

Սեղանն առատ, ինչպես գինին ալ աշխույժ  
Կը գրգռեին երգիչներուն խանդն անմեռ,  
Կը հեծեծեր տավիղն՝ իբրև սիրտ մ'անբույժ  
Եվ երգերեն միշտ սփոփանք կը հոսեր...

Գողթան երգիչն ավանդապահն է ցեղին.  
Վահագնի ծնունդ, Արտաշեսի հարսանիք  
Դարե ի դար անոր երգին մեջ կ'ապրին...  
Մատա՞ղ ձեզի, երգիչնե՛ր, դո՛ւք ալ ապրիք...



Լքված ու լուռ ճամբաներեն, ո՛չ տավիղ  
Եվ ո՛չ քնար ուսեն առկախ, այլ շեփոր  
Մը բռնած վեր, Գողթան Երգչաց շառավիղ  
Մ'ահա թերևս, հնչեցնելով մարտագոռ

Եղանակ մ'որ կը սարսե ժայռը լերանց՝  
Երազաբայլ կ'անցնի երգիչ մը հիմա...  
Ու մինչ շատեր մացառներու մեջ պահված  
Կք կապեն լուկ իրենց վերքերն արյունլըվա՞

Արի տղան շարունակվող հին կովին  
Նոր հոգիներ, նոր մարտիկներ կը կանչե,  
Ու պիտի տա՞՛ մինչև իր շունչը վերջին,  
Որպեսզի ձայնն ամեն անկյուն թափանցե...

## ԳԵՂՈՆ ՍՈՍՅԱՑ ԱՆՏԱՌԻՆ

(«Հայրենի գրույցներով» շարքից)

Հայոց երկրին մեջ մի՛շտ կ'ապրին  
Մեծ սոսիներն արմենավանդ...  
Եվ լուսթյանն ու ստվերին  
Մեջտեղ անոնց՝ անարգավանդ  
Օրե մը ետք քերթողն երբ խանդ  
Ու ներշնչում խնդրել կուգա,  
Խոովահույզ ճյուղերն աստ-անդ  
Կը փսփսան. «Դո՞ւն ես, արքա՛...»

Կ'անցնին, կանցնի՛ն օրն ու տարին  
Հալածական... Դաշտ, դարավանդ  
Եվ լեռներուն ալ կատարին  
Ձյունը փայլուն զերդ ադամանդ  
Կը կրեն հետքն անոնց հիվանդ  
Մանր քայլին... Մինչ հոս՝ հսկա  
Մառերն, հույսով միշտ անվկանդ՝  
Կը փսփսան. «Դո՞ւն ես, արքա՛...»

Սև աղետի մը նախօրեին  
Անտառն հուզված է մանավանդ  
Եվ տխրությամբ սոսիք կ'օրրին...  
Օ՛հ, թշնամույն ստվերը ժանտ  
Տունե՛րն, հյուղե՛րը քարուքանդ...  
— Բայց մինչ թավուտը կ'սգա,  
Ահա՛ ձայներ անհնազանդ  
Կը փսփսան. «Դո՞ւն ես, արքա՛...»



Իշխա՛ն, անհայտ դեռ քու անվանդ  
Հայրդդինե՛րը ապագա  
Ուխտած պաշտում մը մոլեռանդ՝  
Կ'աղաղակեն. «Ին՛ն ես, արքա...»

**ՏԱՂ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻՆ**

Քեզ, Հայ լեզու՛, կը սիրեմ մրգաստանի մը նման...  
Մեր Անցյալին թանձրախիտ սովերներուն մեջ՝ կարծես  
Մեյ-մեկ պտո՛ւղ՝ քու բոլոր բառերդ ինձի կ'երևան,  
Որոնց մեջեն կը քալեմ ու կը քաղե՛մ զանոնք ես...

Մրգաստանի մը նման կը սիրեմ քեզ, Հայ լեզու՛...  
Մեր հայրենի պալատեն, պարտեղներեն մնացորդ՝  
Դալարագեղ դուն պուրա՛կ, որ դիմացար դարերու,  
Եվ կը մընաս միշտ առույզ, հին ավիշուով կենսահորդ...

Մառերուդ մեջ հովանուտ կ'երթամ խիեղով մ'անսահման,  
Արմատներուդ, ճյուղերուդ վրա նայելով հիացիկ,  
Զարմանալով թե ինչպե՛ս դուն մնացիր՝ երբ սաստիկ  
Քամին քու շո՛ւրջըդ փչեց և տապալեց ամեն բան...

Մեյ-մեկ պտուղ զույնզզույն՝ ամբողջ բառե՛րդ ահա՛,  
Հյութե՛րդ բառերդ՝ զոր որքա՛ն հասունցուցին արևներ,  
Բառե՛րդ որոնք այս պահուս շթա՛նցս վրա եմ բռներ,  
Բառերդ որ քիմքըս կ'օծեն և կ'սփռփեն սիրտս հիմա...

**Ա**

**ՄԱՍԻՍԻՆ**

Դուն Մասի՛սն ես... Եվ կը նայիմ, կը նայի՛մ քեզ,  
Անհագ աչքով, մինչ սիրտըս ալ ա՛չք մ'է կարծես՝  
Որ ընդլայնած՝ քեզ կը գրկե ամբողջապես,  
Քեզ կը ծըծե՛ զերդ ջուրը հո՛ղն արևակեզ...

Կը տեսնե՛ս զիս, ո՛վ Մեծ Վկան մեր անցյալին,  
Եվ կ'զգա՛ս թե նայվածքիս մեջ որքա՛ն նայվածք  
Եվ հոգվույս մեջ զահակործան քանի՛ տոտվածք  
Քու անսասան գահիդ առջև կը կողկողիմ...

Արշալույսին թեջ ծիրանի կը հագնիս դուն,  
Զինչ օդին մեջ կը ծփծփասս, բայց չես ծայտուն,  
Քեզ գրաված է հիշատա՛կն հին դարերուն...

Եվ տխո՛ւր ես, զի իշխանաց փառապսակ  
Հսկայաքայլ տեսար անցնի՛լն ոտքերուդ տակ,  
Եվ զի հուշի հորդդուններն են բոլո՛ր փառի...

**Բ**

**ԱՎԵՐԱԿՆԵՐԸ**

Իզո՛ւր, ավա՛ղ... Դարերն իսպառ անցեր են  
Եվ հազիվ թե ավերակներ են թողեր,  
Հետքեր միայն անոնց կյանքեն ու փառքեն,  
Որ էր երբեմն հոս կ'ապրեին իբրև տեր...

Սավառնաթև կա հիշատակ մը այստեղ՝  
Մեծ տրամությամ մը ծանրացած, մթննցած...  
Կը նետե վար անցյալն իր ջուքը ահեղ՝  
Իր օթևան սեպ սարերեն ամպամած...

Քանի մը քար, քանի մը բառ հոս ու հոն՝  
Տապանագիր գերեզմանի մը անծայր,  
Եվ մինչ ծնած՝ կուզես կախել սիրտդ ի ձոն

Ազատ արանց, որ հայրերուդ էին հայր,  
Ո՛վ խեղճ ստրուկ, անցյալը չի ճանչնար քեզ,  
Եվ ձեռքիդ մեջ սիրտդ փոշի՛ կը գտնես...

Գ

### ԼՈՒՍԱՎՈՐՁԻ ԿԱՆՔԱՂԸ

Երկնի անթիվ աստղերեն՝ մերն է միայն անիկա...  
Ամեն գիշեր, վերը հո՛ն, Արագածի գլխուն վրա՝  
Ան կը շողա առանձին, այնքան անչափ մյուսներեն՝  
Որ ուրի՛շ ձեռք մը կարծես զանի վառեց գաղտնորեն...

Կարծես թե ան հոն կախված է մեզ համար, հավիտյան...  
Ան կանթեղն է՝ լույս առած Լուսավորչին Հայության,  
Անկե լցված, անոր ջինջ արտասուքեն՝ յուղի տեղ,  
Պլպլացո՛ղ քաղցրությամբ, պլպլալի՛ք միշտ կանթեղ...

Այդպե՛ս հավտաց ու այդպե՛ս դեռ կը հավտա հայ հոգին՝  
Որ միշտ դարձավ, նայեցավ և հռեցավ անձկագին  
Առտո՛ւն՝ ձյունոտ Մասիսին և գիշերներն ալ՝ անո՛ր...

Այդպես և ե՛ս, ո՛վ Մեծ Սուրբ, հավատարծարծ կանթեղիդ  
Զգացի, որ հոգվույս մեջ կը ծագեր շո՛ղը վճիտ,  
Եվ կը մեծնար, կը մեծնա՛ր, մինչև կ'ըլլար Ա՛յդ մը նոր...

Գ

### ՀՐԱԶԳԱՆ

ձոն Հրազդանն է հիմա... Եվ իր գոռումը ահեղ  
Կը լեցրնե տարածությունը շուրջի-  
Ով խուլ ժխոր՝ որ օդին մաքրության մեջ լուսահեղ՝  
Զերգ բզզյուն մը մեղվանոցի կը կախվի...

Կը մոտենաս և տակավ կը համակե ձայնը քեզ,  
Կը մտնե ներս ականջներեդ և սրտեդ...  
Մինչ դաշտին մեջ ալ կարծես կը ծովանա փրփրադեղ  
Եվ կ'ընթանա՛ քեզ վարելով իրեն հետ...

Իջած է մութը հիմա Մասիսի հին երկինքեն՝  
Ուրկե այնքա՛ն արևներ ալ բարձրացան,  
Իջա՛ծ է լուռ ու հանդարտ, փոշիի պես ձյունեղեն,  
Կամ անցյալի իբրև աճյո՛ւն սրբազան...

Երբ կամուրջն անցնելով ա՛լ կը հասնիս Երևան՝  
Գետին աղմուկն արբեցուցած է զքեզ...  
Իր ջրվեժով ալյաց տակ անհետացած է ներկան,  
Պատմության մեջ, պապերուդ հետ կը քալես...

Եվ ի՛նչ հմայք քիչ հետո՛ երբ հովվատունը Հայոց,  
Ուր կը մտնես իբրև զղյակդ հայրենի,  
Բերդի մը պես կը կենա գետին վերև ցասակոծ  
Եվ այդ անվերջ մոռնչյունով կ'օրորվի...

Գիշերվան մեջ կը մնաս պատշգամբին վրա անոր...  
Ցերեկվրնե Մասիսն աչքիդ մեջ է դեռ...  
Եվ կը խորհիս. «Հայության Մասիս իրանն է հրզոր,  
Եվ Հրազդան՝ իր աղաղակը անմեռ...»:

Ե

### ԶՎԱՐՔԱՆՑ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՃ

Այս տաճարին մեջ, ո՛վ Տեր, աղոթեցին անո՛նք որ  
Իրենց ցավի ծուխին խառն՝ հրճվանքի բոց մ'ունեին...  
Իրենց մաքուր քրտինքին հետ արյան ուղիս մ'ալ բոսոր  
Շաղախած էր այս հիմերն ու բուրումին հետ խունկին

Կը բարձրանար անոնց հոտն ու կ'սփոփեր միշտ զիրենք...  
Խաղաղություն ամենուն հոգիին մեջ կը տիրեր,

Եվ հավատքով մը ամուր ու շրթնեքով ալ անհնձ՝  
Մարդիկ քեզ, Տե՛ր, կ'օրհնեին, զի կ'օրհնեի՛ր զիրենց, Տե՛ր...

Հիմա այստեղ ծածկըված են դարերու փոշիով  
Անանք որոնք հայերուս եղան հայրերը ազատ,  
Անանք որ հոս ատենոք ծնրադրեցին քովի քով,  
Խոհարհեցան, բայց նաև ուղղեցան անընդհատ...

Մինչդեռ այսօր՝ այս փլած տաճարին շուրջ կը տեսնեմ  
Տարածասփյուռ ամեն կողմ, մինչև հեռուն, շատ հեռուն,  
Անանց սերունդը ամբողջ, միշտ ծնրադիր, թախծադեմ...  
Տե՛ր, արձակե՛ ալ զանոնք ի սե՛ր իրենց պապերուն...

### ԴՈՒՆ ՄԵՐԻՆՆ ԵՍ

(Հայաստանին)

Եվ արդ նորեն ես Քեզի՛ իբր առաքված մեջ կյանքիս,  
Կը մտածեմ ուժգնությամբ և ուժովցած կ'զգամ զիս...  
Դուն մերի՛նն ես... Կը բավե այսքանը լոկ, միայն Դուն,  
Դո՛ւն մերինն ես... և ահա անշրպետեն դարերուն

Կ'զգամ դառնալը ինձի և միանալը Քեզմով  
Իմ պապերուս հոգիին՝ որ համակ ուժ ու կորով  
Եվ փափկություն ու լույս էր, շինված Քեզմե, քու հողեդ,  
Քու ջինջ օղեդ ու շուրեդ, հոգի՛ն, որմե շիթ մը գեթ

Երակներուս մեջ կ'ապրեր, գաղտնածածուկ կ'ապրե՛ր դեռ  
Եվ զքեզ գալ գրկելու զիս արժանի դեռ կ'ընեիր...  
Դո՛ւն մերինն ես... Թեև քեզ մենե խլած ըլլային,  
Քեզ կոխկոտած ու քամած և ա՛լ կմա՛խք ցավագին՝

Քու մերկ լեռներդ ու դաշտերդ ըլլային լոկ մեզ թողած...  
Բայց Դուն մերի՛նն ես, կ'ըսեմ ու կը կրկնեմ երկյուղած,  
Եվ զերդ տրդա մը հիշող իր նշանածն հեռավոր՝  
Հրճվանք մ'ու գող մը հանկարծ կը լեցընեն սիրտս այսօր...

### ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐ

Օղը գաղչ է այս գիշեր՝ առագաստի՛ մը նրան,  
Կարծես հանկարծ երկընթին մեջ աստվածները ոսոխ  
Եղբայրացած ըլլային... ու ծաղիկներն ոտնակոխ  
Մեղմիվ հոգի առնեին... և կույսերուն՝ ավետման

Երևնային հրեշտակներ, մեծ շուշաններ ի ձեռին...  
Օդն այս գիշեր այնպե՛ս գաղչ, այնպե՛ս քաղցր է ու խաղաղ՝  
Որ աշխարհի վրա կարծես, միայն սերեր կան շքնաղ  
Ու շուրթե շուրթ համբույրներ միայն, կարծես, կը թռնին

Օղը քա՛ղցր է... Եվ ահա՛ այս քաղցրության մեջ անճառ՝  
Օղակ-օղակ, երկինքեն իջնող օձի մը հանգույն՝  
Կ'իջնա վրաս մտածումն Արհավիրքին գերագույն...—

Հո՛ն միլիոններ այս պահուս, կատաղության մ'անսպառ,  
Մահ կը տեղան միմյանց վրա... Անթիվ մայրեր հոն կուլան...  
Հո՛ն Հայ աշխարհը կ'ըլլա լոկի դամբա՛նն Հայության...

Օղը քաղցր է այս գիշեր՝ առագաստի՛ մը նման...

### ՊԱՏԵՐՆԵՍ

Ո՛վ մեծ Երազը մարդուն, անգամ մըն ալ դուն այսպե՛ս  
Կը ցնդիս; օղը կ'ելլես և պետք ըլլա պիտի որ  
Նորեն երկար տարիներ դուն թխարվիս, կյանք առնես  
Եվ աշխարհի վրա բանաս թևերդ ազվոր, լուսավոր...

Մարդոց միջև դուն Սիրո, Եղբայրության քաղցր Երա՛զ,  
Ջոր է՛ն քաղցրերը մարդոց, քաղցր հիմարենե՛րը անշուշտ,  
Երազեցին, սնուցին դարե ի դար հանապազ  
Եվ կանգնեցին զերդ պատվար մ'Ոճիրին դեմ արյունոտ...

Մեծ ու դժբախտ դուն Երա՛զ, աստվածությունը մարդուն,  
Որ կը ջանա, շի կըրնա՛ր խոնձարուբն գութս ելլալ,  
Ինչպե՛ս տխուր է խորհիլ, թե անգամ մ'ալ մեղար դուն...

Խաղաղութիւն արդ քեզի, սպանեցին զքեզ ալ,  
Քե՛զ, որ հիմա կը լողաս ճահիճներու մեջ արյան,  
Խոզտանգը ված, խողխող ված՝ խեղճ փոքր Հայո՛ւ մը նման...

### ՀՈՒՅՍԱԸ

Փու ցավիդ մտայլ երեսին վրա  
— Նեխած, բորբոսած լիճի մը նման —  
Երբ հանկարծ ճաճանչ մ'արեկի կ'իյնա,  
Երբ որ կը փայլի՝ Հույսը մեկ վայրկյան,

Ինչպե՛ս վերստին դուն կը պսպրդաս,  
Դուն կը մաքրը վիս, կ'աղվորնա՞ս նաև,  
Եվ ինչպե՛ս, Ազգդ իմ, կ'արձակես վրաս  
Զիս լուսավառող կայծե՛ր հրաթև...

Եվ ես կը հավտամ, ո՛վ ազգս, այդ պահուն,  
Քի քու ծոցիդ մեջ, քու ցավիդ մտայլ  
Երեսին ներքև, արեգակնափայլ

Աղամանդներու գանձեր կան անհուն,  
Գանձե՛ր զոր կարծես խորքեդ անհատակ  
Կհանն, բուռ-բուռ, Հույսը՝ մե՛ծ սուղակ...

### ՔԵԶ ՉՏԵՍՍ.

Քեզ շտեսա, բայց ըսին թե կայիր դուն. խորհեցա  
Քեզի հույսով ու ցավով. իմ հոգիիս նախընծա  
Հանձրը քեզի զոհեցի՝ մտածումով ու գործով.  
Ո՞վ հայրենիք, հեռավոր ու անծանոթ սիրո ծով՝  
Քրուն մեջ սիրտըս, անվերջ, գետի մը պես կը հոսի...  
Քայց զի հեռու էիր դուն, ես շատ անգամ, մեկուսի,  
Սասկածեցի, վիճեցա ինքզինքիս հետ, առանձին,  
Ջիս քեզ կապող հոսանքին կենդանութիւնը մասին...

Քեզմե ոչինչ, վերջապես, ինձի այլևս կուգար՝  
Բացի խորունկ հեծեծման արձագանքն մը երկար  
Եվ կ'ըսեին. թե ինչպես ուրիշներու համար դուն,  
Երբ որ էիր հայրենիքը երջանիկ ազգերուն,  
Զէիր միայն օվկիանն իրենց ուժերը կլլող,  
Այլև աղբյուրը առատ, աղբյու՛րն անուշ, այգաշող՝  
Որմե անոնք կը խմեն, աղբյու՛ր անհո՛ւն թարմութեան  
Եվ նոր աշխույժ, նոր արյուն, հպարտութիւն կ'ստանան...  
Եվ այսպե՛ս էր որ սիրույս հորձանքին մեջ դառնութիւն  
Եվ վարդերուն մեջ հույսիս կը խառնը վեր միշտ աճյուն,  
Ու մտածելն իսկ քեզի եղած էր ա՛լ տառապանք,  
Քե՛զ, որ հեռվանց կյանքիս շուրջ կը դառնայիր զերդ

կապանք

### ՍՈՒԵՏԻԱ

Պզտիկ Գյուղե՛ր, դուք մեծցաք,  
Անհունորե՛ն մեծցաք դուք՝  
Երբ բնակիչ շունեցաք...

Ու ձեր այն լեռը մեծցաւ,  
Լեռն անծանոթ, մշուշատ  
Պայծառացա՛վ, հայացա՛վ...

Պզտիկ Գյուղեր, ի՞նչ մթերք  
էր քաջութեան, մեծութեան՝  
Ձեր ծոցին մեջ հավաքված...

Ո՞ր հեռավոր, լուսավոր  
Աղբյուրներեն Հայութեան  
Այդ ուժը հոդ էր հոսած...

Պզտիկ, խաղաղ դուք Գյուղե՛ր,  
Երբ թշնամին սպառնաց՝  
Եղաք հանկարծ բանակներ,

Օրհնյալ անհաղթ բանաբան՝  
Որոնց գիմաց թշնամին  
Ճանչցա՞վ Հայու սիրտն անհաղթ...

Օրհնյալ ձեր հողն ըլլա միշտ,  
Ձի Հայաստանն ալ ամբողջ  
Ինքզինք ճանչցա՞վ ձեր վրա...

**ՅԱՍՄԱՄՈՒՔ**

Չմտածենք, ո՞վ հոգիս, ջանանք մտնալ ամեն բան,  
Ե՛վ անհուն հույսն երեկվան, և՛ այսօրվա մութն անհուն...  
Չմտածենք, չգիտնա՞նք թե այս դարձքեն վերջ ճամբան՝  
Կերթա ցատկել, կորսվիլ անդունդին մեջ անանուն...

Հավիտենից ծովուն վրա մեր այս լքումն անվախճան,  
Այս ցուրտ սկիզբն օրհասի, էջքն այս ժամուն գերազույն՝  
Թո՞ղ չըմբռնենք... և ըլլա՞ թող մեծ խաղաբն օգնական  
Շոգենավուն արկածյալ՝ որ կը կորչի ծովամուռն...

Չո՞ւր է եղել ամեն ինչ, ամեն փափաք, ամեն ջանք,  
Խուսափելու վճիռն որ մեզ գրկեր էր կանխա՞վ.  
Որ դեպի մահ կը մղեր ու կը քաշեր մեզ աակա՞վ...

Այնքան երազ, այնքան ճիգ, այնքան տաժանք ու տանջանք  
Չո՞ւր են եղեր, այնպես չէ՞, ո՞վ ահա՞յր դուն Աստված,  
Որուն սիրույն մենք սակա՞յն էինք այնպե՞ս հավտացած...

**ԲԱՐ**

Ո՞ր խորունկ ողբը երբեք պիտի կրնա արձագանք  
Տալ խորտակված ու լքված մեր սրտերուն խեղճության...  
Այսուհետև մենք ինչպե՞ս պիտի, Աստված իմ, կրնանք  
Մտաբերել միմիայն, խորհրդ, Գուսա՞լ Ապոստան...

Տարիներո՞վ՝ հեռավոր, անմատչելի, ցանկալի  
Մեր երազն էր եղած ան, որ խափարին ներքև լայս  
Եվ անդունդին վրա երկինք և մեր աղբյուրն էր կյանքի,  
Որ Այսօրվան մեջ վաղն էր՝ մի՛շտ գեղեցիկ և մի՛շտ կույս...

Ո՞ր գիշերին մեջ հանկարծ, անէության նման մութ,  
Երբ մարեցան դժոխքի շահերն անգամ սոսկումն,  
Մարդադեբ հղացան տալ այս հարվածը անզու՞թ,

Ո՞վ դժբախտ Ազգ, այս հարվածն որ քեզ սրտեզ կը դարձնե,  
Որ կ'սպանն սաղմերն խոկ ամեն հույսի, հավատա՞քի,  
Եվ կը թողու մեզ երկրի վրա մեռնել կենդանի...

**ԵՎ ԼՈՐԵՆ ՄԻՇՏ**

Եվ նորեն՝ միշտ, հավիտյան, այս կրճրտումը սրտին՝  
Ինչպես ջաղացք մը սրուն քարերն իզուր կը դառնան.  
Այս թալթըլումը հոգվույն խորն երկինքի մը ցրտին,  
Գոց դուռներու դեմ մտքին այս ընդհարումն անվախճան...

Ամեն երազ՝ բզկտած և ամեն հույս փետրաթափ...  
Վաղորդայնին կարկառիլ հրատուր շրթներով...  
Հանգրվանի մ՝ ի խնդրե քալել, քալե՛լ առ խարխափ,  
Եվ անդունդի մը հանկարծ գտնել բացվածքն ոտքիդ քով...

Ա՛հ, ո՞վ պիտի վերջապես մեր հիվանդ սիրտը մեկ օր,  
Հիվանդ տղու մը նման, անհուն սիրով դարմանն,  
Ո՞ր անիծյալը մեզ պես, կամ ո՞ր օրհնյալն ի տյառեն...

Պիտի գտնե՞նք մենք արդյոք վաղը հրեշտակ մը հզոր  
Խաղաղեցնող մեր հոգին, թե ոչ սատա՞ն մը բարի  
Չայն բորբոքող և ընող շա՞նթ մը գլխուն աշխարհի...

**ԱՀԱՎՈՐ ԲԱՆ ՄԸ ԱՅՆՅՈՂ...**

Ահավոր բան մը այնտեղ կը կատարվի մութին մեջ...  
Դժոխային այս տուճեն ինչպե՞ս կրնա պատահվի...  
Ազգ մը ամբողջ, փայհեցե՞ք, երեկ կ'ապրեք, կ'աղբորեք,

Միտքը լույսին կը բանար և տակալ սիրտն ալ հույսին,  
կը բարձրանար ճահիճեն, ուր խրած էր ատենոք,  
Քւերն արդեն կը թոթվեր, ինքզինք արդեն եթերին,  
Ամպերուն մեջ կը կարծեր... և ահա՛ ճիշտ այդ պահուն  
Ոսոխ Աստված մը անշուշտ՝ որ դարանած կը դիտեր՝  
Անոր վրա արձակեց ամբողջ շարիքն աշխարհի,  
Ոտքի հանեց բովանդակ հրեշուփյունը ի քուն՝  
Մեծ օծերու, վագրերու, շակալներու դեմքերով,  
Փաթթըվեցավ ոտքերուն, խածատեց կուրծքն ու հասավ  
Անոր վզին, աչքերուն և իր ժանիքը մխեց  
Ճիշտ ուղեղին մեջ անոր՝ զոր արյունին հետ ահա՛  
Ան կը լըզե հեշտագին, ան կը ծծե՛ զզխած...

Ահավոր բան մը այնտեղ կը կատարվի մութին մեջ.  
Կ'սպանեն՝ն ազգ մը այնտեղ, որ կյանք ունի և շնորհ,  
Ունի հանձարն ապրելու, նորոգելու ալ ինքզինք,  
Գեղեցկացած էր տակալ ու թարմացած, ա՛հ, որքա՛ն,  
Եվ այդ ազգը մեռին էր, և կ'սպանեն՝ն զայն հիմա,  
Ջայն կ'սպանեն՝ն... Օգնությո՛ւն, ա՛հ, օգնությո՛ւն,

օգնությո՛ւն...

### ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հեղեղ մը սև դեպի հարավ կը քալեր՝  
Ճամբան, տակալ, ավազին մեջ ցամքելով,  
Ճամբան, երբեմն ալ կազմելով նոր ուղիներ...  
Ան կը քըշեր կոճղ ու ծաղիկ քովե քով,  
Եվ իր վերև՝ ճանճերն իբրև գոլորշի,  
Եվ իր մեջեն՝ լաց մը իբրև դղըլուն,  
Կուգային հետն՝ ընկե՛ր դուրսի և ներսի...  
Ծրկնավիշապ Արևը, հո՛ւր և շողյո՛ւն,  
Առավոտեն մինչև իրկուն, ամեն օր  
Ջայն կը ծծեր, կը կուրցըներ, կ'սպառեր,  
Եվ մինչև լույս, ամեն գիշեր, Մութը նոր  
Կուտար անոր դժոխքի նոր սարսուռներ,  
Մերթ խորշակներ, անապատեն անսահման,

Մերթ մարդկային բորենիներ շորս կողմեն,  
Կը խուժին վրան այդ հեք բազմության.  
Եվ կ'իյնային ահա ոմանք փափկորեն  
Ու գողցըված՝ կը տարվեին ուրիշներ...

Հեղեղ մը սև դեպի հարավ կը քալեր,  
Քշելով հետը նաև Հուր մը անհուն՝  
Որ թաղված խորն հիմա հյուծած սրտերուն,  
Պիտի վառեր ու բորբոքեր, ու այրեր  
Վրեժի բոցով՝ վաղը, ամե՛ն հայ սրտեր...

### ԵՐԱԳ

Երազիս մեջ ես տեսա՝ երկինքն հանկարծ բացվեցավ,  
Կապարագույն մեծ երկինքն, որ ծանրացի էր այնքա՛ն,  
Այնքա՛ն ճնշեր մեր վրա ու մեզ խեղդեր էր տակալ,  
Ահա հանկարծ բացվեցա՛վ՝ կափարիշի մը նման...

Ու երկնքին մեջ տեսա առվակներու քով վճիտ  
Եվ մարգերու մեջ կանաչ՝ մեր մանուկները կայտառ  
Եվ մեր կույսերը շիկնոտ, որոնց դեմքին վրա ժպիտ  
Եվ աչքերուն մեջ հիմա կը խաղար լույս մը պայծառ...

Տեսա մայրերն անոնց մոտ՝ գորովազեղ արցունքով,  
Մերունիներն ալեփառ ու կտրիճները բոլոր,  
Որ խաղաղած կ'օրհնեին բարիքն օրվան ապահով...

Եվ մինչ տեսա անոնց շուրջ գառնուկներու դարավոր  
Հոտը հեղիկ արածող, տեսա և գալլ մը հեռուն,  
Որ կորացուկ կը փախեր՝ ի տես նախկին զոհերուն...

### ՊԻՏԻ ՄՈՌՆԱՆԻՔ

Պիտի մոռնա՛նք մենք զմեզ, մեր վիշտն ու վերքն ահագին,  
Պիտի մոռնանք, այնպես չէ՞, երբ մեր երկիրը դառնանք,  
Ու աշխատի՛նք ունկընդդեմ տակալ զարնելն իր սրտին  
Եվ մենք ու ան իրարու քիչ առ քիչ ուժ տանք ու կյանք...

Պիտի մոռնանք անսահման մեր հսկիծին հետ՝ ասե՛  
Մեր հոգիները այրող Ատելութիւնն անսահման,  
Ու մեր աչքերը պայծառ ու մեր քայլերը թեթև  
Պիտի ըլլան վերստին՝ մեր հոգի՛ն վրա մայրակեան...

Մարդոց շարիքը մեզի և քո՛ւ շարիքդ, Աստված իմ,  
Պիտի գա՞ օր մ'ուր այլևս պիտի կրնա՞նք չհիշել,  
Պիտի կրնանք մենք նորեն երգե՛լ, սիրե՛լ անարգել...

Մ՛հ, դեռ, գիտե՛մ, կանուխ է, զի բախտն է դեռ ոխերիմ...  
Սակայն, ո՛վ Տեր, մոտեցո՛ւր այն առավոտն ուր նորեն  
Պիտի կրնանք քեզ օրհնե՛լ հոգիներուն մեր խորին...

### ՏԱՐԱԿՈՒՅՍ

Եվ Տարակույան հոգվույս մեջ կը կանգնե գլուխն իր օձի...  
— Եղմարի՞տ է այն ամենն որուն ես ցարդ հավտացի.  
Ենթերիմնն դուրս կը հոգա՞ մարդն ուրիշ մեկը երբեք.  
Եզրայրութիւնը արդյոք չէ՞ մեծ խաբկանք մը, ըսե՛ք,  
Ազատութիւնն ալ տարբեր բան մը, բայց թե կիրքերու,  
Տխմարութիւն, մախանքի սանձաբեկում մ'ահարկու,  
Եվ իմ Ազգըս,— ինձ ներե՛, ա՛հ, ներե՛ ինձ, խեղճ Ա՛զգ

իմ,—

Քաղական կյանք ունի՞ դեռ,— ներե, եթե կ'երկմտիմ,—  
Ողջունելու Ապագան, զոր կանչեցինք անձկանք  
Եվ զոր մեզի ցույց չի տար այսօր ոչի՛նչ ու ո՛չ քա...

### ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Կարենալու համար ապրիլ այսուհետև,  
Օդի, շուրի, հացի նման՝  
Մենք պետք անինք։ Հպարտութիւն,  
Պետք անինք որ մեր անունն ալ օտարանալիք  
Երկան երկիր թուջի երթաւ.  
Ընչեցրանկ կ'ուզենք զանի՛

Ինչպես շեփոր մ'երկրի վրա,  
Կ'ուզենք որ ան ծածակի  
Ինչպես դրոշ մը պայծառ.  
Եվ ինչպես ջա՛հ մը կուզենք՝  
Որ ան ըլլա բոցավառ.  
Եվ ինչպես զե՛նք՝  
Մ'ան պատկառանք ազդե և ահ,  
Եվ իբրև գո՛րծ մ'արգիստի՛  
Ըլլա հանուրց պաշտելի  
Եվ ըլլա՛ անմահ...

### ՀԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՆՁՆ Է ԱՆԱ

Հարութիւն շունչն է ահա, շարդակոտոր Ազգքդ իմ,  
Հորիզոնեն ծայր տված, որ կը փչի մարմնուշոյ վրա...  
Ամայութիւնն, լուսութիւնն... Օրորոց չէ, այլ շիրի՛մ  
Երկիրն ամբողջ՝ ուր երեկ դուն զոհվեցա՛ր անխնա...

Բայց հարութիւն շունչն է այս. ու զայն զգաս պիտի դուն  
Գերեզմանիդ իսկ խորին՝ կուրծքի՛դ վրա շախշախված  
Ու շուրթերուդ մսաթափ, և քու աչքերդ ի քուն,  
Մարած աչքերդ արթննա՛ն պիտի լույսին նորաբաց...

Քու արյունեղ բողբոջած խոտերը քեզ քովելով  
Պիտի տան քեզ նոր կյանքի գթոտ գգվա՛նքն առաջին,  
Մինչ, կառչելով դուն անոնց, համր սակայն ազահ՛ով  
Շարժամբ ոտքի պիտ ելլես՝ թափած պատրանքը հողին...

Մեղմի՛վ, մեղմի՛վ, վախնալով քեզ տալ հուզում մը սաստիկ,  
Պիտի անցնին զարնային ծիծեռնակներն երկինքեն.  
Մեղմի՛վ կուտնկը իշնե պիտի ձեռքիդ քու մոտիկ  
Եվ սոխակները հեռուն պիտի մեղմի՛վ դայալլեն...

Բայց դուն արդեն մոտեցած ես առվակի մե, ահա՛  
Եվ քու վերքերդ իր շուրին մեջ խնամքով վը լվաս,  
Զայն կը խմես, և հանկարծ իբր հայելի մը վրա՛  
Ո՛վ խոռվիլ տեսարան, քիչ մ'արթուրա՛րդ ալ վուտաս...

Ու փլատակներդ ահա կը հարթվին քիչ առ քիչ,  
Մոխիրներուդ ներքեկն փոքր ածուններ կը հառնեն,  
Ամենուրեք կը շարժին արոր ու բահ ու բրիչ,  
Եվ լուսասփյուռ դաշտերուդ սա՛ կանաչ քողն է ցորեն...

Ու զորացած, աղվորցած՝ հունձքի գիշեր մը երբ որ  
Դուն կը հսկես գորովով զավակներուդ վրա կայտառ,  
Որ արտին մեջ կը նիրհեն, ահա՛ աստղերը բոլոր,  
Ո՛վ հարուցյալ, գլուխդ շուրջ կ'ըլլան պսակ մը պայծառ...

### ԸՄՐՈՍՏՈՒԹՅՈՒՆ ՍՐՔԱԶԱՆ

Օր մը հանկարծ վառեցար...  
Երկինքներեն հեռավոր  
Ինկած կայծե մը կարծես՝  
Օր մը հանկարծ վառեցար  
Մեր գյուղերուն ու քայլերուն մեր մեջտեղ,  
Համայնածախ ո՛վ կրակ,  
Ըմբոստությո՛ւն սրբազան...

Խորշակներեն բռնություն  
Մեր հոգիներն, որպես խոփվ,  
Չորցեր էին ու մութին մեջ մեր բախտին  
Հիմա լուռ-մունջ կ'այրեին,  
Քեզմով փունջ-փունջ կ'այրեին,  
Ըմբոստությո՛ւն սրբազան:

Կուպր ու կապար գիշերվան  
Վրա ժայթքող շառափեղ  
Սարսափեցան շղջիկներն  
Ու վեր ու վար, աչ ու ձախ  
Թրթրոսթիւ նետվեցան.  
Բուերն երկար վայեցին  
Երգիկներուն մեր վերև.  
Հին խլուրդները դարձան  
Իրենց ծածուկ ծակերուն,

Եվ աղվեսները շվար  
Կծկրվեցան, պահվեցան,  
Եվ գայլերն իսկ կատաղի  
Ընկրկեցան քու փայլեղ,  
Ըմբոստությո՛ւն սրբազան...

Մուխեղ կուրցան աշվրներ,  
Ան երկինքն իսկ կծածկեր,  
Կ'ըներ աստղերն իսկ անտես...  
Անջատ բոցերըդ հիմա  
Իրարու ձեռք կուտային,  
Մերթ գետերու պես կարմիր  
Կը վազեին հողին վրա,  
Մերթ, շատըրվա՛ն շառագույն՝  
Կը ժայթքեին դեպի վեր,  
Եվ հորիզոնը ամբողջ, մինչև հեռուն, շա՛տ հեռուն  
Կը պատրոտեր քու թռչտուն սուրբերեղ,  
Ըմբոստությո՛ւն սրբազան:

Եղա՛վ, ո՛վ հուր գեղեցիկ,  
Որ պահ մը դուն հանգեցար...  
Բայց քիչ անդին կը սարսեր  
Վերստին հողը սևցած,  
Եվ դուն, ուժգի՛ն ավելի,  
Կը պոռթկայիր գետնեն դուրս,  
Կարծես գետնին ներքեկն  
Քալած, վազած ըլլայիր,  
Կարծես բոլոր քաջերուն,  
Հերոսներուն, սուրբերուն  
Որ հոն ինկած, թաղված են,  
Աղիքներեն, գանգերեն,  
Մեկեն մյուսին անցնելով,  
Աճած, մեծցա՛ծ ըլլայիր,  
Կարծես ամբողջ նախահարց  
Սիրտը սնունդ քեզ գտնելով վառվեիր,  
Ըմբոստությո՛ւն սրբազան:



Օ՛հ, վերջապե՛ս, վերջապե՛ս...  
Նայե՛, առաու է հիմա  
Ու փոթորիկն ահա դադար է արդեն...  
Մոխրացե՛ր է մեծ գնդանն  
Ու ծրպիտ կա սավառնող  
Մեր աշխարհին ամայությանը վերն՝  
Փոխան լացին գոր շորցուցիր,  
Ըմրոստությո՛ւն սրբազան:

Բայց մեզի պե՛տք ես քուն գեռ  
Դուն մնացի՛ր, բնակե՛  
Մեր մաքերուն մեջ հիմա,  
Ըմրոստությո՛ւն սրբազան,  
Զանոնք տաքցո՛ւր, բորբոքե՛,  
Ըրն՝ հնոց մ՛որուն մեջ  
Մերին ծանգե՛ր հալին,  
Մեր մասնիկները բուր  
Իրար ձուլվին, ամրանան,  
Մետաղն ըլլա կարծր ու ջինջ  
Եվ փայլփայլումն իր երգե՛ փա՛ռքդ հավիտյան,  
Ըմրոստությո՛ւն սրբազան...

### ԳԵՂՈՆ ԶԱՅ ԱՐԲԵ

Մորդ գիրկեն գեռ ետք իջած՝  
Դեռ նոր քաշել կը սարվելք,  
Երբ որ աշխարհ, երբ որ Աստված  
Քու աշքերուդ հետաքրքիր  
Եվ ետքադարդ մտքիդ գիմաց  
Հանեցին ծո՛ւլ, որուն վրա՝  
Կոտրած, կարմիր, մեկ քով ծած,  
Տեսա՛ր օրորոցդ, որ կը լողա...

Մայրդ էր անոր ուժգին կատար  
Եվ անոր հետ կ՛երթա՛ր հետա...

Մայրդդ՝ գեղեցիկ ծայր ունիք,  
Սառած ծայրան հիմարենքու:  
Քայքայիք ամբողջ՝ փնտրալված  
Վարդեր էին ջուրին վրա...  
Եվ հորդդ աչքերն էին գեռ բաց,  
Բայց քեզ չէի՛ն տեսներ հիմա...

Դուն հոն էիր ու չէի՛ր հոն.  
Քեզ իբարու հաջորդաբար  
Կ՛անցնեին սուսերահոն  
Սև ճիվաղներ... Կ՛առաջանար  
Միտքդ ամպի մը ընդմեջեն՝  
Կտրրտրված փայլակներով,  
Եվ կը հալե՛ր մյուտոնդ արդեն՝  
Փոթորիկն մեջ արյունահոգ...

Տարիներ վերջ քեզ ժողվեցին  
Ծիրանաշող այգի մը մեջ...  
Ժանգովըդ նոր, փայլովդ հին,  
Խորաններուն համար անշեջ  
Զեքդ կորսված կտոր սակին՝  
Քեզ ժողվեցի՛ն անկյուններե...  
Մտքիդ հողի կը թափեին  
Ու կ՛աճեի՛ր ամեն բույս:

Հիմա, սակայն, մարդիկ ինչո՞ւ  
Կը նային քեզ ու չե՛ն հիշեր,  
Թե նման շես ուրիշներու,  
Թե աչքերդ են հոգատունեն՝  
Լեցուն անուշ մեռելներով,  
Որ կը շարժին՝ երբ կը տեսնա  
Տղայք՝ իրենց հայրերուն քով  
Ու մոր գիրկեն՝ հրաշքի՛ պես:

Մարդիկ հիմա կը նային քեզ  
Ու կ՛ողտանեն, որ շո՛ւտ մեծնա...

Դեմքդ ու հոգիդ դժոխակեզ՝  
Մարդիկ մոռնա՛լ կ'ուզեն, տղա՛ս...  
Մարդիկ, մարդիկ... բայց անոնց դուն  
Ներե՛ ու միշտ գիտցի՛ր հիմա,  
Քե մենակ չես, թե օրնիրուն  
Կ'ավելնա մեջդ ու կը հուսա  
Քեզ փաթթըված կարոտագին՝  
Մնողներուդ միսն ու հոգին...  
— Դո՛ւն միայն լա՛վ մեծցի՛ր, տղա՛...

### ՈՐԲԵՐՈՒՆ ՁԵՌՔԵՐԸ

Կ'ելլե ճաճանը մը, կա՛րծես, այս անհամար ձեռքերեն,  
Ձեռքե՛ր՝ մեծցած միակնին, ո՛չ շատ, դեռ թույլ, դեռ անմեղ,  
Դեռ ոչ սքի յխառնած կամ շխրզած վատորեն  
Բախտին թելերը՝ ձեռքեր, սիրակարոտ, սիրազե՛ղ...

Ձեռքեր՝ հազիվ թե հիշող շերմությունն հոր մը ափին,  
Որ զույգձ իրենց կը ծածկեր՝ երբ որ թաթիկ էին դեռ...  
Տախտակներու վրա շոր, ձեղուններու տակ ցրտին  
Հիմա սառող քովի քով՝ հայ որբերու ո՛րբ ձեռքեր...

Անոնք երբեմըն հանկարծ կը խըլըրտին գաղտնապես,  
Անոնք բռունցք կ'ըլլան մերթ, կը զարնըվին իրարու,  
Կ'ըլլան զրոշակ, կը բացվի՛ն հաղթանակին վազելու...

Կը խլեն՞ գիրքը անոնք, կատաղորեն, հացի պես.  
Մարդոց ոճիրը զանոնք զերդ մեյ-մեկ սուր է դարբնած.  
Ա՛հ, շրդեզե՛, կարծրացո՛ւր, մեծցուր զանոնք, կա՛րծր

Աստված:

### ՍՓՅՈՒՌՔ

Հանգվածն, ահա, դեռ կ'երերա հեծելով,  
Անտառի պես կամ ծովու,  
Մո՛վ կամ անտառ՝ զոր կը շարժե ո՛չ թե հով,  
Այլ երկրաշարժ մ'ահարկու...

Եվ հնօրյա այս զանգվածեն մարդկային  
Ահա՛ մասեր մի առ մի  
Անվերջորեն կը բաժանվին, կը մեկնին...  
Եվ ան տակավ կը պակսի...

Խլված իրենց արմատներեն ամենքն ալ՝  
Մեր հին, հին ազգը ահա՛,  
Որ չի կրնա՛ր իր հողերուն վրա մնալ,  
Չորնալ ուրիշ տեղ կ'երթա...

Աստված, ես ի՞նչ աղոթք կրնամ ուղղել քեզ,  
Տա՛ս անոնց կյանք մը անվիշտ,  
Հանգչի՛ն, հանգչի՛ն այլևս — թե ոչ վրիժակեզ  
Այրին ու ե՛տ նային միշտ...

### ՓՈՇԻ — ԱԶԳ

Այդքան պզտի՛կ, պզտիկցա՛ծ՝ պե՛տք է որ դուն տակավին  
Քու խարակեղ ընես մեծ, մե՛ծ շարժումներ՝ կարծելով  
Ըլլալ կենտրոնն աշխարհի և կարծելով թե ինքնին  
Կրնաս լնուլ, խափանել, ցամքեցընել ամեն ծով:

Պզտիկ, պզտի՛կ դուն անկյո՛ւն, ո՛չ իսկ անկյուն՝ այլ կետեր  
Ցրված հոս հոն և որոնց գիծերն որմերն են ինկած,  
Պե՛տք է հուսաս տակավին պալատը մեծ՝ զոր կերտեր,  
Կանգնե՛ր էր միտքդ, ավա՛ղ, այդ փոշիով զետնամած:

Ու երբ քու շուրջդ հիմա ամեն հին շենք վար կ'իյնա  
Ու ձև կ'առնեն նոր շենքեր անոնց ինկած տեղին վրա,  
Ինչպե՛ս, փոշի՛, դուն կազմել նման հին շենք մը կուզես:

Մեն մի ցնցում քեզ կրնա անհետացնել վերջապես,  
Աշխարհ չընե՛ր պիտի հոգ. հոգը քեզի՛ է. հուսա՛.  
Դիզվե՛. փոշին լոկ այդպե՛ս պիտի նորեն քար ըլլա...

## ԿԱՄՈՒՐՁ

Մերթ ալ կ'ուզեմ իմ ազգիս  
Միրույն համար ու բարփույն,  
Ընել կամուրջ մը հոգիս,  
Իր անցյալին խորագույն  
Գեպ՝ ապագան սլացիկ  
Կամո՛ւրջ, մ'ուրկն մեր նախնիք  
Եվ մեր աստվածք համբողջն  
Առաջանան ու բանան  
Մութ, անծանոթ, գո՛ց համբան,  
Ցեղը կրկի՛ն հոն երկնեն...

Կ'ուզեմ նետել կամուրջն այգ՝  
Խաղարին մեջ ներկային  
Իբրև երկար ճառագա՛յթ,  
Իբրև թև՝ մը լուսնային,  
Մինչև որ իր ներքենն  
Ընկղմողները ամեն  
Իրենց նայվածքն առնեն վեր  
Եվ իր լույսին մեջ հանկարծ  
Իրենց թևերը տեսած՝  
Ընեն կյանքի՛ շարժումներ...

...կամո՛ւրջն ահա, մութին մեջ,  
Ամբախարհսխ, ապահով...  
Ու կը բալեն անընդմեջ՝  
Կշռված, ծա՛նր բայլերով,  
Մեծ ասվերները բուրբ  
Մեր անցյալին դարավոր...  
Ի՛նչ գիտություն, Աստվա՛ծ իմ,  
Եվ ի՛նչ անհուն գթություն  
Խորը անանց աչքերուն...  
Ի՛նչ կշտամբանք մարտիրոս...

Տեսե՛ք, ահա կը նային  
Ու կը ջանան ելլել վեր՝  
Խաբակներեն ներկային  
Տժգույն ու խոնջ հոգիներ...  
Հրա՛շք, անոնք կը ճանչնան  
Հիմա այն ո՛ւժն անսահման՝  
Որ արյունեն նախահարց,  
Անոնց սրտե՛ն ու մտքե՛ն  
Մեկնած՝ իրենց էր եկած.  
Եվ անոնք լո՛ւրջ են արդեն...

...Ի՛նչ փույթ թե իմ կամ ուրիշի՝  
Պետք է հոգի մը օտկայն,  
Արևաշող, աստղանիշ,  
Որ հոգիին Հայություն  
Ըլլա ճամբա ու ճաճանչ.  
Ըլլա՛ անոր բազմատանջ  
Կյանքին, հույսին ապավեն...  
Ըլլա՛ ամբա՛րն այն՝ որուն  
Մեջ լեցվի հունձքն հայրերուն  
Եվ փրկե՛ ազգը սովեն...

## ԵՐԱՏ

Արաքսն իր պորտը քեզմե կտրած կ'երթա՛, կը վազե՛  
Հայ աշխարհին մեջտեղեն, զայն երգերով կը լնու,  
Ջայն կ'ողողե տուրքերով, մերթ կը գոռա՛ ահարկու  
Եվ մերթ ուրախ ու թեթև կը ցատկե վար ժայռեր...

Բայց դուն, Եփրա՛տ, որ մեր սեպ լեռներուն մեջ կը ծնիս,  
Ջմեզ հանկարծ կը թողուս, և դարձդարձիկ ա երկար  
Կը թափառիս դաշտերու, ավազներո՛ւ մեջ օտար,  
Մինչև որ քեզ փաթթվիլ կուզա թու զույգդ՝ Տիգրիս...

Ո՛չ ծնած տեղդ հիշեցիր, ո՛չ ալ անոր քեզ անվերջ  
Բաշխած մարմինն ու հոգին, երբ հեռավոր վազեցի մեջ  
Ասիր անթիվ Հայեր օտար ու անապարհ՝ ինկղմեցիր...

Գծոխքի գե՛տն եղար դուն, եղար դժո՛խքը դուն բաց,  
Սփրա՛տ՝ անո՛նց որ էին՝ քու պատճառովդ ալ կոշած  
Իրենց երկիրը՝ Երկի՛ր դրախտավայր, սո՛ւրբ երկիր...

### ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Միրտս այս գիշեր կը կանչե իր մեռելները բոլոր...  
Մեռելապահ քնացած, Հիշողութի՛ւն, բահդ առ  
Եվ բա՛ց ամեն դամբաններն: Ես հանդարտ եմ, զորավոր,  
Ու ժանտագույն տեսիլն ալ զիս վախցնել չի կրնար:

Գիտես, չկան ա՛լ հիմա ան հոգիները աղվոր,  
Որ իմ հոգիս էին հոս, և մարմինները պայծառ,  
Որոնց համար կուտայի իմ կյանքս ես՝ օ՛հ, այսօր  
Իրենք իրենց մեջ լուծված, գերեզմանված են իսպառ...

Հիշողութի՛ւն, քեզ ի՞նչ փույթ, եթե զանոնք մի առ մի  
Գիրկս կ'առնեմ այս գիշեր, կը համբուրեմ, կը գգվեմ  
Ու խենթի պես, ուժգնորեն, ես կը սեղմեմ կուրծքիս դեմ:

Հիմա՛ր ծերուկ, դուն կուլաս անոնց շնորհն՝ երբեմնի.  
Ու շես գիտեր՝ թե կուզեմ ես հանձնվիլ այս սոսկման,  
Նախընտրելով զայն վախին ամայության, լռության...

### ԼԵՋՈՒՆ, ՈՐՈՎ ԳՐԵՑԻ

Լեզուն, որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր  
Կը կարդային զայն արդեն ու պակսեցա՛ն անոնք ալ...  
Հարյուր տարի վերջ միայն, իր այս ձևով, այս սխալ  
Կամ ճիշտ ձևով ու հնչմամբ՝ լեզուն անուշ, զոր խոսեր

էին անուշ տղաքներ, գուցե խոսող շունենա,  
Եվ քերթվածները, որոնց մեն մի բառին ու վանկին  
Վրա ես սիրտ հատցուցի՝ գուցե անկյուն մը պառկին,  
Առանց որ մեկը դնե իրենց բուն շեշտն անոնց վրա...

Տե՛ր, ցավ մ'ալ այս է՝ հիմա, ցավերեն ետք անհամար,  
Որոնց մեջեն անցնելով, որոնցմե շիթ մ'առնելով  
Ես կազմեցի այս տաղերն ու հոս դրի քովե քով...

Ձի եթե միշտ և միայն երգած եմ ես ինձ համար,  
Ձիս սփոփած եմ նաև՝ մտածելով թե խոցված  
Հոգիս կրնա իր երգով սփոփե՛լ սիրտը ոմանց...

### ՀՈՒՅՍԵՐ, ՄԵՍ ՀՈՒՅՍԵՐ...

Հույսեր, մեծ հույսե՛ր, մոտեցեք մեզի,  
Թև առած երկնի խորերեն կապույտ,  
Ամենեն խորունկ խորերեն երկնի,  
Ամենեն մաքուր, ամենեն անքույթ...

Հույսեր, մեծ հույսեր, եկե՛ք լեցուցե՛ք  
Մերին նոր լուսող աշխարհը ձեզմով,  
Երգեցեք երգեր հրճվալից ու սեզ,  
Մեր գլխուն վերև դարձեք անվրդով...

Հույսեր, մեծ հույսե՛ր... Բայց լսեցեք մեզ,  
Դուք ուրկե՞ եկաք, ո՛ւր էիք երեկ,  
Երբ մեր ծաղիկներն ինկան տոթակեզ,  
Երբ մենե շատերն մեռա՛ն հոգնաբեկ...

Հույսեր, դուք թեթև, ոսկեթև հույսեր,  
Երգեցեք... Բայց ա՛հ, խնդրեմ, քիչ մը ցած,  
Հոս դեռ սրտեր կան խոցված կարեվեր,  
Հույսեր, դուք կամաց մոտեցեք, կամաց...

### ԱՐԴՅՈՔ ՄՈՒԵՐ Է...

Արդյոք ծոե՛ր է փեթակն ու կը վազե՞ մեղրն արդյոք,  
Եվ շվարած մեղուններն երկար ատեն կամ ընդմիշտ  
Պիտի այլևս չկրնան քնազղումովն իրենց ճիշտ  
Հարդարել տունն ու ծաղկանց վերև կախվել քաղցրահոգ...

Քե ոչ՝ շնորհդ հատուկ առած ես ետ անոնցմն,  
Տե՛ր, ի՞նչ մեղքի համար մեծ, ու չե՛ն այլևս գիտեք  
Գործավորները այդ ժիր, ինչ որ գիտեք ի մեն  
Մեն մի անդամը ցեղին ամբողջ դարեր ու դարեր...

Ձի մեղու շեն, այլ մարդիկ, ու շատ հին ցեղ մըն է ան,  
Ան մեր ցեղն է օժտված տոկունությամբ մ'աննման,  
Որուն ուժերը ու միտքն երակներն են արդ կ'երթան:

Կր հավատամ սակայն, Տեր, որ ցնցումով մը ուժգին  
Պիտի փեթակը իր դիրքն ու ան իր ձիրքը նախկին  
Պտենն դարձյալ ու լույսով իր բջիջները լեցվին:

### ԵՐՐ ՕՐԸ ՓԱ ՎԵՐՋԱՊԵՍ...

Ծրբ օրը գա վերջապես և ըլլա մարդը մարդուն  
Վայելքի մեջ, ի հարկին զրկանքի ալ հավասար,  
Ուղղե միայն բնությա՛ն գոհություն կամ դառնություն,  
Նմանին ո՛չ, հագուրդին կամ նորությունն իր համար...

Երբ ա՛լ շղթան փոխանցման ըլլա ու ո՛չ կաշկանդման,  
Ուժին հետ խելքն ու խելքին հետ վազե սերը նակ՝  
Բալոր ազգերն իրարու զոդող կապին այդ վրան  
Ու կազմե մե՛կ ընտանիք մե՛կ աշխարհին այս վերև...

Ծրբ հիմա մոտ, մոտեցա՛ծ այս Արշալույսը ծագի՝  
Գիտե՛մ ես ծեղ մը ցրված ամբողջ երեսը երկրի,  
Որուն բոլոր դամբաններն ու օրրանները բոլոր

Պիտի հանկարծ արթննան, պիտի գոչեն հրճվանքով,  
Ծրդե երդիկ, փոսե փոս, հայրը՝ որդույն, որդին՝ հոր,  
Քե ա՛լ կրնա՝ մին աճիլ ու մյուսն հանգչիլ ապահով...

### ՄԱՆԵՐԳ ԱՄԱՍՏԱՅԵ

Անոնց համար որ ինկան  
Ձմեզ ազատ ուզելով՝  
Սրտերը մեր քովե քով  
Կ'ըլլան այսօր մեկ խորան:

Անոնց հոգիայն պաշտամունք  
Մեր մեն մի խոհն է հիմա,  
Դեպի անոնց կ'ամբառնա  
Մեր հույսն ու սերն՝ իբրև խունկ:

Եվ մեր ցավի սկիհեն  
Անոնց մարմինն ու արյունն  
Իբր անսահման սրբություն  
Մենք կ'ընդունինք սրբորեն:

### ՀԱՅ ՀՈԳԻԻՆ

Թոթված, ինչպես ցուրտն ու ձմեռն այսօրվան,  
Ես կը խորհիմ առավոտուն այն գարնան՝  
Ուր հին կոճղեն նոր քողորջներ պայթեցան:

Ես կը խորհիմ թոհուրոհին գեանին տակ,  
Որուն մեջն խուժեց ավիրն համարձակ  
Եվ բարձրացավ և սարսուցո՛ւց ծառն համակ:

Ես կը խորհիմ ճնճողկներու ճվոցին,  
Սոխակներու դայլայլիկին ցայգային՝  
Որ անվհատ կոճղին զարթումն ոգեցին:

Հեղեղներո՛ւն, կայծակներո՛ւն անհամար  
Ես կը խորհիմ, որ իր զարթմանը համար  
Արմատներուն քրքրեցին հողը խավար:

Եվ միշտ, և միշտ՝ իր բունին գորշ մոխիրեն  
Հրափայլող այն կայծերուն ծաղկեղեն  
Ես կը խորհիմ որ հոգիս դեռ հույսն են:

Եվ այդ հույսին, այդ հույսին մեջ կը տեսնեմ,  
Բացված բնորո՛ծ օվկիտանին ժառանգեմ,  
Հայ Հոգիին հոգմակո՛ծ ծա՛ղք վանեմ...

Ա.

Ներե՛, որ քեն ըրի քեզի քիչ մը ատեն  
— Մինչև երեկ — ու դեռ տաք շեմ-բուրոսովին...  
Բայց կը խըլե շունչդ ինձմե կայծեր արդեն՝  
Զփայլած հին ու փայլելիք բոցին հաշվին...

Սրտես առաջ միտքս հարեցավ, փարեցավ քեզ...  
Միտքը ունի հիշողութիւն մ'ավելի խոր  
Եվ չէ՛ր կրնար ան շհիշել Սո՛ւրբն ողջակեզ  
Խարոյկին վրա ուրկե Փյունիկ՝ ծնար դուն նոր...

Ու գոհացա՛վ միտքս քեզմով, սփոփվեցա՛վ,  
Ուրախացա՛վ մինչև անգամ. քեզի դիմեց  
Ու կը դիմե հիմա՝ ինչպես գա՛նձի մը մեծ...

Տարբե՛ր ես դուն մեր երազեն, — ավելի՛ լավ.  
Ավելի լավ՝ կ'ըսեմ, այո՛, անզիղջ, անգութ,  
Զի դատակնիքն է շեղածին փա՛ստն ըլլալուդ...

Բ

Հո՛ղ այնտեղ և հողին վրա ցեղ...  
Կը կոխե ցեղը զայն, կը մըխե  
Անոր մեջ կամքն ուժեղ ու անշեղ  
Եվ նորեն կը քաղեմ ուժ անկե...

Հո՛ղ այնտեղ՝ բարեկամ, բարերար.  
Զփախչող ոտքին տակ. վեր բռնող  
Մարդոց մեջքն, ու գլխուն մեջը հար  
Վերածվող ճամբայի լուսաշող...

Հո՛ղ վստահ՝ ուր ամեն մարդ ու կին,  
Այնտեղ նոր աչք բացող մանուկին,  
Այնտեղ նոր բարձրացող հասկերուն,

Նո՛ր շենքին, նո՛ր հենքին, մտքին նո՛ր  
Կը նայի հրճվանքով մը սովոր,  
Կը լեցվի անդորրով մը անհուն...

Գ

Երկիրը հո՛ն իր զավակինն է այլևս...  
Անոր ճակտեն հոսող քրտինքը կ'երթա  
Մեծ հայրերուն մինչև կրծոսկրը թերևս՝  
Հաստատելու իր տանը հիմն անոր վրա...

Ո՛չ ոք այնտեղ ա՛լ իրեն ծուռ կը նայի...  
Ավերակներն անգամ ժպիտ մ'ունին արդ,  
Երբ կը տեսնեն դեմը իրենց՝ ամայի  
Գետնեն ելլող շինութեանց շարքը հպարտ...

Եվ հո՛ղը, հո՛ղն իր գերութիւնն ա՛լ թոթված,  
Իր ընդերքեն ոչ միայն ուժ՝ այլ և խելք  
Կը հայթայթե Հայուն ի մեն մի հարված...

Եվ շղթային՝ Արևմուտքեն Արևելք  
Վերակապվող կյանքի ամո՛ւր շղթային՝  
Կըլլա մեր պինդ ազգը օղա՛կը նախկին...

ՀՈՆ ԶԵՌՈՒՆ, ԱԶԱ

Հոն հեռուն, ահա,  
Մասիսի կողեն  
Քու ազրդ նորեն  
Բխած կը սուրա.  
Քու առուներդ ենք,  
Ո՛վ հորդ Հայութիւն,  
Կ'աճիս, կ'ուռիս դուն  
Եվ կը լեցվինք մենք...

Մեր շուրջն անապատ,  
Մեր դեմն են ժայռեր,  
Բայց հավատքը մեր  
Անապատն ապատ  
Կ'ընեն, կը հարթեն  
Ժայռն աղետալի  
Եվ կը թավալի  
Ջերգ գլան մ'երկաթե...

Մենք քու զավակներդ,  
Սրտով սիրակեզ  
Ահա կուզանք քեզ,  
Հայաստան, որ զերգ  
Մայր մը ճշմարիտ  
Մեզ կը կանչես արդ...

#### ՀԱՅՔԱՅՑԱՆԸ — ՌՌԻՍԱՍՏԱՆԻՆ

(Ազատ քաղաքացիական ֆրանսեզներէց)

Ճշմարտագետ սրբազան Ռուսաստան,  
Դո՛ւ, որ, ինքնամոռի, երազում էիր ստեպաներիդ մեջ  
Քաղաքներ կառուցել և կատաղի կռվում էիր սոսիալներիդ հետ,

Դո՛ւ, որ հերկերի մեջ դատում էիր տաժանքով՝  
Դուրս բերելու համար ամենքին անհրաժեշտ ցորենը,  
Եվ ճակատդ սրբում երկնքի մի պատառով,

Դո՛ւ, որ միևնույն ուժգնությամբ մրճահարեցիր  
Քշեամիներիդ ու հրացայտ հեռոցից դուրս քաշեցիր  
Բե՛ մեռաղը և թե՛ մտածումը:

Դո՛ւ, որ իրեն ընդարձակ պատ՝ նախ խախտվեցիր,  
Եվ հետո, իրեն անսահման անտառ՝ ճամբա ելար  
Շամփրելու հարձակիչներիդ,

Նայի՛ր, ո՛վ Ռուսաստան, զավակներիդ, որ պաշտպանում են  
քեզ,

Այն եզրայրական ազգերի հետ, որոնց դու պաշտպանեցիր,  
Եվ որոնք քեզանով այսօր իրենք իրենց են պաշտպանում...

Նայի՛ր հինավուրց Հայաստանին, որ քո շնորհով  
Վերագտել է իր ուժն ու հանճարը՝  
Մարտերի մեջ, որ քեզ հետ մղում է նա  
Եվ թե՛ մարտերում նայում է քեզ, ո՛վ Ռուսաստան,  
Եվ մտից ու հեռվից ասում՝ շնորհակալութուն:

# ԷՋԵՐ ԱՐՁԱԿԻՑ

## ՄԱՐԲ ՆՈՒՐԹՈՒՆԻ ԱՐԿԱՍԸ

(Հատված վիպակից)

Ա.

Մեպտեմբերի իրիկուն մը, ժամը վեցուկեսին երբ մուժը գեռ թափանցիկ է, Աղեքսանդրիո (Ծգիպտոս) փողոցներուն մեկուն մեջ անցորդները գետինը ինկած մարդ մը կը տեսնեն:

Ծրեսունըհինգ տարեկանի մոտ մեկն է: Մայթին եզերքը, ավելի նստած քան ինկած ըլլալու երևույթն ունի: Գլխարկը սահած է գլուխն և զավազանը՝ ձեռքն: Սրունքին մեկը շեղակի կ'երկարի ասֆալտին վրա, մինչ մյուսը ծալված է անոր տակ: Իրանը դեպի ձախ հակած է, ու մարդը չի շարժիր բնավ:

Անցորդները ցանցառ են այդ ժամուն այդ փողոցին մեջ: Ծրկու հոգի թևերն կը մտնին ու զայն վեր հանել կ'աշխատին: Այն ատեն կը տեսնեն որ դեմքին աջ կողմը վերեն վար ծածկըմած է արյունով. արյունը շիթ շիթ դեռ կը հոսի երեսն, ներկած է օձիքն ու շապիկին կուրծքը և դուրս կ'ելլե բաճկոնակին վարի եզերքն:

Աչքերը գոց են, հայտնի է թե ճիգ մը կ'ընն բայց չի կրնար զանոնք բանալ: Կ'ուզե հաստատ կենալ ու մեկ կողմին վրա կը փլի: Ականջին ձայներ կ'ուզան, հունարեն, արաբերեն, ֆրանսերեն. իր անունը, իր հասցեն, իրեն ինչ պատահած ըլլալը կը հարցնեն: Վիրավորին շրթունքները կը շարժին՝ բայց պատասխանը չի լավիր:

Հիմա քսանի շափ անցորդներ հավաքված են ու յուրաքանչյուրը կ'աշխատի մոտենալ կեղրոնին՝ մարդուն դեմքը տեսնելու համար: Բարձրաձայն կարծիքներ կը փոխանակեն, ոմանք

նստիկանի խոսք կ'ընեն, ուրիշներ դեղարանի, ամպուլանսի, հիվանդանոցի...

— Գեղարան... Կ'ըլլա առաջին բառը՝ որ ցած ձայնով, հանաչանքի մը պես կ'ելլե վիրավորին բերնեն:

Այդ պահուն՝ հաստակազմ իտալացի մը կը միշամտե և կ'ըսե:

— Եվրոպական հիվանդանոցը ավելի մոտ է, հոն տարեքո Մարդը ա՛լ ձայն չի հաներ: Ավելի կրված քան թե քալելով՝ թույլ կուտա որ զինք առաջնորդեն, այդ բանին մեջ տեսակ մը քաղցրություն, հաճույք զգալով նույնիսկ: Անծանոթներ են որ զինք կը հոգան, առանց իր ով ըլլալը գիտնալու, բոլորովին անշահախնդիրորեն: Իր սիրտը ատիկա կ'ըզգա բնազդաբար ու կը տաքնա անկե: Արտևանունքները միշտ գոց են և ատկե զատ՝ չի կրնար գլխու առձեռնափոքր շարժում մը ընել և տեսնել թե ո՞վ են իրեն օգնողները. բայց ինքզինք սիրով հանձնած է անոնց և պիտի ընե ինչ որ անոնք ուզեն...

Այս առաջին զգայութենեն ետքն է, որ կ'ունենա իրեն պատահածին գիտակցությունը: Ո՛ւր է, ինչո՞ւ այլևս տերը չէ իր անձին, ի՞նչ պատահեցավ իրեն... Ու փայլակի մը պես՝ սա՛ հիշատակը կ'անցնի մտքեն, չի գիտեր երբ իրեն պատահած բանի մը:

...Գրասենյակեն ելած էր: Կես-մութ փողոցն, ինքն իր մեջ սուզված, շուրջը շնայելով, տուն կ'երթար, երբ հանկարծ զարավոր ցնցում մը կրելն ու ինքզինք կորսնցնելը մեկ եղավ...: Զգաց, անորոշ գիտակցությամբ մը, թե կը սահեր, կ'երթար անզունդե մ'ի վար, դեպի կատարյալ անէացում, դեպի մահ: Ու կամքի մեքենական ճիգով մը, կարծես իր գոյության բնազդային ըմբոստացումովը, այդ ճամբուն վրա ինքզինք բռնել ուզեց, ավելին՝ իրեն թվեցավ թե միմիայն իր մեջն ծնած ուժով մը, կարծես ներքին զսպանակի ուժով մը, կրցավ դիմադրել ձգողության ուժին և պարապին մեջ զլորած պահուն էր որ լսեց ալնուցին ապակիներուն գետնին վրա կոտրելուն աղմուկը. այդ պահուն, դարձյալ, լավ մը կոթնեցավ գավազանին՝ վար շինալու համար: Հետո նորեն գիտակցությունը անհետացավ, նորեն սուզվեցավ խավարին մեջ, բայց կարծես մնացորդ մը նախապես շարժման մեջ մտած ուժին՝ զինք նորեն ետ բերավ վիհն, նույնպես ալնթարթի մը համար միայն, որուն միջոցին հասկցավ թե



ալ պիտի չկրնար ուտի վրա մնալ և սահելով նստավ գետին, մայթին եզերքը ուր կը գտնվեր... Ու այդպիսի՝ մինչև որ արտանձանոթներուն ձայնը լսեց, անոնց ձեռքերուն իր թևերուն, իր մարմնին վրա հպումը զգաց...

— Լուր տվեք Քաղզեական Քլյուպը... Ես Մարք Յուրթուն կը կոչվիմ...

Ճրաններին արտասանեց այս բառերը, մինչ շատ դժվարով քայլերը կ'առնեի իրեն ընկերացող երկու մարդոց քայլերուն մեջտեղեն: Զարմացավ իր այս խոսքը լսելով: Իրեն թվեցավ թե գազափարը զոր ան կը հայտնեի, չեզոքին վրա եկել էր առանց նախապես մտքին մեջ կազմվելու: Անիկա ծնեի էր իր չկորսվելու ինքնածին պահանջքին, միշտ աշխարհի երեսը մնալու, ծանոթ տեղերու և ծանոթ մարդոց կառչելով իր գոյությունը ստուգապես գիտնալու փափաքին, զման անոր, որ քիչ առաջ զինք երկու անգամ արթնցուցած էր իր ուշաթափումին ասեան...

— Մարք Յուրթուն. հրապարակագիր՞ բը...

Հաստակազմ իտալացին էր, որ կը հարցնեի:

— Այո՞... — եղավ հազիվ լսելի պատասխանը:

Իր անունին ուրիշի մը կողմից իրեն տրվելը՝ իր արվեստին հիշատակումին, օտարի մը կողմից իր ճանչվելուն հայտնություն հետ, նոր առիթ մը եղավ որ վերադառնա երկրի վրա ու վերադրե իր էությունը, գեանդվի իր ընկերային գիտքին, իր անցյալին մեջ... Նոր քաղցրություն մը նստե...

Բայց այսպես մաս առ մաս ինքզինքին տեղ գտնալու աշխատանքին հետ՝ միաժամանակ իր մեջ կը բարձրանար, համբարեն, ուրիշ տարտամ փափաք մը, որուն հղացման անհանգստությունը միայն դեռ կ'զգար, առանց անոր ինչ ըլլալը գիտնալու Մարք Յուրթուն... Ինք Մարք Յուրթունն էր, այս փողոցին մեջ, այս վիճակով, այս օտարներին շոշապատված... Ուզեր էր որ չուր տան իր հայրենակիցներուն, իր բարեկամներուն: Անցորդներին մեկը ճանչցեր էր զինքը: Իր գործին անունը հիշեր էր Եվ անա այս ամենը, իրարու վրա ալիլնալով, սա խոռոչը, սիրահատունը կը դնեին իր մեջ, որուն պատճառը իրեն անծանոթ էր, բայց կ'զգար թե զայն գիտնալը հանելի պիտի չուր իրեն, ու ասոր համար կարծես կը վախճար անկե, կը փափաքեր որ ան չընտրվի նրաք...

Եվ հանկարծ անտավ զայն, հարե՛հի մը ջուլպին զին հաստի

ու անտաք՝ իք ուղեղին առջև, իք նարթեկը պատու, իք անեղ շրջապատող խավարի գեղերուն մեջ:

— Ի՞նչ եղավ ինձի...

Թրկվալիցյան մը կրցավ դեռ ինքզինքը բռնել, ուղեղը սեղմել և թույլ լտալ որ խորհի: Բայց այս միջը անսահման հալնություն մը պատճառեց: Թուլցավ, ու պատասխանը, այսոք ու զոզացող միանգամայն, կարմիր շանթի մը նման ժայթքեց հորիզոնի մը:

Զիս զարկին...

Յյո, զարկին... Կը հիշեր թե հաջորդ օրվան թերթին համար իր հոդվածը գրելի վերջ, դուրս ելած էր խմբագրատանն և կ'ուղղվեր Քլյուպ՝ ճամբան մտածելով... Ինչի՞ մտածելով, ա՛հ, այո՞... մտածելով հակառակորդներու ծրագրած մեկ ձեռնարկին՝ զոր նույն օրը առտուն կարդացեր էր նամակի մը մեջ և անոր հանդեպ իր բռնելիք դիրքը որոշելը վերապահեր էր վերջի... Եվ ճիշտ այն պահուն որ գաղափար մը կ'որոճար, հանկարծ անիկա ընդհատվեր էր ուղեղին մեջ, կարծես կիսվեր, դանակով մը կտրվեր էր, ինքը գահավիժվեր էր մութին մեջ, տկարացեր, գետին ինկեր էր, որովհետև մեկը, որ անշուշտ կը հետևեր իրեն, անձայն անշուշտ իրեն մոտեցեր էր ու առանց նույնիսկ իք շաքժամին հովը զգալի ընելու՝ հավանորեն «ամերիկյան պարս»-ով կամ ուրիշ երկաթով մը ետեեն զարկեր էր ջունքին...

Մարք Յուրթուն պետք չզգաց ինքզինքին հարցնելու թե ո՞վ կրնար ըլլալ զարե՞ղը և ինչու՞ զարկեր էր: Ինչ հարկ գիտնալու, կամ միթե չէ՞ր գիտեր արդեն: Եվ անմիջապես որ հասկցավ իրեն պատահածը, համակերպեցավ անոր: Ո՛չ մեկ զայրույթ, ո՛չ մեկ բողոք ներսդին՝ իր վրա գործադրված այս ոճրափոքրին դեմ: Իրավ է թե երբեք լրջորեն մտածած չէր անոր կատարելությունը, բայց ըլլալին ետք զայն կ'ընդուներ հիմա, բույն հանկարծակի համոզված անոր ճակատագրակառնությունը, կամ բույն շատ տկար՝ զայրանալ կարծնալու համար...

Ճիվանդանոցին դուռը գոցված է այդ ժամուն, ու զարե՞նով զայն բանալ կուտան: Մարք Յուրթուն կ'նոջ ձայնեք կը լսե, մարտապետներու՝ որոնք իրեն ընդառաջ կուգան, թևերն կը բռնեն և հիվանդանոցին բակին մեջ տոճամապես զինք կը նըստեցնեն և քիտի մը վրա: Հետո ամանով ջուր կը բերեն և սպուն-

գով մը իր դեմքը կը լվան՝ մեծ փափկությամբ: «Օ՛հ, խեղճը, խեղճը» կը բացականչեն երբեմն, ու կը հայտնեն թե հեռաձայնով արդեն լուր տված են հիվանդանոցի ակնարկովին:

Արար ծառաներ, վերակացու մոր հրամանին վրա, կը գրկեն Մարքի նստած աթոռը, կ'անցնին բակեն և անվերջանալի սանդուղներե վեր կ'ելլեն, կը հանեն զինքն ալ միասին: Ոչինչ կը տեսնեն անցած տեղերեն, գուցե մութ ըլլալուն, գուցե աչքերը չկրնալ բանալու համար: Կը խորհի միայն թե սետիայով ճամբարդելու վրա է՝ ինչպես հին ժամանակ հարուստները:

Հանված և ինքզինք մահճակալի մը վրա պառկած կը գըտնեն: Ճրագ մը կա սենյակին մեջ, որուն լույսը կոպերուն թազանթեն ներս կը մաղվի ու ինք չի գիտեր թե որ կողմեն կու գա այդ լույսը: Թաղիքե մուճակներ հագած մայրապետները անշշուկ կը մտնեն կ'ելլեն սենյակեն: Անօրինակ խաղաղություն մը կա հոգ: Վարեն, փողոցեն բարձրացող ցանցառ ու հատկոյալ աղմուկները ավելի ես կը շեշտեն այդ խաղաղությունը: Ան կը բխի կարծես հիվանդանոցին մեջ անհայտ կեդրոնե մը, քալարիֆեռի մը արտաշնչության նման, և կը տարածվի նրբանցքներուն մեջ, կը բարձրանա սանդուղներեն և բոլոր սենյակները կը լեցնեն: Վախկոտ և դյուրաբեկ խաղաղություն մըն է, խեղճված ձայներ և սառած շարժումներ կազմված, իրերու երեսը բռնած բարակ խավ մը որուն ներքև հեծություններ կան ու գալարումներ, որ ամենափոքր ձայներուն արձագանք կուտա և աղաղակներու, ահազանգերու պես կը մեծցնեն, կ'ընդլայնեն զանոնք... Այդ խաղաղությունն է, որ կը մտնեն Մարք Ծուրթունի հոգիեն ներս և զայն անշարժ ու լուռ կը պահեն՝ զինք շրջապատող արվեստական մութին, իր հոգնության, իր տկարության մեջ:

Որևէ ցավ չի զգար: Անձնատուր եղած է մեծ հոգնության մը, որ թմրեցուցած է իր զգայարանները: Բայց եթե չի բարկանար և չի հուզվիր զինք վիրավորող հարվածին համար, պատճառը այն չէ միայն որ չի կրնար, այլ նաև այն որ չուզեր: Անարդար արարքին մտածումը մերթ ընդ մերթ կ'անցնի իր ուղեղեն, բայց ինք չի կեցներ զայն, ընդհակառակն կը վանեն, գիտնալով նախ թե իրեն համար շափազանց վտանգավոր պիտի ըլլա իր հանդարտությունը կորսնցնել, և հետո, ըսելով ինքնիրեն թե սխալի գոհն է ինք, կարելի չէ սխալին համար բարկանալ...

— Բժիշկը եկած է, պարոն, գործողության սրահը պիտի տանենք ձեզ...

Չեն քալեցներ, ոչ իսկ թևերին մտնելով, կը նստեցնեն անվավոր աթոռի մը վրա և քշելով կ'անցնեն նրբանցքեն որուն մյուս ծայրը կը գտնվի սրահը: Այդ նրբանցքը անվերջանալի երկարություն մը ունենալ կը թվի իրեն և քարահատակին վրա աթոռակառքին փոքրիկ անիվներուն թավալուն ճոնչուներ գեշ կ'ընեն իր ուղեղը:

Իր կառքը գործողության սրահին դուռնեն ալ ներս կը մտնեն՝ բախվելով անոր եզերքին: Հետո զինք կը վերցնեն ու կը նստեցնեն թիկնաթոռի մը վրա՝ որուն հպումը իրեն կը հիշեցնեն սափրիչին կամ ատամնաբույժին թիկնաթոռը: Բժիշկը, զոր չի տեսներ, ոչ մեկ բառ կ'ուղղե իրեն, միայն կարճ հրամաններ՝ իր օգնական «քույր»-երուն: Եվ ահա հանկարծ՝ անախորժ հոտ մը և աչքին մեջ կուրացուցիչ լույս մը... Հետո ոչինչ, քայլափոխի հեռավոր աղմուկներե զատ, մինչև որ նորեն կը լսե իր ոսկորներովը կարծես շինված անիվներու ճոխչը մարմնույն մեջ, այս անգամ ավելի նվազ սակայն՝ կարծես ոսկորներն ավելի մաշած ու տանջված ըլլային, և կ'ըզգա թավալաթոռին կանգ առնիլն ու իր անկողին դրվիլը անսահման զգուշավորությամբ մը, զրկված, և իր գլխուն բարձերու բուրգի մը վրա տեղավորվիլը...

— Ի՞նչպես եք, բան մը կ'զգա՞ք հիմա, կը հարցնեն կանացի ձայն մը:

— Բնավ ցավ չունիմ, միայն քիչ մը տկարություն կ'զգամ և սիրտխառնուքի պես բան մը:

— Քլորոֆորմին ազդեցությունն է. մեկ-երկու ժամեն կ'անցնի, միայն պետք է միշտ այդպես հանդարտ կենաք, բուռն շարժումներ չընեք, նույնիսկ ուժով չհազաք և չփռնգնաք, ապա թե ոչ արյունահոսություն տեղի կ'ունենա... Գիտե՞ք որ գեշ կերպով խոշտանգեր են ձեր աչքը:

— Տեսողությանը համար վտանգ մը կա՞ արդյոք:

— Բժիշկը ապակիի քանի մը կտորներ հանեց՝ որոնք թազանթին մեջ խրված էին:

— Ես բան մը չզգացի:

— Որովհետև քնած էիք:

— Հետո՞:

— Բժիշկը կ'ըսե թե ապակիի հտորները ծիածանին դպած չեն, անոնց գոյացուցած վերքերին վտանգ չի նախատեսեր. միայն ներքին արյունահոսութենն կը վախնա որ եթե մինչև քսանչորս ժամ տեղի չունենա, վտանգը անցուցած կ'ըլլար:

— Ենթահակալ եմ, մա սեռո, ձեր հոգնություններուն համար, իրիկունով բավական տակնուվրայություն բերի ձեր հիփանդանոցին մեջ...

Ու քիչ մը կենալի ետք, ինքզինքին վրա շտորհելու ճիգով մը, զոր թեթևանելու կ'օգնե իր խոսակից մայրապետին անտես անձնավորությունը, վիրավորը կ'սե.

— Ինչպե՞ս կը կոչվիք, մա սեռո:

— Սեռո էմըլին, — կ'ըլլա պատասխանը, քիչ մը առջևն ձայնեն կարծես տարրեր ձայնով մը, որուն մեջ Մարք թեթև վարանում մը նշմարել կը կարծե, իբրև թե զգար՝ գթության բարի քարեկը, որ այդ անմեղ հարցումը իր հոգիին գաղտնիքին թափանցելու առաջին փորձ մըն է անծանոթի մը կողմն և ատով ան ավելի կը մոտենա իրեն՝ քան քիչ առաջ երբ ամբողջ մարմինը թողած էր իր մարմինին վրա... Ու Մարք գույն մը կուտա այդ ձայնին, վարդազույն ձայն մը, զուցե երևակայելով միածամանակ թեթևորեն շիկնած այտեր այդ ձայնին արտաբերումին հետ... Եվ այդ շորս վանկերը, «Սեռո էմըլին», արտասանող ձայնը, իր խրտչոտ վարանքին մեջ ավելի թարմ ու քաղցր կը թվի իրեն՝ քան առաջ, մյուս խոսակցության մեջ:

Այսուհանդերձ, ան կ'ուզե իր կրած այդ տպավորությունն ալ ցրվիլ և կատակի շեշտով մը՝ որ միևնույն ատեն քույր էմըլին վրդովումը անհետացնելու կը ձգտի, կ'ըսե.

— Ծաշի սովորական ժամանակս անցավ այս գիշեր, ախորժակս կորսնցուցած չեմ. ի՞նչ լավ բաներ պիտի տաք ինձի որ օտեմ:

— Այս գիշեր շատ թեթև պիտի ուտեք. արգանակ, հավկիթ մը և քիչ մը քոմբոթ, բայց նախ քլորոֆորմին ազդեցությունը պետք է անցնի, որպեսզի սիրտերնիդ շխտնըվցնե և փոխել շտա...

— Ըրեք ինչպես որ կ'ուզեք, սեռո էմըլին...

Արտասանելով այն վերջին բառերը, Մարք, որուն երկու աչքերն ալ թանձր վիրակապերու ներքև ծածկված են, արտևանունքը գոցելու պատրանքը կ'ունենա, այնքան մեծ ու նույն

ատեն անուշ համարձակություն մը ըրած ըլլալը կը կարծե...

Բայց նրբանցքին մեջ բազմաթիվ ոտնաձայներ կը լսե, սրունք երթալով կը մոտենան ու այժմ իրենց ազմուկը մեղմած, կը հառաչանան սենյակին քարահատակին վրա:

— Պարոն, կ'ըսե «սեռո էմըլին», որ մեկնելու վրա էր ու դուռնն ետ կը դառնա, ձեր հայրենակիցներն են, որոնց լուր դրկված էր Քլուպ, բայց շատ մի հոգնիք.

— Թող գան...

Բ.

Երբ այցելունները մեկնեցան՝ Մարք պահ մը առանձին մնաց իր մթության և սենյակին լուսնանը հետ: Հիմա ինքզինք շատ ավելի տկար կ'զգար: Գլուխը, զոր անկողնին մեջ նստած կոթընցուցեր էր բարձերուն, դեպի մեկ կողմ սահեցավ, և ակամա հառաչ մը թռավ բերնեն:

Իր բարեկամ հայրենակիցները այնքան հուզում ու զայբույթ հայտներ էին այս հարձակման համար՝ որ Մարք առաջին անգամ ըլլալով կ'սկսեր իր վիճակին մտահոգությունն ունենալ:

Միևնույն ատեն, ան քնանալ կուզեր: Քունը անսահման պահանջ մը, կարծես անթություն մը կը բարձրանար իրմե, այնքան զորավոր, որ կը մոռցներ իր մյուս անթությունն անգամ: Գիտակցությունը իր մեջ կը դողար ու կը հեար — ինչպե՞ս այդ պահուն երեցավ պատկերներով վարժված իր մտքին — ամառվան տաք օր մը որսն դարձած երեի մը նման: Պիտի քնանար, բայց շատ մը բառեր, իր իսկ լեզվով բարձրաձայն ըսված, գեռ կը լեցնենին սենյակը, գեռ կը խժային ականջին մեջ և կ'ստիպեին զինքը որ խորհի եղածին, անոր պատճառին և արդյունքին վրա: Եվ Մարք կը խորհեր, թույլ, դանդաղ, բայց անողոք կերպով...

Եկողները վեց հոգի էին, իրենց ձայներն ճանչցեր էր զանոնք, ամենքն ալ գաղափարակիցներ ու բարեկամներ իրեն:

Մեկը, Միլ Մատա, քաղզեակն դատին ստեղծիչներն էր: Հակառակ հիմա հիսունը անցած և բանտ ու աքսոր տեսած ըլլալուն, ոգևորությամբ և զվարթությամբ լեցուն մարդ մըն էր քն, նոր աշխատանքի ու նոր զոհողությանց պատրաստ: Լավ կաճավորված և լավ հարդարված միտք մըն էր նաև արևելյան

և արևմտյան բազմաթիվ լեզուներու տեղյակ, որ անոնցմով շատ բան կարողացած և սերտած էր, լրջորեն, իր ժանոթությունները ավելցնելու և համոզումները հաստատելու համար, բաճի պահած էր շես գիտեր ինչ խորք մը մանկականության, անշուշտ ազբյուրը իր խորհուրդի և զգացումի մշտական թարմության: Մարք կը սիրեր զայն, ինչպես ոչ մեկը իր ընկերներեն, թեև երբեմն կը դատեր զայն և շփազանց կը գտներ անոր թեթևասրտությունը՝ իրենց ցեղին ապրած տազնապներուն մեջ. ավելի հաճախ իր վհատությունը կը կազդուրվեր Մատայի անայլայլ լավատեսութենեն, որ եթե միշտ չէր համոզեր զինք, միշտ կը խրախուսեր, անոր օրինակովը հարատեկելու և հուսալու, որքան ալ քիչ ըլլային այդ պահուն հույսի պատճառները: Մատա տասնյակ տարիներն ի վեր ֆրանսերենի ուսուցիչ էր Ալեքսանդրիո կառավարական վարժարաններուն մեջ:

Մյուսը ժան Լյուք կը կոչվեր և Միր Մատայի տարեկից էր գրեթե: Ինք ալ առաջին ժամու գործավորներեն եղած էր ազգային ազատագրության դատին և տարիներն ի վեր որ հեռացած էր հայրենիքեն՝ միշտ կը մնար պատենելին վրա, ինչպես սովորություն էր ըսել և գրել իր վրա խոսված ատեն: Կարճահասակ, սուր նայվածքով և սուր մորուքով մարդ մը, որ դիվանագիտության կը հավատար և ատոր համար ալ ձիբքեր ուներ, մինչդեռ Մատա գործի ջատագով էր և այս պատճառով երբեմն բուն վեճեր և մինչև իսկ խզումներ տեղի ունեցած էին Լյուքի և անոր միջև:

Նորորդը Մարքի հնագույն բարեկամն էր, Պեն Սուր, իր քաղաքացին և դպրոցակիցը, որուն հետ քանի մը տարի Բարիզ և Փրնև ալ գտնված էին միասին, առանց սակայն գոնե տարի մը շարունակաբար իրարու բարեկամ մնալու: Պեն լավ գրող և լավ խոսող էր, որ իր գործունեության ուղղությունը կ'ստանար երկու բանն, նախ կյանքը վայելելու համար իր ունեցած իրավունքի համոզումեն, որ ուրիշներու հարաբերական հանգիստն իսկ իրեն շատ գտնել կուտար և զինք ատելությամբ կը լեցնեի անոնց գեմ՝ երբ մանավանդ քիչ մը ավելի նեղված ըլլար ինք այդ պահուն, և երկրորդը՝ իր ձայնին և նախադասության հմայքեն, որ թե կը համոզեր զինք — ինչպես մտիկ ընողներեն կամ ընթերցողներեն շատերն ալ այդ վայրկյանին — և թե ավելի հեռուն կը տաներ զինքը, քան ուր որ պիտի ուզեր կանգ առնել, և զոր

վերջեն, շատ վերջը, կը խոստովաներ երբեմն: Պեն Սուր նոր վերադարձած էր Եգիպտոս և Մարքի հետ իր առաջին հանդիպումը, երկար խզումն մը ետքը, եղած էր երկուստեք սիրազեղ և անկեղծ, հին հիշատակներու խուժումով մը որ ամեն դառնություն անհետացուցեր և զանոնք իսկույն միացուցեր էր նորեն, թեև երկուքն ալ գիտեին որ թեթև հով մը կրնար վերստին զիրենք հեռացնել իրարմե:

Մյուսները բազդատարար նոր բարեկամներ էին Մարքի համար: Մին՝ առևտրական տան մը գլխավոր պաշտոնյան էր, բարի և կրքոտ, միանգամայն շատ ճարպիկ, որուն ամբողջ փառասիրությունն էր այնքան դրամ շահիլ, որ օր մը կարենար ազգային դատին համար առատորեն ծախսել, ամչցնելով այդպես այն եգիպտաբնակ քաղղեացի հարուստները, որոնք այդ մասին շփազանց անտարբեր կամ ժլատ կը գտնվեին Միք Ալթունի կարծիքով... Հինգերորդը երիտասարդ բանաստեղծ մըն էր, շափազանց տզեղ և միշտ աղտոտ հագված, որ գեղեցկություն, սրբություն և մաքրություն կը հառաչեր իր քերթվածներուն մեջ և իրապես ալ անաղարտ հոգի մը ուներ: Սերկիսի համար նույնքան նվիրական էր հեռուն թաղված հայրենիքին և հոս նշմարված աղբիկներու սերը, որոնց կ'ուղղեր, հաճախ միևնույն ոտանավորին մեջ, իր օանձակոծ երևակայության կոշիքը... Իսկ վերջինը, Ճապր Անի, ուսանող մըն էր, աղջկան մը պես ամաշկոտ, որուն գրական առաջին փորձերը քաջալերած էր Մարք և որ անսահման հիացում, մոլեռանդության հասնող պաշտում մը ուներ իրեն համար: Այդ մասին բուն վիճաբանություններ մղեր էր իր ընկերներուն հետ, որոնք կը ծաղրեին զինքը: Անգամ մը, այդպիսի միջադեպի մը լուրը հասեր էր Մարքի, որ ատոր վրա ուզեր էր հանգիմանել Ճապրը: Պատանին չէր պատասխաներ, միայն սաստիկ կարմրեր էր և հանկարծ հայտնություն ունենալով տարօրինակ քաղցրությամբ զգացումի մը, բարեկամության և սիրո մեջտեղ, որ ահա զինքն ալ կը հուզեր.

— Դո՛ւն ես, Ճապր... հարցուցեր էր Մարք քիչ առաջ, զախ ճանչնալով ձեռքին հպումեն, որովհետև կապված էին իր աչքերը:

— Ես եմ, վարպետ, պատասխանած էր ձայնով մը որ կը թրթար հուզումեն և զայրույթեն, որ մինչև մեկնումը այլևս ոչ մեկ բան չէր արտասանած...

Այսպես կես-քուն, կես-արթուն, Մարք անկողնին մեջ բն-  
կողմանած, կը վերհիշեր իր բարեկամներուն խոսքերը: Միր Մա-  
տա, հրաժեշտի վայրկյանին ուժգնորեն սեղմելով իր ձեռքը,  
բսկեր էր.

— Քաշություն, Մարք, հայրենիքը քեզի պետք ունի...

Այս վերհիշումը սրտի կծկում մը պատճառեց հիվանդին և  
դառը ժպիտ մը բերավ անոր շրթներուն վրա: Հայրենի՛քը, հայ-  
րենի՛քը... Ան իր երիտասարդությանը առնելի ետք՝ հիմա ալ  
կ'ուզեր սպաննել զինքը... Ո՛չ, Հայրենիքը պատասխանատու  
չէր իր վրա գործված ոճիրներին համար, և եթէ ըլլար իսկ՝ չէ՞  
որ չգիտնալով էր... Հանցանքը իրն էր թերևս, որ բավական  
նկատի շաննելով անոր ցավի ալարումները՝ զայն ցնցել ուզեր  
էր քիչ մը խիստ կերպով և ենթարկվեր էր անոր հարվածին...  
Պետք էր մտածել այս մասին, վերջին, երբ աղեկնար, երբ վե-  
րստին գործի լծվեր... Այսօր չէր կրնար այդ նյութին վրա  
ասկե ավելի խորհել, հոգնությունը կ'ընկճեր զինք ու կ'ուզեր  
քնանալ, քնանալ...

Այդ միջոցին սպասավոր մը իր ճաշը բերավ, որուն հազիվ  
կեսը կրցավ ուտել Մարք, հակառակ իր ունեցած մեծ անոթու-  
թյան, զոր շփոթած էր իր սրտի հեքին հետ:

Եվ հազիվ ճաշը ավարտած՝ քնացավ մինչև առավոտ, բավա-  
կան հանդարտ քունով մը...

## Գ.

Երբ առավոտ արթնցավ, ննջասենյակին բաց դուռենն՝ անոր  
առջև բարձրաձայն խոսող և պոռացող տղոց աղմուկ մը լսեց,  
որուն մեջ կը հնչէին խալիերենը, ֆրանսերենն ու արաբերենը՝  
կրթման միկենույն շեշտով: Քիչ վերջը, տղոցմէ մին, սենյակեն  
ներս մտած ըլլալու էր, որովհետև Մարք առանձին ըլլալու զգա-  
լությունն ունեցավ և վիրակապը ձախ աչքին կողմեն մեղմիվ  
տեղափոխելով և գլուխը ուսերուն վրա շրջելով, կրցավ տեսնել  
իրմէ քանի մը քայլ հեռու կեցած 12—13 տարեկան, կարճ տա-  
բատով և նույնպես աչքին մեկը կապված տղեկ մը որ հետա-  
քրքրությամբ զինքը կը դիտեր: «Հոս եկուր» ըսավ Մարք: Պըզ-  
տիկը մոտեցավ, միակ աչքին նայվածքը միշտ իր վրա սեռւած,  
տղոց համար անսովոր նայվածքով մը որուն մեջ հեռաքրքրու-

թենե ավելի հասկացություն և հասկացողության հետ կարեկ-  
ցություն կար: Ահ, ան կը հասկնար թե ինչ է աչքի փակումին  
զրկանքը և այդ պատճառով զինքը կը դիտեր այնպես մը՝ որ  
կարծես մեծը ինքն ու այս պատկած մարդը իր կրտսերն ըլլար:  
Այնքան ճիշտ է, որ ցավերու փորձառությամբը միայն կը մեծ-  
նանք.

— Անունդ ի՞նչ է, պզտիկս... հարցուց Մարք:

— Ֆրենչեսքո, եղավ պատասխանը համարձակ և հնչել:

Կը թվի թե դրան ետև ուրիշ տղաքներ կեցած կը նային և  
կ'սպասեն Ֆրանչեսքոյի հանդնության արդյունքին, որովհետև  
Մարք զգաց քիչ առ քիչ ուրիշներու ալ հառաչանալը, և քիչ մը ևս  
գլուխը վեր առնելով տեսավ որ առաջինին տարեկից, անկե քիչ  
մը պզտիկ և քիչ մը մեծ՝ հինգ-վեց տղաք հավաքված էին իր  
շուրջը... Ոմանց մեկ և ուրիշներու երկու աչքն ալ կապված էր,  
թեթե կապով մը սակայն, որպեսզի կարենային իրենց ճամբան  
տեսնել... Կար մեկը, որուն ակնապիճին վրա բամբակի խոշոր  
կտոր մը դրված էր՝ բարակ երեզով մը բռնված... Ամենքին ալ  
մեյ-մեկ խոսք ուղղեց Մարք, տեղեկացավ թե իր ննջասենյակին  
գեմը, մանուկներու սրահին մեջ կը դարմանվեն անոնք, թե  
բացի մեկեն՝ որ արկածի մը հանդիպած էր, մյուսները կը տա-  
ռապեին Եգիպտոսի մեջ հաճախողեալ աչքի հիվանդութեններե,  
թե մին ձախը կորսնցուցած էր արդեն և բժիշկը կաշխատեր աչք  
փրկել հիմա, թե ուրիշի մը երկու աչքերն ալ վարակված էին,  
ոմանք երկու-երեք ամիսե ի վեր հոս էին արդեն և ուրիշներ  
նոր եկած, բայց ամենքն ալ գիտեն թե երկար, ցավագին դար-  
մանի մը կը կարոտին ու կրնան կատարելապես չըուժվիլ ալ:  
Կ'ըսեն թե ուրիշ բազմաթիվ տղեկներ ու շափահասաներ ամեն  
առավոտ հոս կուզան բժշկին այցելության պահուն և իրենց  
կաթիլն ստանալով կը մեկնին, մինչդեռ իրենք հիվանդանոցը  
կը մնան պզտիկ վճարումի մը փոխարեն կամ ձրի, որովհետև  
իրենց պարագան ծանր է և օրական քանի մը անգամ ակնա-  
ցավի մասնավոր հիվանդապահուիին, սեռ իմըլիին խնամքն  
ալ կը վայելեն... Ասիկա կ'ըսեն կարծես հպարտությամբ մը,  
ուրիշներու վրա գերազանցություն ունեցողի տղայական հպար-  
տությամբը, և Մարք նշմարել կարծեց որ սեռ իմըլիին անունը  
կ'ելլեր անոնց շրթերեն տեսակ մը լրջությամբ, որուն մեջ թե

հանդուրժված ցավերու հիշատակը կար, թե երախտագիտութուն, ու կար միևնույն ատեն սեփականության զգացումին նըմանող զգացում մը, իբրև թե սեռու էմըլիւնը իրենցը համարեին, քիչ մը այնպես՝ ինչպես յուրաքանչյուրին համար իրն են տունը ուր կը բնակի, դպրոցը ուր կ'երթա, ընտանիքը որ իր շուրջը կը դառնա:

Ահա սեռու էմըլիւնն ալ, որ կ'անցնի, և տեսնելով Մարքի սենյակին մեջ հավաքված տղոց բազմութունը՝ զանոնք մեղմիվ կը կշտամբե ու դուրս կը հանե: Հետո կը մոտենա հիվանդին, ըսելով.

— Գիտե՞ք, այս պզտիկներուն երես տալու շարք, շափազանց անտուակ են, վերջեն ձեզ անհանգիստ պիտի ընեն:

— Օ՛հ, խեղճե՛րը... Իրա՞վ է թե անոնց մեջ կան որ աշգերնին բուրբոնովին կորսնցնելու վտանգին մեջ կը գտնվին:

— Մեկը, այո՛... Իսկ դուք, ինչպե՞ս եք. լավ գիշեր մը անցուցի՞ք:

— Շնորհակալ եմ, շատ լավ, մա սեռու, շատ լավ...

Եվ Մարք փափաք կ'ունենա գլուխը վեր առնելու ու վիրակապին տակեն նայելու սեռու էմըլիւնին, ինչպես ըրած էր քիչ առաջ տղաքը դիտելու համար:

Գթութիան քույրը կը նշմարե անոր այս շարժումը, ոչ բավական արագ սակայն՝ որովհետև Մարք հաջողած է ակնթարթի մը մեջ անոր հասակն ու դեմքը տեսնել, մինչդեռ սեռու էմըլիւն կ'ըսե.

— Վիրակապնիդ խախտե՞ր եք, թույլ տվեք որ շտկեմ... հետո բարձերը. քիչ մը շարժեցեք, այսպես... հիմա ավելի հանգիստ եք, չէ՞... Իսկ իբրև նախաճաշ, ձեզի կաթ պիտի բերեն քիչ վերջը... Բժիշկն ալ կես ժամեն այտեղ կ'ըլլա:

— Ձեր ակնաբույժը ամե՞ն օր կուգա:

— Ոչ, ձեզի համար պիտի գա այսօր...

Ու երիտասարդ մայրապետը կը մեկնի այնպես ինչպես եկած էր, թաղիքն մուճակներուն անձայն քայլափոխերովը և հազիվ շրջազգեստին թեթև շլուռնեն իր շարժումն զգալի ընելով...

Մարք կը ջանա վերստեղծել իր տեսած երևույթը իբրև լույսի կետ մը գինք համակող խավարին մեջ...

Լույսը՝ անոր սպիտակ գլխանոցն է նախ, իր օսլայած և

վեր դարձած լայն եզերքներովը, որոնք թուշունի մը թևերուն պես համաշափորեն կը թրթռան ամենափոքր շարժումն մը և նման են, իբրք, ծովուն վրա իջած մեծ ճերմակ տարմահավի մը, կյանքի ալիքներուն վրա օրորվող և իր ներկայութամբը զանոնք կարծես խաղաղեցնող թևաբաց տարմահավ մը... Հետո լույսը անոր սպիտակ կրծկալին է, որ բավական լեցուն երեցող լանջք մը կ'անհետացնե ամբողջովին, ինչպես նաև անոր անարյուն դեմքեն և բաց կապույտ աչքերեն, որոնց նայվածքը ավելի գուռահած քան տեսած է Մարք իր երկվայրկյանի մը մեջ կատարած միակողմանի քննության պահուն...

Ոչ, գեղեցիկ չէ սեռու էմըլիւն, ան կը նմանի բուրբոն մայրապետներուն որոնց հանդիպած է դուրսը և որոնք ամենքն ալ այնքան նման են արդեն իրարու... Իրեն կը թվի թե հակասութուն կա անոր դեմքին ու ձայնին արտահայտություններուն մեջ, ու մինչդեռ ձայնը, երեկ գիշեր և այս առտու, այնքան փափուկ էր ու կարծես զեղուն գորովով, հոգնածութամբ, դեմքը առավելապես անտարբերություն կը հայտնե, այն անտարբերությունը կյանքի բացառիկ երևույթները դիտելու վարժութենեն կը ծնի և հատուկ է բժշկին, ոստիկանին ու դատավորին դիմագծություններուն: Մարք կը նեղվեր այս հակասութենեն, այնքան որ պահ մը վերջը ուզեց մոռնալ զինք խնամող «քրոջ» պատկերը, միմիայն անոր ձայնը հիշելու համար...

Եվ օրը սահեցավ ակնաբույժին այցելութամբը, որ փորձեց հույս ներշնչել որ վախցուցած արկածը պիտի չպատահի, և այցելութամբը բազմաթիվ բարեկամներու ինչպես անձանթներու ալ, որոնք հետզհետե եկան ցավ և համակրություն հայտնելու իրեն, իր հակառակորդները դատապարտելով և զինքը դրվատելով: Անոնցմե մեկը ըսավ.

— Համարեցեք թե դուք ալ մեծ պատերազմին մեջ կը կրուվիք միայն մեկ աչքերնիդ վրա տալով ազատեցար:

— Բայց պատերազմի մեջ չէի, պատասխանեց Մարք տրևությունամբ, և առանց այդ ենթադրության ալ կրնամ ինքզինքս մխիթարել՝ եթե պետք զգամ:

Երբ, օրվան հեղձուցիչ տաքեն վերջ, ննջասենյակին բաց պատահանեն թեթև զովություն մը ներս սպրդեցավ, ու միաժամանակ զգաց որ փողոցին մեջ ազմուկը կը նվազեր, Մարք հաս-

կըցցավ որ գիշեր եղած է ու պատրաստվեցավ պահելով մը քնանալու, զո՛հ որ այս առաջին օրը անցած է և ինք, բացի իր մեծ հոգեմտութենեն որ պինքը անկարող կ'ընեն ոտքի ելլելու, ուրիշ ցավ մը չէ ունեցած...

Քունը կոխելու վրա էր, նույնիսկ թեթև մը կը մրափեր երբ հանկարծ արթնցավ՝ աչքին թե զլխուն մեջ մտած ցավի մը որ կ'անհետանար և կը վերադառնար, ներսն դուրս արժամ հարվածի մը պես: Աշխատեցավ մոռնալ զայն ու քնանալ վերստին, հուսալով որ քունին մեջ արդեն կ'անցնի ցավը: Բայց հարվածները աստիճանաբար կը սաստկանային ու Մարք կ'զգար որ ամբողջ գլուխը հեռո՛հեռու կը սեղմվեր երկաթյա շրջանակի մը մեջ: Զխորհեցավ որ ասիկա կրնար սկզբնավորութունը ըլլալ ծանուցված արկածին. այնպես ենթադրած էր որ արյունահոսութունը եթե տեղի ունենա պիտի ըլլա վիրավոր աչքն դեպի դուրս, և իր արյունին տաքութունն ու թացութունը, վիրակապին տակ, զայն պիտի զգացնեն իրեն: Մինչդեռ հիմա, ցավ մըն էր որ կը շարունակվեր. ու Մարք կ'սկսեր հառաչել, բարձրաձայն հառաչել և տքալ արդեն: Գլուխը միշտ կը տեղափոխեր բարձին վրա, աչքին վրային կը շարժեր կապը՝ մտածելով որ անոր ճնշումը եթե թեթևա, ցավն ալ պիտի նվազի:

Ապահովարար ժամ մը անցած էր այսպես, երբ Մարք չկրցավ այլևս համբերել և հիշելով որ նախորդ գիշեր իրեն բացտորած էին սնարի մոտ զանգակի մը գոյութունը՝ ճարահատ քաշեց անոր շվանը:

Զանգակին ձայնը հնչեց լուռ հիվանդանոցին մեջ՝ վտանգի մը ազդարարության նման, և Մարք վախեցավ իր խոկ հարուցած, իր անձկութունը հայտնող այդ աղմուկին արձագանքն... «Տըլլինկ, տլլինկ, տլլինկ», — զվարթ աղմուկ մը, որ շարադետ զողանջի մը պես կը դողացնե զինքը, երբ մյուս կողմն ահա՛նչը սրած կ'սպասե լսել անոր արդյունքը, ոտնաձայները որ պիտի մոտենան իրեն և սեռու էմըլին որ պիտի գա թեթևցնել իր տառապանքը... Բայց այդ քանի մը վայրկյանի անձկոտ սպասման միջոցին իրեն թվեցավ թե ցավ չէր զգար այլևս ու գրեթե զղջաց իզուր խանգարած ըլլալուն համար հիվանդանոցին գիշերային հանդարտութունը...

Ահա մեկը որ կուգա, որ եկա՛վ: Աւ ցավը կը վերստին, ավելի սաստիկ քան երբեք:

— Մեռու էմըլին, կը տանջվիմ, շատ կը տանջվիմ աչքիս և գլուխիս ցավեն:

Ձայն մը զար չի ճանչնար, կը պատասխանե.

— Ես գիշերապահ քույրն եմ. դարմանատու քույրը պահած է և ես բան մը չեմ կրնար ընել ձեզի համար. պետք է վաղ առտվան սպասել:

— Ինչպե՛ս պիտի սպասեմ մինչև վաղը առտու. ցավս սաստիկ է, անտանելի է:

Բայց գիշերապահ քույրը ուրիշ բառերով նույն խոսքը կը կրկնե միշտ, հետո քիչ մը շուր կուտա որ խմե, բարձերը կը շտկե և հայտնելով որ ավելին ընելու անկարող է, կը մեկնի քովն զինք մինակ թողնով իր տանջանքին հետ...

Եվ Մարք գալարեցավ, տքաց ժամերով, առանց մեկ վայրկյան դադարի, անիծելով հիվանդանոցին կարգ-կանոնն ու օրենքները՝ որոնք միակ պատասխանատուները կը համարեր իր կրած այս ցավին, առանց ատկե անդին կարենալ մտածելու... Միջոց մը, անկողինն դուրս նետվեցավ, պահ մը պատին կոթնած մնաց, հետո քաշկոտվելով մինչև դուռը հասաչացավ, հոն նորեն կեցավ, ու հուսահատության գերագույն նոպայի մը մեջ՝ մտածեց գլուխը դրան քարե եզերքին զարնել, ջախջախել և ազատիլ ցավեն: Ետ բերավ գլուխը, բայց քաշությունը լունեցավ առաջ տանելու: Հասկեցավ որ պիտի չկրնա, ու վերադարձավ դեպի անկողինը, որուն շհասած՝ ինկավ թիկնաթոռի մը մեջ և այդպես ուշակորույս, նվաղած մնաց պահ մը: Հետո արթնցավ, ու ցավն ալ միասին: Որքա՛ն տեեց ատիկա, չէր գիտեր: Անգամ լսեց իր ձայնը, որ կը հեծկլտար.

— Մայրի՛կ, մայրի՛կ...

Փայլակի մը պես՝ մորը պատկերը անցավ աչքին առջևն, հայրենիքին խորը, գյուղի մը մեջ ապրող ծերունի մորը որմե լուր չունեք երկու տարիս ի վեր, և զգաց որ արցունքներ կը ժայթքեին աչքերին ու կը թրջեին վիրակապը: Հետո նորեն անձեատուր եղավ իր ցավին, քանի մը անգամ նորեն փորձեց դրան մոտենալ և մարդ կանչել. հիշեց թե նույն գիշերապահ քույրը պիտի գար իր նույն պատասխանով. ետ եկավ, գլուխը բարձրուն մեջ թաղեց ու բարձերը գետին նետեց. թիկնաթոռն անկողին և անկողինն թիկնաթոռ նետվեցավ. վիրապակը փրցուց հանեց և գիշերաշապիկին օձիքը պատռեց. հառաչեց, հեծեց ու

տքաց երկար, երկար ատեն... մինչև որ լուսափեղկին ճեղքերեն արշալույսին ծագիրը տեսավ և քիչ մը հանդարտած՝ սպասեց որ հիվանդանոցը շուտով արթննա ու իրեն օգնել գա...

Թմրած էր ու կը մրափեր՝ երբ եկավ սեռու էմըլին ու քիչ մը պաղ ջուր ճակատին և ընդարմացուցիչ դեղահատ մը տվավ... Ակնաբույժը քնացած գտավ զինք ու արթնցնելով՝ քննեց վերքը և ըսավ թե ներքին արյունահոսում մը տեղի ունեցած էր: Կվաց, քանի մը կաթիլ դեղ դրավ աչքին մեջ և հանձնարարեց սառ ջուրի մեջ թրջած լաթերը անպակաս ընել ճակատեն: Եվ խոստացավ իրիկունը նորեն գալ...

Այդ օրը մինչև իրիկուն, ու հաջորդաբար բազմաթիվ օրեր, շուտ-շուտ փոխված սառ ջուրի թրջոցներուն շնորհիվ էր՝ որ Մարք կրնար զինքը տանջող գլխացավին հանդուրժել և խոսիլ իրեն այցելող բարեկամներուն հետ: Անոնք միաժամանակ հիվանդապահի դերը կ'ստանձնեին իր մոտ՝ օգնելով իրեն որ թրջոցները փոխե: Բայց Մարք վերագտած էր իր հանդարտությունը և երբ պետք ըլլար՝ կը խոսեր իր արկածին վրա — զոր միշտ «արկած» կը կոչեր — իբրև թե ան ուրիշի մը պատահած ըլլար...

ՄԱՏ ԹԵՈՍ  
ԶԱՐԻՖՅԱՆ

ԵՐԿԵՐ



# ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

## ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Դեռ կը հեամ,  
Դեռ մահամերձ վարդերու պես ամբույն եմ.  
Հոգիս մեջ, դեռ գիշերը Տառապանքին  
Հսկա բուսի իր թևերը կը փռե...  
Բայց արդեն իսկ կապույտ լեռնե՛րն են ահա,  
Զոր երազեր եմ երկար.  
Կապույտ լեռնե՛րն, ու իրենց վեա կողերն ի վեր  
Լուսթյո՛ւնը անըջական՝  
Որուն համար արցո՛ւնք թափեր եմ երկար,  
Երբ պատանի հոգիս մինակ կը մնար,  
Մութ գիշերներ, աստղերուն տակ...

Մատներըս դեռ կ'արյունին.  
Ի՛նչ դժվարին վերելք էր այս,  
Ապառաժի ապառաժ,  
Վիշտերու բեռը ուսիս...  
Եվ ահա մութ, կապույտ լեռնե՛րն են իրավ,  
Շքեղ՝ ինչպես մերկ հոգին,  
Թեև տժգույն ու հեռավոր տակավին...  
Գիշեր շեղած՝  
Ինչպե՛ս նայիլ ամբավին...

Բայց այս հուզո՛ւնը հստակ.  
Ա՛հ, կարծես թե,  
Այս խորտակված կուրծքիս տակ,  
Տրամաբյան հին աղբյուրն է որ,

Ավերակն ավերակ,  
լուսնի լույսովը օծուն,  
Հոգվույս ճամբան կը փնտրե.  
Ա՛հ, սփոփա՛նքը իր երգին...  
Խաղաղությո՛ւն...

Այս իրիկուն,  
Աստղերն որքա՛ն են վճիտ,  
Ինչպես շիթերն արցունքի՝  
Որ կը թափին երբ մարդ կ'իյնա աղոթքի...  
Խաղաղությո՛ւն:

Ու այս ճա՛նը.  
Բայց ծաղիկն զատ ո՛չ մեկ իր կա այստեղ.  
Ահ, այս ճա՛նը, այսպես խաղաղ ու տրտում...  
Անհո՞ւնն է.  
Ձայն կը լսեմ, կարծես թե,  
Լուսյան այս անըջահե երգին մեջ...  
Խաղաղությո՛ւն:

### ՆՈՐ ՀՅՈՒՂԱԿՍ

Ի՛նչ լուսակերտ և սպիտակ խրճիթ է այս,  
Հստակ՝ ինչպես կույսի մ'հոգին,  
Թշվառ՝ ինչպես ի՛մ հոգին.  
Օ տրտմությունս ի՛նչ հեշտանքով պիտի ապրի  
այս երգին տակ...

Երբ սկսի քերթվածն հիվանդ երկնքին՝  
Ի՛նչ մտասույզ ու վերացած անդորրանքով  
կրնամ երեսըս ձեռքերուս մեջ ծածկել  
Ու արտասվել...  
Երբ մարդ կուլա խաղաղության երգին տակ՝  
Իր աչքերեն, արցունքի տեղ,  
Հոգիին մութ վարդե՛րն են որ կը մաղվին...  
Եվ այդ բույրո՛վ է որ միայն մարդ կրնա,

Երբ սկսի քերթվածն հիվանդ երկնքին,  
Ժպտի՛ւ, ժպտի՛ւ՝  
Յավին համար այս կյանքին...

Որքա՛ն կանաչ մարգերուն մեջ.  
Որքա՛ն նվագ թռչունի.  
Հարկավ ամեն իրիկուն, սա հեթանոս

կատարներեն,

Հովը, մազերը թափած,  
Կուգա երգել այս դրացի ու դյութական  
անտառին մեջ...

Խաղաղության ու Տրտմության այս հյուղակին  
սեմին նստած,

Երբ սկսի քերթվածն հիվանդ երկնքին,  
Ինչպե՛ս, ինչպե՛ս պիտի ըմպեմ հաշիշը  
մութ գույներուն,

Ու երազեմ, աչքերըս գոց, նվաղագին,  
Երբ սկսի քերթվածն հիվանդ երկնքին...

### ՀՈՎՈՏ ԳԻՇԵՐ

Մամբս տակավ կը մարի  
— Հոգիս դատա՛րկ է նորեն —  
Գիշերվան հովն ուժգնորեն  
Հին ցավերուս կը փարի...

Մտածումներս կը հատնին.  
— Հոգիս դատա՛րկ է նորեն —  
Յուրտ բարձերուն ծայրերեն  
Ցավոտ հուշեր կը ծընին...

Միկառս հուշիկ կը սպառի.  
— Հոգիս դատա՛րկ է նորեն —  
Կապույտ ծուխը հեղգորեն  
Կ'երազկոտի, կը ցնդի...

Միտքըս Ոջին կը հարի.  
— Հոգիս դատա՛րկ է նորեն —  
Գիշերվան հովն ուժգնորեն  
Ա՛լ ցավերու թող փարի,

Մոմըս սակավ կը մարի...

### ՀԱՄԱՌՈՒՅՐ

Նորեն տնակըս եկա.  
Աղքատ տնակս, որուն սեմեն, ինձի հետ,  
Իրիկունն իրիկուն,  
Տրտմությունը միայն կ'անցնի:  
Ահա սենյակս, իր մտերիմ ու գունաթափ որմերով,  
Կաղ սեղանըս, իր փոշիով, լքված իրի իր թախտով.  
Ճիշտ դիմացըս, որմին վրա,  
Մաշած թուսթոյ մը, բորիկ, կը մամտա.  
Ու քիչ անդին, իմ հայելին,  
Է՛ն թանկ իրը խցիկիս...

Ամեն գիշեր, դողդոջ ճրագ մը ձեռքիս,  
Անոր առջև արձանացած՝ կը հառիմ  
Շրթունքներու ժպիտին ու աչքերու գիշերին.  
Ու երբ, լռիկ, ճրագը վար կը դնեմ,  
Ու կես-մութին մեջ շրթունքներս կ'երկարին  
Հայելիին մեջեն ժպտող շրթունքներուն՝  
Ցուրտ և հպարտ՝  
Ահ, կարծես թե հոգի՛ս է սր կը համբուրեմ.

Անդ համբուրին ո՛չ մեկ համբույր կը փոխեմ...

### ՀՈԳԻՍ ԷՐ

Այս իրիկուն, տրտմորեն,  
Ճամբաներեն ամալի,  
Վիշտերու հետ կ'երթայի.

Տեսա պարտեզ մը վալրի,  
Սեզ, մենավոր ծառերով,  
Որոնց մեջ հով մը խոով.

Կը հեծեծեր. ու հիվանդ  
Հոգիներու պես մթին  
Տերևները կ'իյնային.

Ավազան մը կար մեկ դին,  
Անզարդ, տժգույն, ո՛չ իսկ ջուր.  
Կարծես մեծ սիրտ մ'էր թափուր:

Ու հոգիս խորհեցա...  
Հին-հին ցավեր, ո՛չ մեկ սեր.  
Այդ պարտեզն իմ հոգի՛ս էր...

Հետո նորեն, տրտմորեն,  
Ճամբաներեն ամալի,  
Վիշտերու հետ կ'երթայի:

### ԳԻՆՈՎԻ ԵՐԱԶ

Այս գիշեր նորեն երազըս տեսա.  
Խոշոր ժայռին տակ, շունշ-շունշի նստած,  
Խենթ-խենթ բառերով կը պատմեի, ցած,  
Թե իմն հետո ի՛նչ կյանք ապրեցա.

«Երբեմն, պառկած, սաղմոս կարդացի...  
Բայց հաճախ ալ, քո՛ւյր, մոռնալու համար  
Գեզ-դեզ կուտակված վիշտերս անհամար՝  
Իրիկունները գինետուն գացի...

«Ահ, դուն գինովի աչքեր չե՛ս տեսեր,  
Հոգիս, հավատա, աստղով կ'լինեա,  
Երբ կերթամ պառկիլ բաց դաշտին վրա,  
Հեզնելու համար երազներն ու սեր...

«Ահ, դուն գինովի դեմքըս չե՛ս տեսած.  
Տժգույն, անիմաստ, անհույս ու վայրագ,  
Երբ կ'երթամ պառկիլ, երգով մ'անառակ,  
Լույսն անկողինս՝ լուսիննն փոված...»

«Ահ, դուն գինովի հոգիս տեսած չե՛ս,  
Շենշող ու տրտում, ժպտուն ու լալկան.  
Արցունքեն մռայլ ի՛նչ ծիծաղներ կան...  
— Գինովը կ'ատեմ.— չըսե՛ս, քույր, չըսե՛ս.»

«Գինովը սիրե. անոր սիրտը, քո՛ւյր,  
Գեհեն մ'է ցավի, որ անվերջ կ'այրի.  
Գինովը Լքյա՛լն է, հույսեն այրի,  
Անոր կուրծքը հուր, ճակատն է մաքուր...»

Այսպես կ'ըսեի ու դեռ շատ բաներ.  
Երբ իրեն դարձա՝ հոն չէր, զարմացա.  
Աչքերըս բացի. բաց դաշտին վրա  
Քնացեր էի. լուսինը կ'իջներ...

#### ՀԱՄՐ-ՀԱՄՐ

Աշունն այնպե՛ս կը սուլե...  
Տժգույն ծիծաղն ամպերուն  
— Օ, արյունո՛տ ծաղրն անհուն —  
Երկնքին վրա կը քալե...

Դեռ շրթներուս կը պահեմ  
Ժպիտն անցնող օրերուն.  
Ու հին-հին երգ մ'օրորուն  
Կ'ըսե թե դեռ տղա՛ եմ...

Հոգիս մեջ դեռ ՈԶին  
— Թեև կը զգամ ամեն օր —  
Չլայնցա՛վ ցայգը հզոր,  
Դեռ միտքերս կը թռչին...

Մայրամուտի պահերու,  
Պրբ մինակ եմ ու լռին,  
Հանկարծ, սակայն, կը սառին  
Երգ ու ծպիտ — ահ, ինչո՞ւ...

Աշունն այնպե՛ս կը սուլե...  
Տժգույն ծիծաղն ամպերուն  
— Օ, անասոված ծաղրն անհուն —  
Համր-համր կը քալե...

#### ԵՔԵ ԳԱՐ...

Ի՛նչ հեշտագին մշուշ է այս նորեն շուրջս.  
Աչքերուս մեջ, գիշերին հետ, կարծես  
աստղեր կը դողան.

Ու կարծես թե, հոգիես դուրս,  
Մանիշակի թախճոտ բույր մը կը տարածվի  
գիշերին...

Այնպե՛ս բարի եմ այս գիշեր.  
Այնպե՛ս ներող, զղջացող.  
Այնպե՛ս պատրաստ հեծեծանքի...  
Հոգիս մեջ,  
Հպարտության ապառաժեն ա՛փ մը փռչի իսկ չկա.  
Ու հին կարո՛տն է որ ահա,  
Երազակոժ աչքերուս մեջ,  
Օրհասական հիվանդներու քաղցրությունով,  
Համր-համր կը ծավալի...  
Իրավ, այնպե՛ս ես հիվանդ եմ այս գիշեր.  
Հիվանդություն մը նոր մահվան փոսին տեղ՝  
Հավերժության ապարանքին կը տանի...  
Իրավ, իրավ, այս հոգիովս երթամ պառկիլ  
աստղերուն տակ.

Ահ, եթե զա՛ր այս գիշեր...

## ԱՄԵՆ ԱՆՊԱՄ

Ամեն անգամ որ հովն ըլլա  
Այսպես թախճոտ ու մտերիմ,  
Կարելի չէ՛ որ շխորհիմ  
Այն գիշերին, ժայռին վրա...

Ինչու որ շա՛տ էր թախճագին  
Հովն այն գիշեր, ժայռին վրա,  
Երբ ես գունատ, ծունկի եկա՝  
Որ աղոթե՛մ իր հոգիին...

## ՀԵՅՆԱՆՔ

Քանի՛ կ'աճի ցափը մարմնիս,  
Փպիտն աչքիս վարդ կ'ըլլա.  
Ցուրտ հոգիես կ'անցնի մայիս,  
Թւ' լո՛ւյս կ'իյնա ձախտիս վրա...

Եվ այս վարդով, այս գարունով,  
Կը հեզնեմ Ան որ կուգա.  
Ան որ կուգա՝ հողին քունով  
Քրնացքնեկ ծավն հսկա...

## ՀԵՌԱՎՈՐ ՍԵՐ

Ուժգին հով կա դուքսը նորին.  
Նորին գիշե՛րն է հովերուն...  
Միտքըս կ'երթա հեռուն, հեռուն,  
Ավերակված ճամբաներին:

Նորին գիշե՛րն է հուշերուն...  
Աչքերըս գոց ամբողջովին,  
Հոգիս հանձնած այս մութ հովին՝  
Ահա հասա արդեն հեռուն:

Աչքերս գոց ամբողջովին  
Կը նշմարեն մեծ լուսնկան  
Մշուշազառ այն գիշերվան՝  
Ուր ես լացի, ափը ծովին,  
Աչքերըս գոց ամբողջովին...

## ՈՍԿԻ ՎՏԱԿ

Այն իրիկուն,  
Ահ, երա՛զը լուրթ լեռնեքուն,  
Ու գույներուն լա՛ցը հստակ...  
Բայց մանավանդ՝ ծառերուն տակ՝  
Հե՛քը սյուրբին թախճով լեցուն...

Քալել, շարժիլ կարելի չէր.  
Ուստի մտանք ծառի մը տակ.  
Մո՞վն ավելի էր անհատակ,  
Թե՛ մեր սերը — չէինք գիտեր...

Ու այդ հեքոտ սյուրք այնպե՛ս  
Թախճով երգեց մեզի համար՝  
Որ կարելի չեղավ երկար  
Լռել, ուստի, վարդերու պես,

Որոնք ծաղկած են քովե քով,  
Որ հովերեն մեղմ կը հակին,  
Իրարու վրա, կրկին-կրկին  
Նվաղանքով ու գգվանքով,

Ճիշտ այդպես քույր վարդերու պես,  
Մեր շրթները, սյուրբին գինով,  
Եկան այնքա՛ն իրարու քով՝  
Որ... Ա՛հ, ես չեմ գիտեր ինչպե՛ս

Եզենիի այդ ծառին տակ,  
Հոգիս, դողով մ'անհնարին,  
Գտավ ուղին մե՛ծ անտառին՝  
Ուր կը հոսի Ոսկի Վտակ...

ՄԻԾԱՂ

Գիշերի գույն անձկութուն մը զիս կը խեղդէ.  
Ալ չեմ կրնար այս ափունքին վրա շնչել.  
Մենութունը տակավ դագաղ մը կը դառնա,  
Ալ չե՛մ կրնար...

Կարծես հուժկու և սառնեղեն մատները ծեր Ձանձրույթին  
Կը գալարվին քանի օր է, նիհար վզիս միսերուն շուրջ.  
Ու կուրծքիս վրա, ինձ կը թվի,  
Լուսնունք իմ մենավոր տնակիս,  
Ուրվականի ձևեր առած,  
Կապարի պես ծանր ոտքով մը կը ճնշե.  
Ալ չե՛մ կրնար...  
Ո՞ր շար ոգին այսպես ուժգին զիս կը սարսե.  
Ուսերուն վրա հիր պարեգոտ մ'հողմածածան,  
Հիմարության դեղին բաժակը ձեռքին՝  
Ո՞ր շար ոգին...  
Շրթունքներս կգունատին,  
Ալ չե՛մ կրնար.

Ահ, ի՞նչ բոսոր մայրամուտ է.  
Արյունի գույն, ծիծաղի գույն մայրամուտ է.  
Այնպե՛ս լավ է, այնպե՛ս լավ է,  
Ծիծաղ մ'հողմույս մեջ կը նավե...  
Կրնա՛մ, կրնա՛մ,  
Բե՛ր արքենամ՝  
Գեղին բաժակը շրթներուս...  
Նետե՛, նետե՛ հիր պարեգոտդ ուսերուս...

ԿԱՐԵԿՑՈՒԹՅՈՒՆ

Պզտիկ աղջիկ մ'ինժի կ'ըսե  
Թե զիս խենթի պես կը սիրե.  
Պզտիկ աղջիկ մը զիս սիրե՛...

Գիշերն անհուն իմ աչքերուն  
Երևի դեռ նա չէ տեսեր.  
Պզտիկ աղջիկ մ'ինժի տա սե՛ր...

Երևի դեռ նա չէ նայեր  
Հոգվույս խավար անդունդն ի վար.  
Պզտիկ աղջիկ մ'ինձ սիրահա՛ր...

Եթե լսեր թե ո՛չ մեկ սեր  
Այդ անդունդին մեջ կը շնչեր՝  
Հեք պզտիկը չէ՞ր հառաչեր...

Ուստի եղբոր մը պես ըսի  
Թե լուսին տակ մարդ կը մսի.  
«Գնա՛, գնա՛, ննջե՛», ըսի.

Հետո գացի հեռուն լացի...

ԶԸՍԻ՞

Մութը շիջած, իրիկվրնե,  
Իրեն ըսի թե ինձ համար  
Սերը տոգույն ծաղիկ մըն է,  
Զոր շունչիս տակ չէի կրնար  
Ապրեցրնել — լուռ, կը խնդար...

Մութը շիջած, իրիկվրնե,  
Իրեն ըսի թե ինձ համար  
Սերը հիվանդ կարապ մըն է,  
Զոր շրթունքներս չէին կրնար  
Կյանքի բերել — լուռ, կը խնդար...

Մութը շիջած, իրիկվրնե.  
Իրեն ըսի թե ինձ համար  
Սերը մեռնող նշույլ մըն է,  
Զոր իմ հոգիս ա՛լ չէր կրնար  
Բոցավառել — լուռ, կը խնդար...

Ու լուսնին տակ, կեսգիշերին,  
Երբ կ'իջնեինք բլուրն ի վար՝  
Կը կշտամբեր զիս հոգևին.  
«Տե՛ս, հիվանդ եմ, ու չե՛ս գթար»  
Կը մրմնջեր ու լուռ կուլար...

Բայց ես իրեն չբսի՞, չբսի՞,  
Իրիկվո՞նե, մութը չիշած,  
Թե ցուրտ Հովեն եթե մսի՝  
Այս հոգիովս, ցավեն չիշած,  
Չէի՞ կրնար հո՛ւր տալ, չբսի՞...

### ԵՐԿՈՒ ԱՎԵՐԱԿՆԵՐ

1.

Հին օրերուն,  
Երբ դեռ սիրտըս վարդի մը վես փթթումն ուներ,  
Ու երազը դեռ աչքերուս հույլ-հույլ քերթված կը ծորեր,  
Հին օրերուն,  
Լիբանանի սոճիներուն կախարդանքը արյունիս մեջ՝  
Ես կ'երթայի Բաալբեքի ավերակները դիտելու:  
Ի՞նչ մոռալ փառք էր, ի՞նչ հեթանոս շքեղանք,  
Արևելյան մայրամուտի կանաչ-բոսոր շողերուն տակ,  
Փռված անոնց կիսակործան սյուներն ի վար.  
Ի՞նչ լուսեղեն, մեծվայելուչ քերթված էր այգ՝  
Կանաչ-բոսոր շողերուն տակ...  
— Չկա՛, չկա՛, — կը խորհեի, հիացումի արցունքներով,  
— Այս կործանած պալատներուն փառքն ունեցող  
Չկա՛, չկա՛...  
Ու, Գեղեցկին ես սիրահար ու միամիտ պատանի՝  
Մութ նախանձի մ'անմեկնելի գալարումը կ'ունենայի  
Այդ քարերուն հանդեպ տրտում, շարդված...

2.

Հին-հին օրերը անցան.  
Սիրտս ոչ ևս վարդի մը վես փթթումն ունի.  
Ալ երազը աչքերուս մեջ հույլ-հույլ քերթված չի ծորեր:  
Եվ ալ շերգեր, արյունիս մեջ,  
Կախարդ երգը Լիբանանի քնարերգակ սոճիներուն.  
Հին-հին օրերը անցան...

Հիմա, սակայն, շատ իրիկուն,  
Երբ կը քալեմ այս գունաթափ երկնքին տակ,  
Ու կը խորհիմ, այնպես հանկարծ,  
Բաալբեքի հին, կործանած պալատներուն՝  
Ալ չեմ ըսեր.  
— Չկա՛, չկա՛ անոնց մոռալ փառքն ունեցող.  
Ալ չեմ ըսեր, ինչու որ կա՛...

3.

Ահ, հոյակա՛պ քերթվածը իմ հոգիիս,  
Իմ ավերակ, իմ քարուքանդ հոգիիս...

### ԳԻՇԵՐԱՄՈՒՏ

Օրը հատավ.  
Երկնքին վրա,  
Մայրամուտի ծիրանագույն հուրիներն իսկ,  
Մութ ձեռքե մը կարծես հանկարծ դաշունահար,  
Արյունելեն, արյունելեն նվաղեցան...  
Օ՛, գրեթե գիշե՛ր է ալ.  
Հոժ-հոժ ամպեր, զինովությունն իրենց թռթված,  
Կարգավ-կարգավ կը հագնին,  
— Պատվիրակները ըլլային կարծես մահվան —

Գիշերային իրենց մոռալ արշավին  
Պարեգոտը անդունդի գույն...  
Հեռուն, հեռուն, է՛ն հեռուն,

Հյուծախտավոր կապույտե մը ահա հուշիկ կը ծագի  
Պզտիկ աստղս, ի՞մ աստղս.

Այն՝ որ նվեր եմ ստացեր,  
Հին օրերուն,

Լուրթ, մշուշոտ գիշերի մը անդորրին մեջ,  
Տժգույն վարդի մը նմանող այն հոգիին...

Իրավ, աղվճ՛ր գիշերամուտ.

Հով մը շկա, հեք մը շկա.

Երա՛գ է...

Մեղկ շերմություն մ'ահա հեշտին,

Համր-համր, այտերս ի վար կը տարածվի.

Արցո՛ւնք է...

Ուշ գիշեր է, ալ երթամ.

Ահա ճամբան՝ ուրկե եկա.

Մութ-մութ ճամբան, աշուն բուրդ այդ ճամբան,  
Որուն երկու եզրը հիմա հարկավ եկած, բռնած է,  
Քրոջ մը պես տրտմագին,  
Խաղաղությունը լքումին...

Ահ, իրավ է թե գիշեր է, երթամ, երթամ,

Հիվանդ բոցով իմ ճրագս վառելու.  
Հետո նորեն, ինչպես ամեն իրիկուն,

Յուրտ սեղանիս վրա ինկած,

Ու ճակատս ձեռքերուս մեջ՝

Մտածեմ...

Մտածեմ՝ խաղաղորեն ու անսահման բարությունով,

Տժգույն վարդի մը նմանող այն հոգիին՝

Որ լուրթ, մշուշոտ գիշերի մը անդորրին մեջ

Ինձի աստղ մը նվիրեց ու գնաց.

Գնաց, առանց ետ նայելու.

Ո՛ւր է հիմա, իրավ, ո՛ւր է.

Երա՛գ է.

Մեղկ շերմությունն ահա նորեն դեմքըս կ'այրե.

Օ, արցո՛ւնք է, գիտեմ, հեղեղ մ'արցունք է

Ձոր հոգիս դուրս կը թափե

Տրտմությունըս խաղաղությամբ օծելու.

Իրավ, իրավ, երա՛գ է...

Ճամբա իյնամ, ալ երթամ.

Ինչպե՛ս տժգույն եմ, երթամ.

Երթա՛մ, իրա՛վ, ո՛ւր երթամ.

Ինչո՛ւ, ինչո՛ւ դիմել նորեն

Անհուսությանը մենավոր այդ տնակին,

Ուր հուշեր լսկ, օձերու պես, կը բնակին...

Չէ, չէ, չերթամ.

Տես, ի՛նչ անդորր գիշեր մ'է որ կը հոսի

Անհունության ճամբաներին...

Հով մը շկա, հեք մը շկա.

Պառկիմ, մեռնիմ քարի մը վրա...

### ՏԱՌԱՊԱՆՔ

Տխուր եմ նորեն

— Ինչո՛ւ, շեմ գիտեր —

Հոգվույս մեջ անտեր

Մե՛ծ հողակույտեր

Կարծես կը փորեն...

Պառկած եմ նորեն

— Ինչո՛ւ, շեմ գիտեր —

Հոգվույս մեջ անտեր

Թունավոր նետեր

Կարծես կը պարեն...

Ու ձեռք մը սառե

— Ինչո՛ւ, շեմ գիտեր —

Հոգվույս մեջ անտեր

Հին, թաղված վիշտեր

Նորեն կը քրքրե...

Ու նորեն կ'այրե

— Ինչո՛ւ, շեմ գիտեր —

Հոգվույս մեջ անտեր

Հավատքներըս ծեր

Այդ Ձեռքը սառե...

Ու թշվառորեն

Ես կուլա՛մ նորեն...



Մտայլ իղձեր կան դեռ, գիտեմ, հոգիիս մեջ.  
 Խորը, խորը, շատ խորը.  
 Ու երբեմն, հյուժախտավոր մայրամուտի պահերուն,  
 Հին, գունաթափ հիշատակ մը կամ երազ մը անարթուն՝  
 Բռունցքըս դեռ կզակիս տակ կը պահեն.  
 Այդ բուրբը, սակայն, ոչինչ.  
 Ահ, ես հիմա ժպի՛տ մ'ունիմ,  
 Ժպիտ մ'այնպե՛ս մանրիկ, նրբին, աննշմար...  
 Զայն գտեր եմ, իրիկուն մը,  
 Երբ կ'իշնեի, հոգիիս հետ, խորունկ խորունկ տեղե մը վար...  
 Ժպիտ մը որ իմ այս տժգույն մատներուս տակ կը դնե  
 Տիեզերքը՝ իր աստղերով, իր անհունով,  
 Կյանքը՝ իր մեծ ցավերով, պզտիկ-պզտիկ հրճվանքներով,  
 Եվ ինձ կ'ըսե.  
 — Մին է, սին է, երազ իսկ չէ, ոչի՛նչ է.  
 Միակ խորունկ դեպք մը հոգվույդ կը սպասե.  
 Եվ այդ՝ մտայլ կախարդ Ոջին համբույրն է...  
 Ժպիտս է որ այսպես կ'ըսե...

ՄԻ ԴՊԻՐ

Գիտե՛ք որքան թախիժ կա  
 Հոգիին խորն այդ տղուն.  
 Մի՛ դպիք, թող բըրբա՛ւ.  
 Խենթին բըրբիչն է բեզուն...  
 Հոգիին խորն այդ տղուն  
 Իչեր եմ ես ու տեսեր  
 Երա՛զ մը ծեր, նվաղուն,  
 Եվ անկյուն մը՝ փլած սեր...  
 Ահ, մի՛ դպիք այդ տղուն.  
 Խենթը միակ կըթողուն...

Աշուն է. բայց այնպե՛ս արևն է գինով,  
 Ու երկինքն այնպե՛ս կապույտ, օրորուն,  
 Որ պատրանքն ունիմ անույշ օրերուն.  
 Ահ, փարձես ամա՛ռ է կախարդ գույնով...  
 Դեռ ամեն թուշուն կ'երգե անտարբեր,  
 Ոչ մեկ շյուղ հովին տերև մը տվա՛վ.  
 Ահ, կարծես անո՛ւյշ օրերն են, իրա՛վ.  
 Կարծես մահ չկա, այլ կյա՛նքն է եկեր...  
 Միայն թե ինչո՛ւ, ամեն իրիկուն,  
 Ճիշտ երբ երկնքին քերթվածը մարի,  
 Ախտավոր հեք մը հովին կը փարի,  
 Տրամության թույնը տալով իրերուն...  
 Եվ հետո, մութին մեջ կարծես կուլան...  
 Մինչ ամբան ծիծա՛ղ միայն լսեցի.  
 Այս առտու վարդ մը քաղել ուզեցի,  
 Բայց հազիվ հպա՛ թերթերը փլան...

ՅՇՆԱՆ ԱՌԱՎՈՑ

Տակավ մտայլ ույժ մը կուտա հովն իր թափին.  
 Երկինքըն արդեն մոռցավ ժպտիլ, քանի օր է.  
 Ատելության շունչ մը հիմա զայն կը վարե,  
 Հեք տերևներն արտասուքի պես կը թափին...  
 Հաստ բունի մը գլուխըս հեց, ականջ կուտամ,  
 Նոր ծայր տվող եղբրական այս նվազին՝  
 Ուր հոգիներ կարծես, հույլ-հույլ լուռ կը կքին  
 Ծավի մը տակ հանկարծահաս ու դեռ տարտամ...  
 Վաղը, սակայն, երբ փոթորիկն անցնի ծովեն,  
 Ու գա թոթվել երազն հպարտ մայրիներուն՝

Այս հառաչը պիտի ըլլա բողո՛ք մ'անհուն,  
Խուլ ընդվզո՛ւմը իրերուն անապավեն...

Եվ այն ատեն մանավանդ պետք է որ ես գամ  
Այս բունին տակ, իբրև եղբայր մ'այս ծառերուն,  
Ու պահանջեմ, ու պաղատի՛մ քիչ մ'ալ գարուն՝  
Տակալ շիշող սրբտիս համար արյունաքամ...

### ՄԱՀԸ ԿՈՒԳԱ...

Հեքը կուրծքիս տակալ տակալ կը շատնա.  
Մա՛հը կուգա իր արծաթե մանգաղով.  
Եկո՛ւր, քընար, դեմ գանք անոր նո՛ր տաղով,  
Նա արքա՛ն է արքաներուն, մե՛ծ է նա...

Տե՛ս, իմ քընար, ոսկին շուտով կը հալի  
Սա իրիկվան երանգներուն. ահ, արգեն,  
Տե՛ս, գիշերը կ'առաջանա համբորեն՝  
Հանդերձանքը հագած իր է՛ն թախծալի...

Եկո՛ւր, նստինք սա ծառին տակ քեզի հետ.  
Աս այն ճամբան է ուրկե Սե՛րը կ'անցնի՝  
Երբ արշալույսը նո՛ր է որ կը ծնի  
Ու Մահը՝ երբ կ'ըլլա Երազը անհետ...

Ու երգե՛ երգ մը բառերով սառույցե.  
Յուրտ ու խորո՛ւնկ, ինչպես երկինք մը ձմռան՝  
Ուր լոկ քանի մը սև թռչուն կը սուրան.  
Կ'ըսեն թե Մահը չ'ախորժիր շատ ցույցե...

Ահ, լոկ երգե Արհամարհանքը շքեղ,  
Զոր ունեցանք ցավին համար այս կյանքին,  
Եվ թե ինչպե՛ս չհավտացինք երկընթին՝  
Ուր կարդացինք Սո՛ւտը ոսկի և ահեղ...

### ԿՅԱՆՔԸ

Կոչնա՛կն է, մեռե՛լ կա...  
— Ու ե՛րգ մը տարորեն՝  
Պարտեզեն մոտակա,  
Ուր կույսեր կը պարեն...

Խոտին տակ գա՛նգ մը կա...  
— Երազներ մեղմորեն՝  
Ճամբուն վրա հեռակա,  
Սա տրզան կ'օրորեն...

Եվ անդին, դաշտերեն,  
Ահա զույգ մը կ'երթա.  
Զիրար շա՛տ կը սիրեն.  
— Կոչնա՛կն է, մեռե՛լ կա...

### ՓԱԽՈՒՍՏ

#### 1.

Շատ ատեն էր չէի տեսեր  
Իմ սիրականս, ծովի ափին.  
Տժգույն-կապույտ աշվըներով,  
Վարդ հոգիով  
Իմ սիրականս չէի տեսեր, ծովի ափին.  
Զէի տեսեր ու ալ տեսնել չէի ուզեր այս աչքերով,  
Այս ցուրտ, մութ-մութ աչքերով,  
Ու փլատա՛կ այս հոգիով...

Ի՛նչ աչքերով, ի՛նչ հոգիով, հին օրերուն,  
Մութ-լուսնալույս գիշերներու աստղերուն տակ՝  
Տեսեր, սիրեր ու համբուրեր էի հոգին՝  
Մովի ափին...  
Ուստի ուխտեր էի ես ա՛լ  
Զմոռենալ  
Տժգույն-կապույտ աշվըներով սիրականիս

2.

Իրիկուն մը, ծովի ափին,  
 Ի՛Յ սիրահանս տեսա սակայն...  
 Տրտում-տրտում կը քաշէր ան,  
 Անջը գետնին,  
 Մովի ափին...  
 Օ, ազնիւ՛ մեծ ու շքեղ էր քան տուռը.  
 Մազի՛կ մըն էր, նվա՛զ մըն էր, կրկի՛նք մըն էր կարծես մըր:՛ն՝  
 Ուրկն շիթ-շիթ քաղցրութիւններ վար կը կաթին...  
 Երբ դիս տեսա՛վ՝ այնպե՛ս, այնպե՛ս տժգունեցա՛վ,  
 Բայց ծպտեցա՛վ...

3.

Հին հոգիս կը մտածնր.  
 Կը մտածնր մութ-լուսնալույս գիշերներուն,  
 Համբույրներուն՝  
 Որ հոգիս  
 Գանձերու պես,  
 Իր հոգիին  
 Կը տրվեին,  
 Մովի ափին...  
 Կը մտածնր երազներուն,  
 Զոր ես ամեն մեկ իրիկուն,  
 Նվազանքով աշքըս լինուան,  
 Կը պատմեի՛  
 Երբ կ'երթայինք, ձեռքս մեզքին,  
 Մովի ափին...

Գեւ չէ՛ր գիտեր թե ի՛նչ հոգիք էին անցեր  
 Իմ հոգիս.  
 Անջերսս քեւ չէր տեսեր...

Տժգունեցա. կարծես ստասիկ հիփանդացա...  
 Ուստի շուտով,  
 Դողդողալով,  
 Մովուն դարձա.  
 Մեծ աչիք մը գեպի ծովափ կը վազեր.  
 Նախ կարծեցի թե ամեն ինչ երազ էր.  
 Հետո, հանկարծ, ազու մը պես հեծեծելով,  
 Զեռքս աչքերուս գիշերին դեմ գոցեցի,  
 Ծվ սկսա վազե՛լ ուժգին  
 Մովի ափին...

ԶՄՈՒՆ ԻՐԻԿՈՒՆ

Ամեն մեկ վերքե՛  
 Զոր երկինքն ունի՛  
 Կապա՛ւյտը կ'երգե...

Միշտ կը տմարտե՛ր,  
 Բայց միշտ նվա՛զ է.  
 Հառա՛շ մը շունի...

Ամեն մեկ վերքե՛  
 Զոր հոգիս ունի՛  
 Անհո՛ւնը կ'երգե...

Քանի տժգունի՛  
 Հոգիս՝ կ'օրհնեցե՛ր.  
 Գանգա՛տ մը շունի...

Ամեն մեկ վերքե՛  
 Զոր երկինքն ունի՛  
 Աստվա՛ծ մը կ'երգե...

ԱՇՆԱՆ ԻՐԻԿՈՒՆ

Պե՛տ կը համոնա  
 Բլուրի՛ն վերս  
 Խաղը արհնգին...

Ու դեռ երկնքին  
Իջնել կը վախնան  
Աստղերը աշնան...

Հատ-հատ կը թափին  
Այս լուռ ծովափին  
Արցունքներ անտեր...

Իսկ ես չե՛մ գիտեր՝  
Տանիմ դեպի ո՛ւր  
Այս սիրտըս թափուր...

Դեռ կը համենա  
Բըլուրին վրա  
Կացը սրբինգին...

### ՀԻՆ ՕՐԵՐ ԵՆ...

Հին օրեր են, բայց հրատակ  
Կը հիշեմ դեռ ամեն բան.  
Աշունով լի էր ճամբան,  
Ու մութ էր մեծ ծառին տակ.

Մինչև այդ օր, դողալով,  
«Կը սիրե՛մ քեզ»-ը մըթին  
Ըսած չէինք տակավին,  
Դեռ կ'ապրեինք ազոթքով.

Բայց մո՛ւթ էր մեծ ծառին տակ...  
Ալ քիչ-քիչ պետք էր հոսեր  
Մոռյլ ակեն հըստակ սեր.  
Ա՛հ, գիշեր մ'էր անհատակ...

Ու հոսեցա՛վ վերջապես...  
«Կը սիրե՛մ քեզ»-ը մըթին՝  
Իր շրթները հծծեցին,  
Ազոթքի մը հեքին պես...

Ճիշտ նույն պահուն իմ հոգին  
— Հուշերըս հոս տկա՛ր են —  
Սիրո մեկ մութ կատարեն  
Կարտասովեր լուռ, անձկագին...

Մեռա՛ծ օրեր. բայց հստակ  
Կը հիշեմ դեռ ամեն բան.  
Աշունով լի էր ճամբան,  
Ու մութ էր, մութ, ծառին տակ...

### ԳՆՐԱԳՈՒՅՆ ԱՊԱՎԵՆԸ

Քանի օր է, Տառապանքը, քրքջալով,  
«Ալ դուն ի՛մն ես, հպարտ տղա», կ'ըսե ինձի,  
«Ալ մ'երագեր. որչ հորիզոն, ո՛չ կապույտ ծով,  
Դիտի գիշերն այդ աչքերուդ մեջ թեաժի.  
Ալ դուն ի՛մն ես, հպարտ տղա», կ'ըսե ինձի:

Ու ես, ժպտուն, աչքերըս գոց, կ'ըսեմ իրեն.  
«Դու թշնամի՞... Տես, ամեն վարդ կը թարշամի  
Գիշերին մեջ. գիշերին մեջ, լուռ կը նիրհեն  
Դե՛ղեր ոսկրի որ կյա՛նքն էին... Դու թշնամի՞.  
Ա՛հ, միմիայն կամքս ա՛յն ատեն կը կարկամի,  
Եթե կրնա: ջնջել բարի Մահն աշխարհեն...»

### ԱՆԲԱՆՏ ՄԱՂԻԿ

Հոգիս իր մեջ ծաղիկ մ'ուներ,  
Մաղիկ մ'այնպես նուրբ, որոտալի,  
Որ համրորեն, լուռ, կը հալի՝  
Եթե չիջնեն ոսկի շիթեր...

Ո՛չ մեկ հոգի կրցավ անոր  
Տալ այդ հեղուկն աստվածային.

Կույսեր եկան որ լոկ նային  
Ու գինսօվնան աչք քուցքին նոր...

Միայն մե՛կ հասն աչք կույսերին,  
Որ լոկ թախիծ ուներ ու ցա՛վ,  
Սրտիս վրա երկար լացա՛վ,  
Միայն մե՛կ հասն աչք կույսերին...

Ոսկի շիթերն իր աչքերուն  
Ինչո՞ւ սակայն մոլորեցան  
Ու շատն հոգվույս ճամբան.  
Ահ, չէ՛ր ծագիկն աչքսան Քեռուն...

Հոգվույս ծագիկն այդ տրամալի  
Մենության մեջ լառ կը հաղի...

### ՎԵՐԱԳԱՐՁ

Փողոցն մը լուռ, ամայի,  
Առավան այդ տժգույն ժամուն,  
Մեր քայլերով կը դառնալի  
Դեպի սենյակս, մաղձով լեցունս

Երեկույթը ավարտեր էր.  
Ահ, տժգուններ էի այնքա՛ն.  
Միտքըս խեղդող մշուշ մ'ուներ.  
Ձեռքես հատ-հատ վարդերն ինկան:

Ատեկություն մը խուլ, վայրագ,  
Մարդերուն դեմ, հոգիիս դեմ,  
Երկար պահեց պառլուս հախ.  
Ահ, այդ վարդերը դեռ կատեմ:

Ու երբ առի ճակատքս վե՛ր,  
Դեռ նոր հազվող այդ երկնքին,  
Պարզ ու խաղաղ ու գերբի՛ն՝  
Զգացի թե որքա՛ն եմ տին...

Ու կույս կոշնակն արշալույսին  
Երբ սկսավ ազոթքն անտեր՝  
Անշարժ կեցա աչքերքս հողին.  
Աղոթք մ'ինչո՞ւ ես չեմ գիտեր...

### ԿԱՏԱԾ

Ի՛նչ գեղեցիկ կատար է՝ այս.  
Ցավ շունիմ, վիշտ շունիմ, հրճվանք շունիմ.  
Անցեր եմ, հեռացեր եմ այդ բուրբին.  
Վեր եմ ելեր...

Անդուլ, անվերջ, ձյունի մեջն կը քաշեմ.  
Ամայի, մութ բարձունքներու հովին մեջն,  
Ծակատըս վեր.  
Ու կարծես թե, իմ այս հիվանդ մատներուս տակ,  
Ամեն րոպե մանիշակներ կը փայփայեմ...

Ի՛նչ գեղեցիկ կատար է՝ այս.  
Այնպե՛ս սուզված կապույտին մեջ...  
Ինձ կը թվի, իրիկուն՝ մը,  
Ես այս լեռներն՝  
Կարող կ'ըլլամ հոգիիս ա՛տուղը համբուրել...

### ԲԼՈՒՐԻՆ ՎՐԱ

Եկա՛ւք, իմ ազվոր.

Այս գիշեր հո՞վ կա,  
Լոկ հոս է անգորբ.  
Ահ, հավատա՛ որ  
Հոգիս կը ցանկա  
Ո՛չ թե լուսնկա՝  
Այլ անզո՛ւնդը խոր.  
Եկա՛ւք, իմ ազվոր,  
Այս գիշեր հո՞վ կա...

Մովը հեռավոր,  
Տե՛ս, կը հեկեկա,  
Այս գիշեր հո՛վ կա...  
Քույր, հավատա՛ որ  
Հոգվույս մենավոր՝  
Այս գիշեր մա՛հ կա.  
Տես կը հեկեկա  
Մովը հեռավոր...

Եկո՛ւր, իմ աղվոր:

### ԼՈՒՍՆԻՆ ՏԱԿ

Ահ, լուսնին տակ կարելի չէ՛  
Որ հույզ մը մութ քեզ շտանջի.  
Իսկ երբ կա սե՛ր...  
Ու մութ աչքեր  
Այդ բուսիկին  
Քեզ կը նային՝  
Երկինքն ի վար կարծես կ'իջնա  
Քիչ-քիչ անհունն հոգվույդ վըրա...

### ԼԵՐԱՆ ՍՐԻՆԳԸ

Տակավ, քանի՛ ցավըս կ'ըլլա ահավոր,  
Հոգիիս մեջ պայծառություն մը կ'իջնե.  
Ճերմակ թռչուն մը կարծես լուռ կը ննջե  
Կուրծքիս վերքին վրա թառած, ու աղվո՛ր  
Շունչն իր կ'ընե գիս անդորր...

Ահա նորեն սա մութ լեռան սրինգն է.  
Գիտեմ, ի՛նքն է,  
Ընկերս աղվոր.  
Ու ամեն օր  
Իր սրինգով,

Մութեն գինով,  
Ցուրտ մտածումս կ'առինքնե...

Չերգեր բնավ տրտմությունը հոգեխրոով  
Մա անարյուն աշուններուն.  
Ոչ ալ լույսը արևներուն  
Որ պիտի գան նորեն կյանքի փոթորիկով...  
Ընկերըս աղվոր

— Մարի՛ տըղան —

Ալ ամեն օր  
Իր սրինգով,  
Մահեն գինով  
Կ'երգե միայն՝  
«Ունա՛ յն, ունա՛ յն...»  
Աստղերն համայն  
Լուռ կը մնան.  
Ահ, ինչու որ,  
Մարի տըղան  
Իրենց օրոր  
Կ'ըսե այնքա՛ն.  
«Ունա՛ յն, ունա՛ յն...»

### ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

Բորնկեցա՛ն վերջապես  
Մեռնող գույներն երկընքին.  
Կ'ուզեի որ ճիշտ այսպե՛ս  
Մեռնեի հիվանդ իմ հոգին...

Բո՛ց մը հրզոր և հրպարտ,  
Հոգ չէ թե շուտ մարելու.  
Պերճ հըրդեհում մը հանդարտ՝  
Բուսի մ'անհունն ապրելու...

Ու հետո մահը թող գա՛ր,  
Ինչպես եկավ երկընքին.  
Ո՞վ այսպես մահ չի բաղձար՝  
Ուրկե աստղե՛ր կը ծնին...

ՈՐՈՇՈՒՄ

Ո՛չ իսկ հառա՛չ մը հանել  
Ճամբուն վրա այս անել:

Հըրամայել որ ցամաքի՛  
Վերջին կաթիլն արցունքի:

Ո՛չ ոքի ձեռք երկարել  
Որ գա հրդեհն այս մարել:

Գիշերին մեզ, լուռ, անտես,  
Գիտել հեռո՛ւն, կուրքի պես:

Գիտել ծովափն, ուր այնքա՛ն  
Աստղեր սրտես դուրս ինկան:

Ու ժայռն այն ծեր՝ ուր հողիս  
Վարդի մ՛համար լքեց զիս...

Հետո ծպտիլ ու քալել  
Ճամբուն վրա այս անել:

ԼԵՌՆԵՐՆ ԻՄ ԵՐԱՋԻՍ

Հողիս գրկած թևերուս մեջ, ձեզի՛ կուգամ,  
Ձեզի՛ լեռներն իմ երազիս, նո՛ր երազիս:  
Հողիս պճնած գեղեցկության շքեղանքով՝  
Ձեզի՛, լեռներն իմ երազիս, ձեզի՛ կուգամ...

Տեսն՞ք ինչպես բեռնավորված եմ գանձերով:  
— Աստղերու խոր անդորրությունն աչքերուս մեջ,  
Գեմքիս վրա ազնվական թախիժը լուռ փիշտերուն,  
Հպարտ ու ցուրտ ճակտիս մթին ծալքերն ի վար՝  
Մահվան խորհուրդը հեշտանքի մը պես փռված,  
Տիկզերը հեգնել զիտցող պղտիկ ձախա մ՛ալ շրթունքիս:  
Ահա, այսպե՛ս կուգամ ձեզի՛...

Լո՛ւտ վշտերեն ծյուրած տժգույն այտերով,  
Հին երազիս գիշերի դույն ափերակներն հողիս մեջ,  
Բայց աստղերուն անդորրությունն աչքերուս՝  
Ահա այսպե՛ս կուգամ ձեզի,  
Ձեզի՛ լեռներն իմ երազիս, նո՛ր երազիս,  
Թևերուս մեջ գրկած հողիս...

Ի՛նչ հեշտություն է այս փռված՝ համրուղ վրա:  
Կողերդ ի վեր կը մագլցիմ պուանց հեքի,  
Մայրամուտի թե՛ լույս թե՛ մութ շուրերուն մեջ  
կարծես հալած...

Հողի՛, հողի՛ եմ համակ,  
Կամ մեղեդի մը ներդաշնակ՝  
Որ երկրեն վեր, վե՛ր աստղերուն կը ձգտի՛...  
Ինչքա՛ն հեռու են, ինչքա՛ն օտար, ինչքա՛ն վար՝  
Հողն ու դողը աշխարհի...  
Շշուկ մը իսկ չի հասնիր հոս, վարի հըսկա ժխորեն,  
Այնքա՛ն վերն եմ...  
Բայց դեռ այնքա՛ն, այնքա՛ն վերն է  
Վարդագույն ձյունը կատարիդ, օ՛, բարձունքն  
իմ երազիս,  
նո՛ր երազիս...

ՏԻԵՉԵՐՔԸ ԵՎ ՀՅՄԲՈՒՅՐՍ

Այս իրիկուն՝  
Մանիշակներն իր աչքերուս  
Երբ համբուրել կ՛ըրթայի,  
Հանկարծ կեցա՛ օրորուն  
Ծղրը կապույտ շուրերուն...  
Մըտածեցի.—  
Ո՞րն է հարգի,  
Միկ մանիշակըն իր աչքին,  
Թե մարգրիտներն երկրնքին:

Ու գտա որ  
Մեծ Բնակիչն երկնավոր  
Նվա՛զ հարուստ էր քան ես.  
Իր Տիեզերքն, իրավ որ,  
Այնչա՛փ էր փոքր՝ համբույրես...

### ԿՅԱՆՔԸ ԵՐԱԶ Է

Սերն իսկ, այս գիշեր,  
Չունի ինձ հրավեր...  
Մեռած են ազվոր  
Իղձերը բոլոր.  
Ու Ձայնը նորեն  
Մութ հեռուներեն  
Նույն բանը կ'ըսե.  
— Կյանքը երա՛զ է...

### ԽՆԴԻՐԱՆՔ

Սունկերուդ վըրա  
Քրնանա՛մ նորեն.  
Հոգիս կը վախնա  
Այս մո՛ւթ գիշերեն:

Սունկերուդ վըրա  
Քույլ տուր որ մոռնամ  
Քե մահը կուգա  
Ալ վերջին անգամ:

Երգե՛, սիրական,  
Քրնանա՛մ նորեն.  
Դե՛ր կ'երևան  
Գիշերին խորեն...

Մատներովդ ազվոր  
Ճակատըս շոյե.  
Հոն խոհ մ'ամեն օր  
Հոգիս կը ծյուրե:

Բայց այնքա՛ն վերեն  
Սեռես ինձի,  
Որ հոգիս նորեն,  
Նորեն թևածի՛...

### ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱ

Ոտքիս տակ՝ նույն ճամբան է ուր լուռ կը քալեմ,  
Փոշիով ձյունոտած՝ ալևոր նույն ճամբան,  
Ուրկե շատ եմ քալեր, ուր թողեր եմ շա՛տ բան  
Հոգիես... Հոգիես վերջը զա՛յն կը սիրեմ...

Մեկ քովին ան ունի պզտիկ լեռ մը խոհուն,  
Որ ամեն իրիկուն իր երազը ունի.  
Մութ երազ մ'է որ միշտ կը ձգտի անհունի՛...  
Ա՛հ, իրերը կ'ապրին, կ'ապրի՛ն լուռ ու անքուն:

Մեկ քովեն ալ կ'իջնե սա կապույտ հովիտին  
Հիքությունը պարկեշտ՝ որ ցորենն է գրկած.  
Լեռան պես ան շունի՛ տրամություն ու կասկած,  
Այլ կ'ըսե՝— գարո՛ւն է, հարսնուկներս թող ծաղկին...

Այս երկու ընկերներն ալևոր ճամբային՝  
Մտածել կուտան ինձ մեր ճիգին ապիկար.  
Անձկագին կը ձգտինք բաներու որ շեն գար,  
Մինչ կյանքին հարսնուկները մեզի կը նային...

### ՃԵՐՄԱԿ ԳԻՇԵՐ...

Մո՛վը: Հանդարտ՝ ինչպես մարմանդ մը ձյունե:  
Երկինք մը՝ որ տժգույն է,



Մշառածուսն ու համարքն ավելի  
Հոգիս, միշտ  
Թեև անվիշտ,  
Բայց և լի՝  
Մութ ըղձանքովն անկարելի համբույրին  
Աստվածունչն մը աչքին...

Մա՛վր: Նրման մեռնող որբուկ մանուկն:  
Երկինք մ'ուրկե աստղեզն հագնած կը թափին:  
Գիշեր է:  
Հագիս զըրկած՝  
— Ինչպե՛ս, ինչպե՛ս, Տե՛ր Աստված —  
Անցնիմ այսքան վիհերե...

Բայց, ի՛նչ ներմակ, բայց, ի՛նչ ոտախ գիշեր է...  
Կարծես իրավ Աստված մ'ըլլար՝  
Յր մարդերուն ցավին համար  
Փրօքըլա՛ր...  
Լեւակի բույր մը վարեն,  
Աւ նորե՛ք, ու նորե՛ն,  
Վախկոտ, հերոտ հոգիես դուրս կը մայրի՞մ  
Կապույտ աչքերն Երազին...

Ա՛հ, կը ներե՛  
— Այնպե՛ս ներմակ, այնպե՛ս ուրախ գիշեր է —  
Ճակատագրին արդյոք ինձի այս գիշեր...

Մտախ վրտ, հույսի տեղ՝ սե՛, սե՛ փուշեր...

**ԳՅՐՆԱՆ ԳԵՄ**

Բնության փառքն է ահա, արքայորին շողողուն:  
Ահա արեն է արբշտուն, լո՛ւյսը, լո՛ւյսը հեթանոս  
Յր հե՛ ի հե՛, հորդաճոս, կապույտն ի վար կը թափի,  
Վերագարթած հողին տալու անուշ հույզերն ավիշին...  
Միջօրն է. Գարնան հեշտի՛ն միջօրն.  
Սե տատասկեն մինչև լիլլան, մինչև վազգիլուն հրապոյտ  
Եզ հեշտանքով մ'ահա գինով՝ արե՛, արե՛ կը խմեն...

Ամեն կողմ դող, ամեն կողմ՝ հույզ, ամեն կողմ երգ,  
Հոս կը սողան, հոն կը ծաղկին, հոն կը թռչին,  
Ամեն կողմ բույր, թույր ու համբույր,  
Հոս կը ծնին, հոն կը ծփն, հոն կը փրճե՛ն...  
Ահա տարմերն են ասոնք՝ կյանքով արբշտ  
Թռչուններուն,

Որ, ալևոր — բայց ի՛նչ հզոր — ծառերուն մեջ  
Թաքնված,  
Միրո տունը կը տանեն...  
Իրենց գույն-գույն փեսուրներուն սարսուտն ահա  
կը տեսնեմ,

Մինչ, գաղչ սյուրին համաչքին տակ, լանջքերն  
Իրենց ըսպիտակ  
կը հորդին լուռ հեշտանքով, այնպե՛ս, այնպե՛ս կը հևան...

Մ՛ քերթվածը իրենց երգին...  
Ահա շյուղերն ավշահեղձ՝ մեղմ օրրումով կը կթին,  
Երբ սիրահար զույգերն անոնց, թռչչոններով խոլական,  
Միրո ցավը հեշտանքի վերածելու կը ճգնին...  
Ու կը հևա՛ն, ու կը հևա՛ն, լանջքերն իրենց ըսպիտակ  
Այնքան անզոր են՝ հզոր ցավին համար վայելքին...

Մո՛ւրբ բնություն...  
Մեռելներն իսկ պետք է զգան, կը խորհին,  
Լքումին մեջ իրենց տրտում գիշերին,  
Ողջ տարրերուն այս պոռթկումը խելահեղ,  
Այս լույս համբու՛յրը երկնքին ու կյանքին...  
Աստվածային բնություն,

Կուզեմ ըլլալ ես գերին քու հեթանոս քմայքին...  
Քու բույրերուդ, քու թաշտերուդ ծովին մեջ  
Լողա՛լ, լողա՛լ, նույնիսկ խեղդվիլ կը տեսնամ.  
Ա՛ո զիս, ա՛ո զիս.  
Ահա քեզի կը հանձնեմ, քու սերերուդ,

այանքի տրտում գիշերներն դատարկացած  
Իմ հոգին...

Ա՛հ, թող նորե՛ն, ինչպես հին-հին օրերուն,  
Լույսով, Հույսով հորդի ան...

Հոգիս գինով է այսօր  
Քու աչքերուդ այդ ծով ծով  
Գինիով...  
Մառերուն տակ հեշտօրոր՝  
Հոգիս գինով է այսօր:

Հեշտա՛նքն այս մութ գիշերվան...  
Ա՛հ, թող շողերն արևին  
Չերևի՛ն,  
Մինչև ըլլանք մենք անհետ՝  
Անդունդն ի վար, բեզի հետ...  
Մառերուն տակ հեշտօրոր՝  
Հոգիս գինով է այսօր:

ՄԱՀՆԻԳ

Պիտի մեռնի այս գիշեր.  
Պիտի մեռնի՝  
Թեև Աստված գիտե թե  
Քսան զարուն է ապրիբ  
Ան հազիվ թե...

Անուշ տղան՝  
Շուշանի պես ճակատով.  
Հպարտ տղան՝  
Միրան անհունեն միշտ խռով:

Ա՛խ, հովը չար  
Գոնե վայրկյան մը դադրեր,  
Մինչ անդադար  
Փեղկերն ի վեր  
Երգն իր կ'երգե  
Խելագար...

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ  
ԵՐԳԵՐ

ԳԻՇԵՐ

Ո՛չ մեկ հավատք...  
Հիմա հոգիս ավելի՛ մերկ է քան անտառ մը հրդեհված,  
Ու մտածումս ավելի ցուրտ՝ քան թե ձյունը լեռներուն,  
Թեև նույնքա՛ն վրճիտ...  
Իսկ հույզերս ու հին սերերս կարոտագին կ'երազեն՝  
Իմաստության այս ձյունին տեղ՝  
Խե՛նթ արևը իմ պատանի օրերուս...

Ո՛չ մեկ հավատք...  
Ահ, մինչև իսկ չեմ հավատար,  
— Թեև ահա մայրամուտ է անամպ, պայծառ —  
Թե աստղերը ըստե մ'հետո,  
Երկնքին վրա,  
Հոգիներու պես տարորեն,  
Իրենց հստակ կուսությունը պիտի բերեն...  
Եվ թե կարո՞ղ պիտի ըլլամ,  
Այս գիշեր ալ,  
Իրենց լացած նիհար լույսով,  
Հին հուշերու սա ալևոր ճամբուն վրա  
Քի՛չ մը քալել...

Ո՛չ մեկ հավատք, ո՛չ մեկ հավատք...  
Աչվրներուս գիշերին մեջ,  
Ինձ կը թվի,  
Մոայլ մատներ երբեմն հանկարծ կը մըխրճին,

Հոն խեղդելու հույսս անարյուն,  
Որ սնտերունը ջուհի մը պես կ'ազնվար...  
Իսկ հոգիիս քարայրներուն տակավ կ'իջնե  
Լուսթյուն մը հոգի գուհն՝  
Ուր կը ճոճին,  
Պաշույններու պես առկախ,  
Սառույցնե՛րը ճակատագրին...  
Անոնցմե վար, շիթ առ շիթ,  
Մա՛հն է որ իմ Կյանքիս վրա  
Ցուրտ նվազով մը կ'իյնա...

### ՆՈՅՆՄԱՐԵՐ

Պարտեզներն Ջնշումն անցա՛ծ է արդեն՝  
Վարդենիները թախիծե կը դեղնին...  
Ու մայրիներ երազն իրենց կ'ավարտեն՝  
Նրկընքին դեմ թոթվելով սեզ կատարնին:

Վերը, ամպեր՝ լիճերու պես սպիտակ:  
Տեղ-տեղ կապույտը կ'երգե դեռ Ճրգը հին:  
Ո՛չ մեկ խոռվք: Աստուծո խիղճն է հըսաակ:  
Քուշուններ լուռ, կը գաղթեն, սուգն հետերնին...

Վարդենիները թախիծե կը մեռնին...

### ՏԱՐՏԱՄ ԲՈՊԵ

Աստղեր կան ու չրկա՛ն...  
Հեռուն կը հոսի  
Ցավոտ երգ մ'աղջրկան՝  
Որ Ցավիս կը խոսի...

Մինչև ե՛րբ պիտի լա  
Հիվանդ երգն աղջրկան.

Աստղեր կան ու չրկա՛ն...  
Աստղեր կան ու չրկա՛ն...

Դեռ կուզա՛, դեռ կուզա՛  
Մեռնող երգն աղջրկան.  
Հոգիիս սուգին վըրա  
Սերեր կան ու չրկա՛ն...

Ան Ձե՛...

Հոգիս կը տանդե  
Ջութակ մը հեռու.  
Իզո՛ւր շուքերու  
Կը նայիմ — Ան չե՛...

Ահ, նվագը՛ն այս խոր  
Ամառ գիշերվան.  
Կարծես թե կուլան  
Աստղերը բոլոր...

Իզո՛ւր շուքերու  
Կը նայիմ — Ան չե՛...  
Հոգիս կը տանդե  
Հոգի մը հեռու...

### ՊԶՏԻԿ, ԱՂՎՈՐ ԱՂՋԻԿ

Պըզտի՛կ աղջիկ, աղվո՛ր աղջիկ.  
Ինձմե հեռու.  
Կը վայլեն քու վարդ ու համիկ  
Լոկ աստղերու...

Իզո՛ւր ճակատող ինձ կ'երկարես  
Քի համբուրեմ.  
Թախիծն առավ լույսն ալքերես,  
Ու ես կո՛ւյր եմ...

Ու ես քեզի, տես, կը բերեմ  
Հոգի մը ծեր...  
Աստղերուն տար — ես կը ներեմ —  
Համբույրդ ու սեր...

Պըզտի՛կ աղջիկ, անո՛ւյշ աղջիկ,  
Ինձմե հեռո՛ւ.  
Կը վայլեն քու վարդ ու հասմիկ  
Աստվածներո՛ւ...

### ՄՈՒՐՈՒՄ

«Երթա՛նք, երթա՛նք», կ'ըսեր, «հեռո՛ւն,  
Մութ բըլուրին ծաղիկներուն.  
Հոն նվազի՛նք անհունորեն՝  
Բըլուրին մութ ծաղիկներեն...»

«Զերթա՛նք, շերթա՛նք», ըսի իրեն,  
«Զե՛ս վախնար մութ հեռուներեն.  
Ես լրսած եմ մահերգն անհուն  
Մութ բըլուրին ծաղիկներուն...»

Չուզեց լրսել, գընաց հեռուն,  
Մութ բըլուրին ծաղիկներուն.  
Դեռ կ'իմանամ լացը իրեն՝  
Բըլուրին մութ ծաղիկներեն...

### ԿԸ ՉՅՈՒՆՆ

Հոգիս կեսգիշեր մ'է՛ ձմեռնային,  
Ուրկե տակավին երկինք կընային  
Հիվանդ ու անտեր  
Քանի մը լապտեր...

Բայց ալ կը ձյունե՛՛ ճամբուն վրա Հուլիսին  
Ուր հոգի տվող սերեր կը մըսին:  
Սև ճամբորդ մ'հեռվեն  
Կուգա համբորեն..

### ՄԻԱՅՆ ՔԵ...

Ճերմա՛կ աղջիկ, ինձի կ'ըսես  
Ականջս ի վար,  
Որ ըլլաս փոքր իմ սիրահա՛ր  
Տըրտումներս:

Եղի՛ր: Միայն թե կը լրսե՛ս  
Ողբն անտառին...  
Հովերն աշնան անկե առի՛ն  
Երազն իր վես.

Իմ սիրտս է ճի՛շտ անտառին պես...

### ՀՈԳՆՈՒՓՅՈՒՆ

Բախիժ մ'անհուն  
Մըտածումիս մեջ կը սուզի այս գիշեր...  
Այս իրիկուն,  
Վարդերուն վրա, արտասուքս ի՛նչ անույշ էր...

Կը բընանան  
Սերերս, հոգնած, Պատրանքի մե՛ծ լըճին վրա...  
Մութ, անսահման  
Հըպարտություն մ'անոնց վերև կ'աղեղնա...

Ժրպտով մը լայն  
Կը մըտածեմ երազներուն ու կյանքին...  
Հո՛վը աշնան.  
Դուրսը, մութին, ծառերն հարկավ կը կըքին...

Անո՛ւրջ, անո՛ւրջ.  
Աստղե՛րն էին որ մտածումս կ'օրրեին...  
Լամպարիս շուրջ  
Ցայգաթիթե՛՛ն մ'ունիմ հիմա լոկ մըթին...

ՆՈՃԻՆ

Կապույտն ի վեր խորասուրճ  
Սա մեծ նոճին կը նիրհե.  
Զինք խըռովագ ո՛չ մեկ հուշդ  
Կ'ընդունի ան աշխարհե:

Ու մենավոր ու խոճուն՝  
Կը զգա զեփյուռն հաղիվ թե.  
Գիշերներուն մեջ անհուն

Երբեմն հանկարծ կ'աղոթե:  
Ու կը նիրհե՛, կը նիրհե՛...  
Մինչև որ մութ հեռուն  
Շանթ մ'հորիզոնն հըրդեհե:

Ահ, մեծ նոճին, այն ատեն,  
Փոթորկին տակ գալարուն՝  
Կերգե իր ծա՛վն անանուն...

ՀՈԳԻՍ

Հոգիս պզտիկ աղբյուր մըն է արծաթե,  
Գիշերին մեջ զըզըլացող ու լացող,  
Որ քեն շունի ժայտերուն գեմ, կ'աղոթե՛,  
Ու լուսնակեն կը սպասե լոկ շիթ մը՝ցող...

Ո՛չ մեկ ուրի՛ ճամբուս վըրա ամաչի.  
Կործանեցան բոլորը մե՛ծ հովերեն.  
Հոս-հոն ագռավ մը լոկ շուղիս կը նաչի՛  
Բայց՝ ես կ'երթամ զըզըլալեն ու լալեն...

Ինչու որ, օ՛, գիտե՛մ թե՛ զք մը ազվոր  
Պիտի գա Կույսըն, անտառներու խորերե,  
Ու հակելով շուղիս վըրա մենավոր՝  
Պիտի ափին մեջ մարգրիտնե՛րըս համրե...

ԱՀԱ ԱՐԴԵՆ

Ահա արդեն կրամքք նորե՛ն  
Ու մեն մի աստղ իմ ա՛տ ունե՛ն.  
Ահա արդեն մարմանդներեն  
Կ'անցնի սարսու՛ռք անհունին...

Նորե՛ն, նորե՛ն, մարմանդներեն՝  
Երազն աչքիս՝ կը դեգերիմ.  
Հավա՛տք նորեն ինձ կը ծորեն  
Սև նոճիներն իսկ մըտերիմ...

Եվ ավերակ սըրտիս խորեն,  
Նորե՛ն, նորե՛ն, ահա կ'երգե  
Կյանքի Սըրինզը մեղմորեն. —  
Վա՛րդ կը բացվի մեն մի վերքե...

Եվ այս լոին մարմանդներեն  
Մինչ կը քալիմ՝ արցունքն աչքիս՝  
Գուն շե՛ս գիտեր, քույր, հեռունն,  
Թե քեզ որքա՛ն կ'օրհնե հոգիս...

ԵՐՋԱՆԱՌԻՓՅՈՒՆ

Ես այսօր  
Ճառագա՛յթ մ'եմ բոսոր...

Աչքերուս, հեշտորոր,  
Այնքա՛ն լույս ունիմ որ  
Կը ժպտիմ  
Մըտերիմ  
Արևին...

Ու վարդե՛ր կ'երկին  
Արևին  
Ոսկեզեն  
Հոգիեն...

Ես այսօր, ես այսօր  
Արեգա՛կ մ'եմ բոսոր...

## ԳԱՐՈՑ

Կ'ուզեմ երթա՛լ ես նորեն  
Հին օրերու Աղբյուրին.  
Ահ, որքա՛ն քաղցր էր, դյուրի՛ն,  
Հմայել այդ ջուրը լըռի՛ն,  
Մունկի վըրա, համբորեն...

Կ'ուզեմ ըլլալ ես նորեն  
Այդ Աղբյուրեն, ահ, գինո՛ւլ,  
Կ'ուզեմ բանալ, քովք քով,  
Հիվանդ ձեռքերըս, ժամերո՛ւլ  
Հմայելու ցուրտ այդ ջուրեն...

Երթա՛մ Աղբյուրը նորեն...

## ՍՊԱՍՈՒՄ

Այս իրիկուն,  
Ահ, տարորե՛ն քաղցրությունը իմ աչքերուս...  
Իմ աչքերուս՝ որոնց շըքեղ գիշերին մեջ՝  
Ահա՛, ահա՛,  
Հոգիս եկեր կը քընանա...

Իրա՛վ, իրա՛վ, աչքերուս մեջ,  
— Ահ, շե՛ք տեսներ —  
Հոգի՛ս է որ պառկած հիմա  
Հստակ, հստակ կը քընանա...  
Կը քընանա՝ անտառներու կույսի մը պես,  
Իր Երազին շղարշներով փաթթված...  
Ու երազին մեջ կ'երգե.—

Ան հիմա

Պիտի գա՛...

Այս իրիկուն.

Ահ, տարորե՛ն քաղցրությունը ճամբաներուն...  
Իրա՛վ, իրա՛վ, շե՛ք լսեր դուք,  
Ե՛րգը՝ երկինք նետվող շըքեղ սա հասկերուն,  
Որ հովին հետ կը պարեն պար մը հեթանոս՝  
Արեգակին ու աստուծո փառքին համար...  
Ահ, անոնց Կյա՛նքը խորունկ...  
Եվ Ո՛ւյժն անոնց  
Քարեն ավիշ ստեղծող սեզ արմատներուն...  
Եվ անոնց Սե՛րն, ու անոնց Կա՛մքըն ըլլալու...

Տեսե՛ք, տեսե՛ք, ինչ երկյուղած սլաշտամունքով  
Սա ծերունի բազեղն երկինք կը մազըլցի՛  
Համբուրելու գեղեցկությունն արեգակին...

Այս որքա՛ն վարդ՝ հընամենի պատերն ի վար...  
Իրա՛վ, իրա՛վ, շե՛ք լըսեր դուք,  
Ե՛րգը Հույսին  
Որ այս գույն-գույն ու կըրտած վարդերեն դուրս  
Միածանի շըքեղանքով մը կը հոսի...

Ան հիմա

Պիտի գա՛...

Ու կը քալե՛մ, ու կը քալե՛մ,  
Այս բրունկող կանաչ ու մեծ հըրդեհին մեջ՝  
Հըպարտ, պայծառ քայլերով...  
Ու կը հոսի մազերս ի վար, ծոծրակս ի վար,  
Դղըրդելով գորշ թմրությունն  
Իմ այս վըտիտ մարմինիս՝  
Ուրախությո՛ւնն արեգակին...

Ան հիմա

Պիտի գա՛...

Ահ, խելահեղ վա՛զըր իմ նոր արյունիս...  
Շրթունքներես ահա վարդե՛ր կը բրունկին...  
Եվ ուղեղիս գիշերին վրա,  
Արշալույսի ցողերուն պես,

Ստեղծագործ հավատքն է որ ահա անկողն  
Կ'իջնե՛, կ'իջնե՛...  
Ան հիմա  
Պիտի գա՛...

### ՔԱՉՄԵ ՆԵՌՈՒ

Փեղմն հեռու՛  
Անդանգներս՛ւ  
Կը մտածեմ շատ անգամ,  
Իսկ երբ կուգամ  
Քու հոգիիդ երգին տակ՝  
Այնպե՛ս հրատակ,  
Կ'ըլլա հանկարծ ամեն բան...  
Նույնիսկ ճամբա՛ն  
Որ դիս մահվան  
Պիտի տանի՛  
Հանկարծ ճերմակ կը հազնի...

Փեղմն հեռու՛  
Սարսափն անծայր գիշերներու  
Այնպե՛ս ուժգին  
Կը փաթթվի իմ հոգիին՝  
Որ բյուր անգամ  
Սունկի ալ գամ  
Չե՛ն ունենար աչքերս արցունք,  
Ու հոգիս՝ խունկ...

Ազոթքս ի՛նչ բուռն է ու դյուրին,  
Երբ որ լրոսին  
Սունկի կուգամ՝  
Ա՛լ ուժարամ,  
Քու հոգիիդ երգին տակ՝  
Ծղ ի՛նչ հրատակ  
Կ'ըլլա նորին ամեն բան...

Չույթիակ ճամբա՛ն  
Որ դիս մահվան  
Պիտի տանի  
Կ'ըլլա այնպե՛ս քնատանի...

### ՅԱՐՈՐԵՆ ԽՐԱԶ

Այս իրիկուն, ես ա՛յ մեկուսն պիտի ցույց տամ  
Դձ այս տարտամ  
Աչքերուս մեջ նվազկտառազ երազն անհուն  
Իմ տենչերուն...

Այս իրիկուն,  
Ես ա՛յ մեկուսն  
Պիտի ըսեմ թե կը սիրեմ ահա ձորեն  
Անհունորեն՝  
Կեչլաներու գիշերային սափերին տակ,  
Աչքերբս փակ,  
Նըստիլ երկա՛ր ու մըսամըսալ...  
Ու հովի՛ն տալ  
Նույն կարտանկարս տեհունի՛  
Պաղատելով որ տանի  
Անո՛ր, Անո՛ր...  
Ահ, սրբա՛ն նոք  
Ծամբա մ'ունիմ առջեւ հիմա,  
Անոր փրբա  
Ամեն գիշեր  
Հոգիս ավեր  
Կ'երթա հասերաչք մ'առանկալ մեծ աստղերին՝  
Որոնք վերեն  
Կուս կը ժարեն  
Նո՛ր բացերով Արշալույսի մ'համարքն հրատակ  
Կեչլաներու գիշերային սափերին տակ...  
Ու ես նորեն, ու ես նորեն,  
Խաղաղորեն,

Լեյլաներու գիշերային ստվերին տակ  
Կը նստիմ լուռ, աչքերըս փակ,  
Մըսմըտալու...  
Ու խենթեցող հովին տալու  
Իմ տարորեն կարոտներս անհունի՜  
Պաղատելով որ տանի  
Անո՛ր, Անո՛ր...

Այս իրիկուն,  
Ես ո՛չ մեկուն  
Պիտի ըսեմ  
Թե կը սպասեմ  
Քրիստոսի՜ մը հավատքով  
Հոգիս գինով՜  
Նոր բոցերով Արշալույսին...  
Անոր հակինթ շողերն արգեն կ'առվահոսին՜  
Հստա՛կ, հստա՛կ՜  
Լեյլաներու գիշերային ստվերին տակ...

Այս իրիկուն, ես ո՛չ մեկուն պիտի ցույց տամ  
Իմ այս տարտամ  
Աչքերուս մեջ նվազկոտող երազն անհուն  
Իմ տենչերուն...

Ինչու որ շա՛տ ես կը վախեամ  
Թե կ'արթննամ  
Այս մեծ, շքեղ ու տարորեն  
Իմ երազեն...

### ԲՈՆԿՈՂ ԻՐԻԿՆԱՄՈՒՏ

Կյանքի հույզերն հոգիս նորեն կը փոթորկեն...  
Նորեն վըսեմ գինո՛վն եմ ես այս իրիկուն...  
Ամբողջ օրը,  
Հոգիս անո՛ւյշ տառապանքի մը շրթներով,  
Վարդենիի մը լուսլույսն է լուկ խըմեր...

Ամբողջ օրը, ամբողջ օրը,  
Ես երազեր եմ, արևուն տակ ծերադրած,  
Վաղվան արյունս, Արշալույսին պես գեղեցիկ,  
Զոր ինձ համար՝ ճառագայթները անհունին  
Սա օրհնված ցորեններուն մեջ լուռ կ'երկընեն...

Ահա նորեն, ահա նորեն  
Հորդո՛ւմն հույսին արքայական աղբյուրներուն՜  
Որոնք կ'անցնին, մայրամուտի սա մեծ ժամուն,  
Իմ հոգիս ծաղի՜կ բացող անդունդներեն...  
Ի՛նչ հուզումով, դըրրող ի՛նչ սարսուռներով  
Կանշարժանամ՜ մայրամուտի սա մեծ ժամուն,  
Ունկնդրելու կյանքի այս մութ փոթորիկին՜  
Որ անձանոթ երկինքներե կ'իջնե հանկարծ  
Իմ քնացող արյունս այսպես ալեկոծել...  
Օ, բյո՛ւր կայծեր կ'ելլեն մտածումս հրդեհելու...  
Ու կամքըս որ այս հրդեհեն կը բռնկի  
Նո՛ր կատարներ կը նըվաճե հանկարծորեն՜  
Դեպի Անտառը երազված...

### ԵՂԵՎԻՆԵՐԸ

Անտառին մեջ: Ո՞րքան ատեն է հոս եմ...  
Եղևիններն ահա ամենքը կ'երգեն.  
Երա՞ղ մ'արդյոք: Իրավ, ինչո՞ւ կ'արտասվեմ:  
Բայց այս կատարը հեռու չէ՛ երկընքեն...  
Եղևինները կ'երգեն...

Եղևիններն ահա ամենքը մութ են:  
Ասո՞նց ալ սիրտն, իմիսիս պես, կը նաչի  
Որ հայտնվի՜ Ան՝ որ կյանքի անդունդն  
Կ'անցնի մե՛կ հեղ: Ահ, այդ ճամբա՛ն ամայի...  
Եղևինները մութ են...

Եղևիններն ամենքը մեկ կ'աղոթեն:  
Ահ, բազուկնե՛րն այդ երկարած անհունին...



Կ'իշնեմ խորունկն իմ հոգիս՝ որ ազգին  
Տաճա՛ր մ'է հին: Տաարակներ հոն կը մեռնին  
Ի՛նչ խոր գիշեր: Աիրտըս կ'այլի՛ կարտան...

Եզներնեքն ամենքը մեկ կ'ազոթեն...

### ԱՐՉԱՄԱՐՉԱՆՑ

Ցավիս խորերն, տե՛ս, ճակատագրե՛ս  
Անսահման ծիծաղ մ'ունիմ քեզի դեմ.  
Գիտցի՛ր որ նորեն քեզ կ'արհամարհեմ,  
Չկարծես թե ա՛լ զիս կործանեցիր...

Իզո՛ւր կը թափես մոխիր սրբախ վրա.  
Ճառագա՛յթ կա հոն՝ իշած անհունեն...  
Զահերն հարվածիդ լոկ ոսկորներս են,  
Անտե՛ք պետք շունի՛ միտքըս որ սուրա...

Պայծա՛ռ է ճակատս՝ արշալույսի պես:  
Հոգիս՝ միշտ աղվոր, միշտ հպարտ, ժրպտուն՝  
Գեո կը սավառնի՛ անհունե՛ն անհուն...

Իզո՛ւր սրբախ վրա մոխիր կը թափես.  
Աստվածնե՛ր կան հոն՝ իշած երկընթե՛ն.  
Ցավիս խորերն, տե՛ս, անունք կ'երգե՛ն...

### ՇՔԵՂ ՕՐՉԱՍ

Երկընթի մե՛ծ դուռներուն պես  
Բա՛ց հոգիս թևերդ մարմար,  
Եթե մեռնի՛մ իսկ հուզումես՝  
Այդ մահն ապրի՛լ է ինձ համար...

Թո՛ղ որ հանգչի կարծրիդ ձյունին՝  
Հիվանդ հոգիս ու շքեղահատ,

Թո՛ղ քեզ հրծծե՛ն Ծրագն իր փին  
Որ փիս այսբա՛ն ըրավ գունատ...

Ու փող մեռնի հոգիս աջպե՛ս.—  
Հպա՛րտ՝ հպարտ մարմնիդ վրրա.  
Լոկ իր Ծրագն հրծծելով քեզ...

Զի ես կուզեմ որ ան սուրա՛  
Մահվան գրրկին մեջ իսկ ինկած.  
Ես սիրեցի քեզ իբր աստված...

### ՎԵՐՆԵԼՔ

Հասա՛, հասա՛, հոգիս հետ,  
Քեզի դուռներն անհունին.  
Մտածումներդ կը տծգունին,  
Կ'ըլլան հուշե՛րս իսկ անհետ...

Այս ի՛նչ գիշեր է տարորեն...  
Այս ի՛նչ երկինք ու աստղեր...  
Կարծես մարմինս եմ ալ թաղեր  
Ու կը փախչի՛մ դաշտերեն...

Կը ծընրադրե՛մ քեզի, ո՛վ Սեր,  
Գո՛ն բերի՛ր զիս մինչև հոս.  
Առաջ անդո՛ւնդըն էր ու քառս.  
Հիմա աստղե՛ր ու աստղե՛ր...

### ՄԵՍ ԳԻՇԵՐԻՆ ՄԵՋ

Մե՛ծ Գիշերին մեջ կ'ընկղմիմ նորեն.  
Միակ ուղևորն եմ անբավ ճամբուն.  
Մութ է, շա՛տ անցեր եմ լապտերներեն,  
Ու պիտի երթա՛մ դեռ գիշերն ի բուն...

Ոչ մեկ աստղ ունիմ ինձ ընկեր, ոչի՛նչ...  
Գիշերվան հովն իսկ ձրգեցի հետուն.  
Լոկ հոգիս ունիմ ու աչքերըս շինջ.  
Ես կ'երթամ լքուել նվա՛զն աստղերուն...

### ԳԻՇԵՐՎԱՆ ՄՈՎԸ

Մովափ իշա, ալիքներն մագնիսված:  
Ի՛նչ աղվոր է, գիշեր ատեն, հըպա՛րտ ծով.  
Յաղմոսերգու այս ջուրերուդ երգը ցած՝  
Որ կ'ողողե զիս, անաստվածըս, աստվածո՛վ...

Ու մինչ արձան կ'ըլլամ սա մեծ ժայռին քով,  
Աչքըս աված հորիզոնի մը վայրի՛  
Երգըդ այնպե՛ս կ'օրորե զիս աղոթքով  
Որ խունկի պես այս մըռայլ սիրտըս կ'այլրի...

### ՍԵՐՍ ՈՒ ՀՈԳԻՍ

Իմ սերըս նման է  
Օվկիանի մը անհուն՝  
Ուր հոգիս, օրն ի բուն,  
Մարգարի՛տ կը հանե...

Իմ հոգիս նրձան է  
Երկընթի մը անհուն՝  
Ուր իմ սերըս օրն ի բուն,  
Բույլ, բույլ ա՛ստղ կը ցանե...

### ՄԻԱՅՆ ՔԵ՛Չ...

Կես-գիշերի երկընթեն՝  
Լըռությունով մը անբավ՝  
Աստղե՛րն անգամ քե՛զ կ'երգեն...

Ու մենավոր թուփերեն՝  
Լըռությունով մը անբավ՝  
Վարդերը քե՛զ կը բուրեն...

Ու մինչ կ'երթամ հովին դեմ՝  
Լըռությունով մը անբավ՝  
Ես միայն քե՛զ կաղոթեմ...

### ԳԻՇԵՐՆԵՐ ԿԱՆ

Գիշերներ կան այնպե՛ս լույս որ՝ կարծես թե  
Երկինքն ի վար կը կաթե  
Արծաթե  
Երգը հին  
Այն անծանոթ աշխարհին,  
Ուր կ'ըսեն թե աստվածները կը խորհին...

Գիշերներ կան այնպե՛ս մութ որ՝ կարծես թե  
Մառերն ի վար կը կաթե  
Արծաթե  
Երգը հին  
Այս գեղեցիկ աշխարհին,  
Ուր հոգիներ հոգիներու կը փարին...

### ԱԼ ՊԵՏՔ ՉՈՒՆԻՄ

Ալ պետք չունի՛մ ես երկընթի բաղձալու.  
Ինչու որ քու այս աչքերուդ մեջ աղու  
Ահա՛, ահա՛  
Ինձ կ'երևա  
Իմ երազած երկինքներուս կապույտը ծով,  
Բյո՛ւր աստղերով...

Ալ պետք չունի՛մ ես հարցընելու հովերուն  
Թե ո՛ր ճամբան է որ կ'երթա դեպի անհուն.

Ահա՛, ահա՛  
Ինձ կ'երևա  
Անհունասուղզ ալդ մեծ ճամբան արփավետ  
Որ կ'սկսի հոգիեդ...

### ՄՈՎՈՒՆ ԴԻՄԱՑ

Հոգիս այսօր մութ-կապո՛ւյտ է ծովուն պես,  
Եկուր լըռել իր ամայի փունքին...  
Հոգիս այսօր ե՛րգ ունի ճի՛շտ ծովուն պես,  
Եկուր լըսել՝ մինչև աչքերդ թըրջին...

Գիշեր է, մե՛ծ լուսնկայով արծաթե,  
Բայց լույսն այս ցուրտ, օ՛, չեմ կրնար սիրել ես.  
Իմ լուսնկան դո՛ւն ես, ամպե մը ծաթե՛,  
Եղիր Աստվա՛ծն իմ հրկընքին տրտմերես...

Հոգիս այսօր խենթեցե՛ր է ծովուն պես...

### ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

Ահ, կ'երգե՛ն շյուղերեն...  
Նոր ծաղկող գարունին  
Ամբողջ հե՛քը ունին  
Կյանքն այնպե՛ս կը սիրեն...

Ու կ'երգե՛ն, ու կ'երգե՛ն,  
Ճառագայթ կըտցելով...  
Ահ, այնպե՛ս են գինով  
Արևեն ու կյանքեն...

Սենյակես, երկյուղած,  
Կ'ունկնդրեմ այս երգին.  
Ու հոգիս անձկագին,  
Ազոթե՛լ կ'ուզե ցած...

### ԱՇՈՒՆ ԳԻՇԵՐ

Լուսնկա գիշերվան  
Քափառողն եմ լըռին.  
Մեր վարդեր կը դողա՛ն  
Որ ցուրտեն շրսառին...

Լուսնի լո՛ւյս ամեն դի,  
Նույնիսկ ի՛մ աչքերուս.  
Բայց ինչո՞ւ կը կաթի  
Սա արցունքն այտերուս...

Լուսնկա գիշերվան  
Քափառողն եմ լըռին.  
Երազներս կը դողա՛ն  
Որ լուսնեն շրսառին...

### ԵՐԿՅՈՒՂ

Սա ծեր լուսնկան,  
Տե՛ս, դեռ չէ՛ գրտեր  
Ոչ մեկ սիրական.  
Ու կուլա՛ անտեր...

Տե՛ս, դեռ չէ՛ գրտեր  
Սա հովը վայրի  
Իրեն ոչ մեկ սեր.  
Դեռ կը թափառի...

Հովն ու լուսնկան  
Նախա՛նձ են, գիտե՛ս.  
Փախչի՛նք, սիրական,  
Եվ ըլլանք անտես...

### ԼՈՒՌ ՑԱՎ

Գուհառ իր դեմքին  
Արցունք մը կ'իջա  
Ցուրտ ձեռքիս վրա...

Լրոսթյո՛ւնն այդ մութ...  
Աչքերն իր ունին  
Թախի՛ ծն անհունին...

«Ինչո՞ւ, քույր, ինչո՞ւ...»  
Արցո՛ւնք մ'ալ կ'իյնա  
Ցուրտ ձեռքիս վրա...

«Անդո՛ւնդ տեսար...»  
Աչքերն իր ունին  
Գիշե՛րն անհունին...

«Քեզ կը սիրե՛մ, քույր...»  
Հիվանդ կուրծքիս վրա  
Լուռ կը հեկեկա...  
Տե՛ր, մեզի գթա՛...

#### ԿԵՍ ԳԻՇԵՐԻ ԵՐԳ

Ահա լուսնկա  
Գիշերով եկա  
Քեզի՛, իմ ազվոր...

Մառերն հեռավոր  
Գիտե՞ս կ'ուլային  
Մահերգ մ'երկնային...

Բայց դեռ կը հոսեր  
Մարգրրտի պես սեր՝  
Մութ շուրերն ի վար...

Ու ես՝ հողմավար՝  
Համբույրիդ եկա  
Չամբեն լուսնկա...

Թևերդ վրզիս՝  
Աստղերո՛ւն տար զիս,  
Իմ ազվո՛ր, ազվո՛ր...

Մառերն հեռավոր  
Գիտե՞ս կ'ուլային  
Մահերգ մ'երկնային...

#### ԿԸ ՍԻՐԵՄ...

Կը սիրեմ իրեն  
Գիշե՛ր նայվածքին  
Տաղերը մեկին...

Կը սիրեմ իրեն  
Անդո՛ւնդ մազերուն  
Նվազն օրորուն...

Կը սիրեմ իրեն  
Մոծրակը ձյունե  
Որ երա՛զ մըն է...

Ու շա՛տ կը սիրեմ  
Իրիկնամուտին՝  
Համբույր մ'իր ճակտին...

Բայց ամենն շատ  
Կը սիրեմ իրեն  
Արցո՛ւնքն հոգիեն...

#### ԲԱՂՆԻՔԵՆ ԿՈՒԳԱ

Մազերն իր ներքին  
— Ջրվե՛ժ տարորեն —  
Մով ծով կը թափին  
Երկու ուսերեն...

Բազմիքին հուզաւ.  
Բույրերն օճառին  
Մտփրակին վըրա  
Դեռ կը թափառին...

Ու դեռ մատներն  
Շիթեր կը շողան,  
'Հոգի' կը բուրն  
Մարմինն իր շուշան...

Ու մինչ կ'երկարն  
'Համբույր մը վճիտ'  
Կ'ըսես նրկա՛ր է  
Սուրբի մը վրտիտ...

#### ԿՈՒՅԱԿ ԶՈՂԻ

Այս որբա՛ն վարդ նորին այսօր  
Աչքերուդ մեջ, իմ աղվո՛ր...  
— Քե՛զ եմ բերեր, մըռա՛յլ տըղա,  
Եկուր անոնց մեջ լողա՛...

Այս որբա՛ն աստղ, այս իրիկուն,  
Աչքերուդ մեջ, իմ անհո՛ւն...  
— Քե՛զ եմ բերեր, մըռա՛յլ տըղա,  
Սիրտըս սերին կը դողա՛...

Այս որբա՛ն վիհ, սակաթն, հիմա  
Աչքերուդ մեջ կ'երևա...  
— Գիշերն ի՛մն է, անսի՛րտ տըղա,  
Աստղերուս տակ դուն խաղա՛...

#### ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Կիսամութին մեջ հոգիիդ  
Պիտի իշնեմ այս իրիկուն.  
Քանի մը վարդ աղվափըթիթ  
Պիտի գողնամ ու տանիմ տուն:

Պիտի արդյոք վշտանա՛ս դուն...  
Գարո՛ւն է, քույր, ամեն տունի...  
Իմ տունըս, տե՛ս, ծի՛լ մը շունի...

#### ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ԿՈՒՅՍԵՐԸ

Միտա՛ր Մեծաբնցի Եղգի՛ձ

1.

Խո՛ր երազի պահեր կան՝  
Իրիկունները աշնան՝  
Երբ կը զգաս թե հանկարծ խուցըդ կը մտնե  
Հոգի մ'ազվար — ու ամեն բան կը մըթնե...

2.

Ու կը նըստիս անոր հետ լուռ քովե քով,  
Կամ կը պատմես, վըշտեդ տըծգույն, ապուհըս՝  
Կործանումներն հնօրյա,  
Եվ ան քեզի հետ կուլա...

Հետո երկա՛ր, երկա՛ր ատեն կը լռես.  
Ան միշտ քեզի կը նայի, մութ, տրտմերես.  
Դուրսը տակաւ կը շատնան  
Հոնդոյանները աշնան...

Օ՛, ըլլալ լուռ հոգիի մ'հետ ու միմեկ  
Որ գիտե՛ քեզ ավերակ առ ավերակ...

Սենյակին մեջ ամեն դի  
Շիթ շիթ արցունք կը կաթի...

Հանկարծ կը զգաս թե շրթունքներ ճակատեղ  
Կրնեն Գիշերն ու Մորմորումը անհետ...  
Ա՛լ չես լըսեր ոչ մեկ ձայն,  
Կը լսես Ձա՛յնը միայն...

3.

Օ՛, այդ Ձա՛յնը: Նույնքա՛ն հիվանդ ու մըթին,  
Որքան նվազն այն անծանոթ Սրինգին  
Չոր երազներ ես երկար,  
Երբ հոգիդ վիշտ մ'ունենար...

Ալ քեզ այնպե՛ս կը թվի թե, համրորեն,  
Կը սահիս վար մութ ջուրերու վրայեն...  
Ու մոռնալով կյանքը սին՝  
Կը շնչես խունկն այդ կույսին...

Ու հոգիիդ վիհերեն դո՛ւրս կը թափին  
Հոն թաքնված մութ-մութ վարդերն Ըղձանքին...  
Կը գինովնա՛ս պերճորեն,  
Աստվածային այդ բույրեն...

Ու հոգիիդ մշուշներեն կ'երևին  
Միածաններն երազված մե՛ծ Արևին...  
Այդ լույսին տակ, սուրբի պես,  
Մունկի կուգաս, կ'աղոթես...

4.

Հետո ժրպտով մ'ընտանի,  
Այդ բույրն անուշ կը մեկնի:  
Իզո՛ւր մութին մեջ կը ձայնես ետևեն.  
Մայրամուտի կույսերն այդքա՛ն կը տևեն...

ՄԻՄՈՂԱՅԻ ԵՅՈՒՂԸ

1.

Միմողայի շյուղ մ'էր բերեր  
Երեկ գիշեր,  
Ու բարձիս վրա դրեր էր զայն  
Գողտուկ, անձայն...

2.

Ուշ գիշերին երազ տեսա...  
Լեռան մը վըրա,  
Մառի մը տակ միմողայի  
Լուռ կուլայի...

Պզտիկ աստղ մը, տակավ-տակավ,  
Վըրաս իջավ...  
Բորնկեցա՛վ ծառը մեկեն  
Իր ճյուղերեն...

Ես չփախա.— Օձապըտույտ  
Բոցն էր կապո՛ւյտ...  
Ու կ'երգեին երկինքներեն  
Աստղերն ամեն...

Օ, հըրդե՛հն այդ միսերուս քով...  
Ի՛նչ հեշտանքով  
Փունջերն այրող միմողայի  
Կը գրկեի...

3.

Կը գրկեի... երբ որ հանկարծ  
Այդ բոցարժարծ  
Մառը խընդաց...— Ի՛նչ հրաշք, Տե՛ր,  
Իմ Սիրա՛ծս էր...

Իմ սիրածս էր, խո՛ւ աչքերով,  
Սերեն գինով...  
Մինչ կը խնդար՝ աստղե՛ր բերնին  
Կը վառեին..

Կը վառեին լույսով մ'այնքա՛ն  
Անըրջական՝  
Որ ձյուն մարմինն իր կը թրթռա՛ր  
Իբրև քընար...

Բայց գրկեցի զայն երբ սփռե՛ն  
Իմ որբ կուրծքին՝  
Ոտքերուս տակ հանկարծ մոխի՛ր  
Եղավ կարմիր...

#### 4.

Պիտի բերն ան այս գիշեր  
Նո՛ր ծաղիկներ.—  
Ահ, ձեռքերն իր հետք կը կրե՛ն  
Այն մոխիրեն...

#### ԳԻՆԱՐՐՈՒՔ

Լեցո՛ւր բաժակը՝ խըմե՛մ  
Գինին անո՛ւյշ հեշտանքին.  
Ալ կը ծաղրե՛մ այս կյանքին  
Սրբությունները դժխեմ:

Լեցո՛ւր բաժակը՝ խըմե՛մ  
Գինին կախա՛րդ հեշտանքին.  
Այսքան ցավով՝ երկընքին  
Ինչպե՛ս ճամբան ես գլտե՛նեմ:

Լեցո՛ւր բաժակը՝ խըմե՛մ  
Գինին բոսա՛ր հեշտանքին.  
Կուզեմ հո՛ւրը զըծոխքին,  
Ալ լուսնի լույսն ի՛նչ ընե՛մ:

Լեցո՛ւր բաժակը՝ խըմե՛մ  
Գինին պղտո՛ր հեշտանքին.  
Քիչ մ'ալ այս մութ վայրէջքին  
Սով-ծով խըռովքը փորձեմ...

Լեցուր բաժակը՝ խըմե՛մ  
Գինին հարո՛ւտ հեշտանքին.  
Գինով ըլլամ ու կյանքին  
Անմըտությունը երգեմ...

Լեցո՛ւր, լեցո՛ւր, որ խըմեմ,  
ՄԱ՛Ղն է ահա աչքիս դեմ...

#### ԵՐԱԶԱՆՔ

Աշնան առավոտ, տրտում, անարև,  
Աչքերըս գոցած՝ իրե՛ն կը խորհիմ;  
Այնքա՛ն կը խորհիմ, որ աչքերն իր սե  
Կը հալին, կ'ըլլան ե՛րգ մը մըտերիմ...

Աչքերըս գոցած՝ հիմա կ'ունկնդրե՛մ.  
Ա՛լ իր աչքերում չէ՛ որ կը խորհիմ...  
Հեռո՛ւ, ձյունափառ կատար մ'հասեք եմ.  
Աստված է այնքա՛ն մոտ ու մըտերիմ...

#### ԿՈՒԶԵՄ ԵՐԳԵԼ

Ահ, կ'ուզեմ երգել զարո՛ւնն այս ծաղկող,  
Տունկերը վայրի, տատասկներն հարբած,  
Երգե՛լ ա՛հ, երգե՛լ կույսերն այս շենչող,  
Ու սերն ու գինին, նույնիսկ քե՛զ, Աստված:

Երգե՛լ... Բայց սեմիս վրա է, ահա  
Մա՛հը՝ իր դեղին կըզակը ցըցած.  
Ու մերթ, ա՛հ, այնպես բիրտ Ան կը խընդա,  
Որ կ'անհիծե՛մ Քեզ, նույնիսկ Քե՛զ, Աստված...

### ԹՈՂԵՔ ՉԻՍ...

Թողեք զիս՝ ննջե՛մ...  
Այնքա՛ն եմ խըռով՝  
Գարուն գիշերով.  
Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ...

Թողեք զիս, դեե՛ր,  
Մի՛ նետեք զիս ծով,  
Գարուն գիշերով...  
Սիրտ չունի՞ս դուն, Տե՛ր...

### ՍՊԱՍՈՒՄ

Ձըմեու Ու դեռ կը սպասեմ, զերդ մահապարտ՝ ժըպտելեն,  
Իրերն աչքիս կ'երևան հեռու աստղեր մշուշոտ.  
Հոգիս փակ մատուռեն մեռած սուրբեր կը քալեն.  
Իրավ, որո՛ւ կը սպասեմ, այսպես ուրախ ու թախծոտ:

Իրե՛ն, Գիտեմ թե երբեք պիտի չիջնե՛ Ան իմ մոտ.  
Չիջա՛վ արդեն Ան երբե՛ք... ու ես գոհ եմ չիջնելեն.  
Աչքերն աչքիս կ'երևան հեռու աստղեր մշուշոտ.  
Հոգիս փակ մատուռեն մեռած սուրբեր կը քալեն...

Եկուր, եկո՛ւր այս գիշեր, սիրուհիի մը հանգույն,  
Ո՞վ Մահ, քեզի՛ կը սպասեմ մահճիս վրա՝ ժպտելեն.  
Մարմնիս ըզճերը բոլոր եղան աստղեր վարդագույն,  
Ու հոգիս մատուռեն սուրբերը մեղմ կը քալեն...

Եկո՛ւր, խունկի պես դեղին շու մատնեքուդ զգվանքով,  
Ջանոնք փափուկ սահեցուր շուրջը վիզիս սա ծյուրած,  
Ու մինչ հանձնեմ ես անոնց հոգիս՝ իր փակ մատուռով,  
Գուն շընջե՛ ականջիս զրույցըդ պարզ, անաստված:

Ա՛լ չեմ վախնար, չե՛մ վախնար կմախակերպ իրանեդ,  
Ու մինչև իսկ կը հավատա՛մ թե աչքերուդ մեջ դեղին՝  
Պիտի գտնեմ ավելի՛ սերն ու արցունքը Գուժին,  
Քան աստղերուն մեջ այդ ցուրտ՝ անխիղճ ու  
նենգ Արարչին...

### ՀԱՂԹԱՆԱԿ

Մութ գիշերին խորությանը ապավինած,  
Աստղերուն տակ,  
Փոթորիկին հեծեծանքին ունկնդրելով,  
Սըրտիս վերքը կը դարմանեմ  
Ես կրկին...

Հոգիս անդորր է՝ հերոսի մ'հոգիին պես.  
Աչքերուս մեջ, կամքիս կրակը լուռ ցաստմով կը վառի:  
Ինձ անծանոթ հեզություն մը, այնպես վայրի,  
Լուռ շրթներուս վրա թառած՝ կը ժպտի:  
Ի՛նչ հոյակապ վեհություն այս, գիշերին մեջ,  
Աստղերեն վար, նոճերեն վար, ճակատեն վար կը ծորի:

Հոգիս տակավ կը մթնե,  
Բայց ինչպես լա՛վ է այսպես.  
Ա՛հ, ինչու որ,  
Այս վայրենի տրամությունով է որ լոկ  
Հոգիս կըրնա  
Ասանկ հուզված գիշերներու խորհուրդին մեջ ընկղմիլ...

Փոթորիկին հեծեծա՛նքն այս...  
Լեզոններ կարծես թըշվառ ու գեղեցիկ հոգիներու,  
Սա նոճերուն գիշերին մեջ ծնրադրած,  
Ծավին պայծառ երգը կ'երգեն.



Յամին երգը ի՞նչ խորունկ է և ի՞նչ հզոր...  
Մեծ բնություն, ես քեզ ինչպե՞ս չպաշտեմ,  
Երբ քեզի՛ է որ կը պարտիմ ճանաչումը հոգիիս:  
Աստղածորան մեկ գիշերիդ խորհուրդովը գինովցած,  
Ես զգացի — խո՛ր զգացի —  
Աստվածութունը թախիժին ու կամքին...

Ու երբ արևը ծագեցավ, և աշխարհին ես դարձա,  
Նո՛ր մարդ էի,  
Հին հոգիովըս՝ նո՛ր մարդ — կը ժպտեի...

Աստղերուն տակ դեռ կը քալեմ  
Փոթորիկին հեծեծանքին ունկնդրելով,  
Այնպես անդորր, այնպես տրտում...  
Սրտիս վերջը դեռ կարյունի՛.  
Արյունն անոր՝ վարդերու պես կը ծայթթի  
Ազոտ հուշքի մ'իսկ հպումեն:  
Այտերս դեռ  
Վերջալուսի ամպերու պես գունաթափ են:  
Ատեն-ատեն  
Դեռ աչքերուս մեջ կ'իջնե՛  
Իր է՛ն մըռայլ, է՛ն սրգավոր մշուշով՝  
Գիշերը լուռ Տանջանքին...

Սակայն, ոչի՛նչ.  
Ես հաղթած եմ, ես հերոս եմ:  
Ահա տժգույն դեմքիս վրա  
Եվ աչքերուս գիշերին մեջ,  
Հաղթանակի գինովության բոսոր քրքրը կ'ալեկոծի —  
Ես հաղթած եմ...  
Ես հաղթած եմ իր աչքերուն լուրթ գիշերին՝  
Իմ թախիժովս ու կամքովս...  
Հուսեզ սուրբ, զոր անոր դեմ ճոճեցի,  
Ես աստղերեն էի առեր այն գիշեր.

Իր շեղբին վրա, ուրկե շանթեր կը սողային,  
Գիշերի գույն տառերով՝ «եղպատություն» գրված էր...  
Դեռ փոթորիկը կը կոծկոծի,  
Դեռ կը քալեմ...  
Ձեռքս՝ հիվանդ սրտիս վրա,  
Աչքերս հորդ՝ հրդեհումովը կամքիս,  
Հպարտության սուրբ ճակտիս՝  
Դեռ կը քալեմ...

## ՄԱՌԸ

Ձրմեռ օրեր,  
Երբ փոթորիկն ըլլար մըռայլ,  
Ես կ'երթայի՛ խորն ամայի դաշտերուն,  
Ականջ տալու կես-գիշերվան քրքիջին:  
Սլա՞ցքն անոր...  
Պերճ ու հպարտ, խաղաղությամբ մը խորունկ,  
Ան կ'երկարեր արտասվահյուծ աստղերուն՝  
Բազուկներն իր հոլանի,  
Ջերդ պարմանի մ'իր հարսին.  
Գիշերին մեջ կը լսեի կարծես թե՛  
Ձայնն իր զուլալ համբույրին...

Ինձի համար,  
Խորհրդանիշն էր ան Ուժին ու Կյանքին...  
Ու ես հավատքն ունեի իր անմահության...  
Փոթորիկն դեմ իր քրքիջով՝  
Ան մըտածումս կը հաներ լեռնե մը վեր...



Անցյալ աշնան,  
Օր մը հանկարծ մարդեր եկան  
Խորն ամայի այն դաշտերուն,  
Կացիններով, պարաններով...  
Ուրվականնե՛ր էին կարմիր.—  
Կը խնդային վրհուկի պես...

Հսկա մուրճովն իր արևուն՝  
Աստված դարե՛ր աշխատեր էր անոր համար:  
Այդ մարդերուն  
Քանի մը ժամը բավեց  
Զայն խլելու իր հոգնաբեկ բազուկներեն...

Իր մահեն ետք,  
Ա՛լ չզգացի, երբ փոթորիկն եղավ մըռայլ,  
Խորն ամայի դաշտերուն.  
Մըտածումս իջեր էր վա՛ր Լեռներեն...



Հիմա ազվոր գարուն է.  
Եվ անցյալ օր,  
Մղում մ'համառ նորեն քայլերս մղեց հոն,  
Խորն ամայի այն դաշտերուն.  
Եվ հուզումես ինկա ծունկի

Կացինահար ծառն էր նման շիրմաքարի  
— Սև գերեզման մը խոժոռ —  
Բայց իր կողեն  
Արծվաթըռիչ նիզակներու խրոխտանքով՝  
Բարունակներ ժայթքեր էին դեպի երկինք:

Անոնց մեջեն  
Նորափետուր թռչուններ ե՛րգ կ'երգեին...

### ԱՊՐԻԼԻ ԳԻՇԵՐ

Ավերակույտ ու մեռելներ ամեն դի...  
Ի՛նչ փուլթ, ահա վարդերն ազվոր կը բացվին.  
Կյանքն է նորե՛ն հեշտին, ի՛նչ փուլթ...  
Նորեն բոսոր արշալույսներն  
Եվ աղջիկներն իրիկնանույշ՝  
Կը հեղեղեն  
Հոգիներու մեջ կիսափուլ՝  
Սեր ու գինի ու ճառագայթ...

Ավերակույտ ու մեռելներ...  
Բայց կ'ըսեն թե՛  
Արյունահեղձ դաշտերուն մեջ  
Դիակներուն քովն ի վեր՝  
Մեծ շուշաններ հանկարծորեն  
Կը փթթին...

Կիսաթաղ գանգ մը կնոջ,  
Գիշերին մեջ,  
Կըզակովն իր անճոռնի՝  
Աստղերեն ցող կը խմե...

Ներբանիս տակ ճորնչեց...  
Կարծես հոգի՛ մ'ուներ դեռ...  
Կյանքին մեջ  
Թերևս աղջիկ մ'էր աղու...

Արդյոք որչա՛փ կը սիրեր ան գինովնալ.  
Այսպես Ապրիլ գիշերներ՝  
Լելակներեն, շրթներեն...  
Արդյոք ինչպե՛ս երկյուղած,  
Իր կուսական խցիկին մեջը ծունկի՞  
Մոմին լույսով կ'աղոթեր...

Ներբանիս տակ ճորնչեց...  
Կարծես արցունք մ'ուներ դեռ...

Ի՛նչ փուլթ:  
Պետք է կոխել ու անցնի՛լ,  
Պետք է մոռնա՛լ...  
Պետք է խենթի պես խնդա՛լ...  
Պետք է թողուլ որ ժամանակն ալետր  
Օր մը գըրե՛՛  
Մատվըներովն իր բորբոս՝  
Մահավճիռն երկնաբնակ Դահիճին...

Հիմա, հեռո՛ւն,  
Ահա ջրվե՛ժն Ապրիլի ջինջ աստղերուն...

ՈՐՐՈՒՂԻՆ՝ ՈՐՐԻՆ

1.

Իմացա թե ողջ ես դուն... Երեկ գիշեր,  
Երջանկությունը հազար-հազար ծորակներով  
Տոգիխ մեջ հոսեցավ,  
Երբ իմացա թե ողջ ես դուն...

Լուսամուտին առջև նստած,  
Աչքերս հառած կապարի գույն երկնքին,  
Երբ լուսնոտի սևեռումով  
Կ'ունկնդրեի սգահանդեսը կիսակործան ուռիներուն,  
Պատանի մը՝ վիշտեն գունատ,  
Այլ հրաբորբ ու ատելավառ աչքերով,  
— Որ կ'երթար, ինչպես կ'ըսեր, իր ավերված

հյուզակին տեղ

Ապարանք մը կանգնելու,—  
Շատուհանիս մոտեցավ,  
Եվ իր ձեռքը ձեռքիս վրա,  
Իրըն եղբայր մը հարագատ,  
Գերեզմանն մը սպրդած ոգիի մը շշուռնով՝  
«Եղբայրդ կ'ապրի», ըսավ ինձի, «արևին տակ,  
Վրեժին համար՝ եղբայրդ կապրի...»  
Եվ իր մրուս վարսերն հովին՝  
Կայծակնաթև անհայտացավ գիշերին մեջ:

2.

Ո՛վ իմ եղբայրս սևաշվի ու բարձրաճակատ,  
Կացինահար սերունդիս շուշուր մուսյլ ու հրզոր,  
Ինչպե՛ս արդյոք՝ պապենական մեր հրեղին  
և անբասիր ավիշով  
Կատաղի և անզուսպ տատասկի մը պես կ'ընձլուղիս...  
Օ՛, արդեն մանրիկ հոգիդ հինգ գաբուններ համբուրե՛ք...

Ինչպե՛ս, ինչպե՛ս արդյոք՝ պրիսմակի մը պես կը շողաս,  
Ու որբանոցիդ լուսամուտեն, ամեն գիշեր,  
Քաղաղորեն ու քնատ աչքերով՝  
Յուրտ աստղերուն կը ժպտիս...

Ժպտե՛, եղբայր, դեռ մանուկ ես, դեռ սուրբ ես,  
Դեռ անծանոթ է քեզի վիշտը...  
Հազար-հազար վիշապներու վրա հեծած՝  
Տառապանքը ճամբան է, օր մը քեզի կը հասնի,  
Հազար-հազար թևերով փաթթվելու մարմինիդ,  
Մոծրակեղ վար, սառած շունչով՝  
Քու սերունդիդ արյունին սև հեքիաթը պատմելու...

Ժպտե՛, ժպտե՛, քաղցրը եղբայր, ցուրտ  
աստղերուն և ամպերուն,  
Վարդերուն բո՛ւյրը վայելի, հողին սուլին գինովցիր...  
Օր մը արյո՛ւն պիտի տեսնես և՛ աստղերուն  
և՛ վարդերուն ծոցին մեջ...

Փոթորիկին որբերուն մեջ պիտի լըսես  
Մեռելներուդ ձայնը գունատ...  
Ժպտե՛, ժպտե՛, սակայն վաղը,  
Երբ սեգ ճակատդ իր առնական  
պրկումներուն տիրանա,  
Ու քեզի տան անկարելի ցավերու այս նամակը  
արյունահոտ,

Ճերմակ հոգիդ պետք է ըլլա,  
Ռ՛վ մութ խլիպակդ իմ ոսկեղեն Տոհմերուս,  
Ճերմակ հոգիդ պետք է ըլլա կարմիր հոգի մը  
մրրկահույզ  
Որ օձի մը պես գալարվի՝ Ցավի, Ցասուձի,  
Ընդվզումի բոցերեն,

Ու խելահեղ ու մոլեգին,  
Հայ Ասպետի ծիրանին ուսիդ,  
Ու վրեժեղ տժգունած,  
Մեյդ ապիրատ ուստաններն փոթորկելով հեռանա,

Գծխաժին նժույզիդ հետ,  
Արարատի ձյուններուն մեջ հոգմածածան

կարմիր Իրոշն համբուրելու,

Կարմիր Ուխտդ որոտալու...

3.

Հոգիդ հիմա հինգ գարուններ համբուրեց...  
Ինչպե՛ս, ինչպե՛ս կը տանջվիմ կարոտեն՝  
Անգամ մը գեթ քեզ իմ կուրծքիս սեղմելու,  
Անգամ մը գեթ քու աչքերուդ հեշտանքին մեջ

մոռնալու,

Փշուր-փշուր փեռեկաված կուտությանս  
Ոխն ու վրեժն այսահարող...

Անբուժելի օ՛ կարոտներն հոգիիս...  
Հյուժե՛ր եմ ալ. վեց ամիս է, ամեն օր,  
Այս սգավոր թոքերեն շիթ-շիթ արյուն կը ծորի.  
Իմ լիկված կողերուս մեջ, Ցավը սև բույնն է դրեր.  
Քանի մ'օրեն՝ հոգեվարքի հոնդյուններս կը սկսին...  
— Օ՛հ, մի՛ դողար, եղբայրդ իմ, մի՛ տժգունիր,—

Ձիս կալանող բորենին փոսըս արդեն փորեր է  
նոճիի մը բունին տակ...

4.

Այն գիշե՛րը, այն գիշե՛րը...  
Գուն չես հիշեր, հե՛ք տըղա.  
Օրրանիդ մեջ օրորուն,  
Ապրիլի այն աստղածորան գիշերին,  
Կը ննջեիր անխռով. դուն չե՛ս հիշեր...

Մեռա՛ն, մեռա՛ն, բոլորը մեռա՛ն  
Մահով մը սե՛ ուր հոգի՛ն իսկ կը մեռնի...  
Մեռա՛ն... — Այս բառեն ինչ ցուրտ հեգնանք մը

կը սողա հոգիիս մեջ —

Այս սուրբ բառը չի՛ պատկանիր այդ ահավոր,  
անմարդկային դիակներուն...

Հոշոտեցին ու խեղդեցին ու այրեցին...  
Մեր վաղեմի պապենական սեղանին վրա,  
Ուր ամեն օր խաղաղորեն և աղոթքով կը ճաշեինք,  
Անդամատված գլուխներ, բզկտված բազուկներ  
Ջետեղեցին քովե քով,  
Ու, զերդ արբշիռ ուրվականներ,  
Իրենց մռայլ կացիներուն վրա հենած՝  
Քրքջացին...

Ուղեղս կ'այրի՛ ոգեվարող այդ աչքերուն

հիշատակեն.

Հոգիիս մեջ դեռ կը լսեմ հծծյունները իրենց ողբին...  
Ա՛լ կարող չեմ քեզի գրել...  
Հալած աչքերս գիշերին մեջ կը սուզվին...

5.

Օ՛հ, տեսիլքն այս...  
Հա՛յրս ահա... զինք կը տեսնեմ...  
Ուտիներուն տակ կը քալե խոնջած, տխուր քայլերով,  
Սուրբի մը պես մեղամաղձոտ ու նայվածքը  
վիշտեն սառած...

Որչափ ծե՛ր է, որչափ տժգո՛ւյն...  
Ուտիները կը փոթորկին, կը խենթենա՛ն...  
Ան կը քալե, գլուխը ձիգ, տեսիլքն մը հալածական...

Յ՛, գիշերը կը կարմրի...  
Ուտիներեն շիթ-շիթ արյուն կը կաթի...  
Եվ այդ կարմիր անձրևին տակ,  
Մեր հայրիկը, մեռելի դեմքն ինձ դարձուցած,  
Աստժո մը պես կ'արտասվե...

**ԳԻՆԱՐՔԱԻՔԸ ԱՌԱՋ**

Տժգո՛ւյն լուսին, մի՛ մարիթ,  
Դեռ կարոտ եմ ցուրտ լույսիդ.  
Նայվածքիս մեջ թող վտիտ  
Շողերդ իջնեն ցանուցիր:

Դեռ գիշերին չեմ ուզեր  
Հանձնել հոգիս վշտակոծ.  
Ցուրտ աչքերուս մեջ դեռ գոց  
Կ'ուզեմ պահել շող ու սեր:

Դուն աստղերուն պես սեզ չես,  
Գիտես ներիլ ցավերուն.  
Այդ աչքերուդ մեջ անհուն  
Մութ հոգիներ կը կանչես:

Բո՛ւ պե մըն ալ, ո՛վ լուսին...  
Ու թող ապրիմ օրորուն՝  
Հին մոռցված օրերուն  
Հուշքը դալուկ՝ թեև սի՛ն...

Մեղքն ահա զիս կը կանչի  
Սև պատմուճանն ուսերուն...  
Լուսին, գնա՛ ամպերուն.  
Գիշերն հոգիս կը տանջի:

Ժամեր հետո, երբ գինով  
Աչքերս երկինք վերցնեմ,  
Շիթ՛ մը արցունք կը սպասեմ..  
Ներե՛, լուսին, ցավս է ծո՛վ:

**ՑԱՎՈՏ ԳԻՆԱՐՔՈՒԹ**

Իզո՛ւր աչքերս կը նային  
Վապույտ, անդորր երկնքին.  
Իզո՛ւր նվազն այս տարտամ  
Գ'օրորի զիս. — պետք է լա՛մ...

Արցունք, արցունք այն աչքին,  
Ուր զղշումներ կը հածին...  
Ցավոտ հոգվույն երգն է թույն.  
Ա՛հ, լռությո՛ւն, լռությո՛ւն...

Դիակի մը պես տժգույն,  
Հեք՝ ինչպես է բուն անբույն,  
Պետք է երթալ, մոլորիլ,  
Ճամբուն վրա... Չմեռնի՛լ

Մահով մը վատ ու դուրսին,  
Ուր ցավերը կը մարին,  
Այլ տառապի՛լ ու խնդալ,  
Իրիկուն մ'ալ խենթենալ...

**ՈՎ ՏԵՐ...**

Ո՛վ Տեր, ո՛վ Տեր,  
Ինչու այդքան  
Ցավ ես տվեր  
Վարդ աղջրկան:

Եթե Աստված  
Ես ըլլայի,  
Օ, անկասկած,  
Ջայն կ'ընեի՛

Աստվածուհի՛...

**ԵՐԱԶ...**

Այդ ի՛նչ խելառ արշավ է.  
Ա՛լ ծաղկաքաղը կեցուր,  
Ժողվածներդ բեր ցուցուր.  
Ինժի հատ մը կը բավի:

Այդ սրբան վա՛րդ ծոցիդ մեջ.  
Կեցի՛ր գլուխըս դնեմ  
Ու քնանամ, հոգնած եմ.  
Ճակտիս կ'այրի հուր մ'անշեջ:

Ահ, ի՛նչ լավ է, մի՛ շարժիր.  
Արցունքներըս մեղմ կ'այրին.  
Քերին ըլլամ այս ժայռին,  
Ուր այսքան վարդ ինձ տվիր...

Ա՛խ, արևը կը մարի...  
Մինչև առտու հոս ննջեմ.  
Ահ, գիտե՞ս՝ ի՛նչ հոգնած եմ.  
Իմ արևս ալ կը մարի...

## ԷԶԵՐ ԱՐՁԱԿԻՑ

### ԷԶԵՐ ՕՐԱԳՐԻՑ

Արևը դեռ չէ իջած: Հրաշալի է այս իրիկուն դուրսի զովու-  
թյունը, դուրսի լույսը: Կարճ պտույտե մը հետո, եկա նստելու  
իմ պզտիկ սենյակս, պզտիկ սեղանիս առջև: Սենյակս լեցուն է  
իրիկվան պտույտիս ծաղիկներովը: Որքան շնորհ, որքան քաղց-  
րություն կա այս ծաղիկներուն մեջ: Երեկ իրիկուն մոռցա զա-  
նոնք ջուրի մեջ դնել, ու թոռներ են: Այս իրիկուն ծաղիկ չբերի  
հետս: Այս իրիկուն տխուր եմ: Առաջ, երբ այս աստղերուն կը  
նայեի, արցունք կուգար աչքերես: Հիմա, շատ գիշեր, ժամերով  
կը նստիմ պատի մը տակ, ծառի մը տակ՝ չոփ-չոր աչքերով:

Այս իրիկուն, ա՛լ ըսի թե զինք չէի սիրեր: Տրտմած՝ աչքե-  
րուս նայեցավ: Այնչափ վիշտ կար նայվածքին մեջ որ գլուխը  
կուրծքիս քաշեցի՝ դեղին մատներուս շարշարանքովը. և իր մա-  
զերը համբուրեցի...

Ու մինչ անիկա կուլար լռիկ, իր կարմրած երեսը սըրտիս,  
ես ցած ձայնով կը մրմնջեի... «Ալ քեզ չեմ սիրեր, քույր, ինչու  
որ գեղեցիկ ես: Ինչու որ՝ վիշտ կա աչքերուդ մեջ: Ու չկրցար  
բարձրանալ դեռ արցունքեն, հառաչանքեն, տենչանքեն վեր: Դեռ  
հոգիդ օտա՛ր մնաց... Ես կ'ուզեմ մեկը որ տգե՛ղ ըլլա: Որ հաս-  
կընա զիս՝ երբ կը ժպտիմ մայրամուտին դիմաց: Ու երբ ինձի  
փաթթվի, փոխանակ համբույրի, ծոծրակս ի վար ծիծաղի...»

Գիշեր՝ վայրի և անուշ: Պզտիկ սենյակիս մեջ առանձնացած, սեղանիս մտերմիկ գզրոցները բացած, կարգ մը թուղթեր ու լուսանկարներ կը պրպտեմ: Կուլամ դառնորեն, կուլամ՝ անոր սիրական պատկերներուն առջև, ու կարծես անոր մեղամաղձոտ նայվածքեն սիրտս կը բզկտվի: Իմ խնդճ սիրտս՝ որ արդեն երկա՛ր երկա՛ր ժամանակներե ի վեր բզկտվեր է: Ի՞նչ եմ ես: Ի՞նչ կը փնտռեմ դեռ այս խավարին մեջ...

### Հունիս 1921

Ահավոր օրեր կ'անցընեմ նորեն. նորեն աչքերս կը լողան մութի մեջ: Քանի օր է՝ խելագարութեան սարսուռն է կարծես որ կը պատի միսիս վրա. կը վախնամ հայելիի մեջ նայելէ: Եթէ շուտով չվերադառնամ հոգիս այն ազվոր խաղաղութեանը, որ առենն մը ի վեր ցրվեր էր շուրջիս գիշերը, եղբրական արտաք մը պիտի գործեմ նորեն:

Ահա հոս, այս սեղանին առջև նստած եմ, շեմ գիտեր ինչա՛ն. այս սենյակը մեր վարժարանին Ուսուցչարանն է. ժամը գիշերվան երկուքն է. ի՞նչ գործ ունիմ հոս: Պիլիբըրը նստած էի քանի մը ժամ առաջ: Ինչո՞ւ տուն չգացի. խելագարա՞ծ եմ. երեկ գիշեր ալ այսպես ըրի: Տրտմութիւնը քամիի պես կը քշե կը տանի զիս: Հոգիս թևերուս մեջ գրկած՝ տեղե տեղ կը վազեմ, առանց գիտնալու թե ուր պետք է կենալ՝ ազատվելու համար այս սև քամիեն...

Հին սիրելի բարեկամներ սկսան երես գարձնել ինձմե... խեղճե՛րը... Կ'ամբաստանեն զիս՝ վերջերս գործած ծայրահեղութեաններու համար: Չեն հասկնար զիս. շեն գիտեր թե ազն հոգը որ ես կը կոխեմ՝ իրենց կոխած հոգը չէ. թե՛ ես ուրիշ անաբան եմ իմ հոգիս, և իրենց ու աշխարհի վրա կը նայեմ հեռուէն, հեռուէն...

Նորեն տարօրինակ գիշեր մը կը սկսի: Ժամը երկուքը անցած է: Նորեն դպրոցին պատեն ցատկած, պատուհանն մը ներս սպրդած ու հոս եմ եկած, գիշերային այս մութ ապաստարանս: Ասիկա այն սենյակն է, ուր դեռ ամիս մը առաջ, դասերու ավարտումին, կը նստեի խաղաղորեն ծխելու և խոսակցելու պաշտոնակիցներու հետ: Ճիշտ դիմացը, սա սև բազկաթոռին վրա, ամիս մը առաջ, ես կ'ընկողմանեի իբրև աշխարհի ամենն խաղաղ հոգին, ժպտելով, բարձրաձայն ծիծաղելով ու... այս միևնույն ուղեղով չէ՛ր որ ես այն ատեն տրամադրութիւն կը զգայի ժամ մը անվերջ հակաճառելու ընկերներու հետ, ամենասին նշույթի մը շուրջ:

Նորեն ի՞նչ եղավ ինձի: Ի՞նչ կ'ըլլամ ես նորեն: Ա՛հ, եթէ խելագարութիւնն է որ շուրջս կը դառնա, թող գա, ես այդ ծիծաղը կը նախընտրեմ դեմքի այս տխմար արտահայտութենէն: Ես կը նողկամ հուսահատութենէն որ սկսած է նորեն իմ գեղեցիկ դեմքիս տալ զառամած հոճայի մը շոշորդ արտահայտութեանը, ես խնդալ կ'ուզեմ, քրքալ...

### Սեպտեմբեր, 18 հունիս 1921

Դատապարտված եմ անշարժ պառկելու ամբողջ աստիճանը, գիշեր ցերեկ, միշտ միևնույն դիրքին մեջ: Պզտիկ շարժում մը կրնա արյուն ժայթքեցնել հիվանդ թոքես դուրս: Այնպես կը վախնամ այս արյունեն, թեև երբեմն կը ժպտիմ... Ի՞նչ դառն, ի՞նչ անմարդկային բան է հուսահատութեան գինովութիւնը:

Երեկ, ամբողջ օրը շարունակվեցավ արյունը քիչ քիչ: Գիշերը՝ երկու անգամ, մեծ առատութիւնով: Քովս շուր տվող մը շունեի: Մայրս սենյակիս մեջ եկեր պառկեր էր առջի իրիկվընե, պետք եղած ատեն հասնելու համար. բայց խեղճը այնքան հոգեւած էր որ քունը տարեր էր: Չուզեցի զինք արթնցնել:

Երկրորդ արյունահոսութիւնը երբ կ'ունենայի՝ լուսնալուս վրա էր գրեթէ դուրսը: և կամ թերևս պզտիկ լուսին մըն էր որ այդ պատրանքը կուտար ինձի: Ամեն պարագայի տակ, դուրսի իրերուն այդ մտերմի երևույթը, շեմ գիտեր ինչու, այնպիսի կարոտագին վիճակ մը առաջ բերավ մեջս, որ երկար ատեն, ազնա-

նը դադրելի ետքն ալ, անկողնիս մեջ անշարժ նստած դիտեցի տժգույն ու սիրելի երկիրը... Ի՞նչ բաղձալի թվեցա՞մ արշալույսին հետ գալիք կյանքը...

Վաղը կիրակի է: Եթե աղեկ ըլլայի...

Ախ, ինչ աղվճճ կ'երևային աչքիս, գիշերվան այդ տրտում ժամուն իր պարտեզն ու հասմիկները, ջրհորը՝ ուր կը նստինք միշտ, երբ արև ըլլա, ծիրանի ծառը, ախ, այդ մեծ, այդ անուշ ծառը՝ որուն տակ...

«Վաղը հոս պիտի ըլլամ դարձյալ ես, մեռելի պես պառկած այս խոշոր մահճակալին երկաթներուն միջև, շարժելու անկարող, երազելու և սիրելու անընդունակ...»

Քիչ մը լացի այս մտածումին հետ ու քնացա...

## 20 հունիս...

Ն...ն մեզի եկավ երեկ իրիկուն: Գիմացս, մահճակալիս երկաթներուն վրա հակած՝ այնքան խնդաց. բայց ես գիտեմ թե որքան արցունք կար իր այդ խնդուքին մեջ:

Մեկնելու ատեն, իր ամոթխածութունը շնույլատրեց իրեն որ՝ մորս ներկայութեանը՝ ձեռքը համբույրիս երկարեր, ինչպես ուրիշ ատեններ, ու կարճատև սեղմումն մը ետքը քաշեց զայն: Չստացված այդ պզտիկ համբույրը անդարմանելի կորուստի մը տրտմութունը տվավ ինձի, երբ գնաց ան...

## 21 հունիս...

Գեշ գիշեր մը անցուցի, թեև երեկվան բաղդադամբ նվազ արյուն կորսնցուցի: Ընդհանրապես կեսգիշերեն վերջը կարթըննամ և ալ շնմ կրնար քնանալ: Արշալույսի մոտ սաստիկ տենդ մը հարձակեցա՞մ վրաս ու 4—5 ժամ մը տևեց:

Հիմա, կեսօր, տենդս գրեթե նահանջած է, բայց գլուխս և աչքերս սաստիկ կը ցավին: Ոչինչ կ'ուզեմ ուտել: Այնպես շուտ կը հալիմ:

Երեկ իրիկուն Ն...ն եկավ: Իր դեմքին վրա կարդացի նորեն նույն արտաքին զվարթութունը և նույն ներքին կսկծանքը: Սիրտս կը ճմլվի, երբ կը մտածեմ իր դժբախտութեանը վրա: Խեղճ աղջիկ: Ձէիր գիտեր թե զիս սիրողները կը տառապին:

Ճակատագրականորեն այդպես սահմանված է: Հիշողութեանս մեջ չունիմ մեկը որ զիս սիրած ու տառապած ըլլա:

Հավանաբար այսօր չի գար: Մայրը տունը չէ, և ինք տունը մինակ չի կրնար թողուլ: Օ՛ր մը շտեմնել քեզ — գիտես ի՞նչ կը նշանակե ասիկա, ով իմ միակ սերս, իմ միակ մխիթարութունս:

Միշտ տարտամ հույս մը ունիմ սակայն, թե պիտի գա...

Զեկա՛վ: Մութ մայրամուտ է ալ դուրսը: Ալ չի գար: Հիվանդ թոքես ավելի հոգիս է որ կը կոտտա...

## 22 հունիս...

Հունիսին մեջ մսիլ...

Որքա՛ն արյուն կորսնցուցեր եմ: Առաջ, աթլեթի օրերուս, ամեն կողմ սառ կախված ատեններ, ես կը մերկանայի ցուրտ սենյակի մը մեջ, մարզանք ընելու համար:

## 24 հունիս...

Երկու օրն ի վեր ամբողջովին դադրած է արյունը, բայց դեռ շատ տկար կը զգամ մարմինս: Երեկ անխոհեմութունը ունեցա անկողնես ելլելու, և այսօր բոլորովին ուժաթափ եղած եմ:

Ն...ին երթալու համար էր որ ելա երեկ: Հետզհետե կը խորանա և կը մթագնի ինչ որ կը զգամ իրեն հանդեպ... Ամեն օր կը մտածեմ թե ալ սերս չի կրնար ավելի խորունկնալ, հասած ըլլալով իր գերագույն խորութեան. բայց հաջորդ օրն իսկ կը գտնեմ թե սխալած եմ, թե՛ հատակ կարծածս հանգրվան մըն է լոկ, ուրկե շուտով կը մեկնիմ, ավելի՛ ու ավելի՛ իշնելու համար...

Մինչև ո՛ւր պիտի տանի զիս այս խելահեղ ու անհաշիվ էջը: Ի՞նչ փույթ: Իր հոգիին մեջ է որ ձգած եմ ինքզինքս: Հոն ոչինչ կը կորսվի: Եթե կորսվիմ իսկ հոն, ի՞նչ աղեկ...

Ահ, իր հոգիին մեջ մեռնեի...

Սաստիկ նիհարցած գտավ զիս: Գիտեի թե այդպես էր, բայց այդ իրողութունը երբ իր բերնեն լսեցի, շատ տրտմեցա և ատեն մը գրեթե յխոսեցա: Հանկարծ սակայն, ինչպես ընդհանրապես կը պատահի ինձի ասանկ պարագաներուն մեջ, զվար-



թուօթյան փոթորիկ մը իշավ հոգիս մեջ, և սկսա գավազանովս  
չշելիք-չուժաք խաղալ՝ սենյակին իրերը ասոյին անդին թոցը-  
նելով...

Շուտով, հանդիմանութուններու տարափը նետեց զիս սեն-  
յակին մեկ անկյունը, պզտիկ աթոռի մը վրա, ուր արքայորեն  
բազմած, սկսա շատախոսել, վիճիլ, քրքշալ... մինչև որ՝ սաս-  
տիկ հոգնած, ալ խոսելու իսկ անկարող ու տրտմութունը աչքե-  
րուս՝ մեկնեցա:

Մեկնելու ատեն, Ն...ն նորեն ձեռքը չտվալ որ համբուրեմ,  
թեև ես ալ շուզեցի:  
Ինչո՞ւ...

### 26 հունիս...

Այսօր ելլելու փորձ մը ըրի. բայց ստիպվեցա շուտով ան-  
կողին վերադառնալ: Հազիվ քանի մը քայլ առի արևին տակ, ու  
ժանկերս կթոտիլ սկսան: Մորաքրոջս պարտեզը ապաստանե-  
ցա, ուր կես ժամի շափ նստա, աղվոր արևին տակ, ու դիտեցի  
այժի ձագերու և նորածին վառյակներու կյանքը:

Կյա՛նքը...

Որքա՛ն կը սիրեմ զայն հիմա: Տե՛ր Աստված, արդյոք շատ  
ո՞ւշ է...

Վերադարձիս՝ այնքան հոգնած ու գունատ էի որ զգուշա-  
ցա մեծ հայելիին մեջ շատ մոտեն նայելու աչքերուս, ու սեն-  
յակս ելա՝ անհուտութեան ժպիտը շրթունքիս:

Այսօր պիտի շտեմնեմ զինք:

### 27 հունիս...

Իրիկվան դեմ՝ ուժերս հավաքեցի և իրեն գացի: Մինակ էր  
առանք: Մայրամուտի ամբողջ պահը միասին եղանք, իր սեն-  
յակին մեջ:

Սերս անհունութուններու սահմանը հասած է արգեն: Հե-  
տազհետե կը շատնան այն վայրկյանները ուր կը փափաքեմ իր  
առջև ծնրադրել:

Իրեն կը նայեմ՝ մարդերեն վեր էակի մը պես:

(Յայտե՛ք երեք քերթեր փրցված եմ տեսալակեմ:— ԽՄԲ.)

Այս մտածումով է որ, մեկնելու ատեն, թեկուս մեջ առի  
գլուխը, հրաժեշտի փայփայանքս տալու իր հոգիին. և այնչա՛փ  
մշուշ կար աչքերուս մեջ...

1 հուլիս...

Կը սիրե՛մ, կը սիրե՛մ...

Ինչ որ կը զգամ իրեն հանդեպ՝ աննախընթաց է կյանքիս  
մեջ...

Ա՛յս է ահավասիկ սերը:

Ու ես կը զայրանայի, ատեն մը, իմ խեղճ հոգիս դեմ,  
կարծելով թե սիրել չի գիտեր ան...

Օ, գիտե՛ եղբր սիրել իմ հոգիս, իմ աղվո՛ր հոգիս, ու ես  
հիմա կը գուրգուրեմ իր վրա, կը հիանա՛մ իրեն...

Տիեզերքին է՛ն շքեղ լույսով աստղն է հիմա իմ հոգիս...

4 հուլիս...

Տառապանքի վայրկյաններ կունենամ երբեմն. սուր-սուր  
ցավեր կ'անցնին հոգիես ու մարմինես. բայց ընդհանրապես  
այնքա՛ն հեշտագիտորեն երջանիկ եմ...

Պատանեկան անդորրավետ բանաստեղծականութուն մը  
եկած է վրաս, ու թոպեներ կ'ըլլան երբ տղա կը դառնամ: Այսպես,  
շատ անգամ, մայրամուտին, երբ թև թևի կը պտտինք իրենց  
պարտեզին ծառերուն տակ, հանկարծ ամբողջ ուժովս կը սեղ-  
մեմ իր մեկ մատը ու կը սպասեմ որ իր դեմքը առնե շարքկվող  
մանուկի այն արտահայտութունը, որ շատ կը սիրեմ, ու պո-  
տա՛...

Սաստիկ կը բարկանա և սրտագին կը հանդիմանե զիս, սի-  
րելի շփացածութուն դնելով իր լրջութեանը մեջ: Կը խոստանամ  
անգամ մըն ալ շրինել: Խոստումիս վերջին բառին հետ՝ իր մեկ  
ուրիշ մատը կը սեղմեմ, ավելի ուժգին...

Իրապես կը նեղօրտի այս անգամ. ու խստիվ կը թուզեմ,

«ըրածդ անամոթութիւն է» ըսելու շափ լեցվելով: Ու թերևս ել-  
լելով կ'ուղղվի դեպի տուն:

Միրանի ծառին տակ կը հասնիմ ետևեն ու զղջումի այնքան  
սրտառուչ բառեր կը գտնեմ, որ կը հավատա, կը ներե, կը վե-  
րադառնա:

Եվ ավելի քան երեք ուժգին կը սեղմեմ իր մեկ նո՛ր մա-  
տը...

Եվ այսպես՝ երկա՛ր ատեն:

Մինչև որ խաղին տեսակը փոխվի ու, փոխանակ ցավի,  
հոգեկան ամենանուրբ փայփայանքի մը հեշտանքը ուզեմ տալ  
իրեն: Կը սիրե այդ նոր խաղը:

Ու հատնող վերջալույսին մեջ, իր երջանիկ մանուկի հոգին  
կը համբուրեմ ու կը համբուրեմ...

12 հուլիս...

Պատրա՛նք է նորեն...

Շարաթե մը ի վեր է որ շատ լավ կը զգամ ինքզինքս: Մար-  
մինս գրեթե ուժովցած է, ու կրնամ առանց հոգնելու մեկ երկու  
ժամ քալել: Հնչս գրեթե անհայտացած է. առտունները միայն  
քիչ մը կը հազամ: Հիվանդ թոքիս կոտուրքը բացարձակապես  
չեմ զգար...

Ի՛նչ խենթ հույսերով կը լեցվիմ նորեն: Երևակայել որ —  
եթե այսպես շարունակվի — կրնամ քանի մը ամիսեն կատարե-  
լապես բուժված նկատվիլ և...

Ահ, ի՛նչ պալատներ կը կանգնե երազս ամե՛ն գիշեր, ամե՛ն  
գիշեր...

17 հուլիս...

Միրելիս, երազդ ավազի՛ վրա է կանգնե իր պալատները...  
Եվ հաճախակի փլան...

Զարհուրելի՛ ուժ մըն է ճակատագիրը:

Ահա անգամ մըն ալ նստած եմ հոս, սենյակիս մեջ, գու-  
նատ, ուժաթափ, անհույս, վայրկյանե վայրկյան սպասելով սար-  
սափելի արյունին՝ որուն բոլոր նախանշանները կ'երևին մարմ-  
նիս վրա:

Միևնույն իրերը՝ շուրջս: Անոնք՝ որոնց ներկայութիւնը, քա-  
նի մը օր առաջ, կյանքին երազովը կ'օրորվեր հոգիս...

Ինչպե՛ս կը հեգնե զիս պատեն կախված սա աղտոտ նկարը,  
որուն մեջ տիմար դիմագծերով մարդ մը կ'երթա, գլուխը կախ,  
անտարբեր:

Ճակատագի՛րն է...

20 հուլիս...

Նո՛ւյն մթութիւնները, նո՛ւյն ցավերը, նո՛ւյն անդունդը...

Հուսահատութիւնս մահվան դուռները կը բախե անդադար,  
բայց իզուր:

Ինչո՞ւ չեմ մեռնիր:

Երեսս պատին, դիվահարի պես աչքերս հառած եմ հոն  
շարժակող ստվերներուն, որոնք կը խենթցնեն զիս իրենց հեգ-  
նանքով: Եվ այսպես՝ մինչև իրիկուն, մինչև գիշեր, մինչև առա-  
վոտ...

21 հուլիս...

Կարոտագին կը բաղձամ աղոթել: Ի՛նչ մխիթարութիւն պի-  
տի բերեր ինձի ասիկա. Ինչո՞ւ չեմ կրնար:

Ախ, հին օրերը...

Ինչեր պիտի շտայի վերադարձին համար իմ հին, աղվոր  
հավատքներու:

Ինչ անուշ տղա մըն էի ես, ատեն մը, իմ վճիտ աչքերովս,  
իմ աղոթել գիտցող պզտիկ հոգիովս:

Հիմա մեծցած եմ:

Ու հիմա, ամեն ատենե ավելի պզտիկ կը զգամ ինքզինքս...

Ն...ն կ'աղոթե ամեն գիշեր:

Ինչո՞ւ տեսած չեմ քեզ տակավին քու այդ դիրքիդ մեջ, իմ  
հրեշտակս. անկողնիդ քով, ծունկի վրա, ճերմակ գիշերազգես-  
տովդ, պաղատող աչքերդ ձեզունին՝ ուրկե անդին կը զգաս թե  
Անհունը կա... ու մոմ մը կը հատնի քովդ՝ պզտիկ, ապակի  
աշտանակիդ վրա...

Եվ ինձի՛ համար կ'աղոթես, կ'աղոթես որ աղեկնամ ես...

Ո՛վ իմ սուրբս, իմ միակ պաշտամունքս...

24 հուլիս...

Այս իրիկուն պիտի շտեմենեմ քեզ.— երեկ գունատ տեսար զիս և ուզեցիր որ այսօր հանգչիմ: Բոլոր հանձնարարածներդ ըրի, իմ սիրականս — մինչև կեսօր անկողնես շիւա, առանց ախորժակ ունենալու՝ բռնի ճաշեցի կեսօրեն հար նորեն անկողին մտա, ու մայրամուտին միայն՝ շատ պզտիկ պտույտի մը համար դուրս պիտի ելլեմ:

Այնքան ուրախ եմ որ քու ուզածիդ պես ապրեցա կյանքիս այս օրը..

Վաղը պիտի վարձատրես չէ՞, քեզ օր մը շտեմենիու այս մարտիրոսությունս...

25 հուլիս...

Ն...ն երթալով կը տժգունի և հիվանդի երեսւյթ կ'տոնե:

Ն...ն կը հազա՞ւ...

Ի՞նչ զարհուրելի խաղ է ասիկա: Ահ, մտածել թե Աստված կա... կարելի՞ քան է:

Բայց հրեշտակին քան է աս: Ըսել է՝ ես կը մեռնեմ զինք... քսել է իմ սեքս, իր բլուրեղային վճիռությունովը, ուրիշ քան չէ, եթե ոչ թո՛ւյն, զոր իր հոգիին ու մարմնին մեջ կը կաթեցնեմ ես քիչ քիչ...

Ահ, ինչպե՞ս կ'ուզեմ բզկտել սա անխիղճ շրթունքներս և այս մատներս կոտրտել...

Ի՞նչ զզվելի շարագուծ մըն եմ ես. բայց մանավանդ Դո՛ւն, Դո՛ւն...

27 հուլիս...

— Նորեն ազեկ շես, գիտե՞ս. նորեն շատ տժգունեմ ես...

Ձիս տեսնելուն պես այսպես ըսավ այս իրիկո՞ւն:

Երեսը նայեցա:

Արյունի հետք իսկ չկար իր այտերուն մորթին տակ, և աչքերուն շուրջի կիսաբոլոր ակոսումները ավելի քան երբեք մթադներ էին:

— Իսկ դո՞ւն,— հարցուցի:

— Ծս, հոգ չէ, սիրելիս,— ըսավ ու ծպտեցավ:

Մարդկային չէ՞ր այդ ժպիտը...

Ունեցա ճիշտ այն զգացումը զոր մարդ պիտի ունենար երբ հանկարծ գիտակցեր թե կը գտնվեր լսությանը մեջ սրբատեղիի մը զոր ակամա սրբապղծած էր...

Երբ իր ձեռքը համբուրելե հտք գլուխս վեր առի, տեսա թե կուլար: Մեր սրտագեղումը այն ատեն տարօրինակ, տարօրինակ եղավ...

29 հուլիս...

Երկու օրե ի վեր տեսած չեմ զինքը: Անըմբռնելի հավիտենություն...

Որոշած եմ շաբաթը անգամ մը միայն իրեն երթալ և տեսակցություններս ընել միշտ... վերապահ: Այս որոշումս ունի իր մեծությունը և իր ծիծաղելիությունը:

Հակառակ տկար ըլլալուս, այս իրիկուն բուռն փափաք մը զգացի տված որոշումս բեկանելու, բայց բավական կամք ունեցա թումբ կանգնելու համար հորդող զգացմունքներու դեմ:

Ծվ ուրախ եմ:

Ահ, ուրախ... իրա՞վ...

Ծս ուրախ կրնա՞մ ըլլալ. ես իրավունք ունի՞մ ուրախ ըլլալու...

30 հուլիս...

Ով տառապողներուն ու հուսահատներուն Աստվածը, ուժ տուր իմ հոգիիս, որպեսզի կարենա ան գլուխ հանել այս հոսանքն ի վեր թիավարումը զոր ճակատագիրը պարտագրեց իրեն: Կը զգամ թե վայրկյանն մը դեղևումը անդունդ պիտի տանե զիս և ան:

Ինչո՞ւ, Տե՛ր, ինչո՞ւ:

Երկու աղվոր հոգիներու ընկզմումը ճակատագրին մութ ջուրհորուն տակ՝ չի՞ կսկծացներ քու խղճմտանքդ:

Օգնե՛, Տե՛ր, օգնե՛ ինձի:

1 օգոստոս...

Այնչափ աղվոր մայրամուտ մը կա դուրսը: Կիրակի իրիկունն է: Մարդերը պտույտի ելած են ճամբաներուն վրա:

Ահավասիկ հայր մը՝ իր պզտիկին ձեռքեն բռնած:

Ի՛նչ խուլ զգացում է որ կը փրթի այսպես հանկարծ իմ հոգիիս խորունկեն... Այդ խաղաղ, այդ անուշ մարդը — որ հավանաբար սափրիչ է շուկան, կամ սափրիչի աշկերտ — ինչո՞ւ լացնե գիս իմ վարագույրներու ետին...

Հայր մը իր պզտիկին ձեռքեն բռնած...

3 օգոստոս...

Չկա՛ բան մը զոր շարենամ ընել քեզի համար, ո՛վ իմ սերս: Գավաթ մը ջուր խմելու շափ հեշտությամբ կրնամ մեռնիլ, ուրախ, երջանի՛կ, եթե այդպես ընել պետք ըլլա քու կյանքիդ անդորրությանը համար:

Մեռնիլ:

Ի՛նչ պզտիկ բան է այդ:

Ահ, ես կ'ուզեմ քու հոգիիդ համար ընել մեծ, գրեթե անկարելի բան մը — ապրի՛լ...

Ու պիտի ապրի՛մ: Ակռաներովս պիտի բզկտեմ այն սև թաթը, զոր մահը երկարած է հոգիիս: Անսահման ուժ ունիմ դեռ: Ա՛լ լմնցած, քայքայված կարծած այս էութունս տակավին ի՛նչ աղբյուրներ ունի եղեր: Ապացո՞ւյց: Ահավասիկ կամքիս սա պայծառ ժայթքումը հուսահատությանս խորերեն...

Պիտի ապրի՛մ:

Պիտի վերականգնե՛մ իմ այս կքած, կիսովին խորտակված կուրծքս. մարմինս պիտի վերստանա իր երբեմնի մարմարեղեն կերտվածքն ու հպարտությունը:

Իսկ հոգիս պատրաստ է արդեն...

5 օգոստոս...

Սերս խելահեղ հորդում մը ունեցավ այս իրիկուն: Սրկու շաբաթե ի վեր կը զգուշանայի նույնիսկ իր ձեռքը համբուրելու: Ահավա՛ր մարտիրոսություն...

Եվ այս իրիկուն, պտույտի ատեն, Կարմիր Խաչի պարտեզին ծառերուն տակ, հեացող մթնշաղին մեջ, հանկարծ, իր նայվածքը այնքան խորունկը հասավ հոգիիս՝ որ թևերս փաթթվեցան իր իրանին...

Հո՛վ մըն էր որ կ'անցնեք միսերուս մեջեն ու կը դղրդեր զիս իր ուժին տակ...

Հուզումեն տժգունեցավ:

Ահ, ինչպե՛ս կը սիրեմ իր աչքերուն այդ գիշերը, տենդի թուպներուն, երբ երթալով կը մութնա, կը խորունկնա, ծովի մը պես, որուն վրայեն փոթորիկը պիտի անցնի:

Ակնթա՛րթ մը միայն տեսց այդ հեհեհ փարումը:

Տեհ՞ց:

Նյութին պատվարեն անդին կատարվող այդ հաղորդությունները կը տեհն:

Թշվա՛ռ հոգիներ, որ շեն կրնար ըմբռնել մազի թելի մը մեջ՝ անհունը, և անոր տրված համբույրին մեջ՝ հավիտենությունը: Թող սիրե՛ն...

7 օգոստոս...

Նորեն արյուն...

Ն...ն ճանշնալես ի վեր շորրորդ արյունահոսությունն է ասիկա: Ինչո՞ւ այնքան շուտ-շուտ: Առաջ, վեց ամիսը անգամ մը հազիվ կ'արյունեք հիվանդ թոքս:

Իմ խեղճ սիրականս, քու հրեշտակի անմեղությունովդ դուն ալ մեղսակից ես, գիտե՛ս, ճակատագրին հրեշային դավերուն: Քեզ սիրելես ի վեր, հյուժումս սաստիկ արագացած է: Յուրաքանչյուր անգամ որ շրթունքներս կը հպին շրթունքներուդ...

Ի՛նչ սև ողբերգություն է կյանքը զոր ստեղծեր ես, Տե՛ր:

Մեկ կողմն կը պարզվի, կը բացատրվի ան — կյանքը — հետըզհետե ավելի գեղեցիկ, ավելի ցանկալի, ու մյուս կողմն տակավ կը հատնի՛մ ես...

Այսօր ալ շեմ կրնար տեսնել զինք: Սաստիկ կը տառապիմ կարոտե: Կ'այրի՛մ, կ'այրի՛մ...

Սեր ու թոքախտ նույն կուրծքին տակ: Աղվո՛ր հրդեհ, չէ՛: Բոցերը կը հասնի՞ն մինչև քեզի, Աստվա՛ծ...

8 օգոստոս...

Այսօր ալ շփրցա երթալ իրեն: Մենյակիտ մեջ փակված, ամբողջ օրը ինքզինքս ամի հիմարական աշխատանքի, նպատակ ունենալով բթացնել և անգործութեան մատենի մատածում: Գրեցի, գրեցի, հետո պատուհանն դուրս նետեցի մտեն ինչ որ գրեցի:

Արյունը դադարեցնելու համար տրված դեղը չգործածեցի: Ի՞նչ հարկ. հակառակ ասոր՝ գրեթե արյուն չեկալ այսօր: Մաստիկ հոգնած կը զգամ. աչքերս կը ցավին: Հոգիս մեջ բան մը կ'աչբի, կը հատնի...

Ի՞նչ կ'ընե ան հիմա: Ժամը 11-ը կ'անցնի: Ըսել է՝ ազոթած է: Եվ անկողնին մեջ պառկած՝ իր սե-սե աչքերը մտփին, կը մտածե...

9 օգոստոս...

Ախ, ինչպե՞ս կ'ատեմ հին մարդը որ էի առաջ և որ իր մուշլ խենթութունովը — շեռ գիտեր ինչո՞ւ — քանդեր, փշուցուցեր էր մեզս կյանքի այնքա՞ն թանկագին, այնքա՞ն վճիռ ուղբուցներ:

Հիշելը տառապիլ է հիմա ինծի համար: Ահազոր խենթ մըն եմ եղած ես, անցյալին մեջ: Մուրճի հարվածներ տեղացուցած եմ գիշեր ցերեկ՝ շենքի մը, որուն տաճար ըլլալը նոր կը տեսնեմ: Ինչո՞ւ, ինչո՞ւ: Ու փլեր է ահա ան: Ու հիմա, անոր ավերակներուն մեջ ինկած, կ'աշխատիմ բան մը փրկել անկե: Բայց, աչինչ: Ձեռքս մտեն կողմ մտիւրի մեջ կը խորասուզի...

Ինչպե՞ս կ'անիծեմ իմ սա ձեռքերս: Թեև մեղավոր եմ անոր, Ահ, զարհուրելի՛ գիշերը որ կուրցուցած էր զիս... Եթե այն ատեն ծագած ըլլար այս աստղը...

Ո՛ր, Հանցավորը Ա՛ն է, Ա՛ն...

10 օգոստոս...

Ժամ մըն է որ նստած եմ հոս, վերնահարկի այս պշտիկ պատուհանին առջև, բացառաբար գեղեցիկ վերջադարձ մը հետ մինակ:

Ի՞նչ հոյակապ շքեղութուն է սա, հորիզոնն ի վեր, ու միանգամայն ի՞նչ հակասազրական հատնում:

Ի՞նչ աղվոր մահերով մեանիլ գիտե լույսը...

Աստղ չկա դեռ: Պզտիկ լուսին մը, որ տակավին հագիլ քալել գիտե, կը շտապե դեպի հորիզոնը, լուռ, հոգնած, գրեթե հիվանդ: Այս տիեզծ, այս ծյուրած լուսինն է սակայն, որ պիտի տիրապետե, քանի մը օրեն, ամբողջ կամարին, ու պիտի անցնի՝ երազի մը պես աղվոր՝ միլիոնավոր հուսարեկ հոգիներու վրային... Ախ, լուսին, քու ուժդ ունենալի...

Իրիկվան աստղը կը տեսնեմ, ահավասիկ: Ինչե՞ր կը հիշեմ ես այն աստղով: Ինչո՞ւ կը դողաս, հոգիս... Գոցե՞մ այլևս պատուհանը...

Կյանքը, եթե նույնիսկ անզգամ հեգնութուն մը եղած ըլլա այն, հոյակապ հրաշալի՞ք մըն է: Կարեղի չէ շտեմել ասիկա:

Ախ, կյանքը, կյանքը...

Ինչպե՞ս կ'ուզեմ կմախքացած բազուկներու ամբողջ հուսահատութունովը փաթթվիլ անոր ու պաղապիլ որ լլթե՛ զիս...

Հորիզոնը կորսնցուցեր է իր շքեղութունը: Ի՞նչ շուտ: Ամպերը, փոխանակ երազի, դեղ-դեղ մտիւր կը սեզմեն իրենց կուշտին: Հատավ:

Երթամ քնանամ:

11 օգոստոս...

Ն...ին հազը չէ գաղթած գեռ: Գիտեմ, սուտ կը խոսի. զիս չվրդովելու համար:

Իմ դժբախտ հրեշտակս...

Ամեն իրիկուն կը տեսնեմ, հակառակ ծածկելու համար իր շանքերուն, կոկորդի այն տառապեցնող անհանգստութունը որ զարհուրելի՛ ախտանշան է թերևս...

Ու դաշո՞ւյն կը մխեն կարծես իմ սրտիս:

Ախ, ճի՞շտ է, ճի՞շտ է արդյոք հիվանդագին նախազգացում որ տառապանքն տառապանք կը նետե զիս:

Ինչո՞ւ կ'ապրիմ դեռ:

13 օգոստոս...

Այսօր ալ չգացի իրեն, հակառակ բուն փափաքիս: Իրիկունը, գրեթե աստիկ հոգնած, ելել էի իրեն երթալու: Բայց հան-

կարծ, այնքան տխուր, այնքան ընկճված գտա տրամադրություններս, որ որոշեցի շերթալ՝ տրամությունովս չվարակելու համար նաև իմ հրեշտակս:

Այդ տրամադրությունով ելա սենյակես, աչքերս գրեթե արցունքոտ, և քերթված մը գրեցի զոր շատ սիրեցի («Արհամարհանքը»):

Հետո գացի, ուշ ատեն, Հրեից գերեզմանոցին քարերուն վրա նստելու:

### 15 օգոստոս...

Վերադարձա սենյակ, հոգնած, գրեթե շնչասպառ: Եվ ամբողջ մեղքս՝ պզտիկ, շատ պզտիկ պտույտ մը ըրած ըլլալս է, սիրած աղջկանս հետ:

Հոգ չէ, տակավին կրնամ ժպտիլ ես: Տակավին կրնամ արհամարհել, ճակատագիր, զզվելի ձեռքդ որ սառույց կը կախե հոգիիս այս աղվոր գարունին մեջ:

Վատ, պիտի չկրնաս դյուրավ սառեցնել այս մեծ, այս շքեղ ծաղիկը, զոր այնքան գուրգուրանքով, այնքան տառապանքով, արյունովս մեծցուցի աս:

Ավելի ուժով ես, գիտեմ:

Բայց այդ՝ ոչինչ:

Ահա կեցեր եմ դեմդ, տժգույն, ծյուրած, բայց պատրաստ եղունգներովս, ակռաներովս պաշտպանելու իմ գարունիս այս հոյակապ ծաղիկը:

Տժգույն եմ, այո՛:

Բայց կը տեսնե՞ս աչքերուս հրդեհը:

Սիրող մարդուն հուսահատութենեն վախցիր, Աստված:

### 17 օգոստոս...

Եթե տակավին ունեցած ըլլայի որևէ հարաբերություն երկրներին հետ՝ այսօր կը խզեի զայն: Բայց երկար ատեն է որ ես աչքերս վար եմ առած հոնկե:

Մե՛ղք որ այդպես է սակայն:

Պիտի ուզեի որ տակավին իմ սրտիս մեջ տեղ մը, խոշոր տեղ մը ունեցած ըլլար Ան, որպեսզի կարենայի ես այսօր հոգիիս

ամբողջ արհամարհանքովը դճուրս նետել զԱյն հոնկե: Ախ, ինձի շովիր՝ Քեզ փնտրելու հաճույքը նույնիսկ:

Ն...ին բերնեն արյուն եկավ այսօր...

### 18 օգոստոս...

Ն...ն Իզմիր կը մեկնի վաղը, իր ազգականներուն:

Հանդարտ խորհրդածության անկարող դարձած եմ: Չեմ գիտեր թե ի՞նչ կը պատահի ինձի:

### 19 օգոստոս...

Մեկնեցավ:

Լուսնկա գիշեր է դուրսը:

Սենյակիս մեջ անշարժ նստած կը դիտեմ դիմացս:

Ի՞նչ կա դիմացս:

— Դատարկությունը...

### Մեծ Կղզի, 21 նոյեմբեր 1921

Երեք ամիսս ի վեր բացած չեմ այս տետրակը: Գոցեր էի զայն, ինչպես ամեն բան:

Եվ այս առտու, չեմ գիտեր ինչպես, նորեն առի զայն սեղանիս վրա, մաքրեցի փոշին և անսահմանելի զգացումով մը կարդացի ինչ որ գրեր եմ անոր մեջ, իմ կյանքիս ամենաեղբրական այդ օրերուն:

Քանի՛ անգամ ճակատս ինկավ վար, փղձկումով մը որ անուն չունի, թուղթին տալու համար՝ մասնավոր տեղեր, շերթունքներու համբույրը, աչքերուս արցունքին հետ:

Երե՛ք ամիս...

Պիտի հավատայի, եթե ինձի ըսեին՝ երեք տարի՛: Եվ ինչե՛ր, ինչե՛ր ունիմ հանձնելիք նորեն, սիրական տետրակ, քու փոշիիդ:

Բայց ի՞նչ հարկ գրել: Ինչո՞ւ գրել: Լավ է որ գոցեմ քեզ նորեն, հոգիիս հետ:

Չեմ կարծեր որ դեռ շատ կ'ապրիմ: Գերեզմանի մը խաղաղությունը մոտ կը թվի ինձի: Գոնե ա՛յդ չի զբացվիր մարդուն, նույնիսկ է՛ն անբախտին...

Ն-ին

Սիրելի Մելիսանտ,

Այս չէ նամակը զոր խոստացա քեզի: Շուտով պիտի գրեմ զայն, բայց որպեսզի չսպասես և կասկած չունենաս առողջութեանս մասին, այս տողերը կը գրեմ քեզի: Բուքրդ կը խաղա պարտեզին մեջ. կրնամ իրեն հետ գրկել:

Կատարելապես վստահ եղիր: Հրաշալիորեն լավ կը զգամ: Իրավ է թե պզտիկ անհանգստութիւն մը ունեցա, որ նույնիսկ թեթև պաղառութիւն մը չէր: Գլխու ցավ մը, ոչինչ բան մը, որ շուտով անցավ:

Եվ դո՛ւն, ի՞նչ կ'ընես: Ի՞նչ ըրիր այն տարօրինակ գիշերեն ի վեր: Պետք է նոթագրել այդ գիշերը՝ որպես երկրորդ «խենթութեան գիշեր» մեր «Բարեկամութեան Պատմութիւն» կամ «Ս...ի Պատմութիւն» գրքին մեջ... Արդե՞ն...

Կը մտածեմ այն քաղցր հաշտութեան՝ որ մեր հոգիները ըրին թրքական գերեզմանատան մեջ, այդ սև և անհոռոտ նոճեստանին մեջ: Ինչքան ազվոր էիր այդ պահուն: Ա՛հ: Այն դողը և քաղցրութիւնը, որ մեր հոգիները մղեց ներել իրարու: Ոչ իսկ բառ մը կամ գզվանք մը մոռցած եմ...

Հետո, քու վախդ վերադառնալու տուն... Կ'ըսեիր թե հանդիմանութիւն պիտի լսես մորմեզ և կուլայիր անհուն ու սև նոճիներուն տակ: Լուսինն ալ կուլար քու վրադ, հե՛ք պզտիկ Մելիսանտ...

Ու մեր փախու՛տը ստվերին մեջն... Մեր ապաստանիլը բարեկամներու մոտ, նման երկու թռչուններու՝ որոնք ալ կորուցնուցած են իրենց վախը մարդերին:

Ինչքան ազնիվ էր Զարեհը... Ու Մալվինը՝ որ կարող էր առանց մեծ դժվարութեան ըմբռնել մեզի պատահածը... Զարեհը Խրական ճենտլմեն մըն է. իսկ կինը՝ ծանոթ չէ արդեն սիրո կածաններուն...

Ու մեր ճաշը: Այնքան հաճույքով ըմպեցի գինին: Կը զարմանայի որ գեշ կը նկատեին և անտանելի համ կը գտնեին. իսկ ես այնքան տանելի կը գտնեի զայն՝ որովհետև այդ տոգուլնկարմիր ըմպելին չէր որ կը խմեի գավաթիս մեջն, այլ բուրբոն ուրիշ բան...

Քիչ մը հոգիդ էր...

Ու ծածկ՛րը որ անցուցինք հյուրասրահին մեջ, դուն, ես ու Մալվինը. հաճախ դուն և ես մինակ՝ երբ Մալվինը կ'երթար Շյուպերտ նվագելու. քաղցր կին: Հետո քու մեղամաղձի նուպաղ... Որքան սիրեցի քեզ այդ վիճակիդ մեջ, գթալով հանգերձ: Որչափ քաղցր էր լուսինն տակ, բազմոցի մեկ անկյունը, քեզմե քիչ հեռու, լսել քու լացդ: Սիրելի Մելիսանտ, կը խոստովանիմ թե խորապես գեղեցկագիտական հույզը որ տվիր ինձի այդ պահուն, ոչինչի հետ կարելի է բաղդատել: Ան կուլար բարձրեն.— Ուրկէ՞. քիչ մը լուսինեն և շատ մը՝ հոգիեդ:

Պատշգամին վրա, քու կիսավարտ բառերդ, վախդ վաղորդայնեն, ամաչկոտութիւնդ ու տարօրինակ սարսուռները՝ որ հանկարծ խենթ գեղումով մը կը լեցնեին քեզ... Ահ, այդ բու՛րբ...

Բայց պետք չէ՞ որ ըսեմ քեզի թե երբեմն տխուր կը զգամ քեզ ճանշած ըլլալուս համար: Գիտեմ թե նորեն պիտի չհասկնաս զիս և պիտի ծառանաս: Ըսե՛, սակայն, ի՞նչ պիտի ընենք կամ ի՞նչ պիտի ըլլանք մենք. դուն՝ գողտրիկ Մելիսանտ, ապագայով և արևոտ անակնկալներով լեցուն. ես՝ պզտիկ բանատեղծ մը որ լոկ քանի մը երազ ունի այնքան տոգուլն, և որ հիվանդ է իր մարմնով և հոգով... Կը տեսնես թե ինչպես կանգ կ'առնեմ հեատագա՞ր՝ քիչ մը ճամբա ընելին հետո, կամ սիրո պզտիկ անմեղ խաղի մը ետքը: Կը տեսնե՛ս այդ, բայց դեռ չես տեսած սարսափելի հեատագառումները հոգիիս...

Կ'ուզեմ վերջացնել նամակս...



Իմ Հրեշտակս,

Ժամը 10-ը անցավ, ու դեռ անկողին չեմ մտած, հակառակ խոստումիս: Չեմ կրնար, Ն..., թեև գիտես թե ես քու կամքիդ հակառակ ոչինչ կ'ուզեմ ընել: Բայց, երբեմն, տարօրինակ, գրեթե տարեբային տրամութիւն մը, որ հոգիիս շատ խորերին կը բարձրանա, այնպէս մը կը հաստատե իր տիրապետութիւնը վրաս, որ չեմ կրնար շեղանշել... անքուն մնալ, ծխել, նույնիսկ... իմել...

Նձրձ ինձի, Ն... Եձրձ, ներե՛...

Քեզ ճանչնալես ի վեր, երկրորդ անգամ ըլլալով խմբի շորեքշարքի գիշեր. քովս ըլլաս ու տեսնես թե ինչպես կը կար- մըրիմ՝ երբ այս դառն խոստովանութիւնը գրել կուտամ գրի- շիս. բայց անգամ մըն ալ պիտի ներես, չէ՞: Միտքդ բեր թե ինչ հոգեկան վիճակ ունեցեր էի նորին. թեև դուն շատ շտեմար այն իրիկուն իմ հոգիս, ավելի ճիշտը շուգեցի ցույց տալ ու մեկնե- ցաւ ԱՏ, հուսահատութեան ու դառնութեան այդ ակիբը, որ եր- բեմն կ'ելլե մինչև կոկորդս ու կը խեղդե ամեն հավատք, ամեն կամեցողութիւն: Սա ըսած եմ քեզի, Ն..., թե կը հավատամ ճակատագրիս, ասիկա ըսել չէ թե չեմ հավատար Հոգիներու Ուշժին. երկուքի՛ն ալ կը հավատամ. երկուքն ալ կոչված են մարդկային այս կյանքին մեջ իրենց հաղթանակները և պարտութիւնները արձանագրելու: Իմ հոգիս պիտի հաղթե՞... Իմ ճակատագրիս: ԱՏօ հարցը: Ի՛մ հարցս: Այս հարցը եթե իմ առջև դրվեր ասկե եր- կու ամիս ու տասնըմեկ օր առաջ, ես պիտի ծիծաղեի միայն՝ հարցը բերողին միամտութեանը վրա: Այդ այն ատենն էր, երբ ես ճակատագրիս միայն կը ճանչնայի իբրև գերագույն ուշժ, և մահը իբրև միակ ապավեն հիվանդ հոգիներու... Ինչպես էր իմը: Այդ այն ատենն էր, երբ երեք անգամ անձնասպանութիւն փոր- ձելիս և ձախողելիս հետո, հուսահատութեան գինովութիւնն էր եկեր ինծի, ու խենթութեան քրքիշը դեմքիս՝ սկսել էի ապրիլ այն կյանքը որուն պզտիկ, շատ պզտիկ մեկ մասը միայն ծանոթ է քեզի և ամենուն: Այդ կյանքով կ'ուզեի մեկ բան... վե՛րջ տալ կյանքիս, քի՛շ, քի՛շ, հաճույքով, վայելքով, գինովութիւնով: Ընդամենը այնպես վարվիլ կյանքին հետ, ինչպես հազվագյուտ ոճ- րագործները իրենց զոհերուն հետ կը վարվին, ամենանուրբ փափկութիւններով սահեցնելով դանակը անոնց վիզին վրա...

Բայց հիմա...

Հիմա դո՛ւն ես եկած, Ն..., կյանքիս մեջ...

### ԳԵՎՈՐԳ ՄԵՍՐՈՊԻՆ

Միրելի Գևորգ Մեսրոպ, ...1923  
Կը կարծե՞ս թե դժբախտ ես: Իսկ ես որքա՛ն երանի կու տամ քեզի, որչա՛փ կը նախանձիմ...  
Չեմ գիտեր թե կը հասկնա՞ս այս բոլորը: Չեմ կարծեր:  
«Միածան» մը ձեռք ձգած եմ և ամբողջ օրը կարդացի: Ինչ

հոգի՛ սա Մեծարեցը... ես իրմեն սիրերդ մը և մեկ բանի երկ- րորդական կտորներ միայն կարգացեր էի: Մեղք որ իր ատենին չենք ապրեր: Ի՛նչ երկնային բան պիտի ըլլար այս տղուն հետ գլուխ գլխի տալ Քեպիի (Սկյուտար) «Ջարտախ»-ին տակ՝ կիրա- կի իրիկուններ... A propos, Մեծարեցը կը խմե՛ր արդո՞ւր: Մի- րունիին ասիկա հարցուր անպատճառ. — է՛հ, հոյակապ մանրա- մասնութիւն է աս:

Երևակայե՛, Գևորգ... Մայրամուտ, Մեծարեց, օդի — այս երեքը մեկ ունենալ...

### ՀԱԿՈՐ ՍԻՐՈՒՆՈՒՆ

Բրիւնքի, 15 փետ. 1924

Միրելի Միրունի,  
Ժամանակին ստացա նամակդ: Շատ շնորհակալ եմ սփո- փանքի բառերուդ համար: Չկրցա շուտ պատասխանել՝ հակա- ոակ փափաքիս: Նոր տարին ի վեր անկողնին գամված կը մնա- յի, անկարող ամեն տեսակ աշխատանքի: Այս տարի շատ դա- ժան ձմեռ մը ունեցանք հո՛ւս. ամեն օր ձյուն ու փոթորիկ:

Ի՛նչ մեծսիրտ է սա արևը. շուտ մը քնն կ'ընե և ալ ամիսնե- րով չի հաշտվիր հետդ, հակառակ բոլոր պաղատանքներուդ: Կը հավատա՞ս, շատ գիշեր կ'աղոթեմ իրեն — արևին — իր գուժը հայցելով: Ա՛հ, հիվանդները շատ լավ կ'ըմբռնեն իմաստութիւ- նը արեւապաշտութեան: Ի՛նչ քաղցր ու ի՛նչ ճշմարիտ կրոն — լեռներու վրա ճառագա՛յթ համբուրել: Բաղդատե ասիկա մեր ժա- մանակի սա՛ պզտիկ մարդոց կրոնին հետ: Ա՛խ, ինչպես կ'ատեմ այս ամերիկացի միսիոնարները:

Բայց ինչո՞ւ այստեղվանքը եկա, նամակ սկսելու պես... իրավ որ չեմ գիտեր: Միտքս տենդ ունի դեռ, թեև երկու օր է ելած եմ անկողնես: Արևին հետ հաշտվեցանք վերջապես: Ահա- վասիկ, եղևիններուն մեջն իր լույսին հեղեղը: Ի՛նչ աղվոր է ճառագայթ խմելը, այսպես աչքերը գոց: Թեև ես շատ եմ արե- ցեր օդիով, գինիով և տարփանքով, Չամլճայի «Խառապաչ»-նե- րուն քովիկը և կամ Պուլտուրի և Սպարդայի վարդենիներուն տակ, բայց ոչի՛նչ կը հավասարի ասոր: Գիտե՞ս թե ինչ կը նշանակե ցամքած, սեցած, պատառ պատառ եղած հոգի մը հանկարծ արևով լեցնել: Ա՛խ, կյանքին կատակները...



Ես այս առտու կ'օրհնեմ թոքերու մեջ գրգռած ժանրճն-  
րուն բազմությունը: Անոնք են որ ինձի այս գինեգությանը, այս  
նոր կրոնը կուտան...



Սրտագին կը շնորհավորեմ «նորերը» քաջալիերելու որոշումը:  
Անոնք միայն կարենան թերևս վերցնել ծանր քարը, որ տարի-  
ներե ի վեր ինկած կը մնա մեր գրականության նիհար ածուխի  
վրա: Ո՛ւյժ տուր անոնց՝ որչափ կրնաս:

### ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

#### ԾԱՎԱԹԻՆ

Արշալույսին առաջին ցուրճերուն հետ՝ գացեր էինք մեր սո-  
վորական ժայռին: Հիմա ստվերը կիյնար ծովուն վրա՝ թեթև հով  
մը կ'ուռցնե՞ր առագաստը նավակի մը, որ մեր առջևն կանց-  
ներ: Ծնր ձկնորսը կ'երգեր:

Շուտով գիշեր պիտի ըլլար:

Ի՞նչ էինք ըրած հոն, արշալույսի առաջին ժամերն ի վեր:  
Ան նայեր էր ծովուն: Ես ունկնդրեր էի իր հոգվույն... Եր-  
կու անգունդներ...

Հավիտենականությունն իսկ պիտի շքավեր մեզի...

#### ՅԱՅԳԱՅԻՆ ԵՐԱՋԱԼԵ

Այն ժամուն, երբ գիշերը կ'իջնե իմ անգունն ապակիներուս,  
կոր վերջին թռչունը կը լռե սա ծերացած ձիթենիին ճյուղերուն  
մեջ, այդ ժամուն ես կը դադրիմ ծխելե իմ հին բազկաթուփս  
խարբը: Ձեռքերս կը լքեն ճակատս, և թախծոտ՝ իմ ետևս կը փա-  
կեմ գուռը...

Մ'ըր կ'երթամ:— Զե՛մ գիտեր:

Պարտաբան մտաչլ անդորրությունը մը, համբուրեմ կը քա-

լեմ գեպի հեռավոր անգունությունները, ուր կը հուսամ գտնել  
բարեգութ քարեր, հանգչեցնելու համար գլուխս:

Բարձրաճակատ կը քալեմ կես ժամու շափ՝ այս վայրի  
ստվերներու մեջն և հոգիս կը լեցվի գիակներու խաղաղությամբ:

Մե՛ծ, շփոթ աչքեր կը բանամ, որոնք սակայն նայվածք չու-  
նին, որովհետև մտածումիս պարապին մեջ կը տիրե լուսությունը  
աստղերուն:

Ձեռքերս սառած են:

Դիակներու նույն անդորրով կը դառնամ սենյակս, ճակատս  
կը դնեմ սառած ապակիներուն, բայց չե՛մ լար...

### ՀԻՎԱՆԻՍԳԻՆ ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ

Տատրակ մը կը լողա ծովուն վրա, ծովուն՝ որ կը թվի մեռած  
հոգի մը ըլլալ...

Պատուհանիս առջև նստած՝ կը նայիմ այդ ճերմակ թռչու-  
նին ու կը դիտեմ ծովը անալիք...

Տրտմորեն կ'երազեմ իմ դժբախտ սիրականիս...

Սա թռչունին նման, ան կը լողա հոգվույս մեջ, և հոգիս  
մեռած ծով մըն է անհուն...

Օր մը, ճերմակ տատրակը իր գլուխը պիտի մխրճե ծովուն  
մեջ և ալ վեր շպիտի առնե զայն. այս կապույտ ջուրը պիտի  
սպաննե խեղճը:

Կը սոսկամ, երբ կը մտածեմ որ թերևս այդպես պիտի ըլլա,  
եսև, իմ հե՛ք սիրականիս համար...

#### ՄՂՁԱՎԱՆՁ

Այդ օրը ծովը այնքան թափանցիկ էր որ մտածել կ'ուտար  
անդորր հոգիներու...

Ի՞նչ քաղցր պետք է ըլլա անգործությունը հոգվույն, ուր  
զղջումի մը ստվերը չէ ինկած երբեք, և որ կը լողա եթերն  
իշխող լույսերուն մեջ:

Այն որ այդ տեսակ հոգի մը ունի՝ շրեշտակ կ'անմահվի...

Այդ օրը՝ վշտալի հոգիներ ունեինք, ծանր թեքում կը ճնշեր

մեզ ստվերը. կը ժպտեի այդ բեռան տակ, որովհետև կը սիրեմ նաև տարօրինակ տառապանքը ստվերին: Բայց կը մեղքնայի որ այնքան տժգույն էր սիրականս...

Երբ վայրի բլուրեն իջանք ու հասանք ծովափ, ան ձեռքը դրավ ուսիս ու պաղատեցավ որ ազատեմ զինքը այդ տրտմութենեն... Ըսավ՝

— Կը սառեցնե՞ հոգիս...

Փայփայեցի այդ պզտիկ ձեռքը և պատասխանեցի՝

— Դիտե՛նք թե ինչպես կը քնանա ծովը...

### ԴԵՊԻ ՄԵՍ ԱՆՏԱՌԸ

Կը քալեինք կողք-կողքի, առանց խոսելու, երկու քենոտ պղզտիկներու նման:

Ճամբան հետզհետե կ'երկարեր: Դեպի մեծ անտառը տանող ճամբան...

Բայց հակառակ որ երկար ժամանակե ի վեր կը քալեինք, դեռ չէին երևեր հսկա կաղնիները:

Քալելով հանդերձ, ըսի իրեն, քիչ մը հեզնոտ և դիմաց նայելով.

— Ո՞ր կ'ուզեիր ըլլալ այս պահուն. ահա իրիկնամուտ է արդեն:

Ան ալ, առանց նայելու ինձի, և միշտ քալելով, ըսավ մեղմաձայն.

— Ամենեն բարձր լեռան մը կատարը, բացի քեզմե՝ ամե՛ն ուրիշ բան տեսնելու համար...

Ու կանգ առավ հանկարծ, իր թևերով փարեցավ վզիս և համբուրեց՝ այնքան տարօրինակ որ կարծես թե ա՛լ պիտի մեռնեիր:

Այդ երեկո ա՛լ չկրցանք հասնիլ մինչև մեծ անտառը...

### ԱՆԲԱՅԱՏՐԵԼԻ ՍԵՐ

Երկար ժամանակե կունկնդրեի իրեն, առանց բառ մը հասկընալու ըսածներին:

Անկարելի բան մը խնդրողի երևույթը ունեիր: Խորունկ անձ-

կության ծալքեր ունեիր բերանը: Բայց չէի կարող նայվածքս հեռացնել իր ճերմակ վիզեն, ուրկե պզտիկ սարսուռներ կ'անցնեին: Այնքան տզե՛ղ էր ան:

Ու ես կը պաշտեի զինք իր տզեղությանը և տրտմությանը համար:

### ԳԳՎԱՆՔ

Երբ լուսը, դեմքը կապուտցավ, ճիգ կընեիր շալու համար:

Այնքան հպարտ էր:

Կը նայեի իմ ամենեն քաղցր նայվածքովս ու դառն բառեր կը մըմնջեի իրեն:

Այն ժամանակ դեմքը առավ ձեռքերուն մեջ ու տղեկի մը պես հեծկլտաց: չիվանդ էր...

Պզտիկ անտառի մը մեջ էինք, քանի մը ծեր բարդիներու ստվերին: Ի՛նչ դեղին էին տերևները որ կը թափեին մեր ուսերուն...

### ԵՐԲ ԶԻՍ ԿԱՏՅ

Երկար ատեն դիտեցի տառապիլը: Կը սիրեր զիս՝ առանց հույսի, սիրտը լեցված մեծ տրտմությունով: Մտիկ կ'ընեիր դառն խոսքերուս և կարծես կ'օրհնեիր զիս...

Երկար ատեն դիտեցի տառապիլը: Կ'ատեի այդ տզեղ գութը իր հոգվուն երբ ինձի կ'երկարեր զայն, շորացած ծաղկի մը պես և առանց բանաստեղծության:

Ան տժգունեցավ՝ վարդի մը նման սպիտակ...

Երեկո մը, երբ նստած էինք քով քով, նայվածքս տրտում՝ դատարկին հառած, հանկարծ ան մեծ ատելություն վզաց ինձի դեմ: Նայեցավ մինչև խորերը հոգիիս և հպարտութենեն դողդոջուն ըսավ.

— Արժանի չե՛ս ինձի: Այս երեկո միայն կը հասկնամ թե ինչու չես կրնար սիրել անմեղությունը հոգիիս: Գնա՛: Մի՛ կորուստի մատներ զիս: Այս աչքերը ա՛լ պիտի չվառին ցանկությունովը քեզ տեսնելու...

Սովուն մտուն էինք: Ինձ կը թվեր թե իր անձը կ'ազաթ փոթորկաւ խորունկներն ծովուն:

Խենթ թեւրով փարեցա իրեն ու նվաղուն համբուրեցի աշքերը, որ ալ պիտի չվառեին ցանկութիւնովը ինձ տեսնելու...

Զինք տարի ամալի բլուրին՝ ուր գիշերը գեղեցիկ էր, բայց ափսոս, ա՛լ չէր կրնար զիս սիրել...

Ու գլուխս ծունկին՝ ես լացի երկա՛ր, երկա՛ր...

### ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Այս իրիկուն նայվածքս ճառագայթի մը անբծութիւնը ունի, իմ սիրականս.

Հիվանդ լուսնի գիշերները շունին այնքան անգարրութիւն, որքան հոգիս՝ այս իրիկուն...

Ի՛նչ երգեր կ'իմանամ հեռու, հեռու ծովերէ...

Եվ ի՛նչ սերեր կ'երազեմ, գլուխս այս քարին...

Ահ, սիրականս, եթէ գայիր այս իրիկուն, հավատա՛, աստղ կ'ըլլայի ես...

### ԿՍԶՄԱՂԻ ԿՈՂՄԻՑ

«Հայ դասականներ» մատենաշարի այս հատորում տեղ են գտել 20-րդ դարի սկզբի արևմտահայ շորս բանաստեղծ՝ Ռուբեն Որբերյանը, Ռուբեն Սևակը, Վահան Թեքեյանը, Մատթեոս Զարիֆյանը: Հատորում նրանց դասման հերթականութիւնը կատարել ենք նկատի ունենալով նրանց ստեղծագործութիւնը հիմնական շրջանների ժամանակագրութիւնը: Ռուբեն Որբերյանը տարիքով ամենից ավագն է: Գրական ասպարեզ է իջել և լավագույն գործերը ստեղծել է ավելի վաղ (1890—1900-ական թթ.): Ռուբեն Սևակը Թեքեյանից ուշ է սկսել, սակայն ավարտել է ավելի վաղ (1905—1915): Վահան Թեքեյանը սկսել է 1890—1900-ական թթ. ու շարունակել է մինչև 1945-ը: Ու շնայած սփյուռքյան շրջանում ստեղծած բազմաթիվ լավ գործերին, Թեքեյանը մնում է արևմտահայ շրջանի բանաստեղծը: Մատթեոս Զարիֆյանը արևմտահայ պոեզիայի վերջին շրջանի (1918—1923) ամենանշանավոր դեմքն է, ուստի նրանով էլ ավարտում ենք այս ժողովածուն:

Հատորը կազմելիս ձեռքի տակ ենք ունեցել այս բանաստեղծների և՛ կենդանութիւն օրոք, և՛ համահու լույս տեսած բանաստեղծութիւնների բոլոր ժողովածուները, համեմատել ենք, շտկել վրիպումներն ու սխալները:

Բանաստեղծական շարքերի ներսում, շնչին բացառությամբ պահպանել ենք ժամանակագրական կարգը: Պահպանել ենք նաև հեղինակների լեզվա-քերականական առանձնահատկութիւնները, առանձին բառերի գրութիւն ձևը, կետադրութիւնը: Գուրս ենք թողել միայն գաղտնավանկ «ը»-երի մի մասը, կատարել ենք կետադրական մասնակի փոփոխութիւններ:

Ռուբեն Որբերյանը ծնվել է 1874 թ. փետրվարի 16-ին, Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Մալաթիա քաղաքում: Ավարտել է Խարբերդի «Սփրատ» կոլեջը, խորապես տիրապետելով անգլերեն լեզվին ու գրականությանը: 1893 թ. ավարտելով կոլեջը, որպես ուսուցիչ աշխատել է Պանտրամյում, Պոլսում, Իզմիրում: 1901 թվականից անցել է առևտրական ասպարեզ: 1904 թ. տեղափոխվել է Աֆրիկա, հաստատվել Զիբուդի քաղաքում, ուր ապրել է մինչև 1920 թվականը: 1920—31 թթ. ապրել է Փարիզում: Մահացել է 1931 թ. հունվարի 3-ին:

Որբերյանը հրատարակել է երեք գիրք. «Հիշատակաց ծաղիկներ» (1893, Կ. Պոլիս), «Մփանքներ» (1906, Գահիրե), «Ովասիս» (1920, Փարիզ): Արևմտահայ մամուլի էջերում Որբերյանը հանդես է եկել բազմաթիվ բանաստեղծություններով, արձակ էջերով, հոդվածներով:

1963 թ. Երևանում լույս է տեսել Որբերյանի «Երկեր» ժողովածուն:

Սույն հատորում Որբերյանի պոեզիան ներկայացրել ենք երկու բաժնով՝ «Աղվոր ափեր» և «Աղամին անեծքը», խորագրեր, որոնք իր բանաստեղծության ու պոեմի վերնագրերն են և շատ բնորոշ արտահայտությունն են շարքի ընդհանուր տրամադրության: Առաջին բաժնում հավաքված են հայրենի եզերքին, Հայաստանի ճակատագրին նվիրված բանաստեղծությունները, երկրորդում՝ դարի, մարդկային հասարակության և անձնական ապրումների մասին խոհերը: Ժամանակագրությունը լիախտելու նպատակով չենք առանձնացրել պոեմները:

— «Մփանքներ» պոեմը անավարտ է: Պոեմի նախերգանքը և առաջին գլուխը լույս է տեսել 1906 թ., առանձին գրքով: 1920-ին «Ովասիս» ժողովածուում հեղինակը դրանց ավելացրել է երկու փոքր հատվածներ երկրորդ և չորրորդ գլուխներից: Մենք նպատակահարմար ենք գտել տալ միայն նախերգանքն ու առաջին գլուխը, այն, ինչ ամբողջական է:

— «Հայրենիքի խնձորներ» բանաստեղծությունը տպագրում ենք ըստ Որբերյանի ձեռագրի միկրոթապավենի, որը պահվում է Երևանի գրականության թանգարանում: 1963 թ. ժողովածուում այդ բանաստեղծությունը ամբողջական չէ: Այստեղ տպագրվում

է լրիվ, ըստ ձեռագրի: Ըստ Որբերյանի ձեռագրի է տպագրվում նաև «Անդրանիկ» բանաստեղծությունը, որը 1963 թ. ժողովածուում տպագրվել է առանց վերնագրի և կրճատված: Բանաստեղծությունը գրված է Անդրանիկի մահվան առիթով (ձեռագրի սկզբում հեղինակը դրել է խաչ նշանը):

— «Էջեր արձակից» բաժնում զետեղել ենք երեք նմուշ Որբերյանի արձակից: «Սիրո ծաղիկ-արփին» վերցրել ենք «Հիշատակաց ծաղիկներ» գրքից, «Առաջին սեր»-ը՝ «Երկեր»-ից, «Բանաստեղծի վերադարձը»՝ «Ովասիս»-ից:

Ռուբեն Սևակը (Ռուբեն Զիլինկիրյան) ծնվել է 1885 թ. փետրվարի 15-ին, Պոլսի մերձակա Սիլիվրի գյուղաքաղաքում: Սովորել է Սիլիվրիի նախակրթարանում, Պարտիզակի Ամերիկյան վարժարանում: Ավարտել է Պերպերյան վարժարանը 1905 թ.: 1905-ին ընդունվել և 1911-ին ավարտել է Լոզանի համալսարանի բժշկական մասնաճյուղը: Մինչև 1914-ը ապրել է Լոզանում: 1914-ին ընտանիքով տեղափոխվել է Պոլիս և զոհ դարձել 1915-ի եղեռնին: Գաղանաբար սպանել են նրան 1915 թ. օգոստոսի 26-ին:

Սևակը կենդանության օրոք լույս է ընծայել միայն մեկ գիրք՝ «Կարմիր գիրքը» (1910, Կ. Պոլիս): Նա հաճախակի է հանդես եկել մամուլում: Առանձին գրքերով նրա գործերը լույս են ընծայվել մի քանի անգամ. «Բժշկին գիրքեն փրցված էջեր» (1926, Փարիզ), «Բժշկին գիրքեն փրցված էջեր» (1943, Երուսաղեմ), «Կարմիր գիրքը և ցրիվ քերթվածներ» (1946, Փարիզ), «Երկեր» (1955, Երևան):

Ներկա ժողովածուն կազմելիս ձեռքի տակ ենք ունեցել բոլոր հրատարակությունները: Մի շարք բանաստեղծություններ, որոնք տեղ չեն գտել հիշյալ գրքերում, վերցրել ենք ՀՍՍՀ ԳԱ գրականության և արվեստի թանգարանի՝ Ռ. Սևակի ֆոնդում պահվող տետրերից:

Սևակի պոեզիան ներկայացրել ենք չորս շարքով. «Սիրո գիրքը» (սիրո թեմայով գրված գործերը), «Խոհերի գիրքը» (կյանքի, մարդու և բնության մասին խոհերը), «Վերջին հայերը» (հայրենական ցավի երգերը), «Քառուր» (սոցիալական թեման):

Սեակն ինքը ծրագրել էր իր բանաստեղծությունները հավաքել և հրատարակել այդ խորագրերի տակ (բացառությամբ «Եռհերի գիրքը», որը մենք ենք առանձնացրել):

#### ՎԱՀԱՆ ԹԵՐԵՅԱՆ

Վահան Թերեյանը ծնվել է 1878 թ. փետրվարի 3-ին, Կ. Պոլսի Օրթոդոքս թաղամասում: Մանկությունը անց է կացրել Սկյուտարում: Սովորել է Ներսիսյան, Պերպերյան և Կեղրոնական վարժարաններում: Աշխատանքային կյանքը սկսել է 1894-ից. որպես առևտրական հիմնարկության պաշտոնյա ծառայել է Անգլիայում, Ֆրանսիայում, Եգիպտոսում: Ապա եղել է դպրոցական հոգաբարձության կամ խնամակալության անդամ, ուսուցիչ կամ տեսուչ Պոլսում, Մարսելում, Կահիրեում: Եղել է Ազգային Երեսօրհանի անդամ, Պատերազմից հետո կրկին վերադարձել է Պոլիս, իսկ 1922-ին, ահաբեկված քննաչական խստություններից, անցել է Բալդարիա, հետո Ղուևաստան, Եգիպտոս, Սիրիա, Ֆրանսիա: Հաստատվել է Եգիպտոսում, որտեղ էլ՝ 1945 թ. ապրիլի 4-ին մահացել է:

Երկար տարիներ, տարբեր վայրերում խմբագրել ու հրատարակել է մի շարք պարբերականներ ու լրագրեր («Շիրակ», «Ժողովրդին ձայնը», «Բարձրավանք», «Արև» և այլն): Եղել է Կոմիտեի հասարակական գործիչ:

Կենդանության օրոք լույս են տեսել Թերեյանի հետևյալ գրքերը. «Հոգեր» (Փարիզ, 1901), «Հրաշալի հարություն» (Կ. Պոլիս, 1914), «Կես գիշերին մինչև արշալույս» (Փարիզ, 1919), «Սեր» (Փարիզ, 1933), «Հայերգություն» (Կահիրե, 1943), «Տաղարան» (Կահիրե, 1944): Ետմահու Կահիրեում հրատարակվել է Թերեյանի «Ամբողջական երկեր»-ը, տասնմեկ հատորով, որն ընդգրկում է հեղինակի շափածոն, արձակը, դրամատուրգիան և թարգմանությունները:

Թերեյանն ունեցել է երևանյան երեք հրատարակչության «Երկեր» (1958), «Հատուկ» (1970), «Երկվան խորհուրդներ» (1978): Սփյուռքում նույնպես տպագրվել են մի քանի հատուկ տիպեր:

#### ՄԱՏԹԵՍ ԶԱՐԻՖՅԱՆ

Մատթես Զարիֆյանը ծնվել է 1894 թ., Կ. Պոլսի Կեսիկ Փաշա թաղամասում, մանկությունն ու պատանեկությունը անց է կացել Սկյուտարում: Սովորել է Պարտիզակի Ամերիկյան վարժարանում, Ռաբերտ գոլիչում, ապա Պերպերյան վարժարանում, որն ավարտել է 1913-ին՝ Պսակավոր Արվեստից տիտղոսով: 1913-ին մեկնել է զազաո՝ Ադանայի ազգային վարժարանում ստանձնել անգլերեն լեզվի և մարմնամարզության ուսուցչի պաշտոնը: Հիվանդության պատճառով 1914-ին անցել է Լիբանան, ապա վերադառնալով՝ զորակոչվել թուրքական բանակ: Ընթացակարգի դարձրած սովորելիս անհաշտության և ընդդիմության համար՝ ուղարկվել է Կեսիկի ճամբարում և քաղաքի, ապա ազդեցիկ միջամտությունների շնորհիվ՝ երկարատև կալանափոխում: Մի քանի ամիս հետո բարեկամների միջոցով ազատվում է բանտից և ծառայության է դրվում զինվորական հիվանդանոցում, որպես հիվանդապահ:

Զինադադարից հետո, որպես անգլիական բանակի թարգմանիչ մեկնում է զավառները՝ մասնակցելու հայության բեկորների հավաքման գործին:

1919—21 թթ. արխատում է Պոլսի Պերպերյան վարժարանում որպես անգլերենի և մարմնակրթանքի ուսուցիչ:

Թորքերում բուն դրած ախտը զնալով խորանում է և նրան դաժնում անկողնուն: Մահը վրա է հասնում 1924 թ. ապրիլի 9-ին:

Զարիֆյանի առաջին բանաստեղծությունները մամուլում տեղագրվել են զինադադարից հետո: Առաջին ժողովածուն՝ «Տրտմության և խաղաղության երգեր» խորագրով լույս է տեսել 1921 թ., երկրորդը՝ «Կյանքի ու մահվան երգեր» խորագրով՝ 1922 թվականին:

1956 թ. Բեյրութում «Անի» ամսագրի մատենաշարով, բանաստեղծի ջրոջ՝ արձակագիր Սիրան Սեզայի և բանաստեղծ Վահան Վահյանի ջանքերով ու խմբագրության միջոցով լույս տեսավ Մատթես Զարիֆյանի «Ամբողջական գործեր» ծավալուն հատորը, որ ամփոփվեցին ինչպես նրա ժողովածուների, այնպես էլ մամուլում լույս տեսած կամ անտիպ բանաստեղծությունները, օրագրային էջերը, արձակի փորձերը, նամակները:

1964 թ. Երևանում լույս տեսավ Զարիֆյանի հատընտիրը՝ «Երկեր» խորագրով:

Ներկա ժողովածուում Զարիֆյանը ներկայացված է ըստ «Ամբողջական երկեր»-ի:

Զարիֆյանի բանաստեղծությունները տվել ենք երկու բաժնով՝ պահպանելով նրա ժողովածուների խորագրերը: Այդ ժողովածուների բոլոր գործերը չէ, որ ներկայացրել ենք, սակայն ավելացրել ենք այդ շարքերի բնույթին համընկնող բանաստեղծություններ, որոնք չեն մտել այդ ժողովածուներում և «Ամբողջական երկեր»-ում դրվել են «Անտիպ քերթվածներ» խորագրի տակ:

Զարիֆյանի արձակի մասին ընթերցողին պատկերացում տալու համար գետնդել ենք մի քանի էջ օրագրերից, շորս նամակ և մի քանի արձակ բանաստեղծություն:

Օրագրային այս էջերը վերաբերում են 1921 թ. ամռան ամիսներին, երբ հիվանդության սաստկության պատճառով Զարիֆյանը թողեց աշխատանքը Պերպերյան վարժարանում:

Նամակներից առաջին երկուսը ուղղված են իր սիրած աղջրկան, որի հետ նա նշանված էր: Մեկիսանտ անունը բանաստեղծի կողմից օգտագործված մտերմական անուն է:

Գևորգ Մեսրոպը (եբրորդ նամակը), որ բանաստեղծ էր, մանկավարժ, Զարիֆյանի մտերիմներից էր: Նա ուզում էր Պոլսում հիմնել ազգային ճեմարան և նամակներով ոգևորում էր Զարիֆյանին՝ շուտ ապաքինվել և մասնակցել նրա աշխատանքներին: Զարիֆյանը նույնպես խանդավառված էր այդ գործով:

Բանաստեղծ Հակոբ Միրունին (չորրորդ նամակը), որ 1919—22 թթ. Պոլսի գրական-մշակութային կյանքի ամենակտիվ գործիչներից էր և Զարիֆյանի տաղանդը գնահատողներից մեկը, այդ ժամանակ, հեռանալով Պոլսից, ապաստան էր գտել Բուխարեստում և հրատարակում էր «Նավասարդ» հանդեսը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԲՈՒԹԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ

Արևմտահայ պոեզիան	20-րդ դարի	Կույսին հոգին . . . . .	82
սկզբին . . . . .	3	Մայիս . . . . .	83
		Խենթ փափաք . . . . .	83
		Երկրագունտ . . . . .	84
		Դեղձանիկ . . . . .	85
		Ժամացույցս . . . . .	86
		Առ Աստված . . . . .	87
		Փափաք . . . . .	88
		Անվերադարձ . . . . .	89
		Մեր դարը Աստուծո առջև . . . . .	90
		Կցկտուր խոսքեր . . . . .	92
		Սգավոր մայր . . . . .	93
		Մաղկանոցի նոճին . . . . .	94
		Հանգիստ . . . . .	96
		Սփինջս . . . . .	98
		Աղամին անեծքը . . . . .	100
		Հարավի հուր խորշակին . . . . .	104
		Փոխարեն . . . . .	105
		Իտեալս . . . . .	106

### Էջեր արձակից

Աղամին անեծքը		Միրո ծաղիկ-արփին . . . . .	107
Ճշմարտություն . . . . .	81	Առաջին սեր . . . . .	108
Ալ մի լար . . . . .	82	Բանաստեղծին վերադարձր . . . . .	117

### ԲՈՒԹԵՆ ՍԵՎԱԿ

Միրո գիրքը		Գինով սեր . . . . .	124
		Բույրը . . . . .	125
Ինչու՞ . . . . .	123	Զար ազգիկը . . . . .	127
Սերը . . . . .	123	Սերով, սերով . . . . .	128

Սիրո շողքերը . . . . .	129
Լեման . . . . .	130
Կարապետները . . . . .	131
Երգ-Երգոց . . . . .	133
Սիրո աղբյուր . . . . .	134
Սիրո մրմունջ . . . . .	135
Պատասխանը . . . . .	135
Համբույրը . . . . .	137
Պիտի սպասեմ . . . . .	138
Նամակը . . . . .	139
Մահազգացում . . . . .	140
Անկարելի սեր . . . . .	141
Վերջին կույր . . . . .	141
Եկե՛ւր . . . . .	142
Հավիտենական հեթախը . . . . .	143
Սիրո և մահվան երգը . . . . .	144
Ամենուն պես . . . . .	145

**Խառնի գիրքը**

Հողիս . . . . .	147
Մենակ մարդը . . . . .	147
Երթալ . . . . .	148
Կարիճը . . . . .	149
Տրտում ոգի . . . . .	149
Երեսնկ, շուր . . . . .	151
Երեք ծաղիկներ . . . . .	152
Կայրի . . . . .	153
Փշավային արցունքը . . . . .	154
Արգասավորում . . . . .	155

**Ձեռակցվածները**

1. Վերջին արբան . . . . .	156
2. Պիտի մեռնի . . . . .	156
3. Իժը . . . . .	157
4. Զաչիկը . . . . .	157
5. Հայրը . . . . .	158
Փայտը մարդը . . . . .	159
Մեծը Աստված . . . . .	159

Ցնծուն մահ . . . . .	160
Սրինգ . . . . .	161
Հավիտենական հեղափոխություն . . . . .	162
Գիշերն իջավ . . . . .	163

**Վերջին հայերը**

Վարձի կառու . . . . .	164
Ով իմ հայրենիքս . . . . .	165
Ինչպես երբեմն . . . . .	168
Ջանգալներ, զանգակներ . . . . .	168
Կիլիկիան երգեր . . . . .	170
Ա. Վրեժին սերմնացանը . . . . .	170
Բ. Հայու որբիկ . . . . .	171
Գ. Վերջին օրոր . . . . .	172
Խապրիկ . . . . .	172
Վերջին հայերը . . . . .	174
Հայաստան . . . . .	177

**Քառուր**

Դրամին աղոթքը . . . . .	178
Մարդերգություն (պոեմ) . . . . .	180
Գլուղական եկեղեցիին մեջ . . . . .	180
Գլուղական ճամբուն վրա . . . . .	186
Գլուղական գերեզմանատան մեջ . . . . .	191
Կարմիր դրոշակը . . . . .	198
Պուտ որովայնին մեջ . . . . .	200
Թրուպատուրները . . . . .	203
Փողոց ալյուղը . . . . .	206
Այս դանակը . . . . .	211

**Ըջեր արձակից**

«Թիշկին գիրեն փրցված էլեր» . . . . .	217
չարից . . . . .	222
Մանչրուն գերեզմանը . . . . .	222
Կունկը . . . . .	225
Անիծված դանակ . . . . .	229
Յտամոռին զոհը . . . . .	230
Վեցերորդ զգայարանը . . . . .	235

**ՎԱՀԱՆ ՔԵՐԵՑԱՆ**

**Մեր**

Օս սիրեցի . . . . .	241
Ազգորենբը . . . . .	242
Անունդ . . . . .	242
Քու հիշատակդ այս գիշեր . . . . .	243
Ահա վասիկ կ'ուզեի . . . . .	244
Կը սիրեի . . . . .	244
Հանրժը . . . . .	245
Մտածումս . . . . .	245
Օս զինք կարծեմ . . . . .	246
Դուն շքիտցար . . . . .	246
Նորեն, ո՛վ սեր . . . . .	247
Տեր, ի վերջո . . . . .	248
Երջանկություն . . . . .	248
Ամառն անցավ . . . . .	249
Փափաք . . . . .	250
Անկարելին . . . . .	250
Երեկ գիշեր . . . . .	251
Ատենոք . . . . .	252
Անոթ . . . . .	252
Ողջույն . . . . .	253
Քանի մ'անգամ . . . . .	253
Իմ սիրո տենչս . . . . .	254
Հազարներու մեջեն . . . . .	254
Սեր մը զազտնի . . . . .	255
Օս կրազիս տիրեցի . . . . .	256
Որ մեկն անոցմե . . . . .	256
Խաղի համար . . . . .	257
Կին մը, կը հավատմ . . . . .	257
Թեթև գրույց . . . . .	258
Որպեսզի մնա . . . . .	258
Սիրո կոչ . . . . .	259
Ուրեմն այսպես . . . . .	259
Խեղճ մարդը . . . . .	260
Քեզմե ոչինչ . . . . .	262
Ինչպես խորհիս . . . . .	262
Չբարկվելով . . . . .	263
Քե պատահեր . . . . .	263
Ձեռքի մը . . . . .	264
Քուսնի գիշեր . . . . .	264

«Տաղարան»-ից . . . . .	265
Իմ վերջին սերս . . . . .	267
Ջյունը . . . . .	268
Քեզ վերջապես . . . . .	268
<b>Խառն</b>	
Ընթերցողին . . . . .	270
Կ'անձրեկ, տղաս . . . . .	270
Ողբ . . . . .	271
Փոթորիկ . . . . .	272
Հուսախաբությունք . . . . .	272
Գեղջկական . . . . .	273
Կ'երգեի . . . . .	274
Անցյալս անշափ հեռացավ . . . . .	276
Չորացավ աղբյուրը սրտիս . . . . .	275
Հայրենի դարնան հիշատակը . . . . .	276
Ով նորեն խոնջ են շրթունքներս . . . . .	277
Խառնություն . . . . .	277
Տղու մը . . . . .	278
Հեծծանք . . . . .	279
Երազներ . . . . .	279
Կասկածը . . . . .	281
Անտառին մեջ . . . . .	281
Երածությունը . . . . .	283
Ինձ կը թվի թե ապրած եմ . . . . .	283
Երկու մահերը . . . . .	284
Գայլին հակումը . . . . .	284
Կովի երթ . . . . .	285
Տաղ առ ատելություն . . . . .	286
Վրեժի գինին . . . . .	287
Ջավակս . . . . .	287
Երեք կոշիկ . . . . .	288
Խառնուրդ . . . . .	289
Դուն հեռավոր մանկություն . . . . .	289
Օս այս գիշեր . . . . .	290
Մեկ հասիկս . . . . .	290
Ապագան . . . . .	291
Ցավի ծովը . . . . .	292
Միտք իմ . . . . .	292
Տղա մ'իծի կը գրե . . . . .	293

Իրիկվան աղոթք . . . . . 294  
 Վիշտ մը . . . . . 294  
 Գիրքեր . . . . . 295  
 Երեսնամյակ . . . . . 296  
 Շվարում . . . . . 298  
 Բաց ծովուն մեջ . . . . . 298  
 Քառասնամյակ . . . . . 299  
 Միծաղ . . . . . 300  
 Հաշվեհարդար . . . . . 300  
 Այս երազը . . . . . 301  
 Իմ գյուղս . . . . . 301  
 Հիսնամյակ . . . . . 302  
 Տաղ արևին . . . . . 302  
 Գիտեմ դաղտնիք մ'ահավոր . . . . . 303  
 Ապրիլի թե ոչ, երազել . . . . . 304  
 Պատիժը . . . . . 304  
 Գիշեր . . . . . 305  
 Այս իրիկուն վերստին . . . . . 306  
 Անորոշ, անծանոթ . . . . . 307  
 Ոսկեմարտը . . . . . 307  
 Բեզաս . . . . . 308  
 Արևը . . . . . 309  
 Գարնան գիշեր . . . . . 309  
 Կըսեմ մերթ ալ ինքզինքիս . . . . . 310  
 Երեք թռչուն . . . . . 311  
 Մոռնալ . . . . . 311  
 Վարպետին . . . . . 312  
 Երազ ու կյանք . . . . . 313

Հայերգություն

Հայ ազգին . . . . . 314  
 Հայաստանին . . . . . 314  
 Գողթան երգիչներ . . . . . 315  
 Գեղոն Մոսյաց անտառին . . . . . 317  
 Տաղ հայերեն լեզվին . . . . . 318

Արարատյան դաշտին մեջ

Ա. Մասիսին . . . . . 319  
 Բ. Ավերակները . . . . . 319  
 Գ. Լուսավորչի կանթեղը . . . . . 320

Գ. Հրազդան . . . . . 320  
 Ե. Զվարթնոց տաճարին մեջ . . . . . 321  
 Դուն մերինն ես . . . . . 322  
 Գարնան գիշեր . . . . . 323  
 Պատերազմ . . . . . 323  
 Հույսը . . . . . 324  
 Քեզ շտեսա . . . . . 324  
 Սուետիա . . . . . 325  
 Աղամամութ . . . . . 326  
 Ողբ (Որ խորունկ ողբը) . . . . . 326  
 Եվ նորեն միշտ . . . . . 327  
 Ահավոր բան մը այնտեղ . . . . . 327  
 Տարագրություն . . . . . 328  
 Երազ . . . . . 329  
 Պիտի մոռանք . . . . . 329  
 Տարակույս . . . . . 330  
 Հպարտություն . . . . . 330  
 Հարություն շունչն է ահա . . . . . 331  
 Ըմբոստություն սրբազան . . . . . 332  
 Գեղոն հայ որբին . . . . . 334  
 Որբերուն ձեռքերը . . . . . 336  
 Սփյուռք . . . . . 336  
 Փոշի-ազգ . . . . . 337  
 Կամուրջ . . . . . 338  
 Եփրատ . . . . . 339  
 Հիշողություն . . . . . 340  
 Լեզուն, որով գրեցի . . . . . 340  
 Հույսեր, մեծ հույսեր . . . . . 341  
 Արդյոք ծեծ՞ր է . . . . . 341  
 Երբ օրը գա վերջապես . . . . . 342  
 Մահերգ նահապակաց . . . . . 342  
 Հայ հոգիին . . . . . 343  
 Ներկա Հայաստանին . . . . . 344  
 Հոն հեռուն, ահա . . . . . 345  
 Հայաստանը—Ռուսաստանին . . . . . 346

Էջեր արձակից

Մարք Զուրթունի արկածը . . . . . 348  
 (հատված վիպակից)

Տրամության և խաղաղության երգեր

Խաղաղություն . . . . . 367  
 Նոր հյուզակս . . . . . 368  
 Հովոտ գիշեր . . . . . 369  
 Համբույր . . . . . 370  
 Հոգի՞ս էր . . . . . 370  
 Գինովի երազ . . . . . 371  
 Համր-համր . . . . . 372  
 Եթե գար . . . . . 373  
 Ամեն անգամ . . . . . 374  
 Հեզանք . . . . . 374  
 Հեռավոր սեր . . . . . 374  
 Ոսկի վտակ . . . . . 375  
 Միծաղ . . . . . 376  
 Կարեկցություն . . . . . 376  
 Չըսի՞ . . . . . 377  
 Երկու ավերակներ . . . . . 378  
 Գիշերամուտ . . . . . 379  
 Տառապանք . . . . . 381  
 Փիլիսոփա ժպիտս . . . . . 382  
 Մի դպիք . . . . . 382  
 Հույս-տարակույս . . . . . 383  
 Աշնան առավոտ . . . . . 383  
 Մահը կուգա . . . . . 384  
 Կյանքը . . . . . 385  
 Փախուստ . . . . . 385  
 Ձմռան իրիկուն . . . . . 387  
 Աշնան իրիկուն . . . . . 387  
 Հին օրեր են . . . . . 388  
 Գերագույն ապավինք . . . . . 389  
 Անբախտ ծաղիկ . . . . . 389  
 Վերագարձ . . . . . 390  
 Կատար . . . . . 391  
 Բլուրին վրա . . . . . 391  
 Լուսին տակ . . . . . 392  
 Լերան սրինգը . . . . . 392  
 Վերջույույս . . . . . 393  
 Որոշում . . . . . 394  
 Լեռներն իմ երազիս . . . . . 394  
 Տիեզերքը և համբույրս . . . . . 395

Կյանքը երազ է . . . . . 396  
 Խնդրանք . . . . . 396  
 Ծամբուն վրա . . . . . 397  
 Ծերմակ գիշեր . . . . . 397  
 Գարնան դեմ . . . . . 398  
 Մառերուն տակ . . . . . 400  
 Մահերգ . . . . . 400

Կյանքի և մահվան երգեր

Գիշեր . . . . . 401  
 Նոյեմբեր . . . . . 402  
 Տարտամ ըոպե . . . . . 402  
 Ան չէ... . . . . 403  
 Պատիկ, աղվոր աղջիկ . . . . . 403  
 Մոլորում . . . . . 404  
 Կը ձյունե . . . . . 404  
 Միայն թե . . . . . 405  
 Հոգևություն . . . . . 405  
 Նոճին . . . . . 406  
 Հոգիս . . . . . 406  
 Ահա արդեն . . . . . 407  
 Երջանկություն . . . . . 407  
 Կարոտ . . . . . 408  
 Սպասում . . . . . 408  
 Քեզմե հեռու . . . . . 410  
 Տարորեն երազ . . . . . 411  
 Բանկոզ իրիկնամուտ . . . . . 412  
 Եղևնիները . . . . . 413  
 Արհամարհանք . . . . . 414  
 Շքեղ օրհաս . . . . . 414  
 Վերելք . . . . . 415  
 Մեծ գիշերին մեջ . . . . . 415  
 Գիշերվան ծովը . . . . . 416  
 Սերս ու հոգիս . . . . . 416  
 Միայն թեզ . . . . . 416  
 Գիշերներ կան . . . . . 417  
 Ալ պետք շունիմ . . . . . 417  
 Մովու դիմաց . . . . . 418  
 Թռչունները . . . . . 418  
 Աշուն գիշեր . . . . . 419  
 Երկյուղ . . . . . 419



Հուն ցավ . . . . .	419	Ապրիլի գիշեր . . . . .	432
Կես-գիշերի երգ . . . . .	420	Որբուհին՝ որբին . . . . .	434
Կը սիրեմ . . . . .	421	Գինարբուքին առաջ . . . . .	438
Բաղնիքին կուգա . . . . .	421	Ցավոտ գինարբուք . . . . .	438
Կույսի հոգի . . . . .	422	Ով Տեր . . . . .	439
Գողութուն . . . . .	423	Երազ . . . . .	439
Մայրամուտի կույսերը . . . . .	423		
Միմոզայի շյուղը . . . . .	425	<b>Էջեր արձակից</b>	
Գինարբուք . . . . .	426		
Երազանք . . . . .	427		
Կուզեմ երգել . . . . .	427	Էջեր օրագրից . . . . .	441
Թողեք զիս . . . . .	428	Նամակներ . . . . .	458
Սպասում . . . . .	428	Արձակ բանաստեղծություններ . . . . .	462
Հաղթանակ . . . . .	429	Կազմողի կողմից . . . . .	467
Մառը . . . . .	431		

ՌՈՒՌԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ, ՌՈՒՐԵՆ ՍԵՎԱԿ,  
ՎԱՀՆԱՆ ԹԵԲԵՅԱՆ, ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖՅԱՆ  
**ԵՐԿԵՐ**

РУБЕН ВОРБЕРЯН, РУБЕН СЕВАК,  
ВААН ТЕКЕЯН, МАТТЕОС ЗАРИФЯН  
**Сочинения**  
(На армянском языке)  
Издательство «Советакан грох»  
Ереван — 1981

Խմբագիր՝ Գ. Գ. Սիմոնյան  
Նկարիչ՝ Մ. Ռ. Ստոյան  
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Սահփանյան

ИБ № 2961.

Հանձնված է շարվածքի 20. 05. 81 թ.:

Ատորագրված է տպագրության 29. 12. 81 թ.:

Ֆորմատ՝ 60×84<sup>1</sup>/<sub>16</sub>: Թուղթ № 1: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»:

Տպագրություն՝ օֆսեթ: 19,85 հրատ. մամ., 27,9 պայմ. տպ. մամ.:

Պատվեր 1594: Տպաքանակ՝ 51 000: Գինը՝ 2 ռ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван-9, ул. Теряна, 91.